

U-70

Այս գիրքս ընծայեցաւ [illegible]
[illegible] ուսումնարանին ի փառս [illegible]
[illegible]
[illegible] 1820. [illegible]
[illegible]

# ԳԻՐՔ
# ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ.

Շարադրեալ

## ՎԱՐԴԱՊԵՏԻՆ
## ԱՌԱՔԵԼՈՅ ԴԱՒՐԻ
## ԺԱՑՒՈՅ.

Յաղագս դիպուածոց հայաստանեայց՝ և
եւ գաւառին արարատոյ՝ և մասին գողթան
գաւառի, սկսեալ՝ի թուոյն հայոց. 1054. էն.
մինչև յաւարտ պատմագրութեանս. այլև
՝ի յիշումն ածեալ մանաւորս
բար. աստի և անտի։

Տպագրեալ ի Տպարանի Սրբոյն Էջմիածնի.
և Սրբոյն Սարգսի զօրավարի։

՚Ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ կաթողի
կոսի Սրբոյ Էջմիածնի։

Ի Վերակացութեան Տեառն Ոսկանայ Երևան
ցւոյ բանի սպասաւորի.

ՅԱՄՍԹԷԼՕԴԱՄՈՒՄ.

՚Ի թուին փրկչին 1669. ին. Յուն
վարի

Իսկ ըստ Հայոց 1118. ին.
Ահամի. 29։

Армянскаго Лазаревых Института Восточных языков
Центральная библиотека Лазаревскаго Института Восточных языков

## Նախադրութիւն Առաջի կայ Գրոցս Պատմութեան ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

անցից հարուածոց որք եկին խլերոյ աշխարհիս Հայոց 'ի յետին ժամանակիս՝ ի թագաւորէն շահաբաս կոչեցելոյ և 'ի նորին ազգէն որք են պարսիկք ։

Նաև յաղագս անշքանալոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի․ և նորին Կաթուղիկոսացն ։

Այլև վասն աղաւաղելոյ կրօնիս քրիստոնէութեան ։

Ընդ սոյին այլևս բանք Պատմութեան դիպուածոց քաղաքաց և գաւառաց․ որք պատահեցան 'ի թագաւորաց եկեղեցականաց՝ և 'ի Կաթուղիկոսաց․ և յայլոց ։ գոյես ասա բաժանեալ 'ի գլուխս գլուխս ըստ բերման ժամանակին ։

Այլև ըստ պահանջելոյ հարկին աս
տանօր եդաւ Թուականն իբր զհիմն·
և ապա յարեալ ՚ի նոյն զպատմութին
որպէս զշինուածս · ըստ օրինի պատմա
գրաց ։ Բայց քանզի ազգս մեր յաւա
րառուաց և ՚ի գերչաց · և ՚ի հարկապա
հանջողաց ցիրևցանք եղեն · և կաշկան
դեալք, տառապեալք, և կապեալք
յաղքատութե որպէս յերկաթս՝ ըստ
սաղմոսին · հազիւ ամ մք զապրուստ
խուրձն կենաց հայթայթէ ։ վասնորոյ ոչ
գտաք զգիտող այնպիսի զի ընդ Պատ
մութեն · և զթուականն էր ծանու
ցեալ ։ Բայց մեք յոլով աշխատու
թէ խոյզ արարեալ՝ զորս կարացաք
գտանել՝ կարգեցաք ընդ Պատմու
թեանն զթուականն ևս ։ և զորս ոչ
կարացաք առանց թուականի պատ
մեցաք ։ իսկ դու ընկալ զայս այսպէս
առանց մեղադրելոյ · և յիշեա յաղօթս
քո զաշխատօղս ՚ի սմա ։

Պատմութիւք Ժամանակաց հաւաքեալ ումեմն Մաքեալ անուամբ Վար-դապետի որում տէր ողորմեսցի ։

Ա։

[illegible] ԶԺԱՄԱՆԱԿՍ ՅԵՏԻՆՍ ՅՈՐՈՒՄ ՆՈՒԱ-ղեցան ազգք, որք են քրիստոնէականն հաւատոյ

տոյս պաշտօնեայք։ Եւ զօրացան ազգքն, որք էին մահմետականօք կրօնիւք։ 'Ի կողմանս արեւելեան Պարսիկք. եւ 'ի կողմանն արեւմտեան Օսմանցիք. որք առին զհռչակաւոր քաղաքն զԿոստանդնուպօլիս յազգէն Հռոմոց. Ջը. Թուլին Հայոց։

Եւ յետ առնլոյ Օսմանցւոյն զԿոստանդնուպօլիս եւ ես մեծացան, եւ զօրացան. եւ ձգեցաւ իշխանութիւն նց յարեւելս կոյս' եւ եհաս մինչ 'ի Թաւրէզ. քանզի Օսմանցւոց փաշայք նստէին 'ի Թաւրէզ' եւ յԵրեւան' եւ 'ի Գանձայ' եւ 'ի Շամախի' եւ 'ի Դամուրղափուն. եւ մինչեւ 'ի Խուդափրինն ունէին ընդ իշխանութ̄ն իւրեանց։

Նաեւ զԱրայտուն աշխարհն Է ձեռամբ եւ հարկատու էին արարեալ։

Եւ 'ի ժամանակս յայս էր կթղկս սրբոյ աթոռոյն Էջմիածնի տէր Առաքեալ 'ի նոյն գեղջէն Էջմիածնի։ այր բարեսէր' եւ պահացող' եւ պարկեշտ. եւ բարեձեւ յամ իրս. 'ի գործս' եւ 'ի բանս' եւ 'ի հանդերձս. որոյ վարեալ զկթղկսութիւն 'ի կեանս իւր' յաւելաւ առ Տր̄։

Յետ սորա եկաց կթղկս սր̄ Էջմիածնի տէր Դաւիթ. եւ սա ես 'ի նոյն գեղջէն Էջմիածնի. առեալ սա զկթղկսութիւն վարէր ըստ բեր մին ժամանակին. եւ ըստ իւրում կարի. որ եւ յամս ինչ վարեաց։ Բայց մինչդեռ էր կենդանի, եւ յիշխանութեան կթղկսութեան, ձեռնադրեաց ինքն միւս եւս կթղկս որոյ անունն էր Մելքիսեթ. որ էր 'ի Գառնւոյ. 'ի գեղջէն, որ առ աղջոց վանք։ զսա ձեռնադրեաց այնու յուսով ոչ զի լիցի ինքեան օգնական. իսկ նա եղեւ խռչընդոտ' եւ հակառակ նմա. ոչ եւ զկնի պատմութիւնքն ցուցանեն։

Եւ

Նոյն Դաւիթ կթղկսն՝ որ զՄ՟ելքիսեթն ձեռնադրեաց կթղկս. սմա ասեն երկուս պատճառս։ Ոմանք ասեն յաղագս օգնելոյ՝ և ընկերելոյ ինքեան օրհնեաց. քանզի հարկապահանջութի այլազգեաց ծանրացեալ էր խիստ քրիստոնէից՝ որք կեղեքէին զկեանս նց. որք և ՚ի կթղկսէն եւս պահանջէին ինչս յոլովս. և նա զորս կարէր տայր. և զորս ոչ կարէր՝ հալածական լինէր. և թաքչէր ՚ի պահանջողաց։ և այսպէս հալածական և գաղտագողի կենօք կացեալ ՚ի ժամանակս ինչ. որոյ ձանձրացեալ ՚ի տառապելի կենաց. որ հանապազ փախչէր և թաքչէր. մտախոհ եղև ՚ի սրտի իւրում առնել զոմն ինքեան ընկեր՝ զի լիցին միմեանց օգնական, և մշտակից. զի թերևս կարիցեն երկոքեանն ոմն յայս կողմն, և ոմն յայնկողմն շրջագայիլ և պատրաստել ինչս. առի բաւական լինելոյ կարեաց և պակասութե կթղկսարանին։ (Ոմանք ասեն թէ այսու պատճառաւ օրհնեաց Դաւիթն զՄ՟ելքիսեթն կթղկս՝ զի լիցի օգնական ինքեան։)

Իսկ այլք ասեն թէ Մ՟ելքիսեթ կթղկսն էր այր փառաւոր և հետևօղ նախագահ իշխանութե. յորոյ պատճառէ բաշխէր առատութբ ինչս ամենեցուն. և զամենեսեան առնէր ինքեան բարեկամ ըստ նմանութե Աբիսողոմայ. ոպ զի օգնեսցեն ինքեան, և կամակիցք լիցին լինիլ նմա ՚ի կթղկս. որ և ետ ինչս բազում իշխանի տեղւոյն առ ի լինել կթղկս։ Իսկ իշխանն յետ առնլոյ ընչիցն բռնադատեաց ըզԴաւիթ կթղկսն հարկիւ զի օրհնեսցէ զՄ՟ելքիսեթն. իսկ Դաւիթն անճարեղեալ՝ թէ կամայ՝ և թէ յոչկամայ. օրհնեաց զՄ՟ելքիսեթն կթղկս։ Արդ՝ թէ այսպէս և թէ այնպէս եղեն

երկու կթղկք միոյ աթոռոյ 'ի միում ժամանակի:

---

Յաղագս գալստեան Սրապիոն վարդապետին 'ի սբ. աթոռն Էջմիածին և լինելոյ կաթուղիկոս:

Ի.

ԱՅՍՊԷՍ ԵՂԵՆ ԵՐԿՈՒ կթղկք ոչ սակաւ, զի թերևս թեթևացուսցեն զպարտսն. և ևս առաւել բազմացուցին. զի մինչև ցարդ՝ մի էր կաթուղիկոս՝ և մի էր մնխող. իսկ այժմ եղեն երկու կթղկք և երկու մնխողք: Արդ՝ եթէ 'ի ծախելոյն նց. և եթէ 'ի հարկապահանջութէ ժամանակին. և եթէ յայլինչ պատճառէ, բազմացաւ, դիզացաւ պարտքն ձեռամբ նց խղճ օրբոյ աթոռոյն Էջմիածնի. և աւեն թէ մինչ 'ի յիսուն հազար ղուռուշն է հաս պարտքն՝ և ոչ կարէին վճարել: Եւ յորժամ լինէր զի գային տուողք պարտուցն, և խնդրէին զիւրեանց տուեալ պարտսն. Նաև թգրկն, և իշխանական հարկահանքն պահանջէին զդիմասական հարկն. և կթղկքն, զի ոչ ունէին գոյս առ 'ի վճարելոյ, վս որոյ հանապազ 'ի փախստեան և 'ի թաքստեան կային. և ոչ կարէին 'ի միում տեղւոջ կալ աւուրս երկուս կամ երիս. և կամ լուսով տունջեան 'ի շինէս յայսմանէ 'ի միւս շէնն երթալ. այլ 'ի գիշերի երթային, և յոյժ ողորմելիք էին կեանք նց յայնմ ժամանակի. ոչ և պատմեն տեսօղքն: որոց անճարեալ 'ի նեղութէ վշտացն և 'ի ծանրութէ հարկացն: հանապազ 'ի տարակուսի կային, զի թերևս հնար լիցի փրկութե: Եւ 'ի բազում ժամանակս խորհելոյ՝ և մտայոյզ լինելոյ յաղագս խորհրդոյս այսմիկ. երկոքին կթղկքն կամօք՝

կամօք՝ իւրեանց և ա͞ծ խորհրդակցաց իւրեանց առնեն եղբայրացութիւն խոկման իւրեանց այսպիսի իմն եղանակաւ. ո͞ղ զի գրեսցեն նամակ մեծարանաց առ մեծ վրդ͞պտն Սրապիոն. որ էր առաջնորդ քաղաքին տիգրանակերտոյ՝ զի եկեալ վճարեսցէ զպարտսն։ Եւ էր գրեալ 'ի նամակին՝ թէ աՀա մեք մերովք կամօք իբրացկամք 'ի կթղիկոսութենս. եթէ գաս և վճարես զպարտսն, քեզ լիցի աթոռն և կաթուղիկոսութին։

Եւ էր վարդ͞պտն Սրապիոն տեղեաւ 'ի քաղաքէն ուրհայոյ. բարեպաշտ ծնողաց և յոյժ մեծատան զաւակ. որոյ զկնի մահու ծնողացն մնացին ինչք բազումք՝ և ստացուածք յոլովք. Բայց նա սիրեալ զկեանս մ͞բս, և զվարս առաքինիս. հետևեցաւ ս͞բ գրոց ընթերցման. և եմուտ յաշակերտութին մեծ վրդ͞պին Ղուկասայ կեղեցւոյ՝ որ էր գլուխ ա͞մ վրդ͞պաց ժամանակին։ Եւ կացեալ յաշակերտութե նր եղև այր կատարեալ ա͞մ իմաստութբ և ա͞ծաշունչ գրովք. զորոյ արժանաւորութին տեսանելով Ղուկաս վրդ͞պտին և ժողովրդոց վկայեցին առաջի Ղուկասու վրդ͞պտին. վ͞ս որոյ ետ նմա գաւազան վարդ͞պկան 'ի յամիթ քաղաքի. 'ի մերում թուականիս, հազար երեսունևհնգին. 'ի փետրվարի ամսոյ քսանին։ Որ 'ի քարոզել բանին կենաց աղբիւրաբար ոռոգանէր զպասքեալ ոգիս ժողովրդոց։ և ժողովուրդքն ա͞մքն հաճեալք և հաւանեալք կացուցանեն զնա առաջնորդ քաղաքին իւր͞ց։ Եւ նա ըստ բանի առաքելոյն զպաշտօնն իւր փառաւոր առնէր. քանզի ըստ հանդիսի երկնայնոյն էր ժամակարգութի նր՝ գեղեցիկ և պատշաճաւոր կարգաւորութբ. երգօք և

եղանակօք՝ գանձիւք և մեղեդիւք՝ թդ̄ւրօք
և ալէլուիւք: Իսկ դաս և քարոզ՝ իբր զուլո
րական գործ արարեալ Ինքեան. Հանապազօր
թարց իմիք հեղգութեն ասէր զդասն և զքա
րոզն: Այլև ժուժկալութե̄ և պահօք ան
ցուցանէր զկեանս իւր իբր զանապատաւորս:
Արդ իմաստութեն և առաքինութեն համբաւ ե_
լեալ հռչակեցաւ ընդ ամ̄ տեղիս. վ̄որոյ դի
մեալ գային առ նա յամ̄ աշխարհաց ցանկա
ցօղք իմաստութե̄ն առ ի յուսումն ս̄ւ գրոց.
և նա իբրև զջուր աղբեր կենդանւոյ զպաս
քումն ամենեցուն զովացուցանէր: Բանի
կարգեաց զդասատուն գրոց աշակերտաց. և
ուսուցանէր զամենեսեան որք մտանէին յա
շակերտութի նորին: յորոյ աշակերտացն բա
զումք եղեն արք երևելիք և անուանիք:
Յորոց էր կեսարացի գրիգոր վարդ̄պետ.
այր գիտնական նրբից և արտաքնոց. և յաղ
թօղ ախոյեան ընդդէմ մաքառողաց ճշմար
տութե. եթէ մերասերից՝ և թէ այլոց ազգաց:
Եւ Բարսեղ վարդ̄պետ մեծահոգի. որ
զկնի Արապիոն վարդ̄պետին նստաւ առաջնորդ
քաղաքին տիգրանակերտու՝ այսինքն համ
թայ:
Եւ Յօհաննէս վր̄պետ ուրհայեցի. որ եղև
ուրհայոյ առաջնորդ. որ աստեղաբաշխութե̄
և ամ̄ համարողական արհեստի էր քաջ հմուտ:
Եւ տարօնեցի Մխիթարէս վարդ̄պետ՝ որ էր
կատարեալ գիտօղ երաժշտական երգոց և
եղանակաց:
Եւ Յօսէփ և Յօհաննէս վարդ̄պետքն ՚ի
հզուէոյ:
Եւ միւս Յօհաննէս վարդ̄պետն ՚ի քաջբերու
նւոյ՝ այսինքն յարճիշոյ:

Եւ

Ու Աննէս կաթողիկոսն 'ի Սիւնեաց աշխարհէն. որ եղև լուսաւորիչ արևելեան մասին աշխարհիս, և նորոգող սրբոյ Էջմիածնի. զորոյ զարդեանց զպատմութիւն առնելոցեմք յառաջիկայդ ։

Ու զի ես երկարեցից, եթէ վարդապետն Արսապիոն երևելի և փառաւոր յաչս ամենեցուն՝ ոչ միայն 'ի մէջ մերոյ ազգիս հայոց. այլև հոռոմոց. և ասորւոց. և մահմետականաց. զի ոչ տկարանայր առ նա գործ, զորինչ և կամէր կենցաղական ։ Յաղագս որոյ գրեցին առ նա երկոքին կաթողիկոսքն նամակ ողջունի և սիրոյ. և ասեն, ահաւասիկ մեք տկարացաք՝ և ոչ եւս կարեմք վճարել զբազմութիւն պարտուցս յորս խորասուզեալ ընկղմեցաք. վասնորոյ մեք մեզէն մերովք կամօք խոացկամք 'ի կաթողիկոսութենէ և 'ի տիրութենէ սրբոյ աթոռոյս. արդ քեզ շնորհեալ է ամենայնն ոտ և ես արժան՝ կաթողիկոսութեան և աթոռոյն ։ Արդ՝ խնդրեմք 'ի քէն մի՛ անփոյթ առնիցես գալ 'ի փրկութիւն մեր. և մնասցանդ 'ի վերակացութեան ծեր և հոգևոր ծնողին քոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի ։

Իսկ վարդապետն Արսապիոն իբրև լուաւ զանունն սրբոյ Էջմիածնի՝ յօժարեցաւ 'ի գալ. ոչ թէ յաղագս կաթողիկոսութեան և փառաց. քանզի նա փառաւորեալ էր յԱստուծոյ և 'ի մարդկանէ. այլ վասն փրկութեան լուսասփիւռ աթոռոյն ։ Ա՛ղի ցուցեաց նմա իբր որդւոյ հարազատի իւրոյ ծերացեալ ծնողի ։ վասնորոյ եկեալ 'ի Տիգրանակերտ՝ և ճանապարհ արարեալ իւր քաղաքին Վանայ եկեալ հասանէ 'ի վերին աշխարհս հայոց 'ի դիւղաքաղաքն Ջուղայ. որ էր մեծ և երևելի 'ի ժամանակին յայնմիկ 'ի մէջ արևելեան աշխարհիս ։ զի տակաւին ոչ

էին

էին վարեալք յաշխարհն պարսից. եկեալ անդ 'ի Ջուղայ քաղաքի: և համբաւ գալստեանն նր̃ հռչակեցաւ ընդ ա̃մ տեղիս: Որ լուեալ կթղկացն երկոցունց աւին զոմանս յիւրեանց խորհրդակցացն զմանուէլ եպիսկոպոսն խորվիրապայ. և զմիւս մանուէլ եպիսկոպոսն հաւուց Թառայ. և զծ̃ատուր եպիսկոպոսն գեղարդայ. և զոմանս 'ի մարմնաւոր ազգականաց իւրեանց եկեալ հասին 'ի գիւղն Ջուղայ. յորում և վրդ̃պտն Սրապիոն եկեալ կայր: Եւ յետ անցանելոյ աւուրց ինչ յառաջարկին բանս յաղագս գործոյն որոյ սակս և բերեալ էին ըզ վարդ̃պտն, և այն ինչ մինչդեռ 'ի խօսան կային. և բանն իմէջ նց̃ յառաջանայր. Թշնամին արդարութե̃, և հակառակն ճշմարտութե̃ բանսարկուն. որ հանապազ փեռեկտէ զեկեղեցիս Քրի̃. յանկարծակի էարկ իմէջ նց̃ զերկպառակութիւն և զխռովութիւն: Քանզի աբ̃քն, որք կթղկսեանք էին ոչ հաճեցան ընդ սուղ ինչ եպերական բանս վրդ̃պտին. վասն որոյ և արարին շփոթ և աղմուկ. որև հաւուց Թառայ մանուէլ եպիսկոպոսն իւրովի իսկ յոտին կացեալ 'ի հանդիսի անդ բարձրաձայն աղաղակաւ աղմուկ շփոթի էարկ իմէջ նց̃՝ և խանդարեաց զասելն և զլսելն. յորոյ անհեթեթ ներգործեալ իրակութենէ վերայ խռովեալ ամենեցուն՝ որք նստէինն՝ տաղտկացեալք իբրաց լքան ամենեքեան. և իբրև զատելիս միմեանց երևեալք իւրաքանչիւրոք ըստ կամաց անձին իւրոյ գնաց:

Ուստի յարուցեալ կթղկսունքն, և աբ̃ք իւրեանց գնացին 'ի գաւառն սիւնեաց 'ի վանքն տաթևու:

Իսկ վարդ̃պտն Սրապիոն անդէն 'ի Ջուղայ կացեալ աւուրս ինչ՝ իբրև զբարձրաբարբառ

աւե

աւետարանիչ նորոյ սիօնի հանապազօր ուսուցանէր՝ և լուսաւորէր զամենեսեան լուսափիւռ վարդապետութեամբ։ Սա որ հաճեալ և հաւանեալ ջուղայեցւոցն և այլ արևելեայց․ ուրախացեալք զօրհնութիւն 'ի բարձունս վեր առաքէին։

Սրոց առեալ զվարդապետն ածին 'ի բարձրագահ աթոռն 'ի մէջ Էջմիածնին․ և ժողովեալ զամ ժողովուրդ երկրին զեկեղեցականս՝ և զաշխարհականս եղև սիւնհոդոս մեծ․ և այնպիսի մեծախուռնէ հանդիսիւ ձեռնադրեցին զվարդապետն սրապիոն կաթողիկոս ամենից հայոց․ և յաջորդ սրբոյ աթոռոյն Էջմիածնի։ 'ի թուականութեան մերում հազար յիսուն և երկու՝ յօգոստոսի ամսոյ տասներորդ։ Եւ յաւուր ձեռնադրութեան նր մակադրեցին զանուն նր Գրիգոր՝ ըստ կոչման սրբոյ լուսաւորչին․ զի թերևս աղօթիւք նորին և սա 'ի վերջինս արփիաւորեսցէ զհայազունս որդ և նա 'ի նախկինն․ որ յաւուրս մեր կատարեցաւ այս խորհուրդ և մտածութիւն։

---

Յաղագս գալստեան Շահապասայ թագաւորին պարսից յաշխարհս հայոց, և ունելոյ զնմ․ և վարդապետին Սրապիոնի զառնալոյ անդրէն 'ի տեղի իւր։

Գ։

ԻՍԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՔՆ երկոքին Դաւիթ և Մելքիսեթ և արքն որք ընդ նոսա, իբրև տեսին թէ ոչ եղև միաբանութիւն իմէջ նոցեանց և Սրապիոն վարդապետին․ և մանաւանդ փոխանակ միաբանութեան խռովութիւն ևս անկաւ։ Ելեալք 'ի ջուղայոյ գնացին 'ի վանքն տաթևու․ և անդէն զտեղի

զաւեղի առեալ աւուրս տասն. խորհէին, խոկային, երկնէին, զի գտցեն հնարիւք գտանեցի՝ զի մի՛ 'ի կենդանութենէն զրկիցին՝ այլ մնասցեն կենդանութիւն 'ի ձեռս իւրեանց. և այլ իմն կերպիւ զերծցին 'ի ձեռաց պարտատուաց։ Խորհեցան խորհուրդ և ոչ տերամբ, ըստ գրեցելումն. 'ի կորուստ անձանց իւրեանց. կործանումն և 'ի տապալումն աշխարհին. և 'ի ջնջումն ազգին իւրեանց։ Քանզի սահմանեցին հաստատութիւն 'ի միջի իւրեանց զի գնասցեն 'ի սպահան առ Թագաւորն պարսից։

Եւ պատճառ գնալոյ սոցա այս էր. զի հաւաստեաւ և ստոյգ գիտէին Թէ շահն պատրաստեալ է գալ 'ի յաշխարհս հայոց։ Քանզի յառաջ քան զսոսա՝ բազումք ոմանք յաշխարհէս տարպատականի իշխանք և կողմնակալք. մահմետականք՝ և քրիստոնեայք գնացեալ էին առ Թագաւորն պարսից։ Քանզի յոյժ չարաչար նեղութիւն նեղէին զնոսա՝ ազգն Օսմանցոց ծանր հարկապահանջութեամբ. և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին. և հաւատոց կուռէձութիւն առնէին. և այլ բազում տառապանօք չարչարէին։ ոչ միայն զազգս հայոց. այլև զազգն վրաց՝ և զմահմետականաց։ և վն այնր նեղութեան գնացին առ Թագաւորն պարսից. զի Թերևս նովաւ զդիւրութիւն ինչ գտցեն զերծեալք 'ի ծառայութենէն Օսմանցւոց։

Պաղիխան անուն ոմն յազգէն քրդաց՝ որ էր մեծ իշխան և կողմնակալ աշխարհին մարաց. նեղեալ յազգէն Օսմանցւոց՝ զի կամէին սպանանել զնա Օսմանցիքն, և յինքեանս գրաւել զիշխանութիւն նր. առաքեաց զհաւատարիմն իւր որ խանադալ ասէին առ շահն. զի

եկեալ

եկեալ փրկեսցէ զինքն. և ինքն լինիցի ՚ի կողմն շահին :

Այնպէս և միւս իշխան յազգէն մարաց. որում անէին ուլամայ օղլի Հայբաթ բէկ. սա ոչ թէ զայլս առաքեաց՝ այլ ինքնին գնաց առ շահն :

Նա և Թէքուրքն վրաց ունէին կամք. զի պարսիկք ունէին զաշխարհս, քանզի ոգւով չափ վշտացեալք էին յՕսմանցւոց. ոչ միայն վն նեղութեանց Օսմանցւոց՝ այլ մանաւանդ վն ըմբռնմանն մեծ Ախմէտ խանին, Թէքուրին իւրեանց. զոր ըմբռնեալ Օսմանցիք տարան ՚ի ստամբօլ և անդ սպանին : այլև զԹոռն մի ևս խաբով տարան ՚ի ստամբօլ՝ և զնա ևս սպանին : Իսկ Թէքուրցս վրաց յոլով պատանդք կային առ Թէքուրան Պարսից. որ էր դուստր և որդի վերոյ ասացեալ Ախմէտ խանին Թիֆլիզու : Նա և որդի Իսքէնդար Թէքուրին կախեթու. որում անուն էր Կոստանդին : Նա և եղբայր Իթաբէկ իշխանին սօմխեթու. որոյ անունն էր Թահմազղուլի : Եւ այլք յոլովք կային յազգէն վրաց առ Թէքուրն Պարսից :

Իսկ յաշխարհէն Իղոանից և յազգէն Հայոց գնացին. Աթոռխանբէկն և իւր եղբայր Նազարն ՚ի յոսկանապատ գեղջէ : Օղլանբէշիշն և իւր եղբայր Պալաբէկին. ՚ի Հաթերք գեղջէ : Պալաբէկն, իւր եղբօր որդւովքն ՚ի խաչէնոյ : Մէլիք սուջումն ՚ի դիզակայ : Մէլիք փաշիկն ՚ի քօշիղ գեղջէ : Մէլիք բաբէն ՚ի բերետիս գեղջէ : Մէլքիսեթ եպիսկոպոսն ՚ի վերին զակամոյ ՚ի մելիքզատայ գեղջէ : Մէլիք հայկազն ՚ի քշտաղս երկրէն ՚ի խանածախ գեղջէ : Իսկ չորս գեղ ՚ի դիզակայ երկրէն միահաղոյն չուեցին, և գնացին յերկիրն

Պար

Պարսից. և Շահն բնակեցոյց զնոսա 'ի քաղաքն Ասպահան։ Այս է պատճառ գիւղակեցւոյ և դաշտեցւոյ գնալոյն ծանր հարկապահանջութեն. կեղեքելն, և կողոպտելն, և կռուածութի առնելն. և անխնայ սպանանել զքրիստոնեայսն. և եղեալք էին ամէն յոյժ չքաւորք և պարտատեարք. մնացեալք էին անձարք. վնորոյ փախուցեալք գնացին յերկիրն պարսից։ Զանուանս արանցս զորս յիշեցաք ամէն էին արք նշանաւորք. սոքա և առաւել քան զսոսա յոլովք գնացեալք էին առ շահն, զորս գիտէին կթղկքն։ այլև տեղեկացեալք էին թէ շահն հաւատարիմ գոլոյ է յաշխարհն հայոց. վն որոյ և նոքա ևս կամեցան գնալ. թերևս դիւրութի և օգտութի ինչ գտանիցեն նեղութեց և պարտուց իւրեանց։

Յայնմ ժամանակի 'ի զրաւ թմ խորհրդոց՝ Դաւիթ կթղկսն և խորվիրապայ մանուէլ եպկպսն մնացին յաշխարհս հայոց։ Իսկ մելքիսեթ կթղկսն. և հաւուց թառայ մանուէլ եպկպսն. և գեղարդայ ամծատուր եպկպսն ելեալք 'ի տանթեւու պատճառանօք իմն գնացին յաշխարհն պարսից։ և եղև իբրև նոքա ձողոպրեցան 'ի մասն բաժնի երկրին պարսից. և անյապաղ փութացան 'ի գնալ մինչև հասին 'ի քաղաքն ասպահան՝ և երևեցան շահաբաս թագաւորին. և զեկուցին նմա զխորհուրդս իւրեանց։ Իբրև զայն լուաւ շահն և ծանեաւ. ցնծացաւ յոգի. բերկրեցաւ 'ի միտս. զուարթացաւ 'ի մարմին. զի մեծ եղև նմա ուրախութի յաւուր յայնմիկ քան զամ աւուրս կենաց իւրոց։ Նա ըստ խորամանկ բարուց իւրոց շահաբասն սկսաւ մեծարել և պատուել զնոսա. տրօք և պարգևօք երևելեօք։

Եւ օր ըստ օրէ կոչեալ զնո՟ առ ինքն խօսէր ընդ-նո՟ ըստ միոց ն՟ց․ և զսիրտս ն՟ց յինքն յանկուցանէր , և զինքն նոցին հաւատարիմ և բարեկամ ձևացուցանէր , և խոստանայր մեծաց բարեաց հասուցանել զնո՟ ։ Եւ այնքան անո-տի և պատիր խաբէութե՟ կեղծաւորեալ զինքն նոցին մտերիմ ցուցանէր՝ մինչ զա՟մ խորհուրդս սրտից նոցա յինքն գողացաւ , և զա՟մ ողխութի աշխարհաց ն՟ց զել և զմուտ , և զաշխարհական արանց իմացաւ ։

Եւ իբրև գիտաց թէ Ճշմարտիւ և սիրով ն՟ց այնոյ է ո՟չ բերանով խօսին , ապա հրամանս ետ զօրավարաց իւրոց․ պատրաստել զզօրս առնի գնալ , և իսկոյն վաղվաղակի կատարեցաւ հրամանն ։ Խաղաց այնուհետև ա՟մ զօրօքն գալ 'ի Թաւրէզ ի՟ր զօրացն Օսմանցւոց , որք անդէն բնակեալք էին , և ունէին զԹաւրէզ և զգաւառս ն՟ր ։

Եւ յորժամ շահն եկ 'ի ապահանայ գալ 'ի Թաւրէզ , զ'ի վերոյ յանուանէ յիշեցեալ զարսն զա՟մն ընդ իւր էառ , և փութանայ և օդապարիկ երիվարօք , եկեալ 'ի սպահանայ վաղվաղակի 'ի սակաւ աւուրս հասին 'ի Թաւրէզ ։ բնաւ ո՛չ գիտացեալ զօրացն Օսմանցւոց զգալն Պարսից՝ քանզի ո՛չ թէ 'ի բազում , այլ 'ի սակաւ աւուրս էհաս 'ի Թաւրէզ ։

Իսկ 'ի հասանել շահաբասին 'ի Թաւրէզ՝ յաջողակ գտաւ գործն առաջի ն՟ր , վ՟ զի տէրն Թաւրիզու՝ որում անունն էր ալիփաշայ , զօրաժողով արարեալ արանց իբրև քան հազարաց գնաց 'ի գաւառն Սալմաստայ՝ ի՟ր նախկին յիշեցեալ քուրդ պարոնին ղազիխանի , վ՟ զի յայտնի եղեալ էր Օսմանցւոցն զի ղազիխանն բաժանեալէ 'ի միաբանութենէ

Օսմանցւոցն՝ և միաբանեալ է ընդ Պարսից. և զհաւատարիմն իւր զխան աւդայն առաքեալ է առ Շահն. վասն այսորիկ ժողովեցան զօրքն Օսմանցւոց՝ և գնացին ՚ի սալամաստ իվերայ ղուլի խանին: Իսկ ղուլի խանն, նախ քան զհասանիլ զօրացն Օսմանցւոց՝ ել ՚ի սալամաստայ և գնաց յորմի գաւառ. և էմուտ յան առեկ բերդն՝ որասի գօկարչին ղալասի՝ որէ իմէջ ծովակին ուրմոյ՝ և անդ ամրացաւ:

Իսկ ալիփաշէն և զօրքն Օսմանցւոց եկեալ ՚ի սալամաստ տեսին զի ղուլի խանն գնացեալ էր յորմի. իսկ նք ոչ գնացին յորմի, զի կամեցան նախ երկիրն սալամաստու և զբերդն ընդ իւրեանց իշխանութն գրաւել. և ապա գնալ յորմի իվ̃ ղուլի խանին. և զի էր ամուր բերդ մի յերկրին սալամաստու՝ որում անեն ղանձիխարուխ, և շուրջ զնովաւ յարդարեցին զպատերազմ, և մինչև ցերիս ամիս կացին անդէն զօրքն Օսմանցւոց. և պատերազմեալք ընդ բերդին ոչ կարացին առնուլ:

Յաւուրս յայսոսիկ յորս Օսմանցիք իվ̃ ղանձիխարուխ բերդին պատերազմէին, եկն Շահն՝ և էհաս ՚ի Թաւրէզ, եթող զքաղաքն՝ և անցեալ եկն ընդ դէմ զօրացն Օսմանցւոց: Իսկ Օսմանցիք իբրև զգացին զգալն պարսից՝ և իմացան ստուգիւ թէ Շահն ինքն է՝ քանզի յառաջ համարեցան թէ զօրավար ումն իցէ). ևկոյն թողեալ զպատերազմն բերդին, դարձան և եկին մերձ ի գիւղն սօֆիան. և անդէն ՚ի դաշտին սօֆիանու խմբեցան՝ ի պատերազմ յանդուգն բախման: Այլ ՚ի նմին պատերազմի երևելի քաջութիւ գործեաց ուլամայ օղլի հայրաթբէկն, զի զքան գլուխ էբէր

առաջի

առաջի Շահէին յայնմ պատերազմի․ և իբրև
զգիշախանձ և անյագուրդ գազանն՝ յաւել ևս
մտանել 'ի պատերազմ․ և վասն առաւել ար
շաւանացն խոնջեալ երիվարին լքաւ․ և զօրացն
Մամիկոնեից պատեալ շուրջ զնովաւ ընդմա
փակ արարին զնա իմէջ իւրեանց՝ և անդէն
հարեալ սպանին զՀայրաւթբէկն ։ Իսկ զայն
տեսեալ զօրացն Պարսից երկիւղակիր լեալ
զանգիտէին, որով սուղէին և պարտեալ երև
իւր կողմն պարսից ։ Իսկ նախոյն կոչեալ Շահն
առաջի իւր զմեծ խանն զըլֆիղար՝ և քաջա
լերեալ արիացոյց զնա՝ և հրաւիրեաց 'ի պատե
րազմն․ Իսկ նա 'ի քաջալերանաց Շահին զօրա
ցեալ էմուտ 'ի հանդէսն իմէջ պատերազմին․
և հարեալ խորտակեաց զօրեղ զօրութիւն
զզօրսն Մամիկոնեայց ։ Իսկ զայն տեսեալ զօր
ացն Պարսից առհասարակ յամ կողմանց դի
մեալ ի վր հարեալ 'ի սուր սուսերի ջնջեալ
ջնջեալ առհասարակ զհամն տապաստ դաշ
տացն արկանէին, և մնացեալքն փախստեամբ
կորնչէին ։

Իսկ ալեփաշէն իբրև էտես զպարտութիւն
իւրոյ կողմանն, և զայն ևս թէ սատակեա Շահն
ինքնէ, էառ ընդ իւր զորդին իւր՝ և եկեալ
անկաւ յոտսն Շահին, և աղաչէր վն ապաստու
թե ։ Իսկ Շահն սիրով և գթով ընկալաւ զնա՝
և մեծաւ պատուով պահէր առ ինքն, և ընդ
իւր տարաւ 'ի սպահան ։

Իսկ յետ վանելոյ պատերազմին եկն Շահն՝
և էմուտ 'ի Թաւրէզ․ և կալեալ տիրեաց քա
ղաքին և ամ գաւառացն ։ և զբերդն որ էր
իմէջ քաղաքին քարայատակ արարեալ քա
կեաց 'ի հիմանց․ կացեալ անդէն աւուրս ինչ
մինչև ամ երկիրն նուաճեաց ընդ ձեռամբ,

կարգեաց իշխանս և գործակալս յիւմ սահմանս նր̃ :

Իսկ մնացեալ զօրքն Օսմանցւոց որք 'ի քաղաքէն Թաւրիզու փախեան. և որք 'ի պատերազմէն զերծան, գնացեալ ժողովեցան 'ի քաղաքն Նախջուան : և ընդ զօրացն Նախջուանու խորհեցան զխորհուրդ, թէ Թգ̃ւրն պարսից մ̃տ այսմ աշխարհիս եկեալ է , և զխարդ և հցէ վերջն այն է , որ նա առնլոց է զաշխարհս զայս 'ի ձեռաց մերոց : Արդ՝ նախքան զգալն նր̃ մեք կողոպտեալ և աւարեալ յափշտակեսցուք 'ի գեղօրէից գաւառիս որքան կարեմք՝ և առեալ գնասցուք : Եւ այս խորհուրդ յայտնեցաւ գեղականաց գաւառացն, և մանաւանդ Ջուղայու . զի յաւէտ վասն Ջուղայու էր խորհուրդն այն , վս̃ որոյ ամ̃քն ելեալք 'ի բնակութենց և 'ի շինամիջէ փախեան , և ելին 'ի լերինս՝ յայրս՝ և յամուր վայրս տեսանել զվերջն թէ ոն̃ լինելոց է :

Եւ լուրս այս հասեալ եղև առ շահն 'ի Թաւրէզ , յաղագս որոյ կարգեաց զօրավար Ղչրաղ սուլթանն՝ և բազում զօրօք առաքեաց 'ի պահպանութի գաւառականացն Նախջուանու : և նա եկեալ էհաս 'ի Ջուղայ : Իբրև զայն տեսին Օսմանցիքն խափանեցին 'ի խորհրդոց իւրեանց : Բայց թէպէտ ոչ առաւել՝ այլ զորինչ կարացին Օսմանցիքն կողոպտել 'ի մերձակայ գեղօրէիցն , կողոպտեալ աւարեցին՝ և ժողովեցան 'ի Նախջուան :

Իսկ բնակիչքն Նախջուանայ եթէ սպայա զօրք , և թէ ռամիկք՝ իբրև լուան զառումն Թաւրիզու՝ և զվանումն որ անդէն զօրացն , և զայն ևս զի հանդերձեալք են պարսիկքն գալ իվր̃ ինքեանց , իբրև զջուր լեալ յերկիւղ հեղան ,

ղան, լքան 'ի սիրտս, և լուծան 'ի ձեռս: Իսկ այն զօրքն Օսմանցւոց, որք փախեան 'ի Թաւրիզու և եկին 'ի Նախջուան, ոչ կարացին մնալ անդէն՝ և կալ ընդդէմ, այլ երկեւղիւ մեծաւ ըմբռնեալք 'ի սիրտ և յոգի, հապ ճեպ տագնապաւ ելին 'ի Նախջուանայ՝ և ժամանեալ անկանէին 'ի քաղաքն Երեւան: Իսկ 'ի հարաւային կողմն բերդին Երևանայ կից ընդ նմա պատեցին պարիսպ և շինեցին միւս եւս բերդ, և մտին նոքեանք 'ի ներս պատերազմականօք զինուք:

Իսկ 'ի տագնապելն աւուրսս այսոսիկ, ազգն Օսմանցւոց՝ որք պարտս էին տուեալ դաւիթ կէթղիկսին և մելքիսէթ կէթղիկսին, կալան զպարտսն կէթղիկսն՝ և 'ի նմանէ պահանջէին զինչս ներեանց՝ ասելով, պարտք մեր 'ի վր աթոռոյնէ՝ որոյ դու այժմ յաջորդ ես և կէթղիկս, և քեզ հարկ է զի դու վճարեսցես մեզ: և նա թէպէտ բազում բանս իրաւամբք տայր պատասխանիս, սակայն նոցա ոչ լինէր լսելի: Նաև կամէին զնա եւս առնու ընդ նոքեանս 'ի բերդն, բայց ողորմութեն Ա. Տօգնեայ. զի ոմանց յոլով և ոմանց սակաւ ետ ինչս՝ և զերծաւ 'ի ձեռաց նոցա, զի ոչ առին 'ի բերդն, և մնաց 'ի գաւառին մինչև եկն շահն յերևան:

Իսկ անտի 'ի Թաւրիզու շահաբասն նախ քան զինքն առաքեաց ղղըլֆիղար խանն 'ի Նախջուան կալ անդէն, և տիրել քաղաքին մինչ նոքին գայցէ, որ և գնացեալ ղըլֆիղար խանն՝ արար այնպէս: Եւ եկեալ մերձ բերդին Նախջուանու բանակ եդեալ նստաւ, այնքան մերձ, որ թէ թփանք ձգէին հասանէր: Յաղագս որոյ ասացին բարեկամք ղըլֆիղար

խաննինցեա, թէ զգուշութիւն պահեա զքեզ՝ զի մի Օսմանցիք թփանգով հարցեն զքեզ։ Որոց առարեալ պատասխանի ժպտելով և զՕսմանցեօքն եպերանս առնելով, թէ Թփանգք նր յաչս իմ պատահեսցի։ Ապա յաւուրն երկրորդի առաքեաց պատգամս առ իշխանս քաղաքին Նախչուանու, թէ մի ձգէք Թփանգ կամ նետ, զի ես սակաւ արամբք գամ առ ձեզ խօսել ընդ ձեզ բանս ինչ իրաւամբ և դատաստանաւ։ Եւ առեալ ընդ իւր արս քսան՝ ելեալ ՚ի բանակէն հեռուստ դնաց ՚ի քաղաքն, և հասեալ ՚ի դուռն քաղաքին նըստաւ անդէն, իբրև ժողովեցան առ նա ամ իշխանք քաղաքին յայնժամ Զըլֆիղարխանն սկսաւ ասել իշխանացն Օսմանցւոց։ Արդ որոյ յուսոյ և կամ որոյ աւուր սպասկալեալ մնայք, զի ոչ թէ ես եմ եկեալ պատերազմիլ ընդ ձեզ, և կամ թէ նման ինձ խան մի, այլ ինքնակալ թգւոր բազմօք զօրօք եկեալ զհայրենիս աշխարհն իւր խնդրէ։ Եւ դուք որով զօրութբ կարէք ընդդիմակայել և պատերազմիլ ընդ նմա։ Արդ բանս բարեկամի առեմ ձեզ, զի ինձ այսպէս դոլ բարի թուի, և թէ ձեզ ևս բարի թուի՝ արդէն իսկ ելէք դուք ամքն ձերովք ընտանեօք և ընչիւք խաղաղութբ գնացէք, և մի յամառեալ դիմադարձիք և պատերազմիք, զի մի դուցէ յաղթեալ պարտիցէք՝ և մատնիցիք դուք ՚ի սպանումն, և ընտանիք ձեր ՚ի գերութիւն, և ինչք ձեր յաւար։

Յայնժամ հաւանեալ բանից նր իշխանքն և ազգն Օսմանցւոց, խնդրեցին ՚ինմանէ աւուրս ժամադրեալ՝ յորս ելանիցեն ՚ի քաղաքէն, և խանն արար այնպէս։ Այնուհետև սկսան ամ ազգն Օսմանցւոց ելանել ՚ի քաղաքէն

քէն Նախչուանայ՝ և բանակ եդեն 'ի կողմն ինչ քաղաքին՝ մինչ ամքն ժողովեցան անդ։ Եւ մինչ երանելին Օսմանցիքն 'ի քաղաքէն եկին զօրականք 'ի զօրացն Ղզըլպաշին՝ և կացին 'ի դրան քաղաքին, միայն զթֆանք եղեալ զէնն առնուին յՕսմանցւոց՝ և ոչ այլ ինչ, և բայց յայն մանէ զամ ինչս և զզէնս իւրց առեալ Օսմանցւոցն գնային։ Եկին բաղումք որք 'ի զօրականաց քաղաքին առ խանն զՖիլղար, և ասացին․ աք որք ելանեն 'ի գնալ՝ ոչ են բնիկ բնակչն 'ի քաղաքէ աստի՝ այլ որոց և գնան․ իսկ մեք բնական 'ի քաղաքէս եմք, և ոչ կամիմք գնալ աստի, մինչև ցարդ տէրութն և իշխանութն խոնդքարին էր նմա ծառայէաք՝ արդ որով հետև եղև տէրութն և իշխանութն շահաբասին՝ կամիմք աստէն կալ և մնալ՝ և նմա ծառայել։ Եւ առ այս բան յոյժ հաւանեցաւ խանն, սիրով և գթով ընկալաւ զնոսա՝ և հրամայեաց այնպէս լինել, որև եկեալ զինուորացն վաղվաղակի հանին զՕսմանցւոց ձեւն յինքեանց․ և հարթեցին զերկայն մօրուսն իւրեանց՝ և զգեցան զկերպս Ղզըլպաշի, և եղեն ամ զբաղմաժամանակեայ Ղզըլպաշք։ Այլ և հրամայեաց խանն ելանել մունետիկ՝ և բարձրաձայն քարոզել ի մէջ քաղաքին, թէ այուհետև եղև տէրութն և իշխանութն և աշխարհակալութն շահին, ովք սիրէ զշահն կացցէ աստ անհոգութբ, և ովք կամի գնալ՝ գնասցէ խաղաղութբ զճանապարհս իւր։ և կացին այսու աւանդութբ մնացեալքն որք քաղաքին․ մինչոր եկն շահն ինքն 'ի Նախչուան։

Եւ ինքն շահն մինչ էր 'ի Թաւրէզ՝ յոյժ շուտափոյթ Ձեպով յարդարեաց զամ որպիսութն կողմանցն այնոցիկ։ և իսկոյն հրամայ-

եաց սպայապետաց խուռոց զի չուառարեալ գնասցեն դէպ ուղեղ 'ի քաղաքն Նախչուան։

Եւ 'ի գալն յորժամ հասին 'ի գիւղաքաղաքն Ջուղայ, ամ̃ բնակիչքն Ջուղայու բազում, և զանազան, և պէսպէս յօրինուածովք պատրաստութիւ հոգացեալ էին ը̃ առաջ շահին որ̃ վայելէ թ̃գւորի։ Իշխանք՝ և ծերք, և երիտասարդք՝ 'ի զարդ և 'ի զէնս ոսկեհուռն սխրատեսիլ հանդերձից պճնազարդեալք ը̃ առաջ ընթանային։ Եւ նորա բողբոջ դեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ և զազնիւ գինի մատուցանէին։ Ցուցեալ մոմեղէնօք և խնկօք և կնդրկօք քահանայք և մարմնաւոր երգեցիկք առաջի ընթանալով յարմարական ձայնիւ նուագէին։ Եւ զճանապարհս անցից արքային զարդարեցին, և յեզերէ գետոյն մինչև ցապարանս խօջայ խաչիկին արկին փայանդազ առաթուր թ̃գւորին, պատուական և վայելուչ կումաշս, որոց վերայ էանց թ̃գւորն՝ և գնաց 'ի տուն խօջայ խաչիկին։ Եւ 'ի տուն մտեր, խօջայ խաչիկն զոսկի սկուտեղ լցեալ ոսկով եդեալ 'ի ձեռն որդւոյ իւրոյ մատոյց առաջի թ̃գւորին նոյնպէս և ամ̃ մեծամեծքն Ջուղայու մատուցին զընծայս, որ̃ վայելէ թ̃գւորի։ և զաւուրս երեք եկաց անդ շահն, և Ջուղայեցիք պատուէցին զնա համադամ կերակրօք և ծաղկեհամ գինեաւ։

Իսկ վիշապն անդընդային շահաբաս՝ որ 'ի սկզբանէ զբարս օձի ունէր բնաւորեալ յինքեան ընդդէմ քրիստոնէից, երբև տեսանէր զայնքան հարստութիւն՝ և զբարեվայելչութիւնն քրիստոնէից՝ մախայր. և զգայուէր 'ի սրտի՝ թէ զիարդ պատճառ և ժամ գտցէ նենգել նց̃։ Բայց առ ժամն ծածկեալ զթոյնն առերեւս սրտահաճուկ լինէր։ Եւ

Եւ յետ երից աւուրց ելեալ 'ի Ջուղայոյ գնաց 'ի Նախչուան. և մտեալ 'ի քաղաքն տիրէ նմա առանց պատերազմի. և բնաւին իսկ Թարց աշխատանաց, և կացեալ անդէն աւուրս սակաւս կարգեաց իշխանս և գործակալս յո̃մ սահմանսն նր̃ ։

Եւ ինքն Շահն յառաջելեալ ո̃մ բանակաւն իւրով զեւալ՝ խաղալ՝ գնալ ի վ̃ր̃ քաղաքին Երեւանու ։ Իբրեւ եհաս յԵրեւան ։ պատեալ պաշարեաց զբերդն շուրջանակի ։ և ամենևին առանց իմիք վտանգի և աշխատանաց նորա առեալ կայր ի վ̃ր̃ նր̃, քանզի զշրջակայ երկիրն ընդ իւրով իսկ հրամանաւն ունէր գրաւեալ՝ որ էր շէն և լի ա̃մ բարեօք՝ ուստի լցեալ լինէր ա̃մ պիտոյք բանակին պարսից, մարդկան և անասնոց, և այսպիսի հանդարտութե̃ զտեղի առեալ կայր ։ Որ զի երբեմն խստագոյն պատերազմէր, և էր զի թուլագոյնս. և երբեմն զի բանս խաղաղութե̃ դաշանց և ուխտի՝ սուտ երդմամբ և պատիր բանիւք ի ներքս 'ի բերդն առաքէր, զի զբերդն միայն նմա տայցեն, և ինքեանք առեալ զստացուածս իւրեանց խաղաղութե̃ գնասցեն յաշխարհն իւրեանց ։ Բայց զօրքն Օսմանցւոց ոչ առնուին յունկն զբանս շահին, այլ տակաւին տեւէին յուսով՝ զի գուցէ ուստեք ժամանիցէ փրկութի̃ նց ։

Եւ յաւուրսս յայսոսիկ հրամայեաց շահն զօրացն պարսից գնալ յերկիրն Արարադու՝ և յա̃մ շրջակայ գաւառս նորա, հանել յա̃մ տեղեաց արս՝ որ ասի ռադաթ, եթէ 'ի քրիստոնէից իցէ, և եթէ 'ի մահմետականաց, ժողովել և բերել 'ի բանակն պարսից, զի զօրայն պարսից մարտակից լիցին, զոխբայն քշել



և

և այլ գործակցութե՟ օգնական լինել զօրացն պարսից: Եւ 'ի ժամ պատերազմին յորժամ երկշաւնէին և կամ զսխալսն 'ի վեր բերէին, զքրիստոնեայսն յառաջ խաղացուցեալ ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին ազգն հայոց յերկուց կողմանց յառաջուստ յՕսմանցւոց և յետ ուստ 'ի Պարսից:

Եւ յորժամ էառ շահն զԹաւրէզ՝ և մինչ ինքն անդ էր, անտի առաքեաց զամիրգունայ խանն 'ի Գանձայ՝ զի կացեալ անդ դէմ ունիցի Օսմանցի զօրացն, զի մի յանկարծակի եկեալ վնասս ինչ հասուցանիցեն բանակին պարսից: Եւ նա գնացեալ 'ի Գանձայ էկաց ամիս երկուս. 'իբրև գիտաց թէ տկարք են Օսմանցիքն՝ և ոչ կարեն զայն առնել՝ յայնժամ զերկիրն Գանձակայ՝ ուր և կարաց հասանել հրոյ ճարակ տուեալ և սրով մաշեալ: զորս կոտորեաց՝ և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօքն և բերեալ էած յԵրևան 'ի լիութն և 'ի յղփութ՟ն բանակին պարսից:

Այլ և մինչ նստեալ էր շահն ի վ՟ր Երևանայ բերդին և պատերազմէր. յայնժամ ետ զԵրևանայ երկիրն ամիրգունայ խանին՝ և զնա կարգեաց խան երկրին այնմիկ:

Եւ յորժամ եկն շահն յԵրևան՝ ամ՟ բնակիչք երկրին եկին յերկրպագութ՟ի և յողջոյն թղթերին, և ընծայաբերք լինէին ըստ կարի իւրեանց: Որ և կթղկսն Սրապիոն եկեալ ընծայիւք երևեցաւ առաջի թագաւորին, և 'ի հարցանելն շահին թէ ով որ է, և ուստի է, պատասխանեալ եղև թէ կթղկս է հայոց՝ և է յերկրէն համթայ: Իսկ շահն անտես արար զնա՝ և ոչ խօսեցաւ ընդ նմա. վ՟

զի ոչ ընկալաւ զնա, զի կամէր զմիւլբխնէթն կարգել կթ̄ղկս զոր ընդ ինք ունէր ։ Իսկ սրա պետն երբեւ էտես թէ ոչ ընկալաւ զինքն շահն, երեալ յերեւանայ գնաց 'ի Ջուղայ՝ զի անտի գնասցէ 'ի տեղի իւր ։

Իսկ յաւուրսն յայնոսիկ հանձարեղն 'ի խորհուրդս չարեաց շահաւան, կոչեաց զդաւիթ կթ̄ղկսն, եւ զմիւլբխնէթ կթ̄ղկսն առաջի իւր՝ եւ ասաց ։ Սովորութիւն է թղթոց եւ կարգ, նա եւ յայտնի է ձեզ թէ որ̄ երկիրս յառաջն Օսմանցւոց էր, եւ այժմ մեր եղեւ, սոյնպ̄ եւ ամ̄ ինչք եւ ստացուածք նց̄՝ որ անտէր մնացեալ է, պարտի լինել արքունական, այս ինքն միրիմալի ։ Արդ առ ձեզ գոն բազումք գանձք Օսմանցւոց՝ զորդուք պարտք առեալ էք 'ի նոցունց, եւ պարտիք վճարել առանց իմիք պատճառի, քանզի պարտքն եւ վճար գանձուցդ 'ի գանձարանս արքունի պարտի լինել՝ զի ստացուածք Օսմանցւոց են ։ Այլ̄ զեր կերնց̄ կալուք, սոյնպ̄ եւ ամ̄ ինչք նց̄ միրիմալի պարտի լինել ։ Իսկ յորժամ դուք վճարէք՝ 'ի գանձարանս արքունի, եւ տաց ձեզ զթուղթ ազատութեան դիւանաւ եւ դատաստանաւ՝ թէ ես առի զամ̄ գանձսն՝ զոր պարտէին դոքա, եւ միոք լեցի պահանջող 'ի սոցունց զի ինձ վճարեսցեն ։

Այս կթ̄ղկքս վս̄ պարտուցն փախեան եւ ապաւինեցան 'ի շահն, զի թերեւս շահն զնոսա ազատեսցէ 'ի պարտատերացն ։ Արդ այժմ շահն ինքն յառաջ ածեալ պահանջէ 'ի նոցունց զպարտսն՝ արդ այսէ օգնութիւն շահին յոր ապաւինեցանն նոքա ։ Իսկ կթ̄ղկքն գիտացին զի ոչ զերծանին 'ի ձեռաց նր̄, քանզի ծանեան զագահութիւն նր̄, թէ կամից եւ թէ ոչ, վճարեցին

ցին զնմ պարտսն շահաբաանին ումումեք և պարտէին։ Եւ 'ի պատճառս այս յիշեալ եղև և Սրապիոն կթղկսն, վերոյ ասաց շահն ընդ կթղկացն, ահա ես զոմն 'ի ծառայից իմոց այս անուն առաքեմ զկնի այնմ կթղկսին, և դուք ևս պատրաստեցէք զոմն այր 'ի ձերմէ կողմանէ, զի ընդ իմոյ առաքեալ առնն երթիցեն՝ և հասցեն նմա. և որքան անկ է նմա առեալ բերցեն։ Եւ 'ի պատճառս այս, կթղկսն զոմն 'ի պաշտօնէից իւրեանց ուղևորեցին ընդ թգւրական ծառային զկնի Սրապիոն կթղկսին։ Եւ նոքա գնացեալ 'ի Ջուղայ գտին զՍրապիոն կթղկսն, ըմբռնեցին զնա, և արարին 'ի կապանի, և պահանջէին 'ի նմանէ գանձս յոլովս։ Իսկ նա թէպէտ ըստ կարին տայր, նոքա այնու ոչ շատանային, այլ բարս տմարդիս և անագորոյնս յինքեանս բերեալ, ածեալ զՍրապիոն արկին 'ի վտանգս չարչարանաց՝ հարուածոց և գանից։ Եւ զպատուէրն զայն այր՝ առաքեալ յոյժ անպատիւ, մինչև 'ի գռեհի և 'ի հրապարակի կախեալ յոտից բրածեծ առնէին զնա ուժգին առուրս յոլովս։ Իբրև ետես Սրապիոն թէ ոչ ուստեք գոյ ակնկալութիւն փրկութե, բազում գանձս առեալ փոխ և ետ նց, մինչև լցան աչք նց գանձիւք և կաշառօք ըստ նմանութե յուդային և ապա թողին զնա։ Եւ նա զերծեալ 'ի նոցունց իբրև զգառն 'ի բերանոյ գայլոց, հալու ուրեմն ճողոպրեալ 'ի ձեռաց նց, ելեալ 'ի Ջուղայոյ գնաց 'ի վանքաղաք, թախծեալ ոգւով, և տրտմեալ սրտիւ, անմխիթար ոգւով, և գառն հեծեծանօք։ և անտի 'ի քաղաքն ամիթ։ Եւ էկեաց տարի մի, և յերկրորդումն տարւոջ վախճանի աստի մահուամբ՝ և յաւելու 'ի Տր հանգստեամբ։

տեամբ: Այս եղև վախճան սորա 'ի մերում թուականին, ռծե, կն. ապրելն ամաց, Կդ. և հանգուցին զնա 'ի տապանի անդէն յամիթ քաղաքի: որոյ յիշատակն օրհնութբ եղիցի և աղօթիւքն նր̃ Տր̃ մեզ ողորմեսցի, ամէն:

Իսկ շահն մինչ նստեալ իւր̃ բերդին Երևանու պատերազմէր, ոչ դադարէր յաւերելոյ զաշխարհս, և գերելոյ զազգս Հայոց. քանզի առաքեաց զօրագլուխս բազում զօրօք 'ի կողմն արզրումայ՝ որք գնացեալ աւերեցին զերկիրն բասենու, և զխնուսայ՝ և զդաշտն արզրումայ՝ զայլս ուրեք կարացին հասանել, քանզի եկեալ՝ աւերեալ՝ այրեալ՝ և ապականեալ զերկիրն և զշէնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ, և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս գերացուցեալ բերին յերևան 'ի բանակն իւրեանց:

Սոյնպ̃ և յերկիրն արճիշու առաքեաց զօր՝ որք գնացեալ արարին ըստ վերոյ ասացելումդ-զաւար և զգերութի և զապականութի ազգին Հայոց 'ի ժամանակս Ճմերայնոյ:

Այլ 'ի սոյն ժամկի մինչ նստեալ շահն իւր̃ բերդին պատերազմէր, եկն ալահվէրտի խանն 'ի շիրազայ յերևան առ շահն, յորոյ գալստենէ բազում օգտութի եղև ազգին Պարսից: և շահն առաքեաց զալահվէրտի խանն իւր̃ քաղաքին արծկէոյ, և պատճառ առաքելոյ զնա յարծկէ այս է:

Յորժամ էր թուականն Հայոց՝ ռխթ. մեծ սիմոն խանն թաթարն վրաց ապստամբեցաւ յՕսմանցւոց տէրութենէն, և կոտորեաց զբերդապան Օսմանցին. որք կային յերկիրն վրաց. վա̃ որոյ հրաման եղև 'ի սուլթան մահմատ խոնդքարէն իւր̃ ջաֆարփաշային՝ որ

իշխա

իշխաներ Թաւրիզու, ժողովել զօրս բա
զում և գնալ ի վ՟ր Սիմոնխանին: Իսկ ըստ
հրամանաց թ՟գ-ւորին դնաց Ջաֆարփաշէն բա
զում զօրօք ի վ՟ր Սիմոնխանին: և եղև զի ըմբռ-
նեալ եղև Սիմոն խանն 'ի ձեռս Թամասպայ,
և Ջաֆարփաշէն ետ զսիմոն խանն փաշային միոյ
որում անունն էր Մահմետ փաշայ, տանել 'ի
կոստանդնուպօլիս առ խոնդքարն. և իբրև
հասոյց այն Մահմետփաշէն զսիմոն խանն առ
խոնդքարն, և խոնդքարն պարգևեաց նմա
խիլայ, զփաշայութիւն արզրումայ, և զվանայ
փաշայութիւն ևս նմա արփալըղ: և ըստ հրա
մանաց թ՟գ-ւորին եկեալ Մահմետ փաշէն յար
զրում վարէր զփաշայութիւն: Իսկ քաղաքն
վանն և այլ շրջակայ գաւառքն, ոչ հաճեցան
յայս գործ, քանզի ծանր թուեցաւ նոցա թէ
վանքաղաք իւրով բերդովն իւք այնքան նու-
աստացու՝ որ լինի արզրումայ արփալըղ. վ՟ն որոյ
և ոչ կամէին հնազանդիլ Մահմետ փաշային:
Իսկ Մահմետ փաշայն եկեալ յարզրումայ եկն
'ի վանքաղաք, և հաւանեցուցեալ զնոսա 'ի
կամս իւր հնազանդեցոյց. և եկեալ անտի զի
և զշրջակայ գաւառքն հաւանեցուցէ, և
շրջելով կարգաւ մինչև էհաս յարճէշ: Իսկ
իշխանն արճիշոյ որում անունն այլուբի Մահ
մետ փաշայէր, ոչ կամեցաւ հնազանդիլ, այլ
յորժամ լուաւ զգալն նո՛ր ժողովեալ զօրս բա
զում, և կերակուրս յոլովս, և մտեալ 'ի
բերդն ամրացաւ, և ոչ հնազանդեցաւ՝ զի
բերդն ամուր էր: Իսկ եկող Մահմետ փաշայն
պաշարեաց զբերդն և մարտնչեալ ընդ նմա
հզօրագոյնս մարտնչէր: և միւս Մահմետ
փաշէն որ էր ներքս բերդին, յաղագս զալտե
րագն իւաց մերժելոյ յինքենէ խորհուրդ-
արա

տարաբեալ ընդ համախոհս իւր . և առաքեաց զարս ոմանս յիւրոց հաւատարմաց՝ զի գաղտագողի գնացիք հասանին առ շահն . որ յայն աւուրսն շուրջ զբերդիւն երևանայ նստեալ պատերազմիւր : Նա որ հասեալ աղքն առեն ցնա՝ Թղթբեր յաւխտեան կեայց, մահմետ փաշայն՝ որ կայ 'ի բերդին արծկէոյ կամի շահնեւան լինել և տալ զբերդն շահին . իսկ վանայ փաշէն ոչ կամի զայս . այլ եկեալ պատեալ է ըզբերդն , և կամի յինքն գրաւել : Վասորոյ առաքեաց զմեզ մահմետ փաշէն առ տէրութիւնքո . խնդրէ 'ի քէն . զի զզօրս առաքեսցես յօգնութիւն նմքեան զի փրկի ինքն , և զերկիրն . և զբերդն տացէ զօրավարին քում :

Իսկ համձարեղն 'ի խորհուրդս չարեաց շահաւաս , հրամայեաց ալահվերտի խանին առնուլ զօրս բազումս և գնալ յայն գործ : և պատուիրեաց նմա . Թէ տացեն զբերդն և զերկիրն քեզ . բարւոք է , տիրեսցես երկրին՝ և նստցիս 'ի բերդին . ապա Թէ խաբէութիւն ինչ առնիցեն ընդ քեզ . և դու զորինչ միտս կարեցես առնել նդ, արասցես : և յետոյ զերկիրն գերեցուցեալ դարձցիս այսրէն : Իսկ ալահվէրտիխանն եկեալ յերևանայ գնաց յարծկէ . և մահմատփաշէն որ զբերդն պատեալէր իւրև լուեալ զգալ խանին . չուեալ անտի գնաց յերկիրն մշոյ : Իսկ խանն եկեալ յարծկէ սպասէր Թէ բերդի միջի եղեալ մահմատ փաշէն եկեալ առ ինքն զխոստմունսն կատարեսցէ : Բայց նա ոչ եկն առ խանն՝ և ոչ ետ զբերդն . այլ պատրաստեցաւ ընդ խանին 'ի պատերազմ . և խանն եբինչ արար իվէրայ բերդին . և փաշէն զօրօք ելեալ 'ի բերդէն փախստական արարին զզօրս խանին՝ յառաջնումն նուագին

Եւ

Իսկ յերկրորդումն նոճացին՝ յորժամ կամէին երիշտանել ի վ՛ր բերդին, կացոյց խանն դարանակալս՝ և պատուէրեաց դարանակալացն. թէ դուք զօղեալ կացջիք ՚ի դարանի այդր. և մեք գնացեալ կռուիմք ընդ բերդին՝ և յելանել բերդականացն մեք փախստական լինելով առաջի նց հեռացուցանեմք ՚ի բերդէն: Յայն ժամ դուք յարուցեալ յետուստ կողմանէ և մեք յառաջուստ ի մէջ առեալ կոտորեսցուք զնս: Իբրև այսպէս արարին, ի մէջ առեալ կոտորեցին զելեալ զօրսն ՚ի բերդէն: և մնացեալ զօրքն որք ի մէջ բերդին էին փակեցին զբերդըն և ոչ ետուն խանին:

Իբրև ետես խանն զամուր միտս բերդականացն թէ ոչ տան զբերդն. դարձաւ ՚ի բերդէն՝ և յարձակեցաւ ի վ՛ր գաւառաց աշխարհին. և զա՛մ երկիրն արծկէոյ հաւասար աւերեաց. և հրդեհ արկեալ այրեաց: և զա՛մ արու արս կոտորեաց՝ և զկինս, և զստացուածս՝ զուստերս, և զդստերս և զկանայս յաւար և ՚ի գերութի առեալ: Իսկ ելեալ անտի եկն յարճէշ՝ և ՚ի բերկրի, և ՚ի վան. և յա՛մ գաւառս նց արար այնպէս: Իսկ ո՛ղ տէր և իշխան գաւառին՝ որ առանց ահի և կասկածանաց շրջի ՚ի գաւառէ հերում, այնպէս և սա շրջէր, և քանդէր, և աւերէր զաշխարհն, յորս և հասանէր: և բազում աւուրս կացեալ ՚ի տեղիս. վասն զի ոչոք էր, որ կարէր ՚ի դիմի հարկանել նմա: Իսկ զորինչ կամեցաւ՝ և կարաց առնել՝ արար: և ժողովեալ զա՛մ գերեալսն, և հօրանս անդէոց. և ջոկս ոչ խարաց. և երամակս ձիոց. Իբրև մեծ և յորդեալ հեղեղ զա՛մն վարեալ ածեալ բերեալ հասուցին յերևան ՚ի լըռութի բանակին պարսից: Արդ՝ յայսպիսւոյ պատահման գնաց

ալահվերտի խանն յարձկէ. որով գերեցան այսքան անձինք քրիստոնէից. զորոց թիւն. ճ̃ գուասեն գոլ՝ թող զսպանեալսն ։

Բայց զօրքն Օսմանցւոց որք էին ի մէջ բերդին երևանու. որոց գլուխ էր Մայիտ փաշէն. և սուլէյման փաշէն որդի խորփաշային. քաջութ̃ զդէմ կալեալ արքային, և զօրացն Պարսից պատերազմէին ։ Նոյն դիմակաց եղեն յամիս ութն. և յինն երրորդում ամսեանն. անճար մնացեալ ետուն զբերդն ։ քանզի մոռախոհ եղեալ Օսմանցւոցն տեսանէին զի ոչ ուստեքէ գոյ նց̃ ակնկալութի օգնութե. ոչ 'ի քաղաքացն որք շուրջ զնորեաւքք են. և ոչ 'ի դրանէ թգ̃ւորին իւրեց̃. քանզի դուռն թգ̃ւորին խառնակ էր ։ Զի սուլթան մահմէտ խոնդքարն մեռաւ 'ի նոյն ամի. և սորին որդին սուլթան ահմատն՝ զոր թգ̃ւր կարգեցին՝ էր տղայ հասակաւ երկոտասանից ամաց. թգ̃ւրն էր նոր, և այն ևս տղայ ։ Այլև իշխանքն ոչ ունէին ընդ միմեանս զսէր և զմիաբանութի, և ընդ տան թգ̃ւրին զմտերմութի այլև ապստամբք ջալալիք բազումք և յոլովք էին յարուցեալք ի մէջ աշխարհին՝ որք աւերէին զքաղաքս և զերկիրս թգ̃ւրին ։ և նոքա այնու էին պատաղեալք՝ և ոչ կարէին օգնել զօրացն՝ որք յերևան ։ Զայս ջալալոց անուանքն յիշեալեմք յառաջին կայդ ի մէջ ճառին. որ վ̃ սովին գրեալեմք. և զորպիսութի ջալալոցս գիտասցես զայն ճառն ընթեռնլով ։ Նոյն համդերձ վերոյասացելովք պատճառօք և այլևս յոլովից նեղութեց զոր կրեցին զօրքն Օսմանցւոց՝ որք պաշարեալք կային ի մէջ բերդին երևանու. նեղեալ և անյոյս լեալք յօգնողաց և 'ի փրկողաց՝ ետուն զբերդն զօրացն Պարսից ։

Նոյն յորժամ էառ շահն զբերդն. հրաման

ետ միանձնակեաց քարոզել եւ հրատարակել ի-
մէջ բանակին Պարսից եւ Օսմանցւոց։ Հրա-
ման է 'ի մեծ արքայէն շահաբասայ. որոք սի-
րէ զայս աշխարհս՝ եւ զշահն. եւ կամիցի կալ
'ի հայրենիս իւր՝ սիրով կացցէ. եւ 'ի շահէն
պատիւս եւ ընդունելութիւն գտցէ ըստ արժա-
նւոյն. եւ որոք գնալ կամիցի յազգ եւ 'ի ժողո-
վուրդ իւր. խաղաղութբ երթիցէ իւրովք
ընչիւք եւ ստացուածովք։ Նաեւ սոյնպս փաշէն
եղեւ շահխնէ վան եւ խնդրեաց 'ի շահէն զիշխա-
նութիւն եւ զվերակացութիւն իմամղուլին. եւ
ընկալաւ 'ի նմանէ զխնդրելին իւր. եւ գնաց
'ի խորասան 'ի սպասաւորութիւն իմամղուլին։
եւ սուլէյման փաշէն խնդրեաց 'ի շահէն գնալ
յազգ իւր. որեւ հրամայեաց շահն գնալ նմա։
Եւ նա եւ 'ի գնալն՝ եւ ընդ նմա հինգ հազար հե-
ծելոյ՝ եւ բազումս եւս ժողովուրդ։ Իսկ դեսա-
նման զօրքն Պարսից գունդս գունդս ընթա-
ցեալք զհետ նց գաղտագողի գնացին ժամա-
նեալք բանակին իւրնց. զոր հարեալ սպա-
նանէին. եւ զոր փախուցեալք ցրուէին եւ զինչս
նց կողոպտեալ՝ դառնային 'ի բանակն իւրց։
Արդ այս ամ որ գործեցաւ 'ի թրքերէն պար-
սից. եւ լուեալ ազգին Օսմանցւոց եւ թրքերի-
նց որ 'ի կոստանդնուպօլիս։ միաբանեցան եւ
նորա՝ շարժեցան 'ի գործ արութեն եղանել եւ
զթշնամեաց 'ի դիմի հարկանել։ որեւ կարգե-
ցին զօրն դլուխ եւ սարդար անուանն սինան
փաշայ՝ զոր մակ անուանէ ջղալօղլի կոչէին.
որ գումարեաց զօրս բազումս՝ որովք եկեալ
'ի կոստանդնուպօլսէ դիմեալ գայր յաշխարհս
արեւելեան։

Այլեւ յետ առման բերդին՝ հրամայեաց
շահն թէ որքան ժողովեցք որ ք զօրկապականք
են

են և պանդուխտք. և այնք եւ որք'ի գերութե-
ղապատեալք են. եթէ քրիստոնեայք իցեն.
եթէ մահմետականք. եթէ եբրայեցի։ զորս
բերլին խաներն. որք գնացին յասպատակութեն
և յաւարառութեն յեւրոպաքանչիւր գնացեալ
տեղեաց։ եթէ ամիրգունա խանն որ էրէր'ի
գանձայու երկրէն։ եթէ ալահվերտի խանն որ
էրէր յարծկեայ, և յարճիշոյ,'ի բերկրոս, և'ի
վանայ. եթէ միւս խանքն, որք միւսանգամ բե-
րին յարճշու,'ի մանազկերտու, յալաշկերտու,
'ի մակուայ։ եթէ միւս խանքն որք բերին'ի
կարսայ, 'ի կաղզւանայ, 'ի բասենու, յար-
զրումայ, 'ի խնուսայ. և զայլս զամենեսեան՝
որք յայլուստէքէ լեալ բերին. զասա զամենե-
սեան հրամայեաց զի խայզարարեալ գացեն յեր-
կրին երեւանու. զնմին վարեցեն յաշխարհն
Պարսից. որև փութով կատարեցաւ հրամանս
այս. զի որքան կային այնպիսի ժողովուրդք
զնմին վարեալք քշեցին յաշխարհն Պարսից։

Այլ յորժամ շահն էառ զթաւրէզ՝ և մինչ-
անդ'ի թաւրէզ էր. հրաման արար զանդ-
եղեալ զարխայականն քշել յաշխարհն Պար-
սից. և արարին այնպէս։

Եւ յորժամ եղ'ի թաւրիզու եկեալ էանց
ընդ նախչուանն և եկն յերեւան. լուան զարխ-
պականքն նախչուանու թէ շահն զղարխա-
կանն թաւրիզու քշեալ տարաւ'ի Պարսից աշ-
խարհն։ Նաեւ նոյն գործ զայն ինքեանց համա-
րեցան. ամենքն'ի նոցանէ եկին յերեւան և ծա-
նուցին շահին թէ մեք եւ շահեւանն եմք՝ և
կամիմք գնալ յաշխարհն Պարսից։ Եւ շահն
վասն հաճելոյ զմիտս նց՝ և զնոցին նման ան-
մնայն պատերելոյ. հրամայեաց զխլաթ տալ և-
տուն զհինգ խլաթ. և կարգեաց ինքն նց վա-

 ռեչո

ընչս՝ որք տարան զնմ եւս յաշխարհն Պարսից։ Եւ այս ամ՟ եղեւ ի մէջ երկուց ամաց. վս՟ զի գալն սրտալիոն կէթիկսին յԷջմիածին եւ լինելոյ կաթողիկոս. եւ 'ի նոյն ամի գալն շահին եւ ունելոյ զԹաւրէզ՝ եւ զնախչուան՝ եւ զերեւան. եւ դառնալոյ սրտալիոնին 'ի տեղի իւր. եւ այլք բանք՝ զորս յայսմ ձեռի պատմեցաք. ի մէջ երկուց ամաց եղեւ. որ էր թուականն մեր. ՌԾԲ. եւ. ՌԾԳ։

Յաղագս առաջին գալոյ Ջղալօղլւոյն. յորոյ պատճառէ քշեալ շահն զբոլոր բովանդակ զերկիրն Արարատու. եւ զնորին մերձակայ սահմանակից երկիրսն ընդ նմին.

ԵՒ ՅԵՏ ԿԱՏԱՐԵԼՈՅ այսոց ամենից գործոց եւ իրակութեանց՝ զորս արար շահն չուեալ այնուհետեւ յերեւանայ ամ՟ բանակաւն իւրով յառաջ խաղաց գնալ ի մէջ քաղաքին կարսայ առնուլ զայն եւս։ Եւ իբրեւ էհաս 'ի գաւառն շիրակվանայ. եւ ընդ բազում համբաւոյ գալոյ Ջղալօղլւոյն, անդ էն եկին այլեւս լրտեսք՝ եւ բերին զաստոյգ համբաւ թէ ահաւասիկ եկեալ Ջղալօղլին էմուտ 'ի գաւառն կարնոյ՝ որ է արզրում։ Իբրեւ լուաւ շահն զայս համբաւ. դարձոյց զերեսս իւր՝ եւ եկն յերեւանդակերտն հինն. որ այժմ ասի աղջաղալայ։

Եւ զոր 'ի վաղուց ժամանակաց ունէր 'ի մտի զքէնն ազգին քրիստոնէից՝ եւ զաւերելն աշխարհին Հայոց՝ անդ յայտնեաց խորհրդակցաց իւրոց։ Քանզի գիտէր 'ի միտս իւր՝ թէ ոչ կարէ պատերազմաւ զդէմ ունել սինան փաշային՝ այսինքն Ջղալօղլին սարդարին. վս՟ որոյ հրամայեաց զամ՟ բնակիչս աշխարհին Հայոց. եթէ քրիստոնեայ, եթէ հրեայ, եթէ մահմետական քշել յաշխարհն Պարսից. զի եկեալ

կեալ Օսմանցւոցն անընդհատ գտանիցեն զեր
կերն ՚ի մարդկանէ ։ Եւ ոչ գտցի կերակուր և
ռոճիկ և այլ ինչ պիտոյքն նց ՚ և անասնոց նց. և
աւելի չգոյէ հարկաւորաց վտանկեսցին զօրքն
Օսմանցւոց ։ Նաև տարեալ ժողովրդքն լինի
ցին նմա անզերծանելի հարկատուք՝ ծառայք.
և հողագործք. մինչև ցյաւիտեան։ Եւ նա մինչ
՚ի վարանս խորհրդոց կայր. լուաւ թէ Ջղալ
օղլին ել ՚ի կարնոյ. յայնժամ կոչեաց առաջի
իւր զմեծամեծս երկրին Հայոց՝ և զինքն կեղ
ծաւորաբար ցաւակից ցուցանելով ազգին Հայ
ոց. ասէր ընդ մեծամեծս և ընդ աւագսն Հայոց։
լուաք թէ եկեալէ Ջղալօղլին՝ և աշխատանիկ
գայ մտանէ յերկիրս ձեր անհուն զօրօք ։ Նաև
՚ի մերս կողմանէ անթիւքեն զօրք. և գիտէք, զի
բազումք գոն ՚ի սոյսերկուսին կողմանս յայսպի
սում ժամանակի արք դառնացօղք հողում
եղուղակք և աւազակք և որսկայք. զորոց ոչ
գիտեմք զուժն և զուստին ։ Գուցէ ոմանք ՚ի նո
ցունց անփոյթ արարեալ իցեն զկենաց իւ
րեանց՝ և զհրամանաց իշխանաց. յանկարծակի
իվ՞ր բախեալ հարկանիցեն զմասն ինչ երկրի՝ և
զժողովրդեան ձերոյ՝ կամ ստացուածոց՝
կամ ընտանեաց աւարումն արարեալ՝ առեալ
խրացձո զոյլեսցին. և լինիցի ժողովուրդն ձեր
՚ի կորուստ և ՚ի գերութի։ Վասն որոյ ողոր
մեալ ձեզ՝ հնարիմ փրկել զձեզ այսու կեր
պիւ. զի գաւառականք՝ և բնակիչք երկրի
ձերոյ եկեալք ՚ի տեղեաց իւրեանց սակաւ ինչ
յառաջ խաղացեալ գնասցեն աւուրց ինչ ճա
նապարհ. և մեք առաւել զդէմ կալեալ պա
տերազմեսցուք ընդ Օսմանցիսն։ Եւ եթէ
մեզ տացէ Տր. յայնժամ դարձջիք ՚ի տեղիս
ձեր և լինիցիք մեզ ՚ի ժողովուրդք. և եթէ

ընդ տայց Տէր. մեք զանց արարեալք գնամք, և դուք դառնայք 'ի տեղիս ձեր՝ և լինիք ընդ 'ի ժողովուրդք: Այս իբրև տայց շահն ընդ-ուագանին Հայոց՝ որոց գլխաւորն անունն էր տէր բյուրանէս՝ որ սերձական մակադրութե-անունանէին աղայ տէր տէր: և նորա ծանեան զդասաձանեալ նենգութիւն, և ոչ հաձեցան 'ի բանս ընդ. այլ պատասխանելով պատասխանս, մատուցեալ առ նախարարս շահին տայցին: Ահա ժամանակս աշուն է. քանզի յետ տօնի սրբոյ խաչին էր յորժամ քշեցին զերկիրն: ամ բնակիչք երկրիս չունին զպատրաստութիւն ճա-նապարհի, գրաստ և այլ բեռնակիր. առ ի բառնալ զատացուածս և զմանկունս. զի թէ-պէտ ժիրքն և կարողքն հետիոտս գնայցեն. իսկ ծերքն և մատաղ մանկունք ոչ կարեն գնալ: Վորոյ խնդրեմք յաբքայէ այժմ ներել մեզ՝ այլ զայդ հրամանն յաջորդելոյն Ամ 'ի գարունն կատարեսցուք: զայս ասէին, զի թերևս անցցէ ժամն 'ի նոցանէ:

Իսկ աւերիչն աշխարհաց՝ և վատնիչն քրիս-տոնէայ ազանց՝ բնակարանն նեստրոյ՝ թղթերն շահաբաս ոչ անսայ բանից Հայոց: Այլ կո-չեաց զնախարարս իւր առաջի իւր. և կար-գեաց 'ի նոցանէ վերակացու՝ և վարիչս բնակ-չաց երկրին. իւրաքանչիւր գաւառաց՝ իւրա-քանչիւր իշխան իւրովք զօրօք վարող և քշող ժողովրդեանն: Եւ զամիրգունայ խանն՝ յա-տուկ քաղաքին երևանայ և երկրին Արարա-տու, և նորին մերձակայ մանաւորաց գաւա-ռացն: Եւ հրամայեաց ընդ շահն. ուր և կա-րասցեն ձեռն արկել. արտասահման արարեալ վարեսցեն, և ոչ թողուցուն ամենևին շունչ կենդանի. եթէ քրիստոնեայ և թէ մահմե-տական,

տական, պճաւանօղոյն բանիւ. և զոչ հաւա-
նօղոյն և զատուցանօղոյն հրամանաց Թգ̄ւրին
սրով՝ և մահուամբ՝ և գերութ̄բ :

Եւ զօրապետացն՝ յետ ընդունելոյ զայս-
պիսի զաշխարհակործան և զաստամբիկ հրաման
՚ի Թգ̄ւրէն : Եկեալ իւրաքանչիւր զօրավար
իւրով գնդաւն՝ գնացին յիւրաքանչիւր հրա-
մայեալ գաւառն աշխարհին Հայոց. իբրև
հողմախառն հուր ընդ եղէգն ընթացեալ :
Հայ Ճեպ տագնապաւ վաղվաղակի զմ̄մ բնա-
կիչս գաւառացն կորզեալք յիւրաքանչիւր
բնակութեց. և արտասահման արարեալ յիւ-
րաքանչիւր տեղեաց. իբրև զջոլիրս բազմու-
թե հօտից և անդեոց զառաջեաւ արարեալ՝
բռնութ̄բ վարեալ՝ ածեալ հասուցին ՚ի գաւ-
առն արարատու. և զլայնանիստ դաշտն նորա
լցին ծագէ ի ծագ : Քանզի ՚ի ստորոտէ լե-
րանցն գաւառոյ մինչ ՚ի յեզրն Երասխայ մեծի
գետոյն լայնութիւն էր բանակին. իսկ զեր-
կայնութ̄ին գովլինե կշռեաց դու՝ բայց ես ո-
սեմ աւուր միոյ Ճանապարհ. և յայլուր ասեն
որ հինգ աւուր Ճանապարհ էին գրեալ : Եւ
երն որ փոխեալ Թոռւականն Հայոց և մնեալ ՚ի
ուծդ. յառաջնում ամսեանն Հայոց նաւասար-
դի. որ քշեցին զերկիրն : Եւ Պարսիկ զօրքն
որք գնացին ՚ի քշել զերկիրն. ուստի և հա-
նեալ զժողովրդ̄ս քշէին, եթէ ՚ի գեղօրէից
և թէ ՚ի քաղաքաց, զմ̄մ չէին զատուցանել բնա-
կութիւս. հուրբ այրեալ անխնայաբար հրկէզ
առնէին : Բայց զհամբարս խոտոյ և զյարդե-
ցորենոյ՝ և գարւոյ՝ և այլոց պիտոյից՝ զմ̄մ այ-
րեալ վառնէին : այսպէս աւերեալ Թափուր
արարին զաշխարհն մ̄ծ զօրացն Սամանցւոց՝ զի
մի մնասցէ ինչ ուռձիկ նց̄, և վառանկեսցեն նք :

այլ և ելեալ ժողովուրդքն զայն տեսեալ սըր-
տակոտորք լինէին, և մի դարձեին յետս։

Արդ՝ զօրքն Պարսից որք կարգեցան մա-
րտիչք ժողովրդեանն. մինչ վարեալ զժողո-
վուրդն բերեալ հասուցին 'ի դաշտն Էջ-
միածնի. շահաբաման 'ի յաղջաղալէն էր. և
սարդարն Օսմանցւոց ջռալօղլին իւրովք զօ-
րօքն էհաս 'ի կարս։ Եւ շահաբաման գիտէր.
զի ոչ կարէր դիմանդիման պատերազմել
դիմակայիլ Օսմանցւոցն. զանգիտեալ 'ի
բազմութէ նց̃՝ դարձուցեալ զերեսս իւր չու-
եաց ամ̃ բանակաւն իւրով՝ հետևեալ զհետ բա-
նակի ժողովրդեանն դէպ յերկիրն Պարսից.
Նաև զօրք Օսմանցւոց չուարարեալ հետևե-
ցան զկնի բանակին Պարսից։ և եղեն երեք բա-
նակք մեծամեծք և անհունք. առաջին բա-
նակ ժողովրդեանն։ երկրորդ բանակ Պար-
սիցն. երրորդ, բանակ Օսմանցւոցն։ Եւ
այնպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ
չուէր բանակ ժողովրդեանն, իջեալ բանա-
կէր 'ի հանգրուանս նոցա շահաբաման զօրօքն
Պարսից։ և 'ի չուելն նոցա բանակէր 'ի նոյն
տեղին ջռալօղլին զօրօքն Օսմանցւոց, և
այսպէս զհետ միմեանց կընկնակոխ գնալով
գնացին, մինչև հասին ժողովուրդքն և Պար-
սիկքն 'ի գեղն Ջուղայ, և Օսմանցիքն հասին
'ի Նախչուան։ Եւ այնուհետև ոչ թողացու-
ցին Պարսիկքն ժողովրդեանն զկայ առնուլ՝ և
ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տագնապաւ նե-
ղէին զժողովուրդն, զոմանս մահու հարուածով
գանելով, և զոմանց զունչս և զականջս հատա-
նելով, և զոմանց զգլուխն կտրեալ 'ի ձող ցցե-
լով. ոպ̃ զեղբայր կթղկսին առաքելոյ որում
անուն էր յօհանջան, զորս և զայլս ումեմն

զգլուխն

գլուխսն կտրեցին, և 'ի ձող ցցեցին յեզր գետոյն Երասխայ ։ զայսոսիկ և առաւել քան զսոսա խոշտանգանս կտտանաց ածէին ի վ՜ր ժողովրդեանն, 'ի յա՛հ և յերկիւղ ժողովրդեան և տեսողացն, զի փութանակի անցցեն զգետն ։ Այս ամ՜ վտանգս ածէին ի վ՜ր ժողովրդեանն խորամանկ ազգն Պարսից յահէ Սամանցւոց, որք զկնի ն՜ր գային, վ՜զի Հայէին Պարսիկքն 'ի բանակ ժողովրդեանն զի անթիւք էին, նոյնպ՜ և յիւրեանց բանակն Հայէին զի յոլովք էին, և մինչ յանցանել այսքան բազմութեան ընդ գետն, աւուրք բազումք ի վ՜ր անցանէին ։ Երկնչէին 'ի զօրացն Սամանցւոց թէ մի գուցէ յայնքան աւուրսն յանկարծակի բաղխեալ ի վ՜ր բանակին Պարսից բեկումն ինչ և վնաս առնիցեն. և կամ զժողովուրդն յափշտակեալ 'ի նոցանէ յետս դարձուցանիցեն. և չար առաջարկութեն ն՜ր խափանումն լիցի ։ Վ՜ որոյ տագնապաւ ստիպէին զժողովուրդն անցանել զգետն ։ և 'ի բազմութէն ոչ բաւէր նոցա նաւ կամ տուփ որով անցցեն զգետն, թէպէտ և յայլ տեղեաց այլևս նաւս բերին, և անդէն ևս յոլով տուփ շինեցին սակայն բանակ ժողովրդեանն՝ և բանակն Պարսից յոլովք էին ։ և տակաւին ոչ լինէր բաւական ։ Եւ 'ի զօրացն Պարսից՝ որք վարիչք էին կարգեալք ժողովրդեանն, շրջպատեալ զժողովրդեամբն սպահէին՝ զի մի ոք փախիցէ, այլ և փայտիւ գանեալ՝ Հարեալ՝ բեկեալ՝ մղեալ 'ի գետ անդր ընուլին ։ և այսպէս վտանգ և վիշտն՝ սաստկանայր ի վերայ ժողովրդեանն ։

Իսկ ողորմելի ժողովրդեանն Հայեցեալ յառաջ զանհուն գետն տեսանէին իբրև ըզ-

ծով՝ որ խեղդեր, և յետուստ զօրքն Պարսից որ սպանանէր, և Դարեհ փախչելոյ ոչ գտանէր։ Որք առհասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին զերկիրորդ Երասխ։ և ձայն լալեաց և հառաչանաց, ճչմանց, վայոց, կոծմանց, մորմոքմանց, ընդ միմեանս խառնեալ գոչեցուցանէին ուժգին աղաղակաւ։ Իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեք էր։

Ըստանօր կարի հարկիւ պլատայեղև մերում ժողովրդեանն հինն մովսէս՝ և նորին աշակերտն յետու առ ի փրկել զնորա ինչ՚ի ձեռանէ երկրորդին փարաւոնի, և կամ դադարեցուցանել զուղխս յորդահոսան և լայնատարած գետոյն մեծի. և ոչ եղև գտեալ, քանզի յորդութիւք մեղաց մերոց փակեցին ընդդէմ մեր զդուռն ողորմութեան գթածին Այ։

Իսկ անողորմ զօրացն Պարսից վարեալ զժողովուրդն ընկէին ՚ի գետն, և նորա խիստ գետոյն ևս քանզի ևս բազմացուցանէին զձայն աղաղակացն և ողբոցն ՚ի վտանգէն։ և ոմանք ՚ի նոցանէ կալեալ զեզերս նաւուցն, և ոմանք զափոյն, և ոմանք զագիս ձիոց՝ և զեղանց, և զգօմշոց, և ոմանք ի բոլլի լողեալք անցանէին։ և որք անհմուտք էին լողելոյ և անզօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջկունք, և մատաղ մանկունք լցեալք էին յերես ջրոյն. և գետն առեալ տանէր զնոսա ներքև գլուխ ՚ի ժամանակս գարնանոյ. և գետատար մարդով ծածկեալ էր երես գետոյն, և թէպէտ անցին, որք անցինն, այլ բազումք այնք էին՝ որք հեղձմամբ ջրոյն մեռան։

Իսկ հեծեալք ոմանք ՚ի զօրացն Պարսից՝ որք ունէին զուժեղ ձիս, և ինքեանք այրք արիք

և կա

և կարօղք, շրջելով ինքն քրիստոնէից տեսեալ նկատէին զուստերս և զդստերս քրիստոնէից, և որոց հաւանեալ սիրտք իւրեանց, եթէ կանանց, եթէ աղջկանց․ և եթէ տղայոց։ Եւ զի խաբէին զտեարսն թէ տուր՝ զի վասն քո ոմն ցուցից ընդ գետն յայնկոյս, և իբրև անցուցանէր, ոչ դնէր անդէն՝ ի գետնի, այլ առեալ երթայր յո՞ և կամէր։ Եւ այլք գողութեամբ առեալ տանէին։ և այլք յափշտակութեամբ և սպանութեամբ առեալ՝ ի տեարցն տանէին։ և բազումք մարդիկք զողայս․ և տեարք զհիւանդս՝ ի ճանապարհին ընկեցին արարեալ և թողեալ զնոյն, վասն անհանդուրժելի և անըմբերելի վտանգին որ ժամանեալ էր ի վերայ նոցա։ Եւ միանգամայն ասեմ՝ զի թշուառութիւնք և արհաւիրք անտանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ, և ոչ բաւեմ թէ որով տարազու հիւսեցից զդամբանականս և աշխարհանաց ի վերայ բեկման Հայկական սեռիս՝ որք այսքան չարակրութեց եղեն ընդունակք։ Ո՛ի թէպէտ բառ սարասի հնոյն ինչի լինէին վարեալք գերի ձեռամբ երկրորդին Նաբուխացւոյ, այլ ոչ դոյր երեմիայ որ խրատէր, և ոչ եզեկիել որ լուսաւորէր, և ոչ յեսու կամ զօրաբաբել՝ որ զդարձն առաջնորդէր, այլ եղեալք իբրև զհօտս անհովիւս ցրուեալք և հալածեալք առաջի գայլոց պատառողաց և գիշատող գազանաց, որք վարէին բռնութեամբ։ Եւ նոքա երթալով երթային, և լային․ որք բարձեալ տանէին զսերմանս իւրեանց։ Իսկ յաջորդ սորին, ոչ եղև տեսանելի՝ զոր ասէ, դառնալով եկեսցեն, և ցնծասցեն, վա՜ զի ոչ եկին և ոչ եղև ցնծութիւն, այլ անդէն մնացին ուր և տարեալ արդելին այսինքն յաշխարհն Պարսից։

Եւ

Եւ եղեւ զի ամ ժողովուրդն էանց զգետն, էանց ընդ նաւն խառն և բանակն Պարսից. և մինչ ցայս վայր ամբոխունայ խանն էր քշող ժողովրդեանն, և յայնմ վայրի շահաբաան հրամայեաց նմա գնալ ընդ ետրում բանակին։ և կարգեաց վարող ժողովրդեանն զխալիֆայու էլխադ սուլթանն, և հրամայեաց նմա փութով և ձեպով վարել զժողովուրդն՝ և հեռացուցանել ՚ի զօրացն Օսմանցւոց՝ և հասուցանել յերկիրն Պարսից։ Եւ ինքն շահն ամ բանակաւն Պարսից ընդ արքունի ճանապարհն, այս ինքն ընդ ջադահն ուղի անկեալ գնայեն ՚ի քաղաքն Թաւրէզ։ բայց զժողովուրդն ոչ ընդ նոյն արքունի ճանապարհն տարան ՚ի Թաւրէզ վասն երկիւղին Օսմանցւոց՝ զի միգուցէ զկնի ժամանեալ յափշտակիցեն յինքեանց։ Այլ հրամայեաց շահն էլխադ սուլթանին. զի ընդ նեղ և նուրբ և ընդ դժուարին վայրս տարցէ՝ ընդ որ ոչ կարասցեն գնալ բանակն Օսմանցւոց զկնի նոցա։ և նա չուեցուցեալ զժողովուրդն տարաւ ընդ ճանապարհս ձորոյն՝ որով գետն երասխ գնայ զգնացս իւր, ընդ դժուարին ել և էջս լերանցն, և ձորոցն, և ընդ կածան տեղիսն։ և բազմօք տառապանօք և չարչարութբ անցին զդժուարին վայրս լերանցն։ և անցուցեալ զժողովուրդն զդժուարին վայրօքն, տարան յերկիրն, որ ասի Թարումխալխալ, և աշար, և մուշկուն, և ՚ի մերձակայ վայրս սոցա, և անդէն զետեղեցուցին զնոսա ամիսս ինչ վասն սաստկասառոյց և դառնաշունչ ցրտոյ ձմերան՝ որոյ աակս ոչ կարէին գնալ։

Իսկ ՚ի հասանել քաղցրաշունչ օդոյ գարնայնոյ, շոյլ ամս իշխան կարգեցին վարիչս ժո

ղովր

ժողովրդեանն՝ որում անունն էր աբուլթուրաբ-բէկ, որլերատին սկսաւ վարել զժողովուրդն մինչև տարեալ հասոյց 'ի քաղաքն ասպահան ։ Իսկ անդէն որք քաղաքացիք էին, 'ի նմին քաղաքի զետեղեցուցեալ բնակեցուցին, և որք շինականք էին և գեղականք 'ի շրջակայ գաւառսն քաղաքին սպահանու բնակեցուցին, 'ի նջան, և յալնջան, 'ի գանդիման. և 'ի ջղախոռ, 'ի փարիայ, և 'ի բուրվարի ։ Անդէն բնակեցան, և մնացին մինչև ցայսօր ։ քանզի արքն հինք, որք յաշխարհէն Հայոց էին գնացեալ. և գիտէին զվայելչութի աշխարհին Հայոց, նք մեռան անդէն. և որք անդ ծնան, և սնան, և վարժեցան. նոյն աշխարհին հաճեցան և ընդելացան, զի նովաւ վարժեցան. վս որոյ անդէն կացին, և մնացին մինչև ցայսօր ։

Այլ և յայսմ ժողովրդեանս Հայոց՝ զոր տարան 'ի սպահան, հինգ հարիւր տուն բաժանեցին և տարան յերկիրն շիրազու, և անդ բնակեցուցին. քանզի աղահվէրտի խանն, որ էր տէր շիրազու՝ խնդրեաց 'ի շահաբասէն շնորհել նմա մասն ինչ յազգէն Հայոց վս բարեմտութե և հաւատարմութե ազգին Հայոց, զի լիցին նմա 'ի ժողովուրդ, և թգւրն շնորհեաց նմա զխնդիրսն, և նա տարեալ բնակեցոյց 'ի գաւառն շիրազու ։

Դարձեալ դարձցուք 'ի սկիզբն պատմութեանս մերոյ. զի յորժամ հրամանաւ թգւորին հանդերձեցաւ ամիրգունայ խանն քշել զերկիրն արարատու, առաքեաց զմասն ինչ 'ի զօրաց իւրոց 'ի գաւառն գառնւոյ. զի զնս ևս չուեցուսցեն, ածցեն խառնեսցեն 'ի չուս ժողովրդեանն ։ Իսկ գնացեալ զօրքն նախ մտեալ 'ի նոյն ինքն 'ի գիւղն գառնի, և ոչ

բաւ

ըստ հրամանաց թ͞գւորին առնէին, այլ ոչ զգերեվարս և աւարառուս սկսան յափշտակել զինչս և զգաւառս քրիստոնէից։ Եւ զայն առեալ բնակչաց գեղջն ձայն տուեալ միմեանց՝ և արարեալ ամբոխ մեծ, սրով և բրով՝ քարիւ և փայտիւ հարեալ վիրաւորեալ կառափնատեցին զնա՝ և ՚ի բաց վարեցին յինքեանց, և ինքեանք անդէն կացին անհոգ իբր ՚ի ժամանս մօրկայ, և ոչ փախեան յայլուրեք. և ոչ գնացին առ խանն ծանուցանել զյափշտակութ͞ի ն͞ց։ Իսկ հալածական զօրացն գնացեալ առ ամիր գունայ խանն սկսան ամբաստանել զժողովրդեանն՝ և մեծամեծ վնաս իմ ՚ի ն͞ց յօդել։ որոյ սրտմտեալ բարկութ͞բ մեծաւ, առեալ ընդ իւր զօրս յոլովս եկն ՚ի գաւառն Գառնւոյ, և նախ զնոյն գաւառոյ գեղջ զարսն ըմբռնեալ եարկ ՚ի խոշտանգանս չարչարանաց հարուածք գանից, և հատմամբ յօդից. և իսկոյն չուեցուցեալ ետ ՚ի ձեռս զօրականաց իւրոց տանել խառնել զն͞ս ՚ի չուս ժողովրդոցն ՚ի մեծ բանակն։ զոր և տարեալ խառնեցին ՚ի չուս ժողովրդեանն, որք ընդ նոսին գնացին յաշխարհն Պարսից։

Իսկ անդէն ՚ի Գառնի աղդեցին Ամիրգունայ խանին թէ կան և այլ գիւղք ՚ի գաւառն Գառնւոյ. որք ամրացեալք են յամուր վայրս լերանց երկրիս՝ յայրս և ՚ի ծերպս քարանձաւաց։ Իսկ յանուանէ յիշեցին զՄանուէլ եպիսկոպոսն Հաւուց Թառայ վանիցն, և զԱ͞ծատուր եպիսկոպոսն Գեղարդայ վանիցն, թէ մնացեալքն յայնպիսի այրս և անդ ամրացեալք. քանզի ազք երկոքին եպիսկոպոսքս, յորժամ լուան զքշէն երկրին. հոգացին զպէտս կարեաց կարեւոր իրաց կերակրոց և ըմպելեաց, և առեալ զարս

ամենս

ոմանս 'ի մերձաւորաց իւրեանց կարգաւորս և աշխարհականս ։ և նորումբ ելեալք գնացին 'ի ձորն գեղարդայ՝ և մտեալ յայր մի քարանձաւոյն դադարեցին ։ քանզի բազումք գոն 'ի ձորն գեղարդայ փորուածու այրք և ամրոցք 'ի հին ժամանակաց ։ Իսկ լուեալ զայս ամիրգունայ խանին առեալ զզօրսն՝ որք ընդ իւրն էին՝ եկն 'ի ձորն գեղարդայ ․ և ինքն եկեալ էկաց առաջի այրին յորում էին եպիսկոպոսքն ․ և ձայնեալ 'ի բարձունս խօսէր ընդ նո խաղաղութբ գալ 'ի հնազանդութե հրամանաց թղթերին ։ Իսկ նոքա բանս ոգևոր անարգանաց, հայհոյանաց, և եպերանաց, 'ի բարձանց անտի ձայնեալ ասէին խանին, այլ և զքար և զնետ, արձակեալ ձգեցին դէպ առ խանն ։ Իսկ խանն իբրև էտես թէ խաղաղութբ ոչ գան 'ի հնազանդութե, յայնժամ հրամայեաց իւրոց զօրացն՝ զորինչ կարեն առնել արասցեն ։ և 'ի զօրականաց խանին արք ոմանք քաջնացք ելին 'ի գլուխ լերինն ․ յորում էր այրն ․ և ունելով զժայռս քարանցն իջին մինչ 'ի կողմն ինչ դրան այրին հնարաւոր գնացիւք ։ և եկեալ ոմն 'ի քարագնաց տաճկացն էկաց 'ի դուռն այրին՝ յորում էր մանուէլ եպիսկոպոսն, և հայեցեալ 'ի ներքս էտես զեպիսկոպոսն նստեալ, և բարբառով տաճկաց նախ զողջոյն ետ եպիսկոպոսին, իսկ եպիսկոպոսն ոչ կարաց պատասխանել ինչ՝ այլ ափշեալ մնաց, և տաճիկն արիացեալ սրով և գործով եմուտ 'ի յայրն, և իսկոյն զ փաղակաւորն՝ որ զմիջով իւրով ածեալ ունէր, արտաքարշեալ էհար՝ և սպան զեպիսկոպոսն անդէն ․ և կտրեալ զգլուխն էարկ 'ի վայր առաջի խանին ։ և ապա այլոց ևս զօրացն Պարսից արիացեալ փութանակի ելին յայրն

յայրն, և զայլ ևս ընկերս եպիսկոպոսացն կալեալ
իջուցին 'ի վայր առաջի խանին, և սպանին
զամենն անդէն։ Իսկ ապա 'ի նոյն ձորն մեծա-
յուզմամբ խոյզարկեալ որոնեցին՝ և զամենն
գաղթականսն որք 'ի խոռոջս և 'ի ծակս վի
մացն թաքուցեալ քէին զամենն գտին, զինչս նոցա
աւար հարին, և զոմանս 'ի նոցանէ կոտորեցին.
և զորս թողին կենդանի տարեալ խառնեցին
'ի չուս բուն բանակի ժողովրդեանն։

Արդ աստանօր յայտնի եղև երևեցաւ ար
դար դատաստանն Այ՝ որ բաժանէ մինչև ցո
րոշումն շնչոյ՝ և ուղղոյ՝ և օդոյ իւրոց երկուց
այսց եպիսկոպոսս, որք գնացեալք 'ի սպահան բեր
ին զազգն պարսից՝ որք աւերեցին զաշխարհս
Հայոց, և ինքեանք ևս նոցին սրովն սատակե
ցան, զի յորս յուսացան նոքին եղեն ինքեանց
սատակիչք։ Ըստ գրեցելումն յօրէնսն, որով
և մեղանչէ ոք, նովիմբ և տանջեսցի։ Մինչ
օգտեալք յունայն առաջարկութեց իւրց, և
յամբարիշտ գործոց իւրեանց, այլ մնացին պար
տական Այ արդար դատաստանին, յաղագս
աւերման աշխարհիս Հայոց՝ և կործանման
ազգիս, և կորստեան անմեղ անձանց. և այն
քան անպարտ արեանց հեղմանց, և խաւար
ման որոց եկեղեցեաց. և այլ ազգի ազգի
չարաչար պատահմանց, և զկնի ամի ինքեանք
ևս սատակեցան սրովն Պարսից։

Յետ այսմ ամի ժողովեաց խանն զամ զօրս
իւր՝ և գնաց իւրով այլոց ևս գաղթականաց 'ի
նոյն գաւառէն Գառնւոյ. և զորս ոչ կարացին
առնուլ՝ թողեալ ի բաց գնացին. և զորս կա
րացին առնուլ աւար հարին, և սպանին՝ և վա
րեալ տարան ընդ իւրեանս։ Իսկ գնալով գնա
ցին մինչև հասին 'ի մեծ ձորն՝ զորոյ անունն

քառադարոյ ասեն, և թէպէտ բազումք կային անդէն 'ի ձորն այրք և ամրոցք. յորում թաքուցեալք էին քրիստոնեայք, թողեալ զայլսն զամ՝ դիմեցին ի լեռայ անուանի այրին՝ որում եախչեան այր ասէին, զի վս ամրութեննորին բազումք էին անդ ժողովեալք արք և կանայք քրիստոնեայք, անձինք իբրև հազարք: և զձանապարհս այրին զգուշութե պահէին քրիստոնեայքն: Իսկ զօրացն Պարսից թէպէտ բազում ժամս մարտ եդեալ կռուէին նետաձգութե և թֆանգով. սակայն ոչ ինչ կարացին սանանել, քանզի յոյժ բարձր էր 'ի ներքուստ կողմանէ: և ապա չարահնար ազգն Պարսից հնարեցին զայլ ինն հնարս, և բաժանեցին 'ի զօրացն իւրեանց արս երկերիւրս, ելին 'ի ձորէն, և գնացին 'ի գլուխ քարափանն, վս զի և քարափունքն և վէմք ձորոյն էին ի վր միմեանց գօտի գօտի: Եւ կապեալ զբազում պարանս ընդ իրեարս իջուցանէին զմիմեանս. և այսպէս իջուցանելով զմիմեանս 'ի գօտէ 'ի գօտի, մինչև հասին 'ի գլուխ գօտւոյն յորում էր այրն, և անդ բերեալ ագուցին չորս մարդոյ երկաթի զրահս՝ և արարին զնա երկաթապատ յոտից մինչև ցգլուխս, և ի մէջս իւրաքանչիւրոցն կապեցին չորս և հինգ թիւր, որպէս զի 'ի բեկանել միոյն պատրաստ լիցի միւսն, և եդին 'ի ձեռս նոցա սուսերս մերկս, և կապեցին ի մէջս իւրաքանչիւրոց նոցա երկու և երեք պարանս զի 'ի հատանել միոյն կալցէ զնա միւսն: Եւ ապա յանըստ բարձրութենէն 'ի վայր կախեցին զնա՝ մինչև եկեալ հասին յայրն. և մտին իմէջ այրին և դիմեալ ի վերայ արանց և կանանց մերկ սուսերօքն սկսան անխնայ կոտորել զնա՝ որպէս զգայլս որ մտեալ 'ի



մակա

մակաղատեղս խաշանց կոտորէ թարց անխայե լոյ։ և ողորմելի քրիստոնէիցն տեսեալ զանողորմ սուրն Պարսից 'ի կոտորել զինքեանս. սկսան 'ի ձայն բարձր աշխարհանաց գուժել, աղաղակել, կականաց, լալ՝ և ողբալ՝ և կոծել զկորուստ անձանց իւրեանց։ և ամբոխեալ և աղմկեալ իբրև զխռովեալ ծով յուզմամբք զմիմեամբք եկեալս առնէին, և 'ի կողմանէ 'ի կողմն դիմեալ զերծանիլ հնարէին, և տեղի փախստեան ոչ գոյր։ և արանցն, որք պահէին զճանապարհս դրանն այրին, լուեալ զաղաղակն, և գիտացեալ զեղելոյն, թողեալ զպահպանութիւն, և առ դուլթս ընտանեացն դիմեցին 'ի ներքս 'ի յայրն՝ առնել փրկել զընտանիսն։ Իսկ յարտաքուստկուսէ Պարսիկքն իբրև տեսին զգնալ պահապանացն, ժողովեալք խմբաւին մտին 'ի յայրն, և սկսան սատակել զքրիստոնեայսն մարդախող խող սրովն, 'ի դրանէ այրին մինչև ցբուն խուկ ներսի անկիւնս այրին, իբրև զխոտահար զմանն ջարդեալ 'ի վայր թափեցին։ Զմզն զարուն և զպատանունս և զոչհանձայն իւրեանց ստանին, և ծովացաւ յատակ այրին արեամբ քրիստոնէից՝ և ամ քարինքն ներկեցան։ և զանդիկայ մանկունս 'ի դրկաց մարցն խլէին և յայրէ անտի 'ի վայր ձգէին։ Իսկ ոմանք կանայք՝ և տղայք՝ և աղջկունք՝ որք մնացին 'ի սպանմանէն, իբրև տեսին զինքեանս մատնեալս 'ի ձեռս անխնայ մարդադէմ գազանաց՝ որք վարեին զնս 'ի գերութի՝ և պէսպէս աղտեղութե ապականեն զորբութինս։ Վս որոյ լաւ համարեալ զորբութե մահն իւրեանց քանզապրուստ սուղինչ ժամանակեայ կենաց, այն եւ մեղք և չարակրութե, բազումք 'ի նոցանէ պատէին զերեսս փակեղամբ և ձորձով իւրեանց

և յան

և յանբաւ բարձրութենէն 'ի յայրէ անտի 'ի վայր արկանէին զինքեանս, և մեռանէին. Իսկ վ͞զի ի մէջ ձորոյն էր մայրի անտառախիտ ծառոց. և ոմանք յայնց որք զինքեանս 'ի վայր արկանէին յայրէ անտի՝ եկեալ պատահէին ծայրից ոստոց ծառոց և արգելանէին 'ի նմ՝ ոմանց և ընդ փորն մտեալ 'ի քամակն ելանէր ձուղն, և ոմանց 'ի սրտին մտեալ 'ի թիկունս ելանէր: որք և այս պիսի տաժանելի և դառն մահուամբ վախճանեցան: Իսկ զմնացեալսն 'ի նոցանէ գերեվարեալ տարան, և զինչս և զստացուածս նց աւարեալ յափշտակեցին, և բաժանեցին յինքեանս 'ի լիութեն: և զօրացն Պարսից եղեալ անտի առեալ ընդ իւրեանս զմ գերիսն եկին 'ի բուն բանակն Պարսից:

Իսկ զայս ամ լսելով և գրելով մեր, ձմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեա ժողովրդեանս մերոյ: և ոչ բաւեմք ատամանօր՝ թէ որով օրինակաւ՝ և կամ որով տարագուողբս առեալ աշխարհեցուք իմ̄ բեկման ազգին և աշխարհին մերոյ, յաղագս որոյ եղ հրաման մահաբեր 'ի բերանոյ երկրորդ սաբեռուոսին և շունչ հրախառն յուընկացնողին՝ և էկեր զեղծանափայտս լիբանանու, քանզի անմարդաճնակ արար միահաղոյն զամենայն և զյուսթի աշխարհս Հայոց: Ա զի 'ի քշեցն զերկիրս՝ ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց 'ի Պարսկաստան, այլ զբաղումասնեալ 'ի սահմանացն նախշուանու և անցեալ ընդ եղեգաձոր, առ եղերբ գեղամայ, և լոռոյ, և զհամշէնման գաւառն, զապարան, զշաբաղխանեն, զշիրակուան, զշարիշատ, և

մասն ինչ 'ի գեղորէիցն կարսայ, և զձորն կաղզվանու բնաւին, և բոլանդակ զերկիրն ալաշկերտու, և զգեղորայսն մակուայ, և զերկիրն աղբակու, և զսալամաստու, և զխոյայ, և զուրմիոյ, և որինչ պանդուխտք և զարիպականք մնացեալք էին 'ի քաղաքն և 'ի գեղորայսն Թաւրիզու, զգաշտն արարադու բոլանդակ, և զերևան քաղաք, զերկիրն զըրխբուլախայ, զծաղկնուց ձոր, զգառնու ձորն, զուրծաձորն։ Եւ յառաջքան զայս զգաւառն կարնոյ, և զբասենու, և զխնուսայ. և զմանազկերտու, և զարծկեայ, և զարճիշոյ, և զբերկրու, և զվանայ, աւարով և գերութ̃բ բերեալք էին յերևան, և ընդ սոսա քշեցին և տարան

Արդ՝ զայս ա̃մ գաւառքս՝ և որք ընդ սոքօք էին, հրամայեաց շահն, զորս քշեցին և տարան յաշխարհն Պարսից, և արար աւերակ և անմարդաբնակ զվայելուչ աշխարհս Հայոց։

Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի զհող զարտ և զանդաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ գեղորէից և զմեծանիստ աւանացն։

Նա և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանուանելի և զամուր և զհաստահեղոյս վիմարդեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդորէիցն։

Եւս առաւել զմեծափառ և զհռչակաւոր վանորայսն, զտեղին և զհանգստարան մէջ Ն.Յ։

Եւ զերկնանմանն և զբարձրաբերձ և զգբեթաշէն կոփածու և հաստահեղոյս վիմօք կառուցեալ զեկեղեցիս աշխարհիս Հայոց։ յորում յօրինեալ զանազան և պէսպէս նկարս և տեսակս շուշանաց և կենդանակերպից, գեղեցիկ յօրինուածով քանդակեալք՝ 'ի վէմս պէս

պէս

պէս հնարակերտութ՟ք: որոց ձեւն և դիր շինուա ծոյն և սիւնքն և ախուաղադեղք կամարացն աղգի աղգի, և լուսանցոյցքն և դրունքն, և ամ՟ ինչ խորհրդական:

Նա և զբարեհամ և զակնակիտ զմշտահո սան աղբերակունս ջուրցն:

Նոյն զկարկաջահոս ծիծաղախիտ յաւէտ ընթաց յառաջ խաղաց վտակս ջուրցն, որ'ի գլխոց ձիւնաբարդ սպիտակափայլ բարձրա բերձ լերանց առ'ի ստորև հոսեալ իջանէ'ի դաշտ անդր եղ շինութիւնոցին մատակարարէ:

Նա և զքաղցրաշունչ և զառողջարար և զկենդանապարգև զօդ և զհողմն սորին: և զայլ ամ՟ վայելչութիս սորա տեսանելով հեղ ձամղձուկ եղեալ փղձկիմք՝ և հարեալ յար տատուս ողբամք և աշխարեմք՝ զի անապատե_ ղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր: Նոյն աղգ և ժողովուրդ մեր խլեալք 'ի տեղեաց և անջա տեալք 'ի հայրենի և'ի բնիկ ժառանգութեց, և յօրհնեալ յերկրէ, որ լի է նշխարօք սրբոց Ն. Ի., և ոռոգեալ արեամբ սրբոց վկայից՝ և օրհ նեալ քարոզութ՟ք սրբոց առաքելոց՝ եղեն վտա րանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեր և այլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մար մնոյ: որք և անդէն օրաւուր առ սակաւ սա կաւ նուաղին, ոմանք մահուամբ և կորս տեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութ՟ք, որք դառնան յանօրէն օրէնս պղծոյն անապատի:

Նոյն յաղագս երկնանման և ադենատարա եկեղեցեաց զի՞նչ ասացից՝ որք'ի խաւարի մնա ցեալ և'ի բնակչաց թափուր եղեալ: մերկա ցեալ'ի զարդուց՝ եղեալ հանդրուանք համ բարուաց և ջայլամանց ը՟ս Եսայեայ տեսանողի

որջք աղուէսուց և նապաստակաց, մնկաղա
տեղք խաշանց և անդեոց, բոյնք թռչնոց և
աւերականակ բուեաց: փոխանակ օրաւուր նո
րոգման, որ զհետ աւուր խարխալեալ և քայ
քայեալ աւերեալ վլուզանի. փոխանակ բուր
ման խնկոց անուշից՝ լցեալ աղբովք՝ լռեալք
ձայնք փառաբանչաց, և կատարմունք ժամից
տարեկանաց, և մատուցմունք փրկական պա
տարագաց:

Արդ՝ պիտոյ է մեզ աստանօր հինն երեմի
աս, զերդ բացեն զնորս խորայել, մի զի ըստ
քերթողահօրն մովսէսի ողբերգակի, ոչ ես
դառնայ առ մեզ փեսայն, այլ անդարձ գնա
ցին հեռացաւ 'ի մէնջ: արդ՝ կարդասցուք
զանուն ազգիս մերոյ վայբարբառովք. քանզի
բարձեալք են փառք յիսրայելէ ըստ 'ի
հնումն ասացելում:

Դարձեալ դարձցուք յոճ նախկինն պատմու
թե մերոյ, 'ի բանն՝ զոր հատուցաք զՋղալօղ
լին 'ի նախչուան, և զ շահն տարաք 'ի Թաւ
րէզ: Արդ շահն գնաց 'ի Թաւրէզ՝ և անդ
ձմերեաց զօրօքն Պարսից, քանզի հեռացաւ
'ի նմանէ ահն Օսմանցւոց:

Իսկ Ջղալօղլին՝ որ գայր զկնի բանակին Պար
սից. յորժամ էհաս 'ի նախչուան՝ լուաւ թէ
շահն զտարեալ ժողովուրդսն անցուցեալ
ընդ գետն երասխ տարաւ յաշխարհն Պար
սից: Նաև զՋուղայեցիսն զամ վարեալ և տա
րեալ է, և զ շինուածսն հրդեհեալ: և մեծա
զարմացմամբ հիացեալ ապուշ մնաց, թէ զի
որդ վաղվաղակի 'ի սուղինչ աւուրս զայդքան
մեծամեծ գործ կարացին կատարել Պար
սիկք: Նա որոյ պատրաստեաց լրտեսս երկուս՝
և հրամայեաց նոցա գնալ մինչ 'ի Ջուղայ տեսա
նել և

նել և իմանալ զխելս բանից՝ և բերել նմա զհամբաւ Ճշմարտին։ Իսկ լուսաւորչն գնացեալ տեսլեն զիմ ըստ ասացելոյ բանին զրաւեալ, նա և շինուածքն Ջուղայու հրդեհեալք, զի տակաւին ծխեին խանձողքն, և անտի դարձան առ Ջղալօղլին թէ ստոյգք են իմ ասացեալքն։ և անդէն մտախոհ եղեալ Ջղալօղլին 'ի սրտի իւրում, ոչ գնալ ընդ ճանապարհն Ջուղայու և անցանել ընդ գետն Երասխ և միտել զհետ Պարսից։ Նախ՝ զի կասկած կրեալ և երկուցեալ 'ի հնարիցն Պարսից, մի գուցէ դարձցին ընդ կրունկն և յանկարծակի բաղխեալ ի վր Օսմանցւոց փախեսցեն ընդդէմ Երասխայ և ձորոցն՝ և կոտորեսցեն։ Երկրորդ՝ զի զտարեալ ժողովուրդն է այլ ճանապարհ ուղևորեցին, ընդ որ ոչ կարէն գնալ ծանր բանակն Օսմանցւոց՝ թէ կամեսցին։ Երրորդ՝ զի նշանաւոր օր դարձին նց՝ զոր զատում գունի առեն՝ մերձեալ էր։ զայսոսիկ և որ սոյնս նման խորհեալ՝ ոչ գնաց յայնժամ 'ի Թաւրէզ, այլ չուեալ 'ի Նախջուանայ, և մերձ գեղջն աստապատու էանց զԵրասխն՝ և գնաց 'ի քաղաքն Վան ամն բանակաւն իւրով և անդ ձմերեաց մինչ 'ի գարունն։

---

Յաղագս գերելոյ զամենաբնակութեամբ գիւղաքաղաքին Ջուղայու յերկիրն Պարսից։

## Ե։

ԵՒ ԱՐԴ ՅԵՏ ԱՅՍՑ ամենից զորս պատմեցաք՝ որ գործեցաւ 'ի շահ Աբաս Թգւրէն է աշխարհս և ընդ ազգս Հայոց՝ զորս վարեաց յաշխարհն Պարսից։

Կամի այսուհետև պատմել մեզ վ̃ մեծի և անուանոյ

անուանոյ գիւղաքաղաքին Ջուղայոյ, զի զնախկին ամբարեալ դառնութեն թոյնան և զչարակնութիւն որ վն Ջուղայու քաղաքորդեալ ունէր 'ի սրտի իւրում շահն, աստանօր պատճառ գտեալ արտայայտեալ երևեցոյց՝ քզի բերեալ յինքեան զխորհուրդն նախահաւոյն իւրոյ սաբիւռուի. վնզի ոչ պատմեցաք 'ի նախկին ճառսն՝ թէ կարգեաց շահն 'ի զօրացն Պարսից չուեցուցանօղս ազգին Հայոց, և առաքեաց յամենեկեան Հայոց. որք հանին և չուեցուցին, այնպէս և արար Ջուղայու:

Քանզի կոչեաց առաջի իւր զհանիս Թահմազղուլեբեկն, որոյ վն յառաջագոյն պատմեցաք թէ եղբայր է աթաբեկին. և տուեալ էր սա պատանդ յազգէն վրաց, թգւրցն Պարսից, որ առնումն անեալ ուրացաւ զհաւատան: Նա այժմ շահն կոչեաց զայս Թահմազղուլի առաջի իւր, գրեաց նոմա հրամանի և եա ցնա, և հրամայեաց նմա գնալ 'ի Ջուղայ և միահաղոյն քշել զնա՝ և ոչ թողուլ 'ի նա բնակիչ՝ և ոչ զմի: Նա Թահմազղուլին ելեալ յերեսաց արքային, արընթաց արշաւմամբ չեչտակի աճապարեալ 'ի Ջուղայ, և կոչեալ զաւագանիսն մեծաւ ցասմամբ սպառնացաւ նց, սարսելի և տաժանելի մահուամբ կորուսանել զնոսա՝ թէ ոչ առժամայն և վաղվաղակի զհրամանս թգւրին կատարեսցեն: այլ և զնոմա հրամանաց թգւրին հանեալ առաջի նմ ժողովրդեանն ընթերցան, յորում գրեալ էր թէ՝ հրամանէ 'ի թգւրութենէս մերմէ ձեզ Ջուղայեցւոցդ ելանել 'ի տեղեաց ձերոց և գնալ 'ի Պարսկաստան աշխարհ:

Նա յետ այնորիկ հրամայեաց Թահմազղուլիբէկն ելանել մունետիկին՝ որ է ջառչի, և կան-

չել

չել ի մէջ շինելն Ջուղայու յայն տեղիս։ Հրաման
է ՚ի մեծ Թագաւորէն Շահաբասայ, ձեզ այժմ
բնակչացդ Ջուղայոյ ելանել ՚ի բնակութենէ
ձերմէ և գնալ յաշխարհն Պարսից։ Արդ՝
մինչև ցերիս աւուրս ձեզ ներումն լիցի որ ելա
նէք, և ովք յետ երից աւուրցն աստ գտցի,
զինքն սպանանեն և զընտանիս և զինչս նորա գե
րեն, այլև թէ ոք փախիցի կամ թաքիցի,
որոք զայնպիսին ցուցանիցէ, աւարանքն նորա՝ ցու
ցողին լիցի՝ և գլուխն թագաւորին։ Նա զայս հրա
ման միշտ հրատարակեալ գոչէր մունետիկն,
և ահացուցանէր զամենն, և յահէ սպառնա
լեաց մահուն ոչինչ գանգատեցին Ջուղայե
ցիքն՝ այլ առժամայն կատարեցաւ առ նորա հրա
ման թագաւորին և պատրաստեցան յելանել։
Բայց վասն փութով և յանկարծակի ելանելոյն
ոչ գտանէին զգրաստ և բեռնակիր անասուն,
յոյժ վտանգէին ժողովուրդքն, զի ինչք և
ստացուածքն նոցա ցրուեալ և անկեալ կայր առա
ջի իւրեանց. և ոչ կարէին բառնալ ՚ի տանէ
առ ի չգոյէ գրաստուց։ և զորինչ կարացին
բառնալ բարձցին, և զորոչ կարացին բառ
նալ՝ իւրաքանչիւրոք պահուստ և թաքուստ
արարեալ թաղեցին։ Բայց ընչից նոցա յոլովքն
՚ի կորուստ և յափշտակութիւն գնաց, քանզի
ոչ միայն այն զօրքն՝ որ ընդ Թահմազղուլիբէ
կին էին եկեալ՝ նոքա միայն հարկէին զժողո
վուրդն վասն փութով ելանելոյ, այլև բազումք
՚ի մահմետականացն որք ՚ի շրջակայ գեղո
րէիցն գային, և որք ՚ի զօրացն Պարսից՝ որք ՚ի
բուն բանակէն իւրեանց յառաջեալ գային և
խառնեալ լինէին ընդ զօրացն Թահմազղու
լիբէկին, և օր աւուր յաւելանային Պարսիկքն
ի մէջ Ջուղայու։ և գումարեալ մահմետակա

նացն 'ի միասին, էր որ, տասն. էր որ քսան. էր որ երեսուն մնանէին 'ի տունս քրիստոնէիցն. ընդ տանպէին երանել և գնալ, հարկանէին սաստիկ հարուածովք, այլև յընչիցն և 'ի կարասեաց ինքեանց յափշտակէին, որոց միտք իւրեանց հաւանէին՝ և զայլն ցրուէին, զորս այլք յափշտակէին, և այսպէս յափշտակումն և կորուստ էր ընչից քրիստոնէից։

Իսկ 'ի դառնալոյն չարեացն Պարսից, զորս ածէին իմ̄ ժողովրդեանն, հարկանել և կեղեքել և հարստահարել, անճարակ լեալ ամենից բնակչացն Ջուղայու յակամայ կամօք իւրաքանչիւրոք ելին 'ի գնալ։ և թէպէտ կարողքն մարմնով և կամ որք ունէին գոյս ստացուածոյ, նոքօք համբերձէին 'ի գնալ, բայց որք էին տկարք, այսինքն տնանկք, և այրիք, և ծերք ոչ կարէին 'ի գնալ, զաղաղակ բարձեալք ազն ողորմ ձայնիւ արտասուօք և աշխարականիւ կականիւ առհասարակ ողբային։ ոմանք զտունս և զայրիս, ոմանք զընտանութիւս և զհայրենիս, ոմանք զեկեղեցիսն, ոմանք զնախնիհարց գերեզմանս և զդամբարանս, և ոմանք զանկարութիւն մարմնոյ առ ի գնալ լային և ողբային. և յորդ արտօսր յաչաց հեղուին. ո՜չ էր, որ ողորմէր նոցա և օգնէր՝ քանզի փակեալ էր դուռն ողորմութեան գթածին Ա̄յ ընդ դէմ նոցա։

Իսկ զբանալի եկեղեցւոյն՝ զոր վերին կաթանաէին՝ առին քահանայքն, և յորժամ ելին ընդ դուռն Պարսկին Ջուղայու, և 'ի հասանիլն առաջի եկեղեցւոյն, որ անուամբ Ս. Ծածնին կայ շինեալ արտաքոյ Ջուղայոյ. իբրև հայեցան, և տեսին զՍ. Ծածնին եկեղեցին, և բազումք քրիստոնեայք ելեալ խառնեցան ընդ քահանայսն. որև նոքա ևս բերին

զբանա

զբանալիս տանց իւրեանց, և 'ի միասին զաղա ղակ բարձին աղիողորմիւ ձայնիւ փղձկեալ սրտիւ և արտասուալի աչօք գուային՝ և լային, և աղաղակելով կանչէին ընդդէմ Ածածնին և ասէին՝ Ով տր Ածածին այսօրիկ բանալիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց. քեզ յանձին լիցի. և դու դարձուցես զմեզ 'ի տեղիս մեր յօտար երկրէն ուր տանին։ և զայս ասացեալ արկին զբանալիսն 'ի գետն, և մոր մոքալով յոլով ժամս ձայն բարձեալ լացին. և ապա գնացին։

Իսկ այսպէս ժողովուրդքն Ջուղայոյ հարուստք և չքաւորք եկին 'ի Ջուղայոյ՝ և գնացին յեզր գետոյն Երասխայ առ 'ի յանցանել զգետն, և անդէն բանակեալ զետեղեցան մինչև ամ ժողովուրդքն եկին 'ի գեղջէն՝ և ժողովեցան 'ի ժողովետղն յեզր գետոյն։ և յոր ժամ սպառեցաւ գալն ժողովրդեան։ յայն ժամ հրաման եղև 'ի Պարսիցն առ ժողովուրդն թէ անցէք զգետն։ Իսկ յաւուրս յայսոսիկ Թւրքն շահաբաս հասեալ էր 'ի Ջուղայ և բանակեալ յափն գետոյն Երասխայ, և յայնմ ժամու իբր թէ առ 'ի յողորմիլ և յօգնել ժողովրդեանն Ջուղայեցւոց, Թւրքն շահաբաս հրամայեաց զօրապետաց իւրոց զի և նոքա հրամայեսցեն իւրեանց զօրացն՝ զի օգնեսցեն ժողովրդեանն՝ և անցուսցեն յայնկոյս գետոյն երիվարօք և ուղտուք։ և 'ի յանցուցանելն հեծելոցն Պարսից զժողովուրդն. քրիստոնէից, որոց և հաւանէին սիրտք իւրեանց, եթէ կանանց՝ եթէ աղջկանց՝ եթէ տղայոց՝ եթէ ապրանաց, որոց և հաւանէին առեալ գնային ուր և կամէին, և տեարքն նց ոչ կարէին գնալ զկնի նց՝ և նոքա գնային 'ի կորուստ և 'ի գերութի։

րութեն ։ և որք տկարք էին թափեալք լինէին ՚ի ջուրն և ծփալով և ճչալով գնային ընդ-երեսս ջրոյն. և յոլովք հեղձնուին ՚ի ջուրն՝ և մեռանէին ։ և յերկու կողմէ յեզերս գետոյն ցրուեալք էին դէշք և դիք մարդկան խեղդե-լոց ՚ի ջրոյն ։ և այսպէս տառապանօք անցին ժողովուրդքն զգետն երասխ , և սակաւ ինչ յառաջ գնացեալ բանակեցան մինչև ամենեքեան ժողովեցան ՚ի բանակետղն ։

Իսկ ՚ի նմին ՚ի տագնապելի աւուրսն հանճարեղն ՚ի խորհուրդս չարեաց շահաբաս , նորագոյն չարիս խորհեալ վս ջուղայու , կոչեաց առաջի իւր զնոյն հանիս թահմազղուլի բէկն և հարցանէր՝ թէ յետ հանելոյ քո զբնակիչսն ջուղայոյ՝ այրեցեր զշինուածսն իւրև պատասխանեալ եղև ՚ի նմանէ՝ թէ ոչ էր հրամայեալ մեզ ՚ի թղթերէն՝ վս որոյ և ոչ այրեցաք ։ և անդէն յետ բազում մեղադրանաց՝ հրամայեաց իսկոյն դառնալ յոլովք զօրօք և այրել զամ շինուածս տանց և այլոց յարկաց ։ Որոյ չեշտակե հասեալ ՚ի ջուղայ բազում հրոսակօք և առեալ ՚ի ձեռս իւրս ջահս լուցեալս և ղամբարս եղեգանց , և նաւթիւ կազմեալ լապտերս , և սկսան այրել և հրդեհել , և քանդել զառաստաղս , և տապալել զշինուածս որմոց ։ և ոչ բնաւ թողին յարկ ծածկեալ կամ շէն , այլ յաւեր և յապականութեն դարձուցին ։ Իբրև կատարեցին զչարեաց գործս իւրս , դարձան և եկին ՚ի բուն բանակն՝ և յանդիմանեղեալ արքային պատմեցին՝ թէ եղև տէր զոր հրամայեցեր ։

Նախ հետև հրամայեաց շահն թահմազղուլի բէկին թէ մի ևս թողուցուս զժողովուրդն ջուղայու նստիլ , այլ վարեալ և տարեալ հասուսցես ՚ի թաւրէզ , և նա եկեալ իսկոյն չուե

ցոյց զժողովուրդն յետեղէն յորում բնա-կեալ կային ։ Եւ 'ի յօրն և 'ի ժամն յորում բառնայր իւրաքանչիւրոք զբեռն իւր , երկինք և օդք իւր 'ի միասին խռովեցան ի՛ր ժողովրդեան քրիստոնէից՝ քանզի խառնակեցան ամպք՝ և խռովեցան օդք, և մթացան երկինք, հնչեցին հողմք ուժգնակի , փայլատակեաց կայծակն մեծաւ ճայթմամբ , տեղացին ձիւնախառն անձրևք , և հարեալ տանջեցին զքրիստոնեայսն ։ Իսկ որք էին կարօղք մարմնով կամ գրաստիւ գնացին , իսկ տկարքն յետ աւուրց ապա եկեալ հասանէին բազում տառապանօք և չարակրութե ։ և բազում վըշտիւք և տաժանմամբ բերեալ հասուցին 'ի քաղաքն դավրէժ՝ որ է Թաւրէզ ։

Իսկ անդէն 'ի Թաւրէզ չարք ոմանք 'ի չարգանձուց որոց իւրեանց խօսեցան զբանս չարս վս Ջուղայու ը չարին Թահմազղուլիբէկին , վս զի յիշեցին թէ տակաւին կան 'ի Ջուղայ մնացեալք ժողովուրդք , զի յոլովք ոմանք փախստականք եղեալք 'ի լերինս և 'ի ձորս , և այլք պատճառեալքեն զտկարութի , և ոմանք զծերութի , ոմանք զաղքատութի , և այլք յայլինչ պատճառանօք ոչ եկին՝ այլ անդէն մնացին՝ և այժմ կան 'ի Ջուղայ։ և 'ի լսելն զայս Թահմազղուլին զայրացաւ յոյժ սաստիկ բարկութբ , բայց ոչ կարէր չարինչ առնել՝ զի ոչ էր ձեռնհաս , և թողին մնալ մինչ 'ի գարունն ։ և 'ի սկսանել գարնանն՝ պատրաստեաց զայր ոմն երևելի յիւրոցն արանց՝ որում անուն կոչէին համդամաղայ , յոլով զօրօք , այլև զհրովարտակ հրամանի առեալ 'ի Թգւրէն ետ 'ի ձեռսնր և առաքեաց 'ի Ջուղայ բերել զմնացեալ ժողովուրդն ։ Իսկ եկեալ համդամաղէն

զօրօք

զօրօք 'ի Ջուղայ կոչեաց զմնացեալ ժողո վուրդն առաջի իւր՝ և խօսեցաւ ընդ նոսա սաստիւ և բռնութեամբ, թէ հնազանդեալ անսայք հրամանաց թագաւորին ելէք ձերովք ընտանեօք և ստացուածովք զի 'ի միասին երթիցուք, և թէ ոչ կամիք գնալ, զարուս և զկարօղս ձեր սրով կոտորեմք՝ և զինչս և զընտանիս ձեր 'ի գերութիւն առնումք: Այլ և գնացեալ 'ի լերինս և 'ի ձորս 'ի տեղիս փախստէիցն գտին զփախուցեալսն, և բերին 'ի Ջուղայ, և յնմանց երկրորդումն կիրակէի երկու շաբաթօրն չուեցուցին 'ի Ջուղայոյ՝ և ուղևորեցին դէպ 'ի Թաւրէզ: և անցուցեալ զայնու բերեալ հասուցին առաջին բանակին ժողովրդեանն 'ի քաղաքն ղազըլն: և ընդ նմա զետեղեցուցին անդէն 'ի քաղաքին ղազըլնու և 'ի գեղօրեայս նր մն ցրտոյ ձմերան: Իսկ 'ի շնչել հողմոյն գարնայնոյ վերստին վարեցին զնս մինչև տարեալ հասուցին 'ի քաղաքն սպահան՝ և անդէն բնակեցուցին զնոսա՝ տուեալ նց զտեղի շինութեան որք շինեցին զյարկս և զբնակութիւն ինքեանց հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թեւաւոր ապարանօք, և անսպասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ 'ի ծաղկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէսպէս երանգոց անմախանելի տեսողաց: Այնպէս շինեցին և զեկեղեցիսն հրաշազան յօրինուածովք ըստ արժանոյն փառացն Ա.Ծ. երկնանման խորանօք, և գեղամբարձ կաթուղիկէիւք. բոլանդակ ծաղկեալ պէսպէս երանգովք ոսկւով և լաջվարդով, անօրինականօք Սն և պատկերովք սրբոց: և 'ի գլուխ կաթուղիկէից նմ եկեղեցեաց կառուցեալ

զնշան

զնշան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն 'ի պատիւ և 'ի պարծանս քրիստոնէից ։

Այս ժողովուրդքն Ջուղայունա և ամ̄ Հայազունք՝ որք գնացին 'ի քաղաքն սպահան. և անդէն բնակեալ մնացին՝ զբաղումս ունի պատճառս. վն̄ զի Թգ̄ւորն շահաբաս էր բազմահանճար՝ և խելացի, և նախահոգակ. հնարեցաւ բազում և պէսպէս հնարս վն̄ ազգին Հայոց՝ զի մնասցեն յաշխարհն Պարսից. զի թէ ոչ էր այնպ̄ հնարեալ՝ ոչ մնային ։ Նախ զի ինքն շահաբաս առնէր սէր ը̄ ազգին Հայոց՝ և մեծարանս նց̄. և մանաւանդ ընդ Ջուղայեցւոց. որոց գլխաւորի անունն էր խօջայ սափար. և սորին եղբօրն խօջայ նազար. և որդւոց սոցին մելիքաղայ. և սուլթանում. և սարֆրազ ։ և հանապազ ինքն շահն գայր 'ի տունս նց̄. ուտէր և ըմպէր ընդ նոսա առանց խտրելոյ. ոչ սովորութիւն է Պարսից առնել խտրութիւն ընդ քրիստոնէից. այլև ինքն շահն կոչէր զնս̄ 'ի տուն և 'ի սեղան իւր. և պատուէր ընդ մեծամեծս իւր. այլև պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել ։ Երկրորդ՝ զի զԹգ̄ւորական հարկն, զոր տային քրիստոնեայքն, թեթև առնոյր՝ ոչ և քրիստոնեայք ախորժէին ։ Երրորդ՝ եթէ դիպէր կագ և կռիւ և խռովութիւն ինչ քրիստոնէից ը̄ մահմետականաց. և կամ այլ ինչ գործ դատաստանի՝ եթէ մեծ և եթէ փոքր. զքրիստոնեայս իրաւացուցանէր. և զմահմետականս դատապարտէր ։ Չորրորդ՝ յորժամ զքրիստոնեայս բերեալ հասոյց 'ի սպահան և 'ի գեղօրայսն. բազում մահմետականս արտաքսեաց 'ի տեղեաց և 'ի բնակութեանց իւրեանց. և ըզտունս և զանդաստանս նց̄ ետ քրիստոնէից.

Հինգ

Հինգերորդ՝ յօժար կամօք հրամայեաց եկեղեցիք շինել յա̃մ տեղիս. 'ի Ջուղայ և 'ի գեղօրայս. նա և 'ի մէջ բերդի քաղաքին. մեծանիստ և բարձրաշէն. և այնքան յօժարութ̃ մինչ զի և ինքն յորդորէր զքրիստոնեայսն շինել զեկեղեցի: Եւ յաւուրս մեծամեծ տօնից՝ յարութե և համբարձման և յայլսն. դայր յեկեղեցիսն՝ և ուրախանայր ընդ քրիստոնէից: Վեցերորդ՝ զա̃մ կարգ և սպանդութիս քրիստոնէական համարձակութ̃ կատարելին քրիստոնեայքն. զկոչնակ հարկանել. զժամ կոչել. և զՋրօրհնէքն մեծախումբ հանդիսիւ առնել. այլև ինքն շահն և սգայր 'ի Ջրօրհնէքն և ուրախանայր 'ի տեսութ̃ին: Եւ զմեռեալսն խաչ վառօք և ձայնիւ շարականաւ հանեալ 'ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ և տանէին 'ի թաղել՝ և ոչ ոք 'ի Պարսից ազգէն եպերանաց և հայհոյանաց բանս ասէր: և այսու օրինակաւ բազում և պէսպէս կերպիւ հաճեցուցանէր շահն զմիտս քրիստոնէից՝ որովք մնացին յաշխարհն Պարսից: Եւ այնքան զհամարձակութի ետ շահն քրիստոնէից մինչ 'ի հրապարակս և 'ի շուկայս. թէ հանդիպէր կագ և կռիւ քրիստոնէից ընդ մահմետականաց. համահաւասար զմիմեանս հարկանէին՝ և հայհոյէին առանց երկիւղի: ընդ որոյ վշտանային ազգն Պարսից՝ և նոցին կարգաւորքն և մեծամեծքն. մինչ զի ընդ շահին ասացեալք էին թէ ընդէր այնքան թոյլ տաս քրիստոնէից համարձակիլ. և կամ ընդէր ոչ դարձուցանես 'ի մոլար օրինացն այն, 'ի ճշմարիտ օրէնս մահմետի:

Իսկ 'ի տեսանել շահին զվշտանալն սրտից նց̃՝ յայտնեալ էր զխորհուրդս սրտի իւրոյ նց̃՝

և ասացեալ էր․ դուք ընդ սուղինչ սնոտի սէրն իմ, զոր առնեմ ընդ նոսա, մի՛ վշտանայք՝ և մեղադրէք ինձ․ զի ես բազում ծախիւք ջանիւք և հնարիւք հազիւ կարացի բերել զնոսա յայս յաշխարհ․ ոչ թէ վս օգտի նց՝ այլ վս օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի՝ և ազգն մեր յաւելցի։ և այժմ եթէ զմարդիկս ազգին քրիստոնէից՝ որք յաշխարհէն իւրեանց եկեալ են՝ և այժմ կան․ եթէ զմմն զնս մասն մասն կոտորեալ յօդ յօդ բաժանէք․ ոչ զի 'ի նոցանէ դառնայ յօրէնս մեր․ Նաև այլքն խրտուցեալ սկսանին մի մի թաքնաբար փախչել՝ և դառնալ յաշխարհն իւրեանց․ և վաստակն մեր լինի ընդունայն։ Նւ վս այնորիկ առնեմ ես զայս սէրս ընդ նոսա․ զի այսու կապեալ մնասցեն յաշխարհս մեր․ և նոցին հինք մարդիկքն որք յաշխարհին Հայոց ծնեալք են և եկեալք աստ՝ ամքն մեռանին․ և 'ի նոցանէ ծնեալքն՝ որք յայս աշխարհս ծնանին, նոքա ամքն առանց մեր կոչելոյ ինքեանք ինքեանց յօժարութբ գան յօրէնս մեր։ Արդ՝ եթէ դուք ևս կամիք զօգուտն ազգին մերոյ՝ դուք ևս արարէք որպ և ես առնեմ։ և ապա նոքա հաճեալ 'ի բանս շահին, և գովելով զիմաստութի նր գնացեալք են իւրաց։

Նւ այս բանս շահաւասին՝ զոր ասացեալ է ընդ ծամեծս իւր՝ այժմու ժամանակիս լցեալ կատարի յաւուրս մեր․ վն զի արքն հինք՝ որք յաշխարհին Հայոց ծնեալք էին, և անտի եկեալ յաշխարհն Պարսից՝ մեռան ամքն․ և թէպէտ ունէին 'ի մտի դառնալ յաշխարհն իւրեանց՝ և ոչ կարացին․ վն վերոյ ասացեալ պատճառացն, նաև ոչ թողուին պարսիկք։ Իսկ 'ի նոցանէ ծնեալքն՝ որք յաշխարհին

Պարսից ծնան, անդէն և մնան, և այնմ աշխարհին հաճեցան. վասն որոյ կան ՚ի նմին՝ և մնան. և թէպէտ ոմանք ՚ի նոցանէ առք երկիւղածք և բարեբարոյք կամին գնալ յաշխարհն Հայոց. ոչ թողուն գնալ Պարսիկք: Նաև ոմանք ՚ի նորաժամանն զաւակացն քրիստոնէից՝ թողեալ զլուսապայծառ հաւատս քրիստոնէութեան դարձան՝ և տակաւին ևս դառնան օրէնս մահմետի վասն թերահաւատութեան և գողութեան՝ և բողութեան իւրեանց. և միաբանեալ ընդ Պարսից ՚ի նեղ արկանեն զքրիստոնեայս բազում և պէսպէս հնարիւք: Նաև մանաւանդ այնու զի տան կաշառս մահմետականաց՝ և կացուցանեն սուտ վկայս. և քարշեն զքրիստոնեայս առ դատաւորս մահմետականս ՚ի դատաստան. և պահանջեն ՚ի քրիստոնէից զորինչ և հնարել կարեն: յոմանց թէ պարտք պարտիս ինձ, հատո ըզպարտսն քո: և յոմանց թէ ազգական քո եմ. ամենայն ինչք և ստացուածք քո ինձ հասանի՝ տուր ինձ: և այլ զրպարտութեամբ զորինչ կարեն հնարել: Նաև դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց խրատացուցանեն զբանս ուրացողացն. թէ որովհետև նա եկեալ է յօրէնս մահմետի. նմա հասանի ամենայն ինչք իւրոց ազգականաց: և այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս՝ յափշտակեալ զամենայն ինչս տան ուրացողացն այնոցիկ: Նաև ոչ թէ զթեթև ինչս. այլ մինչ ՚ի հինգ հարիւր թումանի տուեալ անիրաւ իրաւամբս այսուիկ իրաւացուցեալ զբանս ուրացողացն յափշտակեցին զժառանգութիւն քրիստոնէից և ետուն ուրացողացն. զոր մերովք աչօք տեսաք: Նաև ՚ի մեռանել քրիստոնէից ազգականացն ոմանք ուրացողք. յետ գրաւելոյ յինքեանս զտունս

և զամենայն

և զամ ինչս քրիստոնէայ մեռելոյն. եկին տի րեցին ինքեանց. զորդիս և զդստերս և զաղախ նայս մեռելոյն։ և ժողովուրդքն Ջուղայե ցւոց թէպէտ բազում աշխատեցան 'ի դրունս իշխանաց դեգերելով վն փրկութե տղայոցն, ոչ եղև. վն զի ամքն մահմետականք գոլով 'ի կողմն իւրեանց հակէին։ Արդ դու այսու եր կու բանիւս՝ զորս վասն օրինակի գրեցի քեզ՝ զամ կիրս վտանկիցն 'ի միտ ածեալ գիտա ցես՝ զոր կրէն քրիստոնեայքն 'ի յօձաբարոյ ազգէն Պարսից։

Արդ ոչ սակ գիրն ամայն թէ վախճանե ցաւ յօսէփ և ամ եղբարքն և ամ ազգն այն. եկաց այլ թգւր՝ որ ոչ ճանաչէր զյօսէփ. և ասէ ցազգն իւր. եկայք, հնարեսցուք ինչ ազգին ինէլ։ Եւ այսմ օրինակի պատահեցաւ և մերոյս ազգի՝ զի թգւրն շահաբաս թէ որքան վտիւք տարեալէր զազգն Հայոց յաշխարհն Պարսից. գիտէր զայն ամ վիշտն՝ զոր ինքն էած իվն ազգին Հայոց՝ յաղագս որոյ և գթայր, և ողորմէր իվն Հայոց՝ և զսէր ցուցանէր. թէպէտ սուտ և սնոտի և ոչ ճշմարտութե. սակայն սէր ցուցանէր. վախճանեցաւ նա, և ամ իշխանք և արք ժամանակին այնմիկ։

Արդ զկնի շահաբասին թգւրեաց թոռն նորին շահսէֆի, և նա ես միջակօրէն անցոյց ընդ ազգին քրիստոնէից. քանզի ոմանք 'ի նախա րարաց շահաբասին կային տակաւին առաջի նր՝ որք յուշաւնէին նմա զվարիլն շահաբա սին ընդ Հայոց ազգին. այլև զբարեմտութին Հայոց՝ որք ունէին ընդ նախնիսն. և յայսմ պատճառէ թէթև կային ազգն Հայոց 'ի վշտաց. վախճանեցաւ և շահսէֆին և ամ արքն նախնիք։ Իսկ զկնի շահսէֆոյն թգւրց նորին



որդին՝

որդին՝ զորոյ անուն կոչեցին դարձեալ շահաբաս ըստ անուան հաւոյն իւրոյ. վ՟ն որոյ զսա կոչեմք երկրորդ շահաբաս։ սա թէպէտ լսէր զկրակութիւն՝ որք անցին ընդ ազգին Հայոց. այլ ոչ էր աչօք տեսեալ. նա և ոչ սորին նախարարքն՝ որք կային գործակալք թ՟գ՟ւորութե՟ սորա. վ՟ն որոյ ոչ ինչ փոյթ ունէին զազգէն Հայոց՝ կամ հոգալ՝ կամ ողորմիլ՝ այլ այն միայն էր ն՟ց փոյթ զինչև իցէ պատճառանօք դարձուցանել զՀայս՝ ՚ի կրօնս մահմետի։ Վ՟ն որոյ յարեան ի վ՟ր քրիստոնէից արք արեանարբուք. անօրէնք, զեխք, և շուայտք արք. որք զմարմնոյ ցանկութ՟ի և զփափկութ՟ի բարերջանիկ կեանս համարէին. ոմանք, որք յազգէն Հայոց ուրացեալք էին. և ոմանք, որք բուն պարսիկք էին նեղէին և բռնադատէին, դարշեցուցանէին և բռնութե՟ վարէին ընդ քրիստոնէից. Նաև ՚ի գաւառացն քրիստոնէից, որոց և հաճոյ թուէր աչացն Պարսից՝ եթէ տղայ՝ եթէ աղջիկ՝ եթէ հարսն՝ բռնութե՟ յափշտակէին և տարեալ ՚ի տունս թ՟գ՟ւորին. և անուանէին թ՟գ՟ւորկան ծառայ. և ոչ ևս դարձուցանէին առ տեարս իւրեանց։ և դարձուցանէին ՚ի հաւատոյն ք՟ի ՚ի հաւատն մահմետի։ Նախ վ՟ն պիղծ գործոյ իւրեանց։ և երկրորդ՝ զի յաւելումն լիցի թ՟գ՟ւորական ծառայից և ազգին Պարսից։ և երրորդ՝ զի զկնի ժամանակաց ՚ի պատճառէ այսոյ տարեալ զաւակացս. գերումն և գերփումն և յափշտակումն լինէր տանց և տեղեաց՝ ընչից և ապրանաց յետնաձնաց ընտանեաց ն՟ց քրիստոնէից։

Եւ մինչև ցայս ժամանակս յորում հասաք ոչ գիտէին ջուղայեցիքն. նա և ամենայն Հայազուն ազգն այն՝ որք կային յաշխարհին Պարսից,

Պարսից, զօձաբարոյ նենգժոտութիւն ազգին Պարսից, որ առ ինքեանս և արդ ծանուցեալք հեծեն, յոգւոց հանեն, հաշին, և մաշին, զի թերևս զերծցին յաշխարհէն Պարսից՝ կամ յայտնի և կամ 'ի ծածուկ գնալ յաշխարհն Հայոց՝ ոչ կարեն։ քանզի և ոչ տան թոյլ Պարսիկքն ելանել յերկրէն իւրեանց ոպ̃ եգիպտացիքն զազգն իէլի։ Միթէ նոյն բարձրեալն բազուկ՝ և հզօր ձեռն Տ̃ն և զսոսա հանցէ սա տի ոպ̃ զնս̃ անտի մաղթանօք մեծաց նախնի նահապետացն և մօսէսի մարգարէի. և մեծի լուսաւորչին մերոյ սրբոյն գրիգորի։

---

Վասն երկրորդ անգամ գալոյն Ջղալօղլի սարդարին. և պարտեալ լինելոյն և դառնալոյն։

Օ։

ԵՒ ՅՈՐԺԱՄ ԵՀԱՍ Ջղալօղլի սարդարն 'ի վան. և զետեղեցաւ անդէն իւրովք զօրօքն. քզի զա̃մն զօրսն իւր հրամայեաց զղշլախ տալ իւ̃ր բնակչաց երկրին. և բաժանեցին զա̃մն զօրսն յերկիրն վանայ և յա̃մ շրջակայ գաւառսն նր̃։ Իսկ զօրքն, որք նստան զղշլախ իւ̃ր երկրին, իբրև բզդազանն տեսլեան դանիէլի՝ կերին, և մանրեցին, և զմնացորդսն ոտից կոխանարարին. փոխանակ շինելոյ զերկիրն աւերեալ քայքայեցին՝ և 'ի վերջին թշուառութիւն հասուցին. թէ անողորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութբ̃։

Իսկ Ջղալօղլին իբրև ետես թէ շահն յերևանայ երկրէն դարձաւ 'ի թաւրէզ՝ և երկիրն երևանայ անտէր մնաց. զոմն 'ի նշանաւոր արանց որում անունն էր օմար աղայ կարգեաց գլուխ՝ և ընդ նմա զօրս բազումս. և առաքեաց յերկիրն երևանայ՝ զի տիրեսցէ երկրին։

և նա եկեալ բնակեցաւ 'ի Նախչըւան՝ և պահէր զերկիրն։ Իսկ շահն՝ որ էր 'ի Թաւրէզ, իբրև լուաւ զայս գործ՝ և նա ևս առաքեաց զամիրգունախանն բազմօք զօրօք իւրովք օմար ղային. որ եկեալ մարտեաւ ընդ օմար աղային և սպան զնա՝ և կոտորեաց զզօրս նորա. և զգազումն 'ի զօրացն ձերբակալ արարեալ կենդանի. և զայսոսիկ զկենդանի կալեալսն՝ և զգլուխս սպանելոցն առաքեաց 'ի Թաւրէզ առ շահն. և ինքն արձանացեալ նստաւ 'ի տեղի օմար աղային 'ի Նախչըւան՝ և պահէր զերկիրն որպէս և հրամայեալ էր նմա շահն։

Իսկ ջղալօղլին կալեալ 'ի վան քաղաքի, անդէն անցոյց զսրտատառոյց եղանակս ձմերան, իբրև էհաս 'ի ժամանակս գարնայնոյ. եհան զա̃մ երամակս երիվարաց, զեւղն և զբանակին իւրոյ յարօտ իւ̃ր կանաչի՝ զի զգարնան Թալչին առցեն երիվարքն։ Իսկ համձարեղն 'ի խորհուրդս չարեաց շահաբաս՝ որ յայնմ ժամանակի նա 'ի Թաւրէզ էր, կազմեաց զալահվէրտի խանն զօրօք բազմօք՝ և առաքեաց 'ի վան 'ի խնդիր երիվարաց սարդարին, այլև զորինչ առնել կարիցէ արասցէ։ և ալահվէրտի խանն ելեալ 'ի Թաւրիզու յանկասկած և յանկարծելի ինն աւուր էհաս 'ի գաւառն վասպուրականի՝ այսինքն վանայ։ և նախ քան զա̃մ գործ՝ էհաս իւրովք ժողովել երիվարացն ( )սմանցւոց՝ և 'ի նոցանէ զօրս 'ի յարձակի էգիտ աւար հարեալ տարաւ 'ի բանակն իւր, և զօրս էգիտ 'ի շղթայս և յոտնակապս զա̃մն ջլատեաց և կոտորեաց՝ և ինքն ի մէջ երկրին բանակեցեալ և արձանացեալ նստաւ։

Իբրև ետես ջղալօղլին եթէ ալահվէրտի խանն եկեալ զայսինչ գործեաց. հանդերձեալ

ձեալ պատրաստեաց և նա զօրս բազում՝ և կարգեաց նշ̃ զօրագլուխ զվանայ փաշէն ։ և յորժամ եհաս օր մարտին, եղեն ընդ դէմ մի մեանց պատերազմիլ ի մէջ դաշտին յանդի ման վանայ բերդին, որ և Ջղալօղլին ինքն նստեալ իվ̃ր պարսպին հայէր իվ̃ր մարտկացն՝ զի ոչ կարի հեռի էր 'ի բերդէն տեղի պատե րազմին ։ իբրև խառնեցան երկոքեան կող մանքն 'ի մի մեանս, եղև անդէն սաստիկ գործ դառնութե̃ և անհնարին կոտորածն, զի իբրև զհող եւ քար անկեալ կայր դի մարդկան ընդ երեսս դաշտին ։ և պարտեցաւ կողմն Օս մանեանց՝ և զօրացաւ կողմն Պարսից, և արա րին փախստական զզօրսն Օսմանցւոց մինչ 'ի դուռն վանայ բերդին ։ որ և 'ի հալածելն զՕսմանցիսն, երկուք ոմանք Պարսիկք զհետ մտեալ Օսմանցւոց և վարելով հասուցին մինչ 'ի դուռն բերդին, և 'ի մտանելն Օս մանցւոցն ի մէջ պարսպին․ մտին և Պարսիկքն․ և անդէն ի մէջ երկուց պարսպացն՝ զօրս ասեն սիրհաճ, զմի Պարսիկն կալան Օսմանցիքն և տարան ։ Իսկ միւս Պարսիկն անդէն սպան զայր մի Օսմանցի՝ և էառ յինքն զգլուխ Օս մանցւոյն ։ և ապա էառ նոյն Պարսիկն ինքն զդաստառակն իւր՝ և ձգեաց ընդ երկինս 'ի վեր, և 'ի ներքուստ կողմանէ ածեալ ինքն զուսերն իւր՝ և հատեալ յերկուս բաժանեաց զդաստառակն իւր առաջի զօրացն Օսման ցւոց՝ և առաջի Ջղալօղլւոյն, զոր իւրով աչօքն էտես Ջղալօղլին․ քանզի նստեալ կայր իվ̃ր պարսպին մերձ տեղւոյն այնմիկ։ և 'ի տեսանելն զայն Ջղալօղլւոյն, զդաստառակն իւր եդեալ իվ̃ր աչաց իւրոց յարտասուս հարեալ էլաց, քանզի ծանեաւ յոգի իւր զբեկումն իւրոյ ազ

գին՝ և զյաջողութիւն Պարսից։ և պարսիկն՝ որ
հարեալ թրովն իւրով էհատ զդաստակն
իւր, ելեալ 'ի պարսպէն գնացեալ խառնեցաւ
'ի գունդն իւր 'ի զօրսն Պարսից։

Եւ յետ վանելոյ ալահվէրտի խանին ըզ
զօրսն Օսմանցւոց, ելեալ այնուհետև իմէջ
երկրին յաւարել և յապականել, ըստ ասացե-
լումն Տ՟ն թէ նախ զհզօրն կապիցէ՝ և ապա
զտուն նորա աւար հարկանիցէ, սոյնպէս և սա
արար, քանզի զամ՟ համբարս ցորենոյ և զայլ
պտղոց, զխոտոյ և զյարդի, և զշինուածո-
տանց զամ՟ այրեցին հրով։ և ուր կարացին
հասանել զընակիչս գաւառացն՝ որք և անկան
'ի ձեռս՝ զարսն կոտորեցին՝ և զայլսն գերեցին։
և մեծ բանակ արարեալ եթէ զմարդ և եթէ
զանասունս, միահաղոյն վարեալ տարեալ բե-
րեալ հասուցին 'ի թաւրէզ 'ի լիութ՟ի աշխ՟ին
Պարսից։

Իսկ Ջալօղլին իբրև ետես զայսպիսի մեծ-
բեկումնս։ ելեալ 'ի վանայ էմուտ 'ի նաւ և ծո-
վու գնաց յարծկէ՝ և անտի 'ի խնուս՝ և անտի
յարզրում, և նստաւ անդ։ Եւ կոչեաց ա-
ռինքն զամ՟ շրջակայ իշխանս, եթէ զկողմանցն
վրաց, եթէ զկողմանցն մարաց, ընդ որս էր և
մեծ իշխանն ազգին Մարաց՝ որոյ անունն էր
միրշարաֆ. և այսպէս զամենայն կուսակալս և
զկողմնակալս սահմանացն այնոցիկ ժողովեաց
'ի քաղաքն կարնոյ՝ այսինքն յարզրում։ Եւ
հրամայեաց ն՟ց զի իւրաքանչիւրոք իւր՟ց զօրօքն
պատրաստք լիցին ամ՟քումբք կազմուածովք
և պատերազմականօք գործեօք, զի յորժամ
ինքն Ջալօղլին 'ի վան հասանիցի, և նոքա ևս
անդր գտանիցին՝ զի խառնեալ 'ի միասին գնաս-
ցեն 'ի թաւրէզ պատերազմել ընդ Պարսից։

Ապա

Ապա եղեւ Ջղալօղլին 'ի կարնոյ եկեալ 'ի տիգրանակերտ, որ է Համիթ. և անդ ևս զկայ առեալ հոգայր զպատրաստութիւն պատերազմին, և ժողովէր ինքեան զզօրս ամ̃ միջերկրեայ գաւառաց, Օսխոյ և զՄիջագետաց ։

Յորում ժամանակի մեծ և անուանի փաշայն՝ զոր Նասիֆ փաշայ ասէին՝ որ էր ինքն 'ի քաղաքէն բերիոյ՝ որ է Հալապ, և սա ևս եկն 'ի Համիթ առ Ջղալօղլին. և 'ի միասին հոգային զհոգս պատերազմին, զի և սա համապատիւ էր Ջղալօղլւոյն ։ Սոքա երկոքեան ժողովեցին իվերայ ինքեանց զամ̃ զօրս աշխարհին Օսմանցւոց՝ և եղեալ 'ի տիգրանակերտու եկին միւս անգամ 'ի վան, և անդ ևս ժողովեցին զքըրդաստանոյ՝ և զարքունեաց կողմանցն զօրսն իւր ինքեանց. և եղէն մեծ և անթիւ բանակ ։ Եկեալ 'ի վանայ ուղղեցան դէպ 'ի Թաւրէզ, և հասին 'ի սահմանանր̃ մերձ 'ի գիւղն զոր սօֆիան ասէն, և անդ 'ի դաշտին յարդարեցին զպատերազմ, և պարտեցան զօրքն Օսմանցւոց ։

Քանզի բազմահնարն Շահաբաս, զզօրսն Պարսից բաժանեաց 'ի չորս գունդս, զգունդն առաջին ետ 'ի ձեռս ալահվէրտի խանին, և հրամայեաց նմա, զի դէմ յանդիման և ակներև ելցէ 'ի պատերազմ ընդ բանակին Օսմանցւոց ։ Իսկ զայլ երկան ետ երից նախարարաց իւրոց, զմինն ղառչղայ խանին, և զերկրորդն զՓիղար խանին, և զերրորդն, փիրպուտաղ խանին ։ և սոցա հրամայեաց զի Թաքնաբար դարանակալք լիցին յերից կողմանց ։ Իսկ ինքն շահն իւրովք ծառայիւքն 'ի գլուխ հեռի լերանց զօղեալ դադարեալ կայր ։

Եւ յորժամ էհաս պայմանեալ օր մարտին,

ելեալ ալահվերտի խանն իւրով գնդաւն երևեցաւ դէմ յանդիման զօրացն Օսմանցւոց, և 'ի տեսանել զնա Օսմանցւոցն, կարծեալ յինքեանս թէ միայն այն է զօրքն Պարսից՝ որք երևինն, վասն որոյ ուրախութեամբ խմբովին դիմեցին՝ և սկսան 'ի պատերազմիլ: Հայնժամ կողմն Պարսից վաղվաղակի ըստ պայմանելոյն հուր բարձրացուցին զծուխ նշանին, և 'ի տեսանել դարանամուտ Պարսիցն զծուխն. վուռթանակն ելեալք յիւրաքանչիւր տեղեաց դիմեցին խմբովին զօրացն Օսմանցւոց՝ և 'ի չորից կողմանց 'ի մէջ փակեալ կոտորեցին, դիաթաւալ արարեալ զամենեսեան տապաստ արկին դաշտին: և եղև անհնարին աղէտ և օր դառնութե.

Իսկ սարդարն 'ի մէջ իւրում բանակին կայր, բայց վշտագին ցաւօք իբր զկին ծննդական պաղատաւոր երկոք ոչ առնոյր ժոյժ և դադար 'ի միում տեղւոջ, այլ վարանեալ սրտիւ հայէր, և դիտէր զճանապարհս մարտիկ զօրացն՝ գուցէ գտանիցի ոք որ եկեալ բարի համբաւաբեր նմա լիցի՝ և ոչ գոյր:

Այլ և մերձ սարդարին մեծ պարոնն Քուրդ միրշարաֆն՝ զոր կանխաւ յիշեցաք: Իսկ նա գիտաց յոգի իւր թէ պարտեցաւ կողմն սարդարին, վասն որոյ ոչ եկն համբաւ. և ջանայր, և հնարէր, զի կերպիւ ինչ հեռասցի 'ի սարդարէն՝ զի թերևս փախիցի: Իսկ սկսաւ ասել ցսարդարն կեղծաւոր բանիւ և գթով, խնդրեմ 'ի վեհական տէրութենէ քումմէ, զի և ինձ տացես հրաման մտանել 'ի պատերազմ՝ զի թերևս պատահեցայց 'ի պատերազմի անդ շահին: և 'ի բազում խնդրելոյն հրամայեաց գնալ, իսկ միրշարաֆն իբրև հեռացաւ 'ի բանակէն, դարձոյց զերեսս դէպ ուղիղ

յաշ

յաշխարհն իւր, ուր և գնաց անդառնալի։

Իսկ զօրքն Պարսից յաղթեցին զօրացն Օսմանցւոց. և դարձուցին՝ ի փախուստ դէպ՚ ի բանակն Օսմանցւոց՝ և ինքեանք զհետ հալածելով և կոտորելով, մինչ բերեալ լցին ի մէջ իսկ բուն բանակին՝ որև ի մէջ այնմ բանակին մտին Պարսիկքն և կոտորեցին զՕսմանցիսն, և զաւճղայ խանն գնացեալ մերձ առ վրանն սարդարին էզարկ թրով զշրջապատ վրանի սարդարին էհատ՝ և ընդմէջն անցեալ գնաց. և ոչոք կարաց ընդդէմ ելանել նմա։ Իսկ մինչև ցերեկոյ ոչ դադարեցաւ գործն արիւնահեղութեան, զորս կոտորեցին, և զորս փախուցին, և զորս ձերբակալ արարին՝ և առին առաջի շահին, քանզի առէին, երեսունեւչորս անուանի իշխանքն ըմբռնեալք եղեն։ փաշայ, քէհեայ, զուլար աղասի, սանջախբէկի։ և այլք յոլովք։

Իբրև էառ գործն զկատարումն իւր ըստ պատացելումն օրինակի, և տեսեալ Ջղալօղլւոյն թէ պարտեցան զօրքն իւր՝ և ոչևս կարէ միաբանգամ կազմել ռազմ և պատերազմիլ, նաև մնացեալ զօրքն իւր դաղտագողի յետս փախչէին։ Մտախոհ եղեալ՝ թէ մի գուցէ և ինքն ըմբռնեսցի՝ ի ձեռս Պարսից՝ խորհեցաւ զի դարձցի անդրէն՝ ի վան քաղաք։ և յայնմ գիշերի ելեալ սարդարն և ա̃մ զօրքն իւր սկսան յետս դառնալ, և իբրև այս այսպէս եղև, ա̃մ ո̃ք զապրուստ անձին իւրոյ ջանայր, և փութայր հապ ճեպ տագնապաւ՝ զի ինքն քան զընկերն իւր կանխաւ փախիցէ, մի գուցէ զի յետուստ ժամանեսցեն Պարսիկք՝ և կոտորեսցեն զինքեանս։ և յայսմ տագնապելի փախստեանս պատճառէ թողին զա̃մ ինչս իւրեանց, զկահ և զկարասիս, զուղտս և զգրաստս,

զմթերս

զմթերս կերակրոց, և զգանձս սնդկով և սա-
պատով, քանզի զճրագունն վառեալ թողին
և զվրանսն կառուցեալ ո̃պ կանխաւ կառու-
ցեալէր, և զո̃մ ինչ զոր ունէին յինքեանց
ի բաց լքին, և դարձուցեալ զերեսս 'ի յետս
ճեպէին 'ի փախուստ, և մինչև ցլուսանալ
այգուցն ոչ մնաց և ոչ մի: Իսկ 'ի լուսանալ ա-
ռաւօտին ծանուցեալ եղև զօրացն Պարսից
փախուստն Օսմանցւոց, իբրև զեկուցին շահ
աբասին, յայն ժամ հրամայեաց զօրացն Պար-
սից մտանել 'ի բանակն Օսմանցւոց և աւար
հարկանել՝ որք և առ ժամայն յափշտակեալ իւ-
րացուցին 'ի լիութի̃ անձանց իւրեանց. և դար-
ձան ուրախութբ̃ 'ի Թաւրէզ. և անդ զետեղե-
ցան շահն և զօրքն իւր: Իսկ սարդարն եղեալ
'ի սօֆիանայ գնաց փախստեամբ մինչ եհաս 'ի
վանքաղաք, և անդ մտեալ 'ի նաւ եանց զծովն
և գնաց 'ի համիթ և անդէն մեռաւ: պատե-
րազմն 'ի Հօկտեմբերի, քսանևհինգն եղև, և
ինքն գնաց 'ի յամիթ՝ և մեռաւ 'ի Փետրվարի
ամսոյ վեցն: Ասի ևս յոմանց թէ ինքն զինքն
դեղակուր արար վն̃ ամօթոյ պարտութեն̃:

Արդ՝ գալն Ջղալօղլի սարդարին, երկու-
անգամ եղև, առաջին գալն յսկզբան հա-
զար յիսուն և չորս թուին, յորում նոր էր մուտ
Նաւասարդի ամսոյն՝ որ եկն 'ի նախիջևան, և
անդի գնաց 'ի քաղաքն վան: և երկրորդ գալն
այս է՝ որ եկն 'ի սօֆիան և յաղթեցաւ՝ և դար-
ձաւ, հազար և յիսուն և հինգ թուին, 'ի սկիզբն
տարեմտին 'ի ժամանակս առաջնոյ աշնան:

Եւ 'ի շարժմանէ այսց երկուց տիեզերակա-
լացս՝ որք զարթուցեալք են 'ի պատերազմ, եթէ
սարդարին որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ 'ի
կողմն արևելից՝ թէ որքան աւերումն և քան-
դումն

գումներն աշխարհի, թէ 'ի գալն և թէ 'ի գտանալն: Թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութեն եդեալ էին ժողովրդեանն բռնութեամբ աւելն, նոյնպէս և զաւարառութն՝ որ զկնի զօրացն բերել տային, և թէ զօրքն՝ որ 'ի ձմեռն երկվարօքն իւրեանց զգշաւխ տային, կամ զքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն ընչից և տապցուածոց, զուստերաց և զդստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս 'ի յայտնի և զորս 'ի գաղտնի, և զայլ համ չարեան զոր ածին ի վերայ աշխարհի. մեզ ոչ գոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն աստեղաց, և ստեղծ զայնքան անձինս՝ որք մատնեցան անողորմ և մարդադէմ գազանացն այնոցիկ:

---

Յաղագս յայտնելոյ ջրհեղեղին. և սատակին տոհմին. և մեր
զակերր գայլոյն. և այլևս աւարառութեանցն՝
որք ժամանեցին խիճեցայ աշխարհի:

## Ա:

## Ա Ի Մ Ա. Զ. Ա Ր Կ Ո Ւ Ց

Ետիեզերակալացս այսոցիկ այսինքն շահին և ջրհեղեղուն ամայի մնաց երկիրն արարատու իւրովք մանաւորոք գաւառօքն. քանզի շահն գնաց 'ի թաւրէզ՝ և ոչ էր ձեռնհաս. և սարդարն Օսմանցւոց մեռաւ՝ և ինքեանք ի մէջ ինքեանց 'ի խռովութեան կային, զի ոչ էին միաբանք: վասն որոյ պարոնայք ոմանք՝ որք խրախուսեալ յուսային 'ի զօրութիւն անձանց իւրեանց. գային և տիրէին երկրին արարադու՝ այսինքն երևանայ: ոմն պարոնն՝ զոր քանաքրլու մահմատ աղէին ևկեալ տիրացաւ աշխարհին:

Իսկ զկնի սորա այլումն Ջալալի փաշայ՝ զոր թօփալ օսման փաշայ ասէին։ որ էր զեալ փաշայի որդին. սա եկեալ մարտեաւ ընդ քանաքուլու մահմատին 'ի գաւառին կոտէից. որ այժմ ասի ղըխըռլախ՝ մերձ 'ի գիւղն աւինձ. և փախոյց զքանաքըլու մահմատն. և ինքն օսման փաշէն հաւաքեալ առ ինքն զբազում արս սրիկայս արար իւր զօրս իբրև հազարաց. և կալեալ իւր կայան զգիւղն կարփի՝ և անդ նստէր. և զձմեռն զայն անդ ձմերեաց։ ուստի առաքէր զզօրս իւր 'ի շրջակայ գաւառս և 'ի գիւղս բերել ինքեանց և անասնոց իւրեանց կերակուր։ և գնացեալ արքն յոր չէին և մտանէին ոչ շատանային բաւականաւն, զի յետ հոգալոյ զբաւականն աւերորդաց ձեռնարկանէին, քանզի կալեալ զարսն կախէին. զոմանս յոտից՝ և զոմանս 'ի բազկաց. և զոմանս յերկոծորեաց. և անողորմ գանիւ հարեալ թրածեծանէին՝ մինչ անշունչ լեալ իբր զմեռեալս դառնային. և ոմանք ևս 'ի տանջանս մեռանէին։ ոմանց զականջս կտրէին. և ոմանց ընդ քիթն նետ հարեալ շրջեցուցանէին։ և այսպէս չարաչար տանջանօք չարչարէին ցուցանել նոցա համբարս ցորենոյ և գարւոյ. դարմանս և պահարանս գանձուց և ստացուածոց։ Իսկ զյատակս տանց և զայլ շինուածոց փորեալ բրբրէին վա̃ գիւտի ընչից. և փլուցեալ զորմս և զծածկոյթս յարկաց յուզէին՝ և որոնէին ինչս. և յայսմ պատճառէ աւերութիւն բազում գործէին։ և նախ զգիւղն կարփի այսպէս արարին. և զայր մի 'ի նոյն գեղջէն՝ վա̃ պահանջելոյ ընչից բազում աւուրս 'ի բանտի և 'ի կապանս պահեցին. յոլով օրինակաւ տանջեցին. և յետոյ սպանին՝

նին՝ և ընդ մէջն յերկուս հերձեալ կախեցին զորմով իւր ճանապարհին յահ և երկիւղ անցողաց գաւառականացն:

Իսկ գնացեալ ոմանք 'ի Ջալալոցս այսց՝ 'ի մեծափառ ուխտն յՕհանավանք · յորոց տեսեալ բնակիչք վանիցն ամէն փախեան · բայց զծեր և զհիւանդ աբեղայ մի կալան՝ և խնդրէին ցուցանել դարան և պահարան: և յաւուրս երիս կախեալ զաբեղայն 'ի բաղկացն ծեծէին · իբրև ոչ եցոյց պահուստ ինչ՝ զայրացեալ Ջալալոցն ամ զգաղան կատաղի իջուցեալ 'ի բաղկացն յերկոտասանօրեայն կախեցին և չարաչար տանջէին · նա անճար մնացեալ եցոյց նոցա զդարանն · և մտեալ 'ի ներքս 'ի դարանն կողոպտեալ յափշտակեցին զամ ինչսն · և զկնի զաբեղայն եւ սպանին՝ և արկին 'ի խոր մի վանիցն: Իսկ անտի 'ի դարանէն հանին բազում ինչս · եթէ շորեղէն, եթէ պղնձեղէն, եթէ անօթք՝ խաչ՝ ակին՝ շուրջառ՝ բուրվառ՝ և գրեանք, որք էին ամէն պատուականք գրեանք վրդպտնք: Այլ և էին 'ի դարանի աստ սրբութիւնք վանիցն · որ էր վարշամակ երեսացն Քի, և մասն ինչ 'ի փուշպսակէն Քի · և աջ սրբոյն ստեփաննոսի նախավկային: և այլևս սրբութիւնք և ոչ նշանք · զորս առեալ զամէն Ջալալիքն՝ և տարեալ կորուսին · և զանուն գլխաւորի նոցա աբդուռզմար մուսալիմ ասէին:

Իսկ 'ի գիւղն ուշական կալեալ զայլ ոմն այր կախեալ յերկոտասանօրեացն տանջէին ցուցանել պահուստ · և զայն տեսեալ միւս գեղականացն՝ առեալ զընտանիս իւրեանց փախեան 'ի գաւառն գեղարքունի: Իսկ այսպէս արարին զամ շրջակայ զգիւղն և զգաւառն կարփու: զապարանու երկիրն · զղրխբուլախայ երկիրն ·

երկիրն․ զծաղկուց ձորի երկիրն՝ զգառնու ձորն՝ զուրծայ ձորն՝ և յայնկոյս գետոյն երասխայ՝ զատահաթայ երկիրն՝ զկոխբ՝ և զաղջաղալէն։

Ոմանք յայսմ Ջալալոցս գնացին 'ի գաւառն գառնւոյ եգտին փորածու այրս․ յորում բազումք քրիստոնեայք յահէ նոցա փախուցեալք և թաքեալք կային։ և էր այրն այն գետնափոր և մեծ․ որոյ միայն մի մուտ կայր, և ոչ յայլ ուստեք ծակ կամ շնչահան կամ հովամուտ․ և 'ի վաղեմի ժամանակաց յիշխանաց փորեալ և կազմեալ էր վ՟ն խուրջ ինչ պիտոյից․ և արդ ո՞ք մտին անդ և թաքեան յահէ Ջալալոցն․ իբրև եկին Ջալալիքն և գտին՝ և 'ի բազում աւուրս մարտնչէին, և ոչ կարէին առնուլ զայրն զայն։ ապա արարին հնարս․ զի բերին հուր, և վառեցին առաջի դրան այրին․ ոչ զի ծուխ հրոյն մտեալ 'ի յայրն վտանկեսցէ զն՟ս, որք 'ի ներքս իցեն․ և ի վ՟ր հրոյն արկին ժահահոտ դեղ ինչ՝ որոյ զհոտն տանէր օդն 'ի ներս 'ի յայրն։ և էին յայրին մարդիկք բազումք իբրև հինգհարիւր կամ ևս աւելի․ և վ՟ն խաւարչտին և նսեմութ՟ե այրին՝ հրագունք էին վառեալ․ և 'ի ժահահոտութ՟ե դեղոյն զոր արկեալ էին ի վ՟ր հրոյն՝ որ 'ի յայրն մտանէր՝ սկսաւ ապականիլ օդն, որ ի մէջ այրին․ և քարինքն ա՟մ քրտնեցան՝ և հոսէին 'ի քարանցն քրտունքն ո՟պ զջուր․ և հրագունքն ա՟մ սկսան նուաղիլ մինչև ամենևին շիջան․ և մարմինք մարդկանցն սկսաւ ուռիլ և բշտիլ և դեղին ջուր հոսիլ․ և ա՟մքն շնչարգելք եղեալք նուաղեցան․ և թուլացեալք թալկացեալք անշնչացան իւրաքանչիւր յիւրում տեղւոջ առհասարակ արք՝ և կանայք՝ ծերք և տղայք՝ մատաղ մանկունք մեռան․

և 'ի նոցանէ ոչ ոք ել արտաքս ։ Իսկ Ջալալէքն, որք զդուռն այրին պահէին . գիտացին թէ ոչ հնազանդեցան նմա զաղթեալ արքն՝ որք իմէջ այրին երկմտեղեալք 'ի տարակուսի կային ։ և յայնժամ կալան Ջալալէքն զայլոմն այր 'ի նոյն գաւառէն՝ և բռնադատէին ցուցանել զապրանս . և նա յահէ սպանմանն ասաց՝ եկայք ընդ իս զի գնասցուք 'ի քօռադարէն՝ և անդ ցուցից ձեզ զապրանս ։ Իբրև նոքա գնացին , յայնժամ նախախնամութ̄ն Ա̄յ արք ոմանք՝ որք 'ի նոյն գարանէն ելեալք էին յառաջադոյն , և մի̄ իւրեանց ինչ գործոյ գնացեալք էին յայլուրեք, 'ի նմին ժամու եկեալ 'ի հեռաստանէ դիտեցին թաքնաբար զդուռն այրին՝ զի ոչ կայր անդ ոք . ապա եկին 'ի դուռն այրին , տեսին զայս ա̄մ եղեալ . և փութացեալ զհօրն 'ի բաց ցրուեցին . և վառեցին ճրագ՝ և մտին 'ի ներքս 'ի յայրն . և տեսին զա̄մն իբրև զմեկուսեալ ոչխարս իւրաքանչիւր տեղիս մեռեալ՝ հայր զորդւոյ՝ և մայր զդստերբ՝ և եղբայր զեղբարբ՝ զմիմեամբք դիրկս ածեալ և մեռեալ ։ Իսկ փութացեալ նոցին նախ զընտանիս իւրեանց արտաքս քարշեալ ձգեցին 'ի դուրս 'ի յայրէն . և ապա զայլս որքան կարացին արտաքս բերին . և զորս արտաքս բերէին , և հոգ տարեալ սպասաւորէին զձիւն և զջուր իմ̄ն հեղուին , շնորհօքն Ա̄յ կենդանանային , և այսպէս զբազումս արտաքս բերեալ ապրեցուցին 'ի դառն մահուանէն ։ բայց զորս ոչ կարացին արտաքս բերել ա̄մքն մեռան այսպիսեաւ մահուամբ ։ և որք ելեալ 'ի գարանէն ոչև կարացին կալ 'ի տեղին յահէ Ջալալոցն, այլ փութանակի մեկնեալք 'ի տեղւոյն փախեան յայլ ուրեք ապրեցուցանել զանձինս ։

Նաև այսպէս զամենայն գեղօրայս գաւառացն աւարառութեամբ յաւեր և յապականութիւն դարձուցին. և 'ի կերակրելեաց սերմանեաց և 'ի բնակչաց թափուր արարին։

Նաև ապա խորհեցան Ջալալիքն գնալ յերկիրն գեղամայ՝ որ է գեղարքունի. քանզի գիտէին թէ անդէն համբարք ցորենոյ և գարւոյ. և ջոկք ոչխարաց և անդեոց. որք պախրէ՝ յոլովք գոն։ Վն որոյ յոլովք 'ի զօրացն Ջալալեաց եկեալ գնացին յերկիրն գեղամայ. և զբազում գիւղս կողոպտեալ աւարհարին. և բացեալ զհամբարս նոցա ցորենոյ և գարւոյ. և նոցին տեարց ձեռօք բարձին նոցին անասնոցն. և զնոսին կալան պահակ՝ որ է կոռ. վարօղ և քշօղ բեռնակիր անասնոցն. որովք բերէին զցորեանն 'ի բնակարանս իւրեանց. Այլև զկանայս, և զաղայս գերացուցեալ բերին ընդ իւրեանս. ոմն զի տեարք գերեացն արծաթ և ոսկի վն նոցին գնոցն բերեալ դարձուսցեն զգերիսն։ Նաև քրբէ ըստ բաղձանաց սրտից իւրց զործիչ և կամեցան արարին. և ապա չուեցուցեալ զգերեալ կանայս և զաղայսն. և պահակ կալեալ արամբքն բարձեալ նոցին գրաստուցն և եզանցն զամենայն բեռինսն: և զբազմութիւն անասնոցն՝ որք էին ջոկով ոչխարք՝ և պախրէք. և երամով ձիք վարեալք բերէին: Որք եկին երկաւուց աւուրց ճանապարհ՝ և զի էր գործառնութիւն այս 'ի ժամանակս ձմերայնոյ այլև ձմեռնն այն ծանրաձմեռն և ձիւնամեծ էր. վն որոյ բեռնակիր անասունքն ամէնքն վաստակեալք մնացին 'ի ճանապարհին. և 'ի թանձրութէ ձեանն ոչ կարէին գնալ. յաղագս որոյ զմնացելոց գրաստուց բեռինսն բաժանեցին շալակ շալակ. և շալակեցուցին գերեացն արանց և կա-

նանց և տղայոց. և այսպ՟ անցուցեալ զսարն հասուցին 'ի կարփի գիւղն։ Բայց թէ որքան դառն աղետիւ վտանգ էր ողորմելի ժողովրդեանն՝ որք պատահեցան այսմ գործոյ. զի ոմանց զձեռս՝ և զոտս՝ և զունչս տարաւ ցուրտն. որք յոդաթափք եղեն 'ի մասանց մարմնոյ։ և այլք 'ի շնչմանէ ցրտասաստոյց օդոյն սառուցեալք անդէն իսկ 'ի Ճանապարհին մնացին՝ և մեռան։ Եւ այսպ՟՝ որք մեռան 'ի Ճանապարհին. մեռան, իսկ որք մնացին՝ զա՟մն բերեալք հասուցին 'ի կարփի. զոմանս վաճառէին արծաթոյ. և զոմանս պահէին 'ի ծառայութի՟ գործոց իւրեանց։ և Ջալալիքն կային այսպէս մինչ 'ի գարունն՝ և հասին մերձ յաւուրսն համբարձմանն. և ապա ելեալք անտի գնացին յերկիրն ախլցխու. և անդ ևս զայն գործ կատարէին։

Եւ ոչ միայն այս Ջալալիքս այսպ՟ առնէին. գոյին և այլք Ջալալիք՝ ոմանք յոլովք՝ և ոմանք սակաւք. որք 'ի տեղիս տեղիս զկայառեալ և որջացեալք էին՝ զայսպիսի գործս գործէին։ Նաև 'ի քրիստոնէից ազգէ՝ որք ոմանք, որք ոչ ունէին զերկիւղն Այ՟ յինքեանս. իբրև տեսանէին թէ այլ ազգիքն այսպէս առնեն. ինքեանք ևս սկսան այսպէս առնել. վ՟ն զի աչօք տեսին և սրտիւ յօժարեցան. եթէ յայտնի յափշտակութ՟բ՝ և թէ գաղտնի գողութ՟բ այնպ՟ առնէին. քանզի երկիրն անտէր և ամայի էր յաշխարհական բռնաւորաց. և ոմ՟ որք զախորժակս կամաց իւրոց կատարէր։ Արդ ո՟չ պատմեն տեսօղք ժամանակին. զի բնաւ ոչ գոյր նշոյլ բարութե՟ յաւուրսն յայնոսիկ բաց 'ի թշուառութեցն. ո՟չ պատմեցաք, և տակաւին ևս պատմելոցեմք։ վ՟ն զի թագաւորն ա-

ընկերից շահաբաս զօրօքն Պարսից զբաժին արևելեայ աշխարհին յաւեր դարձոյց ։ սոյնպէս և Ջալալիքն՝ որք մասին բաժնի արևելեայ երկրիս գերագոյն քան զնոսա եղեն աւերիչք և ապականիչք ։ Եւ սարդարն Օսմանցւոց նոցին զօրօքն իմէջ երկրայս սկսեալ 'ի կոստանդնուպօլսէ մինչ 'ի յերևան քաղաք աւերեցին ։ սոյնպէս և Ջալալիքն, որք էին յաւուրսն յայնոսիկ 'ի կողմանս երկրին Օսմանցւոց գերագոյնք քան զնոսա աւերիչք ։ Եւ այլք էին որք անուանիք՝ և յաղթօղք՝ և քաջ պատերազմօղք՝ և անպարտելիք ։ Եւ զի էին Ջալալիքս այսոքիկ բազումք, վասնորոյ հարկաւոր համարիմ շարադրել զանուանս նոցա ։ որով մարթասցիս վերահասու լինիլ աւերման աշխարհաց՝ որ 'ի նոցունց եղև. թէ որքան եղեալ է ։ և զորինչ լուաք յականատես պատմողաց՝ զայն գրեմք ։

Նախ ղարայ եազիճին բազումօք հեծելօք ․ որ 'ի հազարքառասունևեօթն թուին ապստամբեցաւ 'ի Թուրքէն ․ և եկեալ յուրհայ քաղաք եմուտ 'ի բերդն , և ամրացաւ ։ և հրամայեցաւ 'ի Թուրքէն խնդրել սորա սարդարդալ ․ և սարդարն եկեալ քառասունհազար մարդկամբք ոչինչ կարաց առնանել՝ և դարձաւ ։ և ապա եազիճին ելեալ 'ի բերդէն՝ և այլևս զօրս ժողովեաց իվերայ իւր ․ և նոքօք սկսաւ աւերել զաշխարհ ․ նախ զուրհայ քաղաք՝ և ապա զայլս՝ զթօխաթ՝ զսեբաստիայ՝ զբուրսայ՝ զանկիւրիայ՝ և այլ ուրև հանդիպեցաւ ։ և զխարաջն զոր հանապազ Թուրքն առնոյր 'ի ժողովրդոց ․ այս եազիճիս զերկու տարւոյ խարաջն ինքն էառ ․ և իւրոց զօրացն առ Չիկս բաժանեաց ։

Հուսէյին փաշայ՝ հազարքառասունևութ թուին ապստամբեցաւ 'ի Թուրքէն ։ ․Բ,ո

Քօսայաֆար հազարքառասունևութն թուին ապստամբեցաւ ։

Ահմատփաշայ՝ հազարևյիսուն թուին ապստամբեցաւ ։

Ինջալուն՝ հազարյիսունևերեք թուին ապստամբեցաւ ։

Յուլարղուլին՝ հազարյիսունևչորս թուին ապստամբեցաւ ։

Թաւուլն տասնևերկու հազար մարդով․ հազար և յիսունևերկու թուին ապստամբեցաւ ։

Այս Թաւուլոյ եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք ։

Սահմատփաշայ․ քսանհազար մարդով ։

Սանօղլի ։ Ջանփօլատօղլի ալիփաշայ ։

Սորին եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք ։

Քօռօղլի․ այս այն քօռօղլին է․ որ բազում խաղէ ասացեալ՝ զոր այժմ աշըղներն եղանակեն ։

Դելիօղլի մուստաֆայբէկ հազար մարդով․ և սա ևս ընկեր է քօռօղլուոյն՝ զոր յոլով տեղիս խմբլեր խաղին յիշեալ է ։

Սիւս մուստաֆայբէկ ։ Պարաշաշ ։

Գալունասիպ ։ Եօլայ սըղման ։

Թանղրի Թանիմազ ։ Գօկապախան ։

Ջըփլախ ։ Քեասաբեաս ։ Քոլու ։

Պարասահաթ ։ Աղաջգանփիրի ։

Սոքա ամէն ջալալիք էին որք ոչ հնազանդէին թագաւորին․ և ոչ ՚ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին․ այլ աշխարհաւերք և աշխարհակործանք ։ ուր և լնէին զհամբաւ շինութե, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին․ և զշինուածսն հրդեհեալ այրէին ։

՚Ի մերձակայից կոստանդնուպօլսի՝ մինչև յերևան քաղաք․ ՚ի բաղդատայ մինչև ցդամուրղափուն․ զոպխանկ ծովու մէջն և ըզ

սեաւ ծովու մէջն. այսոքիկ եղերքս՝ զորս ծրագրեցի. զորոց մէջն զայսքան աշխարհս յաւեր եւ յապականութիւն դարձուցին:

Եւ յայսմանէ պատճառէ հողագործք եւ երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին յերկիւղէ եւ յահէ սոցա փախուցեալք 'ի բերդս եւ 'ի դղեակս. եւ 'ի փապարս լերանց ամրանային. եւ ոչ կարէին առնել զերկրագործութիւն. մի որոյ սերմանել՝ եւ հնձել՝ եւ կալ՝ եւ կուտ բարձաւ ամենեւին: եւ սկսաւ լինիլ սղութիւն հացի եւ ամենից ուտելեաց իրաց եւ ոչ գտանիւր. եւ թէ ուրեք ուրեք եւս գտանիւր. եւ այն եւս ծանր գնոյ: Եւ 'ի ժամանակի սղութեան այս եկն մարախ յընդհանուր միջերկրայս. եւ էհար միանգամայն զամ երկիրս. եւ եկեր զխոտ՝ զբոյս՝ եւ զայլ կանաչ՝ որ երեւէր: Որոյ հետագոյ եղեւ սով սաստիկ. եւ բնաւին ոչ երեւէր հաց եւ կերակուր եւ այլ ինչ ուտելի:

Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր եւ ցան ազգն Հայոց. եւ գնացին իւրաքանչիւրոք հանդեպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ եւ ապրելոյ: ոմանք յուռումէլի. ոմանք 'ի բուղդան. ոմանք 'ի լեհ. ոմանք 'ի կաֆայ. ոմանք 'ի ծովեզերան պոնտոսի. ոմանք 'ի Թաւրէզ եւ յարտաւէլ՝ եւ 'ի գաւառս սոցա: զի յազգէն Հայոց՝ որքան զարիպականք կան յասացեալ գաւառս. յայս ժամանակիս եւ յայսմանէ պատճառէս են գնացեալք: Եւ շահաբաս թագաւորն՝ որ 'ի Հայոց ազգէն զայնքան .քրիստոնեայս.քշեաց եւ տարաւ յերկիրն ապհանայ եւ ֆահրապատու. նոքա ամէն յայս ժամանակիս էին եկեալ՝ զոր շահն տարաւ:

Եւ ըստ ասացելումս 'ի ժամանակի սովուս՝ որք ցրուեցան եւ գնացին, գնացին: եւ որք մնա

ցին

ցին 'ի միջերկրեայս. 'ի չգոյէ հացի սկսան ու-
տել զկենդանիս՝ զարջառս և զոչխարս։ Եւ 'ի
սպառել սոցա կենդանեացն՝ սկսան ուտել զան-
ս̃բ կենդանիս՝ զձի, և զջորի, և զէշ. և զայլ
անս̃բ կենդանիս. մինչև զշուն, և զկատու՝
և այլ ինչ որ 'ի ձեռս անկանէր վ̃ն կարեաց կե-
րակրոյն։ Եւ իբրև այլ առաւել սաստկա-
ցաւ սովն. սկսան ուտել զմեռեալս՝ և ոչ թա-
ղէին՝ այլ ուտէին. քանզի զօրացեալ էր խիստ
աշխարհի սովն։ Եւ բազումք 'ի բազում տե-
ղիս զկենդանի մարդն ըմբռնէին և ուտէին։

Որպէս պատմեցին մեզ թէ յերկիրն արա-
րադու 'ի գիւղն որ կոչի ուշական. այր ոմն ա-
րարեալ էր վիհ ինչ իմէջ տան իւրոյ թաքնա-
բար. որ զայր ղարիպական խաբեալ բերէր 'ի
տուն իւր և սպանեալ պահէր 'ի վիհն յայն՝ և
օրըստօրէ սակաւ սակաւ ուտէր. զոր յետոյ
իմացան բնակիչք գեղջն՝ և հալածեալ փա-
խուցին 'ի գեղջէն։

Եւ 'ի գիւղն՝ զոր բջնի ասեն. Ճանապար-
հորդք ոմանք ընդ այն անցանելով տեսանէին
զի ծուխ ելանէր 'ի տանէ միոյ. և նիշ առա-
բեալ գնացին 'ի տունն՝ տեսին զկանայս երիս 'ի
տանն՝ որք կառուցեալք էին զպղնձոյն և եփէին
զկերակուր. իբրև 'ի վերայ էին զխուփն՝ տեսին
զձեռս և զբազուկս և այլ միս մարդոյ. զոր ե-
փէին զի կերիցեն. իբրև բռնադատեցին զկա-
նայսն խոստովանել զայն. յայնժամ ն̃ք զստոյգն
ասացին. թէ վասն հարկի սովուն՝ զի ոչ ունիմք
զինչ զի կերիցուք. վ̃ն որոյ զանցորդ մարդիկս
խաբեալք բերեմք 'ի տուն՝ և սպանեալ եփեմք
և ուտեմք։

Նաև յարզրում քաղաքի սմին օրինակաւ
այսպիսի գործ եղեալ էր՝ զոր տեսօղքն պատ-
մեցին

մեցին ինձ. թէ կանայք չորք միաբանեալք էին. և 'ի տան միում արարեալ ինքեանց բնակութիւն, որ մի և երկու 'ի նոցանէ աւուրց յաւուրս ելեալ արտաքոյ շրջէին և խաբէին զմարդիկ պատրողականիւք բանիւք՝ և բերեալ 'ի տուն, ըմբռնեալ զմարդն սպանանէին. եփէին և ուտէին: Այս եղև 'ի միում աւուր զի զայր ոմն տարան 'ի տուն. և մինչ կամէին ըմբռնել զայրն՝ և այրն իմացեալ զխորհուրդս նց̅ փութանակի 'ի բաց ոստեաւ: զերծաւ 'ի ձեռաց նց̅ և փախուցեալ էլ 'ի տանէն: և գնացեալ առ փաշայն, որ իշխան էր քաղաքին՝ ծանոյց նմա. և իշխանն հրամայեաց զինուորաց գնալ ընդ առնն՝ և ըմբռնել զկանայսն. և զինուորացն գնացեալ ըմբռնեցին զկանայսն: ապա սկսան խուզել զտունն. իբրև մտին 'ի ներքսագոյն տունն, տեսին քանիչորք գլուխք մարդոյ՝ զորս սպանեալ և կերեալ էին. և զինուորքն բռնադատեալ խոշտանգէին զկանայսն տալ ստուգիւ զգործս իւրեանց. և նոքա պատմեցին թէ վ̅ վտանկի սովուս խաբանօք բերեմք զմարդիկս աստ՝ և սպանեալ ուտեմք: և կալեալ զկանայսն տարան առ փաշայն. և փաշայն հրամայեաց սպանանել զչորեսին կանայսն:

Այս մերձ բասենոյ երկրին է գաւառ մի. զորոյ անունն խալխաղի ասեն՝ որ այժմս անբնակ է գաւառն այն. ուստի էր այր ոմն հաւատարիմ և բանագէտ. սա պատմեաց թէ 'ի ժամանակս այս սովուս՝ տղայք երկուք առ մեզ բնակէին՝ զի մեզ գայր ցորեան ուտելոյ: և եղև օր ինչ, զի ոչ երևացան տղայքն. և եկն առ իս կարծիք՝ թէ մի գուցէ անկան 'ի ձեռս մարդակերաց արանց՝ և կերանալք եղեն. և վ̅ ահի մարդակերաց արանցն առ 'ի ընդ իս արս երկուս և ս.

քան

քանզի և ես երկնչէի միայն գնալ առ նոսա. և գնացի 'ի կարծեցեալ տեղին, ուրէին ժողովեալ բազում սովալլուկ մարդիկք արք և կանայք՝ յորոց գոյր կարծիք մարդակերութե̄։ իբրև մտի 'ի տունն հարցի ցնա՝ և նոքա յուրաստ եղեն. և էր թոնիրն 'ի վառ և պղտոն իւր. յորում եփէին զկերակուր. և առեալ եբաց զխուփն հայեցայ իմէջ պուտկին՝ տեսի զոտն տղային. ապա եկեալ եղբայր տղային ասաց՝ թէ զեղբայրն իմ մորթեցին և կերին. և այդ նորին ոտն է։ և ես յետ բազմաց կսկծանաց՝ առեալ զմնացեալ տղայն տարայ 'ի տունս մեր՝ որ ապրեցաւ։ Այլև սոյն այր ասէր՝ թէ տեսի զի երկու պառաւ կանայք՝ որք կալան զփոքր աղջիկ մի. խեղդեցին և կերին. և ես զայս ծանուցի սարգիս անուամբ առն միոյ. և նա սպան զերկոսին պառաւսն։ Եւ բազումք 'ի բազում տեղիս այսպէս սպանեալք էին. որսացեալք զմարդիկ և կերեալք։

Եւ ոչ միայն զայլ օտար մարդ ուտէին՝ այլև արք և կանայք զզաւակս իւրեանց կերեալք էին։ ոմ̄ լուաք թէ յերկիրն սեբաստիոյ ոմանք զզաւակս իւրեանց կերեալք էին։ Այլև յայլում գաւառի կին ոմն զիւր զերկու որդին և զմի դուստրն կերեալ է։

Եւ ոմանք հարկեալք 'ի կարեաց սովոյն ելանէին՝ և շրջէին 'ի շենամիջին և վ̄ պակասելոյ զօրութե̄ ճնշեալ՝ և մաշեալ, և նքողեալ ոչ կարէին գնալ, անկանէին 'ի շենամիջի և յանգս ճանապարհաց և յանկիւնս որմոց մռնչելով և նուաղով մեռանէին։

Եւ ոմանք եկեալք միաբանէին արք տասն՝ քսան՝ և երեսուն և գնային 'ի գեղջէ 'ի գեւղ և յերկրէ յերկիր խնդրել զկերակուր և ոչ

կարէին գտանել, զի իբրև զԾ. ծառայք պատուհաս ի վ̃ ընդհանուր աշխարհի սփռեալ էր սովն, որ բազում մարգարէին կոչեաց սով յերկիր նյ̃ և զամ̃ զօրութեն հացի եբեկ։ Էր զի ոմանք 'ի նոցանէ հատանէին 'ի շէնս, և էր զի մեռանէին։

Նա 'ի դիականց մեռելոցս այսոցիկ կերին վայրի գազանք և անընտելք կենդանիք, մանաւանդ թէ գայլք. և ուտելով զմեռեալս, սովորեցան և զկենդանի մարդն ևս ուտել՝ զոր մարդագայլ ասէին։ և այնքան սովորեցան և համարձակեցան գայլք ի վ̃ մարդոյ մինչև զկենդանի մարդս պատառէին և ուտէին։ Նա յայսմ պատճառէ երթ և եկութեն գնացից ճանապարհաց խափանեցաւ յահէ մարդագայլոցն։ Նա այնքան վստահացան գայլք ի վ̃ մարդոյ՝ որք գային ի մէջ շինին և մտանէին 'ի տունս, որում և պատահէին եթէ յանկողնի ննջեալ տղայի. և թէ ի մէջ օրօրոցի, և թէ 'ի գիրկս մարցն, ի վ̃ արձակէին և բռնութեամբ կորզեալ 'ի գրկացն և յօրօրոցէն յափշտակեալ փախչէին՝ և տարեալ ուտէին։ Յայսմ գործոյս տեսօղք յոլովք գոյին՝ որք զիւրաքանչիւր տեսեալն պատմէին գործս զարմանալիս և սարսափելիս։ Որև այնմ ժամանակեան գայլատար մանկանցն բազումք գոն այժմ՝ որք եղեալք են արք կատարեալք և ծերացեալք, որոց 'ի գլուխն և յերեսն և յայլ տեղիս մարմնոցն տեսանի սպի վիրացն պատառոտեալ և գիշատեալ՝ զոր արարեալք էին գայլքն՝ որոց 'ի հարցանելն մեր վասն գիշատելոց տեղեացն, պատասխանեն թէ գայլն յափշտակեալ տարաւ զիս յուտել՝ և ժողովեալ արանց բազմաց ազատեցին զիս 'ի բերանոյ գայլոյն։

Նա եղև սովս այս ի մէջ երկուց մեծաց

ծո

ծովուցն այսինքն ազխատակ ծովուն, և սեաւ ծովուն 'ի մերձակայ գաւառացն կոստանդնուպօլսոյ մինչև 'ի գաւառսն Թաւրիզու, 'ի քաղդատայ մինչև 'ի դամուրղափուն, այսքան եզերացս միջն եղև սով և սաստկացաւ։ Եւ եղև սկիզբն սովուս 'ի հազար և յիսուն և հինգ թուին, յորում ամի թոյլ էր սովն և ոչ էր խիստ, իսկ 'ի միւսանելն, հազար և յիսուն և վեց թուին. և 'ի հազար և յիսուն և եօթն կարի սաստկացաւ. և 'ի միւսանելն հազար և յիսուն և ութն, թուլացաւ. և 'ի հազար և յիսուն և ինն բարձաւ բնաւին ողորմութեքն ԱՅ ամենախնամողին՝ որ ոչ իսպառ բարկանայ ստեղծուածոց իւրոց՝ և ոչ յաւիտեան պահէ զոխս, որում փառք յաւիտեանս ամէն։

---

Յաղագս առման Բաղդադայն գանձակայ և շամախու։

## Ի։

## ՅԵՏ ԵՐԿՐՈՐԴԻ ՊԱՐՏՈՒ

թեան և գտանելոյ Ջղալօղլի սարդարին, որ եկն 'ի սոփիան և պատերազմեցաւ ը Պարսից և պարտեալ դարձաւ 'ի համիթ և մեռաւ։ Թգն Պարսից շահաբաս ամենեւիւք զօրօքն իւրովք կայր 'ի Թաւրէզ քաղաքի զձմեռն զայն՝ իսկ 'ի շնչել հողմոյն հարաւոյ 'ի ժամանակս գարնան ժողովեաց զամն զօրս իւր՝ և գնաց իւր զօրացն Օսմանցւոց՝ որք տակաւին էին 'ի քաղաքին գանձակայ՝ որ է գանջայ, յորում ամի էր թուականն մեր հազար և յիսուն և հինգ, և 'ի հասանելն անդր շրջապատեալ զբերդն նստաւ իւր։ և զերկիրն ամ գրաւեալ ընդ իւրով իշխանութեամբն և պահէր 'ի խաղաղութե, զհրաման արարեալ իւրոյ զօրացն մի զոք խռէլ

և մի

և մի զոք բռնադատել 'ի բնակչաց երկրին, ուստի լցեալ լինէր ամ̃ պէտոյք նոցա մարդկանց և անասնոցն. ինքն շահն ուշ եդեալ գործոյ պատերազմին՝ զի տեսցէ զբերդն պէսպէս հնարիւք ։ երբեմն զսխեայ բարձրացուցեալ 'ի վերուստ ծեծէին ։ երբեմն 'ի ներքուստ զլատակս պարսպացն փորեալ զնաղմն առնէին , և զայն լնուին բարութով և հրդեհէին , և զպարիսպն խլեալ ը̃ երկինս ցնդէին ։ և երբեմն տուեալ երդումն և դաշն խաղաղութե̃ գրէր շահն՝ և առաքէր 'ի մէջ բերդին , թէ դուք ամենքն ձերովք ընչիւք և ամենիւք ընտանեօք ելեալ գնասջիք յաշխարհն ձեր՝ և մեք ձեզ ինչ ոչ մեղանչեմք , մինչ թէ զբերդն տայք մեզ։ Իսկ զօրքն Օսմանցւոց ոչ տային՝ այլ երկայնամտեալ համբերէին , և քաջութ̃բ պատերազմեալ դիմակայէին։ Իսկ Պարսիկք զօրքն ոչինչ կրէին վտանկ՝ կամ կերակրոյ կամ ջրոյ և կամ 'ի շրջակայ թշնամեաց՝ և կամ յայլ իրաց , այլ կային առանց պակասութե̃ և հանապազ պատերազմէին ։ Այլ մինչ ետես շահն թէ տակաւին երկարի գործ պատերազմին՝ ձուլեաց անդէն երկուս թօփս մեծամեծս հզօրս և ուժգնաբաղխս, որոց 'ի ձգելն կարի փլուցանէր զպարիսպ բերդին. և տոլաւ յոյժ վտանկ լինէր Օսմանցւոցն ։ 'Ի վերջոյ ամի̃ պատերազմին՝ բնակիչք բերդին զօրքն Օսմանցւոց հայէին շուրջ զինքեամբք զի ոչուստեք գոյր նց̃ օգնական՝ ոչ յիւրեանց շրջակայից քաղաքացն. նա և ոչ 'ի դրանէ թագաւորին իւրեանց. զի Ջալալիք բազումք կային 'ի մէջ երկրին Օսմանցւոց՝ զորոց զանուանսն յանցեալ ճառսդ յիշեցաք. և նոքա այնու էին պարապեալք. այլև փաշայն Գանջայու անկեալ էր 'ի պատերազմին՝ որոյ

անունն

անունն էր ընջիլղուան ալիփաշայ։ այլ և նոր ձու-
լեալ Թօփն կարի փլուցանէր զպարիսպն․ մի
որոյ յամենից կողմանց 'ի նեղ անկեալք ետուն
զբերդն Պարսից։ Իբրև էառ շահն զբերդն
Գանձակայ՝ տիրեաց ամ̃ երկրին՝ և կարգեաց
անդէն իշխեցող զոմն՝ որում անունն էր աղ-
սաղ մահմատ խան։

Ու մինչև ցայժմ առ ինքն ունէր շահն
զԹոռն աղէքսանդրու Թագաւորին Կախէ-
Թու զԹամրազն․ և այժմ արձակեաց զնա
գնալ յաշխարհ իւր հայրենի, տուեալ նմա
զհրաման իշխանութեան տիրել իւրոյ հայրենի
աշխարհին՝ և վարել զգործ Թագաւորու-
Թեան իւրոյ։ Բայց կալ 'ի միաբանութեան և 'ի
հնազանդութեան Թագաւորութեանն Պարսից․ և
Թամրազն գնացեալ 'ի Կախէթ 'ի հայրենիս
իւր վարէր զիշխանութիւն Թագաւորութեան,
և կայր 'ի հնազանդութեան Պարսից։

Այլ և ոմանք ասացին թէ յետ առնլոյ շահին
զԳանջայ․ կային 'ի գաւառին Գանջայու մահ-
մետականս հաւատով ազգ մի․ զոր ինքեանք
էլ անուանեն, և զանունն այս էլիս ջէկիր-
լու ասէին․ որք էին դաւանութեամբ և կրօնիւք
Օսմանցւոցն՝ զոր սուննի ասեն։ զհրաման արար-
վան սոցա շահն ժողովել զամենեսեան 'ի մի
վայր 'ի տեղի ինչ՝ որ էր տեղի հեղեղատի, որոյ
մուտն նեղ էր՝ զոր պահէին Պարսիկք․ և որքան
դէպ 'ի ներքս երթայր լայնանայր․ և շուրջա-
նակն բարձրափուլ․ յորմէ ոչ կարէին ելանել
և փախչել։ Հրամայեաց շահն զնոսա զամենե-
սեան անդէն 'ի սուր սուսերի մաշել՝ զարս և
զկանայս՝ զծերս և զտղայս․ և մինչև ցմատաղ
մանկունս կոտորեցին, և բնաջինջ արարին։

Իսկ Թագաւորն շահաբաս յետ առնլոյ ըզ-

զբերդն

զեւրոդն գանձակայ եւ տիրելոյ ամի երկրին, ընդ սուտ Ճանապարհ ելանել եւ գնալ 'ի կողմանս վրաց 'ի քաղաքն Թիֆլիս ։ Եառ ընդ իւր եւ զմնացեալսն 'ի զօրացն եւ յազգէն ( )սմանցւոց՝ որք մնացին 'ի կոտորմանէ բերդին ։ Խաբեաց զնս պատրողականիւք բանիւք տուեալ նց յոյս մնալ ասելով՝ եկայք դուք զկնի բանակի իմոյ, զի մի գուցէ ելուզակք մարդիկք վնաս ինչ առնիցեն ձեզ, այլ 'ի մերոց զօրացս կարգեցից ձեզ զօրս պաշտպան զի խնամելով եւ հովուելով տանիցեն զձեզ մինչեւ հասուցանիցեն 'ի սահմանս երկրին ձերոյ ։ Եւ այսպիսի պատրանօք առեալ տարաւ զնս ընդ իւր․ եւ հասեալ 'ի գաւառն ախստեւու բանակեցաւ 'ի ձորն՝ զոր Ինջայու ձոր ասեն իւր ջրոյն ։ Եւ անդէն հրամայեաց զօրացն Պարսից կոտորել զամն մնացեալսն յազգէն ( )սմանցւոց՝ եւ աւար առարեալ զինչս եւ զստացուածս եւ զկանայս եւ զմանկունս նց ։ Եւ արարեալ կատարեցին ըստ հրամանաց շահին զամենայն ։

Յետ այսորիկ շահաբաս ամի բանակաւն իւրով չուեալ յերկրէն Ինջայու գնաց 'ի քաղաքն Թիֆլիս, խաղաղութբ եմուտ՝ եւ խաղաղութբ ելեալ գնաց․ զի միաբանութիւն էր իմէջ Պարսից եւ Վրաց ։

Ելեալ շահն 'ի Թիֆլիսու գնաց 'ի գաւառն գեղամայ․ եւ բանակեցաւ անդէն բանակաքբրունի․ եւ ինքն շահաբաս իջավանեցաւ 'ի տան մելիք շահնազարին՝ որ էր 'ի գիւղն մազրայ՝ բնակեալ 'ի նոյն գեղջէն ։ Եւ էր մելիք շահնազար յազգէն Հայոց՝ եւ հաւատով քրիստոնեայ․ իշխան հզօր եւ փառաւոր․ որ արար զհիւր ընկալութի շահին ոչ վայելէ Թագաւորին՝ եւ էր ինքն բարեկամ եւ մտերիմ եւ ար

գոյ աւագի Թագաւորին մի որոյ և Թագաւորն պատուական և այնև զգեստուք շքեղացուցեալ խիլայեաց. և պարգևեաց նմա զիշխանութիւն մէլիքութեան գաւառին. և այլևս դաստակերտս և գեղորայս նմա և եղբարց նորա: և զՀաստատուն նոմոս գրեալ և կնքեաց Թագաւորականաւ կնքով. և ետ նոցա զի անփոփոխ լիցի ժառանգութիւն այն նոցա և զաւակի նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան:

Իսկ անտի յարուցեալ կամենար գնացեալ է-Հաս 'ի Թաւրէզ ամենևիւք զօրօքն իւրովք, եկաց մինչև եմուտ 'ի միւս տարին. յորում էր Թոմականն մեր Հազար և յիսուն և վեց. ապա առեալ զբազմ զօրս իւր գնաց ի վերայ Շամախոյ՝ և նստաւ ի վերայ բերդին, շրջապատեալ և պաշարեալ զնա: և ոչ պատմեցաք վասն գանձայոյ՝ նովին օրինակաւ պատերազմեալ ընդ Շամախոյ էառ զնայ Օսմանցւոց: և զզօրսն Օսմանցւոց սրով կոտորեաց. և զընտանիս և զինչս աւարեալ յափշտակեաց: և կարգեաց 'ի նմա իշխան ըզ գըլֆիղար խանն. և ինքն չուարարեալ բանակաւն իւրով գնաց 'ի Թաւրէզ: Իսկ 'ի մտանելն 'ի Թոմականն Հազար և յիսուն և եօթն. գնաց շահն 'ի սպահան քաղաք:

---

Թէ որպիսի պատճառանօք կոչեաց շահն զԹագաւորն Վրաց առ ինքն. և հնարիւք զրաւեաց զնա:

Թ.

Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԹԱ-գաւորութեան Շահ Թահմազին՝ որ էր Թագաւոր ազգին Պարսից: և եղև զօրանալ այս Շահ Թահմազիս և բռնանալ ի վերայ այլոց ազգաց՝ որք շրջաբնակք էին զինքեամբ, որ և բըռնացաւ ի վերայ ազգին Վրաց և էառ զպանտանդս

'ի Թա

'ի Թագաւորաց նց։ 'ի Թագաւորէն Թիֆլիսու՝ որ էր մեծ սիմոնխանն՝ զդուստրն իւր և զեղբայր նր։ և 'ի Թագաւորէն կախէթու. որ էր ալէքսանդրն՝ զորդի նորա, որում անունն էր կոստանդին։ և գտին այս ալէքսանդր Թագաւորիս այլեւս որդիք երկու՝ դաւիթ՝ և գօրգի սոքա երկոքինս կային առ հայրն իւրեանց յալէքսանդր։ Իսկ կոստանդինն, որ տուեալ եղև պատանդ Թգւրին Պարսից շահ Թահմազին՝ մնաց անդէն՝ և սնաւ առ նմ, մեծացաւ՝ և եղև այր երևելի 'ի դրան Թգւրին. քանզի դարձուցին զնա 'ի քրիստոնէականաց հաւատոցն 'ի կրօնս մոլար առաջնորդին։ Մեռաւ շահԹահմազն՝ և Թգւրեաց որդի նորա շահ իսմայէլն տարի և կէս՝ և սպանին զնա։ յետ նր Թգւրեաց եղբայր նորա շահ խուտաբանտայ ենն տարի։ յետ սր Թգւրեաց սորին որդին աշխարհաւերն շահաբաս։ և կոստանդինս այս մնաց մինչ 'ի ժամանակս այս շահաբասիս, և յորժամ եկն շահն 'ի Թաւրէզ՝ և 'ի նախչուան՝ և յերևան. և գրաւեաց զնս ընդ իւրով իշխանուԹբն, այս կոստանդինս է շահին էր։

Նու յաւուրսն յորս էր շահն յերևան և պատերազմէր ընդ Օսմանցիսն՝ որք կային ներքին բերդին երևանու։ հարուստն 'ի խորհուրդս չարեաց շահաբաս խորհեցաւ զի և զԹգւրսն վրաց ածցէ առ ինքն, վս որոյ առաքէ նց կոչնականս զ'ի նոցանէ տուեալ պատանդսն՝ յորոց մի էր այս կոստանդինս՝ զոր առաքեաց կոչնականս իւրոյ հօրն ալէքսանդրի։ և զհանխս Թահմազղուլին, որ էր եղբայր աԹաբէկին, զոր նախագոյն յիշեցաք՝ առաքեաց կոչնական գօրգի Թգւրին Թիֆլիսու։ և գօրգի Թագւրս էր որդի մեծսիմոնխանին, որ

յետ ըմբռնման սիմոնխանին, զայս գործս կարգեցին 'ի տեղի նր̃ Թգ̃ւոր։ Իսկ շահն, որ առաքեաց կոչնականս առ Թգ̃ւորսն Վրաց՝ յիշեցոյց նոցա և ասաց, եթէ հաստատուն կայք իվ̃ր կանխագոյն դաշանցն, զոր նախնիքն մեր պայմանեալ հաստատեցին, պարտիք աշխատել՝ և գալ յօգնութի̃ մեզ՝ որ կամք 'ի պատերազմս Թշնամեաց։

Իսկ Թագ̃ւորքն Վրաց առ այսմ գործ վարանեցան, քանզի ոչ կամէին գալ, բայց զկնի բազմի խոկման և մտածութե յանձնառուին զգալն, ոչ յիւրեանց կամաց՝ կամ յանգիտութէ, այլ յանճարակութէ։ վասնզի ոչ են ինքնակալք զի ընդդէմ կարիցեն կալ Օսմանցւոց և Պարսից՝ այլ են տկարք և անզօրք. վս̃ որոյ հարկէ զի միոյ 'ի սոցունց ընդ ձեռամբ լիցին։ Յառաջ ընդ ձեռամբ էին Պարսից 'ի ժամանակս շահԹահմազին. իսկ Լալափաշէն, որ էր Օսմանցւոց սարդար՝ եկեալ կալաւ զքաղաքսն Վրաց՝ և շինեաց 'ի նմ̃ բերդորայս՝ և կարգեաց 'ի բերդսն ենիչէրիս. քանզի փախոյց զսիմօն խանն։ և յետոյ միւս զօրավարն Օսմանցւոց Ջաֆար փաշէն եկեալ ըմբռնեաց զսիմոն խանն՝ և առաքեաց առ խոնդքարն՝ և անդ սպանին զսիմոն խանն, և զԹոռն նորին. և այսպիսեաւ պատճառաւ եղեալ կացին Վրացիք յաղգէն Օսմանցւոց։ Իսկ արդ շահն պահանջէ 'ի սոցունց գալ 'ի հնազանդութի. և պատճառս յօդէ զկանխաւ դաշնադրութին՝ որ 'ի ժամանակս նախնեացն եղեալ է։ և սոքա ոչ թէ վս̃ դաշնադրութեն՝ և ոչ թէ յանգիտութէ՝ և ոչ թէ կամաւ՝ այլ յանճարակութէ. զի մի գուցէ շահն աւարտեալ զպատերազմն Օսմանցւոց. դառնայցէ իվ̃ր Վրաց.

խորհեցան այնու հաճել զկամս նր՝ զի թերևս
այնուհետև դարձուսցեն զնա յինքեանս. զի մնայ
ցեն 'ի խաղաղութե. և զայն ոչ գիտէին թէ
յապագայն նորին ձեռամբն է լինելոց կո
րուստ և զրաւ ինքեանց՝ և ազգին իւրեանց։

Արդ երկոքին թղթքս Ա ըստ աղէքսանդր
և գործինելեալ եկին յերևան տեսանել զշահն
Իսկ շահն՝ ոչ ընաւորեալ գոյ յազգն նց խո
րամանկութե. յառաջագոյն սիրով և մեծա
րանօք ընկալաւ զնա, և խնլայեալ պատուեաց՝
զի հաճեցուսցէ զմիտս նց և զտեսողացն յինքն.
և խաղաղութբ պահեաց մինչ որ էառ զը
ներդն երևանայ։

Եւ ապա ըստ դիւթական և ըստ կախար
դասար արհեստին իւրեանց դեղ ինչ մահա
բար ջամբեցուցեալ է գործի թղթին զի յետ
սուղ ինչ աւուրց մեռցի. և գործի թագաւորս
աւ ժամուն ոչ է գիտացեալ զայսպիսի հնա
րակերտութիս, զոր աւ ինքն ներգործեալ է
շահն։ և զկնի այսմ իրագործութեն սիրով
և պարգևօք արձակեաց շահն զգործին դնալ'ի
տեղի իւր։ Եւ նա ելեալ յերևանայ գնաց, 'ի
սակաւ աւուրս կեցեալ մեռաւ. 'ի տփխիս'ի
քաղաք իւր, ըստներգործելոյ և ըստ բաղձա
նացշահին։ Եւ ազգն և իշխանք՝ որք տեղւոյն
էին՝ թղթորեցուցին 'ի տեղի գործոյն զորդի նո
րին զլաւասափ մանուկ տիօք։ արդ զրաւ գոր
գի թղթին այսոի եղև ներգործութբ շահին։

Իսկ զաղէքսանդր թղթուրն կալաւ շահն առ
ինքն և ոչ եթող գնալ. այլ ընդ իւր տարեալ
հրջեցոյց այսր և անդր. և խնդրէր 'ի նմանէ
պատանդս։ և սակս այսորիկ աղէքսանդր յան
հնարս անկեալ եթէ կամաւ և թէ յակամայ բե
րեալ զթոռն իւր, որում անունն էր թամրազ՝
մանուկ

մանուկ տիօք եւ 'ի պատանդս շահին, ապա շահն հրամանեաց նմա գնալ. եւ աղեքսանդր արձակեալ 'ի շահէն գնաց 'ի տեղի իւր. եւ թոռն նորին թամրազ մնաց 'ի դուռն շահին. եւ թամրազս էր որդի դաւթին որդւոյ աղեքսանդրիս։

---

Միւս եւս պատմութիւն դաւաճանութեան շահաբասին, զոր միւսանգամ արար ընդ թագաւորին Վրաց։

Ժ։

## ՎԵՐՈՑ ԱՍԱՑԵԱԼ

թագաւորն կախեթու աղեքսանդր իւրով կամաւն տուեալ էր զթագաւորութիւն իւր որդւոյ իւրում դաւթի, եւ դաւիթն վարէր զիշխանութիւն թագաւորութեանն։ Իսկ միւս որդին աղեքսանդրու գորգի ոխացաւ ընդ այն՝ եւ սպան զեղբայրն իւր զդաւիթ՝ զի ինքն լիցի թագաւոր. եւ աղեքսանդր հայրն նոցին կենդանի էր՝ ոչ ետ զթագաւորութիւն գորգւոյ՝ այլ յինքն դարձոյց՝ եւ ինքն վարէր զթագաւորութիւն։

Յայսու ժամանակաւ խորամանկն 'ի հնարս չարեաց շահաբաս, խորհեցաւ զնորին հնարս կործանման եւ երկպառակութեան արկանել 'ի մէջ թագաւորութեանն քրիստոնէից. կոչեաց առաջի իւր զկանխաւ ասացեալ զուրացօղն կոստանդին զորդին աղեքսանդրիս՝ որ առ շահն էր, եւ խօսեցաւ 'ի սիրտ նորա ըստ ախորժակաց նորա եւ ըստ հաճոյից, եւ ասաց նմա. Ահա ընդ քեզ զօրս ըստ բաւականի 'ի մերոց զօրացս՝ զօրս տամ քեզ՝ եւ գնա յերկիրն քո հայրենի, եւ հնարեալ սպանցես զհայրն քո զաղեքսանդր՝ եւ զեղբայրն քո զգորգի, զի դու լիցիս թագաւոր 'ի տեղի հօրն քո՝ եւ վարեսցես զքո հայրենի թագաւորութիւն.

Բայց այժմ եթէ իմէջ մերոյ ազգիս և թէ անդ իմէջ Վրաց ազգին, մի ձեւացուսցես սակս գնալոյդ քո թէ գնամ յաշխարհն իմ զի անդ կացից, այլ ձեւացուսցես զքեզ և երևելի պատճառ զայս խօսեսցիս առ իմ ոք` թէ առաքեալ է զիս շահն այսու զօրօքս` զի գնացից 'ի շամախի առնուլ զնա, և 'ի ժամանելն քո յերկիր քո` որոք և յաջողեսցի քեզ զայն արասցես, եթէ սպանումն հօր և եղբօր քոյ` և թէ առումն շամախու ։

Բրդ` զայսպիսի պատուէր ընկալեալ օձն դարանակալ, ելեալ զօրօք գնաց յերկիրն կախեթու առ հայրն իւր աղէքսանդր, և յայնմ ժամու ոչ կարաց դառնել` զի կարծիս անկաւ 'ի միտս Վրաց տեսանելով զանուղղայ գործս նորա, որ և ինքն 'ի նմին ժամու պատրուճակեաց զմթերեալ խորհուրդս սրտի իւրոյ ։ և յաղագս զինքն ուղիղ և աննենգ ցուցանելոյ, և հաճելոյ զմիտս Վրաց, 'ի զօրաց հօր իւրոյ յազգէն Վրաց յօլով զօրս էառ ընդ իւր և ելեալ գնաց իվ̃ր շամախոյ։ և ազգն Վրաց յոյժ կամէին զկորուստն նր̃, վորոյ 'ի ժամ պատերազմին յետոյետս կային և ոչ հաւատարմաբար պատերազմէին, զի գուցէ յայնմ պատերազմի ձեռամբ Օսմանցւոցն լիցի կորուստն նր̃ ։ Իսկ չարն կոստանդին ծանեաւ զայս իրակութի̃ յոգի իւր, և զայն ևս գիտէր թէ զօրօքն Պարսից ոչ կարէ յաղթել զօրացն Օսմանցւոց, և մինչ 'ի խմբել պատերազմին մարտնչելին ընդ Օսմանցւոցն, թողեալ լքեաց զգործ պատերազմին` և փախեաւ դէպ ուղիղ յաշխարհն Պարսից` և գնաց առ շահն ։ և Օսմանցիք առեալ իմէջ զմնացեալ զօրսն Պարսից իսպառ կոտորեցին զն̃ս, և առաւ հարին զմ̃ ինչս ն̃ց ։

Իսկ

Իսկ շահն կրկինանգամ եւս զօրս կոստանդնին իբրեւ երեսունհազար․ և կրկին առաքեաց 'ի հայրենի յերկիր իւր նովին դիտաւորութե͞։ և իբրեւ եհաս կոստանդին 'ի հայրենի յերկիր իւր, ձեռացուցանէր զինքն իբրեւ զղջացեալ յուրացութե͞ն, և կամի վերստին դառնալ 'ի քրիստոնէութի, վս͞րոյ իւր զբարեպաշտ որք յօժարեցան սրտիւ 'ի շրջագայիլ յեկեղեցիս և 'ի վանորայս Վրաց, և այսու հնարիւք ժողովեաց զբազումանօթս յեկեղեցեաց անօթ, զխաչ՝ զսկիհ՝ զբուրվառ՝ և այլ զորինչ կամեցաւ և յետոյ զա͞մ զանօթս զայնոսիկ խորտակեաց, և բաշխեաց ռոճիկս զօրացն Պարսից՝ որք ընդ իւր եկեալք էին։ Իբրեւ զայն տեսին ազգն Վրաց՝ 'ի սիրտ և յոգի խոցեցան՝ և իսկոյն կամեցան բառնալ զնա 'ի կենաց․ և խորհուրդ արարեալ ընդ աղէքսանդրի հօր նո͞ր զեսպանցեն զնա․ իսկ աղէքսանդր յապաղէր յայս գործ, և տակաւին մտավարժէր վս͞ կատարման ելիցն։ և մինչ աղէքսանդր յայսմ խոկմանս կայր՝ յայտնեցաւ այս խորհուրդ կոստանդնի, և կոստանդինս փութացաւ նախաժամանն և սպան զհայր իւր զաղէքսանդր՝ և զեղբայր իւր զգօրգի, և 'ի ձեռն իւր գրաւեաց զիշխանութին, և բռնացաւ ի վ͞ր երկրին։

Յետայսորիկ դարձեալ դումարեաց կոստանդին զզօրսն իւր, և զերկրին՝ որ յազգէն Վրաց, և նորումեք ելեալ գնաց ի վ͞ր քաղաքին շամախու։ իբրեւ աւուրցինչ ճանապարհ գնացին, յայնժամ միաբանեալ զօրքն Վրաց՝ մինչ զճանապարհայն գնային՝ յարեան ի վ͞ր կոստանդնի սրախողխող արարեալ կոտոր կոտոր յօշատեցին զնա՝ և բարձին զչարն 'ի միջոյ։ Իսկ զօրքն Պարսից՝ որք ը͞ե կոստանդնու եկեալ էին,

սաստիկ խոժոռեալ ընդ այն, կամեցան յառնել 'ի պատերազմ ընդ զօրացն Վրաց: Իսկ զօրքն Վրաց ցուցին զթուղթ ինչ գրեալ իւր թէ 'ի շահէն առաքեալ առ նա առնել զայն, որով պատասխանեցին Վրացիքն Պարսից թէ հրամանաւ շահին արարաք զայս, և ապա թուլացան կողմն Պարսից՝ և ոչ պատերազմեցան, այլ ցրուեալք 'ի միմեանց գնացին յազգն իւրեանց և 'ի տեղիս: Նու եղև առաջին և երկրորդ գալն և սատակումն կոստանդնիս այսորիկ 'ի թուականութեան մերում հազար յիսուն և չորսին:

Իսկ զիշխանութիւն թագաւորութեանն կախեթու ընկալաւ յիւր հրաման հարսն Աղէքսանդրու կինն Դաւթի, և այս յաղագս երկուց պատճառաց: Նախ զի այնպէս կամեցան իշխանք աշխարհին, զի կին էր Դաւթի, որում առեալ էր Աղէքսանդր զթագաւորութիւնն: և երկրորդ, զի մայր էր Թամրազին՝ որ էր մնացեալ ժառանգ թագաւորութեանն, իբրև զաւանդապահ պահելով զթագաւորութիւնն որդւոյ իւրոյ Թամրազին՝ որ տակաւին 'ի պանդանդի կայր առ շահն: որև զկնի առման բերդին Գանջայու որպէս յառաջագոյն նշանակեցաք առաքեաց շահն զԹամրազ 'ի Կախեթ՝ որ եկեալ թագաւորեաց 'ի տեղի հարց իւրոց:

Նու պատճառ առաքելոյ Թամրազիս 'ի Կախեթ այս է, զի շահաբաս յորժամ իւրով հնարաւորիւ ներգործութեամբ սպանանել ետ զպապն Թամրազիս երէքին որդւովքն նորա իւրոց ձեռօք, և մնաց տեղին նորա ունայն՝ և Թամրազս էր ժառանգ տեղւոյն՝ և կայր առ շահն 'ի պանդանդի, վասն որոյ զնա առաքեաց: Նաև քաջգիտէր շահն՝ զի թէ յազգէն Պարսից առաքեսցէ իշխող աշխարհին կախեթու, ոչ ընդ-

ընդունին իշխանքն կախէթու, վասն որոյ զթամ բազս առաքեաց։

---

Պատմութիւն և պատճառ աւերման աշխարհին Վրաց․ և մահուան Լուասափ թագաւորին․ որ եղև ձեռամբ առաջին Շահապատին։

## ԺԱ։

ՅՈՐԺԱՄ ԴԱՐՁԱՒ Գօրգի թագաւորն Վրաց յերևանայ՝ և գնացեալ էհաս 'ի Թիֆլիս՝ ոչ ապրեցաւ․ այլ փութով մեռաւ․ քանզի դեղեալ էր զնա շահաբան ոմն 'ի վեր անդր պատմեցաք։

Եւ իշխանքն Վրաց կարգեցին 'ի տեղի Գօրգի թագաւորին զնորին որդին թագաւոր՝ որում անունն էր Լուասափ 'ի տիս տղայութեան։ Եւ եղև զի հրամանաւ Լուասափ թագաւորին կարգեցաւ այր ոմն իշխան քաղաքին Թիֆլիսու 'ի գործ մուրովութեան․ որում այժմ տարուղայ ասեն․ և էր մոլորով կարգեալ այրս, այր հանճարեղ բանիւ՝ և կորովի խորհրդով․ և խելամուտ 'ի գործս իւր․ այլև հսկայաձև՝ ուժընդակ՝ քաջ պատերազմող՝ և անպարտելի ախոյեան․ որ 'ի կողմն յոր և միաբանէր՝ զմիւս ներհակ կողմն յաղթէր․ և զընդդիմակայ զօրսն իբրև զբանջար կոտորեալ ընդ երեսս դաշտաց թափէր․ որոյ քաջութիւն յառաջի կայր 'ի բազում տեղիս լինի յիշեցեալ․ յորոց զհաւաստին իմանաս։ Այլ այրս այս մոլորով՝ ոչ էր ինքն ազնի որդի, և կամ իշխանազուն՝ և յերևելի յազգէ՝ այլ 'ի հասարակ և 'ի խոնարհ ազգէ՝ զոր ազգն Վրաց գլեխի ասեն։ Կայր և քոյր մի այս մոլորովիս նորահաս կոյս՝ չքնաղ և գեղեցիկ՝ բարետեսիլ և բարեյօդ դիրք մարմնոյն և հասակին։

Իսկ թզուրն լուսատափ զարգացեալ էհաս 'ի չափ հասակի հնգետասան և վեշտասան ամաց աւելի կամ պակաս. յորում ժամանակի շարժումն ցանկական մասին զօրանայ 'ի մարդն՝ և ընդ խուռովլ իշխանութե գրաւեալ յաձե ցուցանէ։ 'Ի սոյն ժամանակի թզուրն լուսատափ հաձեալ 'ի քոյրն մովրովլիս մոլեգին շաղաշարութե սիրէր զնա՝ և խաղայր ը նմա 'ի ծածուկ. բայց ոչ էին զուգաւորեալք. այլ էին կոյսք երկոքեանն լուսատափն և աղջիկն։ Նու գործս այս թէպէտ 'ի ժամանակս ինչ մնաց 'ի ծածուկ՝ այլ յետոյ յայտնեցաւ. ըստ հրամանաց Տ՞ն, թէ ոչինչ է 'ի ծածուկ որ ոչ յայտնեսցի. որև յետոյ էհաս յականջս մովրովլին լուրս այս։ Ա՛յլև ոմանք՝ որք էին նախանձաւորք և ոխակալք ընդ մովրովլին. որդիք չարեաց և յուզողք խռովութեց. յիշեցին զայն առաջի մովրովլին, և երեսծեծանք արարին նմա. և մովրովլն յայսմանէ պատճառէ վշտացեալ ոգւով չափ և թախծեալ սրտիւ. զմահ անձին խնդրէր և ոչ գտանէր։ Նու զկնի բազմաժամանակեայ տրտնջմանց, որ 'ի ծածուկ. ապա յայտնի և համարձակ ընդ ամեն քսուէր, և ասէր. թէ ես սպանեցեմ զլուսատափ. քանզի ոչ կարեմ տանիլ զայսպիսի նախատինս՝ զոր ընդ երեսս իմ ասեն. զի ամօթալի առակ եղէ իմէջ աշխարհի։ Իսկ իշխանք և մեծերիմք թզուրին լուսատափու իբրև լսէին զբանս մովրովլին. երկուցեալ խուսափէին 'ի նմանէ. քանզի գիտէին եթէ կարօղ է առնել գործովլ. զորև բանիւ ասէ։ վն որոյ 'ի դիպօղ և 'ի պատշաճաւոր ժամու աղաչէին զլուսատափ թզոքանօք և մաղթանօք իբաց կալ յայնպիսւոյ գործոյն, որ ոչ իսկ ընաւ

վայելէ

վայելէ թագաւորին անուան։ Նաեւ բանք սպառնալեացն մոլորովին մի գուցէ թէ գործովք արդիւնացին։ Եւ 'ի բազմաց թախանձանաց իւրոցն բարեկամաց. լուսաւոր ասաց, ոչ կարեմ իմաց կալ 'ի կուսէն յայնմանէ. քանզի ոգւով չափ սիրեալեմ ես զնա. բայց որովհետեւ այդպէս ասէք. ահա ոչ եւ գիտակ իսկ էք զի ոչ ես զկին արարեալեմ՝ եւ ոչ կոյսն այն զայր, արդ խոստեցարուք զնա օրինաւորօք կարգօք ինձ 'ի կնութի. եւ դիք զնշան զի արասցուք հարսանիս. եւ բարձցի զտրտունջն 'ի ձէնջ։ Եւ 'ի բանս լուսաւորին հաւանեցան իշխանքն ամքն. նա եւ մոլորիչն իսկ. եւ ուրախացեալ փառս մատուցանէին Այ զի բարձաւ զխռովութին 'ի միջոյ. եւ այսու բանիւ եդին զնշան աղջկանն այնմիկ վն կնութեն լուսաւորու։ Իսկ եղբայր աղջկանն մոլորոյն յոյժ ուրախացեալ ընդ գործն այն՝ եւ գոհանայր զլուսաւորէն. ասէր զինքն ծառայ եւ պաշտօնեայ նմա. եւ թէ զանձն իմ եւ զկեանս եդեալ եմ 'ի ճանապարհս եւ 'ի հրամանս նր. որովհետեւ ոչ արհամարհեաց զանտոհմութիւն իմ, զի ինձ որդի գլեխի ասէին. այլ այնչափ հաւանեցաւ յիս՝ մինչ որ զքոյրն իմ էառ 'ի կնութի եւ 'ի թագուհութի իւրեան։

Իսկ բիւր եւ հպարտ եւ ինքնահաւան ազգն Սրաց՝ որ զտոհմաթիւս եւ զնախնի հարց սեռս քննէին՝ եւ խուզեալ որոնէին. ոչ հաւանեցան ը այս բան։ քանզի կանայք իշխանացն՝ եւ ազնուորդւոցն՝ եւ թագաւորացն. որք էին մեծազգիք եւ դստերք իշխանաց յառաջն. եւ արդեանս ամանակի կին եւ մարք իշխանաց։ ը սոցին եւ այլք ոմանք եւս, ոչ բնաւ հաւանեցան՝ եւ ոչ եղեն կամակից այսմ գործոյ. քանզի երեւելի կանայքն ասէ-

քն արանց և որդւոց իւրեանց․ Թէ զիարդ մարթի մեզ՝ որ եմք դստերք այս անուն ազնիւ որդեաց․ և կանայք և մարք այս անուն իշխանաց՝ գնալ յերկրպագութիւն և յողջոյն աղջկան միոյ՝ որ դուստր է գլեխի տան միոյ շինականի։ Արդ՝ եթէ հաւանեցուցանէք զթգ̃ւրն՝ դառնալ յայդմ խորհրդենէ՝ և առնուլ իւր զկին ՚ի դստերաց թգ̃ւրց՝ բարւոք է․ ապա թէ ոչ այսպէս՝ մեք ևս ոչ կամիմք գնալ յողջոյն և յերկրպագութիւն գլեխի աղջկան միոյ․ զի ծանր է մեզ գործդ այդ․ և եթէ կամիք արձակեցէք զմեզ ՚ի կնութէ ձերմէ․ և այլ կին առացէք։ Իսկ եղև այս շփոթ և աղմուկ և խռովութիւն մեծ և անփարատելի խնդիր ազգին Մրաց զբազում աւուրս։ և որքան հնարէին կողմն հաւանողացն ոչ կարէին ՚ի հաւանութիւն ածել զանհաւան կողմն․ վն̃ որոյ յանհնարս անկեալ խաղաղասէրքն անկանէին յոտս լուսափին, և աղաչէին․ զի թերևս խաղաղութ̃ արասցէ նոցա իրացն։ Իսկ թգ̃ւրն ևս անճար մնացեալ առ այսմ․ ասաց նոցա դուք գիտէք․ և իշխանքն առաքեցին յերկիրն դադխանու և զդուստրն դադխանու թգ̃ւրին նշանեցին վն̃ կնութն̃ լուսափին։ և այսու պատճառաւ իբւաց եկաց լուսասփ ՚ի մովրովի քուէրեն։

Իսկ մովրովս այս՝ որ յառաջնում նուագին զմի ունէր բնակեցուցեալ յինքեան ՚ի զօրացն չար այսու․ և արդ՝ այսն այն առաջին, զեօթն այլ այսս չարագոյնս՝ քան զինքն առեալ ընդ ինքեան, և եկեալ բնակեցաւ ՚ի մովրովս յայս․ և եղև սորայս վերջինն չար քան զառաջինն։ վն̃ զի փոխնգայր իբրև զպատերազմասէր երկվար․ և գոչէր իբրև զառիւծ․ և շնչէր

իբրև

իբրև զհրաշունչ վիշապ իմն լուսամփու. և խնդրէր սպանանել զնա յաղագս երկուց պատճառաց. առաջին՝ վն նախկին նախատուականաց քեռն իւրոյ. և երկրորդ՝ վն վերջին անարգանացն նմին. և խնդրէր, թէ զիարդ 'ի դէպ ինչ գտցէ զի հարեալ սպանցէ զլուսամփն.

Իսկ իշխանքն մտերիմք՝ և ցաւակիցք բարեկամքն զգուշանային, և պահէին զլուսամփն. և զգուշացուցանէին զնա՝ զի պահեսցէ զինքն 'ի մովրովլեն. այլ խրատէին զնա զի սպանցէ զմովրով. Իսկ իբրև հաստատեցին իշխանքն և լուսամփն իմէջ իւրեանց զխորհուրդ սպանման մովրովլին, այսու դիտաւորութբ, յաւուր մտում 'ի գինարբու խրախութն արբուցին բազում գինի մովրովլին՝ զի գուցէ փոքր ինչ լուծցի 'ի զօրութէ, ոչ զի դիւրաւ սպանցեն զնա. և իբրև էհաս ժամն՝ ել թագաւորն արտաքս. և իշխանացն ոմանք գիտակք էին նք և ս ելին մի մի արտաքս. և կոչեցին առ լուսամփ զոմն դահիճ, որ հրամայէր նմա լուսամփ գնալ 'ի ներքս և սպանանել զմովրով. և 'ի ժամուն մինչ նա ընդ դահճին զայն խօսէր. լուաւ զայն բանն ոմն 'ի ծառայից մովրովլին. որ էր յառաջընթաց փայեկ նորին. զոր ասեն շաթր. և իբրև զթռչուն թռուցեալ 'ի ներքս 'ի տունն անդր ուր էր մովրովլ և ասաց նմա. ահաւասիկ գան առ ի սպանանել զքեզ. քանզի այսպէս հրամայեցաւ վան քո 'ի թագաւորէն. Իսկ մովրով իբրև լուաւ 'ի սաստիկ երկիւղէն այնպէս եթող նա զգինին ոչ թէ ոչ իցէ բնաւ արբեալ զգինի. և էր յայնմ ժամու գօտելոյծ և գլուխ բաց նստեալ. և 'ի տագնապէն այնպէս բոկոտամբ՝ և գօտելոյծ՝ և գլուխ բաց՝ 'ի վերոստեալ 'ի տեղւոյն ընթացաւ յա

խոռ.

խոռ երիվարաց թ̃գւորին. ուր արքունի երիվարքն կապեալք կային՝ քանզի մերձ էր. և զի ինքն Մովրով փորձիւ գիտէր թէ յերիվարացն, որոց է փութագնաց և սրընթաց՝ էարկ դանդանաւանդ 'ի բերան երիվարին. և 'ի ներքս 'ի յախոռն անդ հեծաւ իւր̃ երիվարին ջլով միայն առանց թամբի. վս̃ երկիւղի մահուան՝ զի մի ըմբռնեալ սպանցի. և այնպէս հեծեալ յերիվարն ել արտաքս 'ի յախոռէն, թող տուեալ զերեսանակ երիվարին և մտրակեաց զնա՝ զի առեալ զինքն փախիցէ: Իսկ օդապարիկ երիվարն այն. իբրև զերկնագնաց թռչուն առեալ զնա ընթացմամբ գնայր ոչ իբրև ի վերայ երկրի. այլ իբր ընդ երեսս օդոյ: Եւ թէպէտ բազումք 'ի զօրաց լուսաափին ելին յերիվար և ընթացեալ զհետ. ոչոք 'ի նոցանէ կարաց հասանել՝ բաց յերկուց ումանց: Իսկ Մովրով խօսեցաւ ընդ նոսա կալ՝ և զտեղի ունիլ պահ մի. իբրև կացին երկոքին. սկսաւ խօսիլ ընդ նոսա Մովրով բանս մաղթանաց. ո̃չ զի մի ըմբռնեսցեն զինքն՝ այլ թող տացեն նմա գնալ. և այնքան խօսեցաւ մինչև էարկ զգութ և զողորմ 'ի սիրտս նց̃՝ որք ոչ ըմբռնեցին՝ այլ թող ետուն: Եւ նա անցեալ գնաց 'ի քաղաքն Թիֆլիս. 'ի գիշերին էմուտ և 'ի նմին գիշերին ել. էառ ընդ իւր զայր ոմն թարգման. զի ինքն ոչ գիտէր զայլազգեաց լեզուն: գնաց 'ի գաւառն ախստեւու առ սուլթանն ղազախաց՝ որ նա տէր 'ի նմին գաւառի. և ծանոյց նմա զա̃մ անցուածս իւր՝ և խնդրեաց 'ի նոցունց առաքել զինքն առ շահաբասն: Եւ նորա լցան անպատումբ ուրախութբ̃՝ պատրաստեցին յինքեանց արս յոլովս. և առեալ զնա հասուցին առ շահն՝ որ էր յայնժամ 'ի ղըզլաղաջ անուանեալ տեղին՝ որ է յերկրին շամախու:

Եւ

Իբրև ղազախ զօրականքն՝ որ.ք տարան զմով րովլ՝ յանդիման կացուցին շահաբասին. և շահն խօսէր ընդ մովրովլին՝ և հարցանէր զուղին և զուստին և զվճէերն. և մովրովլ ամենայն հար ցուածոց առնէր զպատասխանի կարգաւորօք խօսիւք. և ասէր, եթէ ընդ հովանեաւ տէրու թե քո ընկալեալ ընդունիցիս զիս. ես բա զմաց գործոց և իրաց պիտոյանամ 'ի ծառայ ութի քո. և կացեալ ժամանակս ինչ անդէն շահն իւրով բանակաւն. և ապա չուեալ ան տի դէպ 'ի սպահան. տարաւ ընդ իւր և զմով րովլ. և օր աւուր յառաջ խաղալով հանդար տութբ գնացին, մինչև հասին 'ի սպահան. և յամի դիպօղ ժամու շահն խօսէր ընդ մովրո վլին և տեղեկանայր 'ի նմանէ զօրպիսութի աշ խարհին՝ և ազգին Ռրաց, զամրութին երկրին, և զխմաստութին թգաւորցն, և իշխանացն. զբազ մութին ազգին, և զքաջութին զօրացն. և այլ զորինչ կամէր. Իբրև կացին անդէն 'ի սպահան. եանց այն ամն՝ և մտին յամն երկրորդ. ասէ շահն առ մովրովլ. ահա անցին աւուր.ք յո լով.ք. արդ որով կերպիւ յօդեսցուք զպատ ճառս՝ որպէս զի այնու պատճառաւ զօրաժո ղով լեալ գնասցուք իվը ազգին Ռրաց.

Իսկ մովրովլ յամի կամէր զայն.քէնն առ նուլ 'ի լաւասափէն. որ մն վատանունութե և անարգանաց.քեռն էր. որոյ սակս և եկեալն իսկ էր՝ ըստ նմին ճանապարհի և կերպի խօսե ցաւ՝ և զտուն եա շահաբասին՝ և ասաց. Ի լաւ սասափին.քոյր մի թգւորազն նորահաս կոյս չքնա ղագեղ և գեղեցկատեսիլ. և ամի ումխութբ վայելուչ. որ վայելէ ոչումեք՝ բայց միայն տեառն իմում արքայի. արդ՝ խնդրեա զնա քեզ 'ի կնութի. և յետ գալոյ կուսին զմայրն

և ս

ես խնդրեսցես պատճառաւ կուսին. և յոր ժամ եկեսցէ մայրն՝ զմայրն ես արգելցես աստ պատճառաւ կուսին. և նոքօք դիւրինէ որպալ զլաւասափ 'ի կորուստ արդ՝ եթէ այս խորհուրդ այսմ՛ առցէ զկատարումն՝ բարւոք է. զի դիւրին է և հեշտ. և եթէ ոչ լռելիցեն. և ոչ տացեն զաղջիկն քեզ. յայնժամ չտալն նոցա եղիցի քեզ պատճառ գնալոյ խլերայ նոցա:

Իսկ անվթար կամարարն սատանայի՝ երկրորդ սաբիւռոսս այս շահաբաս՝ յետ ընդունելոյ զայսպիսի խրատս 'ի մովլովլէն. գրեալ առ լաւասափ և առ մայր նոցա՝ վն. քեռ լաւասափին զթուղթ սիրոյ և ողջունի. որ 'ի վերոյ ունէր բանս իբրև զկենաց. բայց 'ի ներքոյ լրիւ հրաւէր մահու: և գոյացութիւն բանի թղթոյն էր ըստ այսմ օրինակի:

Կամիմք ճշմարտութեամբ՝ զի հաստատուն և անդրդուելի լիցի թագաւորութիւն մեր և ձերդ. և սէր և միաբանութիւն երկուցս ազանց Պարսից և Արաց. և մեք զամ իշխանաց և աշխարհաց կողմանցդ այդոցիկ զվերակացութիւն յանձնեսցուք 'ի ձեզ. զի դուք հոգայցէք՝ և վարեսցէք զթագաւորական զիշխանութիւն հիւսիսական կողմանցդ՝ իսկ մեք զայլևս կողմանս հոգասցուք: Եւ սմին այսմիկ միաբանութեան նշան և պատճառ լիցի այս. զի զօրիորդ դուստրդ ձեր բերիցէք առ մեզ: նախ զի լիցի կատարումն գործոյս այսորիկ նշան և շաղկապ միութեան երկուց ազանցս: Երկրորդ՝ դշխոյ և թագուհի լիցի ամե ազգին արեաց: Արդ ըստ այսմ օրինակի գրեալ զթուղթն առաքեաց յաշխարհն Արաց 'ի քաղաքն տփխիս առ լաւասափ՝ և առ մայրն նոցա:

Իբրև ընթերցան զգիրն, ծանեան զի թէլադրութեամբ և թշնամութեամբ մովլովլին դաւաճա

նութիւ

նութիւն էր ամ̃ բան թղթոյն․ Ոչ զինքեանց գնալն և ոչ զաղջկան տալն կամեցան․ քանզի ասաց մայր Լուարսաբին․ 'ի ժամանակին՝ յորում էիր յերեւան քաղաքի 'ի պատերազմի․ կոչեցեր զմեզ առ քեզ բարեկամութ̃ե պատճառաւ․ և մեք անկեղծ սրտիւ իբրեւ 'ի ճշմարիտ բարեկամ և 'ի թգ̃ւր եկաք առ քեզ․ և դու զգործ թշնամւոյ գործեցեր ընդ մեզ․ զի դեղով զայրն իմ սպաներ՝ և զիս խայտառակեցեր՝ արդ մեք՝ որ զայսպիսի գործս տեսաք 'ի քէն․ զի՞արդ վստահացուք միւսանգամ գալ առ քեզ։ արդ եթէ ըստ ուգիւ զհաստատութի̃ և զհանգիստն մեր կամիս, որպ̃ ասացեր․ մի՛ նեղեր զմեզ՝ և մի՛ խռովեցուցեալ վրդովեր զխաղաղութի̃ն մեր․ այլ թող զմեզ կալ 'ի հանդարտութե̃․ զի այս փոքր իշխանութիս մեր բաւական է մեզ 'ի պէտս կարեաց մերոց․ ողջ լեր։ Իսկ պատասխանիս այս եկեալ առ Շահաբաս մինչ էր 'ի սպահան․ յորում ինքն և մովրովն խորհէին և խոկային զօրհանապազ զաւեր աշխարհին Վրաց՝ և զանկումն թգ̃ւրութեն նց̃։ Իսկ զպատգամն՝ զոր նախ գրեաց առ նոսա շահն․ երկիցս և երիցս կրկնեաց․ և առաքեաց առ Լուարսաբ և առ մայրն նորա․ զի թերեւս կամ զԼուարսաբ կամ զմայրն և կամ զքոյրն ածցէ յիւր ձեռն՝ և ոչ կարաց։

Յետ երից անգամ գնալոյ և գալոյ պատգամացն իբրեւ ոչ եկին․ այնուհետեւ զերեսս իւր դարձուցեալ շահն դէպ յաշխարհն Վրաց․ ժողովեալ զզօրս իւր չուարարեալ 'ի սպահանայ ը̃ իւր ունելով զխրատատուն չարեաց և աշխարհաւերն զմովրով․ ելեալ 'ի սպահանայ կամկար և հանդարտ գնացիւք հասին մինչեւ յերկիրն ղարաբաղու 'ի քաղաքն գանջայ․

ջայ. և անդէն զանզի առեալ կացին զամուն: Եւ ասէր շահն ընդ Մովրովին, որդ անցին իմ̃ր ժամանակք բազումք՝ երբ լինիցի զի տարցես զմեզ 'ի Վրաստան. պատասխանեալ ասէր Մովրովն տակաւին համբերեա՛ զի արդ ևս ոչ է ժամանակ, և յորժամ եկեսցէ ժամանակն, ես ինքնին յուշանեմ քեզ գնալ անդ: Եւ զայս վ̃ն այն ասէր Մովրովն թէ ոչ է ժամանակ՝ զի ամառն անցցէ և ձմեռն եկեալ իմ̃ր հասցէ՝ և ծառք մայրեացն տերևաթափք լիցին, զի դիւրին լիցի զօրացն Պարսից ձիով խաղալ մտանել յաշխարհն Վրաց: Մեւ ազգն Վրաց՝ որք փախուցեալք և ամրացեալք և գաղթեալք իցեն, յամուր վայրս և 'ի փապարս և 'ի դժուարին տեղիս աշխարհին, 'ի խստութենէ ցրտոյ և ձեան ձմերային ժամանակին, և 'ի նեղութենէ սովու և այլ կարեաց, ոչ կարասցեն տևել ցրտոյն և կալ յամրոցսն, այլ դարձցին 'ի բնակութիւս իւրեանց 'ի ձիախաղաց տեղիսն, որ̃ զի դիւրին լիցի զօրացն Պարսից յափշտակողաց և աւարառուաց խաղալ ձիօք և առնուլ յաւարի զնոսա: Որ և առ յապայն կատարումն գործոյն ըստ օրինակի նախադրյն խորհրդեան նո՛ կատարեցաւ:

Իսկ ազգն Վրաց երբև լուան զգալն շահին իմ̃ր իւրեանց, սկսան մտախոհ լինիլ վ̃ն ելից իրացն, և խորհեցան զմիաբանութի առնել ը̃ը̃ իւրեարս երկոքին Թ̃գ̃ւորքն. Լուարսափ՝ որ էր տէր Թիֆլիսու և Քառթլայ. և Թամրազ, որ էր տէր Կախէթու և գրեմայ, որ̃ զի իւրեանց օգնականութ̃բ̃ կարասցեն դիմակայել Պարսից: Եւ 'ի պատճառս այս առաքեցին Լուարսափ և իւրքն 'ի Կախէթ՝ և կոչեցին զԹամրազ 'ի Թիֆլիս վ̃ն միաբանութե̃: Իսկ Թամրազ՝ զի

զվնաս բաժանման և զերկպառութե՛ն, բազում
անգամ կրեալ էր. նա և զվիշտ և զթշնամութի
ազգին Պարսից՝ որ յոլով անգամ արարեալք
էին նմա,՝ գխուէր. հոգւով չափ յօժարէր՝ ի միա
բանութի. վ̃ որոյ յարուցեալ էին՝ ի Թիփլիս.
որոյ գալն եղև ուրախութի անպատմելի լուսա
ւորին և խորոցն։ որև արարին զուխտ և զդա
շինս լինել միաբան և միախորհուրդ. և զան
ձինս դնել ի՛ղ երերաց՝ և մեռանել վ̃ անուա
անն Ք͞ի։

Յաւուրսս յայսոսիկ, որ եկն Թամրազ՝ ի տըփ
խիս. լուեալ շահին. զորինչ լուանն և տեսին,
գնացեալ տարան զհամբաւն շահին։ և կամայօ
ժար կամարարն անկելոյ արուեստկին շահաբուս
տուեալ զնիւթ՝ ի նմանէ զնորագիւտ հնարս
կործանման և երկպառակութե առնէ թգ͞ւո
րութե՛ն քրիստոնէից։ քանզի մինչ էր՝ ի գան
ջայ քաղաք զետեղեալ խուռն բանակաւ.
սկսաւ աստիկս առաքել զթուղթս պատրա
նաց և խաբէութե. ո̃պ յառաջագոյն՝ ի սպահա
նայ. սոյնո̃պ և այժմ ասէ. որ՝ ի վերոյ ունէր
զողջոյն զսէր և զխաղաղութի. և՝ ի ներքոյ զպատ
րանս և զխաբէութի և զնենգութի. գրեալ զի
յերիցն զմինն արկցէ՝ ի ցանցս իւր. կամ զլաւա
սափ. կամ զմայրն, և կամ զքոյրն, և ոչ կարաց։

Եւ նորագիւտ հնարն այս էր. զի զթուղթն
պատգամաց՝ զոր յայտնի առաքէր. ընդ նմին
ծածկաբար միւս այլ զթուղթ ծածկեցելոց
խորհրդոց և նենգութեց գրէր առ լաւասափ
և առ Թամրազ ծածուկ՝ ի միմեանց։ և առ
լաւասափ գրէր թէ մի հաւատար դու Թամրա
զայ՝ և մի միաբանիր ընդ դմա՝ զի դա թշնամի
քո է՝ և կամի բարեկամութե դաւել և սպանա
նել զքեզ՝ և տիրել աշխարհին քում. ո̃պ ինձ

ծանուցեալ է զայս խորհուրդ. արդ մինչ դեռ չես սպաննեալ՝ փութացեալ դու սպան զնա՝ զի դու տիրեսցես երկրին քում և նր. նա և ես քեզ օգնական եմ. եթէ զօրք պիտոյանան քեզ՝ և թէ գանձ. զի ինձ գոյ յօժարութիւն՝ զի դու տիրեսցես երկրի նր: Այնոք և ըստ այսմ օրինակի գրէր և առ Թամրաղն ծածուկ 'ի Լուսատափէն. դու սպան զԼուսատափ՝ և դու տիրեսցես երկու աշխարհին: Երեքանգամ առաքեաց առ նոսա զայսոսիկ թուղթս զյայտնին և զգաղտնին խիմաւին. և Լուսատափ և մայրն իւր ոչ ինքեանք գնացին, եւ ոչ զաղջիկն առաքեցին:

Իսկ զծածուկ թուղթսն՝ զորս վն միմեանց ընկալեալ էին Թամրաղ և Լուսատափ պահեալ ունէին առ ինքեանս. և տակաւին մտաւարժ լինէին իմանալ զՃշմարիտն և զսուտն: և 'ի խնամոցն Ի. Տերկզբեան թղթերքն յայտնեցին զխորհուրդս զայս միմեանց. նաև ցուցին ըզ թուղթսն՝ զոր առաքեալ էր նմ շահն: և 'ի տեսանելն իմացան՝ և ծանեան ստուգիւ զթշնամութիւն շահին՝ որ առ ինքեանս: և փոխանակ թշնամութեան զսէր անխզելի և զեղբայրութիւն անքակտելի հաստատեցին ի միջի իւրեանց: Ա զի Լուսատափ դստերն իւր՝ զոր խնդէր շահն՝ ետ 'ի կնութիւն Թամրաղին. զի նախկին կինն Թամրաղին մեռեալ էր: և արարին անդէն հարսանիս Թամրաղին և քեռ Լուսատափին՝ որոյ անունն էր փարի: Յետ հարսանեացն՝ Թամրաղ և Լուսատափ գնացին 'ի Մցխիթայ՝ որ է աթոռ և պատրիարքարան իւրեանց. և կրկնակի երդուան, միաբան և միախորհուրդ լինել և պատերազմել ընդ Պարսից: Եւ 'ի լինիլն այսմ ամի: Թղթաբերքն Պարսից՝ որք

յայտ

յայտնի եկեալք էին. և լրտեսքն, որք 'ի ծածուկ-
գնացեալ պատմեցին շահին. և նա 'ի խոր խո-
ցեալ լինէր 'ի սիրտ և յոգի ։ զի ինքն քանիցս
անգամ խնդրեաց զաղջիկն, և այսքան զօրօք
վանիր եկն. ինքեան ոչ ետուն, այլ Թամրազին ։

Կոչեաց շահն զՄովրովն և ասէ ցնա՝ այսօրինակ
ամենեւք զօրօքս ածեալ բերեր զմեզ մինչև ցայս
վայր. և զաղջիկն, զորմէ ասէիր, ահա տեսեր զի
ոչ ետուն ինձ՝ այլ Թշնամւոյ իմոյ. որև ծառայից
իմոց հազիւ Թէ հաւասարի ։ Արդ ծաղր և
այպն կատականաց արարեր զիս ա͞մի աշխարհի.
և եթէ ոչ տարեալ մուծցես զիս յաշխարհն
Վրաց. և 'ի ձեռս իմ դարձուսցես զերկիր ն͞ց.
գիտեա դու յանձն քո՝ զի չես մնալոց կենդա-
նի. այլ յօդ յօդ բաժանելոց է մարմին քո ա͞մ ։
Եւ Մովրով ետ զպատասխանի՝ եթէ ոչ տարայց
զքեզ յերկիրն յայն՝ այդպէս առնես. և Թէ
տարայց զինչ առնես ։ Ասէ ցնա շահն, ա͞մ
խորհրդականն և նախկնաց նախարարաց իմոց
բուն իսկ գլուխ՝ և նախապատիւ՝ և գերագոյն
քան զա͞մն դու ես լինելոց ։ Եւ խրատովն
Մովրովի համբերեցին մինչև 'ի դեկտեմբերի
ամիսն, մինչև յաւագ տօնն. որ եկեալ է հաս
ձմեռնային ժամանակն՝ և ցուրտն սաստկա-
ցաւ. և եկեալ ձիւնն կալաւ զգլուխս լերանցն՝
և զճանապարհս փախստեանն. և յամրոց մտեալ
արքն ներզեալք 'ի ցրտոյ իջին 'ի շէնս և 'ի գեղ-
ջս. և տերևք ծառոցն Թափեցան, որ ա͞մ
տեղի աչաց ակներև տեսանելի եղև ։ Ապա
ասաց Մովրով ցշահն. արդ ահա այժմ գնա-
ցուք յաշխարհն Վրաց՝ զի այժմ է ժաման-
նակն. և չուեալ 'ի գանձակ քաղաքէ եկին 'ի
սահմանս կախեԹու՝ որ է երկիր Թամրազին ։
Եւ ճանապարհ երկրին կախեԹու ի մէջ ձո

րոյ մտանէր՝ ընդ որ անցանէին՝ և ապա մտանէին յերկիրն. և էր այն նեղ և նուրբ և դժուարին վայր երկու. իսկ կողմունք ձորին բարձր և քարավէժ լերինք. և մացառուտ և թաւամայրի. ը̅ որ մարդ և ձի ոչ կարէին գնալ: Ո որ թամրազ և լաւասափ եկին բազմօք զօրօք կալան զկիրճս ձորոյն՝ և կանգնեցին զպարիսպ ամուր քարիւ և փայտիւ. և 'ի ներքսին կողմանէ շինեցին զտեղի պատերազմի ուստի 'ի ներքս կալով ինքեանք պատերազմեսցին ընդ թշնամեացն՝ որք արտաքոյ:

Իսկ բանակն Պարսից յարձակ վայրի հանդէպ ձորոյն բանակեալ էր: Իբրև տեսին թէ Վրացիքն կալան զանցս ճանապարհին. անճար եղեալ 'ի տարակուսի մնացին: և շահն դարձեալ կոչեաց զմովրով և սպառնացաւ նմա զմահ. նաև մովրովն ինքն ևս մնաց 'ի տարակուսի: Իսկ յետ երկուց աւուրց ասէ մովրովն ցշահն. խորհեալ եմ գտի զկողմն յուրեք ճանապարհ. բայց երկուց աւուրց ճանապարհ հեռի է աստի. այլև պիտոյէ կացնաւոր և բահաւոր և մրճաւոր. որ զմայրին կտորեն և զդժուարին տեղիսն հարթեալ դիւրեն: Իբրև լուաւ զբանս զայս շահն մեծաւ ուրախութ̅ե̅ ցնծացաւ՝ և հրամայեաց զօրաց իւրոց առնուլ զբ̅զ̅մ կացին և զբահ և զայլ ինչ գործիս. և գնալ 'ի տեղին և բանալ զճանապարհ. և նոքա գնացեալ կոտորեցին զմայրին՝ և դիւրեցին զդժուարին տեղիսն՝ և բացին զճանապարհ. և եկեալ ծանուցին շահին թէ եղև՝ զոր հրամայեցեր:

Իսկ շահն հրամայեաց բանակին իւրոյ. զօր օրինակ մինչ ցայնժամ կազմեալ հարեալ կառուցեալ էին վրանքն՝ և ուղտ և բեռնակիր անասունքն. և օրտու բազարչիք՝ և այլ ամ̅ ինչ

ամէ

ոպ̄ յառաջն կային սոյնպ̄ կացցեն 'ի տեղիս իւրեանց. ոպ̄ զի համարեցին Վրացիքն թէ տակաւին անդ են զօրքն Պարսից: Բայց միայն մարտիկ զօրքն Պարսից իւրեանց պատերազմականօք զինուքն և երիվարօքն զանխուլ և թաքուն ելեալ գնացեն. ընդ բացեալ ճանապարհն մտցեն յերկիրն կախեթու: Յայն ժամ ելին պատերազմականք զօրքն Պարսից և գնացեալ ընդ նոր բացեալ ճանապարհն մտին յերկիրն Թամրազին՝ և հասին 'ի շէնս և 'ի գեւղս: և սկսան կոտորել զազգն վրաց անխնայ: Իսկ Թամրազ և լաւասափ որք նստէին զօրօքն Վրաց 'ի բերան ձորոյն ոչ գիտէին զարար մունսն Պարսից. մինչ յանկարծակի տեսին զայր մի գլուխն և մարմինն վիրաւորեալ և հաւակն ամ̄ արեամբ թաթաւեալ. որ փախուցեալ 'ի սպանմանէն Պարսից և եկեալ գուժկան և համբաւաբեր լի̄ գալոյն Պարսից և մտանելոյն յերկիրն Վրաց: Իբր 'ի լսելն զայս Թամրազին և լաւասափին՝ և որոց ընդ նմ̄. ափշեալ յիմարեցան՝ և ոչ այլինչ կարացին առնել. ոչ ստացուածք կամ ապրանք բառնալ՝ և բնաւ ոչինչ: այլ իւրաքանչիւրոք զընտանիս և զկարևոր սիրելիս իւր առեալ ընդ ինքեանս հազիւ թէ 'ի մեկնակի ձիոջ հեծեալ հապճեպ տագնապաւ աճապարեալք իբացփախչէին զի մի անկցին 'ի ձեռս Պարսից: Ընդ յայսմանէ պատճառէ Թամրազն և լաւասափին աստի փախուցեալք անկանէին 'ի Տիֆլիս. և անտի 'ի գօրի. և անդ ևս ոչ կարացին կալ. այլ ընդ ճանապարհն կողբայու տանցին զլեառն կովկաս՝ որ է եալբուզ սարն. և գնացին 'ի պաշխացուխի աշխարհն. վասն զի մայրն լաւասափին դուստր էր պաշխացուխի թգ̄ւորին. վն̄ այսո

րիկ Թամրազն և կինն իւր՝ և Լուասափ և մայրն իւր. և այլ ընտանիք սոցա փախուցեալք 'ի պաշխաչուխ զերծան 'ի ձեռաց Պարսից։

Եւ զօրքն Պարսից՝ որ 'ի միւս կողմանէ եկեալ էին յերկիրն Թամրազին. եկին մինչև 'ի բերան ձորոյն, զոր կապեալ էին վրացիքն. քակեցին զկապն՝ և բացին զլայն և ընդարձակ ճանապարհ. ընդ որ եկին բանակն Պարսից՝ մտին յերկիրն Թամրազին. և անդէն բանակեցան և կացին մինչև յաւուրս յիսուն՝ և ոչ ելին յերկրէն։ Եւ յայսքան աւուրս, զոր կացին անդէն թէ զինչ գործեցին. բերան ոչ բաւէ խօսիլ և ոչ լեզու ճառել. դու մտօքդ խորհեալ խելամուտ լեր. թէ զորքան զանպարտ զանձինս քրիստոնէից սրախողխող արարեալ վիրաւորեցին. կամ թէ գլխովին եւս սպանին. և զանմեղսն գերեցին և խայտառակեցին. և զինչս և զստացուածս յափշտակեցին. և զշինուածս հրդեհեալ այրեցին և քանդեցին. և զեկեղեցիսն քակեցին. զսեղանն նոր՝ և զինչ որ բոյ խաչին կործանեցին։ Եւ զգերեալսն պահէին ի մէջ բանակին առ ինքեանս՝ և այսպէս մշտօք տառապեցուցանէին՝ ցրտով և մերկութ՝ քաղցիւ և ծարաւով՝ և այլ բազում կերպիւ։

Եւ յորժամ եմուտ շահաբաս յերկիրն Կախեթու և ետես թէ փախուցեալք են Թամրազն և Լուասափն. և մնաց երկիրն և ժողովուրդքն 'ի ձեռս իւր։ Յայնժամ հանճարեղն 'ի խորհուրդս չարեաց, և այլևս աշխարհաւեր հնարս ներգործեաց, քանզի հրամանեաց յամեն գաւառս և 'ի գիւղս Կախեթու մունետիկք շրջեացին՝ և քարոզեացեն բարձր ձայնիւ 'ի բազում աւուրս՝ և ասացեն թէ։ Հրամանէ 'ի հզօր և 'ի խաղաղասէր և

յաղ

յաշխարհաչէն թագաւորէն շահաւորայ, զի յոմն բնակիչք աշխարհիս կախեթու, եթէ իշխանք եթէ հեծեալք, եթէ արուեստաւորք, եթէ ռամիկ ժողովուրդք, և ամենք, որ ելեալ ամրացեալ է 'ի լերինս, և 'ի մայրիս, 'ի բերդս, և յամուր ամուր տեղիս. դարձցին, և եկեսցեն 'ի տեղիս և 'ի բնակութիւս իւրեանց՝ և կացցեն խաղաղութ՛. զերկիւղ և զկասկածանս ինչ 'ի զօրացն Պարսից՝ մի կրեսցեն, քանզի հրամայեալ է մեր թագաւորն. մի զոք նեղել՝ և մի զոք խռովել 'ի ժողովրդենէ աշխարհիս՝ որք գան 'ի հնազանդութիւն շահին՝ և լինին շահսեւան, ոչ լինինց մնաս ամենևին այլ կայ 'ի խաղաղութե։ Իսկ որք յամառեալք դիմադարձ լինին հրամանաց թագաւորին, առաքելոց է թագաւորն իւր նոցա զօրս բազումս, որք զամրոցն նոցա առեալ աւերեսցեն, և զինքեանս սպանցեն, և զընտանիս գերեսցեն, և զինչսն յափշտակեսցեն։ Արդ եկէք 'ի յամրոցաց՝ և եկէք 'ի հնազանդութի, և լերուք շահսեւան, և կացէք 'ի խաղաղութե։ Եւ յիշխանաց և 'ի նշանաւոր արանց ոմանք յառաջեալ վաղագոյն գոյցէ, շնորհելոց է նմա թագաւորն զփառս և զպատիւս՝ և զպարգևս բազումս, և զպետութի իշխանական։

Իսկ բնակիչք երկրին կախեթու իբրև լուան զբանս քաղցրութե մունետիկացն, Ամենք պատրեալք հաւատացին. եկին և եղեն շահսեւան։ Ամենք յերկիւղէ սպանութե և գերութե եկին և եղեն շահսեւան։ Ամենք մեծ բազմօրեայ կալոյն անդէն ի մէջ երկրին Պարսից, անճար մնացին, եկին և եղեն շահսեւան։ Ամենք տեսին զի զայս առնուն ամրոց առին, և զայն առնուն ամրոց առին, և արարին զսպանութի և զգերութի ընդ բնակողաց ամրոցին ահա

բեկ և երկիւղալիցք եղեն, մի գուցէ ինքեանց ևս այնպէս պատահիցի, վասն որոյ ելեալք յամրոցաց եկին և եղեն շահիսէւանն ։

Այլ և հրամայեաց շահն վասն շահիսէւանն եղելոցն զի բնակեցուսցեն զնոսա յիւրաքանչիւր շէնս և 'ի տեղիս, և յուսով և քաջալերութեամբ մեծաց բարեաց խօսեցին ընդ նոսա ։ և զանուանս նոցա արանց և կանանց, ուստերաց և դստերաց, և ամենից ընտանեաց գրեցին 'ի քարտէսի, և առ ինքեանս պահեցին Պարսիկք ։ Այլ և կացուցին ի վերայ նոցա պահապանս 'ի զօրացն Պարսից յամենայն տեղիս՝ զի մի գուցէ ոք 'ի նոցանէ փախիցի յայլուրեք ։ բայց խաբէին զնոսա և ասէին, վասն այնորիկ կարգեմք ձեզ զպահապանս՝ զի մի ոք 'ի Պարսից արանց զձեզ նեղիցէ, կամ զինչ ձեր յափշտակիցէ ։ և ովք եկին 'ի շահիսէւանութիւն, այսպէս արարին որպէս պատմեցաք ։

Եւ որք ոչ եկին, այլ մնացին յամուրս իւրեանց, եկին Պարսիկքն ի վերայ ամրոցաց նոցա, և զբազում աւուրս պէսպէս հնարիւք մարտնչեալ ընդ ամրոցացն մինչև յաղթեալ առնուին, և զսուր ի վերայ եդեալ անխնայ կոտորէին, իբրև պաշտօն բարի մատուցանել Աստուծոյ համարէին, ըստ վկայութեան Տեառն ։ ապա զինչս և զստացուածս կողոպտեալ յաւարի առնուին, և զմնացեալ կանայս և զմանկունս նոցա գերեալ ածէին 'ի բանակն իւրեանց ։ Եւ ոչ ասացի յաւուրս յիսուն կացեալ անդէն. ոչ մնաց ամրոց՝ զոր ոչ առին, և կամ զտեղի, զոր ոչ աւերեցին, և միահաղոյն յաւեր և յապականութիւն դարձուցին զամենալի և զլիութի և զբազմամարդ աշխարհն Կախեթու և Գրիմու ։

Եւ եկեղեցեաց զանօթսն և զսրբութիւնս

զխաչ՝ և զսկիհ՝ և զաւետարան՝ և զբուրվառ՝ և զշուրջառ՝ և զայլ անօթս և զարբունս. որք էին մեծածախք և ծանրագինք, և զանազանիւք յօրինուածովք ականմբք և մարգարտովք յօրինեալք. Հրամայեաց շահն վ̅ն նշ̅ղի մի խորտակեսցեն. այլ տանել 'ի քաղաքն յասպահան և դնել 'ի գանձարանն արքունի. և կայ անդէն 'ի գանձարանին արքունականի մինչև ցայսօր. որք բազումք 'ի մերոց ազգացս վկայեցին գոլով ականատեսք այնց սրբութ̅եց։ Նաև զանկար պատմուճանն Ք̅ի ընդ այլոց սրբութ̅եց անտի տարեալք են. և կայ 'ի նոյն գանձարանին յասպահան քաղաքի. որ դեռ ևս զլոյս վառեն առաջի ն̅ր. և այսմ խօսիցս ասօղքն. ինքեանք իւր̅ց աչօքն տեսեալք էին. և էին արք հաւատարիմք։

Յետ բազմաց աւերութ̅եց աշխարհին այնորիկ չուեալ անտի և եկեալ 'ի սհմնս երկուց աշխարհացն կախեթու և քարթլայ՝ և անդ բանակեցաւ շահն. և զհրաման արար իւրոց զօրացն մի նեղել՝ և մի խռովել զոք 'ի բնակչաց աշխարհին քարթլայ։ և զօրացն Պարսից եթէ պիտոյացի իր ինչ՝ որ կարիք է մարդկան և անասնոց. գնով գնեսցեն 'ի գաւառականացն. և ըստ կամաց վաճառողին տացեն զգինն։ Նաև հրամայեաց շահն՝ զի ելցեն մունետիկք և շրջեսցին յա̅մն գաւառն քարթլայ՝ և աղաղակելով քարոզեսցեն. թէ։

Հրաման է 'ի մեծ և յաշխարհաշէն թ̅գ̅րէն շահաբասայ. զի աշխարհս քարթլայ ա̅միք գաւառականօք իւրովք՝ իշխանօք և ռամկօք իւրովք՝ 'ի խաղաղութ̅ե և յանդորրութ̅ե կացցեն. և ա̅մք որք եղեալք են 'ի բերդ և յամուր տեղիս վ̅ն երկիւղի զօրացն Պարսից. այսու

հեռաւ մի երկիցեն, և մի կասկածանս ինչ կրիցեն.
այլ նջջեն 'ի բնակութիւն իւրեանց՝ և կացցեն
'ի գործս իւրեանց և 'ի շինարարութիւն. և եղի
ցի սէր և խաղաղութի. և երթևեկութի ի մէջ
ազգին Պարսից և Ուրաց. քանզի զաշխարհս
քաւթլայ իմ գնեմ, և ոչ աւերեմ զն իմ և
զն լաւատակաց թղթերին. զն զի զնա ինձ որ
դի, և եղբայր և բարեկամ գնեմ. և յորժամ
գայցէ նա զնորին աշխարհն յնքն յանձնելոց
եմ՝ և ես գնամ յաշխարհն իմ: Արդ՝ եթէ կա
մեսցի լաւատակի թղթոյն՝ և գայցէ այստ առնեմ.
և եթէ ոչ գայցէ աւհաստակ մովրովն՝ որ է յաշ
խարհէս քաւթլայ և յազգէն Ուրաց՝ որ և
ահա ընդ մեզ է. զաշխարհս քաւթլայ տամ
մովրովին՝ և ես գնամ յաշխարհն իմ:

Այլ և պատմէ իւրեաց շահն մովրովին զի և նա
յիւրոց ծառայիցն առաքեսցէ յամենն տեղիս
աշխարհին՝ զի ըստ ամին օրինակի խօսեսցին առ
ամենն բնակիչս գաւառացն առ ի հաւատացու
ցանել զնա: Նաև մնոտի և պատրողականաւ
յուսով զմովրովն ևս խաբեաց ասելով. լաւ
տակին եթէ գայցէ և եթէ ոչ. քեզ տամ զիշխա
նութիւն քաւթլայ. որև ծառայք մովրովին
այնպ խօսէին ընդ գաւառականացն: Նաև այս
պիսեաւ օրինակաւ սուտ.ք և պատիր բան
իւք խաբեցին զամենն գաւառականսն՝ որոչ պա
տերազմաւ և ոչ խռովութբ. այլ սիրով և խա
ղաղութբ առին զամենն գաւառականսն 'ի հաւ
անութի՝ և նջուցին յամրոցացն. և բնակեցու
ցին 'ի գիւղորայսն: ուստի լցեալ լինէր ամ
պիոյք բանակին Պարսից մարդկան և անաս
նոց: և յոչինչ կողմանէ ունէին վտանգ ինչ
զօրքն Պարսից: այլ յամէ կողմանէ կային 'ի
խաղաղութե և յանդորրութե:

Բայց

Բայց բնակիչք աշխարհին քաւթլայ եր կիւղիւ կասկածանս կրէին՝ եթէ գուցէ ոչ գայցէ լաւաստափին. և 'ի պատճառէ այնմ քինոյ. Հրամայեաց շահն իւրոց զօրաց աւարել և գերել զաշխարհ տէրութեն լաւաստափու. և զայս բան զօրքն Պարսից ևս առէին. և խօսէին ընդ գաւառականացն. այլև առէին՝ եկայք դուք ևս գրեցարուք շահսեւան՝ զի մի մնանիցէք 'ի գերութեն ոպ̃ ժողովուրդն կախեթու՝ զի որք գրեցան շահսեւան ոչ մնացին 'ի գերութեն. Իսկ յայնմանէ պատճառէ բազումք աշխարհէն քաւթլայ եկին և գրեցան շահսեւան. և որք գային 'ի շահսեւանութին՝ իւրեանց և ամենից ընտանեաց զանուանս գրէին 'ի քարտեսի և առ ինքեանս պահէին Պարսիկք. և զգրեալ շահսեւանսն բնակեցուցանէին յիւրաքանչիւր տեղիս յուսով մեծագունից բարեաց և խաղաղութեն.

Իսկ մինչ նստեալ կայր շահն ի մէջ սահմանի երկուց աշխարհացն. այր մի ևս զնոր հնարս. քանզի զմիոյ յիւրոց խորհրդականացն՝ որ էր մեծագոյն իշխան և փառաւոր նախարար՝ որոյ անունն էր Սարուխօջայ՝ կարգեաց զնա հրեշտակ խաղաղութեն. և սիրոյ նամակաառաքեաց 'ի պաշխաչուխ առ լաւաստափ. և գիր պատգամացն էր ըստ այսմ օրինակի.

Երեւաց յարքայէ շահանշահէ բազմաւ սիրով ողջոյն հասցէ արքայիդ Սրոց լաւաստափու. բազում անգամ գրեցաք առ քեզ սիրով և ցուցաք զմեր սրտի բարեկամութին, որ առ քեզ. բայց դու ոչ անսացեր և հաւատացեր բանից մերոց. արդ՝ ահա 'ի գործոյն 'ի միտ առ և հաւատայ ոմ̃ և տեսանես՝ զի զերկիրն թամրազին աւարեցի. իսկ դքոյն ահաւասիկ շէն և

ամ

ամբողջ պահեալ եմ վասն քո․ և սպասեմ գալստեանդ քոյ։ արդ մի դանդաղիր'ի գալ․ և մի անմիտ և անհանճար խրատուց լսեր․ և զքեզ'ի թգ̃րութենդ զրկեր․ քանզի ոչ ունիմ զոխս և զնենգութի յիմում սրտի 'ի քոյդ կողմանէ․ որպ̃ և դու ոչինչ ընաւ վնաս գործեալ ես առ իս։ Լալ զգալն քո յաղագս այնորիկ խնդրեմ, զի որպ̃ նախնեաքն մերովք էր միաբանութի ի մէջ երկուց ազանցս․ սոյնպէս կամիմ զի և 'ի մեր ժամանակս լիցի․ և մեք զամենայն կողմնս հիւսիսայնն՝ որ յայս կոյս է գետոյն երասխայ յանձնեսցուք 'ի քեզ․ զի դու լիցիս վերակացու և հրամանատար ի՞վ ամենից իշխանաց կողմանցս այսոցիկ․ որպ̃ զի քո զայս կողմնս հոգալով․ և մեք անհոգ եղեալ զմիւս կողմանն հոգասցուք և թշնամեաց զդեմս կալցուք։ ողջ լեր։ Զայս թուղթս գրեալ ետ ցՍարու խօջայն․ և այլ բազում բանս և հնարս խարդախուն՝ զոր ամբարեալ ունէր յիւրում սրտին բանիւ պատուիրեաց նմա․ թէ որով հնարիւք և իցէ հաւանեցուսցէ զլաւասափ գալ առ շահն։ Իսկ սարուխօջէն գնացեալ'ի պաշխաչուխ յանդիմանեղեալ լաւասափու մատոյց զողջոյնն և զթուղթն․ իբրև ընթերցան զթուղթն՝ գիտացին զի ամէն բանքն պատրանք են․ ոչ հաւանեցան թէ լաւասափն՝ թէ մայրն՝ թէ քոյրն՝ և թէ թամրազն։ թէ պէտ Սարու խօջայն բազմաւ և զանազանիւ կերպիւ յորդորէր զլաւասափ․ սակայն ոչ հաւատացին։

Զկնի աւուրց ինչ՝ զպատասխանի արարին բանից շահին՝ ը̃ այսմ օրինակի։ Եթէ ճշմարիտ է բանքն քո՝ և ստուգիւ կամիս, որ 'ի մեր մէջն բարեկամութի լինի․ ահաւասիկ նշան սիրոյ քո և խաղաղութե այն լիցի․ զի դու շէն և

ամբողջ

ամէողջ Թողցես զաշխարհն մեր. և ժողո
վուրդքն մեր յիւրաքանչիւր տեղիս կացցեն.
և դու փոխանակ քո 'ի քոյոց իշխանաց զմեզ
Թողցես այդր՝ ո̃ զի զա̃մ սէր և զմիաբանութի
և զդաշնադրութի, զոր դու կամիս, միջնորդու
Թէ̃ նորին հաստատեսցուք ընդ քեզ. և դու
ելեալ յաշխարհէն մերմէ գնասցես. և մեք
եկեալ տիրեսցուք աշխարհին մերոյ՝ և կացցուք
ընդ քեզ 'ի սէր և 'ի միաբանութե։ ողջ լեր։
Յետ բազմաց հնարաւորաց խօսից՝ սարուխօ
ջայն իբրև ետես Թէ ոչ հաւատացին. առեալ
զԹուղԹն լաւասափու՝ և եկեալ առ շահնշա
նոյցնմա զա̃մն բանս և զհաստատուն միտս նց։

Յետ լսելոյ շահաբասին զայս բանս պատա
խանւոյ. չուեաց ա̃մբ բանակաւն և եկեալ 'ի
վերոյ քան զգօրի իվլի ճանապարհին, որ գնայ
'ի պաշխաչուխ. և անդ իվլերայ ճանապարհին
բանակեցաւ։ Պատճառ յայսմ տեղւոջ բա
նակելոյն այս էր՝ զի Թէոք յազգէն Ս րացիշ
խան կամ ռամիկ՝ Թէ կամիցի փախչել և գնալ
'ի պաշխաչուխ մի կարասցէ գնալ։

Նա աստի ես առաքեաց շահն զսարուխօ
ջայն կրկնակի առ լաւասափ բանիւ և գրով
զի Թերևս պատրեալ գայցէ՝ և ոչ եկն։

Յաւել երրորդանգամ առաքել զնոյն սա
րուջախայն առ լաւասափ՝ և ոչ եկն։

Նա 'ի բազում գալոյն և գնալոյն ճանճրա
ցան լաւասափ և իւրքն. յայսմ 'ի վերջին
նուագիս գալոյն՝ արարին զգործ անարգանաց
ը̃ սարուխօջային՝ զի միւս առաքեսցէ առ նոսա
շահն հրեշտակ։ Նա անարգանաց զգործն, զոր
արարին այս էր՝ զի զա̃մն ինչս նո̃ յափշտակե
ցին, և բնաւին մերկացուցին 'ի զարդուց և 'ի զի
նուց, 'ի հանդերձից և յերիվարաց, մինչ զի

և զՋորին ես զոր ինքն հեծեալէր առին· և
զինքն հեռեւակ արձակեցին 'ի գնալ· և պա
տուհիրեցին մեծաւ սպառնալեօք մինչ յաւե
լուլ առ 'ի գալ՝ և այսպիսեաւ անարգութ̃
սարու խօջայն եկն առ շահն ։ Իսկ շահն երկայ
նա մնեալ համբերեր 'ի տեղւոջն· և մնալար
ժեալ խոկայր 'ի խորհուրդս չարեաց՝ և նենն
գութե լաւասափին, և թամրաղին ։

Մինչ շահն այսպէս վարանեալ կայր՝ և ոչ
գտանէր զելս իրացն ։ Ի սոյն աւուրս այր ոմն
'ի քաղաքէն տփխիսոյ գործօնեայ չարեաց՝
և որդի անիծից՝ շարժեալ 'ի դիւաց ըստ աղդե
ցութե̃ն սատանայի, ելեալ 'ի տփխիսոյ և եկն
'ի բանակն արքունի՝ և ծանոյց շահին թէ խըն
դիր է տէրութե̃ քո բերել զլաւասափ· արդ
եթէ ատուգիւ կամիս և մնաս ոչ առնես· ես
գնացեալ ածից զնա առ քեզ։ և խղճ այսմ բանի
առնն մեծ զարմացումն կալաւ զշահն· էհարց
ցայրն թէ դու զիարդ կարես բերել զնա· և
այրն ասաց մեք աղգականք եմք լաւասափին
բանզի նա ինձ սան է 'ի կնքաւորութե̃ կողմա
նէ· և իմէջ մեր զմեծ հաւատարմութի ունիմք
առ միմեանս· վասորոյ գխտեմ զի նա հաւատայ
բանից իմոց ։ Իսկ շահն իմերոյ այսմ բանի ան
պատում ցնծութե̃ լցեալ եղև· զի գործ զոր
ինքն բաղձաւ աշխատութե̃ ջանայր՝ և ոչ
լինէր· և որում 'ի յոլովից ժամանակաց ցան
կայր և ոչ հասանէր· արդ իւ յոյժ դիւրութ̃
լինի· վասորոյ խոստացաւ առնն այնմիկ զբա
զում գանձս և զբազում պարգևս՝ և բազում ես
փառաց հասուցանել եթէ բերցէ զլաւասափն ։

Իսկ չարաբաստ այրն այն վատաշունչ՝ որ
եղև պատճառ կործանման թշուառութե̃ն քրիս
տոնէից· գնացեալ 'ի պաշխաչուխ առ լաւասափ

և առ

և առ Թամրայ. և յաւուրս բազում խօսեցաւ ընդ Լաւասափին հաւանականաւ և մեղկացոյց չար բանիւ. մինչ որ թուլացոյց 'ի պնդութենէ զմիտսն իւր: Բայց Թամրայ՝ և մայր և քոյր Լաւասափին՝ և ամ̃քն հաւատարիմքն իւր ոչ հաւանեին բանից առնն այլ քամահեին. քանզի գիտեին ստուգիւ թե կախարդասար հնարքն է չհին: Բայց այրն սատանայական ոգւ լցեալ եայլ հակեալ դարձոյց զմիտս Լաւասափին գնալ առ շահն: Իսկ մայրն Լաւասափին, և քոյրն, և Թամրայն. և իշխանքն, և ամ̃քն բարեկամքն. լային արտասուօք և ողբային, և ասեին. մի մատներ զքեզ 'ի ձեռս թշնամւոյ քո՝ զի նա քո թշնամի է և ոչ բարեկամ. և 'ի կորուսանել զքեզ ջանայ: և Թամրայն ասեր մի հաւատար անհաւատից այդմիկ և խորամանկ գազանիդ. զի դա զկորուստն մեր ջանայ: Իսկ միտք Լաւասափին. բանից չարեաց արբանեակ առնն աւաւել հաւաներ. քան թե բանից բարեկամաց իւրոց: Եւ զայս առներ ամենեցուն պատասխանի՝ թե ահաւասիկ շահն եկեալ և նստեալ կայ իմեջ մերոյ երկրին. և խնդրե զիս տեսնել զխաղաղութի. և թե ոչ գնացից զամ̃ երկիրն աւերեալ ապականե. և զեկեղեցիսն քանդե, և զքրիստոնեայսն սպանանե, և գերե. և այս ամ̃ լինի 'ի պատճառս իմ: քան թե կեցից 'ի ժամանակս ինչ խղճմտանօք՝ և այնքան անձանց պարտական լաւ է ինձ գնալ առ շահն և զաշխարհն ամ̃ ազատել. զի մի լիցի իմով պատճառաւ աւերումն աշխարհի. յուսալով յԱ̃Ծ գնամ առ նա ուղղութե̃. և անդէն զինչ և պատահեսցի ինձ եթե մահ և եթե կեանք, եղիցի կամք Ա̃Ծ օրհնեալ:

Երդ այսպիսի բանդագուշեալ խելօք ոչ

լո՛ւա

լոճաւ Լուտասափ բարեկամաց իւրոց. այլ հաւատաց բանից և երդման շահին. Եկեալ 'ի պաշխաչուխէն գալ առ շահն. և յորժամ բերին զաւետիս գալստեան նր առ շահն՝ ոչ գիտէր թէ որով օրինակաւ ցնծասցէ սիրտ նր:

Իսկ յորժամ եկեալ Լուտասափ մերձ եղև բանակին Պարսից շահն ինքն ելեալ ընդ առաջ նր մմիւք իշխանօք և զօրօք. և 'ի տեսանելն միմեանց սիրով և խնդութբ և բզմ շուք գնելով զողջոյն տային իրերաց: Իսկ որ շահն էր ցնծայր 'ի սիրտ և յոգի իւր. զի մեծ եղև նմա օրս այսքան զմնն աւուրս կենաց իւրոց. զի կատարումն եղև չար կամացն՝ զոր 'ի բազմաց ժամանակաց բաղձայր: Իսկ որք սովորութ ի է խորամանկ և օձաբարոյ ազգին Պարսից. և մանաւանդ այս շահիս բազմահնար վիշապիս զառաջինն բազմաւ սիրով և մեծարանօք ընկալաւ զնա. և հանապազ զուտ և զնոտի պատրողականս բանիւք իւր հաճոյից կամաց նր խօսէր. մինչև համբաւն այնպէս տարածեցաւ յմմ աշխարհն Վրաց՝ թէ շահն որ խնդրէր զԼուտասափ. ոչ վն այլինչ պատճառի էր. քան թէ վն սիրոյ և միաբանութե:

Ապա չուեալ անտի իւրով բանակաւն շահն գնաց 'ի տփխիս. տարաւ ընդ իւր և զԼուտասափ՝ և պահէր զնա իւր հաւասար մեծաւ փառօք՝ և հանապազ խօսէր ըստ ախորժակաց միտացն որա՝ զբանս հաճոյականս նմա. և զինքն հաւատարիմ ցուցանէր նմա:

Այս Լուտասափ՝ 'ի ժամանակին յորում նոր նստեալ էր թգւր. և զկնի ամաց ինչ, և չորս և հինգ ամաւ յառաջ քան զշահի գալն: Իսկ եղև երբեմն 'ի կարգս զրուցաց պատմութե զպապէն Լուտասափիս զսիմոն խանէն. զոր ըմ

բռնեցին ասմանցիք տարան 'ի ստամբօլ սպա
նին և անդէն Թաղեցին, որոյ վ՟ճ եռաց ա-
խենն լաւսասափին՝ և ըղձացաւ առ 'ի բերել
զնշխարս պապուն իւրոյ սիմոն խանին 'ի Հայրե
նի գերեզմանատունս իւրեանց՝ Թաղել ընդ-
այլոց ևս նախնեացն և ընտանեաց իւրեանց ։
Այլ իբրև տեղեկացեալ եգիտ զայս ոմանս՝
որք գիտէին զտեղին՝ յորում Թաղեալ կայր
նշխարք սիմոն խանին 'ի քաղաքին կոստանդ-
նուպօլսի ․ և իսկոյն զգիտօղ զայրսն զայնոսիկ
առաքեաց առ 'ի բերել զնշխարս սիմոն խանին ։
և նոքա գնացեալ 'ի կոստանդնուպօլիս Հանին
զնշխարսն և բերեալ Հասուցին 'ի Թիֆլիս ։
և 'ի գալ արանցն՝ որք բերին զնշխարս սիմոն
խանին՝ պատահեցաւ յայսմ ժամանակիս զի
շահն 'ի Թիֆլիս էր, որև գիտաց շահն Թէ
զնշխարս սիմոն խանին բերին ։ Այլ լցեալն խոր
հրդով և խարդախութ՟ սատանայի, որ այն
քան Թշնամիէ քրիստոնէից մինչ զի և արեան
նց ծարաւի՝ ոգ սպանմամբ և գերութ՟ կեն
դանեացն ոչ շատացաւ, արդ այժմ ընդ ոսկե
րաց մեռեալոցն ևս արար զԹշնամութ՟ի, վ՟զի
սաստիկ Հրամանաւ Հրամայեաց իսկոյն բերել
առաջի իւր ։ Այլ իբրև կատարեցաւ Հրամանն,
ասաց զայս ես առաւել պատուեմ և փառաւո
րեմ քան զձեզ, զի դուք ոչ գիտէք զարժա
նաւոր պատիւ Թ՟ուրց, և կամիմ առաքել զսա
յիմմուզէն՝ զի ընդ նախնեացն մերոց Թ՟ուրց
և պետաց փառաւորեսցի ։ Արդ այսպիսի կա
խարդաւարիւք բանիւք առաքեաց զոսկերսն
սիմոն խանին 'ի պարսկաստան, և ոչ էԹող Թա
ղել 'ի Հողն Սրաց, և ոչոք գիտաց Թէ զինչ
արարին կամ ուր տարան ․ և այսպէս անյայտ
արարեալ կորուսին ։

Եւ յայսքան ժամանակս որ եկաց շահն ՚ի Վրացտուն ընդ իւրով իշխանութե̃ն գրաւեաց զա̃մ աշխարհն։ Եւայց զերկիրն Թամրազին զբովանդակն՝ յայտնապէս արար զի լիցի ընդ իշխանութե̃ն Պարսից իբր թէ թրով իւրով առեալ զայն. վ̃ որոյ առաքեաց զզօրս ՚ի Պարսից՝ որք շինեցին յերկրին Թամրազին զբերդորայս՝ և կացոյց ՚ի նոսա զզօրս ՚ի Պարսից. և զսէլիմխանն. և զփիքարխանն. և զբէքդաշխանն կարգեաց անդէն զիշխան և զզօրս գլուխ՝ զի պահեսցեն զերկիրն ընդ իշխանութե̃ն Պարսից։

Եւ զբնակիչսն կախեթու և գրիմոյ սպառեաց. զոմանս սպանմամբ. զոմանս գերութե̃. և որք մնացին և գրեցան շահսեւան զհրամանն արար վ̃ նոցին զա̃մն արտասահմանս առնել և քշել տանիլ ՚ի Պարսկաստան։ Եւ կարգեաց իվ̃ այամ գործոյ զիշխանս և զզօրս որ առաջին գրովն և թղթովն, զոր գրեցին զանուանս նոցա և առ ինքեանս ունէին. այն գրովն սկսան քննել զա̃մն ընտանեօք իւրո̃. և զա̃մն զնն իւրեանց ընտանեօք և ստացուածովք յիւրաքանչիւր տեղեաց հանել. և զորս հանէին բերեալ բնակեցուցանէին յափն կուր գետոյն ՚ի տեղին որ անուանի ղարաբին. քանզի անդէն սահմանեցին զբնակետղ. այսո̃ք արարին մինչև զա̃մ շահսեւան գրեալսն հանին։ և յորժամ եղև զբռնահանելոյն՝ նոյն գրովն և մատենիւն չուեցուցեալ անտի և քշեցին տանիլ յաշխ̃րհն Պարսից. և բերեալ հասուցին մինչ ՚ի ղազբին քաղաք. և անտի տարան ՚ի քաղաքն Փահրապատ։ յորժամ հասուցին ՚ի Փահրապատ՝ զոմանս ՚ի նոցանէ իմէջ Փահրապատու քաղաքին բնակեցուցին. թէ ՚ի Վրաց և թէ ՚ի Հայոց.

Թէ

Թէ 'ի մահմետականաց. Թէ 'ի ջհտաց. և զայլս բազումս 'ի նոցանէ բնակեցուցին 'ի գեղօրայսն. և եառուն սոցա ամեն զտեղիս տանց և այգեստանաց՝ և անդաստանաց: Նոյ այսու կերպիւ աւերեաց զաշխարհն Աթրայ, կախեալ Թու և գրխոու. և տարեալ էլից յերկիրն Փաշրապատու:

Բայց գնացեալ ժողովուրդքս այսոքիկ. ոչ աճեցան յաշխարհին յայնմիկ. վասնզի ոչ էին ընդելեալք գէջ և դաժան չնչարգել և մզաւաշոտ օդոյ երկրին. Նաև ոչ ուտելեաց և ըմպելեաց. և այլ կենցաղավարութե երկրին: վա որոյ սկսան կոտորիլ և մեռանիլ. և 'ի սակաւ ժամանակս այնքան կոտորեալ մեռան հազիւ Թէ 'ի տասնէն մէկն մնայ: Նոյ այնք որք մնացին՝ յետ ժամանակաց 'ի հիւանդութեց և'ի ցաւոց ձնչեալք և մաշեալք և ցաւագարեալք եղեն. որ ոչ կարէին զգործ ինչ մարմնական գործել յօգուտ կենցաղավարութե իւրեանց: Նաև 'ի պանդխտութե և 'ի նչդեհութե եղեն աղքատք և չքաւորք՝ և զորինչ ունէին վաճառեալ կերին: Նոյ 'ի պատճառս չքաւորութե զբողոք բարձին աղգն Աթրայ առ շահն. որ յաւուրսն յայնոսիկ 'ի Փաշրապատ էր. վասն չքաւորութե և սովուն զորս կրէին: և շահն զպատասխանի արար նց. Թէ ուրացէք զձեր հաւատն. և լերուք օրինօքն մահմետի. և ես տամ ձեզ յոլով զինչս որով ապրիք՝ և ուտէք: և նոքա հարկեալք 'ի կարեաց սովուն արարին զհրամանս շահին, և եղեն մահմետականք. և շահն ոչ ետ նց զինչս յոլովս ըստ խոստման՝ այլ ստեաց. քնզի խափեաց զնս Բայց իւրաքանչիւր անձին եԹէ մեծաց եԹէ փոքունց ետ զմէն մի դահեկան, և արձակեաց 'ի տունս իւրը:

Արդ որք գովեն զայս շահս թէ քրիստոնէ
աւերն աշխարհաշէն և խաղաղարար թփրեր.
այս է նր քրիստոնէասիրութին, որ զամ աշ
խարհն քրիստոնէից զՀայոց և զՎրաց ուե
րեաց. և զամմն սպառեաց սրով և սովու և գե
րութեբ. և զմնացեալսն վարեալ տարաւ 'ի
Փահրապատ և 'ի սպահան, որ նոքա և օրա
ուր անդէն սպառեին պէսպէս կերպիւ: և ովք
որ գովել կամի զնա. թող յառաջ հայեցեալ
նկատեսցէ զարարեալ գործսն, զոր արար ընդ
քրիստոնէից՝ և ապա գովեսցէ զնա:

Արդ որով օրինակաւ պատմեցաք, զոր արար
շահն ընդ ժողովրդեանն, որք գրեցան շահի
սեւան 'ի Թամրազի երկրէն. սոյն օրինակաւ
և արար ընդ ժողովրդեանն. որք գրեցան շահի
սեւան 'ի Լուասափի երկրէն: մնղի խլր նց
կարդեաց զզօրս և զզօրապետս՝ որք առաջին
գրոհն և բարտխսին չոնեցուցին յիւրքանչիւր
տեղեաց և վարեալ տարան 'ի Պարսկաստան:
Բայց զայս ժողովուրդս, որք էին յերկրէն
քարթլայ ոչ տարան 'ի Փահրապատ այլ տա
րան յասպահան. և բնակեցուցին 'ի սար գե
ղորայսն ասպահանու. ուր և զազգն Հայոց
բնակեցուցեալք էին: Եւ այժմ յարդեանս
ժամանակիս՝ որէ թուական մեր հազար և հա
րիւրեւօթն. յորում գրեցաք զպատմութիւս.
այս վրացիքս ամքն դարձան 'ի հաւատոյս
իւրեանց 'ի կրօնս մահմետի. և այնքան կու
ռեծք և դաժնիծք են քրիստոնէից. որ 'ի պա
տահելն մեր նց 'ի ճանապարհի ուրեք. զբարեն
մեր ոչ առնուն. մեղք համարելով իւրեանց
զբարև առնուլն: այլև հայհոյեալ անարգեն
զհարս և զնախնիս իւրեանց՝ թէ նոքա անհաւ
ատք էին և անհաւատ մեռան: այլև խլր նորոյ
հաւա

հաւատոյն ներեանց գոհանան զՏր. Թէ այս է ճշմարիտ հաւատ՝ զոր այժմ ստացաք։ Նաեւ յայսմ Սրբոցն ժողովրդեանս 'ի ժամանակին յորում նոր բերին 'ի սպահան. բաժանեցին զնոսա ինչ ի յառաջ խաղաղութեալ տարան յերկիւն շիրազու. և յերկիրն, զոր անուանեն ասուփաս. որև օղքա ևս սպառեցան պէսպէս կերպիւ. և մնացեալքն ամէն միահաղոյն դարձան յօրէնս մահմետի։

Օ այսու ժամանակաւ՝ յորում շահն 'ի տըփխիս էր և առ ինքն ունէր զլաւասափ. վա որոյ խնդայր և բերկրեալ զօւանձանայր՝ զի ըմբռնեաց զնա 'ի ցանցս իւր։ Նայց վա Թամրազին տրտմէր զի ոչ կարաց ըմբռնել. որև վա նր խոկայր 'ի սենեակ սրտի իւրոյ 'ի խշտին բեհեմովթայ՝ Թէ զի արդ կարասցէ կորուսանել զնա։

Ս որոյ և յաղագս նր հնարէ այսպիսի ինն որոգայթ. զի հաւանեցոյց զայր ոմն և առաքեաց 'ի պաշխաչուխ. եցոյց նմա զամենն ճանապարհս. հնարից՝ պատուիրելով գնացայ Թէ որով և ինչէ օրինակաւ սպանդու զԹամրազն Թէ յայտնի և Թէ 'ի ծածուկ։ և զայս այր, որ առաքեաց 'ի ծածուկ սպանանել զԹամրազն Թաքուն և գաղտնի յամենից նախարարաց իւրոց արար՝ որ ոչոք գիտէր։ Նու այրս այս գնացեալ էհաս 'ի պաշխաչուխ. և յաւուրս ինչ եղ և մուտ արար 'ի տեղիսն ուր էր Թամրազն. և գիտեալ նկատեաց զամ ինչ. զճանապարհն և զտեղին ուր 'ի գիշերի նննջէր Թամրազ. քանզի տեղինէր վերնատուն, զոր փայտեայ սանդխով ելանէին և իջանէին։ Նու յաւուր միում 'ի ծածուկ և անգիտելի ումեք այրն այն զպատկալեալ հսկեաց զգիշերայն. զի Թերևս գտանիցէ զգիպօղ ժամ առ ի սպանանել զԹամրազն.

և 'ի հասարակել գիշերոյն գխոսաց Թէ ամէն
ննջեալք են. նաև գիշերապահ արքն՝ որք են
քէշիկչիքն, ննջեալք են։ Եկեալ այրն այն զառ
խուլ և Թաքուն. և ընդ փայտեայ սանդուխն
ել 'ի վերնատունն ուր ննջէր Թամրաղ. և
ետես զի 'ի կողմն մի վերնատանն ննջեալք
էին ոգիք երկու 'ի միում անկողնի. և 'ի
միւս կողմն ննջեալք էին այլևս ոգիք երկու
'ի միում անկողնի։ և սոքա որք ննջեալք էին
'ի վերնատանն 'ի միում անկողնի էին Թամ
րաղ և կինն իւր. և 'ի միւսում անկողնոջն
էին երկու աղախնայք՝ որք վն սպասաւորու
Թե մերձ առ նոսա ննջեալք էին 'ի միում ան
կողնի։ Իսկ այրն որ եկեալ էր վն սպանուԹե՝
ոչ կարաց ստուգիւ վերահասու լինել Թէ
որըք 'ի նոցանէ իցէ Թամրաղն. վն որոյ ոչ հա
մարձակեցաւ 'ի սպանուԹի՝ զի մի գուցէ սպա
նեալն այլըք իցէ և ոչ Թամրաղն։ վն որոյ
խորհեցաւ Թողուլ զգործ սպանուԹե յայնմ
գիշերի և գնալ. և յառաջիկայ աւուրն դի
տեսցէ՝ և ստուգիւ իմ՟ հասցէ Թէ որըք 'ի նո
ցանէ իցէ Թամրաղն. և ապա եկեալ անվրէպ
զնա հարեալ սպանցէ։ Նու զայս խորհուրդ Ա՟ծ
էարկ 'ի սիրտ առն այնմիկ՝ և դարձոյց զնա՝ ով
զի մի սպանցի Թզ՟րն քրիստոնէից։ Ա՟յլև զխո
րամանկ չարուԹի չահելն յայտնեալ զնա խայ
տառակեաց։ Ա՟րդ այսու խորհրդով այրն
դարձաւ 'ի վերնատանէն. և սկսաւ իջանել
ընդ փայտեայ սանդուխն ընդ որ ելեալն էր.
և մինչ իջանէր այրն, նորին ննջեան Թիւրն
որ զմիջով իւրով ածեալ ունէր այրն՝ հա
րաւ 'ի սանդուխն յորմէ հնչեաց ձայն. և 'ի
ձայնէն արԹնացաւ շունն քէշիկչոյ՝ և սկսաւ
հաջել առ այրն. և 'ի հաջելոյ շանն արԹնա
ցան

ցան պահապանքն. և տեսեալ զայրն և շրջապատեալ ըմբռնեցին զնա. և որք տեսին զայրն զահի հարեալ ապուշ մնացին ամենքն: Իսկ 'ի վաղիւն Թամրազն, և այլք յիշխանաց կոչեցին զայրն առաջի իւրեանց՝ և հարցմամբ տեղեկանային. և այրն զամենայն ստուգութիւն խոստովանեցաւ, թէ շահն առաքեաց զիս թէ գնացեալ սպանցես զԹամրազն:

Յայնժամ Թամրազն 'ի խորոց սրտէ հառաչելով ասաց: Արդ տեսէք եղբարք, զի շահն զերկուսին որդիսն իմ յինէն առեալ տարաւ առ ինքն՝ և արար ներքինիս. և զմայրն իմ տարեալ կորոյս 'ի խորին պարսկաստան. և այժմ զերկիրն իմ ընաւին աւերեաց՝ և զամենայն ժողովուրդն իմ և զազգն գերեալ տարաւ. և ես զգլուխ իմ միայն առեալ փախուցեալ կամ 'ի պանդխտութեան. և նա այնու ամենիւ ոչ շատանայ. այլ դեռևս ջանայ 'ի հեռաստանէ սպանանել զիս. արդ նա որ այդքան ջանայ սպանանել զիս՝ և ես որով յուսով համարձակեցայց գնալ առ նա: և ամենքն որք տեսին զայն գործ՝ և լուան զբանս Թամրազին. իրաւացուցանէին զխօսսն: և Թամրազ ողորմեալ առնն ոչ սպան զնա. այլ արձակեաց՝ որ գնաց զճանապարհս իւր: Բայց ինքն ոչ ևս վստահացաւ կալ 'ի պաշխաչուխ, զի մի գուցէ այլևս որոգայթս հնարեսցէ նմա շահն, այլ ելեալ անտի գնաց յերկիրն դադիանու՝ և հեռացաւ 'ի շահէն:

Արդ զորպէսն ամենայն չարահնարից գործոց, զոր արար շահն ընդ աշխարհին Վրաց չէ կար մեզ ճառել զի 'ի վեր է քան զճառ՝ բանից. քան զի զողջ ամ մի եկաց նա ամենայն բանակաւն Պարսից անդ՝ յաշխարհին Վրաց: և զկնի ամին խորհեցաւ ելանել յաշխարհէն Վրաց և գնալ յաշխարհն Պարսից:

Բայց 'ի վարանս և յուզմունս խորհրդոց կայր Շահն թէ զի՞ արդ կարասցէ կորուսանել զԼուսաւորիչ : և յաղագս այսորիկ բանս եդ նա խարարաց Լերոց առնել ընդ Լուսաւորչու. թէ որովհետև բարեաւ և յաջողմամբն Ն... եկիր դու 'ի տեսութիւն Շահին. և եղև սէր և միաբանութիւն իմէջ ձեր. արդ յաղագս հաստատութեան սիրոյ և ուխտի դաշանցն : Նաև վայելուչ է և պատշաճաւոր. որովհետև Շահն եկանէ 'ի գնալ յերկրէն քումմէ. պատեհ է քեզ գնալ ընդ նմա երից և չորից աւուրց ճանապարհ ո՞վ զուղեոր՝ մինչև 'ի սահմանս երկրի քոյ. և ապա դարձցիս յաթոռ քո : Եւ զայսպիսի բանս Շահն ենքն ես տաց 'ի կարգս զրուցաց ընդ Լուսաւորչին. և Լուսաւորիչ քանզի ոչ ունէր կեղծաւորեալ զխորամանկութիւն 'ի սրտի իւրում, ո՞վ յատուկ է քրիստոնէից. հաճեցաւ առնել զասացեալն նոցա :

Եւ յորժամ չուեաց Շահն 'ի քաղաքէն Թիֆլիզու : էառ ընդ իւր և զԼուսաւորիչ ըստ յառաջագոյն կարգեալ պայմանին իւրում :

Եւ յորժամ գնացին երից և չորից աւուրց ճանապարհ. զնոր իմն բանս եդ Շահն նախարարաց Լերոց առնել ընդ Լուսաւորչու. Որովհետև այսքան աւուրց ճանապարհ եկիր՝ և յոյժ բարւոք արարեր. արդ խնդրեմք զի մի թուեսցի ծանր. այլ և յառաջել և գալ մինչև 'ի քաղաքն գանձայ. զի անդէն 'ի գանձայ եդեալ է Շահն 'ի մտի իւրում կոչել առաջի իւր զիմանս իշխանս կողմանցս այսոցիկ զշամախու և զերևանայ. և զիմանն կամի կարգել՝ զի կացցեն ընդ իշխանութեամբ քով. և զքեզ վերակացու և հրամանատար իմ՟ անցեն՝ զի քո հրամանաւ արասցեն զիմ, զոր ինչ և առնելի է : Եւ այսմ

ես

Եւ հաւանեցաւ Լաւասափ եւ գնաց ընդ շահին մինչեւ 'ի Գանջայ։ Իբրեւ անդ էին 'ի Գանջայ իբրեւ անցին աւուրք յոլովք ոչ երեւեցաւ նշան բանից ասացելոց նախարարաց շահին։ այլ եւ ոչ երեւի նշան եւ նշմարանք արձակման իւրոյ։ Յայնժամ գիտաց Լաւասափ յոգի իւր թէ հնարիւք հանեին զնա յերկրէն իւրմէ՝ եւ ոչ եւս թողուն գնալ յերկիր իւր։ վասն որոյ 'ի մեծի տրտմութե եւ 'ի վարանս խորհրդոց կայր Լաւասափ. եւ թէպէտ խորհէր՝ այլ ոչինչ կարէր առնել զհնարս փրկութե։

Այլ բազմարուեստ հնարագործ այրն շահաբաս. 'ի ձենդաւոր կործիս իւր խորհեալ թէ միգուցէ կամ 'ի գիշերի կամ 'ի տուընջեան դիպող ժամ գտեալ հնարիւք իմն փախիցէ Լաւասափ։ եւ 'ի սակս այսմ կործեաց արարծոր եւս հնարս ըստ այսմ օրինակի. զի շահն պարգեւեաց Լաւասափին զմեկհատ ձղայ՝ զոր 'ի գլուխս իւրեանց հարուն իշխանք. եւ էր յոյժ ազնիւ եւ պատուական. գեղեցիկ եւ մեծագին։ Եւ ընդ պարգեւել ձղային պատուիրեաց սիրով Լաւասափին թէ յարաժամ 'ի գլն քո առ ի եղիցի սա 'ի գլուխ քո. եւ Լաւասափ եւս այնպ առնէր հանապազ 'ի գլն իւր առ շահն։

Եւ զկնի աւուրց ինչ հրամայեալ է շահն գողոցն իւրոց՝ զոր հանապազ ը̃ ինքն պահէր՝ քանզի բազում արս, որ բազմահնար գողք էին վասն պէսպէս հնարից առ ինքն պահէր շահն. որպէս եւ այժմ ահա արար. վասնզի պատուիրեաց նոցա զանխուլ եւ թաքուն 'ի գիշերի մտանել 'ի վրանն Լաւասափու եւ գողանալ յասուկ զայն ձղայն եւ զայլ եւս ինչս։ եւ գողքն արարին որպէս ուսան 'ի շահէն. զի գողացան զձղայն եւ զայլովս յընչիցն։ Եւ յաւուր միում յորժամ կո-

 չեցին

չեցին զԼաւատաքի առ Շահն ըստ հանապազորդ-կոչմանն. և 'ի գալն Լաւատաքու և 'ի բազմին ոչ էր ջղայն 'ի գլուխ նոր ոչ յառաջ լինէր. և 'ի տեսանելն զնա Շահին՝ իբր անգէտ գոլով հարցանէր ընդէր զջղայն ոչ եդեալ ես 'ի գլուխ քո. իբրև լուաւ թէ գողացեալ քեն. յայնժամ Շահն 'ի չքմեղս եղեալ և իբր բարեկամ և ցաւակից զինքն ձևացուցեալ մորմոքայր և ափսոսայր. Նա ապա դարձուցեալ զբանս իւր առ Նախարարս իւր՝ որք անդն կային. բարկանայր նոցա և յանդիմանէր՝ և զնաս սպառնայր. և ասէր՝ ընդէր ոչ բարուք հոգաբարձութիւն և հսկատակութիւն արարիք ծառայութեան սմա. և այնքան անհոգ և պղերգ էք մինչ զի գողք եւ մտանեն 'ի վրան սորա և տանեն զգողութիւն. և մանաւանդ զայնպիսի երևելի և պատուական ինչ. և զայս ասէր վասն ջղայնին. Նա ապա ասաց՝ արդ միգուցէ միւսանգամ եկեալ գողոց գողանայցեն այլևս ինչ յընչից սորա յաղագս անհոգութեան ձերոյ. և լինիցի մեզ կրկին ամօթ. արդ պատրաստեցէք դուք զարս քաջս և զգոյշս. զի յամի գիշերի գիշերապահք պահպանութիւն պահեսցեն զվրանն սորա շուրջանակի՝ զի մի՛ միւս ինչ պատահեսցէ սմա. ապա թէ ոչ՝ զձեզ զամենն ընաջինջ առնեմ. Յետ ընդունելոյ նախարարացն զայսպիսի սաստիւ հրամանս. այնուհետև կացուցին պահապանս շուրջ զնովաւ՝ որք 'ի տուէ և 'ի գիշերի պահէին զնա զգուշութեամբ.

Այսպիսի հնարս գործեաց Շահն՝ և կացոյց իմն Լաւատաքին զպահապանս զի մի՛ գուցէ փախիցէ. և այսպիսի պահպանութեամբ բերեալ հասոյց 'ի Թաւրէզ. և տարաւ ընդ իւր 'ի վաղքն, և 'ի Փահրապատ, և 'ի Սպահան, և

անտի

անտի առաքեաց 'ի շիրազ քաղաք ունել զնա 'ի պահեստի. և անդէն եւս կարգեալ խիլք նոր պահապանս, որք պահէին զգուշութեամբ ։

Իսկ եղև զի յետ յոլովից ամաց եկին դեսպանք 'ի Ռուսաց թագաւորէն վասն սիրոյ և բազմաց գործոց. և ընդ աւուրսն այնոսիկ գնացեալ էր շահն 'ի գաւառն սպահանայ՝ և նստեալ կայր խելք գետոյն, զոր անուանեն աւիքուրան և կամէր զջուր գետոյն այնորիկ, բերել և խառնել 'ի գետն սպահանայ՝ քանզի ջուրն սպահանայ սակաւ է ։ և բազում արուեստաւորք և գործաւորք գործէին 'ի ճանապարհս ջրոյն. և նոքին եւս շահն յայսմանէ պատճառէ անդէն զետեղեալ կայր ։ Իսկ դեսպանքն ռուսաց յայսմ տեղւոջ եկեալ հանդիպեցան տեսութեան շահին՝ և ընդ յոլովից խնդրուածոցն. մի լաւասափին եւս խնդրեցին. ո՞ր զի դարձցի 'ի տեղի իւր՝ և կացցէ 'ի հրամանի և 'ի հնազանդութեան շահին։ Իսկ խորամանկն խորհրդով շահաբաս. խնդութեամբ ընկալաւ զբանն զայն. և յօժարութեամբ և աչալրջութեամբ յանձին կալաւ կատարել զխնդիրն զայն՝ առաքել զլաւասափ 'ի տեղի իւր ։ և այսպիսեաւ կերպիւ հաճեցուցեալ զդեսպանսն ուղևորեաց յերկիր իւրեանց ։

Յետ անցից այսոցիկ կոչեաց շահն առաջի իւր զիշխանն առ որ յանձին կայր լաւասափ՝ ասէ ցնա ։ Ի կորստեան և սպանման արժանի դու՝ ընդէր թողեալ ես զլաւասափ կեալ կենդանի մինչև ցժամանակս այս. զի այժմ ռուսք եկեալ խնդրեցեն զարձակումն նորա. արդ եթէ ոչ փութանակի եկեալ բերցես զհամբաւ կորստեան նորա. դու քոյովքդ հանդերձ բնաջինջ լինելոց ես ։ Իսկ իշխանն առեալ զայսպիսի հրաման վաղվաղակի հատանէր 'ի քաղաքն

քաղաքն շրջայ. և ձևացուցանէր զինքն առ լուսաւորչին սիրոյ և խաղաղութեն աղագաւ եկեալ։

Եւ յաւուր միում ելին 'ի միասին լուսաւորիչ և իշխանն 'ի զբօսանս յեզերս գետոյ. յորում և սկսան զձուկն որսալ. և նախ պարսիկ իշխանն էառ 'ի ձեռս զվարմն զի կազմեալ արկցէ 'ի գետն յորս ձկանց. և ինքն իւրով կամօքն անյարմար կազմեաց և թիւր և թեք ձգեաց 'ի գետն. երևեցուցեալ զինքն որպ թէ ոչ գիտեմ. Իսկ լուսաւորչին ոչ ունելով զկարծիս ինչ 'ի մտի և ոչ ունելով զխիղճ զանձնէ. յինքն էառ զվարմն 'ի ձեռանէ իշխանին որպ թէ ինքն այլ ևս լաւագոյն արկցէ զվարմն 'ի գետն. և մինչ զգլուխն կորացուցեալ և խոնարհեալ իւր վարմին յարդարէր զվարմն 'ի ձեռսին իւրում, յետուստ կողմանէ պարսիկ իշխանն հանեալ զսուրն զոր զմիջով իւրով ածեալ ունէր՝ ածեալ բախեաց յանկարծակի իւր պարանոցի լուսաւորչին՝ յորմէ բախմանէ գլուխ լուսաւորչին անջատեալ յինքենէ թռուցեալ անկաւ 'ի բացեայ։ Իսկ նոյն պարսիկ իշխանն առեալ զգլուխ լուսաւորչին բերեալ 'ի նախկին տասցեալ տեղին յաւիքուան կոչեցեալն. 'ի բանակն արքունի՝ և եդեր առաջի շահին. և շահն 'ի տեսանելն զգլուխն՝ և յիմանալն թէ լուսաւորչին է 'ի դաժանութէ սրտին իւրոյ շարժեցաւ 'ի ցասումն և 'ի բարկութն իւր գլխոյն. անարգէր, և հայհոյէր, և քամահանօք հարեալ այսր և անդր ձգձգէր. և յոլովժամս այնպ անցուցեալ ընդ գլխոյն 'ի ցասմանէ սրտին. և ապա կալեալ զականջէ գլխոյն ձգեաց 'ի բացեայ՝ և գլուխն գլորեալ երթայր զառիվայր, քանզի զառիվայր էր տեղին։ Որդ այսպէս

եղև

Եղև զրաւ կենաց լաւատափու Թագաւորին տփխիսու՝ զի չարաշնորհն շահաբաս այսպէս սեաւ օրինակաւ կորոյս զնա ․ և զնորին աշխարհն գրաւեաց ընդ իւրով իշխանութ՟ըն ։

---

Պատմութիւն նահատակութեան մօր Թամրազի Թագաւորին Կախեթու 'ի նոյն Շահաբասէ ։

ԺԲ ։

ՄԻՆՉ ԿԱՅՐ ԹԱՄ րազ թ՟ւրն յերկրի իւրում 'ի Կախեթ՝ և վարէր զիշխանութ՟ի իւր խաղաղութ՟բ, և կայր 'ի հնազանդութեան Պարսից, զի տակաւին չէր եկեալ շահն յաշխարհն Վրաց՝ և փախուցեալ զթ՟ւորն և աւերեալ զաշխարհն՝ զորինչ յանցեալ ճառիդ պատմեցաք ։ այլ կայր Թամրազն յիւրում երկրին՝ և շահն 'ի պարսկաստան ․ առաքեաց շահն առ Թամրազ և խնդրեաց զպատանդ ․ և նա առաքեաց զմի յորդւոց իւրոց ։ յաւել շահն միւսանգամ խնդրել զպատանդ ․ և Թամրազ առաքեաց զմիւսևս որդին ։ յաւել շահն երրորդանգամ խնդրել զպատանդ ․ և Թամրազ առաքեաց զմայրն իւր ։ Իսկ շահն զերկոսին որդիսն Թամրազին արար ներքինիս, զի մի ընծայեսցի 'ի նոցանէ զաւակ՝ զի մի գուցէ լինիցի ժառանգ թ՟ւորութեան նոցա ։ Իսկ զմայրն Թամրազին յետ խորին պարսիկս առաքեաց 'ի շիրազ քաղաք առ իմամղուլի խանն ունել զնա 'ի պահեստի ։ և այսպէս հրամանաւ շահաբասին կայր 'ի պահեստի մայր Թամրազին, որոյ անունն էր մարիամ ․ բայց յետ ժամանակաց վկայեաց Ք՟ի Ծ՟ութեան և նահատակութ՟ը կատարեցաւ վ՟ն Քրիստոնեայ հաւատոցս 'ի նոյն

նոյն շահապետան. այսպիսեաւ պատասխանաւ:
Սողի կոյսին այլեւ մեծ ազգի կանայք յազգէն
Սրոց յերկրին Պարսից՝ գերեալք 'ի պար
սից: Այնպէս եւ որդիք սոցա գերեալք էին
'ի Պարսից. եւ կարգեալք էին ծառայք Թգւ
րին մեծի եւ առաջնոյ շահապետին. զի վասն մեծ
ազգութեան սոցա հանապազորդ սպասաւորք եւ
առաջիկայք կացուցեալք էին զնա Թգւրին:

Նա յաւուր միում շահն զեանս ինչ խօսից
խօսեցեալ է ընդ ծառայիցս այսոցիկ. եւ խնդ
րոյն փորձի փորձ խօսիցն ասացեալ է նց. թէ ընդ
էր զմարսն ձեր թողուք մնալ 'ի քրիստոնէ
ութեն՝ որոյ կատարումն է կորուստ. եւ ոչ առ
նէք հաւատոյ եւ կրօնիցն մահմետի՝ որոյ կա
տարումն է վայելչութի արքայութե: եւ ծա
ռայքն ասեն, բաղում անգամ ասեմք, եւ ոչ
դառնամ՝ ասէ արքայ՝ ընդ էր ոչ դառնամ:
Իսկ ծառայքն, յերկիւղէն անձնր մնացեալ ոչ
գիտացին թէ զինչ պատասխանս յօդեսցեն, կամ
զինչ տացեն զպատասխանի: բայց ոմն 'ի նոցա
նէ ասացեալ է, ոչ թէ գիտութբ այլ անգիտու
թբ: յորժամ ասեմք մարց մերոց թէ տաճկա
ցէք, նոքա ասեն մեզ՝ մայր թամրաղն քրիստո
նեայ է՝ մեք ընդ էր տաճկանամք:

Յայնժամ խորամանկն շահապետ զայս
բանս 'ի սրտի իւրում պարուրեալ՝ յետ աւուրց
ինչ զոմն յիշխանաց իւրոց առաքեալ է. զի
կամ դարձուսցէ զդիդօփասն 'ի քրիստոնէու
թէ յօրէնս մահմետի. եւ կամ չարաչար մահու
ամբ կորուսցէ: Նա իշխանն դնացեալ 'ի շէ
րաղ քաղաք. եւ մերձ կացեալ 'ի դուռն դիդօ
փասին կոչեաց զնա. եւ առանց երես երես տե
սանելոյ յետուստ կուսէ դրանն խօսեցաւ ընդ
նա՝ եւ ասէ:

Հրաման

Հրամանք թղթերին այսպէս է, զի հարկէ քեզ տանջկանալ. եթէ յօժարիս յայժ բարի է՝ և թէ ոչ յօժարիս լեզուով տաս. և սրտովդ-պահես զքո հաւատն. առ յաչս մարդկան ձևացո իբր թէ եղեր օրինօքն մահմետի. և 'ի ծածուկ պաշտեա զքո հաւատն. զի և մեք մնացուք աղատ 'ի խղճմտանացն՝ որ 'ի քոյդ-կողմանէ է. զայսպիսի բանս ասէր ինձ խանն. և լայր նման գաճճին հերօդի. որ գնաց գլխատել զյօհաննէս մկրտիչն ։

Իսկ Գիդոփայլն ասաց 'ի ներքուստ. դու իմ եղբայր, և իմ որդի. ընդէր թաքուն խօսիս ընդ իս՝ եկ յանդիման խօսեաց. զի ես թղթերի դուստր եմ. թղթերի կին եմ. թղթերի մայր եմ. և ես իսկ անձամբ իմով զթղթերութիւն վարեալ եմ յետ առնն իմոյ՝ մինչ որ տղայն իմ զարգացաւ. սակայն անցաւոր և ընդունայն է մեծութիւն աշխարհիս. եթէ թղթերն քո բովանդակ արարածոցս տէր լինի. և զամենեցուն թղթերութիւն ինձ տայ. ես ոչ ուրանամ զՔ՟ս Յ՟ն իմ. և ոչ փոխանակեմ ընդ սիրոյ նր՝ զոր ունիմ առ նա. և դու զորինչ առնելոց ես՝ դու գիտես ։

Այլին ընդ Գիդոփայլիս երկու քահանայք Սրացիք. և այլ ևս ծառայք և աղախնայք. դարձան Գիդոփայլն առ նոսա և ասաց. եթէ զիս անդամ անդամ յօշեն՝ ես ոչ թուլանամ 'ի սիրոյն Ք՟ի՝ և ոչ դառնամ 'ի նորին հաւատոցն. իսկ զձեր օգուտն դուք ընտրեցէք ։ և նոքա առ հասարակ դառնալով լային. և ողբային զզրկունսն իւրեանց 'ի բարեփառ տիկնոջէն ։

Նա ապա յետ բազմաց խօսից ողոքանաց և սպառնալեաց՝ իբրև ետես եկեալ ինձ խանն զհաստատուն միտս նր. հրամայեաց երկաթի ձանկօք խզրատել զմարմին նր՝ և կարի վիրաւորել.

րեալ. և նա գոհանայր զԱ.Ծ և արտասուօք
հայցէր ինքեան զհամբերութիւն 'ի Տէ:

Յետ այսորիկ հրացուցին զապաւարտ պղն
ձի և եդին 'ի գլուխ նր. և ոչ այնու կարացին
հաւանեցուցանել զնա:

Եւ ապա բերին զերկաթեայ բահ, որով զեր
կիր փորեն. և զայն բահն սաստիկ հրացուցին
և եդին իմէջ ստեանց գիգօփալին՝ իվերայ
կրծիցն և սրտին. և նա այնու աւանդեաց զա
նուշահոտ հոգին իւր առ Ա.Ծ:

Եւ մինն ևս 'ի քահանայիցն մարտիրոսա
ցաւ անդէն ընդ նմա. և այլքն ցրուեցան:

Այս գիգօփալս յաւաջագոյն պատուէ
րեաց թէ յորժամ սպանանեն զիս. զմարմին
իմ մի ընկենուք արտաքս 'ի տեսութիւն ռամ
կաց. բայց յետոյ փոխմանեալ ասաց. ես որ
վն Ք.Ի հաւատոյն մարտիրոսանամ. զմարմին
իմ զորինչ և կամին արասցեն: Եւ յորժամ
սպանին՝ զպատուական նշխար մարմոյն ըն
կեցին արտաքս կերակուր լինել շանց և գա
զանաց: բայց Ա.Ծ փառաւորեաց զնա երկ
նաւորք նշանօք. վասն որոյ Փռանկք պատրիկք
որք կային 'ի քաղաքին. գողացան զպատուա
կան մարմին նր. զկէսն պատեցին մաքրօք
կտաւօք խնկօք և զմռսօք՝ և ուղարկեցին 'ի
Փռանկստան, որ անդէն պատուէ մեծաւ փա
ռօք: Այնպէս և զմիւս ևս զկէսն պատեցին մա
քրօք կտաւօք խնկօք և զմռսօք և տարան առ
որդին նր Թամրազ յաշխարհն Վրաց: և նա
անպատմելեաւ խնդութբ լցեալ գոհութբ մե
ծաւ փառաւորէր զՔ.ն Ա.Ծն մեր, որ արժանի
արար զմայրն իւր վկայական մահուան: Եւ
ասաց, սորին բարեխօսութբն զմեր թգուրու
թիս Ա.Ծ հաստատուն պահեսցէ, և եդ պա

տուրով յեկեղեցին իւր ։ Որոյ յիշատակն օրհ-նութեամբ եղիցի և աղօթիւքն նորա ողորմեսցի Տէր ամե-նից քրիստոնէից ։ Նաև նահատակութիւն դիդօ-փալիս 'ի մերում թուականին հազարևեօթա-նասունևչորից ։ 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

---

Պատմութիւն նեղութեանց՝ զորս կրեցին ազգն Հայոց յա-ռաջնոյ շահապաս թուրքէն ։

ԺԴ ։

ԱԶԳՍ ՀԱՅՈՑ ՈՐԳ մատամբ և կամօքն իւրեանց կուրա-ցուցին զաչս իւրեանց, զի ինքեանք կործանեցին զթագաւորութիւն իւրեանց՝ նեն-գութեամբ և անհնազանդութեամբ իւրեանց, և եղեն ոտից կոխան, և ծառայք, և գերիք այլոց ազգաց և թուրքաց ։ և 'ի ժամանել նե-ղութեանց իրիք իմիք ինքեանց իբրև ոչ գտանեն զօգնութիւն յուստեքէ, անճար մնացեալ փա-խստական լեալ ձողոպրին այսր և անդր ։

Արդ եթէ յայսմանէ պատճառէ, և թէ կամ խառ պատմեալ մեծի սովուն և ջալալոց պատ-ճառէն, ամենայն ազգն Հայոց ելեալք վտարանդիք եղեն յիւրաքանչիւրոց տեղեաց և հայրենեաց և բնակութեանց և յաշխարհաց, և տարադէմ գնա-ցեալ ընդ դէմ երեսաց՝ ցիր և ցան եղեալք սփռեցան ընդ ամենայն աշխարհ, 'ի Կիպրոս, 'ի Կոս-տանդնուպօլիս, և 'ի քաղաքս, որք շուրջեն զնովաւ, յՌումէլի, 'ի Բուղդան, յերկիրն Իլախաց, 'ի կղզին Կաֆայու, 'ի ծովեզերան Պոնտոսի ։ Այլև բազումք յաշխարհն Լոր-պատականի, յԵրևան 'ի Գանջայ, 'ի Թաւրէզ, յԱրտաւէլ. և 'ի շրջակայ գաւառս սոցա ։

Իսկ յազգէն Հայոց ժողովուրդք որք է-

կեալ զետեղեցան յաշխարհն ատրպատականի, մեծ և առաջին շահաբասն Պարսից թագաւորն զոմանս ընդ վարեալ քշեաց, տարաւ յաշխարհն Պարսից՝ զկէս բաժին մի ՚ի Փահրապատ, և զկէս բաժին մի ՚ի սպահան քաղաք և ՚ի գաւառս նր։ Իսկ զայս գործ որ զազգն Հայոց քշեաց և տարաւ, ոչ թէ միանգամ կամ երկիցս և երիցս արար և եկաց, այլ գտի հաւաստեաւ զբազում արս՝ որք ինքեանք իսկ քշածքն էին՝ յորոց հարցեալ տեղեկացայ՝ նաև ՚ի յիշատակարանաց գրոց՝ զորս ընթերցայ զի եօթն և ութն անգամ որիշորիշ զկնի միմեանց քշեալ և տարեալ է։ Իսկ զյոլովս ոմանս ՚ի սպահան տարեալ ժողովրդեանս, առ ներկայ աւուրս այնոսիկ զետեղեալ բնակեցուցին ՚ի փուռթկայն՝ որ է քարվանսարայ, զոր և դեղջգունի քարվանսարայ անուանեն։ Իսկ այս ժողովուրդ ոչ խիտ սէին եկեալ էին, այլ որիշք ՚ի միմեանց, վն որոյ և երկու դասք էին, միոյ դասուն պետ և գլուխ կարգեալ էր շահն զայր ոմն ՚ի Նոցունց խնձ մէլիք, որում անունն էր մուրատ, զոր մականուամբ զքրխեալան ասէին նմա։ և միւսում դասուն մէլիք էր կարգեալ յոխնէփ անուանեալ այր ոմն, զոր մականուամբ ղարապաշ մէլիք ասէին։

Իսկ ազգն Հայոց՝ որք եկին յասպահան, զատ ՚ի Ջուղայեցւոց և յերևանցւոց ոմանք չքաւորեցան, վն զի ոչ յայտ է ամենեցուն զի յասպահան քաղաքն ամ ինչ եթէ ուտելի և թէ զգենլի և թէ այլ ինչ, ամ ծանրավաճառ և թանկագին է, և յայսմանէ պատճառէ այս եկեալ ժողովուրդս չքաւորեցան՝ զի զորինչ ունէին վաճառեցին և կերին։ Իսկ մանաւանդ առաւել չքաւորեցան այս յիշատակեալ երկու դաս

ժողո

ժողովուրդքս՝ որք վ՟ն չքաւորելոյն և սովելոյն իւրեանց այսր և անդր գնացեալ՝ որում և պատահեալ ծանուցանէին զչքաւորութիւն իւրեանց։ և մանաւանդ իւրեանց վերակացու Պարսիկ իշխանին, և զինուորաց նորին, վ՟ն զի շահն զմի որ յիւրոց իշխանացն ն՟ց վերակացու կարգեալ էր առ ի զննել և խնամել զնմին անցուածս բանից և գործոց ն՟ց, այլ և միգուցէ թէ ելանիցեն յաստպահմանաց և գնասցեն յերկիրն Ատրպատականի՝ և կամ յայլուր։

Եւ եհաս համբաւ չքաւորութեան ն՟ց առ շահն իշխեան վերակացու իշխանացն՝ որոց էին անուանք աւագագունին Աղաշահար, և երկրորդին Ուղուրլուբէկ, զորս աղաչեցին քրիստոնեայքն ծանուցանել զչքաւորութիւն իւրեանց շահին՝ և խնդրել ՚ի նմանէ ինչս առ ի պարէնս պիտոյից կերակրոց և այլ կարեաց իւրեանց։ Եւ իշխանքն ծանուցին, վ՟ն որոյ շահն կոչեաց զերկու դասս ժողովրդեանս մելիքներին, և զայլս ոմանս ՚ի նոցունց, ասաց ն՟ց տամ ես ձեզ զգանձս և զինչս ՚ի գանձարանէ թ՟գւորկանէ, առ ի պատճառս կելոյ և ապրելոյ ձեր. բայց զպայման դնեմ և այն պայմանաւն տամ։ Եւ պայմանն այս է, զի զորինչ և տամ, փոխատամ ձեզ երեք ամօք ժամանակօք զի յետ երից ամացն դարձուցանիցէք ՚ի մեզ․ և զայս փոխս ոչ թէ շահով և տոկոսեօք տամ, այլ առանց շահի տամ զփոխս։ զի դուք այնու առեալ զգանձն առ և տուր արարեալ շահիցէք․ և նորին շահն եղիցի ձեզ պարգեւեալ՝ զի մի մնայցէք խեղճնեղութեամբ․ այլ պատճառ ձեզ առ և տրի շահելոյ և կելոյ նովաւ։ և զինի լրման երից ամացն զգլուխ պարտուցն դարձուցանիցէք անդրէն ՚ի գանձարանս թ՟գ՟ւորին․ զի

այդ թգւրկան գանձէ, որում ոչ է հնար կորնչելոյ և ոչ փողի միոյ. և յորժամ վճարիցէք զոմ, առէք ձեզ զգիր ազատութե և վճարման՝ այսինքն զղաբս:

Արդ ոմ որ 'ի ձէնջ, որոք և առցէ 'ի թգւրական գանձէս. յորժամ բերցէ զառեալ գանձն՝ և վճարեսցէ 'ի գանձարանս թգրին, եղիցի ազատ. և եթէ իցէ ոք, որ ոչ վճարիցէ զառեալ գանձն. այլ կերեալ և վատնեալ և կորուսեալ իցէ զդրամն. և ոչ ունիցի զինչ զի տացէ: այնպիսին, փոխանակ գանձին, կամ դարձցի յիւրոց հաւատոցն յօրէնս մահմետի. և կամ զորդին և զդուստրն տացէ առ ի լինել թգւրական ծառայ: Նաև զարցին ևս զգինն յայտարար. զգինս ուստերաց չորս թուման ասաց. և զգինս դստերաց երեք թուման. զի որոք ոչ ունիցի զդրամ առ 'ի տալ՝ փոխանակ չորս թումանի զորդին տացէ, և փոխանակ երեք թումանի զդուստրն տացէ.

Նա այսու պայմանաւ ետ շահն այսց երկուց դասուց ժողորդեանս զչորս հարիւր թուման. զի մինչև ցերիս ամս առ և տուր արարեալ շահեսցին. և յետ երից ամաց դարձուցեն 'ի գանձարանս թգւրին:

Իսկ արբշիռ. և անագորոյն. և անխիմաստ. և անամնաբարոյ ազգս հայոց՝ ոչ 'ի սկիզբն խորհեցան. և ոչ 'ի վերջն հայեցան՝ թէ զինչ է լինելոց վերջ գործոյս այսորիկ. այլ իբր անբան և անմիտ անասուն գոլով՝ գնացին և առին զթգւրական գանձն. որ էր ոմ զմահարար թոյն օձի, և պատճառ նոցին կորստեան. և ոչ եղեն մտախոհ թէ ոմ զփուշ օձի է գանձն այն մահացուցանող: Այլ երկոքեին մէլքն իւրեանց ժողովրդօքն առին զթգւրական գանձըն.

ձըն․ զարապաշ մելիքի ժողովուրդն առին զերեք Հարիւր թումանն, և զըրխեալան մելիքի ժողովուրդքն առին զՀարիւր թումանն, և լաւ խմն գիւտ բարւոյ Համարեցան զայն անձանց իւրեանց ։

Եւ յամին յորում ետ շաՀն զգանձս զայս ժողովրդեանն Հայոց՝ էր թուականն մեր Հազար և յիսունևեօթն, և Հասին մինչև 'ի թուականն Հազար վաթսունևերկու, և յայնժամ շաՀն, որ անմոռաց ունի զյիշատակս չարեաց 'ի միտս իւր՝ յիշեաց զայն․ և զխնդիր արար տուեալ գանձին ։ Իսկ առօղք գանձին եզնաբարոյ ազգն Հայոց՝ ոչ միայն՝ ոչ շաՀեցուցին, այլև զգլուխն ևս կորուսին, զի ոմանք 'ի չքաւորութենէ, և ոմանք յանՀանճարութենէ, և ոմանք յանտեղեկութենէ առին և տրոյ քաղաքին՝ կերին և վատնեցին, ցնցխեցին, և կորուսին զտուեալ գանձն թագաւորին ։

Եւ զուզուրլուբէկն, որ վերակացու էր ժողովրդեանն, դարձեալ կարգեաց շաՀն խլ̃նյ̃, զի զթագաւորական գանձն առեալ 'ի ժողովրդենէն յանձնեսցէ 'ի գանձապանս թգ̃ւրին ։ Որոյ եկեալ զօրականօքն նստեալ խլ̃ ժողովրդեանն ճշգիւ պաՀանջէր զգանձն ։ Իսկ ժողովուրդքն զեղեալ գործն պատասխանէին թէ ոչ ունիմք, զի չքաւորք և աղքատք էաք և առի վտանկէ սովուն զամենեսեան կերեալ վատնեցաք ։

Եւ վերակացու իշխանն իւրովք զօրականօքն Հանապազօր բունադատէին զժողովուրդսն, և չարչարէին, կախէին, Հարկանէին, բանտարգել առնէին, և էին ժողովուրդքն իմէջ մեծի նեղութե̃ ։ և թէպէտ զոչ ինչ ունէին,

նէին, և զորինչ ունէին, զայն ևս 'ի ծախս զե-
նուորացն վաճառեցին, զի զմասն ինչ տային 'ի
ծածուկ կաշառս՝ և զմասն ինչ տային յայտնի
մուհլաթանայ: և զմասն ինչ 'ի պէտս կերակրոց
զինուորացն և երիվարացն, և այլ ևս ինչ պատ-
ճառէ վաճառեալ սպառեցին, և եղեն խոպա-
աղքատք և չքաւորք:

Իսկ ուղղորդութեանն իբրև ետես թէ զոչ
ինչ կարաց առնուլ 'ի Հայոց, ապա ծանոյց
թղթովն զչքաւորութիւն ժողովրդեանն, վա
որոյ հրամայեաց շահն կոչել զժողովրդեան Հայ-
ոց առաջի իւր: խօսեցաւ ընդ նոսա՝ և ասաց.
դուք մի համարիք և անբաստանօղք լինիք
զլինելն թէ ես թագաւորականաւ բռնութեամբ և իշխա-
նութեամբ խնդրեմ և առնում 'ի ձէնջ զգանձ,
այլ դատաստանաւ և իրաւամբք խօսիմ, զի ես
ձեզ փոխ ետու զգանձն զայն, և այժմ զնոյն
փոխառեալ գանձն խնդրեմ 'ի ձէնջ, և ոչ
թէ զնոր ինչ խնդրեմ, այլ զիմ տուեալ փոխն՝
և զայն առանց վաշխից և տոկոսեաց խնդրեմ
զգլուխն միայն: Արդ եթէ այս բանք իրաւ-
ամբք թուի ձեզ՝ տուք զառեալ փոխն ձեր ա-
պա թէ ոչ՝ ահաւասիկ դատաւորք և դատաս-
տանք գոն 'ի քաղաքի աստ, ես և դուք երթի-
ցուք իմացեալ 'ի դատաստանատուն դատաւորս,
և զորինչ հրամայելոց է 'ի դատաւորացն ընդ-
ունելի լիցի ինձ և ձեզ: և յոր կողմն և խօսեսցին՝
կողմն Հայոց պարտեալ գտանիցի:

Եւ 'ի բազում աւուրս ժողովուրդքն Հայ-
ոց՝ զբազում իշխանս բարեխօս արկեալ առ
թագաւորն, աղաչել և բազմօք աղաչանօք խնդ-
րեցին 'ի թագաւորէն գթալ 'ի տառապանս
չքաւոր և աղքատ ժողովրդեանն, և զներումն
առնել և թողուլ զպարտն զայն, և նա ոչ կա-
մեցաւ ներել:

Իբրև

Իբրեւ կարի սորանկեալ խոնարհեցաւ կողմն Հայոց, ժողովեցին զամենն զուստերս եւ զդստերս իւրեանց ժողովուրդքն, եւ ածեալ կացուցին առաջի թ͞գ͞ւրին ասելով, վ͞ն զի ոչ ունիմք զդրամ զի տուեալ 'ի պարտս թ͞գ͞ւրին վճարեսցուք. զուստերս եւ զդստերս մեր առէք թ͞գ͞ւրին ոմ͞ եւ յառաջագոյն սահմանադրեցաք։ Ընդ ուստերաց եւ դստերաց՝ զորս հարք նց͞ ածեալք էին՝ եւ առ գութ աղէտի նց͞ եկեալք էին ամ͞ն ազգականք նոցին, մարք, եւ եղբարք, եւ այլք, որք միագումար կային եւ բարձ քակականօք ողբովք եւ արտասուօք լային՝ որ զտեսողացն ամ͞ցն զսիրտ եւ զաղիս մորմոքմամբ ճմլեցուցանէին։ Որս տեսեալ թ͞գ͞ւրին յայնպիսի յողբս եւ 'ի հառաչանս հրաժարեցաւ յառնլոյ զտղայսն։ բայց բարկացաւ խիստ ուզուրլուբէկին, որ զնս͞ ածեալ էր՝ եւ ասաց. զինչ օգուտ մեզ յածելդ քո զտղայսն, զի կամիմ ես զամենն դարձուցանել 'ի տաճկութիւն։ վ͞ն որոյ ասաց՝ եթէ վճարեսցեն զդմ͞ փոխոյն բարի է, եղիցին ազատք՝ եւ թէ ոչ վճարեսցեն, դարձցին յիւրց͞ հաւատոյն՝ եւ եղիցին հաւատոյն մահմետի, եւ ես զառեալ պարտսն նց͞՝ շնորհեմ նց͞, եւ խիստ այնր այլեւ ձիրս պարգեւաց բաշխեմ նոցա։ զայս վճիռ հատեալ՝ ասաց, եւ ստիպեաց առնուլ զպարտսն։

Իսկ զինուորացն յետ ընդունելոյ զայս վճիռ հրամանն 'ի թ͞գ͞ւրէն, սկսան յոյժ ճշդիւ խնդրել զպարտսն 'ի քրիստոնէից, կախէին, հարկանէին, բանտարգել առնէին, եւ բազմաւ կերպիւ նեղէին. զի թերեւս 'ի վտանգէ նեղութեն դառնայցեն 'ի հաւատոյն՝ իսկ ժողովուրդքն տեսէին, եւ տանէին ամենից վշտացն՝ եւ 'ի հաւատոյ ոչ դառնային։ Նոյնուհետեւ

ողորմելի ժողովուրդքն Հայոց որդւովք և
ընտանեօք շրջէին 'ի պողոտայս և 'ի փողոցս
քաղաքին առ դրամբք լալով և ողբալով՝ զի թեր
ևս յուսացեալք լիցի հնար օգնութեան կամ փոխով
կամ ողորմութեամբ:

Այս շրջագայելով գնացին 'ի վանորայս
Փռանկաց, որք էին ի մէջ քաղաքին տապահա
նու: և անդ եպիսկոպոս յազգէն Փռանկաց եկեալ
էր յայնմ ժամանակի յապահան, և բնակէր
'ի վանքն Փռանկաց՝ որոյ Հունէնիայ անուն
կոչէին: Այս էր այս եպիսկոպոսս այր երևե
լի և փարթամ՝ զոր բաղում անգամ կոչեալ
զնա շահն առ ինքն և խօսէր՝ և զաւէր առնէր
ընդ նմա: և այս եպիսկոպոս իբրև ետես զար
տասուսն Հայոց՝ և հարցեալ տեղեկացաւ ամե,
խօսեցաւ ընդ նոսա յուսադրականօք բանիւք՝
և ասաց. մի երկնչիք, այլ հաստատուն կացէք
իմ՛ քրիստոնեայ հաւատոյն ձերոց, և ես զորինչ
ունիմ տամ ձեզ՝ ոչ թէ փոխ, այլ վս՛ սիրոյն
Քրի, և նորին հաւատոյն: և դուք տուք շա
հին, և վճարեցէք զպարտսն ձեր և 'ի հաւատոց
ձերոց մի դառնայք: Իսկ ժողովուրդքն Հայ
ոց արտասուօք օրհնէին, զնա և զեպիսկոպոսն.
և շնորհակալութիւն գոհանային ընմանէ զի ի
մէջ անհնարելի նեղութեանցն յօգնութիւն ժա
մանեաց նմա:

Որև ըստ նորում խոստմանն ետ եպիսկոպոսն
զգանձս երկուց դասուց ժողովրդեանն: Ձե
ռամբ զարապաշ մելիքին նորին դասուն եր
կու հարիւր թուման զուտ արծաթի դրամ:
Այս միւսում դասուն, որոյ էր գլուխ զրխեա
լան մելիքն, և այլ ոմն քահանայ բաղդասար
անուամբ՝ այր հանճարեղ և իմաստուն և հաս
տատուն ճշմարտութեամբ և հաւատովն Քրի,
սոցին

ոցին հեռօքն եւ ոցին դատուցն յիւուն թու-
մն զուտ արծաթի դրամ։ որ և երկոցունց
դատուց ժողովրդոցն տարեալ ետուն վերա
կացու իշխանին՚ի վճարս պարտուց իւրեանց։
Եւ վ՟ մնացորդաց պարտուցն խնդրեցին զաւ-
ուրս ինչ՝ներել զի զայն եւ դատեալ յուսայէք
վճարեցին։

Եւ ոմ՟ զՔ՟ի մասնէց յուդայն, որ բաժա-
նեալ անջատեցաւ՚ի գնդէ երկոտասանիցն.
Արք երկու յազգէն Հայոց՝ և յայսմանէ ժողո-
վրդենէ՚ի դատուց զարապաշ մելքեն. միոյն
անունն բաղդասար եւ միւսոյն ախիջան, եղեն
արբանեակք սատանայի եւ ամն չարին. հակա-
ռակք եղեն քրիստոնէից եւ ասեն, եթէ տաք
մեզ իւրաքանչիւրոցս տասն տասն թումն՚ի
գանձէդ, զոր եւ փուանկ եպկպն, բարի է՝ ոչ
ինչ ասեմք. և թէ ոչ տայք, գնամք առաջի
իշխանացն նաև թ՟գւորին իսկ, և ասեմք. ո՟ք
գնացեալ փուանկ դարձան, վ՟ այնորիկ եւ
սոցա եպկպն զգանձս. զոր բերեալ ետուն
ձեզ։ Իսկ միւս արքն աղաչէին և ասէին՝ այժմ
ներեցէք մեզ՝ զի զայս գանձս տամք՚ի պարտս
թ՟գւորին, զոր ահա ձերով իսկ աչօք տեսանէք՝
թէ ոմ՟ կարի ճշդիւ պահանջէին յարդեանս
աւուրս, և յետոյ՚ի մէնջ յոմ՟ ժողովրդենէս
ժողովեմք և տամք ձեզ՝ ոմ՟ և կամք ձեր հաճի։
Եւ նոքա ոչ եղեն ժուժկալք՝ և ոչ անսացին
բանից և աղաչանաց ն՟ց, այլ ելեալք գնացին
առ իշխանս մահմետականս։ Սուտ խօսեցան
զՀայոց և ասացին. թէ Հայք գնացին առ
փուանկն, և դարձան՚ի հաւատոն՟ց. առեալ
զգանձս զայս և բերեալ վճարեցին ձեզ։ Այլև
ինքեանք մասնիչք արքն երկոքեան ամենիւք
ընտանեօք իւրեանց դարձան յօրէնս մահմե-

Ժ 5 տի, և

տի, և ուխտութ՟ կալան զայն հաւատն, զի ամէ-
նեքեան ընտանեօք իւրեանց թլփատեցան։

Իսկ ել՚ այսմ բանի յոյժ խռովեցան իշ-
խանքն մահմետականք՝ և ասելով զբանն ընդ-
միմեանս, մինչև է հաս բանն յունկն թագա-
որին, որոյ կարի ծանր և դառն թուեցաւ։
Որև հրամայեաց բերել առաջի իւր զմելիք-
ներն, և նախ զղարապաշ մելիքն գտեալ տա-
րանյայնմաւուր, ընդ որում խօսեցաւ արքայ
և ասաց մեղադրանօք և սպառնալեօք։ Մ՚ի
ազգ ապերախտ և չար, արժանի բնաջնջի
և կոտորման, ես ողորմեալ ձեզ ետու զայսքան
գանձ, և զայսքան ամաց շահն եւ շնորհեցի
ձեզ, և խոստացայ այլև շնորհել եթէ դառ-
նայք 'ի հաւատս մեր, և դուք ասացիք վասն
գանձի ոչ դառնամք 'ի մերոց հաւատոց։ և
այժմ զիարդ դարձեալ էք 'ի հաւատն փռան-
կաց և առ ևալէք 'ի նոցունց զգանձ, արդ եթէ
վա՟ գանձի դառնայիք 'ի հաւատոց 'ի հաւա-
տս, զինչ էր նուաստութն և արատ մերոյ
հաւատոյ՝ յոր ոչ դարձայք։ Պատասխանեալ
մելիքն իւրովք ընկերովքն, Մ՚ի հրաշազան և
տիեզերակալ արքայ՝ քաւ լիցի մեզ դառնալ
'ի մերոյս հաւատոյ, ոչ եմք դարձեալ, այլ
կամք 'ի հաւատն մեր որպէս և էաք յառաջն. և
որք զբանս զայս ասացեալք են զմէնջ առաջի
քում տէրութեդ՝ նոքա զսուտ են ասացեալ և
զգանձն զոր 'ի փռանկաց առաք՝ զփոխ առաք,
զոր և բերեալ տուաք 'ի տեղի պարտուցն։
Պատասխանեալ ասաց արքայ, ոչ է հնմա
ըստ խօսքդ ձեր, քանզի պատճառանօք է
փոխդ այդ, զի թէ առուդև փոխ էր՝ յայլոց
ազգաց զիարդ ոչ առնուիք այլ միայն 'ի
փռանկաց։

Եւ թէպէտ 'ի բազում աւուրս բազմա-
կերպիւ խոստացան ժողովուրդքն. այնուհետեւ
բնաւ ոչ եւս զանեղի բանից նց արքայ։ այլ ոչ
նախեքր առաջեալ. սոյնչ եւ այժմ առաջ՝ եթէ
դառնայք յօրէնս մեր յոյժ բարուք առնէք.
զի զորինչ եւ պարտիք զայն ամ շնորհեմ. եւ իմ
այնր բազում եւ այլեւս պարգեւս եւ զձիրս բաշ-
խեմ ձեզ։ ապա թէ ոչ դառնայք. մատնեմ
զձեզ 'ի տանջանս անզերծանելիս. զի իմէջ
տանջանաց վառնեալ սպառեսցին ոգիք ձեր՝
եւ ընդ վայր սատակեսջիք։ Որ եւ իսկոյն մատ-
նեաց 'ի ձեռս դահճաց. զի թարց իմիք ներե-
լոյ հանապազ տանջեսցեն մինչ կամ դառնան
կամ մեռանին։

Եւ այնուհետեւ եկն եւ եհաս իշխն ողորմելի
ժողովրդեանն մեզ՝ մառախուղ եւ խաւարային
փարատելի. զի վաղվաղակի փութացեալ անօ-
րէն դահճացն այսր եւ անդր գտին զամ արս 'ի
ժողովրդենէ անտի. կալան, եւ սկսան յանխնայ
չարչարել. հարկանել եւ վիրաւորել. 'ի կախա-
ղանի եւ յորսայս. 'ի շղթայս եւ 'ի կոճեղս. 'ի
բանտս եւ յարգելանս. սովու եւ ծարաւով
զբազում աւուրս. եւ աղաղակ ժողովրդոցն.
լալ եւ կոծ արանց եւ կանանց ընդ երեար խառ-
նեալ յերկինս հասանէր։

Եւ զզարդապաշ մէլէքն կախեալ գլխիվայր
այնքան բրածեծ արարին որ ոտաց ըղնկունքն
թափեցան. եւ յարենէն ամ մարմինն թաթաւե-
ցաւ՝ եւ եղեւ անշունչ իբրեւ զմեռեալ. վն զի
կարի յաւէտ անողորմ հարին՝ յահ եւ յերկիւղ
միւս քրիստոնէից ըմբռնելոց. եւ ընտանիք
նր տարեալ ծածկեցին իմէջ փայլնի. եւ Պար-
սիկք զօրականքն. որք չարչարէին զժողո-
վուրդսն. վն խաբելոյ զայլ ժողովուրդսն
համբաւ

զհամբաւ հանին· թէ ղարապաշ մելիքն տաճկացաւ։

Իսկ պարոնին որ զայս տ͞մ ածին իւր͞նց՝ իմացան զհաստատութն միտս ն͞ց՝ և ծանեան եթէ մեռանիլ կամին և ոչ դառնալ յօրէնսն մահմետի· այնուհետև բռնութ͞ե իւրայր կոխեալ թլփատէին· և ասել տային զդաւանութիւն հաւատոյն իւրեանց։ և բազումք 'ի քրիստոնէից կաշառս ետուն զօրականացն, և թլփատողացն· և զերծան 'ի թլփատութ͞է։

Իսկ ապա գնացեալ ասացին շահին· թէ ղարապաշմելիքն և իւր ժողովուրդքն կատարեցին զհրամանս թ͞գւրին· զի թլփատեցան, և դաւանեցին զմեր դաւանութ͞ին· և եղեն մուսուլմանք։

Յայնժամ զուարճացեալ շահն հրամայեաց· թէ դոցա ամ͞էցն՝ որք եկին 'ի հաւատս, թողէք զառաջին պարտսն, զորս տալոց էին· զի շնորհեցի։ և այլեւ զպարգեւս նորս այժմ տուք, զի մխիթարեսցին իւ͞ր վշտացն՝ զորս կրեցին։ Իսկ յայնմանէ հրամանէ թ͞գւրին լուծին զն͞ս զամենեսեան 'ի կապանաց· և ետուն ն͞ց զպարգեւս իւրաքանչիւր տան առանձին երեք թուման դրամ։ և առ սոսա այսպիսեաւ կերպիւ վճարեալ զիրակութ͞ի գործոյն, դարձան 'ի տունս իւրեանց։ զի երեկոյացեալ էր օրն։

Իսկ զկնի սոցա էհաս կարգն 'ի զըլխեալան մելիքն՝ և 'ի ժողովուրդս ն͞ր· և յայնմ երեկոյին եկեալ դահճացն կալան զզըլխեալան մելիքն՝ և տարան· որում հրամայեցաւ 'ի թ͞գրէն դարձիր յօրէնս մահմետի· և առ քեզ զպարգեւս, և զմեծութ͞իս, և զպետական իշխանութ͞իս· և մի մատներ անմտաբար զանձն քո տանջանաց և 'ի կեր ագռաւուց՝ և շանց· որև զգազանան

զանձն պատրաստական անդէն կացեալ ունէին։ Իսկ զընխեալան մելիքն եԹէ յաՀարկուԹէ և յամօԹոյ Թագաւորական ատենին՝ և Թէ յերկիւղէ տանջանացն. և Թէ ՚ի պատրանաց խոստմանց. յանձն էառ կատարել զՀրամանս Թագաւորին՝ որ և անդէն իսկ դաւանեցուցին նմա զդաւանութիւն Հաւատոյն մաՀմետի՝ և Թլփատեցաւ։ Իսկ իշխանքն և այլ մաՀմետականքն սկսան գովել զնա և ասել. զայդ բարեօք արարեր՝ զի եկիր ՚ի ճշմարիտ Հաւատս. և խնդրեմ այդ մպարտէ քեզ. զի և զժողովուրդն քո զամենն բերցես ՚ի Հաւատս յայս։ Իսկ զընխեալան մելիքն սկսաւ անխնայ և անդէտ բարբանջելով խօսել. և ըստ խօսին զտէր բանդաարն մատնել։ քանզի ասաց՝ զկարծիս ունիմ Թէ ժողովուրդքն ամենեքին դառնան և ոչ դիմադարձին. և Թէ դիմադարձի բանդաար երեցն միայն. և Թէ նա դառնայ ժողովուրդքն ամենեքին դառնան։

Իսկ մաՀաՀրաւէր լուրս՝ և դառնաՀամբաւ բօԹս այս յայնժամ իսկ երեկոյի էՀաս առ բանդաար երեցն և առ ժողովուրդսն. որք և յաՀէն Հասին ՚ի դրունս դժոխոց։

Իսկ քաՀանայն բանդաար յայնժամ գիշերի զյոյս և զՀաւատ արիականաւ ՀաստատուԹեամբ ժողովեալ առ ինքն. Հաւաքեալ զամենայն ժողովուրդս քրիստոնեայս յաղօԹանոց տունն՝ զոր ՚ի քարվանսարայի անդ սաՀմանեալք էին։ և սկսաւ քարոզել ժողովրդեանն զմարդասէր դԹուԹեն և զողորմուԹիւն ՏՆ զորինչ գիտէր. և յորդորեաց զամենն յաղօԹս և յաղաչանս բազմաՀառաչ և մեծաձայնս ողբովք և աղբիւրս Հոսարտասուօք խնդրել ՚ի ՏԷ Հեշտալոյ և յանոխակալէ. զի դարձուսցէ զցասումն բարկուԹեան սրտի Թագաւորին ՚ի գուԹ ներողուԹեան ընդ-

ընդդէմ նը: և ամբոխն ժողովրդեան մեծ խումբ պաշտ-
պանօք կային մինչև ցառաւօտն յաղօթանոցի
անդ խնդրել ՚ի Տէ գթութ և ողորմութի :

Եւ ինքն բանդատար քահանայն Յերկորեայ
սկսաւ ցուցապաշտօն առաջնորդութե գլխէ-
րային աղօթս կատարել · և անդէն զժողո-
վուրդն խոստովանեցուցեալ մատոյց զնծա-
յին պատարագն՝ հաղորդեաց զարժանաւորսն
՚ի պատուական մարմնոյ և յարենէ Որդւոյն
ԱՅ: Եւ այդ առաւօտուն մինչ յէ. եր բաժա-
նեալ զմուծն և զլոյսն · ամենից աղօթականաց
կարգաց զաւարտումն արարեալ կատարեցին :

Իսկ ընդ լուսանալ առաւօտուն չերշակի
Ձիընթաց արշաւմամբ եկին զինուորք և զօրա-
կանք իբրև զչարդապան պատեցան շուրջ զտէր
բանդատարին՝ քարշեցին արտաքս · և ձգե-
ցին առաջի երիվարացն՝ ընթացմամբ վարէին
փութանակի հասանել ՚ի դիւան Թգւորին ·
Եւ ՚ի հասանելն ՚ի դուռն Թգրին շուրջ զնո-
վաւ պատեալ մարդադէմ գազանքն կրճտէին
զատամունսն · և խրոխտականք բանիւք
ջանային ատամամբք բանցել զմարմին նը :

Իբրև նստաւ Թգրն յատեան · տարան առա-
ջի զտէր բանդատարն · ընդ որում խօսեցաւ
արքայ վն դառնալոյ նմա ՚ի Քնականաց հաւա-
տոցն · և թէ յամառեալ ոչ հաւանիս շանց և
առիւծուց կերակուր լինիս · որ և վն զնն ապա-
ցուցանելոյ անդէն պատրաստական ունէին
զգազանսն :

Եւ անշուշտ խոստումն Տն մերոյ Յսի Քսի
աստանօր կատարեալ ցուցաւ՝ որ ասաց · յոր
ժամ տանիցեն զձեզ առաջի դատաւորաց և
Թգւորաց՝ մի հոգայցէք · և մի զմտաւածիցէք
թէ զինչ պատասխանի ձեզ խօսել. զի տացի ձեզ

բան

բան և իմաստութեն 'ի ժամուն յայնմիկ՝ զոր ինչ պարտիցէ խօսիլ. զի ոչ եթէ դուք իցէք որք խօսիցիք, այլ Հոգին Հօր ձերոյ խօսեսցի 'ի ձեզ։ Որով տուեալ պատասխանի բաղդասար քահանայն Թէոդորին՝ և ասաց։ եթէ ասես ինձ իմոք կամօքս դառնալ յիմոցս հաւատոց ես կամօք իմօք ոչ դառնամ։ և թէ բռնութեամբ դարձուցանես. ոչ է այդ հրամայեալ քեզ օրինադիրն քո։ և թէ վասն պարտուցն քոց ասես և խնդրես. զյոլովս տուեալ եմք. և որինչ մնացեալ է. զայն ևս այսօր և 'ի վաղիւն վճարեմք։ Եւ զորօրինակ ջուր ցուրտ հեղեալ իմէջ եռանդնոտ կաթսայի. նոյնժամայն նստուցանէ զնորին փրփրալի եռանդն. այսպէս բանք տեառն բաղդասարին ցածոյց զբարկութիւն Թէոդորին։ որոյ պատճառէ այլ ոչինչ ասաց արքայ. բայց միայն զայս՝ թէ գնացեալ տուր զմնացեալ պարտսն քո։

Իրդ. Տէրն Քն որ ասաց՝ ուր երկու և երեք ժողովեալ իցեն յանուն իմ, անդ եմ ես իմէջ նց։ նոյն ինքն և այժմ ևս նայեցաւ 'ի ժողովս նց. և 'ի ցայգաշպաշտօն արտասուալի յաղօթս նց. և ցածոյց զբարկութիւն Թէոդորին. յորմէ զերծան տէր բաղդասարն և ժողովուրդքն յերկուց վտանգից, 'ի տանջանաց և յուրացութենէ։ այնուհետև վճարեցին զմնացորդս պարտուց Թէոդորին։ ետուն զգիր ազատութեան. և գոհանալով զԱծ կային խաղաղութեամբ։

Իբրև այս ամ կատարեցաւ իմերոյ ժողովրդոցն՝ որք զմասն ինչ 'ի նոցունց և զմէլիքներն դարձուցին 'ի դաւանութիւն մահմետի։ այնուհետև վերոյ ասացեալ Փռանկ եպսն եկեալ առ Թէոդորն շահաբաս ասաց։ ունիմ ընդ քեզ դատաստանս խօսք ինչ. զի դու խնդրեցեր

զտուեալ

զտուժեալ պարտս քո ի Հայոց. եւ նոքա զոչինչ ունէին զի տուժեալ վճարեսցեն. եւ եւս վասն Քրիստոսի ականաց հաւատոցն ետու նոցա դրամ զի տայցեն ի պարտս քո. եւ կացցեն ի Քրիստոնէական հաւատս. զոր եւ ընկալեալ ետուն քեզ եւ վճարեցին ըզպարտս քո: Իսկ դու յետ առնլոյ զդրամն ոչ թողեր ի հաւատս Քրիստոսի. այլ դարձուցեր ի հաւատն ձեր՝ որով հետեւ այսպէս արարեր. իրաւունք դատաստանին վկայեն վասն իմոյ տուժեալ գանձին առ ի դառնալ. արդ խնդրեմ յարքայէ զի զգանձն իմ առ ի դարձուսցէ: Իսկ Թագաւորին մտախոհ եղեալ եւս զի իրաւամբք էր բան եպիսկոպոսին. զերկու հարիւր թումանս դրամն դարձուցեալ առ եպիսկոպոսն վճարեաց նմա:

Իսկ զարապաշ մելիքն եւ ժողովուրդքն՝ զորս բռնութեամբ դարձոյց շահն յօրէնս մահմետի. այն միայն էր զի յատենի անդ աստյին զդաւանութիւն տանկոյ. զկնի այնմիկ այլոցի կային խիղճ մտականաց հաւատոյ. եւ եւս առաւել հաստատուն քան զառաջինն, զի խղճմտանաց ուրացութեան: Քանզի զողջայն մկրտեցին. զմեռեալն քահանայիւք թաղեցին. եկեղեցին հանապազ գնացեալ աղօթէին՝ եւ խոստովանեալ հաղորդէին. եւ մահմետականացն ոչինչ փոյթ էր նոցին այսպէս առնելն. որոց զկնի որդիք նոցին ամենքն քրիստոնեայքն են այժմ եւ ի ժողովուրդս քրիստոնէից բնակեալք:

Իսկ խղճմտանք զրկեալան մելիքին առաւել սաստկեալ յանդիմանեաց զնա. որ եւ զկնի ամաց ինչ անցանելոյ. էառ զկին իւր իրէք ինչ պատճառանօք թէ գնամ ի Թաւրէզ. եւ անցեալ զայնու գնաց յԷջմ, կատարեաց զնմ ուխտ անօրինականացն Քրիստոսի: եւ մնացին անդ

էն ինքն եւ կինն իւր ։ եւ վասնզի արուեստիւ
քարագործ էր․ վասն որոյ եհան գործեր ա-
ռանց վարձու․ այն ունելով 'ի Տէ վարձուցն
հատուցման զամ ժամանակս կենաց իւրոց՝
զորս եկեաց․ եւ անդէն 'ի քաղաքին յետ վախ
ճանեցան․ եւ Թաղեցան ղրխեալան մելիքն եւ
կինն իւր․ որոց արասցէ Տէն Ա՟Ծ՟ զներումն եւ
զԹողութիւն իւրով անբաւ ողորմութեն՝ ամէն։

---

Մխսակ պատմութիւն նեղութեանց՝ զորս կրեցին ազգն Հայ
ոց յառաջնոյ շահաբաս Թագաւորէն ,

## ԺԴ

## Ի ՆԵՂՆԻ ՅԱՌԻՈՒՐՍ

ժամանակաց՝ յորում ամի էր Թոմա
կանն մեր հազարեւվաթսունեւէինն, զի
Թագերն շահաբաս մեծն եւ առաջինն, եկեալ 'ի
քաղաքն ասպահանու գնաց յերկիրն փարե
ոյ եւ 'ի բուրվարի, յորում զազգն Հայոցընա
կեցուցեալ էր։

Սա զի սովորութիւն էր այս շահաբասիս զի
երբեմն այլակերպեալ զինքն ձեւանայր իբրեւ
զմի 'ի զօրականաց՝ եւ գնայր 'ի տեղին ուր գնա
լոյ էր, եւ ըստ այսմ սովորութեան յայսմ նուագի
եւս արար, զի ինքն միայն եւ իւր յառաջ ընթաց
փայեկն, նախ քան զամենայն զօրսն եկին յառաջին
գիւղն երկրին փարիոյ՝ զոր դարբնի գիւղ ա-
սեն։ Որում հանդիպեալ կին ոմն 'ի նոյն գեղ
ջէն, եւ կինն ոչ գիտէր զնա Թէ շահն իցէ, խօ
սեցաւ շահն ընդ կնոջն եւ ասաց՝ եթէ ունիս
զհաւ վաճառելոյ՝ բեր առ իս զի գնեցից։ իբրեւ
էբեր կինն զհաւն, եւ 'ի պատճառէ հաւին
զբաղում խօսս եւ զբանս առաջ արկեալ փորձ
'ի փորձ ընդ կնոջն, խօսէր զնանրութիւն եւ 'ի

սիրտս իւր ժողովէր զանօրէնութիւն. Այս 'ի կարգս խօսիցն ասաց շահն, զտան փող տամ քեզ 'ի գինս հաւիս՝ և թէ դու սիրես զշահն տուր մեզ զհաւս. և կինն ասաց՝ զինչ լաւագոյն բարիս և զերախտիս տեսաք մեք 'ի շահէն՝ որ վասն սիրոյ շահին տաց քեզ զհաւս. Այս շահն ասաց՝ զինչ այլևս բարիս արասցէ ձեզ շահն, զի յայսպիսում լաւ և վայելուչ երկրի բնակեցուցեալ յապահով պահէ զձեզ յամենից նեղութեանց. և քաղցրութեամբ, և գթով վարի ընդ ազգիդ ձերում. և կինն ասաց, երանի թէ ոչ էր բերեալ զմեզ՝ զի վտարանդի արարեալ էհան զմեզ 'ի նախնեաց աշխարհէն մերմէ, 'ի բնիկ տեղեաց, և 'ի հայրենեաց ժառանգութեանց, և բերեալ աստէն յօտար աշխարհի բնակեցոյց պանդխտութեամբ.

Իսկ այս բան կնոջն իբրև զերկաթի սուր պատահեցաւ 'ի սիրտս շահին, վասնզի կարի ծանր և դառն թուեցաւ նմա, մինչև 'ի սիրտ և 'ի յոգի խոցեալ լինէր, և յառաւել բարկութենէն լռեալ կայր՝ և ոչինչ խօսէր. և 'ի ժամս յայս եկին և հասին առ շահն նորին նախապատիւք և փառաւորք նախարարքն, Սպանդիար բէկն և այլք, և 'ի տեսանելն զնա այնպէս զայրագին բարկութեամբ լցեալ զոչինչ խօսեցան, այլ լռեալ կային 'ի բացեայ.

Այս աճապայր, և անցանէր առ նոքօք երէց դեղջն այնմիկ՝ որոյ անունն էր տէր աւետիս. որ 'ի հողագործութենէ անդին եկեալ գնայր 'ի տուն իւր. իբրև ետես զնա շահն կոչեաց առ ինքն՝ էհարց, թէ ինչ մարդ ես, ասաց երէցն՝ քահանայ եմ՝, ասաց շահն՝ և զի՞ վասն երկայն է մօրուսդ, ասաց երէցն, գեղիս երէցն եմ. ասաց շահն՝ եկ մուսուրման եղիր, ասաց էր-

էցն,

էցն, ես այր գուեհիկ եմ, և մանաւանդ ծերացեալ եմ, և ոչ կարեմ կատարել զարարողութիւն մուսուլման օրինաց։ Եւ զայրագին սրտմտութին Թգւրին կարի յորդեալ առաւելաւ՝ որև ոչ հանդուրժեալ ՚ի բարկութենէ իւրմէ շահն, այլ էառ ՚ի ձեռաց փայեկին զկացնակն, որ է նաջախն՝ և նովաւ ուժգին բախմամբ եհար զգլուխ երիցոյն և կարի պատառեաց։ Որոյ վերայն և բախմանն չհանդուրժեալ տևել երիցոյն, այլ ուշաթափ եղեալ անկաւ անշնչացեալ իբրև զմեռեալ։ Եւ ՚ի սաստիկ բարկութենէ իւրմէ շահն անդէն ՚ի նմին ժամու հրամայեաց մերձակայիցն Թլփատել զնա, որ և վաղվաղակի Թլփատեցին, Թէպէտ երէցն իբր զմեռեալ անզգայ էր։ Եւ Թողեալ զերէցն այնպէս ինքն անցեալ գնաց ՚ի բանակետղն ՚ի վրանն իւր։

Եւ այնուհետև բարձաւ գութ և ողորմ ՚ի սրտէ Թգւրին ընդդէմ Հայոց, և կոչեաց առաջի իւր զվէզիրն, ընդ նմին և զշէխն, որոյ անունն էր միր աւդուլայ, և հրամայեաց նց զօրականօք մտանել ՚ի գաւառս յայնոսիկ, և ծագէ ՚ի ծագ տաճկացուցանել՝ և Թլփատել։ Եւ որք կամօք և յօժարութբ հնազանդեսցին բարւոք է, և որք ոչ հնազանդեսցին, տանջանօք և բռնութբ Թլփատեսցեն, և դարձուսցեն ՚ի կրօնս մոլար առաջնորդին։ բազմօք սաստիւք և սպառնալեօք զպատուէր տուեալ նոցա կատարել զամն հրամանս իւր, և ինքն դարձեալ ՚ի փարիզ եկն ՚ի քաղաքն ասպահան։

Եւ յայսմանէ հրամանէ Թգւրին հալածումն մեծ եղև ի վր Հայոց, զի Թողեալ զտունս և զընտանիս, և զինչս, և ելեալք ցրուեցան իւրա

քանզի ուրք հանդէպ երեսաց նորա, 'ի լերինս և յանապատս, և յանմարդաձայն տեղիս: և բազումք գնացեալք 'ի հեռաւոր գաւառս, փոխեալ զանուանս և զձևս, և այնպէս կային անգիտելի ումեք: Եւ ոմանք 'ի նոցանէ զբազում աւուրս քաղցեալ և սովալլուկ լեալ Թափառական շրջէին 'ի լերինս. և ոչ կարէին 'ի շէնս մտանել՝ կամ ումեք երևիլ, վն̃ ահի Թագաւորին և Թլփատողացն:

Եւ իշխանքն, որք կարգեցան Թլփատողք՝ մոլին ի գաւառան, և զօրս գօտին, սաստիւ և սպառնալեօք տանջանաց՝ և բռնութբ̃ զամենեսեան Թլփատեցին, եԹէ աշխարհական և Թէ երէց:

Սաստկացելում օրինակի առնելով հասին 'ի փառաչիս գեղն, և անդ ևս կատարեալ զգգործս ներեանց անօրէնութե̃: Եկեալ անտի կամէին գնալ 'ի գեղն փահրան, և տանուտէր գեղջն փահրանու՝ որոյ անուն էր Նուրիջան, տայց ընդ նորում գեղականացն: Եկայք զինուորեսցուք և միաբանութբ̃ զդէմ կացեալ պատերազմեսցուք ընդ այլազգի Թլփատողացն. և մի Թողուցուք մտանել 'ի գեղս մեր, և գեղականացն ոչ լեալ միաբան և ընկերնմին, այլ փախուցեալք ցրուեցան 'ի լերինս: Իսկ Նուրիջանն ինքն միայն ածեալ զիւրեաւ ուսանր, և առեալ զկին և զաղէղն, և գնացեալ զկէս Ճանապարհին, և եկեալ 'ի գլուխ փոքր և բոլորակ բլրի միոյ, առ որոյ ստորոտովն Ճանապարհն անցանէր: Եւ Թըլփատողքն եկեալք 'ի փառաչիշոյ յուղևանկեալ գնային 'ի փահրան, իբրև մերձ եղեն առ ստորոտս բլրին, և ահա յանկարծակի ահագին գոչմամբ զձայն արձակեալ Նուրիջան՝ և յիւր

ում

ում դարանեալ տեղւոջէն սկսաւ նետաձիգ-լինել առ նոսա, և այնպիսեաւ նետաձգութե̃ արգել՝ և կացոյց զնոսա 'ի գնալոյ ։ և ապա արտաքս եկեալ 'ի դարանէն առէպ նետաձգութբ̃ և հալածական առնելով յետս դարձուցեալ անդրէն 'ի փախչիս ելից իմէջ գեղջն, և ինքն դարձաւ 'ի գիւղն իւր 'ի փահրան ։

Իսկ Թլփատողքն՝ որք դարձան 'ի փախչել կացին մինչև ցերեկոյն, և ապա առաքեցին լրտես գիտենալ թէ ուրանօր իցէ Նուրիջանն, և լրտեսն եկեալ պատմեաց թէ յիւրումն տան կայ աւանիկ։ Յայնժամ ամենից Պարսիցն սպառազինեալք զգիշերայն եկեալք գնացին 'ի փահրան՝ և պատեցին զտունն Նուրիջանին, և կալեալ կապեցին զնա, և 'ի լուսանալ աւուրն արկին յօրսայս և սկսան բրածեծ առնել զնա, և այնքան հարին որ ամենևին ողջ անդամ ոչ մնաց 'ի մարմնի նր̃՝ և եղև իբրև զմեռեալ, որ և անդէն առժամայն թլփատեցին և ապա 'ի բացկացին 'ի նմանէ ։ Իսկ գեղականն կանայքն տարեալ թաղեցին ի մէջ փայտնի մինչև ցերիս աւուրս, և մնաց Նուրիջանն այնու ցաւով հիւծեալ մարմնով յանկողնի ամիսս չորս, որոչ կարէր կանգնիլ իւր̃ ոտից ։

Իսկ այսպէս թլփատողք իշխանքն շրջեցան յերկոսին գաւառսն, 'ի փարիայ և 'ի բուրվարի, զորս և գտին թլփատեցին թէ աշխարհական և թէ երէց, և 'ի զրաւել ա̃մի դարձան յասպահան քաղաք՝ և պատմեցին թգ̃ւորին ։ Իսկ շահն հրաման արար վն̃ թլփատեալ երիցանցն թէ յարքունականն գանձէ իւրաքանչիւրոյ երիցու տացեն զքառասուն ոչխար, և արարին այնպէս ։ Շահն զայս ոչխարքս վն̃ այն ետ երիցանցն, զի ոմանք յերիցանցն ագահեալ

յինչս հեշտասցին այնու որօք . և մի գրգռես ցեն զժողովուրդս իւրեանց դառնալ 'ի տաճ կութն ։ և ոմանք , որք կերեալք և վատնեալք իցեն , յերկիւղէ վճարելոյն կացցեն 'ի տաճկու թեան ։

Յետ այսորիկ խորհրդով նախաչարին լցեալ շահն . առաքեաց այլևս զկիզխանս զօրականօք . և հրամայեաց նոցա գնալ յերկոսին գաւառսն . շրջել յամենայն գեղօրայս , և ըմբռնել զամենայն երիցունս՝ և սպառնալեօք ահացուցանել զնս . և առնուլ զուխտ և զպայման՝ 'ի բերանոյ նց . զի մի պահեսցեն զգիրս ինչ 'ի գրեանց իւրց . և թէ իցէ ոք , որ պահեալ իցէ . և որ ոք զայն յայտնեսցէ . գլուխն պահողին թգրական եղի ցի . և ամն ինչք և ընտանիքն ցուցողին եղիցին ։ Զայս հրամանն առեալ զօրականացն գնացեալ շրջեցան յերկոսին գաւառսն . զգրեանսն և զեկեղեցական անօթսն՝ զորս և գտին՝ բռնու թէ յափշտակեալ 'ի քրիստոնէից . և առեալ բերին յասպահան քաղաք՝ և ծանուցին շա հին . և շահն տայր պահել զամ ։

Զկնի այսորիկ առաքեաց շահն զբազում մօլլայ յազգէն Պարսից 'ի փարիայ և 'ի բուր վարի . զի անդէն կացցեն , և զօրէնս մահմե տի ուսուսցեն Հայոց . և ժողովեսցեն յամ աւ ուր 'ի մզկիթ առ 'ի յաղօթել . և զմանկունս քրիստոնէից պարսկերէն կարդացուսցեն ։ Իսկ մօլլայքն եկեալ ցրուեցան 'ի գեղօրայս գաւա ռացն ուր երկու և ուր երեք . և բռնաբարէին զքրիստոնեայսն գալ 'ի մզկիթ՝ և մտանել յօ րէնս մահմետի մօլար առաջնորդին ։ Իսկ քրիստոնէիցն դժուարեալ էր այն ոչ հնազան դէին . այլ դիմադրաւեալ բանավէճ լինէին . և օր աւուր առաւելեալ 'ի վէճս և 'ի բանս

այն

այնքան. մինչ զի 'ի մօլլայիցն զերիս և զչորս սպանին. և զայն տեսեալ այլոց մօլլայիցն որ մնացեալք 'ի սպանմանէն փախստականք եղեն ամենեքեան՝ և գնացին 'ի տեղիս իւրեանց : Եւ ողորմելի քրիստոնէիցն կացեալ 'ի հալածանս և 'ի չարչարանս 'ի ձեռս Պարսից զամս երկու :

Եւ ապա այր ոմն քրիստոնեայ՝ անունն Գրիգոր. որ էր նախկին նա 'ի Վայոց ձորոյ՝ զոր Եղեգաձոր ասեն, 'ի գեղջէն Արփայու. և այժմ 'ի գաւառին Փարիոյ գոլով՝ բնակէր 'ի գիւղն զոր Ներքին Խոյնկան ասեն : և էր սա մարմնով պարթև. ահաւոր և յաղթանդամ. և սրտինւոր, բանիւք և խելօքն հանճարեղ. և հաւատով և սիրով Ք՟ի հաստատ և ջերմագոյն : Այս Գրիգոր ելեալ շրջեցաւ 'ի գեղօրայս գաւառին՝ և քաջալերեալ յորդորեաց զամ՟ն ժողովուրդն և եղև գլուխ և առաջնորդ ն՟ց. էառ ընդ իւր զարս եօթն և եկն 'ի քաղաքն Սպահան : և գնացեալ էառ զբաղում գանձս 'ի փոխ և բերեալ ետ իշխանաց շահին կաշառս. և հաւանեցոյց զամենեսեան զի 'ի պատեհ ժամու բարիս խօսեսցին վ՟ն ն՟ց առաջի թ՟գւրին :

Ապա ինքն գրեաց զարզայ աղաչանաց և մատոյց առ թ՟գրն՝ ոչ թէ միանգամ կամ երկիցս. այլ հնգիցս և վեցիցս. այնքան խօսեցաւ յատեան և 'ի դիւան թ՟գւրին մինչև ձանձրանալ թ՟գւրին և ասել՝ թողի զձեզ 'ի կամս ձեր. գնացեալ պաշտեցէք զհաւատն ձեր, և Գրիգոր աղաչէր, պաղատէր, 'ի ծունր իջեալ լալով խնդրէր 'ի շահէն՝ և ասէր. թէ զհրամանագզոր բանիւ ասես. մատամբ միով թղթիւ շնորհեա մեզ :

Եւ յաւուր միում յորում շահն ելեալ յապարանից իւրոց գնայր 'ի Հազարաջրիպ այգին.

հնգանգամ ելեալ առաջի շահին զնոյն թուղթն խնդրեաց. յորոյ անձանձիր խնդրոյն ձանձրացեալ շահին, գրեալ զնոյն թագաւորականաւ կնքով ետ ցգրիգորն. թէ զհրամանս ետու ամենից քրիստոնէից բնակելոց 'ի գաւառին փարիզ և 'ի բուրվարու՝ զի համարձակ պաշտեսցեն զքրիստոնէութեն հաւատն իւրեանց։

Այլև յետ այսորիկ խնդրեաց գրիգորն 'ի շահէն. զի զայցելութի արարեալ ողորմեսցի թգ̃ւրն. և շնորհեսցէ նց̃ զիւրեանց գրեանսն, զորս յափշտակեալ բերեալ էին. և զայն ևս շնորհեաց նց̃ արքայ։ Իսկ գրիգորն և ընկերքն իւր առեալ զթուղթն և զգրեանսն իւրեանց ուրախութեամբ գնացին յերկիր և 'ի ժողովուրդ իւրեանց։

Յաղագս պատճառի այսմիկ թգ̃ւրն շահաբաս էարկ զտուգանս իւր քրիստոնէիցն ասելով, որովհետև ոչ հնազանդեցան հրամանաց թգ̃ւրի, տացեն զտուգանս 'ի դիւանն թգ̃ւրի հազար թումանն։ Իսկ յերևելի իշխանաց իւրոց առաջակայից զոմն՝ զոր խոսրով սուլթան կոչէին, կարգեաց վերակացու՝ զի առեալ 'ի ժողովրդենէն յանձնեսցէ 'ի գանձապահս թգ̃ւրին։ որև ելեալ խոսրով սուլթանն բազմօք զօրականօք, արար և կատարեաց զհրամանս թգ̃ւրին։

Իսկ ողորմելի քրիստոնեայքն վն̃ քն̃ականաց հաւատոցն, զայս հազար թումանս, և զայն պարտքն՝ զոր գրիգորն և ընկերքն իւր 'ի սպահան արարին. և այլև զորինչ ծախք լեալ էին զնմն վճարեալ հատուցին, և եղեն չքաւորք՝ և աղքատք կարի յոյժ, բայց կալով 'ի հաւատս Քի̃ ուրախեն՝ ևգոհանային զՏէ̃ Այ̃։

Իսկ գրիգոր այրս այս օրհնութեր յաւելոյր 'ի հաւատս

հաւատս եւ 'ի բարեգործութիւնս, նաեւ հաստատէր զայս իւրն հաւատոցն Քրիստոսի եւ նախանձախնդիր լինէր վն̃ քն̃ականաց օրինաց: առ որ նախանձաբեկ լեալ արեւնարբու մահմետականաց, եւ զրպարտեցին 'ի մահ զԳրիգորն՝ քանզի զամն մահմետական յիւրեանց ժողովրդենէն ինքեանք սպանին, եւ բերեալ 'ի ծածուկ արկին յանդն Գրիգորին, եկին դատախազք եւ բերեալ կացուցին զսուտ վկայ թէ Գրիգորն սպանեալ է զայս մեռեալս: Իսկ առեալ տարան յանուղղայ դատաստանն իւրեանց առաջի դատաւորաց, որոյ վն̃ զվճիռ հանին թէ որովհետեւ զայդ արարեալէ դորա՝ կամ ուրասցի, կամ սպանցի: Եւ այսու զրպարտութեամբ դատապարտեալ սպանին զքն̃ասէր զայրն Գրիգոր: Եւ բազումք վկայեցին վն̃ նր̃ թէ Տն̃ փառաւորեաց զնա երկնաւորօք նշանօք լուսոյ երկնից, որում տացէ Քն̃ զխոստացեալ արքայութիւն իւր, եւ զմեզ եւս ընկալցի 'ի մասնակցութիւն սր̃ց իւրոց իւրով ողորմութեամբ Ամէն:

---

Վասն էր՞ գոյ ուխտաւորաց քաղաքս յաշխարհին, որ Փահրապատն կոչի:

## ԺԸ:

ՍԱԿԱՅՆ ՇԱՀԱԲԱՍ առաջինն. յոյժ սիրեաց զքաղաքն Փահրապատ. վն̃ որոյ յամենից աշխարհաց ժողովեաց զժողովուրդ եւ եած անդ՝ որ̃ զի մեծասցի քաղաքն: եւ ինքն որքան լինէր յապահովս 'ի թշնամեաց պատերազմէ զձմեռնային ժամանակս անդ դնացեալ անցուցանէր: Իսկ ըստ հանապազորդ սովորութեան իւ[րո]յ շահաբաս, որ գնայր 'ի Փահ

բարպատ· եղեւ երբեմն մինչ գնայր եկեալ եհաս 'ի սահմանս ղաղղին. քաղաքին 'ի գաւառն՝ որ սաի Թարիմ· 'ի գիւղն՝ զոր կոչեն խոռամաբատ· և անդ իջեվանեալ բանակեցաւ բանակն արքունի ։

Իսկ ինքն շահաբաս ըստ համապազորդ սովորութեն իւրոյ՝ որ այլակերպեալ զինքն ձեւանայր որպէս զմիոք 'ի զինուորաց՝ և գնայր իմէջ արանց և ժողովրդոց իմանալ և գիտել զբան ինչ ։ այսպէս առնէր և յայսմ նուագի· զի ինքն և իւր փայեկն յառաջքան զամենն զօրսն եկին 'ի խոռամաբատ ասացեալ գիւղն իբրև զմիոք 'ի զօրականաց հեծելոցն· եւտես 'ի գլխաւորաց գեղջն զարս ոմանս, որք կային 'ի փողոցն՝ և ընդ հարկահանաց իշխանացն հոգային ըզ հոգս կարեաց արքային՝ և այլոց իշխանաց ։ խօսեցաւ ընդ նոսա շահն և ասաց· ես և ձիս և փայեկս միայն եմք՝ և ոչ եմք յոլովք զի ծանրաբեռն թուիցուք ձեզ· խնդրեմ 'ի ձէնջ վն սիրոյ շահին տուք մեզ զտեղի յայսմ գիշերի· իսկ արք գեղջն զոչինչ կալան փոյթ զնորին բանեն· քանզի հոգովք թերկանաց կարեացն պատաղեալք էին ։

Այս կին ումն բազմամեայ պառաւ, որ 'ի նոյն գեղջէն էր՝ ասաց առ շահն· եկ որդեակ՝ եկ զի երթիցուք 'ի տուն մեր՝ և լեր մեզ հիւր· և առեալ կինն զշահն և տարաւ 'ի տունն իւր· եկաց անդէն շահն մինչև ցերեկոյ ։ Իսկ ընտանիք պառաւին ամենեքեան մեռեալք էին՝ և ունէր միայն զմի որդի՝ որոյ անունն էր լալոյ, և այնևս վասն կարի աղքատութեն իւրոյ նախըրորդ էր մտեալ գեղջն· և ընդ ժամանել երեկոյին· լալոյն բերեալ զնախիրն էած 'ի գեղն , և ըստ սովորութեն իւրում '[illegible]տանց գեղջն սկսաւ

սկսաւ ժողովել յիւրաքանչիւրոցն զմի մի հաց.
և ժողովեաց զտասն և հինգ հաց՝ զորս ունէր
ի լր̃ բաղկաց իւրոց և եբեր 'ի տունն իւրմ̃.
իբրև ետես թէ հիւր կայ 'ի տանն զա̃մն հացն
բերեալ էարկ առաջի հիւրին, որ էր շահն ինքն ։
Իսկ պառաւն բացեալ զթոնիրն էհան պուտ
կով եփեալ կորկոտապուր՝ զոր ոմանք վլօշ
անեն. և շահն այն հացովն էկեր զայն կերա
կուրն. խօսեցաւ և հարցումն արար ընդ նմ̃
զբանս բազումս. և յերեկոյին 'ի մթանալ գի
շերոյն ելեալ գնաց 'ի տեղի իւր ։

Յետի չուեալ շահն գնացեալ էհաս 'ի փահ
րապատ. և յորժամ դարձաւ 'ի փահրապա
տայ, և էհաս 'ի նոյն գեղն՝ վերստին այլակեր
պեաց զինքն՝ և խնդրեաց զիջեվանս 'ի գեղա
կանացն՝ և ոչ ետուն ։ Իսկ նոյն պառաւն
դարձեալ եկեալ առաջի նր̃ ասաց. դու մեր
ես ծանօթ և հիւր՝ որդեակ՝ եկ և այժմ զի եր
թիցուք 'ի տունն մեր. և գնաց շահն 'ի տունն
պառաւին. և պառաւն կերակրեաց զնա ըստ
օրինակին ոմ̃ և նախ պատմեցաք. մնաց անդէն
շահն մինչև յերեկոյն՝ զբազում բանս՝ որինչ
ունէր 'ի մտի, էհարց 'ի նոցանէ ։

Ապա ասաց շահն ցնոսա. բան ինչ կամիմ
հարցանել 'ի ձէնջ թէ սիրէք զշահն զստոյգն
ասացէք ինձ. ահաւասիկ այս տունս ձեր յոր
ում նստեալ եմք. ինքն և որք զիւրև յարկք
են լայն և ընդարձակ և մեծաշուք երևին. սոյն
պէս և ձեր խօսք՝ և բանք՝ և շարժմունք իբր
զմեծատան երևի. բայց տեսանեմ զձեզ կարի
չքաւոր՝ և զտունս բնաւին դատարկ ։ զսո
րին պատճառն խնդրեմ, զստոյգն ասացէք ինձ ։

Իսկ պառաւն յոգւոց հանեալ հառաչեաց
մեծապէս՝ և սկսաւ ասել. տեսանես որդեակ
զայս

զայս ա̃մ ստոյգ է ասացեալն 'ի քէն. թէ տունս, և որք ընդ սովաւ յարկք են մեծաշուք երևին. ստուգիւ էաք մեծատունք և ընչեղք, որ բազումք կարօտեալք և պանդխտականք այս տամբքս հովանաւորեալք ապրէին. և չքաւորք, և աղքատք սովաւ լինէին ստացուածոց և գոյից տեարք. և ունէաք ջոկով զոչխարս, զհաւար և զհինգհարիւր գլուխս. և զերամակս մատակ ձիոց. և զբազում անդեայս զեծկան և զկթան. զարտ, և զայգի, և զջրաղաց. զոսկի և զարծաթ. և զտան կահս և զկարասիս յոլովս. և այն ա̃մ մերժեալ 'ի մէնջ գնաց՝ և ոչ մնաց և ոչինչ. քանզի զմասն ինչ վաճառեալ տուաք յարքունական հարկն. և զմասն ինչ վաճառեալ տուաք պարտատուաց: և զմասն ինչ 'ի պէտս կարեաց մերոց՝ և եղեաք յոյժ չքաւորք: և յետոյ այրն իմ և իւր եղբարքն, և այլք ընտանիք, և որդիք նոցին ա̃մքն մեռան. և մնացեալք եմք ես և որդիդ իմ. որոյ մերձ է գոլ երեսնամեայ՝ և վն̃ աղքատութեն ոչ կարեմ ածել դմա զկին. և յայլմէ ուստեքէ ոչ ունիմք ապրելոյ զճար. վն̃որոյ զորդիս իմ արարի նախրորդ գեղիս. որ յա̃մ երեկոյի ժողովեալ զհաց վարձու իւրոյ բերեալ կերակրիմք ա̃ղ և տեսեր. և այսպէս անցուցանեմ զաւուրս իմ սպասելով մահու՝ զի թերևս հանգուսցէ զիս 'ի տառապանաց իմոց:

Զարմանք մեծ կալաւ զշահն խլերայ ասացեալ բանից պառաւին. բայց ասաց շահն, զայդ զոր ասացեր. թէ այրն իմ և ա̃մքն ընտանիքն մեր մեռան. այդ 'ի ձեռսն Ա̃յ է՝ զի նա պահէ և մեռուցանէ: այլ վն̃ ձերոյ ընչիցն զոր ասացեր թէ գնաց 'ի ձեռաց մերոց՝ և եղեաք չքաւորք. սորին զինչ է պատճառն:

Ասաց

Լսաց պատուան ոչխարի քօղան է․ զոր թագաւորական հարկահանքն եկեալ ոչխարոց գքօղաւ առնուն․ զի տարեաց տարի գնալով զկնի միմեանց՝ որքան գնաց, ծանրացաւ քօղան․ և այնքան ծանրացաւ, որ զնոյն ինքն զոչխարուն զոմ վաճառեալ տոմսք 'ի քօղան․ և այնու ոչկարացուք զերծանիլ․ զպարտս ես առաք և տոմսք գքօղաւ․ և ապա զինչս և զատացուածս որ աւուր վաճառելով․ զորս 'ի քօղան տոմսք, և զորս պարտատերացն վճարեցաք՝ ոչինչ մնաց․ քան զի կարի յոյժ ծանր է հարկ քօղանին։ և զայս ոչ գիտէ արքայն, և նորին նախարարքն՝ այլ գրեն զորքանութի քօղանին և տան 'ի ձեռս զօրականաց․ և նոքա եկեալ թէ կամաւ և թէ յակամայ բռնութեամբ առնուն, ասելով․ 'ի դիւանէն թուղթն այնպէս գրեալ՝ և տոմսեալ՝ և հրամայեալ եղև մեզ․ վասն այսպէս առնումք և ոչ պակաս․ զի թէ պակաս առնումք մեզ տան վճարել զպակասն՝ ասելով թէ դուք գողացեալ էք։ Նաև յայսմանէ պատճառէ չքաւորեցաք․ ոչ միայն մեք զոր տեսանես․ այլև բազումք մեծատունք այսպէս եղեն․ ոմանք 'ի մեր գեղջէս՝ և այլք յայլոց գեղորէից գաւառիս։ որև սկսաւ պատուան զայնոսիկ զամենեսեան յանուանէ յիշել։

Լսաց շահն՝ ընդէր ոչ գնան գիտուն և ճարտարախօս մարդիկք յաշխարհէս ձերմէ՝ և ծանուցանեն շահին․ և ես գիտեմ յորժամ վերահասու լինի շահն այդոցիկ՝ բառնայ զծանրութի հարկիդ այդմիկ․ քանզի շահն աշխարհաշէն թագաւոր է՝ և ոչ կամի թէ ումեք զրկանք լինի։ Լսաց պատուան բազումանգամ գնացեալ աղաղակեցին․ այլ ոչ կարացին հանել 'ի դիւանականաց մատենից զորքանութի քօղանին․

ին ։ Իսկ մնաց շահն 'ի տուն պառաւին մինչև ցառաւօտն. և յառաւօտուն 'ի մթին ժամու ելեալ գնաց 'ի վրանն իւր ։

Իսկ յետ աւուրց ինչ առաքեաց զքննիչս յերկիրն յայն՝ զի զա̃մ ողջութի աշխարհին գիտասցեն ստուգութ̃ք. որոց գնացեալ տեսեալ՝ և եկեալ պատմեցին շահին թէ կարի առաւել նեղուե̃ միջի կան բնակիչք աշխարհին այնորիկ վն̃ պէսպէս պատճառի. և մանաւանդ վն̃ քօդաւին ։ որով գտաւ իրաւ գող ա̃մ անցեալն 'ի պառաւէն յայնմանէ ։ Իսկ այս եղև պատճառ զի անկաւ գութ և ողորմ 'ի սիրտ շահաբաս թ̃գւորին՝ որով և էբարձ զքօդաւն՝ ոչ միայն 'ի ղազբինու աշխարհէն. այլև յա̃մ արաղըստան աշխարհէ՝ ոչ գոյ այժմ քօդաւ յա̃մ աշխարհ, որ արաղստան անուանի ։

Այլև առաքեաց զիշխանս 'ի գիւղն խօսամապատ. առ 'ի սպանանել զայրսն, որք ոչ ընկալան զնա. և առ ինքն ածել զպառաւն, և զորդին իւր զլալայն. և իշխանն գնացեալ արար ըստ հրամանաց շահին՝ զի յարանց գեղջն զերիսն սպան. և զլալայն և զմայրն առեալ եած առ շահն ։ Իսկ շահն ետ լալային զփառս և զպատիւ՝ և զպետական զիշխանութիւնս. և 'ի դրան իւրում մեծապատիւ և հաւատարիմ նախարար կարգեաց. որ յետ այնորիկ կոչեցաւ լալաբէկ ։ այլև յետ սորա որդիքն իւր էին հաւատարիմք և նախապատիւք 'ի դուռն թագաւորացն Պարսից ։ որև միում յորդւոց սորա՝ որոյ անունն էր մահմատղուլի բէկ. ետ թագաւորն զիշխանութի խանութե̃՝ որ կոչեցաւ մահմատղուլի խան. և առաքեաց 'ի քաղաքն յերևան, որ եկեալ տիրեաց երկրին յամս ինչ ։

Իսկ պատմութի վասն այս լալաբէկիս թէ

ոմանք

ոմանք յառաջակայից շահաբասին 'ի պատ ճառս նախանձու չարախօսութեանց արարին վն լալաբէկին առաջի շահին․ և շահն կամեցաւ կողոպտել զնա՝ և յառաջին աղքատութեանն իջուցանել։ Արդ շահն ինքն եկեալ 'ի տուն լալաբէկին սկսաւ զամենայն դոյսն գրել՝ և յինքն գրաւել։ և 'ի գրելն տեսին զսնդուկ մի ոսկի կողպեալ ինքն եդեալ և փակեալ․ որոյ ասացին՝ թէ բաց՝ և լալաբէկն ոչ եբաց․ այլ ասաց շահին․ զայդ ամ, զոր գրեցեր՝ և զոր տակաւին գրելոց ես․ բովանդակ ամենեքեան քոյք են՝ և ոչ իմ․ իսկ այս միայն է իմ․ քանզի 'ի հայրենի տանէ իմմէ բերի զայս։ Արդ խնդրեմ, զի զքոյն յորժամ առցես՝ զիմս ինձ շնորհեսցես։ ապա հարկիւ բանալ ետուն զսնդուկն և տեսին զի ոչինչ կայր 'ի նմա բայց միայն մէկ ջուխտ մաշեալ և չորացեալ տրեխ՝ որ է չարուխ․ և հնոտի և պատառոտեալ հեւկլէք․ և ամենեքեան եղեն զարմացեալք առ այն։ Ն որոյ հարցանէին թէ զինչ է այս։ ասաց լալաբէկն․ այս այն տրեխն է, որ 'ի հայրենի տանն իմում զգենուի․ և արդ եդեալեմ աստ՝ և հանապազ եկեալ տեսանեմ, և յիշեմ, և ասեմ․ դու այն ես՝ որ զայս միայն ունէիր․ և շահն բերեալ զքեզ յայդպիսի յաղքատութենէ յայսքան մեծութեան հասոյց։ Արդ զգոյշ լեր մի դուցէ գտցի նենգութիւն 'ի սիրտ քո վն շահին․ և այլոց չարախօսաց զնմանէ մի լիցիս համաձայն․ և մի մոռանայցես զերախտիսն․ զի մի այս ամ դառնայցէ քեզ հարամ․ և լինիցիս սևերես առաջի Այ և մարդկան։ Իբրև լուաւ՝ և ետես զայս շահն՝ իմացաւ թէ վն նախանձու չարախօսեցին զնա․ զամենայն ինչսն իւր ոչ էառ՝ այլ շնորհեաց իւրն․ ևևս առաւել պատուով փառաւո

րեալ

րեալ շքեղացոյց զնա. և գերագոյն համատարիմ ունէր 'ի դրան իւրում զնա՝ առաւել քան զամէն, զամ աւուրս կենաց իւրեանց.

---

Պատմութիւն նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ թէ ոչ գտեալ և հանեալ եղև նա 'ի Փռանկաց. և թէ ոչ տարեալ եղև յապարանն քաղաք.

## Ժ.Օ.

## ԺԱՄԱՆԱԿԱՑ ԱՌԱՋ.

Նորդութեն մելքիսեթ կաթողիկոսին. յետ մեծի սուրգունին. եկին 'ի Փռանկաց աշխարհէն Փռանկք պատրիք յաշխարհս Հայոց՝ և մտին 'ի գաւառն Արարատու. և սկսան շրջել 'ի վանորայսն Հայոց՝ որք կան 'ի գաւառին. Եւ պարզամիտ ազգն Հայոց. ոչ գիտէին թէ զինչ դիտաւորութ̃ շրջին նոքա. բայց նոքա ըստ մարդելուց և երեսահաճ և խաբեութ̃ բարոյից իւրեանց զամենեսեան հաճեցուցանէին յինքեանս. որք և պատահեցան կաթողիկոսին մելքիսեթի՝ և առուն նմա աղերս զոսկի դահեկանս՝ զի մի լիցի հետաքրքիր և կամ վրէժխնդիր գործոց նց. զոր առ յապայն առնելոց էին.

Ունէին պատրիքն ընդ իւրեանս զգիրս մի որպէս զաշխարհացոյց իւրեանց գրոցն՝ և լե զուառն. որ հաւաստեաւ և անվրէպ ցուցանէր թէ ուրանօր իցէ գերեզման և գամբարան սրբոցն՝ որք կան 'ի վանորայս Հայոց. և զոր պիտութ̃ի շինուածոց մատրանացն. և թէ յոր կողմն իցէ դուռն և լուսամուտն. և 'ի շրջիլն իւրեանց 'ի վանորայսն. այն գրովն գտանէին զնշխարս սրբոցն. և տային ինչս բնակչաց վանիցն՝ և զնշխարսն առնուին.

Եւ 'ի շրջագայելն իւրեանց եկին 'ի գիւղն

կարենիս, իջին 'ի վանքն առաքելոց, որ ի մէջ Հռոմայ է շինեալ, և այն գրովն գտին զգլուխն Անդրէի առաքելոյն, որ մինչև ցայնժամանակն ոչ գիտէին բնակիչք վանացն նաև ամ̃քն գաւառականքն, թէ ուրանօր իցեն գերեզմանք առաքելոցն։ այլ միայն աւանդութ̃ լուեալք էին որդիք 'ի հօրէ և 'ի հաւուց՝ թէ անդէն կան գերեզմանք սրբոյ աւետարանչին մաթէոսի և անդրէի առաքելոյ, բայց ուր տեղին բնաւ ոչ գիտէին։ Իբրև գնացին պատրիկքն 'ի վանքն, և փորեցին 'ի ներքոյ բեմին զտեղին նշ՝ ուր գիրն խաբեանց տայր զնշան. և ահա տեսին, բացեալ և յայտնեալ եղև գլուխ անդրէի առաքելոյն ոմ̃ և գիրքն տայր զնշան յաղագս գլխոյն։ և ընդ հանել գլխոյն, սոսկումն և զարհուրումն իմն անկեալէ ի վ̃ր պատրիկացն։ Իբրև հանեալ եղև գլուխն, նոյնժամայն եպիսկոպոս վանացն յափշտակեալ է զգլուխն 'ի ձեռաց պատրկացն և ոչէ տուեալ, այլ զնմ̃ դատարկ արտաքս առաքեալէ 'ի վանացն։ Իսկ սբ̃ գլուխն անդրէի առաքելոյն կայ այժմ 'ի նոյն վանքն, որ բազում անգամ ուխտաբարեալ և համբուրեալ եմք զնա։

Իսկ պատրիկքն զկնի շրջագայութեց յոլովից կամ սակաւուց եկին 'ի սբ̃ աթոռն Էջմիածին, և անդ օթեվանս կալեալ կացին զբ̃ազում աւուրս, և ըստ մարդելուղ հնարից իւրե̃ց հաւատարիմք երևեալք յաչս վանականացն և գեղականացն՝ հաճեցուցեալք էին զնս̃ յինքեանս։ Իսկ յետ աւուր գնային և գային պատրիկքն 'ի տաճար սբ̃ց կուսանացն գայիանայ և հռիփսիմեայ. և երէքին տաճարքս այսորիկ, եթէ Էջմիածին, եթէ գայիանայ, և եթէ հռիփսիմեայ, էին աւերեալք խախտեալք և խարխարեալք և անշքա

ցեալք, իբրև զտաղաւար յայգւոջ մրգապահաց և իբրև զհովանի ի մէջ սեխենեաց ըստ մարգարէին Եսայեայ։ Եւ յԷջմածին կային միայն միաբանք սակաւք, և՛ այնք եւս յոյժ տգետք և գռեհիկք։ Իսկ գայխանայ և հախախմեայ ամենևին անընդակ և անպարիսպ, նաև դրունք եւս ոչ գոյին եկեղեցեացն և խորանացն, և յարտաքուստ կողմանէ տանիսն բովանդակ և երեսք որմոյն. քանդեալք, և հիմունքն խարխալեալք և խրամատեալք։ Եւ 'ի ներքսի կողմանէ բեմն և յատակ եկեղեցւոյն. քանդ-քանդեալք, և բովանդակ եկեղեցին և խորանքն աղբովք անասնոց լցեալք, վասն յաւուրս ամարայնոյ և ձմերայնոյ անասունք ոմն թէ եղինք և ոչխարք մակաղէին ի մէջ եկեղեցեացն, և գայխանայի տաճարի տանիքն բովանդակ իջեալէր, և որմունքն միայն կային կանգնեալք և ոչ այլինչ։

Նաև ըստ սովորութեան իւրեանց պատրիքն անխափան երթային և գային 'ի տաճար սրբուհւոյ կուսին հախախմէի։ Եւ մատուռն գերեզմանին հախախմէի խոր ի մէջ գետնոյն շինեալ կայր 'ի ներքոյ աւագ բեմին, և զբեմն 'ի վերուստ կողմանէ իւրեայ մատրանն կառուցեալ կաղմեալք էին 'ի տեղւոջ իւրում ի մէջ աւագ խորանին։ Իսկ զդուռն կամ զլուսամուտ մատրանն ոչոք էր տեսեալ զի ոչ էր յայտնի, քանզի շինող մատրանն և եկեղեցւոյն իմաստութբ էր արարեալ զառնելն իւր, զի զդուռն մատրանն և զնորին ձանապարհն 'ի կողմանէ էր թողեալ ի մէջ հիւսիսային խորանի եկեղեցւոյն։ Եւ ըստ չափու երկայնութեն և լայնութեն դրան մատրանն, մեծ և անշարժելի վէմ մի, զոր ոչոք կարէր շարժել, կափեալէին և սահմանեալ ի մէջ դրան

մատ

մատրանն կափարիչ նմին։ և այնու իմաստու
Թէ հնարեալք էին, զոր ոչոք իմանայր և կամ
համարէր յայնմ տեղւոջ դող դուռն կամ ըզ
վէմն կափարիչ նմին, այլ համարէին զվէմն
իբրև զմի շարեալ վիմաց որմոյն։ Իսկ 'ի մէջս
ազգէս ոչոք էր տեղեակ սոյա՝ ոչ մատրանն և
ոչ դրան նորին։ և Փռանկ պատրիկքն դրօք իւ
րեանց գտեալք էին զդուռն մատրանն և զըս
զումերկս և զաշխատանս կրեալք էին իւր կա
փարիչ վիմին Թէ 'ի բաց բարձցեն. և ոչէն կարա
ցեալք։ և յետ բազմաց աշխատանաց խոկմանց
և մտածութեանց, որ վս̃ բանալոյ դրանն, իբրև
զփորձ առեալք էն Թէ ոչ լինի, ապա Թողեալք
էն զդուռն մատրանն, և եկեալ ելեալք էն 'ի
բեմն 'ի յաւագ խորանն, և 'ի վերուստ կողմա
նէ բեմին առաջի և 'ի ներքոյ խորհրդանոցին,
ըստ նշանակելոյ դրոյն իւրեանց զճանապարհ
դրանն, հանդէպ նմին փորեալք էն այնքան մինչ
ծակեալք էն զառաստաղ ճանապարհի դրանն,
և իջեալ 'ի ներքս իմէջ ճանապարհին։ և ապա
այնքան աշխատեալք էն 'ի ներքուստ և յարտա
քուստ մինչ որ զկափարիչ վէմն տատուցեալք
էն 'ի տեղւոյն՝ և արտաքս ձգեալ իմէջ հեւսի
սայլն խորանին.

Յետայսորիկ իջեալք էն իմէջ մատուռն գե
րեզմանին և զտապանաքար գերեզմանին Թաւա
լեցուցեալքէն 'ի բաց, և փորեալ զգերեզման
կուսին Հռիփսիմեայ այնքան, մինչ հասեալք էն
'ի տապանն յորոյ միջի կայր եդեալ սո̃ւրբ նշխար
քըն Հռիփսիմեայ։ և առաւելեւս փորեալք էն
մինչ զտապան նշխարացն տատուցեալք էն 'ի
բնական տեղւոյն և յամրութենէ։ և ապա զտա
պանն լի նշխարօքն 'ի մատուռէն արտաքս բե
րեալ իմէջ մեծի եկեղեցւոյն՝ և կամեցեալք էն
առնուլ զնշխարսն։

Այս 'ի խնամոց և յողորմութենէն Այ̃ և յաղօ-
թից սբ̃յ լուսաւորչին, 'ի նմին ժամու նոյնում
աւուր՝ երկուք ոմանք յեպսկպսացն սրբոյ Էջմի-
ածնի, միոյն անուն գրիգոր եպսկպս, և միւսոյն
վարդան եպսկպս, երևեալք են 'ի զբօսանս շրջա-
գայել. և շրջելով հասեալք են 'ի տաճար սրբու-
հւոյն հռիփսիմէի, և յայնմ ժամու պատահեալք
են իւր ո̃՝ մինչ պատրիքն զտապանն նշխարացն բե-
րեալք են 'ի մէջ եկեղեցւոյն՝ և կամէին առնուլ
զնշխարսն, և 'ի հարցանելն եպսկպսացն ընդ-
պատրեացն զո̃ իրացն՝ նք̃ թէպէտ բանս ինչ
յօդեալք և բարբանջեալք են, այլ անյարմար:
Իսկ եպսկպսացն շրջեալք յեկեղեցին և զմ̃ տե-
սեալք, 'ի վերուստ զծակն, և 'ի կողմանէ
զդուռն, և զմատուռն. և թաւալեցուցեալ
զտապանաքարն, և փորեալ զգերեզմանն:
Խռովմամբ և զայրացմամբ եկեալք են առ
պատրիսն և արարեալ զկագ և զկռիւ և զաղ-
մուկ ըն̃ նո̃ մինչ զմի մեռանս հարկանել և վիրաւո-
րել, որ և զգլուխ վարդան եպսկպսին հարեալք
էին պատրիքն և վիրաւորեալք՝ զի պատրիքն
երեք էին լեալք, և եպսկպսունքն երկու. և զայս
և զայլս վիրացն եցոյց մեզ 'ի ժամանակս յայս,
որև զպատմութիւն զայսմ պատմեաց մեզ՝ որոց
ինքն ականատես էր՝ որոյ Տր̃ ողորմեսցի և թող-
ցէ զյանցանս նո̃. և եպսկպսունքն ոչ էին թողեալք
առնուլ զմասն ինչ 'ի նշխարացն պատրեացն
յայնմ ժամու: Եւ յետ մարտնչելոյն և կռուե-
լոյն, երկոքին եպսկպսքն բարձեալք են զտապանն
լի նշխարօքն՝ և բերեալք են յԷջմիածին, և
պատրիքն ևս եկեալք են ը̃ նո̃ յԷջմիածին:
Իսկ եպսկպսքն զտապանն նշխարօքն լի եդեալք
են 'ի մէջ հրապարակի. և 'ի լսել միաբանիցն
ժողովեալք են 'ի վերայ, այլ և գեղականքն, և

կթ̃ղկսն

կճղկան մեղբեսէթ ինքն եւս ։ Եւ որք եկեալք տեսանէին եւ խմանային, հիացեալ զարմանային եւ ասէին, մեք որ 'ի հարց եւ 'ի հաւուց աստ ծնեալեմք եւ սնեալք, յայսքան ժամանակս ըննաւին ոչեմք տեղեակք, եւ սոքա արք օտարք նաեւ պանդուխտք՝ զի արդ կարացին գտանել եւ առնել զայսպիսի գործ ։ Իսկ յաղագս եղելոց գործոցս եպիսկոպոսունքն եւ միաբանք վանացն յոյժ սրտմտութբ եւ սաստիկ բարկութբ զլէճ եդեալ՝ եւ զաղմուկ արարեալ կռուէին ընդ պատրեացն ։ Եւ մնային կճղկսին, թէ դատապարտեսցէ զպատրիան, եւ վրէժխնդիր լինիցի նց, իսկ նա որ առեալէր 'ի պատրեացն զոսկի դահեկանին ․ ոսկեաւն այնու կաշառակուր լեալէր տեսարան մոացնց, ոչ եղեւ վրէժխնդիր, այլ թոյլ տուեալ անհոգ էր ։

Իսկ յայնմժամու պատրիքն ունէին ընդ ինքեանս, յառաջագոյն ․քասկս կազմեալ ի մոմլաթէ՝ այս ինքն 'ի մուշամբայէ ։ Վստահացեալք յերեսպաշտութն կաթղկսին, եկեալ յառաջ իվը նշխարալի տապանին, եւ բացին զ․քասկն, եւ ամն 'ի պատրեացն պատեաց զձեռն իւր մաքուր եւ սպիտակ դաստառակաւ՝ եւ առեալ 'ի նշխարացն էլից 'ի ․քասկն, եւ կամէին զամենն նշխարին առնուլ ։ Եւ 'ի տեսանելն զայն եպիսկոպոսն լի եղեն ցասմամբ եւ բարկութբ՝ իվը եկեալ հարին զպատրիան եւ իբրեւ վարեցին ։ Եւ ոչ թողին այլեւս առնուլ 'ի նշխարացն՝ այլ յոլովն մնաց իմէջ տապանին, եւ զգլուխն եւս առեալք էին պատրիքն, զայն եւս յափշտակեցին եպիսկոպքն եւ եդին իմէջ տապանին ։ Իսկ ասէր վերոյ յիշեցեալ վարդան եպիսկոպոսն, թէ ցոր․քան ոչ էին մերձեցուցեալ զձեռս 'ի նշխարսն որակ եւ գոյն նշխարացն սպիտակ էր ․ եւ յոր

ժամ ձեռն մերձեցուցին՝ գոյն նշխարացն դարձաւ 'ի դեղնութիւն ։

Նոյն խնդիր այսց ամենից սկսան լալ և ողբալ եպիսկոպոսունքն, և ասել առ կթղկան զբանս տրտմ ջանաց և մեղադրանաց, թէ արդարադատն Տէր լիցի քեզ վրէժխնդիր յաղագս նշխարաց սրբոց, զի յաւուրցն սրբոյ լուսաւորչին մինչ ցայս օր ոչ էին խախտեալք կամ ուրեք ցրուեալք նշխարքս սրբոց այսոցիկ, և այժմ էին սկիզբն և հաստատութիւն հաւատոյս հայաստանեայց, և լիութիւն և բարութիւն աշխարհիս, և դու այսօր ցրուեցեր ։ Նոյն յետ լալոյ և ողբալոյն իւրեանց եպիսկոպոսունքն բարձին զտապանն մնացեալ նշխարօքն և դարձեալ տարան 'ի տաճար սրբուհւոյն Հռիփսիմեայ. և իջուցեալ ներքս մատուռին, և խորագոյն փորեալ զգերեզմանն եդին զնշխարսն տապանաւն ներքս գերեզմանին, և յամենից կողմանց կրով և խճով մածուցեալք ամրացուցին, և ծածկեալ զգերեզմանն եդին ի վերայ զտապանաքարն ։ Իսկ զդուռն մատուռին, ոչ խցին, այլ մնաց 'ի բաց, որ և արդ տեսանի ։ և զծակն, զոր 'ի վերուստ 'ի բեմէն ծակեցին զայն խցին. բայց խուզողացն յայտնապէս երևի 'ի ներքնոյ ճանապարհէն. քանզի նշ ծակին եդեալ քարինքն դեռևս սպիտակք են ։

Իսկ պատրիքն առեալ զքսակով նշխարս սրբոյն Հռիփսիմեայ գնացին 'ի քաղաքն Երևան. և խորհէին թէ ընդ որ ճանապարհաւ տարցեն յաշխարհն իւրեանց. քանզի հռոմոց աշխարհաւն ոչ կարէին գնալ վն երկիւղին Օսմանցւոց՝ զի մեծ թշնամութիւն և սաստիկ մարտ պատերազմի գոյր յայնմ ժամանակի ներքս Օսմանցւոց և Փռանկաց ։

Նոյն ապա եկին պատրիքն յԵրևանայ և զնըշ

խարն

խարն ընդ ինքեանս առեալ եկին յերկիրն նախ
չուանայ ՚ի դաւառն երնջակու․ ՚ի գիւղն
փռանկաց ապարանէր․ և անդ զնշխարսն
արարեալք են երկու և երեք բաժին ։ և պատ
րիքն ինքեանք մնացեալք են անդէն․ և զերկու
մասն նշխարացն կալեալք են առ ինքեանս ․ և
զմի մասն ընդ հաւատարմաց արանց իւրեանց
առաքեալ են ՚ի քաղաքն Սպահան ՚ի վանքն
փռանկաց, զոր հուսէնիայ անուն կոչեն․ քան
զի երեք վանք կայ փռանկաց ի մէջ քաղաքին
Սպահանու ։ և բերողքն նշխարացն բերեալք
հասուցեալք են զնշխարսն ՚ի հուսէնիայ վանքն
փռանկաց, և անդ կով ՚ի տան միում պահեալք
են, և սպասէին դիպօղ ժամու զի առեալ տար
ցեն ի կր̃ բանդարու ՚ի քաղաքն Գոայ՝ յերկիրն
փուրթուկէզին, զի անդի նաւու տարցեն ՚ի
բուն իսկ ՚ի փռանկստան ։

Նոյն դաւիթ կթղկսն այս ամէնից եղելոցս ոչ
գիտակէր, զի յաւուրս յայսոսիկ բնակեալ
էր նա ՚ի քաղաքն Սպահան ։ ունէր և դաւիթ
կթղկս ՚ի Հայոց ազգէն հաւատարիմ զսպա
սաւոր այր մի՝ որում անունն էր գրիգոր․ Ճար
տար և զգոյշ ՚ի սպասաւորութիւն և ՚ի գործս իւր ։
և գիտէր այրս այս զեղու փռանկաց՝ որ միշտ
գնայր ՚ի վանքն փռանկաց՝ և առնէր նց̃ զսպա
սաւորութիւն վն̃ մարմնաւորի օգտի իւրոյ։ և յաւ
ուր միում ՚ի յըմպել գինւոյ, ՚ի խնամոցն Այ̃
քաղցրացեալք են ի մէջ խօսիցն՝ և ընդ բազ
մաց բանիցն զայն ևս ասացեալէ նշխարաց բե
րօղ սպասաւորն փռանկաց ընդ կթղկսի սպա
սաւոր գրիգորին, թէ գնացաք յաշխարհն
ձեր՝ և տեսաք զաթոռն ձեր զԷջմիածին՝ և ան
տի հանաք զնշխարս սրբուհւոյ կուսին հռիփ
սիմէի և բերաք աստ, և ահաւանիկ կայ յայն

իմն տան մնդկով, և կամիմք տանիլ յերկիրն
փուռթուկեշին զի անդի տարցուք 'ի բուն
իսկ 'ի Փռանկստան։ Իսկ իմաստուն և խոհա
կան այրն՝ Թարուցեալ է զբանն 'ի սրտի իւր
ում առժամուն՝ և հաճեալ զմիտս աստղին,
բայց յերկրորդումն աւուր գնացեալ է առ
կեթիկսն դաւիթ՝ և յայտնեալէ զբանն՝ զոր
լուաւ 'ի Փռանկացն։

Եւ 'ի ժամանակիս յայսմիկ յարարադուեր
կրէն բազումք քրիստոնեայք 'ի Հայոց ազգ
էն. և մանաւանդ երևանայ քաղաքի ժողովուր
դըքն ընկեալք էին ի մէջ քաղաքին ապահա
նու, զերևելիս և զհաւատարիմ ոմանս ինոցա
նէ կոչեաց դաւիթ կեթիկսն առ ինքն՝ և յայտնե
աց նմա զբանն, և նոքա յոյժ տրտմեցան, և շար
ժեցան 'ի նախանձ վրէժխնդրութե։ և կեթ
իկսն և նոքա 'ի միասին գնացին ի մէջ Ջուղայե
ցւոց առ խօջայ սաֆարն՝ որ էր աւագ Ջուղայե
ցւոց, ոչ միայն Ջուղայեցւոց, այլև ամի ազգին
Հայոց՝ որք կային 'ի ներքոյ Թագաւորութեն Պար
սից. քանզի յոյժ ընդունելիք էին խօջայ սա
ֆարս՝ և եղբայրն իւր խօջայ նազարն առաջի
Պարսից Թագաւորին՝ և իշխանացն, և ծանու
ցին խօջայ սաֆարին զայն գործ։ և խօջայ սա
ֆրն՝ և կեթիկսն՝ և այլոց տէր տէրն, որ էր աւագ
երևանեցւոց, 'ի միասին գնացին առ քաղաքա
պետն՝ որոյ անունն էր միրզայ մահամատ, զոր
շահն կարգեալ էր քաղաքապետ ապահա
նու, վասնզի շահն ոչ էր յապահան յայսմ ժա
մանակիս այլ 'ի Թաւրեզ էր, նա և խօջայ նա
զարն ևս անդ էր առաջի շահին։ և յետ ծա
նուցանելոյ քաղաքապետին առեալ զօրա
կանս 'ի նմանէ գնացին յանկարծակի 'ի վանքն
Փռանկաց՝ և բացեալ զաասցեալ տան դուռն

դռին

գտին զմնդուկն նշխարօքն ։ և առեալ բերին
զնշխարալի մնդուկն առ քաղաքապետն ․ և նա
կնքեալ զմնդուկն իւրով մատանեաւն և տու
եալ ցխօջայ սաֆարն յաւանդ՝ առ ՚ի պահել
զնա մինչև ցգալն շահին և ՚ի խնդրել զնա ։

Օ այս ամենից գործոց անցուածք և ողխու
թէք խօջայ սաֆարն և դաւիթ կեթողիկոս գրով
ծանուցեալք են խօջայ նազարին՝ որ էր ՚ի թաւ
րէզ ։ և խօջայ նազարն, քանզի համարձակ էր
առաջի շահին, ծանոյցն նմա, և խնդրեաց ՚ի շա
հէն զթուղթ հրամանաց, և ծառայ թղթւր
կան առաքել զկնի պատրոցն՝ որք զնշխարսն
հանին, զի կալեալ զնոսա ածցէ առաջի թագաւորին,
և շահն արար զնորա կամս խօջայ նազարին ։
Բայց գործն այսպէս հանդիպեցաւ՝ զի զթղթա
բականն ծառայն, զոր պատրաստեցին ՚ի գնալ՝
ազգաւ հայ էր և հաւատովն քրիստոնեայ,
դաւանութեամբն Հայոց՝ որոյ ընական անունն
էր աւետիք ։ բայց միւս ևս զմանկ անուն մակադ
րեալք էին նմա ալթուն․ և զնորա զորինչ պատշաճ
էր գործառնութեան այնմիկ, խօջայ նազարն
պատուիրեաց ալթունին ։ և ալթունս այս
գնացեալ էհաս ՚ի դաւառն նախչուանու՝ և
էմուտ ՚ի գիւղն ֆռանկաց ապարանէր, և
նոյնժամայն զեպկապն և զերիցունսն և զերևե
լիս ՚ի ժողովրդականացն ֆռանկաց կալեալ
կապեաց՝ և արգել ՚ի կալանս, և պահանջէր
՚ի նոցունց ցուցանել զնշխարաց հանօղ պատ
րիսն, իսկ նոքա ոչ կամէին ցուցանել ։ բայց
ալթունն չարչարէր զնոսա և կախեալ բրածեծ
առնէր, իսկ նոքա յակամայ ցուցին զնշխարաց
հանօղ պատրիսն, որոց անուանքն էին պատրի
գլէլում, և պատրի ալքանջէլի ։ այնու հետև
կարի առնելով պահանջէր զնշխարն ՚ի նոցունց,

իսկ նորա ոչ կամէին ցուցանել. բայց ալթունն
սկսաւ կախել և սաստիկ բրածեծ առնել, և
խստագոյն չարչարել, և տանջել զնա. և այն
պէս զբաղում աւուրս անողորմ չարչարէր
զնա՝ զի ոչ ցուցանէին զնշխարսն։

Նոյն յաւուր միում մինչ կախեցին 'ի գեղա
կան երիցանց գեղջն այնմիկ զոմն էրէց. և
զբաղում ժամս հարկանէին անողորմ. կայր և
երիցուն այնմիկ եղբօր որդի մի փոքրիկ տղայ,
որ առ ընթեր նորա կանգնեալ աղիողորմ լայր. և
տղայս այս հարցանէր արանցն, որք անդ կային.
թէ զի՞ վ՜ կախեալ հարկանեն զտէրտէրն իմ.
և արքն ետուն պատասխանի մանկանն թէ
նշխարք սրբոց բերեալք են 'ի գիւղս՝ և զայն խըն
դրեն ցուցանել. և մեք ոչ եմք տեղեակ որ ցու
ցանեմք. վ՜ այնորիկ կախեալ են և հարկանեն։
և տղայն կրկնեալ ասաց նոցա. ապա զինչ է այն, որ
կայ 'ի ներսագոյն տան մերում, որ յամ աւուր
զճրագ վառեն առաջի նորա։ Նոյն մինչ ցայս լուր
ալթունն բնաւ ոչ է խօսեցեալ Հայերէն. և
կամ զինքն Հայ ձևացուցեալ. և ինքնևս իմէջ
արանցն կանգնեալէր յորժամ տղայն ասաց
զայն բանն։ և 'ի լսելն իւր ալթունն 'ի տղայէն
զբանն զայն. 'ի նմին ժամու դարձաւ առ տղայն
և խանդաղատանօք խօսեցաւ ը՟ նմա՝ և ասաց.
զինչ ասացեր որդի միւսանգամ ասա. և տղայն
կրկնեալ միւսանգամ ասաց զբանն։ և ապա
ասաց ալթունն առ տղայն. եթէ զասացեալդ
ցուցանես ինձ զտէրտէրն քո արձակեալ թո
ղում. և քեզ և քո տէրտէրին զկապայ հագու
ցանեմ խլայթ. ապա թէ ոչ՝ այնչափ ծեծեմ
զտէրտէրն քո մինչ զի իներքոյ փայտի մեռանի։
ապա ինքն ալթունն կալեալ զձեռանէ տղայ
յին, ասաց. եկ որդեակ՝ երթիցուք 'ի տունն ձեր

և զա

և զասացեալդ ցոյց ինձ․ և հասեալ՚ի տունն մտին տանէ՚ի տուն մինչև ցներքագոյն տունն՝ ուր կայր նշխարքն․ և ետես ալթունն զի՚ի բարձր տեղւոջ հանգուցեալ էին՝ և մաքուր զգեստուք ծածկեալ՝ և ճրագն առաջի նց՚ի վառ կայր․ և ալթունն ի բաց էառ զմ̄ ծածկոյթն և ետես որ սոյն նշխարքն էր։ և ինքնին առեալ՚ի գիրկն իւր՚ի դուրս եբեր։ և ըստ իւրում խոստմանն որ առ տղայն․ եթող զեր էյն․ և զխոստացեալ կապայսն պարգևեաց երիցոյն և տղային ։

Եւ այնուհետև սկսաւ ալթունն խստագոյնս չարչարել զայլ կալանաւորսն՝ և մանաւանդ զնշխարաց հանող պատրիսն․ և յոչ ըմբերել դառն տանջանացն․ ասացին թէ այլ ոչ գոյ բաց յայնմ միոյն զոր՚ի լեառն պահեալ եմք․ այժմ ՚ի ցերեկի համբեր զի ոչ լինի․ և՚ի գիշերի գնացեալ՚ի տեղին հանեալ տացուք քեզ։ զի զանուն լերինն՝ յորում զնշխարն թաքուցեալք են՝ բոլոր կոչեն ամ̄ աշխարհն այն․ որ մերձ է գեղջն ապարանու․ որ է բարձր քարանձաւ լեառն։ և յորում գիշերի գնացին պատրիքն ՚ի լեառն, գնաց և ալթունն ևս ընդ նոսա։ և յորժամ զնշխարն թաղեալք են անդ․ նշանօք բևեռ աստեղն թաղեալք են․ և այժմ ևս սկսան նշանօք բևեռ աստեղն երթ և եկս առնել․ և այնքան երթևեկս արարին այսր և անդր․ մինչ հաւաստեաւ իմ̄ թաղեալ տեղւոյն եկեալ կացին․ և ապա հրամայեցին սպասաւորացն փորել զտեղին․ և՚ի վերայ փորելոյն տեսին արծաթեայ թաս մի լի՛ նշխարօք․ և առեալ զայն ևս ետուն ալթունին։ և ալթունն առեալ զնշխարսն և զպատրիսն դարձաւ՚ի գիւղն ապարանէր․ և պահանջէր՚ի նոցանէ զայլևս նշխար․ և նոքա

առաջի

առաջի անկեալ լային և սոսկալի երդմամբ երդնուին թէ այլ ոչ գոյ։

Իսկ ինքն Ալթուն էր 'ի գեղջէն աստապատու՝ որոյ և տունն անդ էր. ելեալ յապարանէր գեղջէն զիւր առեալ զնշխարսն և զնշխարաց հանօղ պատրիսն. և եկեալ 'ի գիւղն իւր յաստապատ։

Զհաւուրսս յայսոսիկ պատահեցաւ սրբոյ վարդապետին պօղոսի լինիլ 'ի գիւղն աստապատ. և զպատմութի այս վարդապետիս արարեալ եմ յառաջինկայդ յայսմ շարադրութեան. առ որ գնացեալ Ալթունին և տարեալ առաջի զմասն նշխարսն ասաց վարդապետին առնուլ իւր բաժին. և վարդապետն առեալ 'ի նշխարացն զմասն մի 'ի չափ մատին միոյ. և զայլն ժողովեաց Ալթունն առ ինքն։ Ո այս ևս ասաց Ալթունն առ վարդապետն. Եթէ ոչ լինիս ինձ մեղադիր վասն պատրեացս. զմարմինս սոցա աստէն թողեալ. և բարձեալ 'ի սոցունց զգլուխսն միայն տարայց առ թագաւորն։ Իսկ վարդապետն սուրբ՝ իբրև իմն .քրիստոնէից՝ գթացեալ իմն պատրեացն ոչ էթող Ալթունին առնել զասացեալն։

Իսկ զմասն նշխարացն, զոր էառ վրդպտն յետ ամաց ինչ գնաց 'ի .քաղաքն նախչուան. և է մերձ նմին .քաղաքի փոքրիկ գիւղ մի զոր .քուլ թափայ կոչեն. և մինչև ցժամանակն յայն ոչ գոյր 'ի գիւղն յայն եկեղեցի. և անդէն զհիմն արկեալ եկեղեցւոյ եդ 'ի հիմունս եկեղեցւոյն զնշխարսն զայն. և իմն նոր շինեալ աւարտեաց զեկեղեցին։ և յաւուր օծման եկեղեցւոյն անուանեաց զանուն եկեղեցւոյն սբ հռիփսիմեայ. և կան այժմիկ սակաւ հայազուն .քրիստոնեայ.ք 'ի գիւղն յայն հաստատեալ իմն եկեղեցւոյն։ Իսկ

Իսկ ալթունն ելեալ յատապարտու աւեալ ընդ իւր զպատրիսն և զնշխարն․ և գնացեալ եհաս ՚ի Թաւրէզ՝ և մատոյց առաջի խօջայ Նազարին զնշխարսն և զպատրիսն և խօջայ Նազարն ծանոյց շահին․ և խնդրեաց ՚ի շահէն, և ասաց․ Հաջողումն բախտի Թգ̃ւորիդ մերոյ ոչ եթող գնալ նշխարացն այնոցիկ ՚ի Փռանկաստան․ զի թէ գնացեալ էր, ամ̃ ազգն Հայոց զկնի նորա գնային․ քանզի ազգն Հայոց ամենեքեան կախեալ կան զնմանէ․ և մանաւանդ ժողովուրդքն Ջուղայեցւոց և գողթան գաւառին․ յորոց բազումք են վաճառականութե̃ այժմ ՚ի Փռանկաստան․ և հազիւ թէ դառնային նոքա յայս աշխարհ․ և խնդիր մեր այս է յարքայէ․ մի գուցէ բաժանեսցէ զմասն ինչ ՚ի նշխարացս յայսցանէ․ և թէ իցեն Փռանկունքն առեալ ՚ի սմանէ, զայն ևս առեալ ՚ի նոցանէ մեզ տացէ․ զայս բան նախքան զքննութե̃ դատաստանին ասաց խօջայ Նազարն ընդ շահին։ Իսկ շահն արար զպատասխանի․ թէ որովհետև յօժարութի̃ կամաց Ջուղայեցւոց այդպէս է․ յաղագս յօժարութե̃ նց̃, և ՚ի շնորհ երեսաց քոց արարից ոպ̃ ասացերդ։

Ի յաւուր յորում նստաւ շահն ՚ի դատաստան․ եբեր ալթունն զնշխարն և զպատրիսն առաջի շահին․ և շահին հարցեալ տեղեկացաւ ամ̃ի․ զպատրիսն էթող առանց պատուհասի․ քանզի ՚ի ժամանակին յայնմիկ դաշն խաղաղութե̃ ուխտեալ և հաստատեալ էին շահն և Թգ̃րն Փռանկաց ընդ միմեանս․ և ՚ի շնորհուկս առնելով նց̃ ոչ պատժեաց զպատրիսն այլ իբրացարձակեաց առանց պատժոց։ Իսկ պատրեաց զհամարձակութի առեալ ՚ի ներողութէ շահին, ասացին առ շահն․ զայս քան

աշխա

աշխատութե՟ն և զնեղութե՟ն՝ զոր կրեցաք մեք յաղագս նշխարացդ. խնդրեմք զի զման ինչ 'ի նշխարացդ պարգևեսցէ մեզ արքայ: պատասխանի արար նոյն շահն հիացականաւ մեղադրութե՟ ասելով. զորոց զինչսն առեալ տայ ձեզ՝ զի զայս նշխար՝ զոր խնդրեք հայոցէ. և որ իբրաունք վկայեն թէ զինչս նոյ առեալ ձեզ տաց: և ապա շահն արար զհրաման տալ զնշխարսն զնո՟մ ցխօջայ նազարն: որ եղև այսպէս:

Յետ այսորիկ կամեցեալէ շահն առաքել զող նշխարն՝ 'ի քաղաքն սպահան՝ և խօջայ նազարին ևս ասացեալէ թէ այսմ կամիմ առնել և նա ևս հաւանութե՟ տուեալէ այսմ: և ապա գրեալէ շահն զթուղթ յասպահան առ խօջայ սաֆարն. թէ յաղագս շնորհի երեսաց ձերոց՝ և ըստ յօժարութե՟ սրտից ձերոց. առի զնշխարս սր՟ցն ձերոց 'ի փռանկաց՝ և պարգևեցի ձեզ. և արդ առաքեցի առ քեզ յաւանդ պահեստի. Արդ ընկալ զդա և պահեա՝ ցորժամ խնդրեցից բերցես առաջի իմ: և խօջայ սաֆարն առեալ և ընկալեալ զնշխարսն և 'ի տան իւրում պատրաստեալ տեղի պաշտամաւոր. և անդ էր հանգուցեալ. և ըստ արժանոյ սրբութեցն յամ աւուր պաշտէր զնա անուշահոտօք խնկօք և պայծառ մոմեղինօք, որքան ինքն և որդիքն կային. և այժմ թոռունքն իւր. և կայ անդէն մինչև ցայսօր:

Արդ նշխարք սրբուհւոյն հռիփսիմեայ՝ այսպէս հանեալ եղև 'ի փռանկաց. և այսպէս եկեալ եղև յասպահան քաղաք:

Իսկ նշխարաց հանող պատրիքն՝ զորս արձակեաց շահն ելին 'ի թաւրիզու և գնացին միանգամ 'ի նախջուան՝ զի վերստին գնասցեն 'ի գաւառն արարատեան 'ի խնդիր նշխարաց սրբոց:

Նա

Եւ պատրիքն մինչ տակաւին էին 'ի գաւառին Նախչուանու ․ յաւուր միում պատահեցան տեսութե մախսուտ սուլթանին՝ որ էր իշխան Նախչուան քաղաքին՝ և ամենից գաւառաց նորին ․ և 'ի յանձախել բանից և խօսից իմէջ ն՟ց, որ վասն հաւատոց ․ ասացեալէ սուլթան է՟ պատրիսն ապա զպատգամաբերն մեր զմահմետ ամենեին ոչ պատուէք և ընդունիք ։ և 'ի նմին ժամու հանդէպ ն՟ց նստեալէր շուն մի ․ և ոմն 'ի պատրեացն ձգելով զձեռն հանդէպ շանն ասաց ․ զինչ է մահմետ զի պատուեսցուք զնա՝ եթէ մահմետ և եթէ շունն այն զուգահաւասարք են ։ և ի վ՟ր այսմ բանի սուլթանն և ամ՟քն որք և ծառայքն ն՟ր 'ի խոր խոցեալք են՝ և մահու չափ վիրաւորեալք ․ բայց զոխն 'ի սիրտս իւրեանց թաքուցեալք են առ ժամանն և ոչ բերեալ յերեսս ։

Իսկ պատրիքն յետ աւուրց յոլովից կամ սակաւուց ․ ելեալ 'ի Նախչուանայ գնացին յերեւան ․ և անտի ելեալք են զի գնասցեն 'ի գեղարքունի ․ և յորժամ հասեալք են 'ի լեառն, զոր սուլէյմանայ սար ասեն ։ յետուստ կողմանէ եկեալք են զկնի ն՟ց արք հինգ հեծեալք ․ ազգաւ ղզլպաշ ․ հասեալք են պատրեացն ․ և մինչ խօսելով ընդ նոսա երթային զճանապարհայն ․ և անդէն յանկարծակի հարեալք են սրով և սպանեալ զերկուսին պատրիսն՝ որք էին հըռիխախմեանց նշխարաց հանօղքն ։

Այր այլ և ոմն աշխարհական այր ընդ ն՟ս, որ էր սպասաւոր պատրեացն ․ և անուն ն՟ր աղամիր յապրակունիս դեղջէն փռանկաց ․ և այրս այս 'ի սպանանելն պատրեացն ինքն փախուստ առեալէ 'ի կողմն քարանձաւի միոյ ․ և ոմն 'ի ղզլպաշ զինուորացն ընթացեալ զկնի ն՟ր ․ և

անդէն

անդէն հարեալէ զնա սրով, 'ի գլուխն, 'ի պորանոցն, յուսն և յարմուկն, և վիրաւորեալ այրն անկեալ 'ի գետնի ձևացուցեալ զինքն թէ մեռայ. և զինուորին ևս համարեալ է զնա թէ ստուգիւ մեռեալ է: վն որոյ հարեալ է զայրն ոտիւքն և 'ի բարձանց 'ի գլխոյ քարանձաւին արկեալէ զնա 'ի ներքոյ վիմին. և ինքն գնացեալ առ ընկերս իւր: և զինուորքն՝ որք զայս գործեցին, առին զինչս նոցա որոց և հաւանեցան. և գնացին ուրև կամեցան:

Իսկ զայս ղզլպաշ զինուորքս՝ որք զպատրիոն սպանին. ոմանք ասացին, թէ 'ի մախսուս սուլթանի զօրականացն էին. որք վն անարգանաց մահմետին. զոր անարգեցին պատրիքն՝ և ասացին, հաւասար գոլ զնա շան. առաքեաց մախսուս սուլթանն՝ թաքուն սպանանել զնս. և զինուորացն եկեալ այնպէս արարին: Իսկ ոմանք ասացին, թէ այն պատրի սպանող զօրականքն էին 'ի զօրականաց ամիրգունայ խանին. որ էր տէր գաւառին Էջմիածնի. առաքեաց զկնի պատրեացն սպանանել զնոսա, վն երկու պատճառի: Նախ՝ 'ի վրէժխնդրութին նշխարացն սրբոյն հռիփսիմէի. զի յերկրէն ամիրգունայ խանին հանին զնշխարսն և տարան յայլուր: և երկրորդ՝ ասացին թէ լուեալ էր ամիրգունայ խանն. թէ ընդ պատրեացն այնոցիկ կան բազում գանձք ոսկւոյ և արծաթոյ. վասն գանձուցն առաքեալ զօրականս սպան զնոսա և էառ զգանձն: Բայց՝ եթէ 'ի մախսուս սուլթանէն. և թէ յամիրգունայ խանէն՝ և թէ ուստի և իցէ. եկին զինուորք ոմանք՝ և սպանին զպատրիսն. և զպատասաւոր պատրեացն վիրաւորեալ արկին 'ի ներքոյ քարանձաւին:

Իսկ մեք յորժամ եղեաք 'ի խնդիր պատմու-
թեց շրջէաք, գնացաք յերկիրն Նախչուա-
նու 'ի գաւառն Երնջակ. 'ի գիւղն Ապարա-
ներ. պատահեցաք առնս այսմիկ աղամիրի.
և տեսաք զնշխքն և զտեղիս, և զպլին վիրացն,
և նա պատմեաց մեզ զպատմութիւն զայս. և
զննի ասաց թէ յորժամ արկին զիս 'ի քարան
ձաւէն 'ի վայր՝ ընկեցայ ես ի մէջ ջրոյ գետոյն՝
զոր կոթայ գետ ասեն. և ջուր գետոյն առեալ
տարաւ զիս՝ և էարկ ընդդէմ վիմի միոյ, և
վէմն այն եղև արգելիչ ինձ, և արգել զիս մինչ 'ի
մթանալ երեկոյին ցելս ատեղաց. և այսօրիկ
տմքն եկին իմ իմ, և ես կայի կենդանի շնորհօքն
Քի. և գիտէի զամ, որ ինչ պատահէր ինձ. և
ողորմութեամբն Քի ոչ խեղդեաց զիս ջուր գե-
տոյն. և ընդ մթանալ երեկոյին, ելի 'ի գե-
տոյն, և գնացի. և ոչ գիտէի թէ ուր գնամ,
բայց 'ի գնալն իմ պատահեցայ բազմագնաց
ոտնակոխ ճանապարհի միոյ, և խորհեցայ
յանձն իմ, թէ իւր ճանապարհիս կացից. զի
'ի յանցորդաց ուրեմն հարցեալ գիտացից թէ
զինչ պարտէ ինձ առնել. և եղև զի ընդ արշա-
լուս առաւօտուն. եկին առ բ ոմանք գրաստուք
հայ ազգաւ՝ և գնային 'ի գիւղ ուրեմն. և ես
ելեալ խառնեցայ ընդ նոսա. և նց գիտացեալ
զամ պատահումն, որ առ իս. եդին զիս իւր
գրաստու՝ և հասուցին 'ի գիւղ մի՝ և ես պատ-
մեցի գեղականացն զամ. և 'ի գեղականացն
ոմանք գնացին 'ի տեղի սպանման պատրեացն.
և տեսին զպատրիսն սպանեալ. և տմքն գրեանք,
և թուղթք, և զգեստքն նց ցրուեալ. բ երեսս
անապատին. և անդէն իւր ճանապարհին
փորեցին վէմ՝ և ընդ հողով արարեալ ծածկե-
ցին զնս. և ես մնացի 'ի գիւղն մինչև ողջացան

վերջին իմ. և ապա եղեալ եկի 'ի տուն իմ։ Արդ այս աղամիր անուն այրս, որ տեսօղ էր ամենից գործոց. պատմեաց մեզ 'ի տեղւոյն. որք ելեալք են 'ի նախչուանայ մինչև ցայսվայր։

Իսկ զկնի, զոր արդ պատմեմք մարտիրոս անուանք սմն եպկպս պատմեաց՝ զորինքն էր աչօք տեսեալ։ Ասէր՝ թէ յաշխարհէն ֆռանկաց եկն միւս այլ պատրի անուն մելքիոր. և պատահեցաւ տեսութեան շահին. որ էր յայն ժամ 'ի թաւրէզ. և 'ի թաւրիզու եղեալ շահն ամիւ բանակաւն իւրով եկն յերկիրն գեղամայ. եկն ընդ նոսա և պատրին մելքիոր. քանզի իւր զդեսպան եկեալ ձև անայր՝ և զպատիւ ունէր 'ի շահէն. և էր այր մեծազգի և փառաւոր՝ և յոլովս խօսէր ընդ նմա շահն։ և իմէջ խօսիցն յաւուր միում ասացեալ է մելքիորն ընդ շահին. թէ յառաջնով ժամանակաւ ոմանք 'ի մերոց պատրեացն եկեալէն յայս երկիրս. և յաւազակաց սպանեալք են և թաղեալք կան 'ի լերինս. և արդ յօժարի կամք իմ հանել զոսկերս նց և տանիլ 'ի հայրենի գերեզմանատունս իւրեանց։ Իսկ շահն հեթանոս գոլով օրինօք և ազգաւ. և ոչինչ ունելով զփոյթ ոսկերաց մեռելոց. պատասխանեալէ նմա՝ դու գիտես։ ապա մելքիորն առաքեալ է զոմանս 'ի տեղին, որք հանեալք են զոսկերս գլխաւորին և զընկերին, և առ ինքն բերեալ. և ինքն ընդ իւր տարեալէ 'ի բուն ֆռանկաստան յերկիրն իւրեանց՝ իբրև զնշխարս մարտիրոսի։ Աւ այս ես այսպէս։

Աւ ժամանակս որ այժմս կամք մեք. է թուականն մեր Հայոց. հազար և հարիւրև եօթն՝ յորում և զպատմութիւս շարադրեալ գրեցաք, պատահեցաւ մեզ գալ 'ի մեծահան

դէս

դէս քաղաքն ապահան՝ քզի եկեալ էր աստ խո հական, և մեծահոգի, և արժանաժառանգ հայրապետն ամենից Հայոց կթղկն սրբոյ Էջ միածնի տեղեակօք առ ի տեսութիւն և յայտարա րութիւն բանաւոր հօտին Ք̃Ի՝ որ հաւատացա նմա ։ այլև ՚ի նուիրակութիւն մէջ Էջմիածնի ։ այլև ՚ի գործոց մարմնականաց յարդարումն որ ՚ի դուռն արքունի ։ որոյ ՚ի սպասաւորութիւն եկեալ էաք յոլովք ։ որով և գնացաք ՚ի տուն խօ ջայ սաֆարին յուխտ և յերկրպագութիւն նշխա րաց սրբուհւոյն հուփսիմեայ ։ և այլ յոլով նշխարաց որք կան անդր ։ և բացեալ զնշխարսն տեսաք զամէն՝ և կատարեալ զուխտն արժա նացաք օրհնութեանց սրբոյն ։ Ամենք յերևելի արանց ջուղայեցւոց ասացին մեզ զայլ ևս պատ մութիւն սակաւս ։ և շարադրութիւն պատմու թեանց նոցա էր այսպէս ։

Յետ ժամանակաց անցելոց պատմութեանցդ՝ զոր յառաջդ պատմեցաք՝ եկեալ է շահն յաս պահան ։ և ըստ հանապազորդ սովորութեան իւրում եկեալ է ՚ի տուն խօջայ սաֆարին ։ պատահեալ են և անդ ոմանք պատրիք փռան կաց՝ որք էին ՚ի կարգէ վերոյ ասացեալ պատ րի գլէլումին ։ իմէջ խօսից յիշեալ են զնշխարս սրբոց հուփսիմեանց ։ և բերեալ են զամէն նշ խարս սրբուհւոյն հուփսիմեայ առաջի շա հին ՚ի տեսութիւն ամենեցուն ։ և յորժամ բացեալ են զնշխարսն ։ յայնժամ պատեհ ժամ գտեալ են պատրիքն ։ և ՚ի շահէն խնդրեալ են իւրեանց ըղ պարգևս տալ նոցա մասն ինչ ՚ի նշխարացն այնո ցիկ ։ և շահն ինքն առեալ է ոսկր մի յոսկերացն ։ և զայն ևս դանակաւն հարեալ է և կտրեալ ։ զկէս ոսկերն դարձեալ ձգեալ է իմէջ այլ ևս նշխարացն ։ և զկէսն տուեալ է ՚ի պատրիսն ։

և նոքա առեալ էն և ամփոփեալ յինքեանս. Իւ զայլ ևս նշխարսն զՀասարակն, Հրամայեալ է խօջայ սաֆարին տանիլ և պահել. և նա բարձեալ 'ի միջոյ՝ և տարեալ 'ի տեղին ուր յառաջն եդեալ էր, և կայ անդէն մինչև ցայս օր: Իսկ վ̃ մասին, զոր այժմ առին պատրիքն տարեալեն 'ի բանդարայ աշխարհն 'ի քաղաքն, որ կոչի գոմայ, շինեալեն վանք 'ի նմին քաղաքի. և զմասն այն եդեալեն 'ի Հիմունս եկեղեցւոյ այնմ վանացն. և է վանքն այն այժմ կուսանաց վանք. յորում բնակեալեն բազումք ձգնաւորք կանայք:

---

Թէ ո̃ղ կամ յինչ պատճառէ տարան յասպահան քաղաք զԱՋ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին. և զԲարքին սրբոյ աթոռոյն Էջմիածնի:

## ԺԼ:

## ՍԻՆՈՒ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՐ

սից առաջին շահաբասն. որ զազգս Հայոց արտասահման արար 'ի բնիկ աշխարհէն Հայոց. և վարեաց յաշխարհն Պարսից, այնու դիտաւորութ̃ն որ̃ զի աւերեսցի աշխարհն Հայոց՝ և շինեսցի աշխարհն Պարսից. և նուազեսցի ազգս Հայոց՝ և բազմասցի ազգն Պարսից: և զի էր շահաբասն ինքն այր զգոյշ և նախահոգակ. և յար, և հանապազ խորհէր՝ և խոկայր. թէ որպիսի հն̃արս հնարեսցէ վ̃ ազգին Հայոց՝ զի մի դարձցին յաշխարհն իւրեանց. այլ մնասցեն յաշխարհն Պարսից: վ̃ զի ժողովուրդքն Հայոց, այնք, որք յաշխարհին Հայոց ծնեալք էին, յոյժ բաղձային գնալ յաշխարհն Հայոց: վ̃ որոյ յաղագս գիւտի հնարից խորհրդեալ զի

ջանէր

ջանէր 'ի վեհականէ փառաւորութենէ իւրմէ շահաբանն. և խօսէր ընդ ազգին Հայոց՝ որում և պատահէր. եթէ նշանաւոր երևելի արանց՝ և թէ փարթամաց՝ և եթէ աղքատաց՝ խօսեցուցանէր զժողովուրդսն. և ինքն յակնկալս կացեալ մտօք ունկն դնէր բանիցն. և 'ի սիրտս իւր ժողովէր զանօրէնութի. և յղանայր զցաւս։

Իսկ ոպ̄ յառաջ դ ասացաք. այլակերպէր զինքն շահն. և շրջէր 'ի փողոցս և 'ի պողոտայս 'ի լսել թէ զինչ ասեն։ Մտանէր 'ի տունս տունս. որում և պատահէր բանս ինչ առաջ արկեալ խօսէր 'ի կողմանէ շահին՝ և 'ի կողմանէ ուխտին. եթէ շահն խաղաղասէր և արդարադատ է. և ոչ թողու իշխանաց որ զուլմ առնեն ուխտին։ մանաւանդ առաւել խնամակալէ ազգին Հայոց։ որ զնմ̄ զգործ և ըզ բանսն ըստ կամաց նոցա կատարէ։ և ընդէր ազգն Հայոց ոչ են ջերմագոյն և յօժար կալ 'ի յաշխարհս սպահանայ. զի շէն աշխարհ է և ընտիր է. իսկ աշխարհն Հայոց սահրատ է և բերան թշնամեաց։ և հանապազ աւար և գերութիւն։

Իսկ բազում անգամ լռեալ պատասխանի թէ յաշխարհին Հայոց ամենից բարեաց լիութիւն և առատութիւն է և թեթևագին է. և աստ սուղ է և թանկագին։ և անդ գերեզմանս տունք հարց և նախնեաց նոցա։ և վանորայք, և ուխտատեղք. ուր դամբարանք են սրբոց և մանաւանդ մեծահանգէս աթոռն սրբոյ Էջմիածնի. ուր կայ սբ̄ աջն գրիգորի լուսաւորչին. որով օրհնի սբ̄ մեռոնն. ուստի գնացեալ սփռի յազգս Հայոց յա̄մ աշխարհս ուր և իցեն. վնրդ ա̄մ ազգն Հայոց հնազանդին սրբոյ աթոռոյն

Էջմիածնի և կաթողիկոսին՝ որ անդ նստի։ Իսկ զայս բանս ոչ թէ տգետք և աննշանք ոմանք միայն ասացեալ են. այլև նշանաւորք և գիտունք։ Այլև լուայք յոմանց թէ զայն ևս ասացեալ են. թէ կամի շահն որ հաստատուն մնայ ազգն Հայոց յաշխարհիս Պարսից. պարտ է նմա բերել զաջ սրբոյն գրիգորի լուսաւորչին յասպահան. և անդ շինել նոր Էջմիածին. զի անդ լիցի օրհնեալ մեռոնն. և անդ նստցի կաթողիկոսն. և ապա ազգն Հայոց կայաւորեալ մնասցեն. քանզի 'ի վերայ աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալք կան։

Արդ օձն դարանակալ՝ և խորամանկ թշնամին կենաց, և հոգւոց, և հաւատոց քրիստոնէից, որ յար և հանապազ 'ի տարակուսի կայր վասն ազգին Հայոց. արդ 'ի նոցանէ լուաւ զատոյգ լուծումն տարակուսանացն։ Այնուհետև հաստատուն և անփոփոխելի եդ 'ի մտի իւրում քակել զտունըն Էջմիածնին՝ և խափանել որ անդ զկաթողիկոսութիւն. և բերել զաջն լուսաւորչին, և զքարինսն Էջմիածնի յասպահան. և անդ շինել նոր Էջմիածին։ զի անդ նստցի կաթողիկոսն. և անտի փոխեսցի մեռոնն ընդ ամենայն աշխարհ, ոչ զի այնու մնասցեն ազգքն Հայոց 'ի Պարսկաստան, այլև շահք և մուտք ամենից աշխարհաց ժողովեսցի 'ի քաղաք և յազգ իւր։ Սորա իմէջ քրիստոնէից ասպահանու նշանակեալ զատոյց տեղի ուր շինել կամէր զԷջմիածին. և էր տեղին այն մերձ այնմ այգւոյն որ բարբառոյն Պարսից բաղեզըրիշկ ասեն յարևմտից կումէ՝ յետուստ կողմանէ նորին, կից նմին այգւոյ։

Իսկ յաւուր միում գնաց շահն 'ի նշանակեալ տեղին, էր ընդ նմա և խօջայ Նազարն՝ և անփոփոխելի դիր հաստատեալ 'ի միտս իւր.

այլք ոմանք 'ի Հայոց, ասաց շահն ընդ խօջայ
նազարին, վն՟ ձեր շինեմ աստ զԷջմիածին, զի
մի վն՟ այնմ Էջմիածնի կարօտութ՟ն կրեալ
ձմլեսցին սիրտք ձեր։ և հրամայեմ գնալ բա
զում ուղտս և ջորիս և սայլ, զի զքար և զհող
այնմ Էջմիածնի քանդեալ բերցեն աստ,
զի այնու քարով և հողով շինեսցի այս Էջ
միածինս. որպ՟ զի առանց նմք երկբայութե հա
տատեսցին սիրտք ձեր նվ՟ նոր շինեցելոյս։ Եւ
այսու կերպիւ հնարեալ կամէր քանդել զսբ՟
Էջմիածինն։ Իսկ խօջայ նազարն քանզի ոչ
կամէր զքանդումն սրբոյ Էջմիածնի զի կրս
կիծէր սրտի նր՟. և առ 'ի խափանելոյ զխոր
հուրդ շահին, պատասխանեալէ այսպ՟։ Թա
գաւորն ողջ կացցէ՝ եթէ կամք քո յօժարեսցի
շինել Էջմիածին գեղեցիկ և հաստատ, կա
րող եմ յարծաթոյ և յոսկւոյ շինել թող թէ 'ի
քարէ. և զինչ հարկէ յաղագս քարի և հողոյ
զայնքան աշխատութիս կրել. և զայնքան
ծախս ծախել նվ՟ նր՟. որպ՟ զի 'ի հեռու և յօ
տար աշխարհէ զքար և զհող բերել բաւական
և բարւոքէ այս աշխարհիս քարն և հողն, եթէ
կամիս շինել սրբոյ շինես. և ընդունելի է մեզ։
Իսկ ամենաթագաւորն Ած՟. որոյ թգ՟րու
թին միայն է յաւիտենական, որ և զանցանէ
զբաղմօք խորհրդովք մարդկան. թգ՟ւորաց,
աղգաց և ազանց՝ ըստ գրեցելումն, թէ Տր՟
ցրուէ զխորհուրդս հեթանոսաց՝ անարգէ Տր՟
զխորհուրդս ժողովրդոց. և արհամարհէ Տր՟
զխորհուրդս իշխանաց։ Իսկ խորհուրդ Տն՟
յաւիտեան մնայ. և խորհուրդ սրտի նր՟ յազ
գէ մինչև յազգ։ Այլ կամեցաւ զկատարումն
խորհրդեան շահին յայնժամ. թէպէտ և
զոր խափանեցաւ խորհուրդ նր՟ այսու պատճա

ուաւ ։ զի հանդերձեալ էր նա գնալ յաշխարհն Վրաց իւր՟ թգ՟ւորց և ազգին նց՟ . և բազմօք զօրօք, և յոյժ պատրաստութբ՟ ելեալ յասպահանայ գնաց յաշխարհն Վրաց ։ Եւ նախ ՚ի կախեթ էմուտ և զթգ՟ւորն կախէթու զթամրազ փախոյց և զերկիրն աւերեաց . և եկեալ եմուտ յերկիրն քարթլայ և բանակեցաւ ՚ի վերին կողմն քաղաքին զօրու իւր՟ ճանապարհին, որ գնայ ՚ի պշխաչուխ . և խոկայր և սպասէր թէ որով հնարիւք ՚ի բուռն ածեալ ըմբռնեսցէ զթգ՟որն Վրաց ։ ոչ՟ և յառաջագոյն զնմ՟ ոխութին պատմեցաք ։ արդ այսքիկ այսպէս ։

Այժմ ասասցուք զպատճառ հակառակութե կթղիկոսացն, զի նոցին հակառակութին է պատճառ յասպահան տանելոյ քարանցն Էջմիածնի և լուսաւորչի աջին ։

Ի ժամանակին յորում շահն զմեծ սուրգունն արար՝ և զազգս հայոց վարեալ տարաւ ՚ի յասպահան . գնաց ընդ նոսին և դաւիթ կթղիկոսն յասպահան՝ և անդ կայր , մելքիսէթ կթղիկոսն եւս գնաց ը սուրգունին, բայց ՚ի կէս ճանապարհէն դարձաւ՝ և եկն յԷջմիածին՝ և առնէր զկթղիկոսութին ։ Բայց նոքին մելքիսէթ կթղիկոսն ոչինչ բնաւ զփոյթ ունէր վասն շինութե , և պայծառութե , և ժամակարգութե , և հաստատութե Էջմիածնի . այլ նոքեան տեղի ընակութե կալեալ յերևան քաղաքի ՚ի կաթուղիկէ եկեղեցւոջն . և իւր՟ իւր ժողովեալ զազգականս և զմերձաւորս իւր նոքօք յօրանայր լոյծ և ընդարձակ կենօք . մախք և արդեամբք որբոյ աթոռոյն Էջմիածնի ։

Այլն յայնմ ժամանակի՝ և եպիսկոպոսք ոմանք ՚ի սբ՟ Էջմիածնին ՚ի նոյն դեղջէն Էջմիածնի . որոց անուանքն էին կարապետ՝ և մարտիրոս՝

տիրոս՝ և յօհան՝ ընդ որս և այլք ևս եպսկք և աբեղայք · սոքա հոգային վասն Իջմիածնի հանապազ՝ և ցաւէին վն անշքութե՛, և ունայնութենորին · և զայրանային ընդ արարս մելքիսէթ կթղկսին ։ և բազումանգամ աղաչանօք՝ տրտնջմամբ՝ և զայրացմամբ ասացին · թէ մի թողուր զաթոռն այնպէս ունայն և անշուք · այլ յաթոռն նստելով կաց սրբ.քում ախորժակաց · գոնեայ զի միայն սուտ լինիցիս , և այն ևս բաւական է մեզ և աթոռոյս ։ Իսկ մելքիսէթ յօրացեալ և ստոմարացեալ գոլով պետականաւ իշխանութբ · ստունգանէր՝ և անկուշէր զնմին ասացեալսն նոցին ։ Իսկ եպսկպսն սրտնեղեալ ընդ աղօտութեն և ընդ անշքութեն Իջմիածնի՝ և ընդ քամահանս բանից նորեանց ։ միակամ եղեալ ամքն ծանուցին իշխանի աշխարհին ամիրգունայ խանին · որոց ամբաստանութեն կալաւ խանն զմելքիսէթ կթղկսն · և էառ վաթսուն թումանս զտուգանս ։ որոյ վն սրտամտոյ լեալ կթղկսն 'ի խանէն ելեալ գնաց 'ի Ս րացատուն իբր խուսեալ 'ի խանէն ։ և յաղագս գնալոյ կթղկսին իշխանք և բարեկամք խանին մեղադրելք եղեն նմա · վն որոյ և խանն զարս ոմանս առաքեաց զկնի մելքիսէթին կոչնականս · խոստանալով նմա պահել զնա պատուով և կատարել զնմին կամսն, և ապա մելքիսէթն դարձաւ՝ և եկն յերևան , և խանն առի շահել զսիրտն մելքիսէթի կալաւ զեպսկպսն և էառ զտուգանս ։ այնուհետև կարապետ եպսկպսն էթող զաշխարհ և գնացեալ յանապատ կրօնաւորեցաւ · այս այն կարապետ եպսկպսն է , զոր 'ի Ճառն մեծանապատին յիշեցաք · թէ եկեալ բնակեցաւ 'ի սեւան կղզին ։ Իսկ վն մարտիրոս եպսկպսին կա

թողիկոսն խնդրեաց 'ի խանէն, զի արտասահման արարեալ վարեսցէ յարարատեան աշխարհէն, և խանն արար այնպէս. զի զզինուոր ոմն կարգեաց ի վ՟ր մարտիրոս եպիսկոպոսին վարիչ. որ վարելով զնա տարաւ մինչև ցհին Ջուղայ. զգետն երասխ անցոյց յայն կոյս, և ապա դարձաւ զինուորն:

Իսկ մարտիրոս եպիսկոպոսն ոչ ուրեք արգելաւ՝ այլ գնաց յասպահան, և եմուտ, և յարեցաւ առ դաւիթ կաթողիկոսն. և օր աւուր 'ի ժամու և 'ի տարաժամու պատմէր առաջինն զարարսն մելքիսէթի. և զաւերութիւն և զամայութիւն Էջմիածնի: Նոյնպէս և առաջի ժողովրդականացն Ջուղայեցւոց և երևանցւոց համապազ խօսէր և ծանուցանէր. իսկ ջուղեցիք՝ և երևանցիք կարի վշտացան ընդ արարսն մելքիսեթի և ընդ ամայութիւն Էջմիածնի: ժողովեցան առ դաւիթ կաթողիկոսն. և հարկեցին զնա գնալ յԷջմիածին՝ տիրել և հոգալ զշինութիւն նորա, ասելով. մեք օժանդակեմք քեզ յամ՟ն գործս և 'ի բանս, և դաւիթ կաթողիկոսն ելեալ յասպահանայ ընդ որում և մարտիրոս եպիսկոպոսն եկին յերևան քաղաք և յԷջմիածին: և յաւուրս յայսոսիկ յորում շահն 'ի գօրի բանակ եդեալ նստեալ կայր. դաւիթ կաթողիկոսն և մելքիսեթ կաթողիկոսն երկոքեան 'ի միասին էին 'ի սուրբ Էջմիածինն. բայց նախանձն, և ոխակալութիւն, և հակառակութիւն ոչ սակաւ յորդեալ առաւելաւ ի մէջ ն՟ց այսու պատճառաւ:

Քանզի դաւիթ կաթողիկոսն յառաջագոյն և նախ էր լեալ կաթողիկոս քան զմելքիսեթն. և աւուրբք և ալեօք ևս ծեր էր. նաև դաւիթն էր օրհնեալ զմելքիսեթն կաթողիկոս՝ զի լիցի ինքեան ընկեր և ձեռնտու. բայց նա եղև խոչ

ընդ

ըստակն։ և յետ ամաց ինչ, որ յառաջեաց մելքի
սեթն յանուն և 'ի գործ կթղկութե. միան
գամայն յինքն կոչեալ գրաւեաց զիշխանու
թն կթղկութն, և ինքն վարէր. և զդաւիթ
հարստահարեալ և արտաքսեցեալ 'ի բացեայ ա-
բար յիշխանութէ։ Իսկ որ դաւիթն էր ասէր
ցմելքիսեթն. թէպէտ և իբրաց կացուցեր զիս
յիշխանութէ կթղկութն այլ դու նեայ թերևս
ծերութե իմոյ գթա և խնայեա. և տուր ինձ որ
աւուր զդարման պիտոյից պարէնի կերակրոց և
զգեստուց. զի անցուցից զսակաւ մնացեալ ժա
մանակս ծերութե իմոյ. և մի վշտացուցաներ
զծերութիւ իմ։ Իսկ մելքիսեթ գիրացեալ՝ և
ստոմարացեալ և յօրացեալ յիշխանութե մի
ջի, ոչ կամէր լսել դաւթի. ըստ ակրունա
կան առակին որ վասն այրույն և անիրաւ դա
տաւորին պատմի. զի զորինչ ասէր դաւիթ՝ զնա
նիւ նորա մելքիսեթն ստունդանէր։ Նա և
արք՝ որք մելքիսեթեանք էին. եթէ խոհր
դակիցք, և եթէ սպասաւորք. 'ի չմարդի կա
լեալ զդաւիթ արհամարհանօք ունէին զնա.
և բանս եպերանաց՝ և քամահանաց անգոսնե
լով ասէին նմա. ոչ թէ 'ի ծածուկ՝ այլ յայտ
նի, և յերեսս նորին. և իւր սուղինչ կարեաց և
պիտոյից վշտացուցանէին զնա ընդվայր։ Նու
ըստ յոլովից ժամանակաց տմարդութե նց գործ,
յույժ դառնացաւ դաւիթ. զի ընաւ ոչ թու
լանային 'ի բիրտ բարուց իւրեանց. և մահու
չափ վշտացեալ յոգի իւր. այնուհետև թախ
ծեալ սրտիւ ելեալ գնաց 'ի գօրի 'ի բանակ շա
հին. զի յանդիման եղեալ շահին ամբաստան
լիցի զմելքիսեթ կթղկսէն։ զի յայսմ ժամա
նակի տակաւին շահն 'ի Սրացուն էր. մերձ
քաղաքին գօրու բանակեալ էր և նստեալ։

և ինքն

և ինքն շահն զերկոսին կթղկոսան կարի քաջ
ճանաչէր. բայց զդաւիթ առաւել ընդունէր
քան զմելքիսէթ. վն զի 'ի ժամանակին՝ յո
րում զմեծ սուրգունն արար շահն. երկոքին
կթղկոսունքն գնացին ընդ սուրգունին. և յոր
ժամ հասին յահար և 'ի մուշկուն կոչեցեալ
գաւառն՝ անտի մելքիսէթ կթղկոսն առանց
գիտելոյ շահին դարձաւ յերեւան և յէջմիած
ին՝ և վարէր զիշխանութիւն կթղկոսութե թարց
հրամանաց շահին։ Իսկ դաւիթ կթղկոսն
գնաց ընդ սուրգունին 'ի սպահան. և անդ
'ի սպահան բազումանգամ հանդիպեալ շա
հին. և շահն ընդ նմա գթով և քաղցրութբ
խօսէր՝ մինչ որ հայր ես կոչէր զնա շահն. եթէ
կեղծաւորութբ և թէ ճշմարտութբ։ Արդ
դարձն մելքիսեթին յերեւան՝ ծանր թուե
ցաւ շահին. և գնալն դաւթին յասպահան
դիւր՝ վն այսորիկ առաւել ընդունէր շահն
զդաւիթ։ Իսկ դաւիթ կթղկոսն գնացեալ
էհաս 'ի բանակն արքունի. և յաւուր միում
եկեալ յանդիման եղեւ շահին. և 'ի տեսա
նելն զնա շահն ըստ նախկնի սովորութեն գ
թով և քաղցրութբ խօսէր ընդ նմա. և հար
ցանէր թէ զիարդ կեաս 'ի կեանս քո դիւրու
թբ և անդորրութբ։ Եւ դաւիթն պատաս
խանեալ ասաց, թգւր յաւիտեան կեցցես. թէ
պէտ և իցեն ինձ նեղիչք, և դառնացուցիչք.
այլ տեսանելով զքաղցրութիւն և զվայելչութիւն
երեսաց՝ և զմխիթարութիւն բանից քոց, մոռա
ցումն և փարատումն լինի ամենից վշտաց իմոց։
և շահն հարցեալէ՝ ո՞վ է այն այր, որ զքեզ վշտա
ցուցանէ. պատասխանեալէ դաւիթ բարբա
ռոյն այլազգեաց՝ թէ սմուկ սաթան խալիֆէն.
որ է ոսկերաց ծախօղ։ և սմուկ սաթան ասե
լով

լով սկսեալէ յամբաստանութեն Մելքիսեթի՝ զի զարարոնս յիշեալէ առաջի շահին, որ զնչխարս սրբուհւոյն հուխխմեայ յաղագս կաշառաց թողեալ փռանկաց զի տարան։ Այլև արք ոմանք ասացին, թէ դաւիթն զայս բանս և ասացեալէ առաջի շահին. եթէ ոչ երթիցէ աջ լուսաւորչին, և քարինքն Էջմիածնի յաս պահան. անհնար է մնալ ազգին հայոց յաս պահան։ Իբրև լուաւ շահն զնչխարաց ծա խելն՝ հետաքրքիր եղեալ տեղեկացաւ ամենից որպիսութեցն. և խղճ արար մանցն Մելքիսեթի տխրեցաւ՝ և 'ի ցասումն և 'ի զայրացումն շարժեցաւ՝ այնքան մինչ 'ի պատիժս և 'ի տանջանս մատնեաց զՄելքիսեթ։

'Ի սոյն ժամանակի տարաւ առ ինքն շահն զամիրգունայ խանն՝ մինչ էր 'ի Սրացտան տեսլով՝ եկեալ ընդ մեզ կացցես 'ի գործս պատերազմիս ընդդէմ թշնամեացս։ և նա գնացեալ 'ի Սրացտուն կայր 'ի բանակի շահին։ Նա շահն փոխանակ և տեղապահ ամիրգունայ խանին առաքեաց զորդի նորին որոյ անունն էր Թահմազղուլիբէկ. որոյ եկեալ յերևան քաղաքէ եմուտ 'ի բերդն՝ և անդ նստեալ պահէր զաշխարհն։

Նա շահն ցասմամբ մեծաւ հրամայեաց գրել զնոմոս արքունի հրամանաց խղճ թահմազղուլիբէկին, և առաքել յերևան առ նա. և էր գոյացութին գրեալ բանին այսպէս։ Հրամայեալ է քեզ Թահմազղուլի. զի զՄելքիսեթ կաթողիկոսն կալեալ տանջանօք չարչարեսցես. և զինքեան իսկ զմարմնոյ զմիսն կտրեալ ինքեան ուտեցուսցես։ և ապա զՄելքիսեթն կապանօք. և զհայոց ազգի լուսաւորչի աջն առ իս առաքեսցես աստ։ Նա զայս գիր ետուն իշխանի

ումեմն

ումեմն նաղդիբէկ անուամբ. որ փութանակի հասոյց յերևան առ Թահմազղուլի բէկն: և Թահմազղուլիբէկն վաղվաղակի 'ի ձեռն ածեալ ըմբռնեաց զմելքիսէթ կթղկոն. և սկսաւ չարչարել՝ և բազմաւ ստիպով խնդրէր զաջ սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին: Իսկ կաթուղիկոսն և իւր միաբանքն անճար մնացին. և ոչ գիտէին հնարել ինչ. վն զի սաստիկ տագնապաւ խոշտանգէր զնս Թահմազղուլին. վն որոյ ածին առաջի Թահմազղուլիբէկին զաջ սրբոյ լուսաւորչին. այլև ընդ նմին զմէկ ոսկետուփ և մեծագին աւետարան. և զմէկ արծաթեայ խաչ: և Թահմազղուլին առեալ զսոսա և զմելքիսէթ կթղկոն, եկն յերևան քաղաք:

Յետ այսորիկ բերին զմելքիսէթն յերևանայ բերդի մէջն և իվր գետնայ տարածեցին զնա. և 'ի չորից կողմանց քարշեալ պրկեցին զնա կապեալ 'ի ցիցս. և արկին յորսայս. և առեալ զբևեռաքաշս այսինքն քալբաթին. և այնու կորեցին զմիսն ծղեացն, որ է թևերն. և զայն կորեալ միսն եդին 'ի բերան նորին. և յերկուց կողմանց կանգնեալ փայտաւորք հարկանէին զնա և ասէին՝ ծամեա՝ և կուլ տուր. և մելքիսէթն թէպէտ և ոչ կամէր՝ սակայն 'ի վտանգէն անճար մնացեալ ծամեաց և էկուլ: և ապա աղաղակեաց մունետիկն՝ թէ կատարեցաւ հրամանն Թգրին իվր խալիֆային. զի զմիսն իւր ծամեաց և էկուլ: Զայս գործս և տանջանս արարին այլազգինքն ընդ մելքիսէթին յաւուրս պահոց փոխման ծծածնին:

Զկնի այսց գործոց. Թահմազղուլիբէկն պատրաստեաց զզօրականս. որոց գլխաւորի անունն էր նաջիբլու ղուբաթ աղայ. և ետ 'ի նս զմելքիսէթ կթղկոն կապանօք. ընդ նմին և

զաջ

զայն լուսաւորչին, և զաւետարանն, և զխաչն։ և նոքա տարեալ հաւատացին 'ի բանակն արքային, և ծանուցին շահին. և նա հրամայեաց բերել առաջի իւր. և բերեալ բացին առաջի շահին զայն, և զաւետարանն, և զխաչն. և շահն մի մի 'ի ձեռս իւր առեալ տեսանէր. զաւետարանն, և զխաչն, և ապա զլուսաւորչի այն. և հարցանէր թէ ստուգիւ այս է լուսաւորչի այն. պատասխանեալ ասացին թէ ստուգիւ այդ է. և ապա համբուրեալ զայն եդ 'ի վայր։ Իսկ վ̃ն մելքիսէթ կթղիկոսին հաստատեալ էր շահն զկամս իւր զի սպանցէ զնա. բայց ամիր գունայ խանն յոյժ ընդունէր զմելքիսէթն՝ զի բարեկամ էր նմա։ յաղագս այնորիկ հնարեաց՝ զի զերեսին զորդիսն իւր՝ որք էին նոքա ժամայնք տղայք՝ առաքեաց առաջի շահին. որ առ ժամաւն անցանէր ընդ մէջ բանակին. և տղայքն զթիւրս իւրց̃ արկեալ էին իվ̃ պարանոցի իւրց̃՝ զորս 'ի տեսանելն շահին և 'ի հարցանելն՝ իմացաւ որ վ̃ն մելքիսէթին աղաչեն՝ զի մի սպանցէ. այլև իմացաւ թէ ամիրգունայ խանն հնարեալ է զայն. վ̃ն որոյ իջաւ 'ի կամաց սպանանելոյն։ այս գործ. զոր արար ամիրգունայ խանն յոլով աւուրքք յառաջ էր քան զբերելն մելքիսէթին առաջի արքային. որոյ աղագաւ ոչ արար շահն հրաման սպանանելոյ կամ տանջելոյ զմելքիսէթն. յաւուրն յորում յանդիման կացուցին զմելքիսէթ, և զսրբութիւն առաջի թգ̃ւրին։ որև յետ տեսանելոյ սրբութեցն, դարձուցեալ զբանս իւր շահն առ մելքիսէթ կթղիկոսն ցասմամբ և զայրացմամբ՝ բազմաւ բանիւ յանդիմանեաց զնա։ և 'ի զրաւ բանին ասաց դատաստանն քո աստ ոչ լինի առնել զի դիւան քո մեծ է՝ այժմ պարտ է քեզ գնալ

գնալ յասպահան և անդ կալ մինչև ես եկեալ անդ արարից զդատաստանն քո։

Արդ աստանօր պարտ է մեզ սքանչանալ և հիացմամբ զարմանալ ընդ հատուցումն գործոյն՝ որ կատարեցաւ ի վ՛ր մելքիսեթ կաթուղիկոսին։ զի նա՝ Եախ զԱ.Ո օգնութենն անտես արարեալ ՚ի մարդ յուսացաւ. և առուն գանեաց զբանս օրինացն, որ ասէ, անիծեալ որ դիցէ զյոյս իւր ՚ի մարդ. և Երկրորդ՝ զի արհամարհեաց զսրբազան վարդապետն, որ վասն վճարելոյ զպարտսն սրբոյ աթոռոյն Էջմիածնի և վն՛ նորին նորոգութե եկեալ էր ՚ի համթայ։ այլ զյոյս իւր եդեալ ՚ի շահն. ապա տան արտի իւրոյ զնա արարեալ գնաց առ նա ՚ի սպահան զի յապագայ ժամանակս բարութիւ բազում ընկալցի ՚ի նմանէ. և այսօր ինքն ևս զհատուցումն երախտեաց՝ և ակնկալութե իւրոյ զայս չարչարանս ընկալաւ ՚ի նմանէ՝ ըստ որում պատմեցաք. և տակաւին ևս պատմելոց եմք փոքր ՚ի շատէ։ և այսպիսեօք լինի կատարումն բանին որ գրեալ է, թէ Որով և մեղանչէ ոք նովիմբ և տանջեսցի։ կամ թէ մի՛ յուսայք յիշխանս. և ՚ի յորդիս մարդկան զի ոչ գոյ փրկութի ՚ի նոսա։

Եւ դարձեալ աստանօր երևի լինել կատարումն բազմաժամանակեայ բաղձանաց շահին. քանզի նա որ ՚ի վաղուց ժամանակաց ցանկայր, խորհէր, և խոկայր, թէ որով հնարիւք քակեսցէ զսուրբ Էջմիածինն. և խափանեսցէ զանդ եղեալ կթղկսութիւն. և ՚ի սպահան շինեսցէ Էջմիածին. և անդ կարգեսցէ զկաթուղիկոսութիւն. արդ ահա եգիտ զպատճառ ըստ յօժարութե կամաց իւրոց։ Մինչզի դարձոյց զմելքիսեթ կթղկսն յերևան առ թահ-

մազղուլի խանն. և գրեաց զնամակ հրամանաց իւր նր այսպէս. Ո՛ խանիր Թահմազղուլի՝ զի ահա դարձուցաք առ քեզ զմելքիսէթ կաթուղիկոսն, և զլուսաւորչի աջն, և զաւետարանն, և զխաչն։ այլև գնասցես յԷջմիածին. և զնշանաւոր քարինս Էջմիածնի քակեալ հանցես 'ի տեղւոջէն. և զայն քակեալ քարինսն Էջմիածնի, և զլուսաւորչի աջն, և զաւետարանն, և զխաչն, և զմելքիսէթ կաթողիկոսն, զամենեսեան զսոսա առաքեսցես գնալ 'ի քաղաքն ասպահան։ Իսկ 'ի հասանել հրամանաց թղթերին առ Թահմազղուլի խանն. կամակար մտօք պատրաստեցաւ զամ՟ն անթերի կատարել. ոչ զի այնու հաճոյական ծառայ երևեսցի առաջի շահին։

Իսկ նախքան զքարինսն Էջմիածնի՝ զլուսաւորչի աջն կամեցաւ Թահմազղուլի խանն յառաջագոյն առաքել. վ՟ն զի մտօք դիտեալ նկատեաց՝ զի մինչ 'ի քակել քարանցն. և 'ի պատրաստել զամ՟ն կահս տանելոյ նր. նա և գնացումն քարանցն յամրագոյն և ծանր լինի. բազումք աւուրք իւր անցանեն՝ և անագանի. վ՟ն այսմ պատճառի կամեցաւ զաջն յառաջագոյն առաքել։ Յաղագս որոյ պատրաստեաց զզօրականս զի տարցին զաջն 'ի սպահան. այլև յովանէս անուամբ զոմն քահանայ աշխարհիկ. որ էր այր ճարտար և իմաստուն 'ի բանս և 'ի գործս. որ 'ի նոյն գեղջէն Էջմիածնի էր. զոր հրամայեաց Թահմազղուլի խանն գնալ ընդ զօրականացն վասն սպասաւորութե աջոյն։ Իսկ կարգեալ զօրականքն և տէր յովանէսն առին զլուսաւորչի աջն՝ և զայն ոսկէտուփ աւետարանն և զայն արծաթեայ խաչն. զայս երեքս իմիասին առին և ելին յերևանայ՝ և գնացին 'ի քաղաքն ասպահան. և յորժամ

մերձ եղեն քաղաքին Ասպահանու․ յամենայն
ազգն Հայոց․ որք կային 'ի քաղաքն Ասպա
հան, որոց և հրաման արարեալ էր շահն․
ելին ընդառաջ լուսաւորչի աջոյն խաչվա
ռօք և աւետարանաւ՝ խնկօք և մոմեղինօք՝
և երգօք եղանակօք․ և բազմաւ պատուով
բերեալ հանգուցին 'ի տուն խօջայ սաֆարին․
ը̅ նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ․
և ընդ այլոց սրբութեանց որք անդէն կային։
Արդ աջ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին․
այսպիսեաւ պատճառաւ և կերպիւ գնաց
յԱսպահան։

Իսկ Թահմազղուլի խանն՝ յետ լուսաւորչի
աջոյն առաքելոյ՝ բազմաւ ջանիւ հոգայր զքա
րինան առաքել․ վասնորոյ ինքն յոլովուք զօրականօք
գնաց 'ի սուրբ Էջմիածինն․ և զնշաւոր քա
րինան Էջմիածնի՝ քակեալ հանին 'ի տեղւոյն․
որք են այսոքիկ։ Սուրբ սեղանն, յորոյ վերայ
պատարագն սրբ մատչիւր։ Եւ այս սեղանոյ
սիւնն․ Ի՛ն իջմանն տեղեաց քարն․ Աւազանն․
մէկ քար 'ի կողման հարաւային ատրճանի բե
մին։ և մէկ քար 'ի կողման հիւսիսային ատրի
ճանի բեմին․ վասնզի աւագ բեմի ատրճանքն
յերկուց կողմանց են 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ։
Չորս քար 'ի չորից անկեանց եկեղեցւոյն 'ի
դրուց կողմանէ։ Երկու քարէ մոմդան․ որ
մեծ խուղաբերից մոմդնեն իմէջն, և վառեն։
Երեք այլ որիշ քարինք 'ի սալայարկ քարանց
բեմին։ Ընդ ամէն տասն և հինգ քար․ զայս
քարինքս քակեցին, և հանին յԷջմիածնէ և
եդին իմէջ կաշոյ և կարեցին։ Եւ ապա պատ
րաստեցին զարս զօրականս․ որոց գլխաւորի
անունն էր Նաղդիբէկ։ և զայն տէր յովանէսն,
զոր ընդ լուսաւորչի աջին առաքեցին վն սպա

սաւո

խաւորութե այլին. նա 'ի սպահանայ դարձեալ էր և եկեալ. զնա միւսանգամ կարգեցին գնալ ընդ .քարանցն վն նոցին սպասաւորութե։ Ապա պատրաստեցին ՟Ը բաւականի .քարանցն տալ. և .քարշեալ տարան 'ի .քաղաքն սպահան։ բայց 'ի .քաղաքն ոչ մուծին. այլ արտաքոյ .քաղաքին մերձ Թօխչոյ դարվազին այլազգի մահմետականաց գիւղ կայ, որոյ զանունն բաթուն կօչեն. յայս գիւղս հասուցեալ զ.քարինսն. եդին ի մէջ գմբէթին. որ մերձ 'ի գիւղն շինեալ կայր։ Իսկ յորժամ .քարինքն եկեալ մերձ եղեն գեղջրն այնմիկ. ամենեքեան, որք 'ի հայոց ազգէն բնակեալք կային 'ի .քաղաքին սպահանայ՝ հրամանաւ .քաղաքապետին ելին ընդառաջ .քարանցն խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք՝ և երգօք եղանակօք բերեալ 'ի գիւղն բաթուն եդին ի մէջ գմբէթին։

Իսկ մնացին .քարինքն անդէն ի մէջ գմբէթին եօթն ամ, ոմանք աւելի և սակաւ ասացին։ Իսկ ապա բնակիչք բաթունայ գեղջն զարզայ եսուն շահին՝ թէ խնդրեմք յարքայէ. զի հրամանատացէ վն .քարանցն Էջմիածնի հանել 'ի գեղջէս մերմէ և տանիլ յայլ տեղի. վնզի արք գեղջս մերոյ մեռանին. և անդք մեր ոչ են տան զպտուղ ոչ յառաջն տային. վն որոյ հրամայեաց շահն՝ զի հանցեն անտի զ.քարինսն՝ և տարցին ի մէջ ջուղայեցւոց. զոր և արարին, և 'ի բերել .քարանցն յորժամ մերձեղեն ջուղայու՝ ըստ առաջնոյ օրինակին ամք եկեղեցականք և աշխարհականք խաչիւ և աւետարանաւ՝ խնկօք և մոմեղինօք. և երգօք հոգևորօք բերեալ եդին 'ի խօջէնց եկեղեցին. և կայ անդէն մինչև ցայսօր։ Այսոսիկ .քարինս յորժամ հանեալ յԷջմիածնէ ուղևորեցին

գնալ 'ի սպահան Թուականն մեր հազար և վաթսուն և երեք էր։ և յորժամ էհաս 'ի սպահան փոխեալ էր զտարին, և մտեալ էր 'ի հազար վաթսուն և չորս։ Եւ յորժամ եկաք մեք 'ի սպահան՝ տեսաք աչօք մերովք զքարինսն. և Թուեցաք. և ապա գրեցաք։

Նոյնպէս և զմելքիսէթ կթղկսն բերին 'ի սպահան քաղաք զօրականքն, զոր նմա տանօղ էր կարգեալ Թահմազղուլի խանն. և անուն աւագի նոցա Թահմազղուլիբէկ։ Յորժամ էհաս մելքիսէթ կթղկսն 'ի սպահան. շահն համարէր զնա թէ 'ի բանտի արգելեալ կայ 'ի կալանս. բայց նա կայր յընդարձակի՝ և վարէր զիշխանութի կթղկութեն իւրոյ հայազուն քրիստոնէիցն՝ բնակելոցն 'ի քաղաքին սպահանու՝ և յամ շրջակայ գաւառսն։ Արդ զքարանց տանելոյ Թուականն գտաք և գրեցաք. իսկ զլուսաւորչի աջի տանելոյ և զմելքիսէթ կաթուղիկոսի տանելոյն ոչ գտաք՝ վն որոյ և ոչ գրեցաք։ Եւ այսուես այսպէս։

Յաղագս հարիւր Թումանն մուղագայրին. զոր շահն եդ իւրոյ մելքիսէթ կթղկսին։

## ԺԲ։

## ԱՐԴ ՈՐՊԷՍ ԿԱՆԽԱՒ

պատմեցաք վասն դաւիթ կթղկսին. թէ գնաց 'ի դուռն շահին. և արար զամբաստանութի զն մելքիսէթ կթղկսին. և շահն բարկացաւ իվր մելքիսէթին ընկէց 'ի կթղկութէն ևառաքեաց 'ի սպահան։ Իսկ դաւիթ կթղկսն մնաց անդէն 'ի բանակին 'ի դուռն շահին։ անդ էր և ամիրգունայ խանն։ որ էր տէր և իշխան ամի գաւառին արարատու և սրբոյ Էջմիածնի։

Եւ

Իսկ յաւուր միում յորժամ զհանդէս արա
քեալ էր շահն՝ և նստեալ կայր 'ի հանդիսին․
առաջի նորա կային կանգնեալ ամ̃ն նախարարք
և իշխանք իւր․ էր յայնմ հանդիսի և ամիրդու
նայ խանն և դաւիթ կթղկսն ։ Խօսեցաւ շահն
առ դաւիթ կթղկսն․ քաղցրութ̃բ ասելով․ շնոր
հեցաք․ քեզ զկթղկսական իշխանութին Էջմիած
նի ։ Արդ գնացեալ նստցիս յԷջմիածին և վա
րեսցես զիշխանութին կթղկսութեն ։ Յայն
ժամ դաւիթն խնդրանօք աղաչեալ առ շահն
թ̃ր իմ զիս 'ի խանն ամանաթէ․ ապա դարձու
ցեալ շահն զերեսս իւր առ ամիրդունայ խանն․
յանձնարար նմա զդաւիթ կթղկսն․ թէ բա
րուք խնամակալութ̃բ պահեսցես զխալիֆայ
հայրդ մեր ։ իսկ ամիրդունայ խանն խոնարհեալ
միջօք չափ․ և եդեալ զձեռն իւր ի վ̃ր գլխոյ
իւրոյ պատասխանեալ բանից շահին ասելով․
ի վ̃ր գլխոյ իմոյ ունի դա զտեղի հանգստեան ։

Որքան շահն 'ի Սրացաուն էր՝ անդ էին
կթղկսն և ամիրդունայ խանն․ և յորժամ շահն
ելեալ գնաց յերկիրն Պարսից՝ դարձան և եկին
ամիրդունայ խանն և դաւիթ կթղկսն յերևան․
խանն 'ի խանութ̃ի իւր ։ և կթղկսն 'ի կթղկսու
թ̃ին իւր ։ Որքան շահն յերկիրն տարպատա
կանի էր՝ 'ի մերձակայ քաղաքս և յերկիրս․ պա
տուէր ամիրդունայ խանն զդաւիթ կթղկսն․
և քաղցրութ̃բ խօսէր ընդ նմա վ̃ն երկիւղի
շահին․ և յորժամ հեռացաւ շահն՝ բարձաւ
երկիւղն 'ի սրտէ խանին․ և սկսաւ խոշորիլ
ընդ դաւիթ կթղկսին․ ոչ պատուէր, և ոչ
խօսէր․ և յորժամ խօսէր խրոխտանօք խօսէր․
քանզի զդաւթի յԷջմիածին նստիլն ոչ կա
մէր՝ այլ զմելքիսէթին․ վ̃որոյ ձաւադէմ
երևէր․ և խօսէր խանն ընդ դաւթին ։ և ոմանք

տացին. թէ ջանայր ես խանն թէ 'ի ծածուկ հնարիւք իմն սպանցէ զդաւիթ: Իսկ այս գործոյ խռովութե. զոր խանն առնէր ընդդաւթին. ոմանք ասացին պատճառ զծածուկ ներքնագործ հնարակերտութի մելքիսէթ կթիղկսին գոլ. Քզի թէպէտ նա կայր յաստահան՝ այլ հանապազ'ի ծածուկ զթուղթ և զազերս՝ զնշան սիրոյ ոչ պակաս առնէր 'ի խանէն՝ այլ միշտ առաքէր: Նաև իմէջ կթիղկոսականի իշխանութենն մելքիսէթն առաւել ձեռնտաց և բազմատուր էր դրամօք և այլ իրօք իշխանաց և զինուորաց և ուրոց համախոհից. վասորոյ խանն և այլք ամենեքեան զմելքիսէթի կթիղկսութիւն կամէին, և ոչ զդաւթին:

Իսկ 'ի ժամանակին յորում եկն սարդարն Օսմանցւոց՝ որոյ անունն էր Զղուղաւհմատ փաշայ իվեր երևանայ բերդին. եկն և շահն յերևան վա օգնութե բերդին. և կայր 'ի լերինս գառնու. և յորժամ դարձաւ սարդարն յերևանայ 'ի յարզրում. և շահն տակաւին 'ի լերինս գաւառացն էր բանակեալ: Իսկ դաւիթ կթիղկսն զանգիտեալ յերկիւղէ խանին մի գուցէ թէ 'ի ծածուկ դաւեալ սպանցէ զնա. անճարակ լեալ 'ի վտանկէն թարց գիտելոյ խանին միասանգամ դնացաւ շահն՝ և երեցաւ նմա. և 'ի հարցանելն շահին զորպիսութի դաւթին. ասաց դաւիթն այլազգեաց բարբառովն. փաշահում զանկի չայինտամ մանայ բիր իչումտու վերմաուիլար: զանկիչայ երևանայ մեծ գետն է, որ 'ի բերդի ներքևցէն անցանէ: Իսկ այսմ ամբաստանութեան գիտաց շահն, զի ամիրգունայ խանն է՝ որ ոչ տայ զհանգիստ դաւթի, և ոչ ընդունի զնա. և զայն ես ծանեաւ, որ 'ի պատճառս մելքիսէ
թին

թին ոչ ընդունի խանն զդաւիթն. վ՟ որոյ ոչ բարկացաւ խանին՝ սուղ ինչ ակնառութի ևս առնելով նմա. այլ մելքիսեթ կթ՟ղկոսին բարկացաւ յոյժ բարկութե՟. զի զայն ևս ծանեաւ որ մելքիսեթն ՚ի սպահան յընդարձակի կալով վարե զկթ՟ղկոսական իշխանութին ա_ ռանց հրամանաց շահին: վ՟ որոյ հրամայեաց պատրաստել զօրականս՝ զի գնասցե ՚ի սպահան և կալեալ զմելքիսեթն կապանօք բերցե առ շահն. զոր և իսկոյն առաքեցին զումն թփրական ծառայ անունն չարքազ իբրահիմ. որոյ հասեալ ՚ի քաղաքն սպահան ոչ եգիտ անդ զմելքիսեթ կթ՟ղկոսն, վ՟ զի գնացեալ էր ՚ի գանդիման գաւառն. և չարքազ իբրահիմն ևս գնաց ՚ի գանդիման. և եգիտ զկթ՟ղկոսն ՚ի գիւղն քաթակ. զոր կալեալ կապանօք եբեր յսպահան. և անտի եբեր առ շահն. որ էր յայնմ ժամանակին եկեալ ՚ի վայոց ձոր. այս ինքն յեղեգաձոր. յորում տեղւոջ բերեալ չարքազ իբրահիմն զմելքիսեթ կթ՟ղկոսն ՚ի բանակն արքունի, և ծանոյց շահին: բայց շահն անտես արարեալ զդատաստանս մելքիսեթի եթող մնալ ՚ի կապանս: չուեաց շահն ՚ի վայոց ձորոյ և եկն ՚ի նախչուան:

Մինչև ցայս վայր դաւիթ կթ՟ղկոսն ընդ բանակի շահին էր. ցգալն մելքիսեթ կթ՟ղկոսին: և իբրև ետես դաւիթ կթ՟ղկոսն թէ շահն թողեալ անտեսաբար զմելքիսեթն մնալ ՚ի կապանս. իմացաւ յոգի իւր, թէ կարի երկարաձգի անտեսութին այն. վ՟ որոյ խորհեցաւ հրաժարել ՚ի կթ՟ղկոսութէն, և գնալ յսպահան. որ և մատուցեալ առ շահն խնդրեաց զհրաման գնալոյ իւրոյ յսպահան. և շահն ետ նմա զհրամանն. և գնաց դաւիթ կթ՟ղկոսն յսպա

հան՝ և կայր 'ի լռելեայն. քանզի շահն պար գևեաց նմա զգիւղ մի դարման կենաց նր՝ 'ի գաւառին Ջղախոռ. որում անուն կոչէին Քունդիկան. զի կերիցէ զմուտս գեղջն այն միկ. և աղօթեսցէ վս կենաց թգւորին. և նա գնացեալ յապահան կեայր այնտ. Իսկ մելքի սէթ կթղկոն մնաց 'ի բանակին արքունի 'ի կապանս շղթայից.

Եւ շահն չուեալ 'ի նախչուանայ գնաց 'ի գեղաքաղաքն ագուլիս. յորում ժամանակի նահատակեաց զոմն անդրէաս քահանայն. զմովսէս վարդապետն՝ և զպօղոս վարդա պետն՝ արար 'ի կապանս.

Արդ ոմ կալեալ շահն զմովսէս և զպօղոս վրդպտսն, էառ զերեքհարիւր թումանս. սոյնպ և զմելքիսէթ կթղկոն կալեալ պահանջէր. զերկս հարիւր թուման տուգանս վս երից յան ցանաց. Նախ վս նշխարաց սրբուհւոյ կուսին հռիփսիմեայ՝ որ թոյլ տալովն մելքիսէթի տա րան փռանկներն, զոր բազումք ասէին թէ վս կաշառայն թոյլ ետ. Երկրորդ. վս դառնա լոյն 'ի մեծ սուրգունէն՝ որ առանց հրամանաց շահին դարձաւ՝ և եկեալ յէջմիածին վարէր զիշխանութի կթղկութեն. և այն ևս առանց հրամանաց շահին. Երրորդ՝ յորժամ շահն ընկեց 'ի կթղկութէ զմելքիսէթն՝ և առա քեաց յապահան, համարէր շահն զնա թէ 'ի կալանս կայ, բայց մելքիսէթն յընդարձակի կալով վարէր զիշխանութի կթղկութեն. և այն ևս առանց հրամանաց շահին. վս այսքան յանցանացս կալեալ էր շահն զմելքիսէթն և կամէր սպանանել. Իսկ վս բարեխօսութե ա միրգունայ խանին ներեաց և ոչ սպան, բայց պահանջէր զերկս հարիւր թուման տուգանս,

վս որոյ

վասն որոյ 'ի կապանս երկաթեաց պահէր 'ի կալանի․ զի զայն վճարեսցէ, և գնացեալ դադարեսցի յուրեք լուեալ յիշխանութենէ կաթուղիկոսութենն ։

Նեղեալ շահն յադուլեաց գնալով էհաս 'ի դանդի, յապահանայ մինչ և ցայսր կապանօք կայր մելքիսեթ կաթողիկոսն, և այնպէս շրջէր ընդ բանակին արքային։ և յայսմ տեղւոջ երկիցս և երիցս մելքիսեթ կաթողիկոսն զարզս դրեաց՝ և հատոյց 'ի ձեռն շահին, և ծանոյց զտառապանս իւր՝ թէ յայսպիսում վտանգի կամ, խնդրեմ յարքայէ անդորրութիւն առնել իմոյս տառապանաց՝ եթէ մահուամբ և եթէ կենօք։ Իսկ շահն պատասխանի էր արարեալ սպանդխարի բեկոյն․ ոչ սպանանեմ, և ոչ թողում, այլ այնպէս կապանօք պահեմ, մինչև մեռցի, և զերծցի․ և կամ տացէ զերկերհարիւր թուման դրամն՝ զոր հրամայեալ եմ նմա՝ և ազատեսցի։

Իսկ 'ի ժամանակին յայնմիկ արք խորհրդականք և երեւելիք՝ որք էին 'ի դուռն արքային, եթէ յայլազգեաց՝ որ էր սպանդխարբէկն՝ եթէ ուղուրլուբէկն, և այլք յոլովք, և եթէ 'ի քրիստոնէից մեծամեծք, որ էր խօջայնազարն, և խօջայ սուլթանումն, և միրլէլին․ և մելիք հայկազն, և այլք բազում։ ասացին ցմելքիսեթ կաթողիկոսն, անհնար եղև գործդ քո, այլ պարտիս տալ և զերծանիլ 'ի ձեռաց սորա։

Որդ պատմութիւն Չաուխ յաղագս հարիւր թուման մուղադային է, և մինչև ցայս վայր միաշաւիղ էր պատմութիւնս, զոր և անտարակոյս դրեցաք, այլ յայսմհետէ յերկուս շաւիղս բաժանի և երկատութիւն պատմութենս մեզ աշխատանս յաւելու, և վն ոչումեք գխոելոյ

զխակն պատմութեան՝ հարկ եղև մեզ զերկոսինն
և գրել ։ Քանզի ոմանք 'ի պատմողաց՝ մանաւ
անդ թէ բազումք պատմեցին՝ թէ մելքիսեթ
կթղկսն ունելով իւրն ոսկի զդաւիթ կթղկսն
հանապազ առնէր իւրն զներհակութն. կանգ
նի ախոյեան, և դրդեալ գայթագղէ զիշխա
նութին մելքիսեթի՝ և ոչ տայ զհանգիստ և
զանդորրութի, վ̃րոյ խորհեալ մելքիսեթն
եմուտ ներքոյ ծանրութեան հարկի, զի մ̃ծ
ծանրութե հարկին ոչև իշխեսցէ դաւիթ
կթղկսն յառաջկալ դողել և խառնակել
զմէջն, այլ իռացկացցէ, որոյ իռացկալն՝
մելքիսեթն անվրէպ վարեսցէ զիշխանութի
կթղկսութեն։ Եւ յայսմանէ պատճառէ գրեաց
մելքիսեթն զորղայ առ շահն. Իսկ թէ քաղցրա
ցի ի վ̃ր մեր կամք թղթերին՝ և արասցէ մեզ զայ
ցելութի, և տացէ զիշխանութի կթղկսութե
մեզ՝ մեք տամք ամյամէ 'ի գիւան թղթերին յիւ
րաքանչիւր տարւոջ զհարիւր թուման 'ի ու
ճիկս ծառայից թղթերին ։ Իսկ թղթերին տեսանե
լով օգուտս յոլովս իւրոյն կողման վ̃րոյ խո
նարհեալ զիջաւ 'ի բանս մելքիսեթին՝ և կատա
րեաց զխնդրուածսն ըր, զի ետ նմա զիշխանու
թի կթղկսութե հանդերձ թղթերականաւն ո
մանս գրեալ և կնքեալ, Որով եղեալ մելքի
սեթն յամ երկիր վարեր զկթղկսութին իւ ր
ամենից Հայաստանեայց ժողովրդոց, և դաւիթ
կթղկսն կայր 'ի բացեայ մախալով նհանջեալ
'ի ներհակութենէ. և իբր զզաղան կապեալ
'ի գաւառագեղի, սպասէր կերգմայր դիպող ժա
մու ։ Որդ զոր ասացաք մ̃ծ պատմութես թէ
յերկուս ոճս բաժանեցաւ, մինն այսէ, զոր
գրեցաք, զոր ոմանք և մանաւանդ թէ բա
զումք այսպէս պատմեն ։

Իսկ

Իսկ այլք ոմանք ՚ի պատմողաց ասացին, թէ շահն երեք հարիւր թումանս տուգանք էարկ իւլերայ մելքիսեթին, և զայն ևս ոչ կարէր տալ մելքիսեթն․ բայց զի մնաց յանհնարց և ՚ի հարկէ նեղութեցն յակամայ կամօք ասաց տամ․ վասն որոյ գրեաց զթուղթ և առաքեաց առաջին շահին ըստ այսմ օրինակի։

Հրամայեալէ տէրուէ ինքնակալիդ վ՜ս մեր՝ թէ երեք հարիւր թուման տացէ․ յանձնինկալայ տալ զերեք հարիւր թումանն․ բայց յերեք տարին տամ յիւրաքանչիւր ամի հարիւր թուման․ մինչև ցերեք տարին վճարեմ և ապրտեմ․ քանզի ՚ի միում ամի ոչ կարեմ վճարել․ Իսկ շահն առեալ էր զայս ձեռագիրս մելքիսեթ կթ՜ղիկսին․ և արձակեալ էր զնա ՚ի կապանաց․ և տուեալ էր նմա զհրաման և զիշխանութի կթ՜ղկութե։ Բայց ՚ի բուն մատեան արքունականի դիւանին ոչ ըստ օրինակին էր գրեալ՝ ո՜պ էր ձեռագիր կթ՜ղկսին թէ երեքհարիւր թուման տամ, և ոչ այլինչ աւելի՝ այլ գրեալ էր շահն թէ մելքիսեթ կաթուղիկոսն խնդրեաց զԷջմիածնի կթ՜ղկութին, և խոստացաւ ՚ի տարին հարիւր թուման մուղադայ տալ ՚ի դիւան թագաւորին, վ՜որոյ և մեք շնորհեցաք նմա զիշխանութի կթ՜ղկոսութեն, զի նա վարեսցէ։ Ու զայսպիսի գրելս շահին ոչոք գիտէր, ոչ կթ՜ղկսն և ոչ այլք ՚ի Հայոց՝ և յորժամ գիտացին, ոչոք կարաց օգնել ինչ․ զի անհնար էր եղծանել զհրաման զայնպիսւոյ խրոխտի թ՜գւրի, և կամ արտահանել ՚ի թ՜գւրկանաց և ՚ի դիւանականաց մատենից՝ յորում գրեալ էր։ Այն չև ցայս վայր երկրորդ ո՜ճն պատմութե՝ զոր ոմանք այսպ՜ս պատմեցին, և դու ընկալ որոյ

և հա

և հասանիս, և կամ զորինչ տեսութիւն մնաց քոյ յերկուցս պատմութեցս արտաքերիցէ ։

Արդ թէ այնպէս և թէ այսպէս, ստուգիւ և հաստատութբ, Հարիւր Թուման մուղադայ եղաւ խլր մելքիսէթ կթղկսին՝ զոր տայր թգւրին ամ յամէ. և՚ի նորին պատճառէ ան կաւ մուղադայն խլր սրբոյ աթոռոյն Էջմիածնի. և մնաց աթոռն 'ի ներքոյ ղարալայի և այս եղև բեռն ծանր, և լուծ տաժանելի, և ան ուր անխզելի խլր սրբոյ աթոռոյն Էջմիածնի 'ի զուր և 'ի տարապարտուց ։ և ամի ազին Հայ կայ սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի եկեղեցականաց և աշխարհականաց ։

Իսկ մելքիսէթ կթղկոսն յետ արձակելոյն 'ի կապանաց և ունելոյ զիշխանութիւն կթղկսութեն՝ ջանայր բազում ջանիւ զի զխոստացեալ հարկն վճարեսցէ, ոչ զի ազատեսցի, վնորոյ եղեալ է 'ի շրջագայութիւն յազգս Հայոց յաղագս ժողովոյ, և նախ 'ի տփխիս գնաց, և անտի 'ի Թաւրէզ. և անտի յասպահան ։

Իսկ յորժամ տարին բոլորեցաւ՝ շահն անմոռանալի ունէր զայն 'ի մտին վնորոյ 'ի Թգւրականաց ծառայից իւրոց զարս չորս գլխաւորս՝ որոց անուանքն էին, զխալբէկ, սամթբէկ, չրաղբէկ, բահրամբէկ, առաքեաց խլր մելքիսէթին՝ թէ զմուղադայն զոր խոստացար տալ 'ի գիւանն արքունի, տուր Թգւրականաց ծառայիցդ 'ի սոսա կարգեալ ռոճկաց իւրեանց ։ Իսկ այս եղև վտանգ և աղէտ դառնագին, և անուր անխզելի խլր կթղկսարանին, զի բեռն խլր բեռին բարձեալ եղև ։ քանզի ոչ գոյր առձեռն պատրաստ դրամ, զի տացեն զուլերուն, սակս որոյ մնային զուլերն և նստէին խլր կթղկսին ծառայիւք և երկիւղարօք իւրեանց .

եանց․ և զամենն պնտոյս ներեանց զկերակրոց և զայլ կարեաց 'ի կթծղկաեն առնուլն ։

Իսկ կթծղկան վաթղրականի մուղադայինն՝ և վա պնտոյից այսոցիկ զուլացս, եղանէր և շրջէր յազգս Հայոց՝ և ուր և շրջէր կթծղկան, զուլերն ևս ընդ նմա շրջէին, և ծանրանայն իվերայ ժողովրդեանն վա պէտպէս կարեաց, ինքեանց և երխվարաց ներեանց ։ և սեղանք նց յամ աւուր ոչէր առանց գինւոյ, և ծախք նց ոչ սակաւ, և ժամանակ գինեըմբութն միշտ ։

Նա 'ի շրջագայելն ներում կթծղկան յամ երկիր իմէջ ժողովրդեանն, ուր և լինէր իրաւմք հասոյթք իւր զայն առնոյր, որ և ոչ լինէր այն բաւական ծախուց իւրոց և զուլերուն, և մուղադայինն ։ վասն զարս անպարտս, եթէ եպիսկոպս լինէր եթէ աբեղայ․ եթէ երէց՝ եթէ աշխարհական, կալեալ զնա թարց իմիք պարտեաց և մեասու՝ անիրաւաբար յօդեր բարուրս իվրնց և պահանջէր զդրամ, և մատնէր 'ի ձեռս զինուորաց զուլերուն, որք կախէին յոտից նա և բրածեծանէին, մինչև ըստ կամաց իւրց առնուլին դրամն՝ և ապա արձակէին ։

Նաև այսու պատճառաւ մոլին բազում անկարգութիւնք և օրինազանցութիւնք յազգս Հայոց, կաշառօք անարժանից զձեռնադրութի տալ, եթէ եպիսկոպաց և թէ քահանայից․ և կաշառօք զսեպհական վիճակ այսմ վանացս կորել և այլում վանաց շնորհել ։ և չհասի, և մեղօքի, և կնաթողութե, և երկակնութե, համարձակ զհրաման տալ ամուսնութե ։ Ո այսս սիկ, և որք սոցին նման զբազում անկարգութիս գործէին, կթծղկան և եպիսկոպսն իւր, և ոգւովչափ գուն գործեալ եթէ իրաւամբք և եթէ անիրաւութե հնարէին ժողովել ընչս,

զիթեր

զի թերեւս բաւականասցի ծախուց նորեանց և զուլերուն, և վճարման մուղադային, սակայն ոչ լինէր զի ոչ աստուծով, այլ մարդկայնով համաձայնով հնարէին կատարել զգործ, վասնորոյ ոչ կատարիւր, ըստ վկայութե՛ սաղմոսին, թէ ոչ Տ՟ր շինէ զտուն. ի նանիր վաստակին շինօղքն։

Բայց կէթխդան ոչ թուլանայր և դադարէր 'ի շրջագայութենէ, զի թերեւս վճարեսցէ զխոստմունսն վասնորոյ եղեալ 'ի սպահանայ գնաց 'ի Փահրապատ. և անտի 'ի Նախչըւան, և անտի դարձեալ յասպահան։ և ապա 'ի բազմաց վշտացն զոր զուլերն վշտացուցինէին զկէթխդան, և խնդրէին զգանձս 'ի նմանէ, արղայով ծանուցեալէր կէթխդան շահին զվիշտն իւր, և շահն անտեսարարեալէր զբանս կէթխդսին, վասնորոյ մնացեալէր անհնարելեաց տարակուսանաց միջի։ և ապա գնացեալ և անկեալ 'ի շահի թալէն, և ծանուցեալէր շահին թէ ութն հարիւր թուման տուեալեմ, այլ ոչ ունիմ կար տալոյ։ Իսկ շահն ասացեալէր թէ ես յայդ հարիւր թուման մուղադայէդ փողմի չեմ անցանիլ. այլ թէ մէկ այբի պառաւ լինի մնացեալ ես առնլոց եմ։ և ապա եղեալ մելքիսէթն յասպահանայ եկն յերեւան և յէջմիածին, շահի զուլերն եւս եկին ընդ կէթխդսին. և խնդրէին զիւրեանց տօնլուղն՝ զոր շահն բարաթէր արեալ իւր կէթխդսին՝ տալ նց 'ի կողմանէ հարիւր թումին մուղադային։ և ուրեք շրջէր կէթխդան՝ ընդ նմա շրջէին և զուլերն, և ծանրաբեռն լինէին իւր ժողովրդեանն վս հարկաւորաց կարեաց նորեանց։ և անխնայբար շուայլութե՛ ցնդէին զինչս ժողովրդեանն. և այս վտանգ յոյժ էր իւր ժողովրդեանն, զի զկենցաղավարութիւն նորեանց զեղխութե՛ և

շուայլու

շնայլութք վարէին․ վ̄որոյ ամ̄ն ձանձրացան և սրտիւ լքին զկթ̄ղկոսն և զնուրան՝ և ելեալ կացին 'ի նոցունց։ Եւ այնուհետև ոչ ըստ իրաւանց և կանոնականի կարգի, այլ այլազգեաց իշխանութք և իւր ղաւալաւոր հարկատու բռնաւորին իւր̄ ժողովրդեանն՝ և առանց իրաւանց կեղեքեալք կողոպտէին զժողովուրդսն․ և թէ պէտ կեղեքելով առնուին՝ և թէ պէտ ոչ ըստ իրաւանց․ սակայն ոչ լինէր բաւական ծախուց իւրեանց․ վ̄որոյ 'ի կարեաց պակասութենէ և 'ի հարկելոյ ղուլերոյն գնացին առ շահակեր փոխատուս․ և յոլովտոկոսեօք առնուին զփոխ 'ի նոցունց․ յոլովակի յայլազգեաց քան թէ 'ի քրիստոնէից՝ քանզի քրիստոնեայք ոչ հաւատային 'ի տալն։

Եւ եղև այժմ 'ի ներկայիս յերկուց կողմանց յաւելանալ պարտուցն, Նախ 'ի կողմանէ հարիւր թումանն մուղադային, զոր ոչ կարէին տալ, վ̄որոյ մնաց ամյամէ և էհաս մինչև ցվեց հարիւր թումանն բաղի։ Եւ երկրորդ, իւրք̄ արարեալ պարտսն, զոր 'ի պարտատուացն առեալէին վ̄ կարեաց ղուլերոյն՝ և ինքեանց։

Արդ վ̄ յաճախութե պարտուցն և այլոց ևսնեղութեցն, զորս կրէր կթ̄ղկոսն, նաև ամ̄ն դունակ լինելոյն յազգէն Հայոց, խորհեցաւ 'ի միտս իւր զի բարձեալ յինքենէ յայլոց վ̄դիցէ զանուն կթ̄ղկութեն, ընդ նմին և զպարտըսն․ վ̄որոյ ասաց ընդ մովսէս վարդապետին, որ 'ի ժամանակին յայնմիկ բնակէր յերևան քաղաքի առ դամբարանի սրբոյ առաքելոյն անանիայի, որ կայ յեզր քաղաքին։ Ո՜հա ազգս Հայոց մեծ և փոքր զերես դարձուցին յինէն․ և զքեզ սիրեն, և ընդունին՝ և մնաւանդ զի ծերացեալ եմ, և հարկն արքունի պարտք եղև

եղև և բազմացաւ խլրտումն: արդ տամ քեզ զսուրբ աթոռն Էջմիածին, և զկաթողիկոսութիւն դու վարեա այսուհետև ոչ և եսդ արժան, և ինձ տուր ամյամէ դարման պիտոյից, և զիս 'ի վանորէիցդ, զի անդ նստայց լռելեայն, և վճարեցից զծերութիւն իմ, Իսկ մովսէս վարդապետն ոչէր յանձին կալեալ այլ հրաժարելով հրաժարեալէր:

Սա էր եղբօրորդի մի մելքիսեթ կաթողիկոսի, որոյ անունն էր սահակ՝ 'ի նմանէ եպիսկոպոս էր ձեռնադրեալ՝ և կայր 'ի սպասու նորին: որոյ հաստուցեալ բանս առ կաթողիկոսն մելքիսեթ, թէ կաթողիկոսութիւնդ այդ քո է՝ թէ առնես դու յոյժ բարւոք է, արա, և թէ ոչ առնես դու՝ ընդ էր այլոց շնորհես, և ոչ ինձ, որ եմ ժառանգ և որդեկքո: յայսմ բանի, և բարեկամք իւրեանց յորդորեալք էին զկաթողիկոսն: Իսկ մելքիսեթ կաթողիկոսն, հաճեալ 'ի բանս սահակին և բարեկամացն, և հաւանութբ, և միաբանութբ բարեկամաց իւրեանց տարեալ էր զսահակն յԷջմիածին և 'ի հրեշտակապետաց կիրակի օրն օրհնեալ էր զնա կաթողիկոս, և առեալ էբեր 'ի քաղաքն երևան, և ծանուցումն արարեալ զայս բան ամենայն ժողովրդեանն: Նաև գրեաց զկոնդակ, և ետ ցսահակ կաթողիկոսն, թէ ծանուցումն լինի ամենայն ազգին Հայոց՝ զի ես ծերացեալեմ և անկարացեալ. վասնորոյ հրաժարեցայ 'ի կաթողիկոսութենէս և օրհնեցի զսահակ որդիս իմ կաթողիկոս, և կարգեցի 'ի սուրբ աթոռն Էջմիածին: արդ ուխտք հնազանդ է մեզ և խնդրող օրհնութեան մերոյ, յօժարութբ հնազանդեսցի հրամանաց դորա: Սա այսպէս քարոզեաց զնա կաթողիկոս իմէջ ամենայն ազգին Հայոց, առաջի վարդապետաց, և եպիսկոպոսաց: Նաև տարեալ առաջի

ամիրզունայ խանին կացոյց և ասաց, թէ ետու զկաթողիկոսութիւն սմա, որում խանն ևս հաւանեցաւ։ Եւ 'ի խանէն ևս խնդրեաց Մելքիսեդեթ կաթողիկոսն, գրել խնդրանաց զթուղթ առ շահն. զի նմա տացէ զկաթողիկոսութիւն։ Եւ ինքն Մելքիսեդեթ ևս գրեաց աղաչանաց զթուղթ առ շահն՝ թէ ես ծերացեալ եմ, և ոչ եմ բաւական վարել զիշխանութիւս. սա իմ որդի է՝ խնդրեմ զի սմա շնորհեսցես զկաթողիկոսութիւն։

Զկնի ամի այսորիկ, զի կարգեցաւ սահակն՝ կաթողիկոս. և ընկալաւ զհրաման 'ի Մելքիսեդեթ կաթողիկոսէն և յամիրզունայ խանէն՝ այնուհետև սկսաւ սահակն վարել զիշխանութիւն կաթողիկոսութեան. և շահի ղուլերն ևս ժողովեցան իւր՝ Իսահակայ կաթողիկոսին և ընդ նմա շրջագայեին։

Զկնի աւուրց ինչ սահակն առեալ զթուղթսըն Մելքիսեդեթ կաթողիկոսին և ամիրզունայ խանին գնաց 'ի դուռն շահին, առ 'ի սեպհականացուցանել իւրոյ ինքեան զկաթողիկոսութիւն։

Իսկ Մելքիսեդեթ կաթողիկոսն մնաց յԷջմիածին. և պարտատուքն յոյժ նեղդէին պահանջելին 'ի նմանէ զիւրեանց տուեալ պարտսն. և յամ աւուր եկեալ կանխէին առ նա՝ և անհանգիստ արարեալ խնդրէին զտուեալ պարտսն։ Եւ նա ոչ գոյր ինչ զի տացէ. այլև ոչոք հաւատայր տալ նմա զպարտս. և ոչ յայլուստեքէ գոյր ակնկալութի։ Վասն որոյ զպատուսպուռ մնացեալ զանօթսն սրբոյ Էջմիածնի. զորինչ և գտանէր. նաև զաջ Արիստակեսի հայրապետին որդւոյ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին. նաև զաջն աղջուց վանաց սրբոյն Ստեփաննոսի. զայսոսիկ զորս ասացի. բերեալ եդ գրաւ առ այլազգի մահմետականս՝ և առեալ զդրամ ետ

պարտատուացն. և զնոյն այնու կերպիւ 'ի բաց տարար յինքենէ։

Իւր այնու հետև կասկած կրեալ յինքեան մելքիսեթ կթղկան. թէ միգուցէ միւս այլ պարտատուքն ևս եկեալ նեղեսցեն զինքն։ Նաև վն թգրկանի մուղաղդային դիմեալ 'ի միտս և ծանուցեալ հաւաստեաւ թէ ոչ կարեն վճարել։ և այլևս նեղութեանցն, որք շրջապատեալ էին զինքեամբ, խորհեցաւ 'ի կողմն ինչ ճողոպրել թաքնաբար։ Մ՛որդ յաւուր միում ընդ մերձենալ երեկոյին՝ ելեալ յԷջմիածնէ պատճառելով թէ գնամ յերեւան. ինքն և սպասաւոր ոմն։ և 'ի հասանելն իւր 'ի կէս ճանապարհին, դարձուցեալ զերեսանակ երիվարին դէպ ուղիղ յերկիրն սահաթայ՝ որ է յայնկոյս գետոյն երասխայ 'ի կողմն կողբայ. և անտի գնացեալ 'ի կաղզուան. և անտի յարզրում։ Իւր այսմ թագնաբար գաղտագողի գնացութբ զերծաւ մելքիսեթ կթղկոն 'ի մասն բաժնի աշխարհին Օսմանցւոց։ և ելեալ 'ի կարնոյ քաղաքէն կամկար գնալով՝ էհաս 'ի մեծ քաղաքն կոստանդնուպօլիս։ և անդ ևս ոչ ընկալան զնա ժողովուրդք և վրդպտք ժամանակին վն իրիք ինչ պատճառի. ապա ելեալ անտի գնաց 'ի քաղաքն իլով. և ժողովուրդք քաղաքին իլովայ ընկալան զնա յոյժ պատուով և մեծաւ փառօք։ և էկաց անդէն սակաւ ժամանակս. պակասեալ աստի յաւելաւ առ հարս իւր. 'ի մերում թուականիս հազար և եօթանասուն և հինգ ամի. անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ։ Բայց մինչ կենդանի էր մելքիսեթն ձեռնադրեաց իլովացւոյն եպիսկոպոս նիկօղայոս անուամբ զոմն. որ էր 'ի նոյն քաղաքէն իլովայ. և նիկօղայոսս այս

յետ

յետ այլոց ամաց զբազում նեղութիւնս հասոյց ժողովրդեանն․ որոյ զորպիսութիւն ծանիցես 'ի նոցին պատմութենէ, զոր զկնի առնելոցեմք ։

---

Պատմութիւն կաթողիկոսութեան և փախստեան սահակ կաթողիկոսին ։

## ԺԹ ։

## ՈՐՊԷՍ ԿԱՆԽԱՒ

պատմեցաք թէ սահակն ընկալաւ զպատիւն կթղկոսութ․ նաև զթուղթ աղաչանաց 'ի մելքիսեթէն և յամիրզունայ խանէն առ շահն ։ և մեւս եւս զթուղթ գրեաց ամիրզունայ խանն առ որդին իւր թահմազղուլի խանն, որ հանապազ 'ի սպասու շահին կայր՝ զի մօհրդար էր շահին․ այս այն թամազղուլին է, որ Էջմիածնի քարինս հրամանաւ շահին հանեալ առաքեաց յասպահան․ և յայսմ ժամանակի առ շահն 'ի սպասու կայր ։ առ որ գրեաց ամիրզունայ խանն թէ զայս սահակս երևեցուսցես արքայի․ և զամենայն խնդրուածս սորա ծանուսցես նմա․ և խնդրեսցես տալ սմա զկաթողիկոսութիւն ։ և սահակն առեալ զթուղթս զայսոսիկ և գնաց 'ի Փարահապատ քանզի անդ էր շահն 'ի ժամանակին յայնմիկ ։ Իսկ իբրև եհաս առ թահմազղուլի խանն բազում բանս յուսադրանաց լուաւ 'ի նմանէ՝ թէ մի ինչ հոգար զինչ և խնդիր ունիս յարքայէ զամենեսեան կատարեցից ։ Իսկ յետ աւուրց ինչ յանդիման արքային կացուցեալ է զսահակն․ և շահն հարցմամբ տեղեկացեալ էր վնր․ և ընթերցեալ էր զթուղթսն զամիրզունայ խանին և զմելքիսեթ կթղկոսին․ նա և իմացաւ շահն թէ սահակն եղբօր որդի է մելքիսեթին ։ և ինքն եւս սահակն ընծայ ինչ բառ

ԺԵ 2 կարօ

կարողութեան իւրոյ մատուցեալ էր առաջին ար քային. ընդ որս էր և ձի մի պատուական. իբրև մատուցին զպատարագն Սահակայ առաջի Թա գաւորին. եհարց Թագաւորն թէ զմնացորդս պար տուցն, զորս 'ի կողմանէ մուղադային տալոց է մուլքիսէթ կաթողիկոսն 'ի դիւան արքունի յանձն առնուս տալ՝ թէ ոչ. և Սահակն յանձին կա լաւ զտալն. վասն որոյ արքայ հաճեալ և հաւա նեալ էր բանից խնդրանաց նորա՝ և տուեալ էր Սահակին զկաթողիկոսական իշխանութիւն. և ասա ցեալ էր շնորհաւոր լինել քեզ կաթողիկոսութիւնդ. այլև Սահակայ ընծայաբերեալ զձին նմին պար գևք շնորհեալ էր։ Իսկ հրամանն արար շահն գրել զռաղամ. զոր և գրեցին. բայց մնաց կնքե լոյ և սաֆթ առնելոյ. քանզի Թագաւորն և իւր քար խանէն ելեալ 'ի Փահրատապատայ գնաց 'ի ղազբին. և յաւուրսն յայնոսիկ զՓահրատապա տու նուիրակն սկիզբն էր արարեալ առնուլ Սահակն. ասաց Թահմազղուլի խանն Սահակայ. զռաղամն տուր ցիս. զի ընդ իս տարեալ ես կնքել տամ. և դու կաց 'ի Փահրապատ զնուէ րակդ արա. յետոյ գաս և քեզ տամ։ և այսպէս արարեալ Սահակն մնաց 'ի Փահրապատ. և զռա ղամն Թահմազղուլին տարաւ ընդ իւր 'ի ղազ բին. և շահն, և իւր օրդուն անտի եկին 'ի սուլթանիայ, և յարտաւիլ. և դարձեալ 'ի սուլթանիայ։ Իսկ մինչ Սահակն զՓարապատայ ժողովն արար և եկն 'ի սուլթանիայ՝ Թահ մազղուլի խանն յառաջագոյն գնացեալ էր յե րևան. քանզի ամիրգունայ խանն հիւանդ կայր 'ի վիրէն. զոր առեալ էր 'ի վրաց ազգէն 'ի պա տերազմի. վասն այսորիկ առաքեցին զԹահմազ ղուլին յերևան զի տիրեսցէ երկրին։ Իսկ յետ գնալոյ Թահմազղուլի խանին. եկն Սահակն 'ի

սուլթանիայ. իբրև ոչ եգիտ զԹահմազղուլի
խանն. հարցեալ զնորին ծառայսն և խնդրեաց
զրաղամն. և նոքա ասացին թէ ոչ գիտեմք։
Իսկ իբրև անճար մնաց սահակ կթղկսն մի
րաղամին. հարկեալ ՚ի նեղութէ վերստին զար
զայ եւ շահին այլ իմն հնարիւ՝ թէ հիւանդա
ցայ հուքմն կորեաւ. և շահն ասացեալ էր թէ
գնա առ դիւանբէկին։ Իսկ դիւանբէկին
վասն թամահի խստութե̄ն էր պատասխանեալ
սահակին մինչ որ թամահն իւր լցեալէր. և
ապա գրեալէր զնոր րաղամ. բայց ոչ էր կնքեալ.
և մինչ այսպէս կայր. դարձեալ ելեալ Թգ̄ւրն
և գնաց ՚ի բաղդատ. գնաց զկնի և սահակն.
Իսկ իբրև մեծամեծքն ոչ կատարեին զխնդ
իրսն սահակայ. հարկ եղև նմա միւսանգամ տալ
զարզայ շահին. և իբրև ետես զարզայն Թգ̄ւրն.
ասաց վաղուրեմն տուեալեմ քեզ զխալիֆութն
և զրաղամ. ասաց սահակն այոյ Թգ̄ւր տուեալ
ես. բայց զրաղամն ո՛չ կատարեն. քանզի նք
յոլովս խնդրեն ինչս՝ և ես զի ոչ ունիմ կարո
ղութի տալոյ՝ վն որոյ և նք յապաղեն ՚ի մուհ
րել և՚ի սաֆթ առնել։ Յայնժամ կոչեաց շահն
փայտակալ ծառայ մի առաջի իւր և ասաց. թէ
այսօր զնմ̄ գործ և ուղխունի րաղամի դորին այր
տիս կատարել՝ և՚ի վաղիւն յինքն տալ։ Իսկ զի
նուէրն ը̄ հրամանաց Թգ̄րին զնմ̄ ուղխութի
գրոյն հոգաց. և ետ իսահակ կթղկսն զրաղամն։
Իսկ սահակն առեալ զթուղթն և եկն յասպա
հան իմէջ ջուղայեցւոց. և ոչ ընկալան զնա
ջուղայեցիքն. ոչ միայն զնուիրակ ոչ ետուն.
այլև զհարևանցի պատիւ ևս ոչ արարին նմա։
՚Ի սոյն ժամանակի դաւիթ կթղկսն յաս
պահան էր. ասացին նմա ջուղայեցիքն, թէ
մեք ո՛չ կամիմք որ սա լինի կթղկս այլ զքեզ.

դու գնա՛ ՚ի դուռն շահին. և առ զիշխանու-
թի՛ն կթղկոսութե՛ն. և զորինչ և խարջ լինի
քեզ ընկեր եմք։ և դաւիթ կթղկսն իբրև
հաւանեցաւ խորհրդեանս այսմիկ. և պատրաս
տեցաւ գնալ ՚ի բաղդատ ՚ի դուռն շահին։ իմա
ցաւ զայս խորհուրդս սահակ կթղկսն. և նա
ևս ել գնալ ՚ի դուռն շահին. տեսանել զկա
տարումն գործոյն։ Եւ վ՟ն այսմ խորհրդոյ խօ
սեցաւ սահակն ընդ դաւթին. թէ ընդէր
առնես զհակառակութի՛ և գործես զչարդ՝ և
դաւիթն զպատճառս յօդեալ էր թէ ոչ վ՟ն հա
կառակութե՛ ինչ քեզ գնամ. այլ վ՟ն գործոյ
իմոյ. քանզի այն չութլուկն, զոր շահն պար
գևեալ է ինձ. ոմանք յիշխանաց բռնութե՛ և
պատճառանօք իմն հարկ առնուն վ՟ն նր. վ՟ն
այն երթամ ՚ի դուռն թ՟գրին. որ ազատու
թե՛ զթուղթ առնում չութլուկին։

Եւ ՚ի հասանելն նց ՚ի բաղդատ. յառաջ սա
հակն գնացեալ երևեալ էր շահին. և ՚ի հար
ցանելն շահին թէ զինչ կամիս և սահակն
ասաց՝ թէ զհրաման թ՟գրի ոչ ընկալան. է հարց
շահն թէ ո՞վ. և սահակն վ՟ն երկիւ զի յանուանէ
ոչ յիշեաց՝ այլ միայն ասաց թէ յայտնի է թ՟գրին.
և շահն իմացաւ, որ խօջայ նազարն է՝ վ՟ն որոյ
ասաց՝ գիտեմ զի քոյն է. և քոռ անունս շահն
խօջայ նազարին ասէր։ Օկնի աւուրց և դաւ
իթ կթղկսն ևս եկեալ երևեցաւ շահին՝ բայց վ՟ն
կթղկսական իշխանութե՛ ոչինչ խօսեցաւ.
քանզի յոգւոյ իւրում ծանուցեալ գիտաց
թէ ոչ լինի. Այլ խօսեցաւ վ՟ն չութլուկին.
զոր և ետ առ զհրաման տիրելոյն նմա ազատ ՚ի հար
կաց արքունի։ Եւ յետ այսորիկ սահակ կա
թողիկոսն և դաւիթ կթղկսն ելեալք ՚ի բաղդա
տայ դարձեալ եկին յասպահան. և ջուղեցիքն
այլևս

այլեւ ոչ ընկալան զաւհակ կթղկան։ Եւ յոր
ժամ ելին երկոքին կթղկոքն 'ի բաղդատոյ.
շահն եւ յետ սակաւուց աւուրց ելեալ 'ի
բաղդատոյ գնաց 'ի Փահրապատ։

Եւ ամաւ միով յառաջ շահն առ ինքն էր
կոչեալ զմովսէս վարդապետն 'ի բաղդատ. վասն
սպիտակացուցեալ մոմին. եւ հարցեալ տեղե
կացաւ վասն արուեստին թէ որպէս սպիտակացու
ցանեն զմոմն։ եւ ապա 'ի Թփրականաց ծառայից
իւրոց երեք ծառայ տուեալ էր նմա յաշակեր
տութիւն. եւ հրամայեալ էր թէ գնա յասպա
հան եւ զարուեստդ զայդ ուսո ծառայիցդ մե
րոց՝ եւ բեր առ իս ուր եւ լիցիմ ես։ Եւ մովսէս
վարդապետն եկեալ յասպահան ուսոյց զծա
ռայսն. եւ զբաղում մոմս պայծառագոյնս սպի
տակացոյց. եւ յորժամ լուաւ թէ շահն գնաց
'ի փահրապատ առեալ ընդ իւր զսպիտակա
ցուցեալ մոմն. եւ զուսուցեալ ծառայսն գնաց
'ի փահրապատ՝ եւ մատոյց թագաւորին։ իբրեւ ետես
թագաւորն զսպիտակացուցեալ մոմն կարի պայ
ծառ եւ հրաշալի։ այլեւ վասն յարմարագունից
Թափելոյն յոյժ հաճեալ եւ հաւանեալ էր։
Նա եւ վասն ուսանելոյ ծառայիցն առաւելապէս
ուրախացեալ էր՝ եւ զուարթացեալ խնդայր։

Եւ յետ սուղ ինչ աւուրց հասեալ իմն աւ
ուրք մեծի տօնի յայտնութեան Քրիստոսի մերոյ։
Եւ յաւուրս յայսոսիկ ջուղայեցի խօջայ նա
զարն եւս 'ի փահրապատ էր. հրամայեաց շահն
խօջայ նազարին թէ պատուիրեա վարդապետին
լուսագոյն իմն հոգաբարձութեամբ տեսանել
զպատրաստութիւն վասն ջրօրհնէքին, զի հան
դիսաւոր լիցի։ Եւ յաւուր տօնին յորժամ
եկեալ էր վարդապետն մովսէս իւրովք գետոյն յօրհ
նել զջուրն. ընդ գեղեցիկ յարմարութեամբ զար

 դուցն.

դուցն. և ընդ կարգաւորաբար շարժումն, և 'ի կանգնիլն պաշտօնէիցն յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ. և խանդաղատեալ իւր մօսէսի: Ի.սկ զայս խնամամբ առնել խնամ ամենակալին Ա.Յ՟ որ զսիրտ ամենից թգ՟ւորաց ունի 'ի ձեռին. և ոչ թէ հաճոյական արարմունքն մօսէսի: այլև խօջայ նազարն ևս բանս բարիս յոլով խօսեցեալ էր ընդ շահին վս՟ մօսէսի վարդապետին: Ի.սկ շահն հարցեալ էր 'ի խօջայ նազարէն թէ զինչ խնդիրս ունի վարդապետն 'ի սրտի իւրում, զի կատարեսցուք. զոսկի, զարծաթ, և զայլինչ, զոր կամի: Իսկ վրդ՟պետն և ոչ միոյ իրաց հաճեալ էր. քանզի ասէր ոչ ունիմ ես կարիս մարմնաւորաց իրաց. զի զպէտս իմ Տ՟րն իմ հոգայ օրըստօրէ:

Ն.ոյնպէս յետ աւուրց ասաց խօջայ նազարն առ արքայ. զլուսաւորութ՟ի Է.ջմիածնի եթէ շնորհես սմա յոյժ բարութք առնես. քանզի ինքն ևս զայն խնդրէ: և խնամօքն Ա.Յ՟ թգ՟ւորն շնորհեալ էր զայն խնդիրն. այլև գրեալ զրաղամ տուեալ էր մօսէս վրդ՟պետին: և մօսէս վրդ՟պետն եկեալ 'ի փահրատապատայ գնաց յԷ.ջմիածին:

Ի.սկ սահակ կթ՟ղկոսն մինչ էր յասպահան լուաւ թէ մօսէս վրդ՟պետն էառ զլուսաւորութ՟ին Է.ջմիածնի, եկեալ եկն 'ի փահրապատ 'ի դուռն թգ՟ւորին վասն այսց իրաց. իբրև մատուցեալ առ դիւանբէկին ծանոյց նմա ըզ վտանգն իւր՝ և ասաց թէ զուր արարեալ էք ինձ՝ որ զԷ.ջմիածինն տուեալ էք մօսէսին. և դիւանբէկին արար զպատասխանի թէ պէտ տուաք նմա զԷ.ջմիածինն. զնորին լուսաւորութ՟ին տուաք՝ և ոչ զկթ՟ղկոսութ՟ին. կթ՟ղկոսութ՟ին քո է, և լուսաւորութ՟ին նր՟. դու զքոյն վարեա՝ և նա զիւրն: Ա.յլև 'ի դրունս

մեծա

մեծամեծաց բազումս շրջեցաւ սահակն սա կայն ոչինչ օգտեցաւ։ Իբրև ետես թէ ոչինչ օգնէ, ելեալ՝ի փահրապատոյ եկն՝ի Թաւրէզ. եկին Է̃ սահակին և շահիղուլերն, որ զմուղադայ հարիւր թումանն պահանջէին. և սոքօք ելեալ՝ի Թաւրիզու եկին յերկիրն խոյայ։

Իսկ սահակն խորհրդով ներբողամադրեալ միայն հայեցեալ նկատեաց թէ ամ ազգն Հայոց հեռացեալ՝ի բացկացին յինքենէ։ այլ և աթոռն Էջմիածնին այնու կերպիւ գրաւեցաւ՝ի ձեռն մահլեանի վրդ̃պետին։ և մուղադայ հարիւր թումանն որ ամ յամէ բազի մնաց, մնացեալ բազին մինչև յութն հարիւր թումանն էհաս. և տակաւին օր աւուր բազմանայ. գիտաց հաւատացեալ զինչ այլինչ իրօք լինի փրկութի նմա, եթէ ոչ փախստեամբ. վասնզի եկն՝ի խոյ, զի կամէր՝ի խոյայ փախչիլ թաքուն՝ի ղուլերէն՝ի քաղաքն վան յիշխանութի և յերկիրն Օսմանցւոց։

Մինչ սահակն իլ ի այսմ խորհրդոյ միայոյզ լինէր՝ և կայր՝ի վարանման՝ թէ ոմ արասցէ, ոմանք՝ի հին բարեկամացն, յորոց էին մանուկ եպիսկոպոս խոր վիրապայ, և մկրտիչ եպիսկոպոս հաւուց թառայ՝ սորա այլոքն հանդերձ. որք կային յերկիրն երևանայ։ առաքեցին ըզ թուղթս յուսադրականս բանիւ առ սահակն խոյ, թէ մի երկնչիր այլ եկ յերևան քաղաք՝ քանզի թահմազղուլի խանն գթով է ընդ քեզ. և մեք ամ̃քն համախոհք քո եմք, վասնզի եկաւ մեզ ատ, և ապա զպատշաճն գործոց խորհեսցուք։ Իսկ յայսց յուսադրականաց բանից զքաջալերութի ընկալեալ սահակ կթղկսն՝ յայնժամ ոչ փախեաւ այլ եկն յերևան։ և շահն ղուլերն եւս ընդ նմա։ իբրև շրջեցաւ ընդ

երկիրն ամ յայս կողմն և յայն կողմն, որք ընդ-ունէր զնա. և հայէր յերեսսն՝ մինչոր զհիւր ընկալութիւն նր հարևանցի և վերի վերոյ առ-նէին։ Իսկ ղուլերն համապազ նեղէին զնա թէ զթղթերկան պարտսն վճարեա՝ և զմեր տան լուղն տուր՝ և նա զի ոչ ունէր զինչս և յամենից կողմանց վհատեալ էր և անճար մնացեալ. և յուսադրող բարեկամքն ևս ոչինչ կարացին օգնել նմա, վասն որոյ հաստատուն եդեալ 'ի միտս զի հնարիւք իմն զերծեալ փախիցէ։

Իսկ յաւուրսն յայնոսիկ եկն էհաս տօն յայտ-նութեան Տն. որ յամ ամի մոլեկս վրդպտն զտօնն զայն մեծախումբով հանդիսիւ և հրաշալեաւ փառաւորութբ կատարէր. և էին ամքն յերև-ան քաղաքի, մոլեկս վրդպտն, և սահակ կթղի-կոսն, և շահի ղուլերն։ գնացեալ սահակն առ-սաց ընդ ղուլերումն՝ թէ խանն հրամայեաց զտօն Ջրօրհնեայն բազմաղան և մեծահանդէս կատարել. վասն որոյ ասաց ինձ մոլեկս վրդպտն, գնա դու յԷջմիածին՝ և զամ պատրաստական և զվաղեմի անօթսն՝ զոր դուք պահեալէք 'ի դա-րանի՝ բեր աստ, զի զտօնն կատարեսցուք։ և զայս ասելով հաւանեցոյց զնս՝ զի թոյլ տացեն նմա գնալ. և նոքա հաւատացին նմա և թողին։

Իսկ սահակն .քանզի ունէր զպատրաստական ձին՝ զոր շահն նմա պարգև էր տուեալ՝ հե-ծեալ ուղղեցաւ ընդ Ճանապարհն Էջմիածնի, իբր թէ գնալոց է յԷջմիածին և բերելոց է զա-նօթսն։ և 'ի հասանելն 'ի կէս ճանապարհին՝ փոխեալ զձև զդեստոյն 'ի ձև և 'ի կերպ զօրա-կանի, և դարձուցեալ զերեսանակ երիվարին, և դիմեալ դէպ 'ի Նախչուան քաղաք և 'ի սահ-մանսն։ Իսկ 'ի մնացելսն օդապարիկ և քաջա-գօրեղ և բարձրապարանոց երիվարին, ոչ թէ

զերե-

զերեսօք երկրի, այլ ընդ երկնիւք եւ խլր̄ թեաց ամպոց առեալ ածէր զնա չէշտակի 'ի սահմանս երկրին Նախջուանայ: Եւ եկեալ 'ի նաւատեղն դարաշամբայ գետոյն՝ եւ նաւուլ անցեալ զգետն երասխ, եւ գնացեալ 'ի չօրս՝ յորմէ 'ի խոյ. եւ անտի 'ի վան քաղաք: Եւ այսու կերպիւ ձողոպրեալ փրկեցաւ սահակ կթղիկոն 'ի ձեռաց ղուլերոյն, եւ գնաց 'ի մասն բաժնի երկրին Օսմանցւոց:

Յետ այսորիկ իբրեւ զգացին շահխուլերն զփախուստն սահակին՝ եկին առ մովսէս վրդ̄պետն՝ թէ դու առաքեալես զսահակն Էջմիածին վս̄ անօթի: Եւ մովսէս ասաց՝ ես զսահակն ոչ տեսեալեմ եւ ոչ առաքեալ. այլ նա այդու բանիւդ զձեզ խաբեալ է եւ փախեալ: Եւ ղուլերն թէպէտ բազմաւ կերպիւ կողմէ 'ի կողմ անկան. երբեմն առ խանն գնալով եւ երբեմն առ շեխն, եւ երբեմն առ դատաւորն, եւ երբեմն առ մովսէս վրդ̄պան. ոչինչ կարացին պատճառաւ խլր̄ մովսէս վրդ̄պետին: այլ ամենից կողմանց մերժեալք՝ դարձան եւ գնացին 'ի տեղիս իւրեանց ղուլերն ամ̄քն: Եւ այսեւս այսպէս:

---

Վճ̄ հակառակութե̄ սահակ կթղիկոսին, զոր արար ընդ խորայ Էջմիածնի եւ ընդ մովսէսի կթղիկոսին:

Ի:

ՅԵՏ ՓԱԽՍՏԵԱՆ սահակ կթղիկոսին յաշխարհ տերութե̄ Օսմանցւոց. մեռաւ թգ̄ւորն Պարսից շահաբաս՝ որ զհարիւր թուման մուղադէնն եդեալէր խլր̄ կթղիկոսացն. եւ փոխանակ շահաբասին թգ̄ւորեաց թոռն նորին շահսէֆի:

Իսկ ազգն Հայոց ամ̄քն արեւելեանք եւ արեւմտեա

մտեալք՝ հանապազ հեծեծէին և երկնչէին և յոդողոց հանէին վ՟ն հայրիւր Թումման մուղադային, որ 'ի տարապարտուց եդաւ խլ՟ր աթոռոյն. զի սուգ անմխիթար և տրտմութի՟ւն անփարատելի կայր խլ՟ր ամ՟ցուն. և միահաղոյն տրտմութ՟բ զգածեալ 'ի տարակուսի կային: Այլ որքան մտածէին ոչ կարէին գտանել թէ որով հնարիւք բարձցեն զայսպիսի ծանր և ստուար լուծս 'ի պարանոցէ աթոռոյն: և 'ի խնամոցն Ա՟յ գտին ժամանակս զայս յորժամ թ՟գրեաց շահսէֆին. քանզի նոր թ՟գր էր և մանուկ տիօք. և ամ՟քն նախարարքն և իշխանքն՝ որք կային 'ի դուռն ն՟ր, ճանաչէին 'ի քրիստոնէից զարս երևելիս. և մանաւանդ զխօջայ նազարն՝ որ նախապատիւ էր քան զամ՟ն: զոր և այս խօջայ նազարս գրէ յապահանայ առ մովսէս վար՟դպետն. և փայեկաւ հաստուցանէ 'ի նմա՝ որ էր 'ի մ՟ջ Զմիւռնին յայնժամ. գալ փութանակի 'ի դուռն արքային՝ զի թերևս հնարեսցեն բառնալ զհայրիւր Թումման մուղադէն:

Յայնժամ մովսէս վր՟դպետն աճապարեալ էհաս յապահան. և միջնորդութ՟բ խօջայ նազարին զբաղում գանձս ծախեալ. և յոքնակի աշխատութ՟իւ կրեալ. հազիւ թէ կարացին բառնալ զհայրիւր Թումման մուղադէն. որ ծանր բեռն անկաւ խլ՟ր կթ՟ղիկոսարանին: զի շահսէֆին հրամայեաց և զգիր ետ՝ թէ անցայ 'ի հայրիւր Թումման մուղադայէն:

Յետ այսորիկ քրիստոնեայքն խնդրեցին 'ի շահսէֆի թ՟գւորէն վ՟ն մովսէսի վր՟դպին զհրաման կթ՟ղիկոսութ՟ե. և շահն ետ զհրաման և ըզ թուղթ կթ՟ղիկութ՟ե մովսեսի վր՟դպտին: Ապա ամ՟ ազգն Հայոց, որք յարևելս և յարևմուտս կային միաբանեցան թղթով և բանիւ. և արա

րին

րին զմովսէս վրդպտն կթղկոս և հաստատեցին 'ի սուրբ աթոռն Էջմիածին։

Իսկ չարն սատանայ զմովսէս վրդպտն կթղկոսութիւն ծանր թուեցոյց 'ի սիրտն սահակայ կաթուղիկոսին. զի համարէր 'ի սրտի իւրում, թէ մովսէսն առանց իրաւանց հնարիւք իւն էհան զաթոռն և զկթղկոսութիւն 'ի ձեռանէ իւմէ, և յինքն կորզեալ ընկալաւ զերկոսեանն և համապազօր նախանձ կրեալ 'ի սրտի իւրում. վ̄ որոյ սկսաւ նախանձախնդիր լինել։

Եւ մովսէս վրդպտն, որ եղև կթղկս ունէր զմիաբանս և զաշակերտս բազումս, և վ̄ նորոգութե սրբոյ Էջմիածնի որ նոր էր սկսեալ. առաքեաց զաշակերտսն իւր 'ի նուիրակութի զի բերցեն զինչս յօժանդակութի նորոգման սրբոյ աթոռոյն Էջմիածնի։ Եւ փիլիպպոս վրդպտն՝ որ էր և նա մի յաշակերտացն մովսէսի, որոյ հրամանաւ գնաց 'ի նուիրակութի յարզրում և 'ի բաղէշ և 'ի վան, և մինչ էր փիլիպպոս վրդպն 'ի վան քաղաքի, գտաւ անդ և սահակ կթղկսն՝ որ շրջագայիւր այսր և անդր, և դեռ նոր սկսեալ էր յըսկիզբն գործոյ հակառութե։ Եւ փիլիպպոս վրդպն և երևելի արքն՝ որք 'ի վան քաղաքին կային, որ էր խանենց խօջայ ամիրխանն, և խօջայ թումէն։ այլև խօջայ շիրազն, և խօջայ միրաքն, և խօջայ փօլատն, և խօջայ սարուխանն, և այլք բազումք, խօսեցան ընդ սահակ կթղկսին, զի զհակառակութի և զխռովութիւն թողցէ. և մի 'ի դրունս այլազգեաց դեգերելով ցրուեսցէ զինչս քրիստոնէից։ Եւ փիլիպպոս վրդպտն համակամութբ գօլվաթաւորացն միաբանեալ յանձն առին որ 'ի մէջ Էջմիածնէ տացեն 'ի տարւոջ, զերիս հարիւր ղուռուշ յամ ամի անխափան

վասն սահակ կթղկսին, որքան ինքն կենդանի է 'ի պետս ծախուց իւրոց կարեաց՝ և զղուռու պաշտ վանքն իւրովք մոխիքն եռուն նմա, զի անդէն նստեալ կացցէ 'ի խաղաղութեն։ և թէ պէտ փիլիպպոս վարդապետն և խօջանիերն 'ի բազում աւուրս բազմակի խօսեցան զխաղաղութեն. այլ սահակ կթղկսն ոչ հաւանեցաւ, և ոչ դարձաւ 'ի չարեաց դիտաւորութեց խորհրդոց իւրոց՝ այլ գնաց 'ի դուռն վեզիրին՝ առ 'ի կատարել զխորհուրդս սրտի իւրոյ.

Մինչ շրջէր սահակն ի մէջ ազգին Հայոց՝ որք կային ընդ իշխանութեն Օսմանցւոց, այսր և անդր յաշխարհս և 'ի քաղաքս, զարմանս 'ի վարդապետաց և յեպիսկոպոսաց եգիտ իւրոց խորհրդոյն կամակից՝ յորոց մի էր և պօղոս անուն վարդապետ ոմն՝ որ էր 'ի սըսայ կթղիկոսարանէն եղբօր որդի յովանէս կթղիկոսին սըսայ։ թէպէտ յոլովք կային չարի խորհրդեանն համախոհք, այլ կատարիչք չարի գործոյն սոքա երկոքեանս էին սահակ կթղկսն և պօղոս վարդապետն։

Նաև պօղոս վարդապետն գնաց 'ի մեծ քաղաքն կոստանդնուպօլիս առ զաքարիայ վարդապետն, և էր զաքարիայ վարդապետս յերկրէն վասպուրականի՝ և էր յայսմ ժամանակի առաջնորդ ազգին Հայոց՝ որք կային 'ի կոստանդնուպօլիս, զի անուանի պատրիարգութեն՝ և թգւրականաւ մուղաղայիւ և հրամանաւ նստեալ էր առաջնորդ 'ի կոստանդնուպօլիս։ Նաև էր սա յայժ ներհակ մօսէսի կթղկսին, և ձեռնտու և օգնական սահակայ կթղկսին, վասն որոյ գրեաց զարդս, և մատոյց առաջի թգւորին սուլթան մուրատի որ 'ի նմին աւուրսն 'ի կոստանդնուպօլիս էր։ Խնդիրք մեր հայազուն քրիստոնէիցս այսէ 'ի

թգւ.

Թգւրէն՝ զի շնորհեցեն զհրաման կթղկսն ստա-
հակ կթղկսին, զի հովուեսցեն մերովք օրինօք
զամէն քրիստոնեայս՝ որք իցեն ազգաւ Հայ.
որք կան ընդ իշխանութբ ինքնակալին Թգւրու-
թեն Օսմանցւոց: և Թգւրն ետ զհրաման և
զթուղթ կթղկսութե ստահակին, որ և խնդրե-
աց զաքարիա վարդպտն. և զայս թուղթ իշխա-
նութե՝ զաքարիայ վարդպտն ետ ցպօղոս վրդ-
պետն, և առաքեաց առ ստահակ կթղկսն, և պա-
տուիրեաց ոչ թուլանալ և ոչ կասուլ'ի չա-
րեաց դխտուորութեցն՝ այլ ջանալ և աշխատել
մինչև ցկատարումն: Իսկ 'ի ժամանակիս յո-
րում զայս թուղթս եհան զաքարիա վարդպտն
'ի Թգւրէն՝ ոչ էր անդ առ Թգւրն, Թգւրի մեծ
վեզիրն՝ որոյ անունն էր խոսրով փաշայ՝ այր
բազմահանճար և խորոխտ իշխան. և բնաւ ոչ
էր տեղեակ վեզիրն այսմ գործոյ: և ոչ յայտե-
ամցեն զի կարգ և սահմանք է Օսմանցւոց, զի
զամ գործ և զորպիսութի ազգաց և ազանց.
իշխանաց և պետաց. կողմնակալաց և կուսա-
կալաց՝ վեզիրն հոգայ, տայ և առնու. որոյ
սակս և կարգեալէ: և սորա զանցարարեալ
զվեզիրաւն, և առ Թգւրն գնացեալ առին
զհրաման կթղկսութե: Իսկ այնու թղթովն
ստահակ կթղկսն և պօղոս վարդպտն եկին 'ի
քաղաքն տիգրանակերտ՝ որ է համիթ առ մեծ
վեզիրն խոսրով փաշայ, զի 'ի նմանէ ևս առ-
ցեն զհրամանն և զթուղթ կթղկսութե:

Իսկ բարեպաշտ քրիստոնեայքն՝ որք յազ-
գէն Հայոց բնակեալեն 'ի քաղաքն համիթ, որ
էր խօջայ երեմիայն, և խօջայ մախսուդն, և
վանեցի խօջայ ռօհիջանն, որ էր այս վեզիրիս
քուրքչի պաշի և հաւատարիմ, և հաճոյական
սպասաւոր առաջին նր. Նաև բարսեղ վար-

դա

դապետն, որ էր նոյն քաղաքին առաջնորդ, և էր սա բարեկամ սրբոյ Էջմիածնի և մոլեռա կաթողիկոսին, քանզի և սա յաշակերտաց սրապիոն կաթողիկոսին էր՝ մի որոյ և յիշեցաք 'ի ձեռն սրապիոնին: և այլևս դօլվաթաւորք և վարդապետք բազումք ժողովեցան 'ի համիթ քաղաք 'ի կողմանէ սրբոյ Էջմիածնի՝ և ջանային խափանել զսահակ կաթողիկոսի զչար դիտաւորութիւն:

Այլ սահակ կաթողիկոսն և ամենայն համախոհքն իւր անհնազանդեալ էին ի մէջ իւրեանց թէ սահակ կաթողիկոսն առցէ զիշխանութիւն կաթողիկոսութեան 'ի վերջերն, և գնացեալ 'ի մշու սուրբ կարապետն իւր աթոռ կալեալ անդ նստցի, և անդ օրհնեսցէ զմեռոն, և անդի առաքեալ բաժանեսցէ յազգս Հայոց՝ որք կան ընդ իշխանութեամբն Օսմանցւոց, և զվաղեմի սահմանեալ զթեմ և զվիճակ սրբոյ Էջմիածնի հատեալ շորթեսցէ յինքն, և ընդ իւրով իշխանութեամբ գրաւեսցէ բռնութեամբ թագաւորականի իշխանութեան: և խափանեսցէ զնուիրակն և զիշխանութիւն սրբոյ աթոռոյն Էջմիածնի:

Իսկ քրիստոնեայք ամենայն թէ եկեղեցականք՝ և թէ աշխարհականք 'ի բազումաւուրս գնային առ սահակ կաթողիկոսն, աղաչէին և խնդրէին մի մտանել զատուցեալ ազգս Հայոց 'ի բերան այլազգեաց բռնաւորաց՝ և մարդադիմաց գազանաց: Նա խոստացաւ սահակ կաթուղիկոսն, թէ 'ի քաղաքաց կամ 'ի վանորէից որում և հաճեսցի ինքեան լիցի թեմօք և վիճակօք. որքան ինքն կենդանի իցէ նուիրակ Էջմիածնի մի մտցէ 'ի նա. այլև ընդ ամին հանապազ յամ ամի 'ի տարին հինգհարիւր դուռուշ Էջմիածնի նստողն տայ սահակ կաթողիկոսին մի իւր օր աւուր խարջին: Բրդ այս

պէս և ըստ այսմ օրինակի բազմակի և յոլովակի գուն գործեալ հնարեցան, և մաղթէին գալ 'ի խաղաղութիւն սահակ կթղկոսն և պօղոս վարդապետն, և նորա ոչ եկին։

Իսկ մովսէս կթղկոսն որ յԷջմիածինն էր. և փիլիպպոս վարդապետն որ տակաւին 'ի վանս էր։ նոքա ևս յիւրաքանչիւրոց տեղեաց գրեցին զթուղթ մաղթանաց առ սահակ կթղկոսն. և երևելի արամբք առաքեցին՝ զի դադարումն արասցէ խռովականի գործոյն։ և զայլևս թուղթ առ բարեկամս իւրեանց՝ ոմն թէ համոզել զսահակն 'ի խաղաղութիւն և կատարել զհաճոյս կամաց նր, զինչ և խնդրեսցէ։

Իսկ սահակ կթղկոսն և պօղոս վարդապետն ընաւին ոչ եղեն ունկնդիրք. այլ գրեցին զարզայ յիւրեանց կողմանէ և միջնորդութբ̄ եաղուբ փաշային հասուցին 'ի ձեռն վէզիրին. և դոյայութիւն բանի արզային էր ըստ այսմ օրինակի։ Զայս լիցի մեծի և անպարտելի տէրութե̄ն հզօրիդ՝ խնդրեմք զի շնորհեսցես մեզ զիշխանութիւն կթղկութե̄ն ազգին Հայոց. եթէ լիցի այս բան հաճոյ կամաց վեհիդ՝ և արժանացուսցես զմեզ այսմ պատուաւորութե̄ն. մեք յաւելումք 'ի գանձարանն արքունի ամ յամէ յիւրքն չիւր տարւոջ զտասն հազար ղուռուշ որ ամ յամէ տամք։ Նաև յաղագս այսմ գործոյ 'ի թղթերէն ևս խնդրեցաք զթուղթ հրամանի և նա պարգևեաց. զոր ահաւասիկ ունիմք առ մեզ. և արդ 'ի քումմէ մեծութէ ևս խնդրեմք զի հաստատուն լիցի գործս մերքոյով հովանաւորութե̄ն։ Այս թուղթս արզայի եաղուբ փաշէն մատոյց առաջի վէզիրին. և վէզիրն ընթերցաւ և մտօքն հաւանեցաւ. բայց բանիւ ինչ ոչ ասաց։

Եւ յայլում աւուր արքն, որք 'ի կողմանէ Էջմիածնի էին, նոքա ևս գրեցին զարզայ և մատուցին վէզիրին 'ի պատշաճի ժամու։ և գոյացութիւն բանից արզային էր այս։ Խնդրեմք յաշխարհաշէն և 'ի խաղաղարար տէրութենէ հզօրիդ՝ զի մի մատնեսցես զաղքատ և զտառապեալ ժողովուրդս 'ի ձեռս դոցա՝ զի դոքա վն փառամոլութե և ագահութե իւրեանց մատնեն զողորմելի ռուխթն 'ի ներքոյ ծանր հարկի. որ է ժողովրդեանն մեծ սիթամ. և գործողացն մեղք։ Եւ յետ ընթերցման զարզայիս պատասխանեալ է վէզիրն արանցն մատուցանողաց արզային. անխելք հայք՝ զխարդ ոչ տամ նց զկթղկսութի. զի նոքա 'ի տարուոջն զտասնհազար ղուռուշ յաւելուն 'ի գանձարան թգւորին։ Իսկ խօջայ ռուհիջանն. որ վն հաւատարմութե իւրոյ համարձակութի ունէր առաջի վէզիրին՝ ասաց առ վէզիրն. փառաւոր տէր իմ. եթէ զողորմելի և զտառապեալ ազգն հայոց վն գանձի վաճառես նոցա. ինձ վաճառես. և ես ոչ թէ զտասն հազար ղուռուշս. այլ զքսան հազար ղուռուշս տամ։

Եւ ամենաթգւորն Է.Ծ. որ ունի 'ի ձեռին զսիրտ ամենից թգւրց և իշխանաց՝ ըստ սաղոմոնի. խղճմբանից ռօհիջանին եբեաց զտեսարան մտաց վէզիրին, որ կրկնակի հարցումն արար. և խօջայ ռօհիջանն զնոյն որինչ պատշաճ էր ծանուցանելոյ ասաց անդէն։ Եւ վն նախանձ արկանելոյ 'ի սիրտն վէզիրին. զայն ևս յաւելարարեալ է նմա. թէ տէրն պետք, և իշխանք, կողմնակալք և կուսակալք ազգին Օսմանցւոց խոնարհին ընդ տէրութեւքով՝ և առ բեգ գան խնդրել և առնուլ զպատիւ և զիշխանութի. իսկ սոքա զանցարարեալ զբեգ առ թագաւորն

գնա

գնացեալ առեալ են զիշխանութ՟ն կթ՟ղկոսու-
թ՟ն: Եւ յետ վճարման ամենից բանիցն արժա-
նեցան խօջայքն 'ի վէզիրէն՝ և 'ի բաց գնացին:
Եւ յաւուրն, յորում նստաւ վէզիրն յա-
տեան բազմախուռն հանդիսիւ. առնէր դիւ-
ան. եաղուբ փաշէն, որ էր միջնորդ և յար-
դարիչ գործոց սահակայ կթ՟ղկսին. զսահակ
կթ՟ղկոն և զպօղոս վարդ՟պտն ածեալ 'ի հան-
դէսն յանդիմանկացոյց առաջի վէզիրին:
Եկին 'ի նոյն հանդէս և արքն, որք 'ի կողմա-
նէ Էջմիածնի, (էին արք) բազումք. որոց գըլ-
խաւորն էր խօջայ երեմիայն, և խօջայ մախ-
սուտն, և խօջայ ռօհիջանն, և բարսեղ վար-
դ՟պտն: Յօսեւ սկսաւ վէզիրն առ սահակ
կթ՟ղկսն և առ պօղոս վրդ՟պտն՝ և ասաց. զինչ է
յօժարութ՟ի կամացն ձերոց՝ ով արք. որք դե-
գերիք 'ի դրունս իշխանութ՟եա: պատասխա-
նեաց սահակն. զորինչ արզայ թղթոյն մատու-
ցաք առաջի տեառն մերոյ: և վէզիրն հրա-
մայեաց զարզայն ընթեռնուլ. յորում գրեալն
էր՝ թէ 'ի թ՟գրէն ընկալաք զհրաման կթ՟ղկո-
սութ՟ն, և արդ 'ի քէն ևս խնդրեմք: Եւ հարց
վէզիրն զսահակն՝ թէ արդարև ընկալեալ էք
զթուղթ կթ՟ղկոսութ՟ն 'ի թ՟գրէն. և նա ասաց այո,
մատեաք առ թ՟գւրն և առաք զհրամանն: Ասաց
վէզիրն. դուք յորում աւուր ծանուցիք մեզ
զորպիսութ՟ի ձեր՝ և մեք անփոյթ արարեալ
ոչ կատարեցաք զխնդրուածս ձեր. որ զանց
արարեալ զմեզ գնացիք առ թ՟գւրն ձանձրա-
ցուցանել զգլուխ նր՟: Եւ նոյնժամայն հրա-
մայեաց վէզիրն, որոց կային առաջի իւր, սպա-
սաւորաց և դահճաց, դնել զսահակ կթ՟ղկսն՝
և զպօղոս վրդ՟պտն 'ի ֆալախայ և բրածեծ
առնել. և այնչափ հարկանել մինչև կամ դա-

նալ 'ի հաւատոց իւրեանց օրէնս մահմետի․ և կամ ինքեանց փայտի մեռանիլ։ իսկ սպասաւորք վեզիրին առժամայն կատարեցին զհրամանն․ զի զսահակ կաթողիկոսն և զպօղոս վարդապետն եդին 'ի փալանգայ և յերկուց կողմանց կանգնեալ արանց հաստիւք բրօք սկսան անողորմ հարկանել․ միշտ հարկանէին, և միշտ ասէին․ արդ դարձիք 'ի մոլար հաւատոց ձերոց՝ և մտէք 'ի ճշմարիտ օրէնս մեր՝ և զերծջիք 'ի տանջանաց՝ և 'ի դառն մահուանէ․ ապա թէ ոչ՝ ոչ դադարիմք 'ի հարկանելոյ մինչև ցմահն ձեր։

Եւ երբև եղև՝ զի մատնեցան 'ի հարուածո գանից սահակ կաթողիկոսն և պօղոս վարդապետն․ և զինուորքն անողորմ և ուժգին հարկանէին․ զի թերևս 'ի վտանգէ տանջանացն դառնայցեն յիւրոց հաւատոցն։ Յայնժամ խօջայ երեմիայն և ընկերքն իւր խորհեցան՝ զի մի գուցէ ոչ կարիցեն տևել տանջանացն՝ և դառնայցեն՝ 'ի հաւատոցն՝ և լինիցին նոցա խիղճ մտաց․ և ազգին հայոց մեծ ամօթ և նախատինք։ որև առժամայն նոքին խօջայքն այսր և անդր ընթացան առ նախապատիւ իշխանս վեզիրին, և խոստացան նոցա զարծաթս բազումս զի զբանս մաղթանաց խօսեսցին առաջի վեզիրին վասն փրկութեան սահակայ կաթողիկոսին և պօղոսի վարդապետին։ և իշխանքն ըստ պատշաճին խօսեցան առաջի վեզիրին զբարեխօսութիւն․ որով ցածեաւ բարկութիւն վեզիրին․ և հրամայեաց արձակել 'ի տանջանաց․ և իբաց վարել 'ի դրանէ դիւանին։ և զինուորքն յետ արձակելոյն, հարկանելով և ձաղելով զկառափունս նոցա վարեցին արտաքս 'ի հանդիսէն։

Եւ երբև այսպէս եղև կատարումն գործոյ սահակայ կաթողիկոսին և պօղոսի վարդապետին․ այ-

նուհեաւ եկն իմ՛ր ընդ ամօթ և պատկառանք. և անկան երեսք նդ. և ոչևս կարէին հայիլ յերես քրիստոնէից. և ոչ համարձակէին շրջիլ իմէջ մարդկան վն ամօթոյ:

Իսկ ապա պօղոս վրդ՛պտն գնաց 'ի մեծ քաղաքն կոստանդնու պօլիս, և անտի յուռումէլի, և անտի յաշխարհն իլախաց. և կացեալ ժամանակս ինչ և ապա վախճանեցաւ. և անդէն թաղեցաւ: Այնպէս և սահակ կթողիկոսն սակաւ սակաւ գնալով եհաս 'ի գաւառն կարնոյ. և անտի յաշխարհն վրաց. և անտի յարարատ գաւառ և 'ի սբ Էջմիածինն. և մնաց անդէն 'ի սբ աթոռն յԷջմիածին:

Իսկ ըստ ցաւակիր բնութեան մարդկան պատահեցաւ ցաւ իմն ոտից սահակ կթողիկոսին. և որ աւուր յաւելաւ ցաւն յորմէ պատճառէ ուռան երկոքին ոտքն նր. և որ աւուր յաւելաւ ուռուցն. և եհաս մինչև 'ի փորն և բազում աւուրս մնաց այնպէս. և ցաւն այն յոյժ ցաւէր. և կարի վշտացուցանէր զնա:

Իսկ 'ի նեղութէ ցաւոյն յաւուր միում՝ ասաց սահակ կթողիկոսն բառնալ զինքն և տանիլ 'ի տաճար սրբոյ Էջմիածնին. և անկեալ իմ՛ր իջման տեղեացն Քրի՛ն յորում տեղի Քրն իջեալ է. և բազմօք հառաչանօք փղձկելով սրտիւ և յորդաբուղխ արտասուօք՝ և ցաւագնիւ անձամբ զերեսս 'ի գետին փարելով. 'ի բազում ժամս եղաց դառնապէս. և ընդ արտասուացն մաղթողականաւ բանիւ ասաց:

Ով Տր իմ և Ած իմ Յն Քն դատապարտեալ ծառայ քո եմ և մեղուցեալ հոգւով և մարմնով. եթէ կամք քո հաճի կեալ ինձ կենդանի՝ փութով փրկեա զիս 'ի ցաւոյս՝ և տուր ինձ զառողջութի: և եթէ կամք քո հաճի մեռանիլ

ինձ՝ փութով տուր ինձ զմահ զի հանգեայց ՚ի տառապանաց ցաւոյս : Եւ անդէն ՚ի նմին տեղւոջ ի մէջ եկեղեցւոյն կոչեալ առ ինքն զոմն ծեր եպսկպս և խոստովանեալ զամենայն յանցանս մեղաց իւրոց · և հաւատով և յուսով հաղորդեալ ՚ի պատուական Մարմնոյ և յԱրենէ Որդւոյն Այ : Եւ ապա բարձեալ տարան ՚ի տունն յորում կայր հիւանդ · և ՚ի գիշերին յանկարծ հասանէ նմա մահ՝ և աւանդէ զհոգին՝ և վճարէ զկեանս իւր՝ և հանգչի ՚ի տառապանաց ցաւոյն ըստ խնդրանաց իւրոց : և կատարեալ զկարգ թաղմանն իւրոյ տարեալ թաղեցին ՚ի գիրս գերեզմանացն :

---

Պատմութիւն առաքինագործաց արանց Սարգսի եպիսկոպոսին և եղբօրն Կիրակոսին · որք եղեն սկիզբն շինելոյ և հաստատելոյ անապատաց : Որովք և պատճառք բարեկարգութեան · Վանորէից, և Եկեղեցեաց, և Նոցին բնակողաց :

## ԻԸ.

ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ոմն · որ էր յաշխարհէն Արարադեան · ՚ի գաւառէն ամբերդոյ՝ որ է արագածոտն · ՚ի գեղջէն, որ ասի յարենի · որ է մերձ ՚ի գիւղն կարփի · և այժմ է աւերակ · և անմարդաբնակ · բայց ՚ի ժամանակս հարց մերոց էր շէն գիւղս յայս յարենի · ուստի էր այս սարգիս եպիսկոպոս : Սոյն եկեալ բնակեցաւ ՚ի մեծափառ ուխտն սաղմոսավանաց · լեալ սպասաւոր բազմահաւաքից սրբութեցն, որք կան անդր · որև զկնի ամաց ինչ եղև առաջնորդ նոյն վանացն :

Բայց դար մերձ այս վանից գիւղ մի փոքրիկ · ուստի այր ոմն քրիստոնեայ որսորդ գոլով՝ շրջէր աւուրց յաւուրս ՚ի լերինս որսալ երէ վայրիս :

վայրիս։ Եւ եղեւ յաւուր միում գնալ առնս այսորիկ 'ի մեծ լեառն արագած վ̄ն որսոյ. եւ 'ի շրջելն իւրում 'ի գլուխս լերինն. պատահեցաւ առն ումեմն Ճգնաւորի. որ 'ի խուռջս վիմացն նստեալ կայր կծկեալ. ունելով 'ի գլուխն վեղար եւ զիւրեւ փիլոն։ եւ մօտեալ առ ի ստուգիւ գիտել թէ զինչ իցէ այն. ետես զի մարդ էր հաւաստեաւ. եւ մեռեալ էր. եւ այնպէս նստեալ կայր. եւ մարմինն անապական։ Եւ 'ի տեսլենէս այսմանէ անկաւ երկիւղ եւ սոսկումն խիղճ առնս այսորիկ որսորդի. եւ ոչեւս կարաց ժուժել 'ի տեղին յայն, այլ դարձ արարեալ անտի եկն 'ի տուն իւր։ եւ եկեալ 'ի սաղմոսավանքն պատմեաց ամենեցուն զննջումն Ճգնաւորին, որ պատահեցաւ նմա 'ի գլուխ լերինն. իբրեւ լուաւ զայս սարգիս եպիսկոպոսն. եւ ստուգեալ վերահասու եղեւ թէ յորում տեղւոջ իցէ։

Եւ յաւուր միում յանձնեալ զանձն իւր Տ̄ր սարգիս եպիսկոպոսն՝ յուսացեալ յառաջնորդութիւն Տ̄ր. ելեալ գնաց 'ի լեառն արագած. եւ շրջեալ այսր եւ անդր յաւուրս երիս. եգիտ զվախճանեալ Ճգնաւորն։ եւ բազմօք փափագանօք եւ ջերմեռանդ-իւ սիրով համբուրէր զը ձեռս եւ զոտս նր̄. եւ յետ հեղման բազմաց արտասուաց՝ ամփոփեալ թաղեաց զնա նորին զգեստիւն. դարձաւ եւ եկն 'ի վանքն։

Եւ եղեւ այս պատճառ զղջման սարգիս եպիսկոպոսին, եւ հրաժարելոյ յաշխարհէս. քան զի տաղտկալի թուէցաւ յախորժակս սրտի նր̄ պատիր եւ ընդունայն, խէնէշ եւ խաբուսիկ վայելչութիւն աշխարհիս այսորիկ։ Եւ յայնմանէ օրէ եւ առ յապայ խնդրէր սարգիս եպիսկոպոս հեռանալ յաշխարհէ. եւ հետեւիլ լուսաշաւիղ

երկնաւորի Ճանապարհին առաքինականաց վարուց։ Բայց ոչ գոյր 'ի ժամանակին յայնմիկ անապատ և կամ գիտող կարգաց կրօնաւորականաց վարուց. վն բազմաց հինից թշնամեաց եկեղեց իվերա և վրդովմանց՝ և աւերմանց աշխարհիս Հայոց՝ ամենևին բնաջինջ եղեալ էր և բարձեալ նշոյլ և նշմարան առաքինեաց գործոց՝ և բարեաց կարգաց յաշխարհէս Հայոց։ Նա և մինչ կայր ի մէջ յայսմ վարանմանս սարգիս եպսկպսն, եդ 'ի մտի խորհուրդ գնալ 'ի սբ. քաղաքն եմ յերկրպագութն տնօրինականաց Քի Յի Տն մերոյ. որև ելեալ գնաց։

Դարձեալ 'ի սոյն ժամանակի գտեալ եղև մի ևս այլ ոմն. որոյ անունն էր տէր կիրակոս. որ կամօք և յօժարութբ նման գոյր կամաց և յօժարութե սարգսի եպսկպսին։ և էր տէր կիրակոսս այս 'ի քաղաքէն տրապիզոնայ. մտեալ 'ի կարգ աշխարհի բայց ոչ վայելեալ՝ քանզի զկնի սակաւուց աւուրց վախճանեալ ամուսնոյ նր. և ինքն մնացեալ իբրև զտատրակ ողջախոհ։ և հանապազօր խոկայր 'ի պատուիրանս Տն. և անձանձիր ընթեռնոյր զգիրս սծայինս. և 'ի միտ առնոյր զպատգամս նն. և ջանօք և երկօք կրթէր զանձն ըստ հրամանաց գրոցն կենցաղավարելով։

'Ի սոյն ժամանակի յայսպիսում խորհրդեան գոլով տեառն կիրակոսի՝ լուաւ յոմանց վն սարգսի եպսկպսի թէ նա զղջացեալէ յաշխարհէ. և կամի հրաժարել՝ և հետևիլ առաքինեաց վարուց. վն որոյ տէր կիրակոսն ելեալ 'ի տրապիզոնայ եկն յերկիրն արարատու 'ի սաղմոսավանք՝ առ ի միաբանիլ ընդ սարգսի եպսկպսին. և ոչ կարաց տեսանել զնա՝ զի գնացեալ էր յեմ։ Վն որոյ և սա եդ 'ի մտի խորհուրդ գնալ յեմ։

յէջմ. և դարձեալ 'ի սաղմոսավանից եկն 'ի տրապիզոն՝ վաճառեաց զմ̃մն ինչս իւր. զմասն ինչ ետ աղքատաց. և զտունն և զանդաստանն իւր աւանդեաց եկեղեցւոյն տրապիզոնայ. և զմասն ինչ եառ ը̃ իւր զթօշակ ճանապարհին. և ելեալ գնաց յէջմ: և պատահեցան սոքա երկոքեանս միմեանց սարգիս եպիսկոպոս և տէր կիրակոս. և յետ աւուրց ինչ առ միմեանս կելոյ գտին զերկարս միով դիտաւորութ̃բ՝ և միով յօժարութ̃բ և կրիւք ախտացեալս. և միակամ և միաբան և միախորհուրդ եղեալ յայնմանէ օրէ և առ յապայ կենցաղավարել 'ի միասին:

Բայց խնդրէին զտեղի անքոյթ և պատշաճաւոր անապատի, և հեռի 'ի շփոթմանց աշխարհի. և լուեալ յումանց գիտողաց թէ այդպիսի տեղիք բազումք գոն յարևելեայ մասին աշխարհին հայոց. և մանաւանդ յերկրին սիւնեաց՝ որ և 'ի հին ժամանակաց անապատ եղեալ է յաշխարհին յայնմիկ՝ որոց տեղիքն արդէն կա երևէին: և իբրև ստուգեցին զբանն, ելեալք յէջմ֊ յօժարութ̃բ դիմեցին և եկին յաշխարհս արևելեան յերկիրն սիւնեաց. և հասին 'ի մեծափառ ուխտն տաթևի առաքելոյն՝ որ այժմ ասի տաթևու վանք: և սուղ ժամանակս կացեալ անդ, գնացին 'ի տեղին, որ անուանի ձորոյ վանս, որ ասի ցրուանց: և զկնի սուղ ժամանակաց գնացին անտի 'ի տեղին, որ անուանի թանահատի վանք: և անտի ևս ելեալ որոնէին առաւել ևս անքոյթ և անշփոթ և յապահով տեղի, մինչև գտին զտեղին յորում այժմ շինեալ կայ մեծ անապատն: և անդ շինեցին զեկեղեցի և զխուցս ըստ պատշաճի անապատի, և միայնակեցի֊ ոմ̃ ցուցանէ գիրք հարանց վարուց և այլոց ճգնաւորացն, նաև մ

մթին և փոքրագոյն. և սկսան անդ զետեղել:
Իսկ Տէրն տերանց՝ և Աստուածն աստուածոց՝ որ միշտ զբարին կամի և յառաջնեցուցանէ, յաջողէ և ուղղէ զգործս նոցա՝ և խնդրէ ձեռնտու և օգնական լինել, վասն զի խնամ բարւոյ համբաւոյ նոցա եկին բազումք և յարեցան 'ի նոսա և եղեն նոցա միաբանք և բնակիչք տեղւոյն: ոչ միայն աշխարհականք և անինչանք, այլ եկեղեցականք և անուանիք արք վարդապետք, եպիսկոպոսք, և քահանայք: Որ էր պօղոս վարդապետն մոկացի, և մովսէս վարդապետն սիւնեցի. որ զկնի եղև կաթողիկոս. որ և զերկուցս պատմութիւն և զարդիւնսն յայլում ճառի երկար պատմեցաք: Եւ նոյնպէս վարդապետն մոկացի, որ զկնի գնաց 'ի կղզին լմիյ և անդ շինեաց անապատ: Եւ Թումայ եպիսկոպոսն տաթեւու, որ զկնի եղև վարդապետ, և գնաց յերկիրն շամխու հոլովել և առաջնորդել ժողովրդեան աշխարհին: և կարապետ եպիսկոպոսն Աջմիածնեցի, որ զկնի գնաց 'ի սևան կղզին, և զայն տեղին շինեաց զանապատ՝ և կայ հաստատ մինչև ցայսօր: Եւ շամբեցի արիստակէս վրդպետն, որ զկնի եղև առաջնորդ նոյն մեծի անապատին, և անդ էկաց մինչև ցվախճան կենաց իւրոց՝ և անդէն Թաղեցաւ: Եւ միւս տէր արիստակէսն, որ էր 'ի գաւառէն բարկաշատայ. որ զկնի գնաց 'ի տեղին, զոր անուանեն տանձափարախ, և շինեաց զանապատ՝ և անդ էկաց մինչ ցվախճան կենաց իւրոց՝ և անդէն Թաղեցաւ, և տեղին անապատ կայ հաստատուն մինչև ցայս օր: Եւ դաւիթ եպիսկոպոսն, որ էր 'ի շամքօրու ձորէն՝ և 'ի ցեղէ իշխանաց՝ զոր զարամանենց կոչեն. սա և եկեալ էկաց 'ի մեծ անապատս. և ապա եկեալ գնաց 'ի ձորն շամքօրու՝ և անդ

շինեաց

չինեաց զանապատն՝ զոր կոչէին չարէքադեւոն ա-
նապատ. որ է բազմամարդոյ եղբարց բնակութ.
Եւ յայժմ Հաստատուն ամենևիւք կարգօք և սահմա-
նօք անապատն մինչև ցայսօր. և ինքն դաւիթ ե-
պիսկոպոսն անդէն վախճանեցաւ, և անդէն թաղե-
ցաւ : Նաև այլք բազումք և յոլովք՝ որք անդէն
կացին՝ և առ Տէր փոխեցան. և որք յայլուրեք
գնացեալ շինեցին զանապատս և զվանորայս :

Քանզի երբեմն զմայրն սիոն զորմէ ասէ մար-
գարէն եսայի. թէ 'ի սիոնէ ելցեն օրէնք՝ և
բան Տն յեմէ. սոքա երկոքին արքս եղեն
սկիզբն անապատիս. և անապատս եղև մայր և
ծնող ամենից անապատաց. և առիթ լուսաւո-
րութեն ազգիս Հայոց :

Սանզի ոչ սոսցի սոա վարժեալ ուսու-
մնացին ներքևս վարդապետն զվարս կրօնաւորա-
կանս, և եկեալ գնաց 'ի գաւառն վասպուրա-
կանի, և եմուտ 'ի կղզին լմայ խմեջ ծովուն. և
անդ ժողովեցան առնա բազմութիւք եղբարց,
և եղև անապատ Հաստատուն ամենևիւք կար-
գօք և կրօնիւք միաբանեցութեց վարուց, և ինքն
ներքևս վարդապետն անդէն կացեալ կրօնաւորա-
կանաւ ժուժկալութբ կատարեաց զնթացս
իւր առաքինի վարուք, անդէն վախճանեցաւ
և թաղեցաւ, և վախճան նր եղև 'ի թուին
մերում. Հազար եօթանասունևվեց ամի :

Նաև զկնի նորին յաջորդեաց զառաջնորդու-
թիւն տեղւոյն ընկեր նորին ստեփաննոս վարդա-
պետն : Նաև յայսմ ժամանակիս ևևս աճեցան
միաբանք լմայ անապատիս, վասնորոյ ոմանք եկեալ
'ի լմայ գնացին 'ի տեղին՝ որ անուանի կտուց՝
որև սա կղզի է խմեջ նոյն ծովուն. և անդ ևս շի-
նեցին զանապատ և զեղբայրանոց՝ և է այժմ
Հաստատ ամենևիւք կրօնաւորականիւք կարգօք :

Նա

Ա՛ն և այլ ես մանունք անապատք շինեալք այսր և անդր, բայց մեք զնշանաւորսն յիշեցաք՝ որ յայս մեծ անապատէս ուսեալք և վարժեալք գնացին յայլ տեղիս՝ և հաստատեցին։ որոց ամենացուն եղեն սկիզբն և պատճառ վերոյ ասացեալ երկուքին աբն սարգիս եպիսկոպոսն և տէր կիրակոսն։ Քանզի միանգամայն յամենայն սր տէ լքին իբրեւ զաշխարհ, և բարեաւ մնալ ասացին ամենից կենցաղականաց հոգոց սորա, և տարին զինքեանս խաչեալ աշխարհի, և զաշխարհ ինքեանց, ըստ խրատու առաքելոյն։ Որով ինձ աշխարհ 'ի խաչելեալ է, և ես աշխարհի։ վ՞ն զի զցայգ և զցերեկ յինքեանս կրեալ ունէին զՔ՞ի յընդունարանս սենեկի յոգւոյն իւրեց։ որ ոչ միայն 'ի ժամ աղօթից և յեկեղեցւոջ՝ այլև 'ի խցի ժուժկալեալ արգելուածին զինքեանս, պարապելով յաղօթս և 'ի խօսակցութեն Ք՛ի. և յնթերցումն սրբոց գրոց, զաղօթս տարեալ կերակուր և զարտասուս ըմպելի։

Ա՛ւ Հոգին Սբ որ քննիչ է խորոցն Այ՛ և վերակացու տեսութե՛ իմաստից գրոց, բանայր առջի մաքուրց մտաց նց զգրունս գիտութե, և խելամուտ առնէր զնս չաւղաց գրոց, որովք լուսաւորեցան ինքեանք՝ և լուսաւորեցին զմերձակայս և նոքօք զազգս Հայոց, քանզի մինչև ցայս վայր տգիտութե՛ խապանացեալ և կորգացեալ էր ազգս Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուին՝ այլ և ոչ զգիրս գիտէին, և ոչ զզօրութիս գրոց, վ՞ն զի անպխանացեալքէր գիրքն յաչս մարդկան, և իբրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք լցեալ հողով և մոխրով։ Ա՛ւ իբրև սոքա մտին ընդ լծով ծառայութե՛ առաքինեաց գործոյ, յօժարութե՛ ընթեռնուին զգիրս և կամակարքս մտօք կըր-

թէին

թէին զինքեանս, գործովք կատարել զընթեր-
ցեալն բանիւ ․ վա̃ զի աներկբայիւք մտօք հաւ-
տային գրոց բանից թէ Ի. Յ̃ պատգամք են ։
Եւ սոքա երկրային արքս, վերոյ ասացեալ ա-
րամբքն ․ զորոց զանուանս յիշեցաք վարդպտց
և եպիսկոպոսաց, սկսան յընթերցմանէ և յուսու-
ցանելոյ գրոց վերստին նորոգել և յարդարել
զա̃մն կարգս բարիս անապատաց՝ և վանորէից՝
և ժամատեղաց օգնութբ̃ և օժանդակութբ̃
Հոգւոյն սրբոյ՝ որ վերակացու է խորոց իմաս-
տից գրոց ․ բանայր, և յայտնէր, և ծանուցա-
նէր առաջի տեսութ̃ե մտաց ն̃ց զիմաստութ̃ի,
և զուղիղ կարգս որում 'ի խնդիր էին ։

Որով սահմանեցին թէ պարտ է անապա-
տաւորաց միայն կալ՝ և ժուժել՝ 'ի խցիւ պահել
զմիտս և զխորհուրդս ա̃ս ամենից անմաքրից
մտածութ̃եց հոգեկանաց և մարմնականաց ։
և թողուլ զկամս իւր և լինել հնազանդ և կա-
տարող կամաց առաջնորդին ։ և ոչ լինել ու-
մեք ստացուած առանձին, այլ ա̃մ ինչ հասա-
րակաց լինել ․ և առաջնորդն հոգասցէ ա̃մցուն
եղբարց պէտսն, և բաշխեսցէ ում և պիտոյ
ացի ։ և ինչ ոչ ունել 'ի խցի՝ և կամ ուտել ․
և հանապազօր 'ի տարին պահօք անցուցանել ․
բաց 'ի շաբաթէ և 'ի կիրակէէ և 'ի տէրունա-
կանաց տօնից ։ Իսպառ հրաժարեալք 'ի գինւոյ
և 'ի մսոյ ։ և յա̃մ աւուր յայգն և յերեկոյն
խոստովանիլ անխափան զյանցուածս և զմտա-
ծութիւս աւուրն ։ և յա̃մ շաբաթ օր և 'ի կիրա-
կի օր, և 'ի տէրունականս աւուրսն զգիշերն պաշ-
տամամբ անցուցանել մինչև ցառաւօտն, և 'ի
սոյն աւուրս անխափան մատուցանել զպատա-
րագ ։ և հասարակ ա̃մքն մեծք և փոքերք, իմ-
ասեն գալ 'ի մարմնաւորաց գործոց կոչնակն ։ և
'ի սե

՚ի սեղանն մարմնաւոր, և ՚ի տեղի աղօթից. և իւրաքանչիւրոց առանձին դնել զմարմնաւոր կերակուրն։ և ՚ի մեծէ մինչև ցփոքունս միաչափ, սոյնպէս և զբաժանելն մրգաց միաչափ։

Այլև զորպիսութիւն և զձև զգեստուցն գտին ՚ի գրոց, զքուսիթայն, որ է գլխոյ թօփլին. և զքառակուսին, և զպքեմն, և զցպախն, որ է մաղեղէնն, ՚ի ներքոյ զգեստուցն իւրեանց մերկ մարմնոյն։ և Հասարակ ամենեցուն զգեստն բոլանգակ ասուեղէն լիցի՝ և ոչ բամբակեղէն։ և զասուեղէն շապիքն երկայն ապձնաւոր առնել մինչ ՚ի յոտն՝ և գօտի մաշկեղէն։ Նաև սահմանեցին ամենեցուն թէ իւրաքանչիւրոք իւրովք զգեստուքն շրջեսցի, եթէ միայնակեաց իցէ քուսիթայիւն և քառակուսիւն. եթէ երէց իցէ փիլոնաւն։ եթէ աբեղայ իցէ փիլոնաւն և վեղարաւն։ Այս կրօնաւորական զգեստ ամենեքին անհետ եղեալ էր, և այժմ սոքա գտին. իսկ վեղար և փիլոն թէպէտ գոյր, այլ միայն ՚ի ժամ աղօթիցն զգենուին, և զկնի արձակմանն ժամուն ՚ի բաց եդեալ յինքեանց, և իբրև զաշխարհականս շրջէին։

Այլև զկարգ ժամատեղացն սահմանեցին զուարթուն ժամ գիշերոյն պաշտամամբք կատարել ՚ի տէրունի աւուրն, եղանակաւ յիշեցուք այլովքն։ և երկու կանոն սաղմոս և ՚ի վերջն կանոնագլուխ ձայնիւ։ և Հանգստեան շարական և աւետարան, պաշտօն ննջեցելոց. օրհնութիւն ըստ խորհրդոյ աւուրն, և իւր քաղուածք շարականաց, և թ՟ւըք, և ալէլուք ձայնիւ։ նոցին զկնի ընթեռնուլ զյայսմ աւուր, և իւր նոր շարական ըստ պատշաճի Ճաշուն, որ ընթերցաւ։ և զկնի երկու կանոն եւս սաղմոս. զՀետ նորին Հարցն իւրովք սարօքն. և զարևելից ժամն,

ժամն, ճերով կանոնաւ սաղմոսիւն։ և զկնի առաւօտու ժամուն, և երեկոյի ժամուն, յետ արձակելոյն զգիրս խրատականս ընթեռնուլ յամաւուր։ Նոյ զերրորդ ժամ ցերեկին. և զվեցերորդ ժամն, և զիններորդ ժամն, իւրեանց նշանակեալ սաղմոսիւն, զատ և որեւ ’ի միաանց յիւրաքանչիւր նշանակեալ ժամու ասէին։ և զկնի զպատարագն ոչ մատուցանէին։ և զարարողութ̃ն պատարագին դպրօք և սարկաւագօք։ և իւրաքանչիւրոք իւրովք նշանակեալ զգեստուքն։ ապն խոստովանեալ և ապա զգեստաւորեալ։ ահիւ և դողութ̃ կալ առաջի պատարագին՝ և միաւոր և սրտառուչ աղօթել և գիտել ’ի սրտի թէ զինչ աղօթեն։ և յընկղընէ պատարագին մինչև ’ի վախճանն ընթերցումն իբրև Ճաշեցին աւետարանին, անդադար և անմիջոց հեղուին արտասուս ի մէջ եկեղեցւոյն իբրև զեղ խունկն աղբեր։ Նոյ զկնի պատարագին, ոչ վաղվաղակի առնուին կերակուր, այլ յելանելն յեկեղեցւոյն լռելեայն ընթանային իւրաքանչիւրոք ’ի խուցն իւր, զի զընկալեալ շնորհսն և զլուսաւորութիւն մտացն՝ զոր ընկալան ’ի սրբոյ պատարագէն, մի դուցէ փարատեսցի ’ի մտաց նց. և անդ ևս ’ի խցին ժամ մի առանձին աղօթիւք անցուցանէին մինչև հանդարտէր բորբոքումն սրտից նց։ և յորժամ հարկանէին զկոչնակ սեղանոյն ապա ամէն ժողովէին ’ի սեղանատունն՝ և միահաղոյն նստէին ’ի սեղան՝ և ուտէին լռելեայն. և յորն միանգամ առնուին կերակուր ’ի բոլոր աւուրն։ և յուտելն զկերակուրն սահմանեցին զգիրս ընթեռնուլ. զի ոգւ քիմք զհամս Ճաշակեն այնպ̃ և միտք զբանս Այ. քննեսցեն Արդ՝ այս յայտնի կարգ և սահման նց. զոր

մերոյ

վերոյ ասացեալ վարդապետքն սահմանեցին երկոքին արամբքս , իսկ զծածուկ առաքինութեանցն՝ զորոնելին , նա միայն գիտէ , որ քննէ զսիրտս և զերիկամունս որդւոց մարդկան ։ Քանզի ամենքն զարդարեալք էին զանազանիւք առաքինութեամբք , ոմանք ոտնակացութեամբ , ոմանք պահոց պնդութեամբ ։ ոմանք արթնակացութեամբ ։ ոմանք արտասուահեղութեամբ , ոմանք լռակացութեամբ ։ ոմանք հիւանդաց սպասաւորութեամբ ։ ոմանք այլով կերպիւ մինչ զի ամենքն արժանացեալք էին շնորհաց սրբոյ Հոգւոյն ։ առ որ հաճոյ լինէր սրբանուէր աղօթք նոցա ։ Որպէս պատմեն վասն տեառն Կիւրակոսի զայս ինչ ։ էր ոմն այր եկեալ յաշխարհէ և լեալ միայնակեաց ։ և 'ի սակաւ ժամանակս կացեալ յանապատին ։ թէպէտ և խոստովանեալ էր և զհանդերձս աշխարհականն փոխեալ՝ այլ ոչ էր հաղորդեալ ։ զի այնպէս էր կարգ անապատին , որ 'ի կատարել տարւոյն ապա զնորեկս հաղորդէին ։ Եւ այս եկեալ այրս սակաւուն ոչ էր լցեալ զտարին ։ վասն որոյ և ոչ էր հաղորդեալ ։ պատահեցաւ սմա հիւանդանալ և անհաղորդ մեռանիլ ։ և սորին անհաղորդ մեռանելն՝ խղճմտանք մեծ եղև եղբարց անապատաւորացն ։ և ոմանք կամէցան յայնմ աւուր թաղել զնա ։ իսկ տէր Կիւրակոսն պատճառէր , և բարուրս յօդէր ։ և ոչ թողոյր 'ի թաղել , և ասէր թէ այրս այս եկն առ մեզ՝ և էկաց յայսքան աւուրս՝ և ոչինչ օգտեցաւ 'ի մէնջ ։ և արդ անհաղորդ եւս մեռաւ ։ Եւ արդ առանց պաշտաման և պատարագի թաղէք զսա , արդ ողորմեցարուք սմա ։ և պահեցէք այսօր եւ՝ և 'ի վաղին զպաշտօն և զպատարագ արարեալ վասն հոգւոյ սորա՝ և այնպէս թաղեցէք զդա ։ և միաբանքն հաւանեցան առ

նել այնպէս ։ և ոչ գտանէին զկիրս մնացուածուն
կիրակոսի ։ երբև եանց գիշերն . և 'ի վաղիւն
տեսին զմեռեալն յարուցեալ և նստեալ՝ որ
խօսէր և շարժիւր՝ և իւրովի ելեալ 'ի մահ
ճացն գնաց յեկեղեցին . և հաղորդեցաւ 'ի սբյ
Մարմնոյ և յԱ՝րենէ ՏՆ . և գնաց 'ի տեղի հան
գստեան իւրոյ . և 'ի գալ միւսում գիշերին
դարձեալ վախճանեցաւ . զոր տարեալ թաղե
ցին 'ի գիրս եղբարցն ։ զայս պատմէին զնեռնէ
կիրակոսէն ։ Նաև զայլ բազում պատմութիւս առ
ժանի լսելոյ պատմէն 'ի միակեցաց անապա
տին . վասն հոգւոյն Ի՛Ծ վերակացու էր նց ։
Նա էր հոգաբարձու 'ի մարմնաւորս կողմս
նէ անապատիս սարգիս եպիսկոպոսն . և գրոց ու
սուցիչ տէր կիրակոսն , և պօղոս վրդպտն , և
մովսէս վրդպտն , և ներսէս վրդպտն , և թու
մաս եպիսկոպոսն . որք բազում ժամանակս կացին
իմիասին սոքա ամենեքեան ։ և ապա տէր կիրա
կոսն և թումաս եպիսկոպոսն գնացին յերկիրն քշտա
ղայ մերձ 'ի գիւղն հօչանց , շինեցին զանապատ՝
և անդ բնակեցան ։ Իսկ սարգիս եպիսկոպոսն ե
կաց մնաց 'ի նոյն մեծի անապատին . և համբե
րութբ տանէր ամենից նեղութեց եկեղց իւրց,
մինչև էհաս 'ի խորին ծերութի առաքինականիւք
վարուք . զընթացսն կատարեալ՝ և զհաւատոն
պահեալ փոխեցաւ առ 'ի յերկիրն կենդանեաց
'ի նոյն մեծի անապատին . որև անդէն կայ
թաղեալ պատուական նշխար մարմնոյ նորա ։
որում վախճանն եղև 'ի թուականութեն մե
րում հազար և վաթսուն և ընին ։ Իսկ տէր կի
րակոսն, որ գնաց 'ի հօչանց կացեալ անդ կրօ
նաւորականաւ ժուժկալութ . 'ի նմին տեղւոջ
մերձ 'ի գիւղն հօչանց՝ յիւրում անապատին
եղև վախճան սր 'ի թուականութեն մերում՝

հազար և եօթանասունն. և գնաց առ սիրեցեալն իւր Քն. որում փափագեալ հանապազ կրէր ՚ի յոգւոյն իւր: և ՚ի նմին տեղւոջ կայ թաղեալ պատուական նշխար մարմնոյ նր: ՚ի փառս Քի Այ օրհնելոյն յաւիտեանս Ամէն:

---

Այլևս պատմութիւն վասն այն մեծի անապատիս:

## ԻԲ:

ԶԿՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆՆ անապատիս. երբ անցին խլր ամք քառասուն և հինգ կամ աւելի. արևմտեան կողմն անապատին, գետինն պատառեցաւ ընդ կողմն հիւսիսի, և եհաս մինչև ՚ի կողմն արևելից մինչ ՚ի հանդիպոջ լեռնավէմն: Իսկ յարևմտից կողմանէ անցեալ զգերեզմանօքն. և եհաս մինչ ՚ի լեառն արևմտեայ կողմանն: և այնքան պատառեցաւ լայն և ընդարձակ և խորագոյն. զի թէ եզն և ձի՛ և այլ անասուն դէպ լինէր անկանիլ՚ի խորափոս պատառուածին՝ ոչ կարէր ելանել: այլև բաց ի սմանէ այլևս պատառուածք այսր և անդր յոլովք լինէին օրաւուր: Նաև յայսմանէ պատճառէ երկիւղալից կասկած անկաւ՚ի սիրտս բնակչաց անապատիս. թէ գետինն յորոյ վերայ շինեալ կայ անապատս սահելոց է ՚ի տեղւոջէ իւրմէ: Նաև ամքն գաւառականքն, որք անդ պատահէին. ՚ի տեսանելն զպատառուածն զայն, զնոյն վկայէին:

Երբև եհաս թուականն մեր ՚ի հազար և հարիւր և եօթն, և յապրիլ ամսին. եղև անձրևային գարունն այն՝ և այն պատառուածքն սկսան օրաւուր լայնանալ. և հաւաստեաւ հաստատեցաւ ՚ի սիրտս ամենեցուն թէ այսօր կամ վա

ղիւն

ղին սահեալ հոսելոց է ստորակայ գետին ա-
նապատին ։ Իսկ եղև յաւուր աշխարհամատ
րան կիրակէին, որ էր աւուրն ամսոյ քսանևհինգ-
ընդ ժամանել 'ի ժամ երեկոյին մերձ 'ի մուտս
արևուն ․ ահաւ պատառել գետինն 'ի հա
րաւային կողմանէ անապատին 'ի բարձունէ 'ի
լերանէ անտի ․ իբրև զմրրկեալ ամպ դիմեալ
գայր 'ի բարձանց լերին՝ ահագին դղրդմամբ
և թնդմամբ՝ և որոտմամբ՝ և ձայթմամբ իբ
րև զորոտումն կայծակնացայտից ամպոց ։ և այն
քան ահագին էր որոտումն և թնդումն․ մինչ զի
ամէն բնակիչք շինահայր գեղջն ․ և հալիձոր
գեղջն լուեալ զձայնն ․ և ելեալք յանդիմա
նակացէ տեղւոջէ գեղջն իւրեանց տեսանէ
ին․ զարհաւիրն զայն ։ զի յաւիտենից հաստակա
ւոյ լեռնակամք վէմք պատառեալք յինքեանց
'ի միմեանց իբրաց տարհէին ․ և յակղեանց կա
ուցեալք վէմք՝ որք հիմունքն էին գետնոյն ․
եռացեալք 'ի վերգային յերեսս գետնոյ ․ և
յոլովից ժամանակաց ծառք և տունկք ամէն․
ելթէ ընկուզի, և թէ կաղնի, և ընդ նոսին մե
ծամեծք վէմք՝ զառիստորև սուզեալ 'ի ներքս
'ի յանդունդս կլեալ աներևութանային ։
Իսկ մեծամեծք վէմք հատեալք 'ի լեռնէն և
զկնի միմեանց հոլովեալ գային 'ի վայր․ որոց
'ի բախելն ընդ միմեանս փշրեալ և խորտա
կեալ իբրաց ցնդէին ։ և ուժգնութի սոցին բախ
մանցն թնդումն սաստիկ առնէր ամենից վայ
րացն․ և ձայն գոռալոյ և որոտման սոցա խլա
ցուցանէր զլսելիս՝ և սրտամեռ առնէր զմն ։

Իսկ որովհետև երեկոյացեալ էր օրն և սա
կաւ մնացեալ ժամ աւուրն․ և այն ևս էանց
և ժամանեաց գիշերն խիտ․ ահաւ անձրև թո
րիլ և լինիլ սաստիկ մթնագիշեր այնքան զի և

առ ընթերակայ կացեալքն զմխեանս ոչ տեսանէին։ Եւ ամքն բնակիչք անապատին ելին յանապատէն. և գնացեալ ժողովեցան յարևելեան կողմն անապատին 'ի քարեայ լեառն։ և անդ զետեղեալ վառեցին զլապտերս և զմոծամած մոմս. կային ահաբեկ պակուցմամբ, և մնային կատարածին. և ըղձանային լուսոյ առաւօտուն։

Բազումք համարեցան թէ անապատն միահաղոյն քանդեցաւ ընդ այլ սահեալ գետնոյն, բայց արարչական խնամ գթածին Տ.Տ հայեցեալ 'ի մշտապաղատ մաղթանս ողորմելեաց եղբարցն ոչ էթող իսպառ աւերիլ՝ այլ սակաւ։ քանզի արևմտեան կողմն անապատին, պարիսպն և հիւրատունն. և ախոռք անասնոցն, և համբարանոցքն, և մասն ինչ 'ի սենեկէ եղբարցն. և արևմտեան կողմն մեծի եկեղեցւոյն յետուստ կուսէ արևմտեան սեանցն, սոքա ամենեքեան աւերեցան։

Եւ յոյժ ահագին և ահընկեց էր գործեցեալ իրն, քանզի ոչ լեռնացեալ կոհակք ալեաց ծովու՝ որք զհետ միմեանց սահեալ ընթանան, սոյնպէս և հաստահիմն վէմք քարեհող վայրացն այնմիկ եղեն։ Զի 'ի սրտէ լերինն յորոյ վր Թանահատի վանքն կայ շինեալ. 'ի խորոց անդնդոց բնականք վէմք լերինն սկսան պատառիլ. և հողով և խճով և մեծամեծիւք վիմօք, իբրև զտուտս եկեալ զառ 'ի վայր հոսէր։ և 'ի վերուստ եկեալ հոսանն իւրոյ բռնութե՟ և ուժգնիւ հոսմամբն զիւր առաջի վայրսն 'ի բնականի տեղւոյն 'ի բացուստուցեալ ընդ իւր խիտասին զկնի միմեանց ընթանային իբրև յորձանս ծովուց ելևէջս առնելով։ և այսպէս սահելով գնացին և հասին 'ի գետն մեծ որոտան,

որ ի մէջ ձորոյն անցանէ, և արգելլին զգնացս ջուրցն երբեմն ժամս ութն, և ջուր գետոյն, որ 'ի վերուստ իջանէր եկեալ ծովացաւ և լցաւ տեղին և ապա 'ի կողմանէ ինչ եգիտ ինքեան զտեղիս գնալոյ՝ և քարինքն և հողքն, որք առ գելան յեզր գետոյն եղեն բլուր մեծ։

Իսկ գերեզմանատուն անապատաւորացն էր յարևմտեան կողմանէ անապատին, և է̅ հոսել վայրացն այս գերեզմանատունս ևս հատարակ միահաղոյն ամ̃ 'ի միասին, խորագոյն և անդն դային յատակն իւրով ոստեալ 'ի տեղւո ջէ իւրմէ սահեալ գնաց բաղմաւ հեռաւորու Թէ̅ 'ի վայրի ուրումն զկայ առեալ կայացաւ։ Նաև 'ի սոյն տեղւոջ էին Թաղեալ աէ̅ վար դ̃պտն պօղոս, զորոյ զպատմուԹին արարեալ եմք յոյլուել Ճառ ի և սարգիս պրոնոտէրն որոյ սակս յանցեալ Ճառ իդ պատմեցաք։ և արխատա կէս վրդ̃պտն, որ զկնի սարգիս պարոնտիրին եղև առաջնորդ անապատին։ և Ճգնաւոր և ըն տիր և առաքինագործ աբեղայն տէր բար սեղ։ սոքա չորեքեանս առընԹեր միմեանց Թա ղեալք կային, և իւ̃ր իւրեանց շինեալ կայր մա տուռն։ և 'ի ժամ հոսելոյ տեղւոյ գերեզմա նատանն խնամն Այ̃ իբր զգործ ինչ սքանչե լեաց արար իւ̃ր սրբոցս, զի ամենևին գերեզ մանք սոցա ոչ խախտեցան, որ և քարինք տապա նացն ոչ Թիւրեցան, այլ զդիրս իւրեանց դէպ ուղիղ ընդ արևելս ընկալեալ կայացան, որպ̃ և նախկին Թաղեալ քէին։ բայց մատուռն որ իւ̃ր սոցա կայր փլուզեալ ցնդեցաւ։

Սա 'ի լինելն այսց ամենից գործոցս սոսկալի խնամօքն Այ̃ ամենակալի, ոչումեք եղև վնաս մարդոյ կամ անասնոյ, այլ միայն եղբայր ոմն մնաց ի մէջ իւրոյ խղին և անդէն մեռաւ 'ի ներ

քոյ հողին ։ զի է̃ սկսանիլ հոսմանն 'ի ժամ երեկոյին, ոմանք յեղբարցն գնացեալ ազդեցին նմա ելանել անդի՛ն զի մի՛ մնասցէ 'ի ներքոյ հողոյ, և նա 'ի վաղուց ժամանակաց ցանկանալով ապաւէր մահու՝ ոչ եկն արտաքս, այլ մնաց անդէն յուսով ակնկալեալ Տ͞ն՝ զի թերևս վ͞ս անպարտ մահուան իւրոյ ընկալցի զայցելութ͞ն հոգւոյ իւրոյ, 'ի բազմագութ Տ͞է Ա͞յ։

Իսկ միւս այլք բնակիչք անապատին ամէն ժողովեալք էին 'ի լեառն, որ կայ յարևելից կողմն անապատին, յորդաբղխիւք արտասուօք և մեծօք հառաչանօք կոծէին զանձինս, և աղաչէին զԱ͞ծ զի թերևս զերծցին 'ի սատակմանէ, և փրկեսցի շինուած անապատին 'ի փլմանէ, քանզի յուսահատեալք էին վ͞ս ահագին արհաւրացն եղելոյ, և մինչև ցլուսանալ 'ի լոյս առաւօտու երկու շաբաթին, իբր զպաղատաւոր ոք յերկուանս կային։ Իսկ այն որոյ գթութ͞ին բնութ͞է է՝ աղբիւրն ողորմութեան Տ͞ր Ա͞ծ՝ ոչ միայն զն͞ս փրկեաց 'ի սատակմանէն. այլև զանապատն ևս ամբողջ պահեաց և ոչ եթող աւերիլ. զի ամենազօր աջոյն իւրով անխախտ պահեաց զանապատն բաց յառաջ ասացեալ աւերելոյն։

Նաև ոմն յեղբարց անապատին պատմեաց այսպիսի տեսիլ երազոյ. ասաց թէ տեսանէի զոմն չքնաղատեսս մեծաշուք պայծառուլ զգեստու հեծեալ յսպիտակ երիվար՝ և կայր մ͞ջ տանեաց եկեղեցւոյն, որում առաջի ժողովեալ եղբարցն պատմէին զանցս ահագին վշտացն։ Իսկ երևեալ փառաւոր այրն զնոյն երկրորդեալ խօսէր ընդ եղբարցն։ Որև 'ի կարգս խօսից իւրոց ասաց այրն փառաւոր. և ես վ͞ս այդց իրաց կամ և հոգամ, որոյ սակս սա-

կաւ

կաւ մի ցաւեցաւ ծունկս իմ, զի զոտս իմ եդեալ դէմ երեսաց քարանձաւին զդէմկալեալ ունէի լերինդ, զի մի փլուզեալ ծածկեացէ զանապատս եղբայրանոց ։ Եւ դուք մի ծուլանայք 'ի գործոյ առաքինութեան, եւ համապազ գոհութեամբ փառաւորեսջիք զՏէր Յ՛Ք՛ որ փրկեաց զձեզ․ եւ առ յապայն եւս փրկեսցէ ողորմութեամբ իւրով․ որում փառք յաւիտեանս ամէն ։

---

Պատմութիւն վարդապետութեան եւ վարուց սրբոյ վարդապետին պօղոսի ։

## ԻԴ ։

## ՄՎԱՐԴԱՊԵՏՆ

պօղոս էր յերկրէն մոկաց 'ի գեղջէն, զոր անուանեն բար ։ Եկեալ 'ի սուրբ եւ 'ի մեծահռչակ ուխտն վարագայ յարեցաւ առ կարապետ վարդապետն, զորոյ զմակ անուանն ձագ վարդապետ ասէին, որում աշակերտեալ ուսաւ զամենայն գիրս հնոց եւ նորոց կտակարանաց, եւ իբրեւ կատարեալ եղեւ գիտութեամբ եւ հասակաւ՝ ետ նմա ձագ վարդապետն զիշխանութիւն վարդապետութեան․ եւ նա գնացեալ ի մէջ քրիստոնէից քարոզէր զպատուիրանս ԱՅ ։ Նա քարոզելով եկն 'ի թաւրէզ քաղաք, եւ անդ 'ի կիրարկեալ զգործ վարդապետութեան իւրոյ, եւ յամ աւուր քարոզիւ եւ դասիւ եւ յորդառատիւ վարդապետութեամբ լուսաւորէր զժողովուրդս քրիստոնէից՝ որք եւ պատահէին անդ ։ Քզի յամենից կողմանց եկեալ վաճառականքն՝ որք գային 'ի թաւրէզ․ իբրեւ պատահէին լոյ քարոզութեան սրբոյ վարդապետին մխիթարեալք զուարճանային հոգւով․ եւ զօրհնութիւն մատուցանէին ԱՅ տուողին այնպիսեաց շնորհաց ։

Նա ինքն պօղոս վարդապետն․ էր վարուքն

նր և առաքինի . հանապազօր սաղմոսերգ . և արտասուօք և մտաւոր աղօթարար . որ զգեջեր շաբաթ աւուրն յորում լուսանայր միաշաբաթ օրն . յերեկոյէ սկսեալ յոտին կանգնէր . և մինչ 'ի լուսանալն հսկումն առնէր . և զամ շաբաթու գիշեր այսպէս առնէր . զսկսեցուքն, զկանոն գլուխն, զալէլուն խաղով ասէր համ դերձ ութ կանոնաւ սաղմոսին . և յառաւօտուն զփրկական խորհուրդ պատարագին մատուցանէր . այլև հրաժարեալ էր 'ի գինւոյ և 'ի մսոյ ամենևին . 'ի շաբաթօր և կիրակի միայն ճաշակէր 'ի նաւակատեաց կերակրոց . և զայլ ամենայն աւուրս տարւոյն պահօք կայր . այլև ոչինչ առնոյր զինչս և զստացուածս յումեքէ՝ զի անարծաթ քարոզէր . և թէ տային նա ժողովուրդքն ինչս . զայն նա 'ի պէտս գերեաց և կարօտելոց և 'ի շինումն եկեղեցեաց ծախէր . այլև ուրև գնայր 'ի ճանապարհ թէ հեռաւոր և թէ մօտաւոր՝ հետի ոտս գնայր . քանզի զգիրս քարոզին և զայլ գրեանս ինքն և աշակերտքն իւր բառնային շալակով և գնային ։ Նա 'ի թաւրէզ քաղաքի թէպէտ գոյր ժամատուն . բայց տեղի պատարագի ոչ գոյր 'ի նմա . իսկ սա 'ի նմին ժամատան շինեաց զգեղեցիկ խորան պատարագի ։

Նա ժողովուրդքն յոյժ սիրէին զնա վասն ճշմարտից վարուց նր . և վաճառականքն, որք էին յերկրէն գողթանց աղաչէին զնա գնալ յերկիրն իւրեանց 'ի քարոզութիւն . յորոց միեր ցղնեցի խօջայ հայրապետն և այլք ևս ընդ նմա . և զայս բան 'ի բազում աւուրս թախանձէին ։ Իսկ վրդպտն հաճեալ 'ի բանսն նց գնաց 'ի գաւառն գողթանց և եկեալ 'ի գիւղն ագուլիս ։

Կայր անդէն եկեղեցի մի առաքելաշէն զոր

մէ

մէ ասէին թէ սորա առաքելոյն թադէոսի շինեալն է. որեւ յետ բազմաց ամաց զկնի բանալոյ դրանն. մեք եւ տեսաք զեկեղեցին զայն։ Եւ էր դուռն եկեղեցւոյն այնմիկ 'ի բազմաց ժամանակաց ինքնին փակեալ առանց նգի եւ փակաղակի. եւ թէպէտ բազումանգամ աշխատեալ էին եւ ջանացեալ զի բացցեն՝ եւ ոչ էր լեալ հնար բանալոյ. վ̃ն որոյ վհատեալք էին եւ խռաց կացեալք։ եւ փակումն դրանս այսմիկ ամենեւ ոմլխութ̃ պատմեալ եղեւ վարդապետին։

Եւ յորժամ եհաս գիշեր շաբաթուն 'ի լոյս միաշաբաթին. եկեալ վարդապետին ըստ համապայրորդ սովորութե իւրոյ եկաց առաջի փակեալ դրան եկեղեցւոյն՝ զի հսկումն արարեալ զցայգապաշտօնն կատարեսցէ։ եւ կացեալ առաջի փակեալ դրանն սկսաւ 'ի խորս սրտի իւրոյ ուժգին գոչմամբ եւ յորդահոս արտասուօք աղաչել՝ եւ խնդրել 'ի հեշտալրոյ տեառնէ զբացումն դրան եկեղեցւոյն. զի բեկելով սրտիւ հեղոյր զանձն առաջի Տ̃ն յորդահոսիւք արտասուօք. զոր բղխէր յաչացն իբրեւ զաղբիւրս։ Եւ նախ քան զսկսանիլ հսկմանն արար զդռնաբացէք, եւ իբրեւ բախեաց զդուռն երիցս անգամ եւ ասաց. բաց մեզ Տր̃, բաց մեզ Տր̃, բաց մեզ Տր̃ զդուռն ողորմութե քոյ՝ որ ողբալով կարդամք առ քեզ. եւ շնորհօքն Տ՟ առանց ուրուք մերձենալոյ առ ժամայն ինքնին բացաւ դուռն։ Իսկ որք մերձն կային 'ի քահանայից գեղջն եւ յաշխարհականաց հիացեալ զարմացեալ ապուշկային. եւ ապա եկեալ 'ի միտս վաղվաղակի ընթացեալ ազդ առնէին ամի ժողովրդեանն։ որոց 'ի լսելն, թողեալ զտունս եւ զընտանիս 'ի խոր գիշերին փութանակի անդր ժամանէին մե

ծամեծք և փոքունք. և 'ի տեսանելն զօրհնու-
թիւն 'ի բարձունս վերառաքելին Ա. Յ: Աու իբրև
բացաւ դուռն եկեղեցւոյն. մտեալ 'ի ներքս ա-
մենիւ ժողովրդեամբն՝ ուրախութբ և ցըն-
ծութբ անդէն 'ի նմին եկեղեցւոջ սկիզըն ա-
րարին գիշերային կարգին. և յառաւօտուն
մատուցին զփրկական խորհուրդ պատարա-
գին. և ամքն 'ի մի բերան օրհնէին զհրաշա-
գործն Ա. Ծ՝ որ արար զնս արժանի այնց պար-
գևաց. և հնչեաց հռչակ լրոյս այսմիկ ընդ-
ամնն կողմանս գաւառին իմէջ քրիստոնէից՝ և
այլազգաց. և որք լսէին հիանալով օրհնէին զԱԾ.

Արդ 'ի բանալ փակեալ դրանս այսմիկ, մեծ
իմն խորհուրդ յայտնեալ ցուցաւ. քանզի ըն
նմին բացաւ և դուռն քարոզութե բանին կե-
նաց յաշխարհս արևելեան. որք ցայն վայր 'ի
խոր խաւարի անգիտութե նստեալ կային. ո՛չ
թէ 'ի ժամանակս կռապաշտութե, եկեղե-
ցականք և աշխարհականք: և ո՛չ Յին Քն
արեգակն արդարութե ծագեցաւ յաշխարհս.
և լուսաւորեաց զամենեսեան հաւատով ԱԾ
գիտութե. այսպէս և սբ վրդպտն պօղոս ըզ-
կողմնս արևելեան. վնզի եբարձ 'ի միջոյ զամ
աւերող անկարգութիւն յեկեղեցականաց և
յաշխարհականաց. և կարգադրեալ շքե-
ղացոյց զամն ուղղիւ քարոզութբ: վնզի յետ
բանալոյ դրան եկեղեցւոյն՝ բացաւ դուռն
հաւատոյ աշխարհիս արևելեան՝ քարոզութբ
և ամբծիւ և անկեղծիւ վարդպտութբ սորա.
զի առաքելաբար շրջէր յամն տեղիս. քարոզէր
զբանն կենաց. կարգէր զքահանայս, շինէր զե-
կեղեցիս, և հաստատէր զբարի կարգս յեկեղե-
ցիս և 'ի գիւղս. ժողովէր զմանկունս յուսումն
սրբոց գրոց. և 'ի տեղիս տեղիս հաստատէր

զդպրա

զդպրատունս՝ և յիւրոց աշակերտաց կացուցանէր զդպրապետս. և զոմանս 'ի մանկանց զպատշաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցանէր. որք ամ՟քն հասին աստիճանի՝ աբեղայ և երէց՝ բաւական լինքեանց և ժողովրդեան։ Եւ յամ՟ն տեղիս ուրեք շրջեցաւ նա շինեաց զեկեղեցի. քանզի յառաջ քան զնա յամ՟ն տեղիս ոչ գոյր եկեղեցի. և թէ ուրեք գոյր ևս, և այնևս անշուք, և անճահ. եկեղեցի անուն, խրթին և նսեմ, խարխալեալ և բլբլկեալ. լցեալ հողով և մոխրով. որով ձեն և դիրն թիւր և թեք։ Իսկ սա ուրև հասանէր, հ՟մար կէր զեկեղեցիս պատշաճաւորև ձևով՝ դէպ ուղիղ ընդ արևելս ունելով զդիրս՝ գեղեցկիւ շինուածով խորանքն և լուսամուտքն և կաթուղիկեն և այլքն ամ՟քն։

Եւ ըստ այսմ սարասի. քարոզելով և զեկեղեցի շինելով եհաս մինչ 'ի գիւղաքաղաքն աստապատ. և նախ զնոցին վանքն շինեաց՝ որ յանուն սրբոյն ստեփաննոսի նախավկային է ամրով պարսպիւ, և երկաթապատիւք դրամբք. և յետ աւարտմանց վանիցն սկսաւ զդեղջն եկեղեցին շինել. ըստ թախանձանաց ժողովրդեան գեղջն. և վասնզի եկեղեցին փոքր էր և ոչ էր բաւական տանիլ զժողովուրդսն՝ զի բազում էր ժողովուրդն։ ընդ որոյ կամեցան 'ի խցիցն որք շուրջ զեկեղեցաւն էին, քակել և խառնել յեկեղեցին՝ զի մեծասցի։ Իսկ աբեղայքն. որք բնակէին 'ի գեղջն. և էին տեարք խցիցն խռժոռեալք ըմբոստացան, և ոչ թողուին քակել զխուցսն, բայց ժողովրդոցն ոչինչ զփոյթ արարեալ զամբոխմանէ նոցա. այլ դիմեալք իվ՟ր. քակեցին զխուցսն։ առ որ դժուարեալ աբեղայիցն՝ գնացեալ 'ի վանքն առին

զեպկ

զեպիսկոպոսունսն և եկին 'ի գիւղն. և արարին աղմուկ մեծ. և զբանս անպատշաճս ասէին վարդապետին: Իսկ որբոյն բերեալ յինքեանս զնմանութիւն ճշմարտի հեզոյն Քի. խորհելով 'ի մտի թէ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքէ յայսմանէ՝ փախիջիք 'ի միւսն. վասն որոյ զանխուլ յամէ ելեալ 'ի գիշերի լռելեայն հեռացաւ գնալ յայլ գիւղ: Իսկ ժողովուրդքն իբրև զգացին զգնալն վարդապետին. յայնժամ դիմեալ խիստ աբեղայիցն հարկանելով քարիւ և փայտիւ արտաքս վարեցին 'ի գեղջէն. և վաղվաղակի ընթացեալ զկնի վարդապետին բազմօք աղաչանօք դարձուցեալ զնա ածին 'ի գիւղ անդր. և սկսան շինել զեկեղեցին լայն և ընդարձակ՝ և բարձու շինուածով. և կաթուղիկէ խիստ յօրինեալ: Նոյնպէս և զայլ յարկս տանցն և պարսպին: Իսկ աբեղայքն և եպիսկոպոսունքն իբրև տեսին թէ ինքեանք ոչ կարացին ինչ առնանել վարդապետին. գնացեալ 'ի դարպասն զամենն եպիսկոպոսնս նախավկայի վանացն միաբանեցուցեալ Է ինքեանս առեալ եկին խիստ վրդովմամբ. ըստ օրինակի թշուառացն ամաղեկայ որք միաբանեալ եկին իվերայ զօրավարին Ն. Յեսուեայ. բայց ոչ նոքա անդ պարտեալ գտան. սոյնպ և սոքա աստ. վասնզի թէպէտ բազումանգամ հակառակեցան վարդապետին. այլ նա ամենևին ոչ լքաւ 'ի բարւոք յառաջադիմութենէն:

Իսկ միաբանեալ աբեղայքն առաւելև դրդեալք 'ի նախանձուէ գնացին առ մելքիսէթ կաթողիկոսն՝ որ զիշխանութիւն կաթողիկոսութեան ղաբալայիւ առեալ էր 'ի պարսից թագաւորէն. և այնքան դրդեցին զնա 'ի բարկութիւն մինչ զի բազումանգամ առաքեաց առ վարդապետն բանս սպառնականս և յանդիմանութեան. թէ ելցես յերկրէս

յերկրէս մերմէ. և գնասցես յերկիր քո ուստի եկեալ ես՝ զի ոչ է պիտոյ մեզ խաբեբայ և նորաՀանուկ քարոզութե քո. և ոչ կեղծաւոր վարքն քո. ապաթէ ոչ՝ առակ նշաւակի, և այպն կատականաց լինիցիս 'ի ձեռս իմ: Իսկ վրդպտն ընաւ ոչինչ առնէր փոյթ զայնմանէ՝ վասն զի յոյս նր Հաստատուն էր 'ի Տր. այլ Հանապազ շրջէր, և քարոզէր, և շինէր զեկեղեցիս, և յարդարէր զամենեսեան ուղղափառ գոք և սաՀմանադրութեք:

Իսկ յետ ամաց ինչ անցելոց՝ կթղկոսն մեր քխէթ և վրդպտն պօղոս պատաՀեցան միմեանց 'ի Նախչուան քաղաքի. և կթղկսն զթոյնս և զմաղձս դառնութե, զոր 'ի բազում ժամակաց մթերեալ ունէր 'ի սրտի. յայնժամ ժայթքեաց իվերայ վրդպտին: և յետ բազմաց յանդիմանութեց և կշտամբանաց և անպատեՀից բանից՝ զորս խօսեցաւ կթղկոսն յերեսս վրդպտին. և զայս ևս ասաց թէ զամն եկեղեցիսդ, զոր դու շինեցեր իվերայ քոյ գլխոյ քակեցից: և Հրամայեաց նմա ելանել յայսմանէ աշխարՀէ. և գնալ 'ի տեղի իւր. և թէ այլևս յամի՝ այնուՀետև մատնի 'ի ձեռս աշխարՀակալաց իշխանաց: և ոչզք գոյր օգնական 'ի կողմանէ վրդպտին. ոչ եկեղեցական և ոչ աշխարՀական: վասն զի ամենեքեան երկնչէին 'ի կթղկոսէն. զի թքրականաւ իշխանութե վարէր զկթղկոսութին: Հաղագս որոյ անճար լեալ վրդպտին՝ ելեալ 'ի Նախչուանայ գնաց 'ի գիւղն շամբ՝ զի գնասցէ 'ի տեղի իւր. և ըստ Հանապազորդեան սովորութե իւրոյ որ խմէջ գիշերի աղօթէր վարդապտն. և յայնմ գիշերին յետ աղօթիցն խթեաց 'ի կողս աշակերտին՝ և զարթոյց զնա. զարթեան և այլք ոմանք ևս. սկսաւ Հարցանել ցնոսա

թէ

թէ զինչ բարւոք թուի ձեզ արիանալ ընդ-
դէմ փորձութեանս․ դիմակայել խռովութեանս
այսմիկ և քարոզել զբանն կենաց․ թէ տեղի
տալ և հեռանալ ՚ի չփոթէ սոցա։ Իսկ աշակեր
տացն տուեալ զպատասխանի․ դու ինքնին տե
սանես զխաւար անգիտութեան․ թէ որպէս
սփռեալ է ՚ի վ̃ր ժողովրդեանս․ և զայնևս թէ
ո՞չ եբաց Տ̃ր զդուռն քարոզութեան․ քանզի
զորինչ և քարոզես վաղվաղակի արդիւնանայ։
արդ մի գուցէ վհատիցիս զի Տ̃ր Յ̃ս ձեռնտու
է քեզ․ պարտ է քեզ արիանալ և համբերել
փորձութեան վ̃ն օգտի ժողովրդեան՝ և քարո
զելոյ զբանն կենաց։

Իբրև ընկալաւ զքաջալերս զայս ՚ի նոցանէ
ս̃բ վր̃դպտն․ յայնժամ ասէ ցաշակերտսն իւր․
արդ որդեակք իմ, որովհետև այդպէս աստ
ցիք․ պարտ է մեզ գնալ առ թգ̃ւորն և առնուլ՝
՚ի նմանէ զհրաման վ̃ն շինութեան եկեղեցեաց։ և
ես ակնունիմ ՚ի Տ̃է զի տացէ թգ̃րն զխնդիրս
մեր։ Արդ եթէ առնումք ՚ի նմանէ զհրա
մանս զայս քաջութեան անուն է մեզ․ և թէ
սպանցեն զմեզ վարձս բարեաց ընդունելոց
եմք ՚ի Ք̃է ը̃ վաստակաւորաց ծառայից նր̃։
և աշակերտացն ես վկայեալ թէ յոյժ բարի է
այդ խորհուրդ։

Եւ նոյնժամայն ՚ի նմին գիշերի յարու
ցեալք ելին ՚ի շամբայ՝ անցին զգետն երասխ․
և հետևեցան ՚ի գնալ առ թգ̃ւորն, որ էր ինքն
առաջին շահաբասն․ վ̃ն առնլոյ ՚ի նմանէ զհրա
ման շինելոյ զեկեղեցի։ և յետ աւարտման կա
նոնի սաղմոսին, զոր ասէին․ զճանապարհայն
մինչ երթային․ պատահեցաւ լինիլ քարոզն
այն որ ասէ․ վ̃ն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճա
նապարհս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։ և

վ̃ն խոր

վն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք. զոհէր: յայնժամ ասէ վարդպտն ցայնոսիկ որք ընդ նմա էին. տեսէք որ դեակք իմ, զի ուղիղ է ճանապարհս մեր ըստ վկայութն սաղմոսին. որով առաւել հաստատեցան, և ուրախացան. և մեծաւ յուսով՝ երթային:

Եւ եղև իբրև հասին 'ի գաւառն, զոր՛ ա֊ բազբար ասեն՝ և 'ի տարաժամել աւուրն միոյն 'ի գիւղ մի այլազգեաց առ իօթել զգիշերն զայն. և տեսին, զի այր ոմն մահմետականաւ հաւատով եկն ընդ առաջ նց աղաչէր և ասէր. խնդրեմ 'ի ձէնջ վն ԱՅ մի գարշիլ յայլազգութէ իմմէ այլ խոնարհիլ յաղաչանս իմ, և գալ 'ի տուն իմ. զի հիւրընկալ եղէց ձեզ: քանզի ուխտեալեմ ԱՅ. զի յայսմ աւուր առանց հիւրի ոչ ճաշակեցից ինչ. և մինչև ցարդ սպաս կալեալ կամ իմէջ շինիս. և նայ իմ վն հիւրի. և որդ զձեզ առաքեաց ԱԾ. վն որոյ յօժարութբ խնդրեմ զգալն ձեր 'ի տուն իմ: Իսկ երանելւոյ վարդպտին տուեալ ցնծութբ զպատասխանի առնն, և ասէ. այդպէ եղիցի որպ ասացերդ. երթիցուք 'ի տունքո. զգիշերն զայն օթեցան 'ի տուն առնն այնորիկ. և այրն յոյժ բարւոք սպասաւորեաց նց ամենիւք պիտոյիւք և հանգուցանելով: և յառաւօտուն մինչ կամեցան 'ի գնալ՝ եկեալ այլազգին աղաչէր. խնդրէր և ասէր՝ թէ ոչ գոյ ինձ զաւակ և յիշատակ յերկրի. խնդրեմ 'ի ձէնջ առնել զաղօթս վն իմ: որպ զի լիցի ինձ զաւակ քանզի կին իմ ամուլ է: Իսկ սրբոյ վարդպտին համբարձեալ զմշտատարած ձեռսն 'ի յերկինս և անդառանալեօք աղօթիւքն խնդրեաց յԱՅ տալ նմա զզաւակ. իսկ հեշտալուր Տրն. զոր

խոստա

խոստացաւ ծառայից իւրոց թէ զո՞մ զորինչ և խնդիցէք հաւատովք, առնուցուք. այո Թիւք որբոց վարդ՟պտին պարգևեաց առնն այն մինչ զաւակ. որ՟պ և յայտնեաց նոյն այր:

Յետ այսորիկ ել անտի վարդ՟պտն և գնաց յերկիրն աղուանից 'ի ղարաբաղ. 'ի տեղին որ անուանի քօթուկլու. քանզի անդէր բանակեալ թ՟գըն շահաբաս ամենիւ սպայիւն իւրով:

Իսկ յորժամ յանդիման եղև վարդ՟պտն թ՟գաւորին. երևեցոյց Տ՟ր շնորհաւոր զծառայն իւր առաջի աչարկու և այլազգի թ՟գաւորին: և 'ի հարցանելն արքայի ցվարդ՟պտն. թէ զինչ խնդիր կայ քո 'ի թ՟գրութէս մերմէ: Պատասխանեալ ասաց վարդ՟պտն: զի խաղաղարարաւ թ՟գրութ՟ե քով արքայ ոչինչ կայ պակաս յամենից բարեաց ազգիս հայոց՝ բայց միայն աղօթից. զի ոչ գոյ տեղի աղօթից՝ զի աղօթեսցեն առ Ա՟ծ վ՟ն աշխարհի՝ և վ՟ն կենաց թ՟գըին: զայս խնդրեմ յարքայէ զի տացէ ինձ զհրաման, և զհրովարտակ շինելոյ զեկեղեցի. և այսմ եթէ իցէ վարձք ինչ եղիցի թ՟գըին. և թէ իցէ մեղանք ինչ եղիցի ինձ: Իսկ 'ի լսելն զայս արքայի զուարճացաւ յանձն իւր. և բարձու բարբառով ասաց նախարարաց իւրոց. իշխանք և դատաւորք զինչ արժան և ուղիղ թուի ձեզ՝ զհրաման տալ զեկեղեցի շինելոյ՝ և թէ արգելուլ: դարձեալ ինքն փութանակի արար պատասխանի իւրոց բանիցն և ասաց. ոչ է պարտ արգելուլ. այլ արժան է տալ զհրաման շինելոյ՝ քանզի և այնք ևս Ա՟յ տունք են: Իսկ առժամայն հրամայեաց գրել զնոմոս՝ կնքել և տալ նմա. և իբրև կատարեցին և ետուն ցվարդ՟պտն զթուղթն. և նա տարեալ իբրացեալ ետ ընթեռնուլ. և ետես զի ոչ էր այնպէս օգտա

կար, որ բաւական լինէր կարեաց ներկայի ամա նակին. վասն որոյ 'ի պատճառս հարկեալ՝ կրկին անգամ կացեալ յանդիման արքայի. և յուշ առնէ նմա զխնդրելին իւր զՀռովմարտակն. և իբրև վերահասու եղև թղ̃թն ամ̃փ դիտաւորու թե մնաց վարդ̃պտին. և յայնմ ժամու թղ̃թն արտաքս ելեալ 'ի խորանէն երթևեկս առնե լով ձեռմբ. և նոյնժամայն կոչեաց զմիոմն 'ի դպրացն նորայ 'ի գետնի առաջի իւր. և արքայ կացեալ յոտին ինքն ասէր, և գրագիրն գրէր. մինչև կատարեաց զամ̃ն բանս գրոյն. և ապա հրամայեաց նոյն առնն գրել չորեցուցանել առ ամ̃ն իշխանս զի ձեռնագրեսցեն և կնքեսցեն. և իբրև կատարեցաւ ամ̃, բերեալ ետուն ցվարդ̃ պտն զՀռովմարտակն. և սրբոյ վրդ̃պտին գոհա ցեալ զՏէ. առեալ զՀռովմարտակն արքունա կան եկն յարևելեայ երկիրս Հայոց. և այնու հետև աներկիւղ ևևս վայելուչ սկսաւ շինել զեկեղեցիս. և համարձակ շրջել և քարոզել:

Իսկ կէթղկոսին մելքիսէթի առաւել մախա ցեալ Ը վրդ̃պտին պօղոսի, խօսի զբանս զրպար տանաց 'ի կողմանէ վրդ̃պտին ընդ մեծի և հզօ րի իշխանին ամիրգունայ խանին. որ էր իշխան երևանայ. և ասէ, այր մի ստամբակ և անհնա զանդ և օտար՝ յաշխարհէն մարաց. քանի ամէ զի շրջագայի յերկրիս Պարսից. և մանաւանդ 'ի քում իշխանութե գաւառս. և ստով և խա բեբայիւ քարոզութ̃ե և կեղծաւորիւք վարուք հաւանեցուցանէ զամ̃ մարդ ինքեան. և ոչ մնաց ոսկի և արծաթ և այլինչ ստացուած առ ոք՝ այլ զամ̃ կողոպտեալ յամենեցունց և ա ռեալ առաքէ յերկիր իւր. քանիցս անգամ պատուիրեցաք նմա բանիւք. նաև երես և ե րես ևս ասացաք նմա ելանել յաշխարհէ աստի.

 և գնալ

և գնալ 'ի տեղի իւր. և նա ոչինչ արար զփոյթ 'ի մերոց բանից. և կամակն էած թագաւորականի հրամանին. որ կայ 'ի ձեռս մեր. այլ գործէ ըստ հաճոյից կամաց իւրոց. քանզի անհնազանդ է իշխանաց և պետաց։

Մօրոյ և խանին կոչեալ զոմն զինուոր առաջի իւր՝ և ասէ, հրաման է յիշխանութենէս մերմէ գնալ քեզ յերկիր տէրութեան մերոյ շրջիլ և գտանել զվարդապետն պօղոս և ածել այսրէն առ մեզ։ Իսկ զինուորին գնացեալ որոնելով գտանէ զնա 'ի գիւղն ագուլիս. և անտի առեալ զնա ածէ յերևան քաղաք։ Իսկ 'ի գալն յորժամ եկեալ հասին 'ի դուռն զայն գիշերն անդէն օթեցան. և կայր 'ի գիւղն յայն այր ոմն քրիստոնեայ՝ որոյ որդւոյ ձեռն գօսացեալ էր՝ զոր ածեալ առաջի վարդապետին խնդրէր աղօթել ի վ(երայ) նր(ա) ո(րպէս) զի բժշկեսցի ձեռն մանկանն։ Իսկ նա վարդապետն կալեալ զձեռանէ մանկանն, և աղօթեաց ի վ(երայ) նր(ա). և ասաց զհայր մեր որ յերկինս, և ետ ցհայրն որ առեալ գնաց։ և յայգ յառաւօտուն առեալ զորդին և եկեալ առաջի վարդապետին երկիր պագանէր և համբուրէր զոտս նր(ա). գոհանայր և զշնորհս խոստովանէր զնմանէ. և ցուցանէր զձեռն մանկանն ամենեցուն թէ աղօթիւք վարդապետին բժշկեցաւ ձեռն մանկան իմոյ։

Տարեալ անտի եկին 'ի քաղաքն երևան. և զինուորն, որ էած զվարդապետն. 'ի նոյնում աւուրն յանդիման կացոյց զնա խանին. իսկ խանն ոչ ընկալեալ էր զնիւթ 'ի կթողիկոսէն. զբազում մախանս և զդառնութիւս ամբարեալ ունէր 'ի մտի. զի յոքնակի կիրս չարչարանաց անցուցէ զվարդապետն։ այլ այն, որ թագր է թագաւորաց՝ և Տէր տերանց, որ 'ի ձեռսն ունի զկիրս ամենից բըռնաւորաց

նաւորաց ըստ իմաստնոյն սաղմոնի. առ ժամայն դարձոյց զսիրտ խանին 'ի քաղցրութի. որ̅պ արտաշէսի արքայի իւ̅ր մուրտքեի և բարկութն իւ̅ր համանայ։ վ̅ն զի ընդ ակնարկել խանին յերեսս վարդապետին՝ ոչ թէ զբանս բարկութե ասաց կամ զայրագնեալ դէմս երևեցոյց նմա. այլ մեղմիւ և հանդարտիւ բանիւ ասաց նմա. այսօր կացջիր առ մեզ՝ քանզի մեզ հիւր ես. իսկ 'ի վաղիւն տարայց զքեզ ընդ իս առ կաթողիկոսն և հաշտեցուցից զնա ընդ քեզ. քանզի մելքիսէթ կաթողիկոս հրաւիրեալ էր զխանն իւրովք բարեկամօքն 'ի պատիւ յերկրորդ ումն աւուր. սորին վ̅ն ասաց խանն. թէ տարայց զքեզ ընդ իս առ կաթողիկոսն և հաշտեցուցից։

Իսկ 'ի վաղուեան աւուրն մինչ երթայր խանն 'ի կոչն կաթողիկոսին. տարաւ ընդ իւր և վարդապետն. և իբրև էհաս ժամ խօսելոյ՝ ասաց խանն ընդ կաթողիկոսին. արդ յօժարութի սրտի իմոյ զայս կամի 'ի քէն՝ զի դու հաշտեսցիս ընդ վարդապետին՝ և լինիք որ̅պ զհայր և զորդի. զի թէ պետ շրջի իմէջ ժողովրդեանն. ոչինչ առնէ զգործ կամ զվնաս արժանի դատապարտութե. ոչ ինձ՝ ոչ քեզ՝ և ոչ ժողովրդեան. և ես կամիմ զի իմէջ ձեր խաղաղութի և սէր հաստատեսցի։ Իսկ կաթողիկոսն իբրև ետես. թէ զորինչ խորհեալ էր 'ի մտի. և խօսեալ էր ը̅ խանին. այնպէս ոչ եղև. այլ նորին ներհակն. և թէ պէտ ոչ կամէր հաշտիլ՝ այլև ը̅ դիմմնալ հրամանաց խանին անմարթ վարկանէր՝ զի 'ի շահել զսիրտըն նր̅ կոչեալ էր. և մանաւանդ այնքան պատուճաւորաց արանց մէջի. և իւ̅ր իւրոյ սեղանոյ, և յիւրում տան։ վ̅ն որոյ ակամայիւք կամօք վերերևութիւ և կեղծաւորելով սրտիւ առնէ զհաշտութի ընդ վարդապետին ըստ հրա

մանաց խանին։ Եւ յետ խրախութեան յորժամ հանդերձեալ էր 'ի գնալ խանն. առէ ցկաթողի-կոսն. վարդապետս այս եղիցի քեզ յանձին յայսմ գիշերի. և 'ի վաղիւն 'ի գալն քո առ իս ընդ-քեզ բերցես. զի ունիմ գործ ինչ ընդ դմա։ իսկ 'ի վաղիւն կաթողիկոսն ինքն ոչ գնաց այլ զոմն յեպիսկոպոսաց իւրոց եդեալ ընդ վարդապետին առա-քեաց առ խանն, իսկ խանն պատուեալ խի-լայեաց զվարդապետն. զի էարկ ի վերայ նորա զպատուճա-կան և զոսկէ հուռն կապայ։ Եւ դարձեալ կո-չեաց զնոյն զզինուորն, որ բերեալ էր զվարդապետն, և ասաց նմա. արդ առեալ զվարդապետս զայս տարեալ հասուսցես 'ի տեղին. ուստի և դար-ձուցեր զդա. և յանձնեսցես արանց տեղւոյն և ապա դարձցիս այսրէն։ իսկ զզինուորն և վար-դապետն երկրպագեալ իշխանին ելեալք յերե-սաց նորա գնացին դէպ 'ի գաւառն գողթան։

Իսկ արքն, որք էին նախանձաւորք ընդ վարդապետին. իբրև տեսին թէ մտերմութիւն, զոր արարին առ ամիրգունայ խանն՝ ոչինչ կարացին սպանանել վարդապետին. վասն որոյ սովիմբ օրինա-կաւ միւսևս զմտերմութիւն արարին առ դառչ-ղայ խանն. որ էր առաւել խորոխտ և մեծա-գոյն փառօք՝ և ամենայն որպիսութեամբ քան զամիր-գունայ խանն։ և էր դառչղայ խանն իշխող քա-ղաքին թաւրիզու. առ որ գնացեալ մելքի-սեթ կաթողիկոսն ինքն, և այլք ևս յեկեղեցակա-նաց և յաշխարհականաց. և արարին զամբաս-տանութիւն զպօղոսէ վարդապետէ. և դարչղայ խանն առաքեալ զզինուորս տարաւ 'ի թաւ-րէզ զպօղոս վարդապետն։ Իսկ կատարումն գործոյն եղև՝ որպէս և առ ամիրգունայ խանիւն կատարեցաւ։ և այսու ևս յամօթ լեալ պարտե-ցան նախանձաւորքն։

Եւ

Իսկ յետ անցից պատմելոցս ամի և ես դերա
գունից. մինչ շրջէր պօղոս վարդապետս քաղա
ղութիւն խմբէ քրիստոնէից ըստ համապաղորդի
սովորութեն իւրոյ. պատահեցաւ նմա սահակ կա
թողիկոսն եղբօրորդի մելքիսեթի կաթողիկոսին. և
այլք ես 'ի նոցին համախոհացն. և յոլով աւ
ուրս խոշտանկեցին զնա ասելով՝ լուեա դու
'ի քարոզութենէդ. և պօղոս վարդապետն ոչ
կամէր լռել՝ զի կարի յօժար և փոյթ էր 'ի քա
րոզութիւն։ Բայց ներհակքն կարկյաւետ և
բազմահնարիւք պարաւանդիւք խորամանկու
թեն և զրպարտութեն մեքենայիւք ճմլեալ կո
րացուցին զնա ասելով. դու մի ես յաւելցիս 'ի
շրջել աստ ժողովուրդս և քարոզել. այլ տուր
մեզ ձեռնագիր վկայութեն մահմետականաց՝
թէ այսուհետև քարոզես՝ լինիցիս թշնամի
թագաւորին. և մահու և սպանման պարտական։
Իսկ 'ի բազում աւուրս յոգնազանիւ կեր
պիւ ճնշելոյ ներհակացն զվարդապետն մնաց
անճար. զի ինքն միայն էր ընդ դիմակայ նոցա
առանց օգնականի. թէպէտ 'ի քրիստոնէից
բազումք կային բարեկամք և սիրողք վար
դապետին. այլ վասն երկիւղի ներհակացն, ոչոք
իշխէր օգնել վարդապետին. վասն որոյ մնաց անճար,
ետ նոցա զձեռագիր այսպէս։ Ես պօղոս վարդա
պետս ետու զձեռագիր այսուհետև ոչ շրջիլ
և ոչ քարոզել. և թէ զայսոսիկ առնեմ, լի
նիմ ես թշնամի թագաւորին։ Իսկ առին ներ
հակքն զայս ձեռագիրս 'ի պօղոսէն. ուրախ
եղեն անճառելեաւ խնդութեն։ և այնուհե
տև պօղոս վարդապետն գնաց 'ի մեծ անապատն՝
կայր մխակեցութեն լռեալ 'ի խցի. մշտամատու
ցիւք աղօթիւք խօսակցելով ընդ Այ։ Եկաց անդ
էն և ոչ ել արտաքս յանապատէն մինչև ցվախ


ճան

ճան կենաց իւրոց՝ որ հանգեաւ 'ի Քս. և ան
դէն թաղեցաւ։ և եղև վախճան սորա. հազար
և վաթսուն և ինն ամի թուականի մերում. որ և
'ի գերեզմանէ նորա զբազում գործս սքանչելեաց
լսեմք 'ի հիւանդս և 'ի ցաւագարս որք յուսով
երթան առ նա. և առնուն զբժշկութիւն իւրա
քանչիւրոց ցաւոց շնորհօքն Քի Յի մերոյ։

Վճ Վարդապետութեն և կթղկսութեն տեառն Մովսէսի. Ընդ որում և յաղագս նորոգութեն լուսակառոյց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի.

ԻԴ.

ՍԵԾԱՀԱԻԱՏ ՍՐԲԱ սնունդ և բարեփառ հայրս մեր տէր Մովսէս կթղկոսս. էր յաշխարհէն սիւնեաց 'ի գաւառէն բաղաց. որ այժմ ասի աճանան. 'ի գեղջէն, որ անուանի խոտանան։ Սա մինչ էր նա ամաց հնգետասանից աւելի կամ պակաս. ետուն նմա զաստիճան քահանայութեն. և օրհնեցին կուսակրօն աբեղայ։

Սա դէպ եղև պատահիլ նմա տիեզերալոյս վարդապետին սրապիոնի. և առ նա յարեալ աշակերտեցաւ նմա. բայց վախճանն սրապիոնի փութով ժամանեաց իսկ յորում ժամանակի տհաս էր տէր Մովսէս ուսմամբ և հասակաւ։ բայց սրապիոն վարդապետն մտօք նկատեալ իմանայր յոգի իւր՝ զի շնորհ ածային երևէր առ տէր Մովսէսն՝ ընդ որոյ ցաւակցաբար հոգաց զնա. մինչ զի կոչեաց առ ինքն զաւագ աշակերտն իւր զկեսարացի գրիգոր վարդապետն՝ և յանձնարար նմա զտէր Մովսէսն ասելով. յանձն առնեմ զսա քեզ՝ զի փոխանակ իմ հովուեալ պահեսցես զսա՝ և հաստատեսցես յարբունս հասակի, և վարդապետական ուսման. և տացես զգաւազան

և զպա

և զպատիւ վարդապետական. և եղիցի օրհնութիւն իմ ի վերայ քո և դորա։

Նշուլեալ վախճանի սրապիոնին մնաց տէր մովսէս առ գրիգոր վարդապետն յաշակերտութիւնս. և զկնի սուղ ինչ աւուրց խնդրեաց տէր մովսէս զհրաման՝ ի գրիգորէ վարդապետէն՝ զի գնասցէ յեհմ յուխտ և յերկրպագութիւն տնօրինականաց տեղեացն Քրի Ս.Յ մերոյ։ և նա ետ զհրաման որ և եղեալ տէր մովսէս գնացեալ հասա յեհմ. և կատարեաց զուխտ ամենից տնօրինականաց Տեառն։ Ապա անտի գնաց յաշխարհն եգիպտոսի՝ և շրջեալ յամն վանորայս և յանապատս ազգին ղփթոց. վասզի վանորայք և անապատք եգպտացւոց յորում բնակեալ են բազմահոյլք միաբանք՝ կարգօք և սահմանօք կրօնաւորականօք. որք ունին զկարգաւորութիւն ամենից լրաց. ժամատեղաց և սեղանատեղաց. և զգեստուց, և խցակացութեան. և կրօնաւորականի ժուժկալութեան. և այլ ամենից գործոց։ և ինքն շրջելով և հարցանելով և տեսանելով տեղեկանայր ամե և ամին այսմիկ ինքն տր մովսէս թէպէտ անհոգ և անփոյթ էր, այլ տնօրինիչ ամե Հոգին յածեալ շրջեցուցանէր ինքն այսպիսեաց կրօնաւորականաց կարգաց առ ի ուսուցանել զնա. վն ապագայից ժամանակաց. որպ և պիտոյացաւ 'ի ժամանակս կարգադրութեան մեծի անապատին։ և տէր մովսէս յեգիպտոսէ դարձեալ եկն յեհմ. և եղև լուսարար սրբոյ յարութեան։

Յորում ժամանակի դէպ եղև անդ լինել սարգիս պարոն տիրոջն և տեառն կիրակոսի. որոյ վն շարադրեցաք՝ թէ եղեն սկիզբն անապատի, և կրօնաւորականաց կարգաց. որք կային յեհմ, և շրջելին յաշխարհին յայնմիկ. 'ի վանորայսն յունաց՝ և յեզերս յորդանան գետոյ.

և 'ի լեառն փորձութեն. և որոնեալ խնդրէին զտեղի անապատի անքոյթ և անշփոթ, և ըստ պատշաճին ոչ գտանէին: Առ որս ասաց տէր մօսէս. զայդպիսի տեղի, զոր խնդրէք՝ յարևե լեան յաշխարհին բազումք գոն. և մանաւանդ յերկրին սիւնեաց. որոց ես ականատես իսկ եմ: և յաշխարհին յայնմիկ կարի առաւել պատշաճէ լինել զանապատ. զի բուն հայաստան է. վանորայք, և գեղորայք. և ժողովուրդք քրիստոնէից բազումք գոն. ուստի ամենքն պիտոյք անապատին լցեալ լինին: Այլև ինքն տէր մօսէս յանձնեաւ զի յորժամ նոքա ժամանեալ յերկիրն այն. և ուրէք անդորրացեալ զտեղիցին. ուր և իցէ ինքն տէր մօսէս թողեալ զամ անդր առ նոսա ժամանեսցէ՝ և ընդ նոսին բնակեսցի միաբանութբ: արդ այսպիսեաւ յորդորականաւ բանիւ զնս առաքեաց 'ի վերին աշխարհն արևելից. և ինքն մնաց յեդեմ: Եւ հրամանաւ գրիգորի եպիսկոպոսին. որ էր առաջնորդ սրբոյ յակոբայ գնաց 'ի նոյն իրակութեն վն եդեմ և զբազումն արդիւնս ժողովեալ 'ի քրիստոնէից եբեր յեդեմ առաջի գրիգորի եպիսկոպոսին:

Ապա ելեալ յեդեմայ եկն առ վարդապետն իւր գրիգոր կեսարացի. որ էր 'ի կոստանդնուպօլիս՝ քանզի թգրականաւ հրամանաւ նստեալ էր առաջնորդ քղքին պատրիարգ անուամբ: և կացեալ յաշակերտութն գրիգորի վարդապետին յամս ինչ սպարկեշտութիւք և սրբակրօնիւք վարուք՝ ոչ պաճուճիւ և փափկիւ հանդերձիւ ոչ և այլքն էին 'ի ժամանակին. այլ խոշորագեստ. և պահեցող. որ 'ի շաբաթ օր և 'ի կիրակի օր լուծանէր. 'ի կերակուրս նուաստաց. զատեալ 'ի մսոյ՝ և 'ի գինւոյ. և հանապազ սաղմոսերգ և պատարագամատոյց: Առ որ հաճեալ և հաւանեալ

անեալ ամ̃ ժողովուրդն կոստանդնուպօլ
սի․ եկեղեցականք և աշխարհականք, և երևե
լի արք ոմ̃ շահին չալապին․ որ էր այր նշանաւ
որ 'ի դրան թագաւորին․ և այլք և այլովք։
Նաև վաճառականք արևելեան աշխարհին․
որք պատահեցան 'ի կոստանդնուպօլիս․ և
մանաւանդ ջուղայեցիք և գողթնացիք․ զի գի
տէին թէ մովսէս յարևելեան աշխարհէն է․
ամ̃քն մատուցեալ առ գրիգոր վարդապետն խընդ
րէին տալ տեառն մովսէսի զվարդապետութիւն։

Իսկ գրիգոր վարդապետն․ էր այր ահարկու,
և յոյժ խորոխտ, և դժուարահաւան՝ բայց տե
սանելով զքաղցր և զուրբաւէր բարս․ և զպար
կեշտ վարս տեառն մովսէսի․ նա և զվկայու
թիւն ժողովրդեանն, ոչինչ եղև անլուր այլ ըստ
վկայութեան ամենեցունց․ և ամ̃ի ժողովրդեան ետ
նմա զգաւազան վարդապետին մեծաւ հանդի
սիւ։ Այնուհետև տէր մովսէս վարդապետն ան
խափան քարոզէր յամ̃ եկեղեցիս զաւետա
րանն Քի̃ վճտիւ և պայծառաւ քարոզութբ̃։

Այս յետ ամաց ինչ հրամանաւ գրիգորի վար
դապետին առաքեալ եղև մովսէս վարդապետն գը
նալ և ինքնագլուխ քարոզութբ̃ շրջագայիլ․
և ելեալ 'ի կոստանդնուպօլսէ եկեալ հասեալ
'ի քաղաքն տիգրանակերտ՝ ուր էր տապանն
սրապիոնի վարդապետին․ համբուրեալ զնա սը
բով տապանաւն․ և առեալ 'ի նմանէ զօրհ
նութիւն։

Ելեալ անտի անցեալ զվասպուրականաւ
քաղաքաւն եկն 'ի թաւրէզ․ և անտի 'ի հայրենի
աշխարհն իւր, 'ի գաւառն սիւնեաց՝ 'ի վանքն
տաթևու։ յորոյ գալստենէ եղև անպատում
ուրախութիւն ամ̃ցուն եկեղեցականաց և աշխար
հականաց։ Եւ զառաջինն սիրով ընկալան զնա

միաբանք վանացն Տաթևու եպիսկոպոսք և աբեղայք. բայց յետոյ յետս չոգան՝ ի նմանէ. քանզի ոչ ընկալան զքարոզութիւն նր̃: Հալածս որոյ եղեալ 'ի Տաթևու վանացն. և գնաց 'ի մեծանապատն առ Սարգիս եպիսկոպոսն. և առ տէր Կիրակոսն. ըստ նախկնոյ ուխտադրութենն իւրց̃, զոր պայմանեալք էին յե̃մ. և անդէն յանապատին կալաւ իւր դադար բնակութե̃: և 'ի ժամանակս ժամանակս եղեալ շրջէր ի մէջ քրիստոնէից՝ և քարոզէր զպատուիրանս Ա̃Յ, և վերստին դառնայր յանապատն. վասն զի ոչ ձուկն եղեալ 'ի ջրոյ մերձի 'ի մեռանիլ և անդրէն 'ի ջուր անկեալ կենդանանայ. սոյնպէս և սմա յելանելն յանապատէն, և մտանելն յանապատն:

Իսկ զքարոզութիւն Մովսէսի վրդ̃պտին ամ̃ն ժողովուրդք խնդութե̃ ընդունէին, և յօժարութե̃ կատարէին. և ուրախութե̃ փառաւորէին զԱ̃Ծ զտուիչն այնպիսեաց շնորհաց մարդկան. բայց եպիսկոպոսք գաւառաց, և աբեղայք վանորէից ոչ հաճէին 'ի քարոզութիւն Մովսէսի. վս̃ զի Մովսէս վարդ̃պտն ոչ՝ ինքն մերկէր ամենից աշխարհականաց նիւթոց. և պահօք, և սրբութե̃, և կրօնաւորականօք վարուք կեայր ըստ հրամանաց գրոց՝ սոյնպ̃ և քարոզէր լինել ամենից վանականաց. և նք̃ անգոսնեալ զբանս նր̃ ոչ ընկալան: վս̃ զի ամ̃ն վանորայք ազգիս Հայոց՝ իւրաքանչիւր սեպհականս ունէր իւր զինչս առանձին զայգի և զբուրաստան, զփեթակ և զտուն և, զմարան, և զհամբարանոցս և զմուտս ստացուածոյ: նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ յինքեանս բաժանէին, և զայն ամ̃ ինքեանց, և ազգանոց՝ և իւրեանց հաճելեաց արանց ծախէին 'ի

պէտս

պէտս կարեաց ։ Նաև զնուիրեալ տեղիսն ԱԾ· որք ընակարանք էին նշխարաց սրբոց․ և զքանչելագործք․ և շնորհակրից նշանաց ԱԾ· լցեալ էին զայնոսիկ կանամբք և տանտիկնօք․ և իւրեանց ազգայնօք ։

Նաև ընաւ ոչ գիտէին թէ պարտ է կարգաւորիւ զվեղար և զփիլոն ունիլ զիւրեաւ կամ հանդերձս խոշորս , և սառնիս զգենուլ․ այլ ոպ աշխարհական , և զմարմնաւոր իշխանս փափկիւ և ազնիւ զգեստու պճնէին ։ չաշխուր , և կապայ , և պատուճական փակեղ 'ի գլուխս․ և բաղափուշ զիւրև առեալ ։ Այլև ոչ վարկանէին թէ պարտ է վանականաց պահօք և ծոմաջանիւք երկօք կենցաղավարել․ այլ 'ի բոլոր տարին ուտիք և գինի և միս անխտիր ։

Այնպէս և գեղականք երիցունք՝ անուամբ միայն քահանայք․ այլ ոմանք առեալ զիշխանութիւն մելիքութեան․ և ոմանք տանուտէրութեան՝ և ոմանք պոռնիկք և երկկանայք՝ ոմանք յարեցեալք իշխանաց այլազգեաց արբանեակք չարեաց գործոց նց՝ և մատնիչք քրիստոնէից՝ ոմանք 'ի մարմնաւոր արուեստս և 'ի հողագործութիւս պատաղեալք իբրև զաշխարհականս․ և ընաւէին թողեալ զժամ և զպատարագ ։ Ոչ կանխէին 'ի ժամ աղօթից յեկեղեցի․ և ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի 'ի գեղօրայս՝ և ընաւէին բարձեալ 'ի նոցունց զշնորհ քահանայութեան , բայց տակաւին զինքեանս քահանայս անուանէին , և գործէին զգործ քահանայութեան , ոչ իբր զքահանայ , այլ իբր զմարմնաւոր արուեստաւոր վն մարմնաւորի վարձու իւրոյ ։

Նաև ոչ միայն գեղական երիցունք և աբեղայք ըն ատացելուամն անուղղելիք կարգօք լեալք

թա

թափառականք, այլ կաթողիկոն՝ զի ոչ թէ մի էր, այլ երեք և չորք կաթողիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան, և ագահութեան ի բաց զմաքրասէրս ղաքալայինս և հարկիւ 'ի Պարսից թագւորէն առնուին զիշխանութիւն կաթողիկոսութեան՝ և զաաթոռն Էջմիածնին, և 'ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թագաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս և զիւրաւունս և զհասս որք 'ի ժողովրդենէն ճշդիւ և բռնութեամբ ուժգին առնուին ոմն զօրդիան հեղեալ: և կաթողիկոսքն ոմն ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճան կաթողիկոսութեան, նոյնպէս և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և քահանայքն, ագէտք, խոտանք, և անպիտանք, ըստ սաղմոսին, որք էին լեալ պաշտօնեայք որովայնին հանապազ 'ի գինեբռուս դեգերեալք գուսանօք իբր զմարմնաւոր իշխանս, յառաւօտէ մինչև ցերեկոյ հեշտեալ կատակաց և լկտեաց բանից՝ և դատարկութեան:

Նա և սոցին մնցին առ իթ, ոչ այլինչ եթէ ոչ հեռացումն 'ի սրբոց գրոց և յերկիւղէն Այ, ոչ բնաւ ընթեռնուին զգիրս՝ այլ էին փակեալ և լռեալ մատեանք Ածայինք, վասն զի էր խափանեալ ընթերցումն սրբոց գրոց, որք էին արհամարհեալք յաչաց, հողով և մոխրով լցեալ և անկեալ յանկեան ուրեք, վասն զի ոչ զգիրս գիտէին և ոչ զզօրութիւն գրոց ըստ Տն բանի:

Արդ եթէ եկեղեցականք այսպէս, զինչ ևս առացից զաշխարհականաց՝ որք ոչ բնաւ գիտէին թէ պարտէ քրիստոնէից խոստովանիլ և հաղորդիլ. կամ յամ աւուր 'ի տօնի աղօթից կանխել: Նա և զպահս ձիթով և գինեաւ ապականէին: ոմանք կնահանք, և ոմանք երկա

երկականայք, և չհասիւք՝ և մեղք ազգաշա-
ղախիւ պղծութ՟բ:

Իսկ եկեղեցիք և վանորայք, ամ՟ն անշուք և անպատիւք, ընաւին կողոպտեալք 'ի զարդուց և 'ի սպասուց, մինչ զի և ոչ՟ սեղանն եւ ամենևին մերկ և բաց: բազմաժամանակեայ փակեալ դրամբք, խաւար և անլոյս, լռեալք 'ի պաշտամանց և 'ի պատարագաց: աւերեալ և խախտեալք շինուածք նց՟ տանիք և որմունք: երբև զանտէր և այրի զրկեալ 'ի փեսայէն և օտարացեալ յորդւոց նստեալ թախծելով ողբով և անմխիթար լայր ընդ երեսս մարդոյ:

Արդ՝ բազմապատկիւ յոլովութ՟բ քան զորս շարադրեցաք աղաւաղեալ եղծեալէր բարեկարգութ՟ն 'ի վերին աշխարհէս Հայոց, և փոխանակ նորա արձանացեալ և արմատացեալ անկարգութ՟ն: Որոյ վ՟ս վշտանային և ցաւէին հոգւով չափ ընդ տգիտաբար մոլորութ՟ս յայտնիկ երկոքին սր՟ք վարդ՟պետքն Մովսէս այս և Պօղոսն զոր յանցելում ճառն ծանուցաք զօրպէսն: Եւ պօղոս վարդ՟պետն փոքրմի ժամանակաւ վաղագոյն եկեալէր քան զմովսէս 'ի վերին աշխարհս, և 'ի սակս մեկնակութ՟ե իւրոյ՝ հակառակորդքն հարստահարէին զնա, իսկ 'ի գալն Մովսէսի վարդ՟պետին, երեւաց զօրավիգն եղեալք համարձակ քարոզէին ընդ ամ՟ն գաւառս: Եւ սոքա երկոքին վրդ՟պետքս, և սարգիս պարոնտէրն, և տէր կիրակոսն, այլովք յիշատակեալ արամբքն, զոր 'ի ճառին մեծի անապատին յիշեցաք, նախ զամ՟ն զկարգս և զսահմանս անապատի և կրօնաւորութ՟ե սահմանեցին, զորս 'ի գրոց ընթերցմանէ գտին, և զորս Մովսէս վարդ՟պետն յանապատս զփթոյն տեսեալէր և ուսեալ և ապա նոքա

ամ՟ն

ամբն յանապատին կալով աղօթէին վն փրկութեն աշխարհի, և նովին աղօթիւ նպաստ լինէին վարդապետացն՝ խնդրելով 'ի սէր հոգւոյն օժանդակել նդ 'ի քարոզութեն բանին կենաց ։ Իսկ երկրքին վարդապետքն մովսէս և պօղոս եղեն իւրեանց ընկերք իւրեւ զի առաքեալսն պետրոս և պօղոս , լեալք ամուք հաւատոյ՝ շրջեցան յամենայնում գաւառս արևելեայ աշխարհիս ․ քարոզէին ամենեցուն զճշմարտութեն , շինէին զեկեղեցիս , կարգէին զքահանայս , հաստատէին դպրոց , ուսուցանէին զմանկունս ։ վնզի առաքելաբար շրջէին հետիոտս գնալով ․ ոչինչ առնուին յումեքէ , այլ միայն զկերակուրս ․ և զբոլոր շաբաթն պահէին , միայն 'ի շաբաթ օր և 'ի կիրակի օր լուծանէին նաւակատեաց կերակրովք 'ի բոլոր տարին , և 'ի գինւոյ և 'ի մսոյ մեկնեալք ամենևին ։

Իսկ քրիստոնեայք մերին աշխարհիս տեսանելով զճշմարիտ քարոզութեն նդ , զի վկայէին բանից և քարոզութեն նոցա գործք նդ , ամբն դարձան 'ի թիւրից ճանապարհաց իւրեանց՝ և հնազանդեցան կարգաց և սահմանադրութեն նդ , իշխանք , եպիսկոպոսունք , և երիցունք , և արք նշանաւորք ռամկօք ամենևիւք ։ Նոյց յոլովք արք անուանիք եկեղեցականք և աշխարհականք , ոչ միայն ոչ ընկալան զքարոզութեն նոցա , այլև ներհականայնին եւս, և կեղծաւորս և խաբեբայս անուանէին ։ և զսահմանեալ կարգս նդ խանգարէին ինքեանք և արբանեակք իւրեանց , ուր և հասանէին , ուր և կարէին ։

Բայց զայս գործ հակառակութեն առնէին արք թիւրք և օրինազանցք , որք ոչ հաճէին ընդ ճանապարհս ճշմարտութեն , լինէին չարահամբաւք և ամբաստանք վարդապետացն , մինչև

էհաս

եհաս լուր ամբաստանութե նց առ այլազգի իշխանս աշխարհաց 'ի խանս և 'ի սուլթանս , և մանաւանդ առ կթղիկոն մելքիսեթ , որ թգրականաւ բռնութե վարէր զիշխանութն կթղիկոսութե : և զի ինքն կթղիկոն ևս ոչ էր 'ի ճանապարհս ուղղութե , յայն սակս տեղի տայր ամբաստանութե այնպիսեաց՝ և զնիւթառեալ 'ի նոցունց ներհէր զվարդպետսն : Բազումանգամ պատահեալ կթղիկոն սաստ և անդ զսահմանեալ կարգս նց խափանէր : և զ'ի նոցանէ յառաջ կոչեալ զարսն յետս ընկրկէր , և նոցին զպատգամս զպառնականս խրոխտիւ բանիւ առաքէր :

Լաւ պատահեցան վարդպետքն կթղիկոսին զնոյն զպառնական և զեպերական բանս լուան 'ի նմանէ , զի թգւրականաւ իշխանութե խրոխտայր ի վե վարդպետացն : և այնքան վտանկեցին զվարդպետն , մինչև առին զձեռնադիր 'ի պօղոսէ վարդպետէ ոչ ևս հրջիլ ի մէջ քրիստոնէից և քարոզել ոչ և յառաջդ պատմեցաք 'ի նորին ճառին :

Իբրև այն ինչ եղև՝ զի զպօղոս վարդպետն հանին 'ի կողմն ինչ և միայն գտեալ զմովսէս վարդպետն՝ սկսան սաստկիւք մրցանօք մաքառիլ ը նմա , և այնքան 'ի ներհակին զնա ես՝ մինչոր ինքն մովսէս վարդպետն զիւր փիլոնն և զգաւազանն և զխաչիչն առաքեաց առ մելքիսեթ կթղիկոն ասելով . որովհետև ոչ կամիս զքարոզութիւն մեր , ահաւասիկ առ 'ի քեզ զիշխանութիւն մեր , և մեք լռեալ դադարիմք 'ի քարոզելոյ , և ընդ այդ թէ իցեն մեղք ինչ՝ դու տացես զպատասխանի Այ : Իսկ բարեաց կամեցողն Այ , որ զամ տնօրինէ , ոչ արար հաճելի զարարս մովսէսի խորհրդակցացն մելքիսեթի , վն որոյ հաւանեցուցին զմելքիսեթ ոչ

առնուլ

առնուլ զիշխանութիւն մովսէսի, այլ զգաւազանն իւր առ ինքն դարձուցանել և տալ զհրամանն քարոզութեան: և մելքիսէթն արար այնպ՟: Թէպէտ եւ զհրաման քարոզութեան մելքիսէթն մովսէսի. այլ ՚ի նենգելոյ ոչ դադարեաց, զի հանապազ հարստահարէր դատափետեալ պարտաւոր առնէր, և զրպարտէր, ինքն և համախոհքն իւր անխնայաբար զնեղութիս խլ՟ր ն՟ր ածէին:

Ընդ որոյ արարս տաղտկացեալ և ոգւով չափ դառնացեալ վարդապետին մովսէսի, ձանձրացեալ և իւր զտունս վհատեալ և լքեալ. մտածելով զբանն Տ՟ն, թէ հալածեսցեն զձեզ ՚ի քաղաքիս յայսմիկ փախիջիք ՚ի միւսն, խորհեցաւ հեռանալ յարևելեան աշխարհէս՝ և գնալ յարևմտեան աշխարհն, և անդ եղելոց քրիստոնէից քարոզել: Այսու դիտաւորութ՟ ելեալ և եկեալ ՚ի քաղաքն երևան՝ զի անցեալ ընդ այն գնասցէ ՚ի թէոդուպօլիս, որ է արզրում քաղաք:

Յորում ժամանակի տէր և իշխան էր երևան քաղաքի և արարատեան աշխարհի մեծ և հզօր իշխանն ամիրգունայ խանն, որում դէպ եղև պատահմամբ ինչ տեսանել զվարդապետն մօսէս, որոյ վ՟ն հարցումն արարեալ խանն իւրոց առաջնեայց քրիստոնէից, որոց պատասխանեալ զուստն և զորպէսն: և եղև զի այլ ևս պատահեցաւ խանն վարդապետին, և որքան տեսանէր և խօսէր ախորժ թուէր վարդապետն առաջի խանին, զի խնամքն Ա՟յ շնորհալի ցուցանէր զծառայն իւր առաջի բռնաւորին, որ և ոչ եթող խանն զմովսէս գնալ յաշխարհն արևմտից, այլ անդէն արգել յերևան քաղաքի և օր աւուր գայր խանն, և տեսանէր զպատա

րագն, և զայլ արարողութիւնս ժամակարգութեան, և խօսէր ընդ նմա երբեմն 'ի պատճառս խնամատութե՛ն, և երբեմն 'ի պատճառս հաւատոյ, և լսէր զպատասխանիսն վարդապետին, ախորժ և հաճեղ և լի շնորհօքն Տ՟ն՝ և վասն պարկեշտից վարուց նո՛ր սիրեաց զնա խանն, վս՟ որոյ պահեաց զնա յերևան քաղաքի՝ 'ի կաթուղիկէ եկեղեցւոյն կացուցեալ զնա զամս երիս։

Այլ 'ի վաղեմեաց ժամանակաց վայելուչ մատուռ մի, շինեալ էր 'ի դամբարանի սբ՟յ առաքելոյն անանիայի, որ էր 'ի հիւսիսային կողմանէ քաղաքին երևանու ի մէջ այգեստանացն, և էր աւերակ և անմարդաբնակ․ որոյ վս՟ ասաց խանն առ վարդապետն, տեսանես զայս եկեղեցիս, որ ամայի կայ, արդ լուր ինձ, և մի գնար յայլ աշխարհ, այլ արա զաս քեզ բնակութի՟, և դադարեա աստէն՝ զի նորերոց մերձակայութե՛ և տեսութե՛ մխիթարեսցուք․ այլև ա՟մքն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք աղաչելով զնոյն խնդրէին 'ի վարդապետէն։ Որոց զբանս հաճեալ սրբոյ վարդապետին զձեռն 'ի գործ էարկ շինել զտեղին արդեամբք և ձեռնտուութե՛ քրիստոնէից տեղականաց և վաճառականաց․ որք յօժարութե՛ տային զտուրս ողորմութե՛ 'ի շինումն տեղւոյն, վս՟ սիրոյ վրդ՟պետին, զի բնակեսցի ի մէջ իւրեանց։ վս՟ որոյ փութանակի շինեցին շուրջանակի զպարիսպ և զխուցս և զժամատուն, և զպարաւութ, և զայլ տունս յոլովս․ և կատարեալ զա՟մն շինուածսն, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւն և սահմանաւն այնու, զոր կարգեցին 'ի մեծ անապատն։ Նաև որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և գրոց աշակերտք իմաստունք և սրբակացք, կային 'ի միասին

մեծք և փոքերք սիրով հանդարտեալք 'ի խցի. համապազօր կանխեալ յաղօթս և յընթերցումն սրբոց գրոց:

Որոյ ուղղի վարդապետութեան և բարւոյ քաղաքավարութեան համբաւ հռչակեցաւ ընդ ծագս աշխարհի. 'ի Հռումաստան, 'ի Քրդաստան, 'ի Վրաստան, 'ի Պարսկաստան, զի ամենից աշխարհաց վաճառականք գային անդր և տեսանէին՝ և զհամբաւն տանէին: Զայս ամ յաջողութիւնս զառաջադիմութիւնս Մովսէսի վարդապետին տեսանելով Մելքիսեթի կաթողիկոսին՝ զչարէր և հեղձամղձուկ լինէր 'ի սրտի. բայց ոչ կարէր զչար ինչ առնել Մովսէսի վն երկիւղի խանին. զի նա յոյժ սիրէր զվարդապետն:

Իսկ եղև զի Մելքիսեթ կաթողիկոսն նուրովք խորհրդակցովքն արար զայսպիսի խորհուրդ. ոչ վն փառացն Այ. և ոչ վն օգտի Մովսէսի վարդապետին. այլ վն շահու և օգտի նորեանց. զի մամոնայ և արծաթ բազում գումարեսցին ինքեանց: Սահմանեցին թէ 'ի սբ աթոռն Էջմիածին մեռոնօրհնէք առնել, և այն ձեռամբ Մովսէսի վրդպետին. որ զի 'ի նորին համբաւ 'ի բազմաց աշխարհաց ժողովրդք գումարեսցին. յորոց լիցի մեզ շահ յոլովից մամոնայից արծաթոյ: Սորոյ ամենք յեպիսկոպոսն Մելքիսեթի կաթողիկոսին. եկին առ Մովսէս վարդապետն. և մեծարեցին զնա բանիւ Մելքիսեթի կաթողիկոսին գալ յԷջմիածին. և առնել զմեռոնօրհնէքն: Իսկ յայնմ ժամանակի տակաւին ոչ ունէր զաստիճան եպիսկոպոսութեան Մովսէս վարդապետն՝ վասն որոյ հրաժարէր ասելով. ես ոչ ունիմ զաստիճան եպիսկոպոսութեան՝ ոչ է այդ իմ գործ. այլ այնոցիկ՝ որք եպիսկոպոսք են: Որոյ պատասխանէտաաց Մելքիսեթ կաթողիկոսն. եթէ զեպիսկոպոսու-

թեան

Թէն պատճառէ . ես օրհնեմ զինքն եպսկոպս . և միւս պատճառս յօդեցէ այլ եկեալ օրհնես ցէ զմեռոնն ։ Իսկ Մովսէս հրաժարէր յեպիսկոպոսա կանէ աստիճանէ զանձն անարժան ասելով ։ բայց նորին աշակերտքն , և այլքն քահանայք և ժողովուրդք թախանձէին յանձնառնուլ զաստիճան եպիսկոպոսութեն . վասնորոյ յանձն էառ վարդապետն Մովսէս լինել եպիսկոպոս ։

Ապա մելքիսէթ կթղկոսն եկեալ 'ի դամ բարանս սրբոյ առաքելոյն անանիայի ուր էր բնակութի Մովսէսի վարդպտին՝ զոր անուանե ցին անապատ . և անդ օրհնեաց զնա եպիսկոպոս յաւագ երկուշաբաթ աւուրն ։ և ապա եկին յԷջմիածին կթղկոսն և վրդպտն, և այլքն եկե ղեցականք , և աշխարհականք . և յաւագ հինգ շաբաթաւուրն օրհնեցին զմեռոնսյեռ օրհնու թեն մեռոնին վաղվաղակի արձակեցին զժողովս՝ քըն 'ի բազմաց աշխարհաց եկեալք էին ժողո վուրդք . որոց առեալ զօրհնութի սրբոյ մեռո նին և զԷջմիածնի գնացին 'ի տեղիս իւրց ։

Իսկ վաճառականացն Ջուղեցւոց հասեալք յասպահան քաղաք առ հօմեցեղս իւրեանց՝ ա մենեցուն պատմէին զբարեվայելուչ զարդարո ութիւն զոր տեսեալ էին 'ի Մովսէսէ վրդպէն ։ Իսկ Ջուղեցիք եկեղեցականք և աշխարհա կանք լսելով զայն , տենչային 'ի սէր վարդպ տին , և խանդակաթիւ սրտիւ փափագէին 'ի տեսութի նորին ։ որ և պատրաստեցին զարս նշանաւորս քահանայս և աշխարհականս , և առաքեցին հրաւիրակ Մովսէսի վարդապետին գալ յասպահան իմէջ իւրեանց ։ Նաև գլուխն Ջու ղեցւոց ողորմութեցն Ի.Ն արժանին խօջայ՛նա զարն գրեաց իւլ որդւոյ իւրոյ խօջայ սաֆրա զին՝ որ յաւուրսն յայնոսիկ էր յաշխարհն առա

պատականի, մեծարել զվարդապետն Մովսէս յասպահան, որոց եկեալ և առեալ զՄովսէս տարան յասպահան։ Նու նա անդէն ըստ քրիստոնէականի վարդապետութեն, և աւետարանականի քարոզութեն սփոփեալ արգահատէր զնա, և հաստատէր 'ի հաւատս քրիստոնէական, ոչ միայն զնա կեալն՝ իքաղաքին, այլ և զամենայն շրջակայս գաւառին։ Եւ կացեալ անդէն ժամանակս ինչ մեծիւք փառօք փառաւորեալ՝ 'ի նոցունց, և ապա անտի դարձաւ յերևան քաղաք 'ի տեղի իւր։

Մինչ կայր Մովսէս վարդապետն անհոգ պարզմտութբ յերևան քաղաքի յիւրում տան, նիւթեաց նմա զնենգութի մելքիսեթ կաթողիկոսն այսպիսեաւ օրինակաւ՝ զի երևեցոյց զթուղթ մի ոչ զթամասուկ, յորում գրեալ էր։ Ես Մովսէս վարդապետս տալու եմ մելքիսեթ կաթողիկոսին զհարիւր թումանն՝ գնամ յասպահան և անտի եկեալ տամ։ զայս թուղթս տարան 'ի դիւան ամիրգունայ խանին, և Ճշդիւ պահանջէին զհարիւր թումանն։ Իսկ Մովսէս վարդապետն, որ և էր անպարտ զնոյն պատասխանէր թէ անպարտ եմ 'ի դմանէ, վասնզի ոչ է իմ առեալ զգիրդ զայդ՝ այլ դաւով և հնարիւք իմն գործեալէն զգիրդ և թէպէտ պատասխանի առնէր Մովսէս վարդապետն բանիւք բազմօք, սակայն ոչ լինէր փրկութի, զի կողմն զրպարտողացն Ճարտասանք էին և փորձք 'ի չարիս։ Իսկ խանն իւրովք իշխանօքն և ամենայն քրիստոնեայքն վերահասու եղեն զի թուղթն այն հնար իմն է և Մովսէս անպարտ է, վասն որոյ ամենայն ջանային փրկել զՄովսէս՝ և ոչ կարէին, զի երկարեցաւ գործոյս այսորիկ դատաստանն յերկուս ամիս։ այլ ազատարարն Ած փրկեաց զնա այսպիսեաւ կերպիւ։

Մելքի

Մելքիսեթ կաթուղիկոսն և իւր եղբօրորդին սահակ կթղկոսն՝ ունէին զոխս նախանձու ընդ համազասպ եպիսկոպոսին՝ որ էր հաւուց թառայ վանացն և երևան քաղաքին առաջնորդ, և էր սա այր խորոխտ և ճարտարաբան որ մեծաբանութբ պակուցանէր զկողմն մելքիսեթեան, և թեւածէր խմ̄ ն̄ց. որև մելքիսեթեանք վ̄ն այսորիկ քինու արկին զնշան խլ̄ր համազասպ եպիսկոպոսին ։ Նա եղև զի յաւուր միում մինչ կային 'ի հանդիսի դատաստանին, սահակ կթղկոսն էկաց առաջի խանին ի մէջ ատենին, և ասաց 'ի լուր հանդիսին, թուղթ այդ ընդունելին սուտ է՝ զի ոչ իմ հօրեղբայր մելքիսեթ կթղկոսն գրեալ՝ և ոչ ես. այլ ես գիտեմ զի համազասպ եպիսկոպոսն արարեալ զայդ նենգութիւն ։ Յայն ժամ խանն և ամենքն, որք կային անդ, 'ի ձայն ցնծութե՟ օրհնեցին զԱծ, որ ազատեաց զանպարտն 'ի ձեռաց զրպարտողացն, և 'ի նմին հանդիսի պատառեցին զթուղթն զայն ։ և գնացին մելքիսեթեանքն կորագլուխ և ամօթով 'ի տեղիս իւրեանց ։

Յետայսորիկ անցին սակաւք ժամանակք խլ̄ր՝ եկեալ էհաս հրովարտակ 'ի մեծ շահաբաս արքայէն առ ամիրգունայ խանն վ̄ն մօսէսի վարդպետին, յորում գրեալն էր թէ ծանիր ամիրգունայ խան՝ զմօսէս անուանեալ վարդպետն՝ որ ընակի 'ի քում քաղաքի առ քև. փութանակի առաքեսցես զնա առ իս. և ուր և իցեմ ես եկեալ գտցէ զիս ։

Նա պատճառ այսորիկ խնդրանացս պիտակացուցեալ մոմն էր. վ̄զի մօսէս վարդպետն 'ի ժամանակին յորում էր 'ի քաղաքին երեւ. անդ ուսաւ զարուեստն մոմ սպիտակացուցանելոյ. և արդ իսկ ինքն յամի ամի սպիտակացուցանէր. և

զպլխտակ մոմ վառէր յեկեղեցւոջն 'ի պատարագն, և յա̄մն ժամակարգութեան ։ զի զոտնս տէրունականս և զնշանաւոր սրբոց մեծաւ հանդիսիւ կատարէր պլխտակօք և պայծառիւք մոմեղինօք՝ և մեծաւ ցնծութեամբ. ո̄պ գրեալ է 'ի պատմութիւն սրբոյն յօհաննու օձնեցւոյ ։

Կարծեալ ո̄պ սովորութի է թղթոց որ զորդիս և զաղջկունս ժողովեն յամենայն աշխարհաց. այսու սովորութեամբ և այս շահաբեր թղթոս 'ի նախարարաց իւրոց զոմն որոյ անունն էր Բայնդուրբէկ. ընդ որում և այլս ներքինիս առաքեաց յաշխարհն արարատական ժողովել զորդիս և զաղջկունս վ̄ս թղթոյն. և ն̄ք գալով եկեալ հասին 'ի քաղաքն յերևան ։ Եւ յաւուր միում 'ի զբօսանս ելեալ շրջէին բայնդուրբէկն և ամիրգունայ խանն իշխանին. և զբօսնլով եկին յանապատն ուր բնակէր մօսէս վարդպետն. և անդէն բերեալ մօսէսի վարդապետին յայնմանէ պլխտակէ մոմէն աղերսեաց զեօթն մոմ բայնդուրբէկին. և զեօթն մոմ ամիրգունայ խանին ։ և բայնդուրբէկին տեսեալ զառաւել պայծառ՝ չքնաղ և հրաշալի զպլխտակութի մոմին. յոյժ զարմացաւ, և հաճեալ հաւանեցաւ. և ասաց, պահեմ զսա և տարեալ զաղերս մատուցանեմ շահին ։ Երբև զայն լուաւ ամիրգունայ խանն ասաց՝ որովհետև այդ̄պ ասացեր՝ և զիմս բաժին եդից ընդ քումդ՝ զի ընդ դմին աղերսեալ լիցի առաջի թղթերին ։ Իսկ մովսէս վարդապետն երբև ետես զբանս և զգործս իշխանացն. ասաց որովհետև այդ̄պ արարիք՝ զեօթնես մոմ բերեալ յաւելում ձիլ̄ր գոցա և այնպ̄ մատուցեք առաջի թղթորին ։ Իսկ 'ի զբօսա գործոց իւրոց բայնդուրբէկն գնացաւ թղթերն՝ և ընդ բազմաց և զա

նազա

նազանից աղերսիցն, մատոյց և զապխտակ մոմն առաջի Թագաւորին, որոց 'ի տեսանելն Թագաւորն առեալ զմոմն 'ի ձեռն իւր տեսանէր և զննէր, և հարցանէր թէ ուստի իցէ, և բայնդուր բէկն ասաց զուստին ։ արդ վասն այսորիկ Թագաւորն գրեաց զհրովարտակ իւր ամիրգունայ խանին զի առաքեսցէ զմովսէս վարդապետն առ ինքն ։ զոր և առանց իրիք յապաղելոյ առաքեաց ամիրգունայ խանն զմովսէս վարդապետն առ շահն ։

Սամնորոյ ելեալ վարդապետին մովսէսի յերևանայ գնաց 'ի քաղաքն բաղդատ զի անդ էր շահաբաս Թագաւորն, զի կամէր զքաղաքն բաղդատ յետ առնուլ յՕսմանցւոց, զորև էառ յետ սակաւուց աւուրց։ և մինչ տակաւին ոչէր առեալ զբաղդատ այլ շուրջպատեալ պատերազմէր, անդ մովսէս վարդապետն յանդիման եղև Թագաւորին, յորում ժամանակի էր Թուականն մեր, հազարևեօթանասունևհինգ, և Թագաւորն հարցումն արարեալ վասն ապխտակութեան մոմին, իսկ վարդապետն առաջի կացեալ ըստ պատշաճին տայր զպատասխանին ։

Ապա գրեաց շահն զհրովարտակ և ետ ցմովսէս վարդապետն՝ և առաքեաց յասպահան քաղաքն առ լալաբէկ իշխանն, որ 'ի Թագաւորէն քաղաքապետ կարգեալ էր ասպահանու, զի տացէ զհարիւր լիտր մոմ և զերիս ծառայս 'ի ծառայից Թագաւորին մովսէսի վարդապետին, և զամենայն ծախս նոցա հոգասցէ. և այգեստանեացն որոց և հաւանեսցի մովսէս վարդապետն անպատճառ տացեն նմա, զի անդ ապխտակեսցէ զմոմն. և ուսուցեալ զծառայսն տարցէ առաջի Թագաւորին ուրեք իցէ նա ։ Առեալ վարդապետին մովսէսի զարքունի հրովարտակն և եկն 'ի քաղաքն ասպահան, եցոյց լալաբէկին, և նա կա-

տարեաց զնմին հրամանս Թգւրին, տուեալ 'ի
Մովսէս զնմին և ծառայս երիս. և զայգին զոր Թե
լիմ խանի այգիաւէն : և Մովսէս յամիսս ութն
աշխատեցաւ անդ . պախտակացոյց զնմին՝ և ու
սոյց զծառայսն, և ապա առեալ զպախտակա
ցուցեալ մնմն և զծառայսն գնաց 'ի քաղաքն
Փահրապատ : քանզի անդ էր շահն : զի զԲաղ
դատ քաղաքն առեալ էր և դարձարարեալ գը
նացեալ էր 'ի Փահրապատ առ ի ձմերել անդ,
վորոյ անդ գնաց Մովսէս :

'Ի նմին աւուրսն անդ էր մեծ և փառաւոր իշ
խանն Ջուղայեցի Խօջայ Նազարն՝ որ յոյժ բարե
կամ էր Մովսէսի. և յորդոյ առաջի շահաբաս
Թգւրին : Որոյ ձեռամբն Մովսէս վարդպետն
մատոյց զպախտակ մնմն, և զուսուցեալ ծա
ռայսն առաջի Թգւորին, որոյ 'ի տեսանելն
յոյժ զուարճացաւ արքայ՝ և 'ի ձեռս առեալ
զբօսնոյր 'ի նմն, և բազմաւ յուսադրականաւ
բանիւ արձակեաց առ ժամուն զվարդպետն :

Հաւուրսն յայնոսիկ եկեալ էհաս տօն
ծննդեան և յայտնութեան Քի Յի մերոյ, և
ոչ սովորութիւն էր Մովսէսի հանապազ մեծա
հանդիսիւ կատարել զքրիստոնեական տօնսն, և
ևս առաւել զտօնս զայս բազմաւ պատրաստու
թբ և յարմարագունիւ կարգաւորութբ, քան
զի ինքն Թգւրն ևս հանդերձեալ էր 'ի տեսու
թի և 'ի զբօսանս տօնին գալ, որ և եկն : և
վարդպետն Մովսէս Թափեաց զերկու պախտակ մնմ
մարդաչափ և 'ի Ճրագալուցի գիշերն 'ի լուսա
նալ տօնին լուցեալ յերեկորեայ յանուն սրբոյ
Ածածնին և ինքն յուռին կացեալ հսկելով ցա
ռաւօտն ջերմագունիւ սիրով և հաստատունով
հաւատով, յորդաբղխիք արտասուօք աղօ
Թելով առ տէր, բարեխօս արկեալ առ միածին

Որդին

Որդին զտիրամայր սբ. Աստուածածինն զի շնորհալի ցուցցէ զտօնախմբութիւն այլահաւատոյ թագաւորին, և արկցէ զգութ և զողորմ՚ ՚ի սիրտսն նմա քրիստոնէի ազգին։ Արդ ողորմութեամբն Այ եղև ըստ խնդրոյ վարդապետին, զի յաւուր տօնին մինչ նստէր արքայ ՚ի զբօսանս տօնին՝ և վարդապետն զգեստաւորեալ հանդերձ պաշտօնէիւքն կատարէր զկարգն ջրօրհնեաց ։ յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ ընդ տօնախմբութիւն. և գթացեալ նմա Մովսէսի՝ որ և հարցումն ևս արարեալ էր թագաւորն յաղագս վարդապետին ընդ խօջայ նազարին, և նա զբանս բարիս և յոլով խօսեցեալ էր վասն Մովսէսի առաջի թագաւորին ։

Իսկ զկնի աւուրց ասաց արքայ ընդ խօջայ նազարին. զինչ խնդիրք ունի վարդապետն ձեր զի կատարեսցուք. զգանձ թէ զդաստակերտ, թէ զայլինչ, զորինչ կամի. պատասխանեալ էր խօջայ նազարն թէ սա այնպիսի այր է, որ զաշխարհաւ և զընչիւք նորին զանցարարեալ է՝ և բնաւ միւք ՚ի գոյանէ ոչ է կարիք սորա ։ այլ թէ զշնորհս առնես տալ սմա զպարգևս. զլուսաւորութիւն Էջմիածնի տուր. զի անդ սպասաւորելով եկեղեցւոյն այնմիկ աղօթեսցէ վասն կենաց թագաւորին ։ Զորոյ խնդիր յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ. և տուեալ էր Մովսէսի զլուսաւորութիւն սրբոյ Էջմիածնի թագաւորականաւ նոմոսիւ ։

Ապա Մովսէս վարդապետն եկեալ ՚ի Փահրաստապատու մեծիւք փառօք և անպատմաւ ցնծութեամբ. ոչ միայն իւր՝ այլև ամենից քրիստոնէից. եկեալ էհաս յերևան քաղաք, որ և ՚ի սբ Էջմիածինն. և առանց յապաղելոյ զձեռն ՚ի գործ էարկ նորոգութեան սրբոյ աթոռոյն. ՚ի թուականիս մերում. հազար և եօթանասուն և վեց.

՚ի վարդավառի պահոց երկու շաբաթ աւուրն որ է յունիսի ամսոյ քսան և չորսն զսկիզբն արարին շինութե՟ և նորոգութե՟։

Արդ լսելով զնորոգութի՟ ոչ գիտես թէ ոմ՟ էր աւերութեն. վ՟ որոյ հարկիմ գրել զաւերութեն. զի ծանիցեն զթշուառութի՟ սրբոյ աթոռոյն. որով և զցաւսն և զկսկիծն զոր ունէին ամ՟ ազգն Հայոց և վարդապետք ժամանակին վ՟ սրբոյ աթոռոյն. ընդ նմին և զաշխատանս մեծասի վարդապետին և զեւրոց աշակերտացն. և զտուրս և զողորմութի՟ս քրիստոնէից ՚ի նորոգումն սրբոյ աթոռոյն։

Ո՟վ ասէ մարգարէն դաւիթ, արարին զենէմ ո՟վ խուզս մրգապահաց. և եսայի մարգարէն ասէ վ՟ սիոնի, եբրև զհովանի իմէջ սեխենեաց. ըստ այսմ սարասի գոգցես և զամ՟ծաբնակն աթոռս։ զի ամենևին ունայնացեալ էր ՚ի սպասուց՟ածոց՝ և կողոպտեալ ՚ի զարդուց. ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասացութի և կամ ընթերցումն. ոչ զգեստ և ոչ շուրջառ, զի ոչ էր ժամակարգութի և պատարագ. մինչ զի Բ՟ի բջման տեղն՝ և նք սեղանն ևս ոչ ունէին զծածկոցս. ոչ կանթեղք, զի ոչ գոյր լոյս. այլ հանապազ ՚ի խաւարի. բայց այլազգի մահմետականն ամ՟ վառէր զճրագ ձիթոյ և դնէր ի վերայ բեմին. և այնևս երբեմն երբեմն վ՟ անցաւորաց ճանապարհորդաց. զի տեսանելով զայն զողորմութիւն արասցեն նմա։ ոչ խնկարկութի, զի ոչ գոյր բուրվառ և խունկ։ և սալայարկ յատակ եկեղեցւոյն քանդ քանդեալ. եղեալ որջ զեռնոց և սողնոց։ և մեծամեծք լուսամուտքն՝ զորս ունի՝ ամէնն ՚ի բացկայր առանց վանդակի. ուստի մտեալ ՚ի ներքս թռչունք ընտ՟ին զեկեղեցին ծատովք և ծղովք և այլոք գարշութք. զոր

յամ

յոմ աւուր հարկիւ սրբէաք ։ և ընդ այգն
ընդ առաւօտն 'ի լուսանալն ձայնք թռչնոցն
խափանէր զձայն ժամասացոյն ։

Իսկ յարտաքուստ կուսէ գլուխ կթղկէին,
և տանիքն ամքն . և երեսք որմոցն քանդքան-
դեալք և քարինքն թափեալք . և որմոց յատա-
կաց վէմքն փշրեալք և ծակոտեալք ։ Եւ 'ի վա-
ղեմեաց ժամանակաց որ շուրջ զեկեղեցեաւն չէ-
նութի եղեալ էր . և դարձեալ աւերեալ և
խնդ միմեանց փլուզեալ էր . այնքան բարձրա-
ցեալ էր հողն և մոխիրն . որ յամենից կողմանց
շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրա-
ցեալ էր աղբիւսն և հողն եկեալ և ծածկեալ
էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն որք
կան յարտաքուստ կողմանէ ։

Իսկ զարդք՝ և սպասք՝ և անօթք եկեղեցւոյն՝
և կամանտ բնաւ ոչ դոյր . զի զորինչ և լեալ
էր 'ի հնոց ժամանակաց՝ կթղկոսքն զամ վա-
ճառելով և գրաւ դնելով վատնեալ էին ։ և
արդ ևս գրաւ եդեալք անօթք դոյին առ մահ-
մետական իշխանս . զորս ազատեաց մօսէս վար-
դապետն ։ որ էր այժմ արխատակէսի հայրապետին
որդւոյ սրբոյն գրիգորի լուսաւորչին մերոյ ։
այլև զայլ աղքոց վանաց սրբոյն ստեփաննոսի .
ընդ որոց և զխաչ՝ և զսկիհ՝ և զբուրվառ՝ և
զշուրջառ՝ և այլևս ինչք ։

Եւ ասացեալ բանքս որք 'ի մէնջ ցուցանեն
զտեղին անբնակ գոլ 'ի մարդկանէ . և ասեմ
զիսկն ոչ էր ամենևին անբնակ . այլ դու հա-
մարեաց իբրև զանբնակս . վասն կթղկոսունքն՝
անդ յԷջմիածին ոչ բնակէին . այլ յերևան
քաղաքի 'ի կաթողիկէ յեկեղեցւոջն . և կամ
թէ 'ի շրջագայութիւն աշխարհաց ։ բայց սևա-
գլուխք ոմանք սինլիք որք և գաւեհիկք . որպէս

զդեղա

զգեղական հողագործս. որք վարնորդիւք մշա
կօք բնակեին յԷջմիածին. և զաւուրս տարւոյն
զբաղումն 'ի գեղորայսն անցուցանեին քան
թե յԷջմիածին:

Եւ յորժամ մօսես վարդապետն զսկիզբն արար
նորոգութե. տարակուսեին վս հողոյն և մոխ
րոյն որ բլրացեալ կայր շուրջանակի. թե զի
արդ լինի պեղել: բայց որովհետև կամքն ած
ային քաղրացեալ եր՝ և ձեռնարկուն գործոյն
նորին հաճութե՟ն եր. դիւրահնարիւ եղև
բարձումն հողոյն. վնզի ածին զջուր 'ի գետոյն
յորդ և վարար. և կապեցին 'ի կողմն ինչ հո
ղոյն. և զբազում մշակս արկին 'ի գործ՝ և սկսան
մշակքն փորել զհողն և տորոտալ ջրոյն. և
այնպես առնելով. ջուրն առեալ զհողն տա
ներ և քարն մնայր: որ 'ի սակաւ աւուրս փութա
նակի յամենից կողմանց բարձաւ հողն. և բա
ցաւ վայրն ամ. և եղև հարթայատակ գետին.
և մնացեալ քարինքն շարեցան 'ի յորմն տանցն.
լեալ ձեռնտու գործոյն. և ապա զլայն և ընդ
արձակ պարիսպ պատեցին շուրջանակի. յորե
նեալ զբուրքս ութն 'ի նմա:

Եւ զպարիսպն զոր շինեցին. այսպ ձեւե
ցին: Ոպ և տեսանի յեկեղեցւոջ անդ չորեքին
խորանք եկեղեցւոյն որք կան յօրինեալք 'ի նմա
ընդ չորս կողմն աշխարհիս. յարտաքուստ կու
ռե եկեղեցւոյն 'ի ճակատաց այս չորից խորա
նացս: Եւ ապա իմէջ պարսպին արևմտեան
կողմն շինեցին զդարպասս և զտունս 'ի պետս
ինքեանց և հիւրոց: և 'ի հիւսիսային կողմն և յա
րևելեան կողմն շինեցին խուցս 'ի բնակութի միա
բանից: և 'ի հարաւային կողմն շինեցին զսեղանա
տուն, զփռնատուն, զտնտեստուն, զհամբարա
նոցս ցորենոյ և այլոց նիւթոց: Եւ ամ շինու

ածքս

ածքս այսորիկ՝ միայն պարիսպն 'ի հողոյ եղև
շինեալ․ իսկ այլքն ամենեքեան լխտելով քա
րիւ և թրծելով աղիւսով և կրով և բռով շի
նեցին գեղեցկիւ և վայելչիւ յօրինուածով։

Յետայսորիկ զեկեղեցւոյ գմբէթի տա
նիսն նորոգեցին․ քանզի սալքն քանդեցեալք
և 'ի տեղւոյն խախտեցեալք էին։ Եւ թէ
ոք տենչացեալ գիտել կամիցի զչափ լուսակա
ռոյց Ա՟ծանկարի Ա՟ծաբնակի տաճարիս սրբոյ
Էջմիածնի այսքան է․ յիսուն հալապի գազ
երկայնքն է յարևելից դէպ յարևմուտս․ քա
ռասուն և ութն հալաբի լայնքն է հիւսիսոյ
դէպ 'ի հարաւ․ երեսուն և հինգ հալապի բար
ձրութին է 'ի ներքին կողմանէն կթ՟ղկէն 'ի պոր
տէն մինչև գետինն։ այսորիկ չափքս եկեղեցւոյ
մէջն է 'ի ներսի կողմանէն թող զպատն։

Եւ օր աւուր նորոգեալ հաստատէր զմի
աթոռն․ որով և ամ՟ կարգ և կրօնք հաւատոյս
քրիստոնէութե․ վասնզի համբաւ նորոգման
սրբոյ աթոռոյս հռչակեալ ծաւալեցաւ ընդ
ամ՟ աշխարհ, 'ի հոռոմաստան, 'ի պարսկաստան,
'ի քրդաստան, 'ի վրաստան, և ամենեքեան
զօրարձացեալք ցնծային։ Այլև յաշակերտաց
իւրոց առաքէր մօսէս վարդ՟պտս 'ի քաղաքո
թի յամ՟ն կողմանս․ որք գնացեալ հոգեբղխիւ
քարոզութ՟բ և բարեկրօնիւք վարուք հաստատէ
ին զկարգս և զկրօնս քրիստոնէականի հաւատոյս՝
և եկեղեցականի աւանդութե․ վ՟զի ուրեք գնայ
ին զճշմարտութե գործս ցուցանէին ըստ նմա
նութե վարդ՟պտին իւրեանց․ շինէին զեկեղե
ցիս, կարգէին զքահանայս՝ և ընկրկեալ կործա
նէին զհակառակորդս ճշմարտութե․ որով
զօրացեալ յառաջանայր ճշմարտութին։ Այլ
և հոգելից ս՟բ վարդ՟պտս տէր մօսէս կարգեաց
զդպրա

զդպրատուն 'ի մեծափառ մէջ ուխտն յոհանա-
վանք՝ ուր ժողովեաց զմանկունս յոլովս. և զա-
մենեցուն զծախսն և զպէտսն ինքն հոգայր. և
մանկունքն անզբաղ և անխափան ուսանէին զե-
կեղեցական ուսումն, և զգիրս Ս. ծաշունչս, և
զիմաստասիրականն որք եղեն ամենեքեան արք
պիտանիք և օգտակարք աշխարհի. վարդապետք,
եպիսկոպոսք, և աբեղայք, և երիցունք. և ոմանք
վանորայք, որք ամայացեալք 'ի խաւարի կային.
եղեն լցեալք միաբանիւք, աբեղայիւք, և կրօ-
նաւորօք, և գեղորայք վարժիւք երիցամբք:
Սորայ ոմանք ժողովուրդք Հայոց՝ որք յԵհա-
նուր աշխարհս բնակեալք էին յառաջին կաթո-
ղիկոսաց անկարգութեան ձանձրացեալք՝ և 'ի սո-
րին բարեկարգութեան մխիթարեալք՝ կամօք
և յօժարութեամբ կաթողիկոսիւ սորին կամէին զի
ինքն մեզ հայրս մեր Մովսէս վարդապետս լինի կաթո-
ղիկոս. որք գրովք և աղաչանօք թախանձէին
ամենից տեղեաց վարդապետք և եպիսկոպոսք և
երևելիք արք. զի յանձնառուցէ զպատիւն կա-
թողիկոսութեան. բայց նա հրաժարէր զանձն ան-
արժան ասելով առաքելականի պատուոյն:
Ի.ԼԵ այս Ի.Ճ տէր Մովսէս վարդապետ հա-
նապազ 'ի սրտի իւրում վարանէր. և ախրէր.
և ցաւէր. վասն հարկիւր թումանն մուղադային.
որ անտանելի ծանր բեռն և անխզելի անուր
եդաւ՝ ի վերայ սրբոյ աթոռոյն Էջմիածնի. ոչ
միայն սա այլև ամենայն ազգն Հայոց: Արև վասն փրկու-
թեան Ս. Էջմիածնակի մէջ աթոռոյն ոչ դանդաղեալ
ծուլացաւ խնայելով յինքն կամ 'ի ծերութեան
տկարութեան՝ այլ ելեալ գնաց 'ի դուռն արքայ-
ին 'ի քաղաքն զազբին՝. բանալի անդ էր թագւորն
շահաբաս. 'ի հազար և եօթանասուն և եօթն
ամի թուականիս մերում: և մատուցեալ այսր
և անդր

և անդր առ նախարարս թգ՟ւրին աղաչէր զնո ծանուցանել արքայի առ 'ի բառնալ զհարիւր թուման հարկն 'ի սրբոյ Էջմիածնէ. և նախարարքն պատեհ ոչ համարեցան ասելով՝ այս թգ՟ւրս յոյժ արծաթ ասէր և ագահ է. և յայդ-քան շահուց արծաթոյ ոչ զանցանէ. և մանաւանդ զի գործդ այդ խւր է հաստատեալ. որով առաւել տեսանի զի ոչ զանցանէ զդովաւ՝ վ՟որոյ պարտէ քեզ լռել 'ի ժամս և յաւուրսս յայսոսիկ. այլ մեք գտեալ զպատշաճ ժամ, խօսեսցուք առաջի արքայի. վ՟որոյ տխրեցելով և թախծեցելով սրտիւ դարձաւ 'ի Ղազբնոյ և եկն 'ի ս՟բ Էջմիածին ։

Իսկ արքայն շահաբաս ելեալ 'ի Ղազբինոյ գնաց 'ի Փահրատապատ 'ի քաղաքն որ կոչի աշրաւ. առ 'ի ձմերել անդ. և ըստ հիւծականի բնութեան մարդկան հիւանդացեալ մեռաւ 'ի հազար և եօթանասուն և ութն ամի թուականութեան մերում. և յունվարի ամսոյ եօթն և կտակաւ հաստատեաց տալ զթգ՟ւրութիւն թոռին իւրոյ. ք՟զի արատամիտ և բազմախորհուրդ արքայս շահաբաս, յորդւոց իւրոց զոմանս սպան՝ և զոմանս կուրացոյց վ՟ն երկիւղի՝ զի մի գուցէ թգ՟րեցուսցեն իշխանքն. և մնացեալ էր թոռն մի որդի աւագի որդւոյն իւրոյ. վ՟որոյ ետ զթգ՟ւրութիւն թոռին իւրոյ ։ Իսկ ժողովեալ ա՟մքն նախարարք՝ և հաւատարիմք տան թգ՟ւրին թգ՟ւրեցուցին զթոռն, և կոչեցին զանուն նորա թգ՟ւրին շահսէֆի. զի վիճակաւ եդին զանուն ն՟ր. որ և վիճակն՝ և կոչումն անուանն ուղղակի դիպեցաւ. զի և անուն նոր ընծայ թագաւորիս հօրն սէֆի էր ։ և նստաւ թգ՟ր նոր ընծայ շահսէֆի 'ի նոյն թուականին. հազար և եօթանասուն և ութն ամին. և յունվարի ամսոյ տասնեւինն ։

Իսկ

Աւ եղև ժամանակս այս պատշաճ և ըմբռն
ժամ. վ̃ն բառնալոյ հարկիւր Թումանն մուղա
դային. վասնորոյ ժողովուրդքն Ջուղայեցւոց
բնակեալքն 'ի քաղաքն Սպահան. և մանաւ-
անդ ողորմութեցն Ա. Յ̃ արժանին Պ̃ասեր
մեծ իշխանն խօջայ Նազար գրեալ զթուղթ
արընթացիւ փայեկաւ հասուցին յԷջմիածին
առ մօտէս վարդապետն. վաղվաղակի հասա
նել 'ի դուռն նորընծայ Թ̃գրին. վ̃ն բառնալոյ
հարկիւր Թումանին. զոր և անյապաղիւ ձեպով
ելեալ մօտէս վարդ̃պտն գնաց յասպահան. քա
ղաք 'ի դուռն Թ̃գւորին: և կացեալ 'ի դրան
Թ̃գրին ամիս ութ. և տեսեալ զա̃մն նախա
րարս ըզհինս և զնորս և հաճեալ զմիտս նշ̃ բաղ
մաւ ընծայիւ և աղերսիւ:

Ապա մ̃բ այրն Ա. Յ̃ պատրաստեաց զընծայ
ոճ̃ վայել է Թ̃գրաց. սկուտեղամբ զուտ ոսկի
դահեկան. և զայլևս ինչս պատուականս. և
գրեալ զգիրս յօժարութե̃, որ է արզայ. և
վարդ̃պտն և խօջայ Նազարն միջնորդութբ̃
նախարարացն ձօնեցին առաջի Թ̃գրին. որ 'ի
հարցանելն արքայի վ̃ն վարդ̃պտին. երաշխաւ-
արար զնա խօջայ Նազարն. պատմելով նմա
զազնուականութի̃ վարդ̃պտին: այլև թէ նա
խածանօթ և հաճելի ծառայ էր յառաջագոյն
մեծի Թ̃գւորին հաւոյն քում. և այժմ ես ա-
ղօթող է վասն կենաց Թ̃գւորին: բայց զայս ինչ
խնդիրս ունի՝ զի այց արարեալ գթասցի 'ի տա
ռապեալ ժողովուրդս իւր արքայ՝ և զծանր
բեռն, զոր ընդ վայր և 'ի տարապարտուց եդաւ
ի վզ̃ մեր. այսինքն հարկիւր Թումանն մուղա
դէն. հրամայեսցէ արքայ բառնալ զայն:

Աւ արքայ շահսէֆի անդէն 'ի հանդիսին
յոլով բանս խօսեցաւ ընդ խօջայ Նազարին:

այլև եհարց 'ի մօսէսէ վրդպտէն վասն մուղադայ հարիւր Թումանին․ և ողորմութն և շնորհօքն Ածայնովք․ ամէն բանք վրդպտին դիւրին և ախորժ Թուէր առաջի Թգւրին։ քանզի ամենաթգւրն Այ, որ ունի 'ի ձեռին զսիրտ Թգւրաց․ հաճեցոյց և քաղցրացոյց զկամս Թգւրին որ 'ի լուր ամի հանդիսին ասաց Թէ անցայ 'ի հարիւր Թուման մուղադայէդ՝ զոր տայիք 'ի դիւան Թգւրին․ այսուհետև կացէք ազատ և աղօթեցէք՝ վն մերոյ կենաց և յաջողութե։ Յայնժամ խօջայ Նազարն՝ և մօսէս վրդպտն՝ և ամէն իշխանքն՝ որք կային առաջի Թգւրին․ ամենեքեան խոնարհեալ երկիր պագին Թգւրին․ և համբարձեալ զձեռս իւրց 'ի ձայն գոհութե օրհնեցին զԱծ և զԹգւրն։ և ուրախութբ արձակեալք յերեսաց ատենին գնացին 'ի տեղիս իւրեանց։ Յայնուհետև մօսէս վարդպտն և խօջայ Նազարն, հանապազօր շրջելով 'ի դրունս իշխանաց․ և առ վերակացուս դիւանականաց մատենից․ և առ գծագիրսն․ այնքան աշխատեցան մինչ զի յամենից մատենից ուրև գրեալ կայր բանն այն․ յամէ հանեալ արտաքսեցին։

Յու ապա գրեաց միւս ևս զորդւոյ խօջայ Նազարն և մատոյց առաջի Թգւրին խնդրելով՝ զի տացէ զնոմոս Թգւրականաւ կնքով վն բառնալոյ հարիւր Թուման մուղադային։ այլև ընմին խնդրեաց յարքայէ տալ զիշխանութի կթղկսութե մօսէսի վարդպտին։ Յու արքայ շահսէֆի կատարեաց զամն խնդիրս նր․ զի ետ զնոմոս Թգւրականաւ կնքով ազդու և հաստու բանիւ․ Թէ բարձի զհարիւր Թուման մուղադայն, որ 'ի մերոց Թգւրաց եդեալ էր իվր աթոռոյն ձերոյ Էջմիածնի․ այլև ետու զհրաման կա

թղկութեն մովսեսի վարդապետին ըստ հայցուա
ծոյ ամ ազգին Հայոց: Որդ այսպէս բազմաբերկիւ
աշխատութբ. և յոյժ զբաղում գանձս ծախե
լով իբր թէ հազար թումանս. հազիւ թէ կա
րաց բառնալ զծանր բեռն հարկին 'ի սրբոյ
աթոռոյն սուրբ վարդապետն մովսես. և առեալ
զթգրկանոնոն դարձաւ մեծաւ ուրախու
թբ և եկեալ էհաս յանծարենակ յաթոռն 'ի սբ
Էջմիածինն. և սփռեցաւ համբաւ ազատու
թեն սրբոյ աթոռոյն յընդհանուր աշխարհ
յազգս Հայոց. և ամենեքեան լցեալք անպատ
մաւ ուրախութբ 'ի ձայն ցնծութեն գոհա
նային զԱծ:

Եւ այնուհետև յամենից աշխարհաց արք
երևելիք եկեղեցականք և աշխարհականք.
սկսան առաւել քան առաքել զթուղթս ա
ղերսանաց առ մովսես վարդապետն՝ խնդրելին և
աղաչելին զի մինչ պատճառս յօգնեցէ այլ վն
հաստատութե հաւատոյ՝ և կարգի եկեղեցւոյ
յանձն առցէ զկթղկոսութիւն: և այս թուղթ
աղաչանաց առաքեցաւ 'ի պարսկաստանեայ, 'ի
վրաստանեայ, 'ի քրդաստանեայ, 'ի հոռոմաստա
նեայ: Եւ սբ հայրս մեր՝ ոչ թէ 'ի փառս անձին.
որ փառաւորեալ էր յԱյ և 'ի մարդկանէ, այլ
վն օգտի ժողովրդեան Այ և հոգևորաց կրօ
նից հաստատութեն լսօղ եղեալ աղաչանաց ամե
նեցուն ընկալաւ զաստիճան կթղկոսութե. և
օծմամբ ամենասուրբ հոգւոյն Այ օծաւ հայրա
պետ ամ ազգին Հայոց՝ պայծառ և պանծալի
ժառանգորդ բարձրագահ աթոռոյն սրբոյ
Էջմիածնի. 'ի մերում թուականութես հա
զար և եօթանասունեւութ ամի յունվարի ամսոյ
տասնևերից. յօր տնօրէնութե Տն: Եւ ըստ բանին
Տն, ճրագ արփիաւորիչ եդաւ 'ի բարձու աշ

տակա

տականի 'ի գերագահ աթոռս . լինել լուսատու-
տանս արամեան : և ածաշնորհիւ վարդապետու-
թեամբ լուսով մխիթարէր զամենայն քաղցու քարո-
զութե ուղղելով 'ի ճանապարհս արդարութե :

Սա էր սուրբ հայրս մեր մաքրակենցաղն՝ և սրբա-
սնունդ , երկայնամիտ և ողորմած , որ և բա-
զում գերիք ազատեցան 'ի գերչաց ձեռամբ
սորա . վասնզի յաւուրս սորա անհաշտ խռովու-
թիւն էր ի մէջ Պարսից և Օսմանցւոց . որոյ սակս
աւար և գերութիւն կարի յոլով լինէր յերկուց
կողմանց . և զորս և տեսանէր 'ի գերեացն . ան-
վրէպ առնոյր գնով և ազատէր : Սա եկաց սա
'ի բարձրագահ աթոռն 'ի սուրբ Էջմիածինն .
ուղղիւ վարդապետութեամբ . նորոգեաց զաւերակս
նորոգչինութեամբ և պայծառացոյց միաբանօք
և վարդապետօք . և յարմարիւ և հաստատանով ժա-
մակարգութեամբ . և փարթամացոյց եկեղեցակա-
նաւ անօթով՝ և մարմնականաւ ստացուածով :
և եկաց սա կաթողիկոս յերիս ամս և 'ի կէս . և 'ի
թուականիս հազար և ութսուն և մեկ ամին
'ի մայիսի ամսոյ տասներորդին վախճանեցաւ .
պակասեալ աստի մահուամբ և յաւելաւ առ
Տէր հանգստեամբ . և գնաց առ անձկալին իւր
Քրիստոսի . զոր հանապազ մշտապաղատիւ և սրբա-
նուէրիւ աղօթիւք կրէր յոգի իւր :

Նա պատահեցաւ լինել վախճան սորա յե-
րեւան քաղաքի 'ի վանս դամբարանի սրբոյ ա-
ռաքելոյն անանիայի . վասնորոյ և տարեալ 'ի հա-
սարակաց գերեզմանատունս , 'ի կողեռ կոչե-
ցեալ բլուրն . մն գերեզմանի կողուան վարդա-
պետին , որ անդ է : և յարահուպ գերեզմանի
կողուան վարդապետին՝ և Մելքիսեթի վարդապետին .
ի մէջ երկուցս այսոցիկ պատրաստեցին զդիր
հանգստեան սրբոյս այսորիկ . և անդէն ի մէջ

երկուց կափուցելոց տապանաց եդին զորբա
անեալ նշխար մարմնոյ նր մեծաւ պատուով
և փառօք. 'ի փառս Քի և 'ի բարեխօսութի
ամենեցուն Քրիստոնէից ։

---

Վասն վարդապետութեն և կենցաղութեն սրբոյն փիլիպպոսի ։
Յորում և վերանորոգութեն եկեղեցեաց , որբուհեաց
կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և
յայտնելոյ նշխարաց նոցին ։

ԽԸ ։

# Տ ՓԻԼԻՊՊՈՍ ԿՐ.ԹՈՒ

ղնկոսն էր յերկրէն բարմայ . որ
այժմ ասի աղուակ . 'ի գեղջէն որոյ
զանունն կոչէն երընկան ։ գոլով սորա 'ի տիս
տղայութե չորեքտասանց ամաց աւելի կամ
պակաս . լուեալ զճգնողական վարսմիայնակե
ցաց մեծի անապատին . մեծատենչիւ փափագ
մամբ ելեալ գնաց 'ի մեծ անապատն լինել կրօ
նաւոր . և հետևել առաքինականաց վարուց
մաքրակենցաղի սրբութե . որոյ կարի փա
փագէր ։ Իսկ կրօնաւորքն անապատին ոչ թո
ղին զնա յանապատն. վս տղայականի հասակին
և անմօրուս գոլոյն . սակայն նա ոչ դարձաւ
կրկին յաշխարհ՝ այլ անդէն եկաց արտաքոյ
անապատին իմէջ մայրեաց՝ որ շուրջ էր զանա
պատիւն . և համբերէր այնպէս զամիս ութ ։

Ընդ այն ժամանակս մտեալ կեթղկոն տակաւ
ին վարդապետ գոլով քարոզութե շրջէր յաշխար
հի . և լուսաւորէր զամ մարդ իբրև զարե
գակն . իսկ հայրն մեծի անապատին սարգիս
պարոնտէրն . ետ զփիլիպպոսն յաշակերտու
թիւն մեծս այս վարդապետին ։ Նա որ կացեալ փիլիպ
պոս էհաս յարբունս հասակի 'ի տիս երիտա
սարդութե . օրհնեցին զնա աբեղայ կուսա

կրօն

կրօն քահանայ . և նա 'ի տուէ և 'ի գիշերի հե-
տևէր ճգնողականաց վարուց . և գործոց առա-
քինութեան . և յընթերցումն և յուսումն աստուածայ-
նոց գրոց . որոյ զառաջադիմութիւն տեսանե-
լով վարդապետին Մովսէսի . Խորով հաւանու-
թեամբ , և վկայութեամբ ամենից եղբարց , ետ նմա
զիշխանութիւն վարդապետական . և յետ ամաց ինչ
զգաւազան վարդապետական . և 'ի հազար և եօթա-
նասուն և ինն թուին օրհնեաց զնա եպիսկոպոս :

Իսկ 'ի հազար և ութսուն և մի թուին՝ յոր
ժամ եհաս վախճան Մովսէսի կաթողիկոսին , ժողո-
վեցան առ նա եպիսկոպոսք և վարդապետք՝ և երևե-
լի արք . և ողբալով ասացին , որովհետև այդպէս
հաճեցաւ վասն քո Տէրն և տուօղն կենաց՝ զի
մեկնիս և գնաս 'ի մէնջ : այլ արդ խնդրեմք 'ի
հայրախնամող գթոյ քո զի մի կարի թողու-
ցուս զմեզ որբս՝ այլ յայտնեա մեզ թէ զով ոք
տաս մեզ լինել հայր և հովիւ զկնի քո՝ և նա
ասաց , դուք գիտէք՝ զոր ոք և կամիք ընտրեցէք :
Իսկ բանք ժողովոյն ասացին , մեք բոլոր աշ-
խարհ զքեզ ընտրեցաք . և այժմ դու զով ոք և
ընտրես ընդունելի է մեզ . և նա ասաց ես զփի-
լիպոս վարդապետն կամիմ լինել փոխանորդ իմ ,
և յաջորդ սրբոյ աթոռոյն Էջմիածնի . և նոքա
ամենեքեան իբրև զայն լուան յօժարիւք կամօք
հաճեցան . և ընկալան զփիլիպպոսն լինել կաթո-
ղիկոս : Իբրև ծաւալեցաւ համբաւ մահուանն
Մովսէսի յամենայն աշխարհ յարևելս և յարևմուտս նա-
և բանն այն . թէ վասն փիլիպպոսի պատուիրեալ
է առնել կաթողիկոս . ամենեքեան կամօք և յօժա-
րութեամբ հաճեալ հաւանեցան . վասնորոյ Խոջայքն
չիւրոց տեղեաց առաքեցին զթուղթս վկայա-
կանս զի փիլիպպոս վարդապետն լինիցի կաթողիկոս .
և մինչ 'ի գալ թղթոցն էանց այն ամն . և եհաս

իմր Թուականն հազար և ութսունևերկու յորում ամի օրհնեցին զնա կթղիկոս օծմամբ Հոգւոյն սրբոյ. յամսեանն յունվարի տասնևերից. 'ի տօնի տնօրէնութեն Տ̄ն̄: Նաև ազգս Հայկազեան՝ Թէպէտ իմր մահուան մօսէսի վշտալիցք լեալ տրտմեցան. այլ 'ի յաջորդելն փիլիպպոսի բերկրեալ զուարճացան. զի փոխանակ հօր եկաց որդին՝ իշխան հանուր ազգին.

Իսկ յորժամ ժամանեալ Թուականն մեր էհաս հազար և ութսունևչորս ամն Թ̄ւ̄րն ստամբօլայ սուլթան մուրատ կոչեցեալ՝ այր կարի խրոխտ հզօր յաղթող և իմաստուն. ելեալ 'ի ստամբօլայ եօթն հարիւր հազար հեծելազօրօք, և եկն յաշխարհս արարադու. և շուրջ նստեալ զբերդիւն երեվանու պատեալ պաշարեաց զնա. և յաւուրս ինն էառ զբերդն, և զիշխան բերդին զԹահմազղուլի խանն, զոր դին ամիրգունայ խանին կալեալ առաքեաց 'ի կոստանդնուպօլիս. և 'ի նախարարաց իւրոց զոմն բարեբարոյ և խելացի իշխան. որում անունն էր մուրթուզայ փաշայ. հաստատեաց իշխան իմէջ բերդին տասնևհինգ հազար սպառազինիւք և ընտրելովք հեծելօք. և ինքն անցեալ գնաց 'ի Թաւրէզ քաղաքն. և անտի դարձաւ իմր վանայ և գնաց 'ի տեղի իւր.

Երբև էանց այն ամառն. և 'ի գալ ձմեռանն՝ յորում էր Թուականն մեր հազար և ութսուն և հինգ, ելեալ Թ̄ւ̄րն Պարսից շահսէֆի հարիւր հազար հեծելօք և եկեալ էմուտ յաշխարհս արարադու. և նստաւ իմր բերդին երեվանայ յաւուրս նուննևերեք՝ մեծաւ տաժանմամբ և բազմօք չարչարանօք, և արեանց հեղմամբ հազիւ Թէ կարաց յետ առնուլ զբերդն 'ի ձեռաց Օսմանցւոց: Նաև 'ի շարժմանէ այսյ

երկուց

երկուց ինքնակալաց Թգ̃րաց աւերեալ ապակա նեցան աշխարհ.ք արևելից և արևմտից. և մանաւանդ աշխարհն Արարադու խուռն.ք շրջակայիւք գաւառօքն։ վ̃ զի երկոքին Թգ̃ր.քն իւր̃ հեծելօքն և հետևելովքն անդր գումարեալ կատարեցին զգործս իւրեանց, և դարձան։

Իսկ սբ̃ աթոռն Էջմիածին բաց յեկեղեցւոյն՝ և գմբեթաշէն տանցն՝ ամ̃ն բնաւին աւերեցան. զի որինչ փայտակերտ տունք և շէնք կային ք.անդեցան։ վ̃որոյ տէր փիլիպպոս կթ̃ղկոսս բազմաերկիւղ վաստակօք զա̃մն շինուածսն վերստին շինեաց բովանդակ. քանզի վ̃ միայն փայտեղինաց շինուածոց զհաղար ղուռուշ նաղտ դրամ նորին արհեստաւորացն ետ։ Եւ ի մէջ սեղանատանն հացկերութե սեղանն՝ և որ 'ի նմա այլ կահ.ք էին, յառաջն որ շինեցաւ 'ի ժամանակս մովսէսի, փայտակերտ շինեցաւ. վ̃որոյ դիւրաւ աւերեցաւ. այլ այժմ փիլիպպոս կթ̃ղկոսն քարիւ շինեաց զսեղան հացկերութին. և զտեղի նստելոյն և զալայարկ յատակս նորին. զի մի դիւրաւ աւերեսցի 'ի ժամանակս հեծելաշարժութե։ Եւ արևելեայ կողման խուցսն բովանդակ նոր շինեցաւ. վ̃որոյ ոչ ըստ առաջնոյ ձևոյն է. այլ այլով ձևով շինեալ է։ Նաև զեկեղեցւոյ տանիսն, զատ 'ի գմբէթի գաւակէն, զբովանդակն նորոգեաց։ Եւ քառակապ փարշն, որ շուրջ զեկեղեցեաւն է. և միւս փարշն, որ առաջի խցացն և այլ տանցն է։ Եւ արտաքոյ պարսպին մերձ հարաւայնոյ դրանն երկու գմբեթաշէնք ձիթահանք նոր շինեցան զի ոչ գոյր բնաւ։ Օ̃տ յայսցանէ և զայլս մասնաւոր շինուածս բազում շինեաց ասա և անդ՝ զորս յանուանէ ոչ յիշեմք։

Իսկ զերևանայ անապատն զորմէ ասացաք դամբարան գոլ անանիայի առաքելոյ· որինչ և շինուածք գոյր անդ բովանդակ փայտակերտ էր զատ 'ի մատուէն· և սորա ամ̃ն քանդեալք աւերեցան 'ի գալ վերոյ ասացեալ երկուց թ̃գրացն։ որև զայնս ևս զբովանդակն ամ̃ վերստին շինեաց· ոչ թէ փայտիւ՝ այլ քարիւ և բռով գմբէթեայ՝ զժամատունն, զսեղանատունն՝ զտնտեսատունն՝ զխուցսն՝ և զայլևս շինուածս ամենեսեան։

Յետ կատարման ամենից շինուածոց՝ որյԷջմիածին և որ յանապատն· 'ի Թուին հազա̃ր և ութսուն և վեց գնացն̃ք հայրն մեր տ̃ր փիլիպպոս կթ̃ղկոս յասպահան քաղաք՝ իմէջ քրիստոնէից որք անդ՝ եկաց յամմի և կէս քարոզելով ն̃ց զօրէնս Ա̃ծ՝ և հաստատելով 'ի հաւատոքն̃ականս· այլև ժողովէր 'ի նոցունց զնուիրակն սրբոյ Էջմիածնի։ և ջուղեցիք և ամ̃քն քրիստոնեայքն ընդունէին զնա մեծիւք և բազմապատիւք փառօք իբրև զհրեշտակ Ա̃յ վ̃ս ճգնազդեաց և առաքինականաց վարուց նորա։

Իսկ վ̃ս սրբոյ լուսաւորչի Ա̃ջին· որ առ կային յասպահանէր, ոչ̃ յառաջագոյն պատմեցաք վ̃ս ն̃ր թէ հրամանաւ առաջին շահաբասին տարան զԱ̃ջն 'ի քաղաքն ասպահան։ Այս փիլիպպոս կթ̃ղկս հանապազ ըղձատոչորիւ և խանդակաթիւ տենչմամբ փափագէր, թէ որով արդեօք իցէ հնար զի առեալ զս̃բ Ա̃ջն բերցէ 'ի ս̃բ Էջմիածին։ որոյ վ̃ս բազում աւուրս խնդրանօք խօսեցաւ ընդ քահանայս և ընդ ժողովուրդս ջուղեցւոց· և մանաւանդ ընդ մեծահաւատ և Ա̃ծասէր իշխանին խօջայ սարփրազին՝ որդւոյ խօջայ նազարին· որ յարդեանս ժամանակի սա էր աւագ ջուղայեցւոց·

խօսէր

խօսէր և աղաչէր փիլիպպոս կաթողիկոսս զի տա-
ցեն զԼուսաւորչի Ս. Աջն 'ի նա. որ տարցէ 'ի մէջ
Էջմիածինն, 'ի տեղին իւր:

Իսկ Ջուղայեցիքն ոչ կամէին տալ զսբ Ս. Աջն
և կամ հեռանալ նմին յիւրեանց միջէն. վասն զի ա-
սէին յօտարոտի աշխարհի և յայլասեռից ազգաց
միջի բնակեալեմք. և մանաւանդ խեղճ նենգ-
ժոտ և օձաբարոյ ազգին Պարսից. և ոչ ունիմք
զնշան ինչ և առիթ հաստատութեան հաւատոյս
քրիստոնէականի. ոչ վանորայք և տեղիք ուխ-
տից. և ոչ քրիստոսականաց սրբոց նշանաց կառուց-
մունք. ոչ գերեզմանն և դամբարան սրբոց Ս. Տ.
և կամ մերոց հարց և հաւուց նախնեաց: այլ մի-
այն այս մեր Ս. Աջս է զորոյ զհրաշագործութիւնս
տեսանելով նորաժամանից զաւակաց մերոց
մնան 'ի հաւատս քրիստոսական. թէ և զայս
ևս առեալ տարցիս. որով մխիթարիցուք յերկ-
րիս պանդխտութեան յոր կամքս: Արդ այսու
պատճառաւ ոչ կամեցան Ջուղայեցիքն տալ
զՍ. Աջն. վասն որոյ պատճառս յօժարեալ ասացին առ
փիլիպպոս կաթողիկոս՝ թէ զՍ. Աջս սրբոյ Լուսաւոր-
չիս՝ զոր դու խնդրես 'ի մէնջ՝ արքային Պարսից
բերեալ և յանձնեալէ 'ի մեզ. և մեք զիարդ կա-
րեմք տալ զսա քեզ առանց թագաւորականի
հրամանի. վասն զի երկնչիմք 'ի թագաւորականաց
պատժոց. և նենգութէ մատնողաց:

Իսկ տէր փիլիպպոս կաթողիկոսն, այնուհետև
երևելի արամբքն Հայոց՝ որք էին յերևանցւոց
ժողովրդեանն. զի նք կամէին զգնալն Ս. Աջոյն
յԷջմիածին, և սկսաւ շրջիլ 'ի դրունս իշխա-
նաց թագաւորին, և առատաձեռնիւք տրօք զսիր-
տըս մեծին հաճեցոյց: Իսկ ապա յետ մեծին
լցեալ զուտ ոսկի դահեկան յոսկուտեղ՝ և Ռ
նմին գրեալ զթուղթ արքայի մատոյց առաջի

շահասիրի արքայի, խնդրելով 'ի նմանէ զհրա
ման տալոյ զԱ.ջ սբյ լուսաւորչին: Իսկ Տէրն
և Աստուածն ամենից յաւիտենից և ազգաց՝ որ 'ի ձե
ռին ունի զսիրտս ամենից թագաւորաց՝ և յոր կողմն կա
մի շրջէ զնա, և 'ի ժամուս յայսմիկ քաղցրացոյց
զսիրտս թագաւորին, որ արար զշնորհս հայրապետին.
և կատարեաց զխնդրուածս նորին, և ետ զհրա
ման գրով և թագաւորական կնքով· զի տացեն
Ջուղեցիքն զԱ.ջ սբյ լուսաւորչին 'ի ձեռ փիլիպ
պոս կաթողիկոսին: Իբրև էառ փիլիպպոս կաթողիկոսն
զնամակս հրամանաց թագաւորին՝ եբեր առ թո
ռանն խօջայ սաֆարին, զի որդիքն վախճա
նեալք էին, և թոռունքն ոչ կամեցան տալ
զԱ.ջն, որոց սաստեաց կաթողիկոսն բարկութբ մե
ծաւ. և նոքա երկուցեալք 'ի սրբութենէ նր. և 'ի
հայրապետականաց անիծիցն թուլացան 'ի պնդու
թենէ: Եւ հայրապետն տէր փիլիպպոս բազ
մօք քահանայիւք ինքնին գնաց 'ի տուն խօ
ջայ սափարին, էառ անտի զԱ.ջն, և էբեր 'ի
խօջենց եկեղեցին. և յաւուր կիրակէի մատոյց
զպատարագ և եբաց զԱ.ջն, յորոյ համբուրել ժո
ղովեցան ամենայն Ջուղեցիք՝ և արարին զուխտ, և
տակաւին ընդդիմանային Ջուղեցիք, և ոչ
թողուին տանել զԱ.ջն, վասն որոյ գաղտաբար
հանեալ անտի զԱ.ջն եբերին 'ի վանքն Ջուղայու,
և անտի ևս թաքուն տարան 'ի քաղաքն ի մէջ
Երևանեցւոց, և անտի ևս թաքնաբար հանեալ
տարան 'ի բրինջլուի քարվանսարէն, և եդին
ի մէջ բեռանց առն ումեմն քրիստոնեայ վաճ
առականի, որոյ անունն էր մարգարայ, որ էր
'ի գաւառէն գողթան, 'ի գեղջէն ցղնայ. որ
վն վաճառականութե եկեալ էր յասպահան,
և նա առեալ զԱ.ջն բեռամբն համդերձ ըստ
կարգի վաճառականաց յառաջագոյն գնա
ցեալ

ցեալ էհաս 'ի Թաւրէզ, և յայսցանէ ոչինչ ընդունէին ջուղայեցիք ։ և ապա փիլիպպոս կաթողիկոսն եկեալ 'ի սպահանայ գնաց 'ի Թաւրէզ՝ էառ զԱջն 'ի մարգարէէն և բերեալ հասոյց 'ի սբ Էջմիածինն՝ ինորին սեպհական աթոռն ։ Եւ եղև գալն սորա լուսաւորչի Աջոյն յասպահանայ 'ի սբ Էջմիածինն յաթոռն իւր ։ հազար և ութսունևեօթն թուականիս մերում, 'ի սեպտեմբերի ամսոյ քսանին ։

Եւ եղև սբ հայրապետաւս փիլիպպոսի կաթողիկոսութեն՝ որ աւուր զօրանայր հաստատիլ զի Տր էր ընդ նմա, քանզի էր վարուքն յոյժ ճգնօղ՝ և պահօղ՝ և մտօքն սրբախորհուրդ, և անձանձիր յաղօթս և 'ի խօսակցութիւն ԱՅ, որ զինչ և խնդրէր յԱՅ զամն անթերի պարգևէր ԱԾ ։ վն զի մերում աւուր իսկ տեսաք զի բազում դիւահարք նորին աղօթիւք ազատեցան, և հիւանդք, և պէսպէս ցաւագարք, և անդամալոյծք առողջացան, և ամուլ կանայք աղօթիւք նր ծնան զաւակս ։ Յորոյ արարեալ բժշկութեն զերկուսն միայն աստանօր յիշեմ ։ մինչ էր եղբարք յոլովք միաբանութբ բնակեալ 'ի սբ Էջմիածին առ փիլիպպոսիւ կաթողիկոսիւս, պատահեցաւ ումեմն եղբօր այսահարիլ ։ և այնքան յաճախեաց չարն, մինչ զի առեալ վարէր զնա արտաքոյ շինութե 'ի դաշտավայրս և յանդս և այսր և անդր յածեցուցանէր բացեայ 'ի մարդկանէ ։ զոր կալեալ ածէին միշտ 'ի վանքն, և ապա յետոյ եդին երկաթեայ ոտնակապ յոտս նր, և այնպէս պահելով յամ աւուր կարդային զաւետարան քահանայքն, և երկարեցաւ այսպէս յաւուրս յիսուն ։ Յայս յաւուր միում որ էր կիրակէ յետ մատուցանելոյ փրկականի խորհրդոյ սբ պատարագին, յորժամ ժո-

զոլորդքն ամէն եղեալք յեկեղեցւոյն գնացին, տէր փիլիպպոս հայրապետն հրամայեաց ածել զայսակիր եղբայրն յեկեղեցին ի մէջ ատենին՝ զի պատարագօղ քահանայն սրբազգեստիւն զաւետարան կարդասցէ ի վ̃ր նր̃։ զայս ասաց տէր փիլիպպոս, և ինքն եղեալ գնաց 'ի տուն, զի ունէր զգործ հարկաւոր, քանզի արք ոմանք պատուաւորք եկեալ էին հիւր նմա, գնացեալ առ նս̃ եած առաջի նց̃ զսեղան. և սուղինչ յամեալ առ նս̃ յաղագս շահելոյ զնս̃ ապա էթող զնս̃ 'ի սեղան հացկերութեն, և ինքն եկն յեկեղեցին։ և յարևմտեայ դրանէ եկեղեցւոյն մտեալ հանդարտութբ̃ և խաղաղիկ եկն մինչև մերձ ատենին, և անդ անկեալ ի վ̃ր ծնկաց իւրոց ունելով զդէմս իւր հանդէպ սեղանոյն սբ̃յ։ և 'ի չափ միոյ գոռղայի սաղմոսի սրտառուչիւք պաղատանօք և յորդիւք արտասուօք աղօթեաց։ յայնժամ այսակիր այրն կամէր զերծանիլ և փախչիլ 'ի ձեռաց ունողացն. և իբրև ոչ կարաց զերծանիլ՝ յայնժամ ուժգին և բարձրաձայն գոչմամբ աղաղակեաց և անկաւ 'ի գետին, և ժայթքեաց. և եղև իբրև զմեռեալ։ ապա այնուհետև դադարեաց տէր փիլիպպոս յաղօթից. և մերձակայիցն հրամայեաց բառնալ զնա և տանիլ 'ի տուն, և մատուցեալ սպասաւորաց եկեղեցւոյն սրբեցին զտեղին ժայթքեալ։ և յայնմանէ օրէ և առյապայ շնորհօքն Քի̃, և աղօթիւք առնն Այ̃ տեառն փիլիպպոսի ազատեալ եղև այն եղբայրն յախտէն յայնմանէ։ և ազատեալ եղբայրն ինքն պատմէր՝ թէ մինչ կալեալ ունէին զիս եղբարքն 'ի ներքոյ աւետարանին, որ կարդայր ժամարարն, տեսանէի զի կայր պատեալ զանձամբ իմով մեծ և ահագին վիշապ օձ մի սեաւ.

սեաւ ընդ մէջս, և ընդ պարանոցս, և ամենեւ մարմնովս։ այլև տեսի զփիլիպպոս հոգևոր տէրն, զի ունէր 'ի ձեռին իւրում զմերկ սուսեր յոյժ մեծ, և սրընթաց յարձակմամբ եմուտ ընդ դուռն եկեղեցւոյն, և եհաս մերձ առ իս, և այնու սրովն էհար զօձն, որ զինև պատեալ էր՝ և կոտորեալ 'ի վայր թափեցայ յնէն, և գլուխ և կտորք օձին մեծաւ տագնապաւ փախուստ առեալ ելին յեկեղեցւոյն, և կորեան։ Եւ ոչ միայն այս՝ այլ զայսպիսիս բազումս բժշկեաց, բայց զայս միայն գրեցի առ յօրինակ այլոցն ևս։

Պատմեցից միւս ևս զքաջնչելիս, մինչ քարոզութն շրջէր տէր փիլիպպոս կթ՟ղկս յաշխարհին Օսմանցւոց, այսպիսի գործ պատահեցաւ 'ի քաղաքին անկիւրիոյ յաւուր կիրակէի մեծի տօնի զատկին, մինչ առանձնացեալ նստէր հայրպետն տէր փիլիպպոս, և յաշակերտաց իւրոց ոմն յոլանեյս անուամբ վարդ՟պտ այր երևելի կայր առաջի նր։ Տեսին զի եկն պատանի մի իբրև հնգետասան ամեայ և բարձեալ ունէր յողն իւր զմանուկ փոքրիկ իբրև եօթն ամեայ, զոր բերեալ եդ առաջի հայրապետին, այլև ունէր նոյն պատանին 'ի ձեռին իւրում փակեղամբ միով զխնձոր և զներկեալ հաւկիթ. և զայնս ևս եդ առաջի հայրապետին։ և աղաչանօք և աղերսանօք խօսեցաւ առ նա, և ասաց, ծառայքո եմ տէր հոգևոր, այս փոքրիկ մանուկըս՝ զոր եդի առաջի սրբութ՟ քոյ՝ եղբայր իմ է, այսքան ամ է, որ ծնեալ է՝ ոչ կարէ խօսիլ. քանզի համր է, այլև ոչ կարէ կանգնիլ՝ քանզի ոտքն թոյլք են, վ՟ որոյ մեծաւ պաղատանօք խընդրեմք 'ի քումմէ սրբութենէ՝ զի արասցես զաղօթս ի վ՟ սորա, և ես հաւատամ' 'ի տէր՝ զի աղօ

թիւք

Թիւք բովքըլիցի առողջութեն եղբօրս իմոյ: Իսկ հայրն մեր և Հայրապետն սբ̃ եկն ի վ̃ր ծնկանց իւրոց և համբարձեալ զձեռս 'ի վեր՝ և յինքն ամփոփեալ զխորհուրդս . և զտեսութեն մտաց իւրոց յառեալ առ տեսողն ամենից սրտից յՔ̃ծ, թորելով արտասուս յաչաց իւրոց առատ զաղօթս 'ի ժամս բաւականս: և յետ աղօթիցն իբրև կատարեաց զհայր մեր յերկինս, էառ 'ի խնձորէն գլորեաց 'ի բացեայ . և խանդաղատականաւ բանիւ ասաց փոքրիկ մանկանն, եւ որդեակ, եւ և գնա զայն խնձորն բեր. յայնժամ շնորհօք և ողորմութբ̃ բարերարին Ա̃յ ելեալ մանուկն 'ի վերայ ոտիցն, և գնացեալ 'ի վեր էառ զխնձորն և էբեր առ հայրապետն : միւս անգամ ասաց հայրապետն ընդ մանկանն առ եր զխնձորն որդեակ, յայնժամ շնորհօքն Ա̃յ ետ զպատասխանի համր մանուկն այս առ ի, և ահաւասիկ: ասաց սբ̃ հայրապետն արդ տուր զփառս Ա̃յ որդեակ և գնացեալ գոհացող լեր զնմանէ՝ ասաց մանուկն փառք Ա̃յ. և ապա ետ զմանուկն ցեղբայրն՝ որ առեալ գնաց փառաւորելով զքաջնշելագործն Ք̃ծ՝ որ տայ զշնորհս զօրութեն ծառայից իւրոց:

Այլ էր այր կարի խորհրդական և հանձարեղ: աշխարհաշէն և արդիւն արար: և 'ի գիրս Ք̃ծայինս սրամիտ և նրբաքննին, և 'ի խրատս և 'ի քարոզս համեղաբան և արդիւնաւոր: և զայսոսիկ 'ի շնորհաց աղօթից ստացաւ սակաւ սակաւ յապայն, վ̃նզի յամ̃մն տեղիս ուր և քարոզէր և կանոնադրէր, պտղաբերեալ արդիւնանայր ամենայնն:

Այլ էր յոյժ տօնասէր պայծառացուցանող տօնից՝ զարդարող եկեղեցեաց՝ և պատուիչ տօնից տէրունականաց, և սբ̃ց Ա̃յ, որ̃

և դրեալ

և գրեալ է վս̃ յօհաննու օձնեցւոյ ։ վս̃ որոյ յոյժ հռչակեալ համբաւեցաւ անուն նորա յա̃մ աշխարհ, ոչ միայն ի մէջ Հայոց, այլև մահմետականաց, և Արաց, և ամե̃ն սիրէին և պատուէին զնա ։ և վս̃ առաւել ճգնութե̃ն և սրբութե̃ն և հաճոյական ծառայ գոլոյն ԱԾ̃ յոյժ երկնչէին 'ի նմանէ՝ ոչ թէ ռամիկք, այլև աշխարհականք իշխանք և զօրագլուխք ։ քանզի զբազում տեսին 'ի թշնամեաց նո̃, որք կործանեալք բարձան 'ի միջոյ, և 'ի սիրելեաց նո̃՝ որք զօրացեալք յառաջադէմք եղեն ։

Եւ զդպրատունն զոր յօհաննավանք հաստատեցին, սա ևս կարի հաստատեաց, և ուսմամբ և առաքինութե̃ վարժեալ հասոյց 'ի կատարելութի̃ ։ և յետ ամաց ինչ փոխեաց յօհաննավանից և եբեր 'ի ս̃ Էջմիածինն, և անդ կարգեաց զդպրոցն, որ և ամե̃ն ուսան և եղեն արք պիտանիք, վրդ̃պք, և եպ̃կպք, և քահանայք ։ Եւ 'ի վաղնջուց խափանեալ վանորայք լցան աբեղայիւք, և գիւղք, և քաղաքք երիցամբք, և դեռևս օր աւուր աճէ նորին սահմանադրութե̃ն ։ և սովաւ բազում կիսաւեր և խախտեալ եկեղեցիք նորոգեցան, և 'ի գիւղս և 'ի քաղաքս յոլով եկեղեցիք նոր շինեցան հրաշազանիւք յօրինուածովք՝ պայծառ և փառաւոր ամենևին որպիսութե̃ ։

Եւ յետ ամենից շինուածոցն Էջմիածնի, զոր ս̃ Հայրապետն փիլիպպոս արար, այնուհետև զձեռն 'ի գործ էարկ զի և զտաճարս սրբուհեաց կուսանացն գայիանեայ և հռիփսիմեայ նորոգեսցէ ։ վս̃ զի ո̃չ սակաւ ինչ նշանակեցաք զաւերակս տաճարայն երկոցունց կուսանացն 'ի ճառին հռիփսիմէի՝ յորում վայրի պատմեցաք թէ ֆռանկ պատրիք եկին և զնո

րին

րին նշխարան գտին ։ Բայց մէջն գայիանեայ կուսին տաճարն առաւել աւերեալ էր՝ զի տանիքն բովանդակ իջեալ էր , միայն շուրջանակի որմունքն և չորեքին սիւնքն կային կանգուն գլուխն ՚ի բաց , և յատակք որմոցն աստ և անդ ծակոտեալ և խրամատեալ , որոց արար նորոգման զսկիզբն կթղկսն տէր փիլիպպոս, մեծաըղձիւ կարօտիւ և ջանիւ ․ և զբազում գանձս ծախելով նորոգեաց գեղեցկապէս ․ ՚ի հիմանց մինչև ցգագաթն գմբեթին ․ յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին ։

Նա՛ ՚ի նորոգել զեկեղեցին սրբուհւոյ կուսին գայիանեայ գտեալ եղև մի նշխար նորին ․ և նորին ընկերացն ․ և եղև ուրախութի և ցնծութի անպատում ամի հայազգւոյ ռճա իբրև ըղ կանգնումն կործանելոյ թգրութեն ․ Ան զի ամենքն խոկային և խորհէին վասն նշխարաց սրբոց կուսանացն իցէ արդեօք ՚ի տեղին՝ թէ ոչ ․ քանզի աւագ խորանին ներքոյ շինեալ մատուռն՝ որ է դիր հանգստեան նշխարաց սրբոցս ․ աւերեալ էր բնաւին ․ ոչ միայն մատուռն ․ այլև իւր նորին կառուցեալ աւագ բեմն աւերեալ և քանդեալ էր մինչև ցյատակն ․ և աղբիւսովք և գետնօք լցեալ մինչև ՚ի վեր ։

Նա յաւուրս նորոգման սորին էր աբեղայ ոմն տէր յովհաննէս անուամբ ․ այր արդիւնաւոր և գործունեայ և խորհրդական խորհրդով ․ զոր և տեառն փիլիպպոսի կթղկսի կարգեալ էր զսա վերակացու և գործավար իւր գործոյս այսորիկ ։ Արդ յաւուր միում պատճառանօք իմն յայլուր առաքեալ զամենն գործօղս՝ և առանձնացուցեալ զտեղին գիշեր և ցերեկի ․ և ինքն իւրովի միայնակ պեղեաց զտեղին ուր կարծիք մնաց ազդեալ նշանակեր ։ և այնքան

պեղեաց զՀողն մինչև ի Հաստ ցանշարժ Հողն յո
րոյ վերայ կառուցեալ էր Հիմն եկեղեցւոյն. և
անդէն եգիտ զերիս տապանս՝ ի ներքոյ Հիման
եկեղեցեացն. որոց մինն էր՝ ի կողմն Հարաւոյ.
և մինն՝ ի կողմն Հիւսիսոյ. և մինն՝ ի կողմն ա֊
րևելից. և ընդ բանալ կափարչաց վիմաց տապա
նացն. խնկոյն բուրեցաւ Հոտ անուշութեան նո
րաքանչ և զարմանալի. որոյ անուշուե̃ զօրու
թին անկար է ումեք պատմել. որ և ծաւա
լեալ ելից զվայրն ամ̃, և տեսանէ զնշխարս իւրա
քանչիւրոցն ի մէջ տապանացն սպիտակ փայ
լուն ոպ̃ զձիւն և բովանդակ նշխարն անպա
կաս ի մէջ տապանացն։ առ որ բերկրականաւ
ուրախութբ̃ լցեալ տէր յովհաննէս անկեալ
իվր̃ երեսաց իւրոց երկիր պագանէր Տն̃ և
գոՀանայր զնմանէ՝ զի արժանի արար զինքն
այսպիսեաց շնորհաց։ և ապա առեալ զնշխարս
մի յոսկերաց սրբոցն առ՝ ի նշան Հաւաստու
թեն, և ապա խփեալ զկափարիչ վիմացն իվր̃
տապանացն, և խնկով և կրով ամրացուցեալ
փակեաց շուրջանակի զտապանսն, և անՀետ
արարեալ կորոյս զնշանսն, և յարանց գործա
ւորաց ոչոք իմացաւ զայն։ Իսկ յետ կատարմանս
այսորիկ զառեալ նշխարն բերեալ եցոյց վար
դապետաց և եղբարց ամ̃ցուն, և պատմեաց
զամ̃ որպիսութիւն, որոյ վս̃ ամ̃քն՝ ի ձայն ցնծու
թեն գոՀացան զՏ̃ն և ուրախացան անպատ
մելեաւ զուարճութբ̃։ Իսկ եղև գիւտ նշխա
րաց սրբուՀւոյ կուսին գայիանեայ և ընկերաց
նր̃, և նորոգումն նորին եկեղեցւոյն, Հազար
և Հարիւրեակ թուին, Հոկտեմբերի ամսոյ
տասնեւինն, յաւուր երեք շաբաթի։

Իբրև կատարեալ աւարտեցաւ ամենայն շի
նուած տաճարին գայիանեայ կուսին, ապա

գնացին 'ի տաճար սրբուհւոյ կուսին Հռիփսի-
մեայ, և ձեռն 'ի գործ արկեալ սկսան և զայն ևս
նորոգել: վ̃ն զի յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն
գլուխ կթղկէին, և տանիքն բոլորակ, և ե-
րեսք որմոցն և յատակք նորին: Իսկ 'ի ներքսն
կողմանէ բեմն, և սալ յարկ յատակին, և չորից խո-
րանաց մէջն, այս ա̃մ զորս յիշեցի աւերեալ և
քայքայեալ էր՝ վ̃ն որոյ բազմաւ ջանիւ և յոգնա-
կիւ աշխատութ̃բ, գուն գործեալ մինչև զա̃մ
նորոգեալ կատարեցին, և խ̃ի գագաթան եկե-
ղեցւոյն կառուցին զնշան տէրունական խաչին:
Իւ շնորհօք և ողորմութ̃բ Տ̃ն մերոյ Յ̃ի Ք̃ի
տատ ևս յայտ եկեալ գտաւ նշխար սրբուհւոյ
կուսին Հռիփսիմեայ ոչ միայն 'ի միում տեղւոջ
այլ յերիս տեղիս, զոր բաժին բաժին էին արա-
րեալ և ամփոփեալ 'ի զգուշաւոր տեղիս: զեր-
կուց տեղեաց նշխարն ի մէջ վիմաց եդեալ էին,
և զմինն որ և բազում էր նշխարն եդեալ էին
ի մէջ փայտեայ արկեղ որ է տնդուկ, և տեղի
փոքրիկ իբրև զմատուռն շինեալ վ̃ն նշխարա-
ցն, և անդ եդեալ էին զտնդուկն լի նշխարօք:
և յորմն մատրանն գրեալ կայր գիր, զորոյ զօրի-
նակն առեալ ահաւասիկ գրեցի աստ, որ է այս:

✠ Ով հրաշափառ և երջանիկ վկայ անբաժա-
նելի ծոցածնի Հօր՝ և համագոյ Հո-
գւոյն կամօքն ̃է տորինս սաեմ, անոխակալ
երկնաւոր փեսայն հարսն, զբարեգործակ
արքայն ունող, գոլով գլուխ, միշտ և անընդ-
հատ յաղագս ծանօթ.քեզ սպասաւոր սէ̃ր Հո-
գւոյն: Ով սրբուհի աղաչեմ յիշատակողացս
անուան քո բարեխօսութ̃բ և աննուաղ ա-
ղօթիւք լեր պահապան և անդ-իս, որով հանդի-
սացիս տորնոցս լինիլ, սէ̃ կոյս արագ օգնա-
կան,

կան, որ և պատսպարան եղիցիս յամէ յաղթօղ բարեբան։ Յիշեա և զիս՝ զոր նուիրեցայց ես կալես ըստ անուանս վերատին Ծագործո գին կամահաճոյ յարկիս, զոհն մանանախս որոյ շնորհօքն բաւականացայց աղաչեմ յանձն և յարանուն քեզ Հռիփսիմէ։ Յակովբ քահանայ մէ կաթուղիկէ արհի եպիսկոպոսարանին։ Եւս Խորովիկ ծառայ մէ Հռիփսիմէի։ Սուրբ ողոքին։ Ամենափառնոս։

Այսքան բանքառոց յոսկեզըն նկարեալ եմ նշան խաչի. ուրոյն ուրոյն գրեալք են յորմ մատրանն յորում եդեալ էին զանդուկն ընշխարօքն, և մեր անդ ի առեալ զօրինակն գրեցաք աստ, 'ի զուարճութի ձեզ առ յապայն պատահեալ ընթերցողացդ, և յիշատակ և առիթ վարձուց բարեաց 'ի Քէ մեզ աշխատողացս, աղօթիւք ձերովք և բարեխօսութե սրբուհւոյն Հռիփսիմէի։

Այս սկիզըն և կատարումն երկուց վկայարանացս, սրբուհւոյն Գայիանեայ, և սրբուհւոյն Հռիփսիմեայ, եղև յամն երիս, զի հազարև հարիւր թուին զսկիզըն արարին նորոգութե, և 'ի հազար և հարիւր և երկու թուին զերծան 'ի գործելոյ, բազմօք ծախիւք և յոլովիւք աշխատութե չինեալ կատարեցին 'ի փառս Քի և սրբոց վկայից նր։

Արբայդան հօրս մերոյ Տէր Փիլիպպոսի կամեցեալ գնալ յԷջմ, որև ելեալ գնաց բազմաւ ամբոխիւ, վարդապետօք, եպիսկոպոսօք, և քհնյիւք և սպասաւորօք, որք էին ի նմա միաբանք։ Իսկ 'ի քաղաքաց և 'ի գաւառաց որք նշանաւորք յոյժ բազումք վարդապետք, և եպիսկոպոսք, և իշխանք, որոց լուեալ զհամբաւ գնալոյ հայրապետին մեր, փութացան և նոքա 'ի գնալ։ Ս. յորժամ

եհաս փիլիպպոս կթղկս 'ի քաղաքն Թեոդու-
պօլիս, որ է արզրում, և համբաւ գնալոյն ե-
հաս 'ի մեծ քաղաքն կոստանդնուպօլիս. իսկ
հայկականք ժողովուրդք՝ որք բնակեցեալք են
'ի կոստանդնուպօլիս յաղագս մեծ աշուք փա-
ռաց հայրապետին իւրեանց, մատեան առ ե-
պարքոս Թգւրին, որ է վէզիրն, և խնդրեցին
'ի նմանէ զԹգրական ծառայ 'ի դրանէ Թա-
գրէն, ընդ նմին և զնոմոս Թգրականաւ կնքով.
ոմ զի ծառայ կոչեցեալ իշխանն եկեալ պաշտ-
պանեալ սպասաւորեսցէ հայրապետին յամն
շրջագայութս աշխարհայ՝ որք ընդ իշխանու-
թեն Օսմանցւոց, զի մի դուցէ ոք յիշխանաց
կամ յաշխարհակալաց՝ զրպարտեալ խոճիցէ
և բռնադատեալ վշտացուսցէ զհայրապետն:
Յորոց խնդիր հաճեալ եպարքոսին ետ նշն զնո-
մոս Թգրական, և իշխան մի բարեպաշտօն, որ և
եկեալ իշխանն առ հայրապետն, և կատարեաց
զգործ իւրոյ պաշտականութե սպասաւորե-
լով հայրապետին յամն շրջագայութս նորա.
քանզի յամն քաղաքս՝ որք են ընդ իշխանու-
թեն Օսմանցւոց շրջեցաւ կթղկսն, և իշ-
խանն ընդ նմին շրջագայեալ սպասաւորէր,
մինչև բերեալ հասոյց զնա յաթոռն նորին 'ի
սբ Էջմիածինն, և յանձնեաց իշխանի աշխար-
հին մահմատղուլի խանին, և առեալ 'ի նմանէ
զթուղթ նշանի և ազատութե դարձաւ 'ի
դուռն Թգւրին իւրոյ 'ի կոստանդնուպօլիս:

Նուաեր փիլիպպոս կթղկսս եկաց յԷջմ ա-
միս չորս, և փաշոյ քաղաքին և պատրիարգն
հոռոմոց, և վանաց պետն ֆռանկաց, բազմա-
սիրով և մեծաշքօք փառօք ընդունէին և պա-
տուէին զնա՝ որքան եկաց նա անդէն: Նու-
ղպատակս եկեղեցւոյ սբյն յակոբայ՝ գեղեցկե-

յօրի

յօրինուածով և նկարակերտիւ յարմարութեան երանգ երանգ վիմօք սալայարկ արար՝ զի թէ պէտ յառաջին գոյր սալայարկ՝ այլ ոչ էր հաւասար և գեւր, այլ բարձր և ցած, ան յարմար, և կոպիտ՝ և զաւագ խորանի բեմն բարձրացոյց զի յառաջին կարի ցած էր։

Ի սմին ամի յորում գնացեալ էր յԻնէմ տէր փիլիպպոս կաթուղիկոսն, եկեալ էր անդ յԻնէմ և կաթուղիկոսն սըսայ տէր Ներսէս. յորում ժամանակի էր առաջնորդ Էջմիածնի Աստուածատուր վարդապետն։ Իսկ հոգելինկալ հայրապետն տէր փիլիպպոս կաթուղիկոսն, որ նման առաքելոյն պօղոսի հանապազ ցաւէր և հոգայր վասն հնազանդութեանց և անկարգութեանց եկեղեցեաց։ Սա ամենիւք ժառանգաւորօք իւրոյ վիճակին միաբան եղեալ կամեցաւ բառնալ՝ ի միջոյ զանկարգութիւս. վասն որոյ հանապազօր դասիւ և քարոզիւ. և առանձին խօսելով յորդորէր զամենեսեան գալ՝ ի միաբանութիւն և՝ ի սէր և բառնալ զանկարգութիւն և զատելութիւն։ Յորոյ ջանացեալ քարոզութեամբ և հոգեբուղխ վարդապետութեամբ քաղցրացեալ հանուր ժողովն գումարեալ։ եկեղեցականք և աշխարհականք. յորս էին գլխաւորք կաթուղիկոսն սսայ տէր Ներսէս։ և առաջնորդն Էջմիածնի Աստուածատուր վարդապետն. միաբանութեամբ խորհրդեցան ՝ի հրամանս հայրապետին փիլիպպոսի. և հաստատեցին զկանոնական բանս երեքտասան գլուխս. զորս համառօտիւ նշանակեցից աստէն։

Առաջ. Առաջինն է սէր և միաբանութիւն երկուց աթոռոց կաթուղիկոսացն Էջմիածնի և Սսոյ. և իւրաքանչիւր կաթուղիկոս զիւրոյ վիճակի նուիրեալն ձեռնադրեսցէ և մի զայլոյ. և թէ դէպ լինիցի զի ձեռնադրեսցէ յայլմէ վիճակէ զոք,

յուրում վիճակին տեղաւորեսցէ զնա։ Եւ ձեռնադրեալն՝ թէ յայնմ կթղկսի վիճակէ փոխեսցի յայլ կաթղկսի վիճակ, անընդունելի լիցի։

Երկրորդ՝ զի ինքն նուիրեալն եւս․ մի համարձակեսցի առ այլ կթղկս գնալ թողլով զիւրն․ այլ առ իւր կաթղիկոսն։

Երրորդ՝ զի թարց խնդրանաց ժողովրդեան եւ վկայականի թղթոյ մի ձեռնադրեսցի որ յեպիսկոպոսութն։

Չորրորդ՝ ամենեւին զինչ եւ իցէ պատճառաւ․ որ եպիսկոպոս զայլոյ վիճակ մի յափշտակեսցէ։

Հինգերորդ՝ միոյ վիճակի մի լիցին երկու եպիսկոպոսք, եւ երկու առաջնորդք․ բայց թէ կարի մեծ ինչ պատճառ խնդիր դիպցէ։

Վեցերորդ՝ մի համարձակեսցի եպիսկոպոս յայլմէ վիճակէ զոք ձեռնադրել․ ապա թէ համարձակեսցի․ լուծցի ինքն եւ իւր ձեռնադրեալն։

Եօթներորդ՝ զի եպիսկոպոս որ թէ ոչ հրամանաւ կթղկսին իւրոյ՝ այլ կաշառօք եւ այլազգեաց բռնութբ համարձակեալ իշխեսցէ այլոց վիճակաց․ լուծցի 'ի կարգէն։

Ութերորդ՝ մի համարձակեսցի որ վարդպտ անխտրաբար տալ զիշխանութն վրդպտութե ան ումեք․ եթէ ոչ իցէ նուիրեալն կատարեալ ուսմամբ՝ եւ առաքինութբ՝ եւ հասակաւ՝ եւ ածայնով երկիւղիւ՝ եւ վկայեալ յամենեց։ զի այսու պատճառաւ բազումք անկարգութիւնք եւ դայթակղութիւնք մտին յեկեղեցի․ եւ թէ աստունգանեալք քամահեսցեն զայս հրաման․ տուօղ իշխանութեն անկցի 'ի պատուոյն․ եւ առօղ իշխանութեն անընդունակ լիցի։

Իններորդ՝ քահանայ եւ այլ ժառանգաւոր

յուրմէ

յեւրմէ եպիսկոպոսէ ընկալցի զձեռնադրութիւն հաւանութեամբ իւրոյ ժողովրդեանն. և եթէ ոչ այսպէս, լուծցի 'ի կարգէն ։

Տասներորդ՝ զիրաւունս և զհասոյթս որ 'ի ժողովրդենէն կարգեալ է եպիսկոպոսաց և երիցանց. ըստ հրամանի հայրապետականաց կանոնաց առցեն եպիսկոպոսք և երիցունք. և մի զմի մեանս զրկեսցեն. որոց մանաւանդ զտրտունջ և զդժգո հութիւնս յոլովս լսեմք հանապազ ։

Մետասաներորդ՝ երիցունք մի զրկեսցեն զի րեարս ։ զմիմեանց ժուխն և զհասոյթն յափշ տակելով. կամ կեղծաւորաւ բարեձևութեամբ և կամ այլազգեաց բռնութեամբ. այլ իւրաքանչիւ րոք իւրով բաժնաւն բաւականասցի. և եթէ ոչ այսպէս, վստահանօղն լուծցի 'ի կարգէն ։

Երկոտասաներորդ՝ յորժամ հանդերձեալ իցեն դնել զնշան ումեմն աղջկան յաղագս ու մեմն երիտասարդի. մի իշխեսցեն առնել զայն կանայք, կամ ժողովրդականք, կամ երի ցունք առանց բազմի քննութեան. կամ առանց գիտելոյ առաջնորդին ։ այլ քահանայքն քա րոզեսցեն զբազում աւուրս ի մէջ եկեղեցւոյն. և ծանուսցեն առհասարակ ամենեցուն. զի դուցէ ոք տեղեակ իցէ ազգականութեան նոցա. որոյ 'ի լսելն եկեալ յառաջագոյն ծանուսցէ. և այսպէս յետ բազմաց քննութեանց՝ թէ ոչ գտցի ազգա ցեղութիւն ի մէջ նոցա. ապա յայտ յանդիման ամենից քահանայից և ժողովրդոց՝ քահա նայքն օրհնեսցեն զնշանն զայն՝ և հաստատես ցի գործն ։

Երեքտասաներորդ՝ այրիք երիցունք՝ թէ իցեն պարկեշտք և ծերք, և կամ ունիցին ման կունս սնուցանելոյ՝ կացցեն յեկեղեցին. և եթէ ոչ այսպէս, գնասցեն 'ի վանս և յանապատս ։

և թէ ոչ գնասցեն 'ի բաց կացցեն 'ի ժառանգութենէ և 'ի կարգէ ։

Օ այսքան գլուխ խրատական բանիս իբրև զկանոն կարգեալ սահմանեաց. և քարոզեաց յամ աւուր առաջի ամենեցուն ։ առ որ հաճեալ և հաւանեալ և յօժարութեամբ յանձին կալեալ տեառն ներսէսի կաթողիկոսին սայ՝ և ծառայոյ վարդապետին. և ամենից վարդապետաց, և եպիսկոպոսաց, և իշխանաց, ձեռնագրեցին և կնքեցին. և կամակարիւ յօժարութեամբ առին զօրինակն և տարան յաշխարհն իւրեանց. որ և 'ի բազում տեղիս կայ լիակատար օրինակն այն. և տակաւին կան նովին ուխտիւն և սիրովն շնորհօքն Քրիստոսի ։ Նոյն զայլս բազում արդիւնս և զգործս ուղղութեան սահմանեաց անդէն յետն.

Ապա եղեալ յետ այնր եմուտ 'ի նաւ և ծովու գնաց 'ի կոստանդնուպօլիս. և եկաց անդ ամ մի բոլոր. և անդ ևս զարդիւնս և զգործս ուղղութեան յոլովս հաստատեաց ։ Նա և նախքան զամ արար միաբանութիւն անջատեալ երկպառակութեան նց. քանզի 'ի ժողովրդականացն որք ընկեց տեղացեալք էին 'ի քաղաքէն կոստանդնուպօլսէ. բարձմամբ բարձրայօն պարծանօք հարստահարեալ թէև ածէին խիստ եկամուց ժողովրդոցն. և իբրև զգուհեկ 'ի չմարդի ունէին զնս ։ և զնմին իշխանական իրաւութիւս զգործս և զբանս 'ի ձեռս իւրեանց գրաւեալ ունէին և գործէին. և զեկամուտս 'ի բաց քեցեալ անհաղորդս պահէին ։ Սանորոյ և նոքա հոգւով չափ մշտնջենայն ընդ քամահանս իւրոց. և հանապազ խռովիչ և ատելութեան բանիւ դիմադրաւ լեալ ընդ միմեանս մաքառէին ։ և հաստատեալ արձանացեալ էր խռովութիւն ի մէջ նց անհաշտ և արեամբ չափ ատելութեամբ.

Իսկ

Իսկ 'ի գալ կՃ՟ մէկոսին փիլիպպոսի անդ՝ և այնպ̃
տեսանել զն̃։ կարևոր քան ամենից գործոց ևս-
րոց վն̃ նորին տարա զհոգս.՝ի բազում աւուրս
բազմագանիւ կերպիւ. երբեմն հասարակ և եր-
բեմն առանձին խրատելով և ուսուցանելով.
զմ̃ցն զխիրտս և զկամս շահեալ էած 'ի հաւա-
նուն 'ի բանից իւրոց. և հաշտեցուցեալ արար միա-
բանս զնս̃. համապատիւ եղբարս լինիլ և զմ̃մն
զգործս և զբանս խմիասին հոգալ և կատարել։
Իսկ այնուհետև ջերմագոյնք սիրելիք և մշտա-
կիցք եղբարքեալ կան 'ի սահմանադրութեան
հայրապետին փիլիպպոսի. գեղեցկիւ սիրով և
միաբանութե՟. շնորհօքն Քի̃ի Յ̃ մերոյ։

Ապա յայնմ'հետէ զձեռն 'ի գործ էարկ վճա-
րել զպարտս եկեղեցեացն. վն̃ զի քառասուն
հազար ղուռուշ պարտք կայր իվ̃ր եկեղեցեացն
Հայոց որ 'ի կոստանդնուպօլիս. և պատճառ-
պարտուցս էին։ Նախ սոսկ միայն կոչմամբ և
եթ պատրիարգք անուանեալք առաջնորդքն.
որք նստին թ̃գրականաւ իշխանութե՟. և ար-
ծաթոյ ընտրութե՟ սպրդեալ 'ի ներքս մտանեն.
յանձանց, և 'ի սուտակասպասից ընծայեալք,
և ոչ յԱ̃յ։ և երկրորդ՝ խաղմամբքն և խռո-
վարարքն 'ի ժողովրդականացն. որք վն̃ փառա-
սիրութե, և վն̃ նախանձու, և վն̃ մարմնաւորաց
շահուց ակնկալութե. գումարտակ լինէին
ոմանք իվ̃ր այսմ առաջնորդի. և ոմանք այնմ
առաջնորդի. սուտակասպաս արբանեակք և
զօրավիգք լինէին նոցա։ և ապա գնացեալ առ
դաւթարդարն, և առ վէզիրն, և առ թ̃գրն,
տային զկաշառս յոլովս նց̃. և վանէին զախոյ-
եանն. և առնուին զիշխանութի սոսկ անուն
պատրիարգութե և առաջնորդութե։ և զայլ
ևս բազմապատիկ կաշառս 'ի դրունս իշխա-

նացն ցրուեալին աստ և անդ . և այսպէս առնելով բազմացաւ՝ բարդեցաւ՝ և դիզացաւ պարագքն և էհաս մինչ 'ի քառասուն հազար ղուրուշն ։ Առ յայսմանէ պատճառէ լցաւ խռովութեամբ մեծաւ քաղաքն կոստանդնուպօլիս . և իբրև զխռովեալ ծով անդնդապատոյտ յատակաւն՝ լեռնանմանաւ կոհակաւ՝ շարժմամբ՝ շաչմամբ՝ շառաչմամբ ահագին դոչմամբ . և իբրև զորոտումն կայծ ընկէց և հրացանից ամպոց դողացուցանէր զամենայն մեծղիս ։ և համբաւ խռովութեան այսմիկ ծաւալեալ տարածեցաւ յամենայն քաղաքս և 'ի գիւղս՝ ընդ արևելս և ընդ արևմուտս . և ամենայն որք զայն 'ի բերան առեալ խօսէր ։ Առ 'ի պատճառս այս բազումանգամ որք երևելիք և անուանիք, երիցունք և երեսփոխանք և այլք 'ի կոստանդնուպօլսէ ելեալք երկարաձգեձանապարհաւ եկին 'ի սուրբ աթոռն Էջմիածին առ կաթողիկոսն . առ 'ի հնարել ինչ մի բառնալոյ խռովութեանցն և վճարելոյ պարտուցն ։ և կաթողիկոսն յամենայն զօրութենէ ջան եդեալ հնարէր . երբեմն թղթով և երբեմն մարդուղարկելով . և այլով կերպիւ զհնարս հնարելով . և ոչ եղև խաղաղութիւն խռովութեանց ժողովրդեանն ։ Առ 'յայսմանէ պատճառէ . ժողովրդականաց քաղաքին բազմաց եղև վիշտ և վտանգ և վնաս . զի ոմանք եղեն տնանկք և աղքատք՝ զրկեալք յընչից և յապրանաց՝ 'ի տանց և 'ի հայրենեաց ։ և ոմանք 'ի բանտս և 'ի կալանս մտան ։ և ոմանք վտարական լեալ 'ի հեռաւոր քաղաքս նշդեհութեամբ շրջէին . հեռացեալք յընտանեաց և 'ի ծանօթից՝ և այսպէս զաւուրս կենաց վճարէին ։ Առ յամս ութ և տասն երկարեցաւ այս գործ դառնութեան . մինչև գնաց անդ ծառայն Աստուծոյ տէր փիլիպպոս կաթողիկոսն . և զի Աստուած էր ընդ նմա . որոյ

շնորհօք

շնորհօք վճարեաց զայնքան պարտսն 'ի նոյն քաղաքի ժողովրդականացն ։ վ՟ս զի ժողովրդականացն ամենեցուն իւրաքանչիւրումեք ըստ իւրում կարողութեն հրամայեր օգնական լինիլ առ 'ի վճարել զպարտսն ․ և այլն առ որ լինէր հրաման հայրապետին ոչ ընաւ իշխէր բան ինչ ասել ․ այլ յօժարութ՟բ և սիրով կատարէր զհրամանս հայրապետին վ՟ս օրհնութե նորին ։ Եւ կացոյց հոգաբարձուս արս հաւատարիմս գործոյս այսմիկ ․ որք բազմաւ ջանիւ և աշխատութ՟բ ժողովեցին զնուէրս ժողովրդեանն յամիսս ութ ․ և վճարեցին զամ՟ն պարտսն ․ և ազատեցին զեկեղեցիսն 'ի պարտուց շնորհօքն Յ՟ի Ք՟ի մերոյ ։

Եւ հուչակ համբաւոյ արդիւնականի գործառնութե և ա՟ծաբանի վրդ՟պտութե ․ և առաքինականի ձգնութե տեառն փիլիպպոսի կաթուղիկոսի ․ ո՟պ յա՟մ երկիր սփռեալ տարածեցաւ՝ սոյն՟պ և յիւրով քաղաք էհաս ։ և եպիսկոպոսն իրովայ քաղաքին նիկօղայոս անուանեալն դիտաց յոգի իւր ․ զի թարց ընաւին կարծեաց և երկբայութե դեղ և սպեղանի վիրաց իւրոց՝ և ուղղութե իւրոյ ձախորդեալ գործոցն 'ի սոյն հայրապետէ և 'ի հոգևոր բժշկէ լինելոց է ։ վ՟ս որոյ առանց դանդաղելոյ ելեալ յիւրայ և եկն 'ի կոստանդնուպօլիս առ սոյն հայրապետին ․ և հնազանդութ՟բ յանձնէառ զկանոնս և զկարգս հրամանաց նորին ․ որով և զարձակումն կապանաց և զիշխանութե եպիսկոպոսութե ։ և մեծաւ ուրախութեամբ դարձարարեալ գնաց յիւրով 'ի քաղաքն իւր ։ Եւ դու զամ՟ որպիսութիւն այսորիկ պատմութեւս ․ եթէ կամիցիս 'ի նոցին ելովացուոց ճառէն ուսցիս ․ զոր յառաջին կայդ կարգեալ եմ՝ զի անդ

լիով

ձևով շարագրեալ եմ ըստ պատշաճին իւրոյ։
Իսկ տեառն փիլիպպոսի կեալով 'ի քաղաքին կոստանդնուպօլսի զբազում գործս բարութեան և զկարգս ուղղութեան հաստատեաց անդէն եկեղեցականաց և աշխարհականաց. և այս բազմաւ երևելեաւ եկեղեցականաւ անօթով, և մարմնաւորք կարասիւք ելեալ 'ի կոստանդնուպօլսէ ճանապարհ արարեալ եկն եհաս 'ի բարձրագահ աթոռն 'ի սբ Էջմիածինն. 'ի տօնի փոխման սրբուհւոյ կուսին Ածածնի եմուտ յԷջմիածին։ Իսկ եղև գնալն և գալն փիլիպպոսի կաթողիկոսի յերիս ամս. զի հազար և հարիւր թուին գնաց յէջմ։ և 'ի հազար և հարիւր և մի թուին էկաց 'ի կոստանդնուպօլիս. և 'ի հազար և հարիւր և երկու. թուին եկն յԷջմիածինն։

Երբ և եմուտ թուականն 'ի հազար և հարիւր և երեքն յաւուրս աւագ պահոցն զսկիզբն արար զհիմն արկանել զանգակատան սբյ Էջմիածնի զի յառաջմէ ոչ գոյր զանգակատուն Էջմիածնի։ բայց տենչումն բաղձանաց յոլովագոյն կայր 'ի սենեակ սրտի կաթողիկոսին փիլիպպոսի վս զանգակատանն շինելոյ։ և որ զկամս երկիւղածաց իւրոց կատարէ՝ կատարեաց զկամս սրտի նորա այսու կերպիւ։

Քանզի 'ի ժամանակին յորում 'ի կոստանդնուպօլիս էր տէր փիլիպպոս կաթողիկոսն, էր և անդ հայ ազգաւ այր ոմն քրիստոնեայ՝ որոյ անունն էր անտոն չալապի, և էր սա 'ի քաղաքէն բուրսայոյ, որոյ տունն և տեղիք և բնակութիւն անդ 'ի բուրսայ էր. այլև յիզմիր քաղաքի ևս ունէր զտունս և զապարանս, նա և 'ի կոստանդնուպօլիս ունէր զտունս և զապարանս հոյակապս և ոսկեօծս զարդարեալ երանգ երանգ գունովք։

Իսկ

Սա էր այրս այս անտոնչալապի յոյժ երևելի և հռչակեալ այնքան մինչ զի յայտնիեր 'ի դուռն Թգ̃ւորին Օսմանցւոց , նա և 'ի հեռաւոր աշխարհս փռանկաց․ Պարսից , զի կարի ընչաւետ և փարթամեր ստացուածովք ։ և էր իւր գործվաճառականութի̃ , որոյ պատճառէ երբեմն ժամանակաւ 'ի կոստանդնուպօլիս լինէր , և երբեմն 'ի զմիւռին լինէր , որ է իզմիր ։

Սա յաւուրսն յորում էր փիլիպպոս կթ̃ղկոն 'ի կոստանդնուպօլիս , պատահեցաւ և անդլինիլ անտոն չալապոյն , որոյ տեսանելով զառաքելաշնորհ վարդ̃պտութ̃ին , և զմաքրակենցաղ քաղաքավարութ̃ին տեսան փիլիպպոսի կապեալ եղև 'ի սէր նորին չալապին ։ Ընդ որում ասաց տէր փիլիպպոս , վ̃նզի յԱ̃ծպետականէ ա̃մ ինչ անպակաս պարգևեալ է քեզ․ եթէ ընչից յոլովութի̃ , եթէ ծառայից բազմութի̃ , եթէ անուան մեծութի̃ ։ արդ հարկէ քեզ զի ըստ արդեաւոր անուան քում երևելի յիշատակ հոգևոր թողցես քեզ յերկրի ․ յորոց մինն այս է ․ որ առաջիկայ քեզ․ որ է զանգակատունն Էջմիածնի ․ որ կարի հարկաւոր է , և ոչ գոյ ․ արդ կամիմ զի զայն պակասութի̃ սրբոյ աթոռոյն դու կատարեալ լցուսցես ։ Իսկ չալապին մեծաւ յօժարութ̃բ և կամակարիւ խոնարհութ̃բ խոնարհեալ 'ի հրամանս հայրապետին յանձնէաւ կատարել զհայցուածս նորին ։ զոր և ասաց առ հայրապետն որովհետև այդպէս է յօժարութի̃ քումդ կամաց ․ նա և հարկաւորն սրբոյ աթոռոյն Էջմիածնի ․ յիմ կողմանէ դու լիցիս ինձ երեսփոխան և հայր ։ օգնութ̃բն Ս̃յ 'ի ժամանելն քո 'ի սբ̃ Էջմիածինն ․ որքան բաւէ և ախորժէ յօժարութի̃ մտաց քոց ․ լայն և ընդարձակ , հաստահե

ղոյս

ղոյս և բարձրաշէն. գեղեցկազանիւ նկարակերտութե ձեռնարկեալ շինեցիս. և զմ ծախս գանձուց, որ անդ լինի, ես լիով և յօժարութե նաև աւելեաւ հատուցանեմ։

Արդ այսու պայմանաւ յորժամ էհաս փիլիպպոս կթ֊դկոն ՚ի սուրբ Էջմիածին զսկիզբն արար շինութե զանգակատանն. որոյ սկիզբն և հիմարկութեին եղև ՚ի թուականիս մերում հազար և հարիւրևերեք յաւուրս աղուհացից. յարևմտից կողմն մեծի տաճարին Սրբոյ Էջմիածնի՝ ի վերայ արևմտեան դրան նորին հուպ և կից որմոյ նորին։ և յամին յայնմիկ բարձրացաւ շէնքն մինչև կապեցան ներքին կամարքն. և ժամանեաց ի վ՟ր ձմեռն. և փոխեցաւ թուականն ՚ի հազար և հարիւրչորս և յորժամ հասին ՚ի մարտի ամսին ՚ի հինգերորդում կիրակին աղուհացիցն. եղև վախճան մեծի հայրապետին տեառն փիլիպպոսի կթ֊դկոսին. և խանգարեալ խափանեցաւ շինումն զանգակատանն։ Քանզի իշխան քաղաքին Երևանու՝ որ էր լալաբէկն որդի մահամատղուլի խանն. այս այն լալաբէկն է. զոր ոչխարի բոդաւիճաւի մէջն յիշեցաք. սորին որդին մահմատղուլի խանն էր այր դաւող և բռնագլուխ. այլև կռուէճ ընդ քրիստոնէից՝ թէպէտ կաշառօք և բազմօք խնդրանօք խնդրեաց ՚ի նմանէ կթ֊դկոն փիլիպպոս զհրաման վ՟ր շինութե զանգակատանն. սակայն ոչ լռեաւ նմա խանն վ՟ր կռուէճութեն. բայց կթ֊դկոն ոմ֊ և էր յոյս նորա հաստատուն առ ած նովին յուսով էարկ զհիմն զանգակատանն, և սկսաւ շինել. և յորժամ վախճանեցաւ կթ֊դկոսն փիլիպպոս մնաց կիսաշէն զանգակատունն վ՟ր չարութե խանին՝ զի հանապազ ասէր թէ ոչ թո

ղում

դում չէն զզանգակատունն՝ այլ քակելոց եմ
զնա: Իսկ յաւուրն յայնմիկ նախախնամօղն Ած
պահեաց զզանգակատունն՝ և զխանն քակեաց.
քանզի անուանիք և մեծագոյնք իշխանք աւա
քեցան 'ի Թուրքերէն 'ի յերկրորդ շահաբասէն
յաշխարհս արարադեան վն Թուրքականաց գոր
ծանունեց. և վն գոռոզից բարուց և լրոց մահ
մատղուլի խանն , 'ի չմարդի համարեալ ան
պատիւ ունէր զիշխանսն, և զչարէր ընդ նոսա.
և այնքան արար մինչ զայրացոյց զսիրտ իշխա
նացն. և նոքա յորժամ գնացին առ Թուրքն
սկսան ամբաստանութի առնել զխանէն. վն
որոյ ցասեաւ Թուրքն իւրն խանին , և ընկեց զնա
յիշխանութենէն . և յափշտակեալ կողոպտեաց
զամենայն ստացուածսն նր . և կապանօք տարաւ
'ի սպահան քաղաք. և զայլոմն 'ի Թուրքականաց
ծառայից առաքեաց յերևան իշխօղ՝ որոյ ա_
նունն էր նաջաֆղուլի խան: Իսկ որ մատու
ցեալ տէր յակօբ կթղկսն և 'ի բազումաւուրս
երթևեկութի առնելով 'ի դուռն նր . և զբա
զումզոսկի և զարծաթ տալով նմա և նորին իշ
խանացն. հազիւ թէ էառ զհրաման շինութե
զանգակատանն: որդ մինչև այս ժմ լեալ զրաւե
ցաւ՝ փոխեցաւ Թուականն. և էհաս մինչև 'ի
հազար հարիւր և վեց՝ և ց յուլիս ամսին. և ապա
այնուհետև սկսան շինել մինչև ց կատարումն
զարմանալեաւ արուեստիւ . յորինագանիւ նկա
րակերտութ քանդակեալ 'ի վէմսն յամենայն պատ
շաճաւոր տեղիս տեսակս զանազանից կենդա
նեաց, գազանաց, անասնոց, Թռչնոց, բուսոց և
տնկոց: այլև յօրինուած շինուածոցն յոյժ գե
ղեցկայարմար, խաչխաչքն, և սիւնքն և խոյակ
քն , և կամարքն, և այլքն ամքն, և յաւուրս
օրհնութե նր անուանեցին սուրբ հրեշտակա
պետ.

 Արքանութիւն և Արդխութիւն, զարդուց·
պետ· խորհրդով գաբրիէլեան փողոյն որ 'ի
բարձանց գոչէ· Նաև կատարումն զանգակա
տանն, եղև հազար և հարիւր և եօթն թուին
և 'ի տօնի խաչվերացին որհնեցին զխաչն որ 'ի
գլուխ զանգակատանն և բակեցին զխկալէն:
Արդ սոյդ պատմութիւն զանգակատանն այս
է· թէպէտ ի մերայնորին գրեալ թուականքն
այլայլես են:

Նաև որքան եկաց փիլիպպոս կաթողիկոսն ի վե
րայ երկրի· թէ 'ի ժամանակս վարդապետութեան իւ
րոյ՝ և թէ 'ի ժամանակս կաթողիկոսութեան· անդա
դար և անխափան արար և գործեաց նա զոր
դիւնս իմէջ աշխարհի, և մանաւանդ բարձրա
գահ աթոռն սուրբ Էջմիածին սովաւ առաւ
ել հաստատեցաւ և փարթամացաւ· եկեղեցա
կանաւ անօթով ոսկւով՝ և արծաթով՝ և մե
ծագնիւք զգեստուք· և պատուականօք գրե
նօք վարդապետականօք բազմօք: այնպէս և մար
մնաւորօք սպասիւք, և կահիւք պղնձեղինօք
և բրդեղինօք՝ և այլօք այսպիսեօք: այլև հոյլք
անբաւից կենդանեաց· ուղտք, և ջորիք, և ջո
լիրք մատակ ձիոց· և ջոկք խաշանց և անդեոց:
այլև արտս և այգիս և բուրաստանս: Այլև
բազմազանիւ կերպիւ հոգեորաւ և մարմնաւո
րաւ արդեամբ օգտակար լինէր աշխարհի·
զի իբրև զբերդ ամուր էր նա շուրջ զաւգիւն
Հայոց ընդդէմ մահմետականաց՝ որք ոչ կա
րէին հարստահարել և 'ի զզուել զհայս· վասն զի
ամենայն ներհակք ախոյեանք՝ որք իբրև զլեառն
հզօր ընդդէմ կային, ամենայն խորտակեալք 'ի
միջոյ բարձան· եթէ եկեղեցականք, և թէ աշ
խարհականք· և թէ այլասեռք և այլազգիք
փառաւորք իշխանք:

Նաև եկաց նա ի վերայ երկրի մինչ 'ի ժամանակս

ծերութեն, լեալ ամաց վաթսուն և երից, որդւոյ աւոր և մեծաշուք առաջի ամենից ազանց, Հայոց, Հոռոմոց, Մարաց, Ոսմանցւոց, և Պարսից մեծամեծաց իշխանաց, նաև թգւորց իսկ:

Նա յօրէ յորմէհետէ եառ զիշխանութին վարդապետական, անխափան 'ի քարոզութին և 'ի խրատել եկաց, 'ի գիւղս և 'ի քաղաքս, 'ի վանս և յանապատս, և յամենայսեան տեղիս, և զորինչ քարոզեալ խրատէր ոչ սղալէր, այլ ամն ար գիւնացեալ պտղաբերէր:

Նա 'ի մերձակայ աւուրս վախճանի իւրոյ տէր Փիլիպպոս կթողիկոս էր 'ի սբ Էջմիածինն. յաւուրս աղուհացից 'ի չորրորդում կիրակէին, և ըստ հանապազորդեան սովորութե իւրում նստաւ յաթոռ և սկսաւ ասել զքարոզ այնր կիրակէին, որոյ բնաբանն է, Այր մի էր մեծատուն՝ որոյ էր տնտես և եղև զնմանէ ամբաստանութի: Նա մեկնելով եհաս 'ի բանն յայն, որ ասէ, ոչ ևս կարես լինել տնտես, և ասաց վերջարար բանին և յաւուրն երկրորդի, որ էր երկուշաբաթ օր տկարացաւ՝ և անկաւ 'ի մահիճս: Ժողովեցան առ նա ամն միաբանքն և աշակերտքն իւր հարցանէին զն տկարութին, որոց պատասխանեալ ասաց՝ այս է վերջին տկարութին իմ, որ ոչ ևս յառնեմ յառողջութե, քանզի մինչ ասէի զքարոզն, իբրև հասի 'ի բանն որ ասաց: Ոչ ևս կարես լինել տնտես, թուեցաւ ինձ ոմն թէ յայլմէ յումեքէ ազդեցաւ 'ի սիրտս իմ, թէ ոչ ևս այլիս մարմնաւորոք կենօք՝ և այլևս ոչ տնտեսես 'ի տան Տն, այլ վճարիս մահուամբ: Նա մնաց տկար մինչ եհաս 'ի հինգերորդ կիրակէն՝ և յայնմ գիշերի դէպ 'ի լոյս առաւօտուն սկսաւ հոգեվարիլ, ինքն ևս գիտաց որ հոգեվարի է, վասն

որոյ հանապազ զաղօթս և զօրհնաբանութիւն Ա.Յ ունէր ի բերանն իւր ասելով. արդ արձակես զծառայս քո Տր ըստ բանի քում ի խաղաղութիւն. աւանդեաց զսրբանեալ հոգին իւր ի ձեռս Ա.Յ տր հայրապետն փիլիպպոս։ Եւ հռչակեալ ծաւալեցաւ համբաւ վախճանի նորա յամենայն շրջակայ գաւառս արարադեան աշխարհին. և ամ ոք, որ լսէր վհատեալ թալկացեալ յերկիր անկանէր, վն զի ամուր պարիսպն, որ շուրջ զհայոց էր բարձաւ։ Եկին ժողովեցան ժողովուրդք յոյժ բազում ի շրջակայից գաւառաց, վնզի մնաց անթաղ յաւուրս վեց, քանզի միաբանքն Էջմիածնի և ամքն վարդպտքն կամէին ի դրան սրբոյ Էջմիածնի ի մէջ իւր շինեալ զանգակատանն թաղել։ բայց իշխանն մահմետղուլի խան՝ որ զոխս նախանձու յոլովս ունէր ընդ հայրապետին, վն հզօր գոլոյ հայրապետին իւր ի խանին, այլև վն զանգակատան շինելոյն, զի խանն ոչ թողոյր ի շինել զզանգակատունն, և կթղկսն աւ բռնութն ուժոյ իւրոյ զհինն էարկ և սկսաւ շինել։ և արդ իս ի վախճանել հայրապետին, իբրև լուաւ թէ ի մէջ զանգակատանն կամին թաղել. կարի սաստկացեալ չարացաւ՝ և ոչ թողոյր թաղել ի մէջ զանգակատանն, այլև մեծօք խրոխտանօք ասէր թէ զզանգակատունն քակելոցեմ ես։ Եւ մնաց կթղկսն անթաղ յաւուրս վեց վն այսմ պատճառի։ Եւ եդեալ կայր դագաղով ի մէջ տաճարին Էջմիածնի, և էր զուարթ երեսօք ոպ զկենդանի մարդ ի քուն և բուրէր ի նմանէ զհոտ անուշութե։ և ամքն որք հայէին ի համբուրել զնա հիացեալ զարմանային ընդ յորդաբուխ հոտոյ անուշութեն, և ընդ երեսացն զուարթութե։ ոչ միայն քրիս

տանեայք՝ այլև այլազգի մահմետականք, և հիացեալ փառաւորէր առաքելն Տ՟ն որ փառաւորէ զնս̃ իւր ։ Նաև մի̃ զի մահմադուլի խանն ոչ կամեցաւ 'ի բերդ բարուց իւրոց՝ ոչ էթող 'ի սր̃ Էջմիածինն թաղել զկթ̃ղկսն, մի̃ այսորիկ բարձեալ 'ի սր̃ոյ Էջմիածնէ զպատուական նշխարս մարմնոյ նր̃, տարան 'ի տաճար սրբուհւոյ կուսին հռիփսիմեայ ․ և անդ ի մէջ տաճարին 'ի հիւսիսային կողման խորանին հանգուցին զնա ։ և է բարեխօս առ Տ՟ր մն̃ ամենից քրիստոնէից և հոգեծնունդ որդեկացս իւրոց ։ Որ և այժմ ամենայն բնակիչ աշխարհին ցաւագարք և ախտաժէտք գան յուխտ և 'ի համբոյր սր̃ տապանի նր̃ և գտանեն զաւողջութի ցաւոց իւրեանց ։

Նաև եղև վախճան մե̃ծ և տիեզերալուսոյ հայրապետին տեառն փիլիպպոսի 'ի մերում թուականութեան, հազար և հարիւր և չորս, 'ի մարտի ամսոյ քսանևհնգին, 'ի հինգերորդ կիրակէին աղուհացից պահոցն ։ և արար նա զկթ̃ղկսութիւն քսանևերկու ամ և երեքամիս, և ինքն էր վաթսուն և երից ամաց, յորժամ վախճանեցաւ ։ և յաջորդեաց զինի նր̃ զկթ̃ղկսութիւն սր̃ Էջմիածնի ջուղեցի յակոբ վարդապետն ․ մինչ ժողովեալ վարդապետքն, և եպիսկոպոսունքն, որք 'ի մահն փիլիպպոսի ժողովեցան, կացին 'ի սր̃ Էջմիածինն մինչև ցաւն ծաղկազարդին, և 'ի նմին տօնին օրհնեցին զյակոբ վարդապետն կթ̃ղկս, 'ի նոյն թուին, և յապրիլի ամսոյ յութն ։ և ապա գնացին յիւրաքանչիւր տեղիս փառաւորելով զհայր և զորդի և զսբ̃ հոգին յաւիտեանս յաւիտենից ամէն ։

Վասն նորոգութեան անուանեալ Վանորէից, և շինութեան բազմածախից և մեծավայելչաց Եկեղեցեաց.

## ԻՕ։

ՈՐՊԷՍ Ի ԳՐԱՐՆԱՑՆՈՑ
ժամանակի հարաւային հողմոյ շնչեալ
ծննդագործէ զերկիր և բղխեցուցա
նէ յոքնազանից ծաղկանց զնեռս և զտե
սակս, որովք երփնազարդեալ վայելչանայ ե-
րեսս երկրի։ Նմին օրինակի գոգցես և զժամա
նակս այսոցիկ երկուց կաթուղիկոսացս մեծ
ին և ֆիլիպպոսի, զի բազումք վանորայք և ա-
նապատք և եկեղեցիք շինեցան։ յորոց մի է մեծ
և անուանի վանքն սրբոյն ստեփաննոսի նա
խավկային, զոր 'ի դարաշամբի ձորին է, որ յա
ռաջագոյն էր անպարիսպ, նաև շինուածք
տանցն և յարկացն խարխարեալք և բլբլեալք.
և դիրքն շինուածոյն յուլի և անպիտան։ Իսկ
Ջուղայեցի յակոբ վարդապետն՝ որ յետ փիլիպ
պոսի եղև կաթողիկոս, սա 'ի ժամանակս կաթողիկոսու
թեն ֆիլիպպոսի սկսաւ նորոգել՝ և միանգա
մայն զնմին շինուածսն բակեաց 'ի հիմանց՝ զե
կեղեցին և զտունսն, և զխուցսն, և զայլն ամ
ապա ինքն զհիմն էարկ եկեղեցւոյն և շինեաց
խաչանման զեկեղեցի սրբատաշիւք վիմօք վեր
ամբարձիւ կաթողիկէիւ, գեղեցկաշէն և զանա
զան արուեստակեալ նկարակերտութբ զարդա
րեալ։ Այնպէս և զպարիսպն շուրջանակի, և զդ
տունս, և զխուցսն ամուր և հաստահեղյս վի
մօք շինեալ. որոց ձևն և դիրքն և յարմարու
թիւքն կարի ըմբռն և պատշաճաւոր, զոր բազ
մաւ աշխատութբ և յոլովիւք ծախիւք յաւե
տեան ապա կատարեցուցին զքարն և զկղմինտրն
'ի դեղջէն աստապատոյ բերէին տփով զերե

ազք ջուրց երասխ գետոյ. և մանկունք 'ի քրանցն յարարդ գեղջէն բերին ձիով սոյնպ͞ և զկիրն և զփայտն և զհացն 'ի հեռու վայրաց բերէին մե-ծաւ աշխատութ͞բ և յոլովիւ ջանիւ, և կատա րեաց յաւարտ ած͞ին 'ի փառս Ք͞Ի և սրբոցն͞ր:

Սոյնպ͞ և եւայլ վրդ͞պտն՝ որ էր ինքն 'ի մեղրն անուանեալ գեղջէն, և սա ևս յաշակերտաց տեառն Մովսէսի կթ͞ղկսին էր, որ 'ի փիլիպպոսէ կթ͞ղկսէ եպկպս և առաջնորդ կարգեցաւ սբ͞յ կարապետի վանացն, որ 'ի գաւառին երնջա կայ: Եւ սա ևս յաւուրս փիլիպպոսի կթ͞ղկսի սկսաւ նորոգել զնոյն ինքն զվանս սրբոյ կարա պետի, զի միանգամայն զա͞մն յառաջագոյն լեալ շինուածոն քակեալ էբարձ 'ի միջոյ, զե կեղեցին և զտունսն, և զխուցսն, և զպարիսպն՝ և ապա շուրջանակի լայն և ը͞արձակ զհաստատ և զբարձրագոյն պարիսպ էարկ: և ապա ներքն զտունս և զապարանս 'ի բնակութ͞ի ինքեանց և հիւրոց: Նաստուաւել զեկեղեցին 'ի տեղի հնոյ եկեղեցւոյն լայն և ընդարձակ և բարձրաբեր ձևով կամարօք և կթ͞ղկէիւ, ի վ͞ր չորից սեանց կառուցեալ՝ սրբատաշօք վիմօք, կատարեալ զա͞մ եկեղեցին 'ի հիմանց մինչև ցծայրս նորին՝ յոլովիւ աշխատութ͞բ և բազմօք ծախիւք կատա րեցան ա͞մքն շինուածքն: և 'ի հազար և հարիւր և երկու թուին, և հոկտեմբերի ամսոյ տասն և եօթնին օրհնեցաւ եկեղեցին մեծահանդէս սօք նաւակատեօք 'ի փառս Ք͞Ի:

Նոյնպէս և զաքարիայ վարդ͞պտն, որ էր 'ի գեղջէն Էջմիածնի, և էր նա առաջնորդ մեծափառ ուխտին յօհաննավանուց, և սա ևս յաշակերտացն մովսէսի կթ͞ղկսին էր, այր երև ելի փառաւոր ներքոյ աշխարհի, յոյժ հանճա րեղ և ճոխամախօս, խորհրդով և խելօք կորովի

և դիմօք ահարկու։ և սա ևս յաւուրս փիլիպ-
պոսի զձեռն 'ի գործ էարկ նորոգել զեկեղե-
ցին և զտունս յօհաննավանից, զի պարիսպն որ
շուրջանակի՝ նա միայն էր պիտանի. իսկ այլքն
ամենքն անպիտանք և յուլք և եկեղեցեացն ամենեցուն
տանիքն աւերեալք և քանդեալք. զաքարիայ
վրդապետն ժողովեաց զբազում վարպետս քարա-
հատս և փայտատաշս, և դարբինս, և զձեռն 'ի
գործ էարկ սկսաւ նորոգել զվանսն։ նախ ըզ-
տունս և զխուցսն ամենայն շինեալ աւարտեաց, և
ապա զեկեղեցին, բայց փութանակի՝ քանզի
յերկուս ամս աւարտեցաւ նորոգումն եկեղե-
ցեայն։ Քզի առատագունաբար յերկիր է հեղ-
զգանձ՝ որ տայր գործողաց, երեսուն քարտաշ
հանապազ նստեալ զքար տաշէին, և երկու ճար-
տար մէմար միշտ շարէին, և այլ վարպետք և գոր-
ծաւորք յոյժ յոլովք վասն որոյ փութով աւար-
տեցաւ։ և զքարն և զկիրն յայնմանէ կողմանէ
ձորոյն ձիով բերէին. և 'ի հազար և հարիւր մէկ
թուին զերծան 'ի գործոյ, և 'ի տօնի խաչվերա-
ցին, որհնեցին զխաչն, որ 'ի գլուխ կաթողիկէին և
գոհացան զԱծ։ Նոյն ինքն զաքարիայ վրդապետն,
էր այր կատարեալ և յոյժ պիտանի աշխարհի,
և թէպէտ յոյժ ծերացեալ էր այլ տևեաց
նա մինչև հազար և հարիւրութ թիւ թուա-
կանին մերոյ յորում վախճանեցաւ։ և նախ
քան զվախճանն իւր ինքն փորեաց զիւր գերեզ-
ման, և պատրաստեաց զքար տապանի, և յու-
լիսի ամսոյ տասն յաւուր տօնի վարդավառին
վճարեաց զայս կեանս մահուամբ, և յաւելա-
աւ տէր հանգստեամբ, զոր իւրում պատրաս-
տեալ գերեզմանին թաղեցին իւրով տապա-
նաւն, և պատահեցաւ վախճանն նորա լինել 'ի մէջ
Էջմիածինն. զի վասն ընտանեբար և ցաւակից

հոգալոյ

հօգւոյ զպատուաւորութիւն սրբոյ Էջմիածնի իւրով քաջագունով խորհրդովն և կորովօք խելօքն. որով դիպաւոր և պատեհաւոր տրամատեալ ընտրէր զնմին խորհուրդս և զբանս. անդ՝ ի սբ Էջմիածինն պահէին համապաղ։ վն որոյ անդ վախճանեցաւ. և անդէն թաղեցաւ առաջի զանգակատանն յարևմտից կուսէ, որոյ յիշատակն օրհնութբ եղիցի։

Օ այսու ժամանակաւ յաւուրս փիլիպպոսի կթղկսի, շինեցաւ վերստին և վանքն սրբոյ առաքելոյն թադէոսի, որ է յարտաղ գաւառին՝ ի գիւղն մակու։ զի միանգամայն ամքն շինուածքն աւերեալք էին, և՝ ի սոյն ժամանակի եպիսկոպոս ոմն մկրտիչ անուն իւրովք միաբանօքն աբեղայիւք և սարկաւագօք՝ որք էին ամքն՝ ի նոյն գեղջէն մակուայ։ զի թէպէտև աղքատք էին և յընչից թափուրք, այլ վառեցան ամքն սիրով սրբոյ առաքելոյն թադէոսի, յուսացան յողորմութի ամենազօրին Այ և՝ ի բարեխօսութի սրբոյն թադէոսի առաքելոյն, գնեցին՝ ի գործ արկին, և զսկիզբն արարին շինութե վանացն։ և նախ զտաճարն սկսան շինել որոյ արևելեան և հիւսիսային կողմանն որմոցն մինչև ցկէսն միայն շէն էր մնացեալ. և այլ ոչինչ բնաւ, և սոքա զամն միանգամայն մինչև ցգլուխ կթղկէին շինեցին, ներքուստ և արտաքուստ սրբատաշիւք վիմօք, ամուր և գեղեցիկ, և եղև կատարումն գործոյ տաճարին հազար և իննսուն և ինն թուին։ Յետ կատարմանն տաճարին նոյն յուսովն, որ առ Այ՝ սկսան զժամատունն շինել խրախուսեցելովք բարամբք և մածուցելով կրով. և սորին կատարումն եղև՝ ի հազար և հարիւրերկու թուին։ Օ կնի սորին շինեցին զվկայարան սրբուհւոյ կուսին սանդխտոյ։

 Այս

Նմա զնահատակ անուանեալ եկեղեցին, որ է տեղի նահատակութե մէջ աւագելոյն Թադէոսի ։ և կատարեալ զժմն շինուածս զայսօսիկ շնորհօք և ողորմութեն Ա՟Յ, նոյն եպսկպսն միրոնիշ և միաբանքն իւր կան անդէն և պաշտեն զԱ՟Ծ և զսուրբս ն՟ր ակնկալեալք ողորմութենն Ա՟Յ որում փառք յաւիտեանս ամէն ։

Սոյնն նման շինեցաւ յաւուրս տեառն փիլիպպոսի կթղկսի, և վանք սրբոյն գէորգայ զօրավարին, որ է 'ի գիւղն մուղնի. որոյ մերձ գոլով գիւղաքաղաքին կարփու, ազատութբ և արդեամբք մարտիրոսի եպիսկոպոսին, որ էր 'ի նունոյ մուղնայ գեղէն եպիսկոպոսունոյ վանացն. որոյ եկեղեցին յոյժ փոքրիկ էր՝ և այլ տնքն շինուածքն անպէտ և անդէպ։ վասորոյ այս մարտիրոս եպիսկոպոս զեղեալ եկեղեցին, և զայլ տնսն շինուածսն միահաղոյն խլացեբարձ, և զնոր պարիսպ պատեաց շուրջանակի չափաւոր, և եկեղեցի վայելուչ ի մէջ պարսպին իւր չորից սեանց կառուցեալ. և առ պարսպօքն զտունս և խուցս ։ զամենայն շինեալ աւարտեաց և էթող իւր յիշատակ բարի առաջի Ա՟Յ և մարդկան, և ինքն ևս անդէն թաղեցաւ, բարեխօս կալեալ զսբն գէորգ վն իւր և վն ամենից քրիստոնէից ։

Նայս և վանք սրբոյն սարգսի զօրավարին որ է 'ի գիւղն ուշի շինեալն 'ի սրբոյն մեսրոպայ մեծէ վարդպտէն. որև սա մերձ է 'ի գիւղն կարփի. որ 'ի ստորոտս արագած լերինն. այս վանքս նորոգեցաւ ձեռամբ ոսկանի վարդպտին. որ էր ինքնս յերևան քաղաքէն և յաշակերտաց փիլիպպոսի կթղկսին ։ զի թէպէտ կայր եկեղեցիքն վայելուչ և սրբաշէն և բարձրաբերձիւ կաթղկէիւ. այլ տանիք եկեղեցեայն տնջեն.քանդեալք և աւերեալք էին.

եկեղե

եկեղեցիքն միայն կային 'ի տեղւոջն. և շուրջանակի շինութ̃ի ոչ ընաւ. այլ սաստիկ քարուտ։ Իսկ ոսկան վրդ̃պտս թէպէտ ոչ կարաց նորոգել զտանիս եկեղեցեացն. զի ոչ ունէր զայնքան գոյս. այլ մեծաւ տաժանմամբ և բազմաւ աշխատութ̃բ պեղեաց զչորս կողմունս եկեղեցւոյն. և պատեաց շուրջանակի զպարիսպ յոյժ ամուր. և իմէջ պարսպին շինեաց ըստ պատշաճին զխուցս և զտունս՝ և ինքն կայ անդէն բարւոք կարգաւորութ̃բ յուսացեալ յողորմութ̃ին Ա̃յ բարեխօսութ̃բ սրբոյն սարգսի զօրավարին։

Այլ և զհոյակապ և զլայնանիստ և զբարձրաբերձ տաճար փառացն Ա̃յ. զհանգստարան մեծի վարդ̃պտին սրբոյն մեսրոպայ՝ այնորիկ, որ եգիտ զգիրս հայոց. ո̃չ և բանք պատմութե նր̃ ճառեն տարեալ հանգուցին զնա 'ի գիւղն՝ որ անուանի օշական. արդ այս տաճար հանգստարանի սրբոյն մեսրոպայ վարդապետին 'ի վաղուց ժամանակաց բովանդակ տանիքն փլուզեալ իջեալ էր. և միայն աւագ խորանն էր մնացեալ ծածուկ. և 'ի ժամանակս կթ̃ղիկոսութե̃ իւրոյ հայրապետն փիլիպպոս ակսաւ զայն ևս նորոգել՝ որ և կատարեաց բազմօք ծախիւք և աշխատութ̃բ. խրատեցելով քարիւ և մածուցելով կրով մինչև աւարտեաց զբովանդակն. 'ի թուականին մերոյ հազար և իննսունևչորս. 'ի փառս Ա̃յ։

Այլ և զբարձրաբերձ և զլայնանիստ և զմեծաշուք տաճարն որ յանուն սրբուհւոյ Ա̃ծածնին շինեալ կայ 'ի նախնեաց և վաղուց ժամանակաց 'ի գիւղն բջնի. որոյ տանիքն ամ̃ աւերեալ և քայքայեալ էր։ Նորոգեցաւ հրամանաւ տեառն փիլիպպոսի կթ̃ղկսի. ծախիւք և ար

գեամբք քաասնից մեծի պատրկի Ջուղայեցի խօջայ պետրոսին. զոր մականուամբ բդուղ պետրոս ասէին. և անուն եպիսկոպոսի վանացն էր փիլիպպոս յորում ժամանակի էր Թուական մեր հազար և իննսուն և երկու: Եւ յետոյ եղև առաջնորդ նոյն վանացն մովսէս վարդապետն աշակերտ տեառն փիլիպպոսի կաթողիկոսի. որոյ շուրջանակի պատեալ զպարիսպ վանացն գեղեցկի յարմարութեամբ և ախորժ տեսողացն:

Այն և այլ և բազումք վանորայք նորոգեալք. և բազումք եկեղեցիք ՚ի հիմանց նոր շինեալք. ՚ի քաղաքն տփխիս. և գաւառն լոռոյ. և յաշխարհն արարատու. ՚ի գաւառն սիսական. և յաշխարհն ղափանայ. ՚ի քաղաքն նախջուան. և ՚ի գեղորայսն որ չքնաղ և մեծաշուք և վայելուչ եկեղեցին աստապատու. և քաղաքին նախջուանու. և ձահկայ գեղջն. և շահկերտու գիւղին. և գաղ գիւղին. որք շինեցան յաւուրս տեառն յակոբայ կաթողիկոսին և շոռօթու եկեղեցին. և ագուլեաց վանքն և գիւղի չորս եկեղեցիքն. և ցղնայ եկեղեցին. և դարաշամբայ եկեղեցին: և Թաւրիզու քաղաքի եկեղեցին: այլ և այլք յոլովք զորս ոչ յիշեմ: ոմանք յաւուրս մովսէսի կաթողիկոսին շինեցան. և ոմանք յաւուրս փիլիպպոսի կաթողիկոսի. զորս Տր Ած պահեսցէ անսասան մինչև յաւիտեան:

---

Վասն նահատակութն տեառն Անդրէի քահանային:

## ԻԷ:

## Ի ՆԳ ՆԻ ՕՐԻ ՄՆՆ

և առաջին շահաբաս Թագաւորն Պարսից ունկնդիր լեալ զրպարտողաց արանց. որք խօսեցան զբանս չարս վասն բնակչացն նախջուան քաղաքին. որև բարկութբ մեծաւ

մեծաւ ցասեաւ խլ̃ն ն̃չ շահն ․ և հրամայեաց
հանել զամենն բնակիչս քաղաքին ․ և արտասահ
մանապարհեալ վարել և տանել 'ի քաղաքն Փա
հրապատ ․ և զքաղաքն նախջաւան աւերել ․
զտունս և զամենն շինուածսն քանդել ․ և զայ
գեստանսն կոտորել ․ որ անխափան կոտորեցաւ
աւ նոսա հրամանն թգ̃րին ․ զի զամենն բնակիչսն
հանեալ վարեցին 'ի Փահրապատ ։ Իսկ 'ի բնակ
չայն նախջաւանայ որք աննշանք և սակաւք որք
փախուցեալք 'ի շրջակայ գեղօրայսն թաքեան
սատ և անդ ․ յորոց մի էին և ծնողք տէր ան
դրէասին ․ որք գնացեալք 'ի գիւղն ագուլիս,
և անդէն զետեղեցան ։ և մինչ էր 'ի տիս ման
կութե տէր անդրէաս ետուն զնա յուսումն
գրոց՝ և ուսաւ զամենն եկեղեցական ուսմունս ։
Իբրև զարգացաւ՝ և եհաս 'ի չափ հասակի ․
մուծին զնա 'ի կարգ աշխարհի և արարին նմա
զհարսանիս ։ Նաև ոմ̃ գրեալէ թէ ըստ վկայու
թե անձին իւրոյ և ամ̃ ժողովրդեանն ․ օրհնե
ցին զնա քահանայ ․ և նա պաշտէր զքահանայու
թին ոմ̃ և վայելէ կարգի քահանայութե ։

Նաև 'ի սոյն ժամանակս վարդապետն մօսէս՝ որ
յետոյ եղև կաթողիկոս Էջմիածնի ․ վարդապետն պօ
ղօս զոր 'ի վերոյ պատմեցաք ․ յայտնեալ եղեն
յարևելեան աշխարհն հայոց ամբիծ և պար
կեշտ՝ զի շրջէին յերկրէ յերկիր և անխափան
քարոզէին ․ շինէին զեկեղեցիս, կարգէին զքա
հանայս ըստ կարգի առաքելոցն ։ Նաև մն̃ հաս
տատութե հաւատոյս և կրօնիցս մերոց հաս
տատեցին զդպրատուն 'ի պաշտաճաւոր տեղիս,
'ի գիւղն սատապատ, և 'ի շօռօթ, զի 'ի շրջա
կայ գեղօրէիցն անդր ժողովեցին մանկունք
առ 'ի յուսումն ։ սոյնոմ̃ և 'ի գիւղն ագուլիս
հաստատեցին զդպրատունն ․ և կարգեցին խլ̃ի
մանս

մանկանցն դպրապետ զտէր անդրէասն. յո
րում տեղւոջ ժողովեցան մանկունք ոչ թէ
յիսուն կամ վաթսուն. և տէր անդրէասն էր վե
րակացու. որ հովուէր զմանկունսն և ուսուցա
նէր զուսումն հասարակաց մերս եկեղեցւոյ:

Եւ եղև գալ շահաբասի թգ̃րին 'ի գիւղն ա-
գուլիս յայսպիսւոյ իմն պատճառէ. զի յազգէն
Օսմանցւոց ելեալ ոմն սարդար. անուամբ
օքուզահմատ փաշայ բազմաւ զօրու եկն ի վ̃ր բեր
դին երևանայ: վ̃ որոյ թգ̃րն Պարսից շահա
բաս. ժողովեալ զամ̃ զօրն Պարսից եկն յերև
ան յօգնութիւն բերդին: և նստաւ սարդարն
ի վ̃ր բերդին և պատերազմեցաւ մինչև ցերկու
ամիս և կէս՝ և ոչ կարաց առնուլ: ժամանեաց
ի վ̃ր ցուրտ աշունն՝ և վշտացեալ 'ի ցրտէ և 'ի
սովէ: դարձ արարեալ ամենայնիւ բանակաւն
իւրով՝ և չուեալ գնաց 'ի քաղաքն կարին յաշ
խարհն Օսմանցւոց: Զկնի դառնալոյ սար
դարին. շահնևս դարձաւ յերևանայ և գնաց
'ի նախջուան, և անտի յագուլիս:

Եւ սովորութիւն էր շահին, զի ուր և մտա
նէր թէ 'ի քաղաք թէ յերկիր. ամ̃ն բնակիչք
տեղւոյն միահաղոյն ընդառաջ ելանէին, իշ
խանք, և ժողովուրդք, արք և կանայք և աղջ
կունք. երիտասարդ և մանկունք ամ̃ն զար
դարեալք ազնուովք և մեծագնովք զարդուք.
քաղցրահամօք մրգօք. և համադամօք ճաշակե
լեօք և անուշահոտով և ծաղկեհամով գինեաւ:
և վայելչահասակ և գեղեցկատես մանկունք և
աղջկունք և կանայք 'ի ձեռս առեալ զգինին ոս
կեաւ բաժակաւ մատուցանէին շահին: Այլև
մարմնաւոր գուսանք և երգեցօղք առաջի
ընթանալով. և արուեստականօք երգարանօք
քաղցրանուագ երգէին: Այլև եկեղեցականք

քահանայք և պաշտօնեայք. զգեցեալ զշուրջառ և զշապիկ. և առեալ զխաչ և զաւետարան. և ամբարձեալ խաչալամ. խնկօք և մոմեղինօք. և զանգակօք և ծնծղայիւք ելանէին ընդառաջ շահին, և երգելով գնային մինչ հասուցանէին յիւր իջեւանն։

Արդ յորժամ ագուլիս գիւղի քահանայքն ելլին ընդառաջ շահին զգեցեալ զգեստուք. կային ընդ նոսա և ոմանք 'ի մանկանց դպրատանն՝ որք զգեցեալ էին զշապիկս և բարձեալ շամադան և մոմ: և երթային առընթեր խաչալամին։ և մինչ երթային քահանայքն երգելով առաջի շահին. և շահն հայէր այսր և անդր. և ըստ չարայուշ միտաց և բարոյից իւրոց զննէր զնմին։ և 'ի զննելն հայեցեալ 'ի մանկունսն ետես զի ածելեալ էր կուլակ մանկանցն. և այն յոյժ ծանր և դժուարին թուեցաւ ինքեան. զի համարեցաւ թէ վասն ինքեան արարեալ իցեն զայն. ոպ՟ զի մի վայելչագեղ երևեսցին մանկունքն յաչս նր՟. և հանձեալ 'ի նոսա առցէ 'ի նոցանէ։ Եւ անդէն շարժեցաւ 'ի ցասումն բարկութե՟ շահն ի վր՟ առնն որ ածելեալ իցէ զկուլակս մանկանցն։ Այլ և որք ոմանք մահմետականաւ հաւատով որք բնիկ բնակիչք էին ագուլեաց գեղջն՝ երևելի իշխանք. որք ը՟ շահին շրջէին. և մերձ նմին 'ի սպասու կային։ և վն՟ բնականի նախանձուն, զոր ունէին ընդ քրիստոնէից առաւելևս գրգռեցին և զայրացուցին զսրտմտութի՟ թգ՟ւորին 'ի վերայ քրիստոնէից. վասն որոյ ստէպ յուղմամբ հրամայեաց շահն զննել և գտանել. և որ զայն արարեալ իցէ սպանանել։ և եթէ ծնողք մանկանցն արարեալ իցեն զայն. զնոսին սպանանել՝ և զինչսն յափշտակել՝ և զմանկունսն

կունան դրաւել 'ի ծառայութիւն Թագաւորին։ Իսկ առաջիկայք Թագաւորին սկսան զննել և հարցանել 'ի սմանէ և 'ի նմանէ թէ ո՞ զայն արարեալ իցէ. և ամենքն զոչգիտելն պատասխանէին. ապա իմէջ առեալ զտէր Անդրէասն և ստիպով պահանջէին թէ ասա մեզ՝ զի դու ես վերակացու մանկանցն. և դու ես գիտակ։ Իսկ տէր Անդրէասն խոկայր 'ի միտս. թէ զծնողսն պատճառեմ զնոսա սպանանեն, և զմանկունսն յափշտակեն. և թէ զայլ ոք պատճառեմ զնա սպանանեն. և լինի այն ինձ խիղճ մտաց և ստգտանք անփարատելի. բայց լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումըս. վասնորոյ 'ի կարի ստիպելն զինուորացն. տէր Անդրէասն առ 'ի փրկելոյ զայլս ասաց թէ ես եմ արարեալ զայն։ և զինուորքն ծանուցին զբանն նորա շահին. և շահն հրամայեաց ունել զնա և պահել 'ի կալանս։ Իսկ զկնի աւուրց հրամայեաց շահն ածել զնա առաջի իւր. և հարցանէր, թէ զստոյգն ասա՝ ովք է արարող այդմ գործոյ՝ և տէր Անդրէասն ասաց՝ ո՛չ ոք այլ ես միայն։ Իբրև ետես շահն թէ զայլք ոչ մատնեաց՝ յոյժ բարկացաւ ի վերայ նորա. և հրամայեաց տարածել ի վերայ գետնոյ և բրածեծ առնել անխնայաբար. և զկնի յոլովից հարուածոցն ասաց շահն. զայդպիսի վնաս և զպարտաւորութիւն արարեալ է քո. եթէ կամիս զկենդանութիւն անձին քո. ուրացիր զհաւատն քրիստոնէութեան ձերոյ. և լեր օրինօքն մերովք՝ դաւանութեան առաջնորդին մերոյ. և ես տաց քեզ զպատիւս և զմեծութիւնս. և թէ ոչ հաւանիս. շանց և գազանաց առաջի արկանեմ զքեզ։ Իսկ նա ոչ կալաւ յանձն զուրանալն. այլ ետ զպատասխանի թէ քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ։

ծառայ: և թ̃ւրն իբրև լուաւ զայն. զայրա գին բարկութ̃ե հրամայեաց դարձեալ 'ի բանտ արկանել:

Եւ 'ի վաղիւն վերստին եած առաջի նոր. և հարցանէր թէ ուրանաս զհաւատն քո. և տէր Անդրէաս ասաց ոչ ուրանամ: Կրկին ան գամ ասաց արքայ տամ քեզ զպատիւս և զմե ծութիւս թէ ուրանաս զհաւատն ձեր. և նա ոչ հաւանեցաւ: և դարձեալ հրամայեաց 'ի բանտ արկանել:

Իսկ քրիստոնեայքն մատեան առ նախա րարս թ̃ւրին. և խոստացան զգանձս բազումս. զի գուցէ ազատեսցեն զնա. և թէպէտ նախա րարքն խնդրեցին երկիցս և երիցս ոչ լուաւ արքայ: Այլև ցղնեցի խօջայ անձրևի կինն որում մայր էր ասացեալ շահն. և ունէր զպա տիւ առաջի շահին. սա մեծաւ աղաչանօք ան կեալ առաջի շահին խնդրեաց արձակել զնա. սմա ևս ոչ լուաւ:

Եւ դարձեալ ածին զտէր Անդրէաս առաջի արքային յետ բազումանգամ հարց և փորձա նելոյ խոստմամբ պարգևաց և սպառնալեօք տանջանաց. իբրև ետես թ̃ւրն թէ ոչ հաւա նի, հրամայեաց սպանանել: Իսկ քաջ նահա տակն և Ճշմարիտ քահանայն տէր Անդրէաս հաստատնով հաւատով կայր իւր̃ անշարժ ի հիման հաւատոյս քրիստոնէութ̃ե:

Իսկ զինուորացն առեալ զտէր Անդրէասն կապանօք տարան 'ի տեղի կատարմանն. և նա ու րախութ̃բ և յօժար կամօք գնայր. և յորժամ էհաս 'ի տեղի կատարմանն իւրոյ արձա կեաց զգօտին իւր. և մերկացաւ զհանդերձն իւր. և ասէր դահճացն կատարել իւր̃ ինքեան զհրամանս թ̃ւրին. բայց դահիճքն յամեցու ցանէին.

ցանէին· զի գուցէ հաւանեսցի հրամանաց
արքային:

Եւ մինչ կայր սուրբն 'ի տեղի կատարմանն· առաքեաց առ նա թ̃ւրն 'ի նախարարացն զօմանս երկիցս թէ մի՛ կորուսաներ զքեզ եւ զմանկութ̃ի քո՝ եկեալ հաւանեաց իմոց բանից· եւ առ յինէն զպարգեւս եւ զմեծութիւն: Իսկ քաջ նահատակն ամենից բանից նոց̃ տայր զպատասխանի· թէ ընդունայն խոստմանց ձերոց ոչ հաւանիմ· եւ զճշմարիտ հաւատն իմ ոչ ուրանամ: Եւ դահճացն հանեալ զսուրն խաղացուցանէին ի վ̃ր նորա՝ եւ ածէին ի վ̃ր որովայնին առ ի երկեցուցանել զնա՝ եւ նա ոչ երկնչէր:

Եկին 'ի տեղի նահատակութե̃ն ծնօղք սր̃յն եւ կային առ ընթեր՝ եւ աղիողորմիւք եւ յորդաբղխօք արտասուօք լային· եւ աղաչանօք ասէին առ սուրբն· քաղցրիկ որդեակ մեր, որ առեր զկարգ քահանայութե̃ եւ եղեր զինուոր Ք̃ի· մի երբեք լիցի քեզ ուրանալ զՔ̃ս· եւ լինել զինուոր տիրատեաց· մի թողուցուս զլուսապայծառ հաւատս Ք̃ի· եւ մի վ̃ն առժամանակեայ կենացս զրկեսցիս յաւիտենականաց կենացն· այլ յիշեա զճշմարիտ վկայսն Ք̃ի· զորոց զպատմութիւն հանապազ ընթերցեալ պատմէիր մեզ· համբեր որպէս եւ նոքայն· զի եւ նոցին պսակացն արժանասցիս: զայս եւ որ սոցին նման փղձկելով սրտիւ· եւ յորդաբղխօք արտասուօք աղերսալի ասէին ծնօղք սրբոյն առ նա: Իսկ դահճացն զբազում ժամս յամեցուցին անդէն· զի թերեւս երկմտեալ թուլասցի· եւ սուրբն անդրդուելի կայր ի վ̃ր ճշմարտի հաւատոյս· եւ 'ի խաչակնքելոյ զդէմն ոչ դադարէր: Իբրեւ տեսին զհաստատութիւն մտաց նորա դահիճքն· թէ ոչ դառնայ, յայն

ժամ ձգեալ զսուրն պատառեցին զորովայնն
նր. և վաթեցաւ աղիքն արտաքս՚ի փորէն. և
մին միով ձեռամբն ժողովէր զաղիսն՚ի փորն
և միով ձեռամբն խաչակնքէր զերեսն. և յիշէր
զանունն Քի։ և ապա ծակեալ զջիլս սրու-
նից ոտացն. և պարանօք բարձրացուցեալ՚ի
բարձունս. և կախեցին զսուրբն գլխի վայր.
և նա կայր կենդանի մինչև՚ի մուտս արևուն։
և ընդ երեկոյն աւանդեաց զմաքուր հոգին՚ի
ձեռս Այ. որպէս զխունկ անոյշ և զճշմարիտ
զոհ ընդունելի։ Իսկ յետ մահուան սրբոյն
հրամայեաց շահն ձգել զմարմինն նր արտաքոյ
չինութեն. զի կերակուր լիցի գազանաց և թռչ-
նոց։ Իսկ քրիստոնէիցն բարձեալ անտի և բե-
րեալ յադուլեաց ներքին եկեղեցին, որ այժմ
ասի խցաձորի եկեղեցի. և անդ թաղեցին. և
այժմ անդէն կայ թաղեալ պատուական
նշխար ոսկերաց նր։

Իսկ եղև կատարումն և մարտիրոսական մահ
սբյ քահանայիս Այ տէր անդրէասիս՚ի թուա-
կանիս Հայոց հազար և վաթսուն և վեց. տրէ
ամսոյ՚ի տասն. և նոյեմբերի ամսոյ՚ի տասն և
յութն։ Որոյ յիշատակն օրհնութբ եղիցի՝ և
աղօթիւքն նր Տր մեզ ողորմեսցի։

Իսկ յետ կատարման տեառն անդրէասի
իբրև անցին իվր ամիսք երեք կամ չորք. իմէջ
խօսից և զրուցաց վերստին յիշեալ եղև առա
ջի շահաբասին ոմյունիք և իրակունիք անցուա
ծոց տեառն անդրէասի։ Իսկ անդէն ոմն՚ի նախ
կի չարախօսացն՚ի բնակօղ մահմետականացն
ադուլեաց՝ որոյ վասն կանխաւ յիշումն արա
րաք. և սորայս անունն էր շահուղբէկ. ա-
սաց առաջի շահին թէ տէր անդրէասն, որ
զկուլակս մանկանցն ածեալ էր. ոչ թէ յիւ

րոց մտաց ինչ. այլ խրատով վերակացուին իւ րոյ. քանզի ունի լինքեան զխրատիչ: և անդէն արարին զհարցումն վն̃ խրատողին թէ ո՞վ իցէ: Իսկ ոմն 'ի համեմատութիս մարդկան և անասնոց կենդանեաց. համեմատին տաճկաց ազգն 'ի յոխ վն̃ նախանձուն և նենգութն, զոր ընական ունին ընդ ազգս և ընդ հաւատս քրիստոնէից: յորոց և ոմն այս ոսկեղէկս նովին կրիւքն ախտացեալ մատնեաց շահին զմօսէս վրդ̃պտն ասելով: է ոմն այր, որոյ է անունն մօսէս. որ է վարդ̃պտ օրինացն քրիստոնէից. որոյ բնակութիւն է 'ի վանքն տաթևու. և ինքն է յերկրէն սիւնեաց՝ և նա է օրէնսուսոյց և դաստիարակ տեառն անդրէի: Զաղագս որոյ հրաման եղև 'ի թդ̃րեն առաքել զզօրականս և ունիլ զմօսէս՝ և կապանօք ածել առ թդ̃ւըրն: և զօրականացն գնացեալ կալան զմօսէս վարդապետն. ընդ նմին և զպօղոս վրդ̃պտն. և եդին զօղամանեակ զուգեալ 'ի փայտից 'ի պարանոցս նց̃. և երկաթ ոտնակապ յոտսնոցա. յաւուրս ցրտութն ձմերայնոյ. և բերին զերկոսեան վրդ̃պտսն 'ի բանակն շահին, և ծանուցին նմա: Իսկ 'ի խոհարանս խորհրդոց իւրոց քննեալէր շահն թէ սպանանել զարս երկուս՝ սակաւ լինի վնաս քրիստոնէից և օգուտ մեզ. այլ առից զյոլով տուգանս արծաթոյ 'ի նոցանէ. որով լինի աւելի օգուտ մեզ և վնաս նց̃. և այսպէս վն̃ ագահութն և արծաթսիրութն էարկ զտուգանս իմն վարդ̃պտացն թէ զհինգհարիւր թումանն տան և ապա գնան ազատ: բայց քրիստոնէիցն զաղերս մատուցեալ առ նախարարս արքայի, զի խնդրեսցեն յարքայէ թեթևացուցանել զտուգանսն. և վն̃ միջնորդելոյ նախարարացն իջաւ մինչ յերեքհարիւր թումանն.

և

և անդէն վճիռ եհատ թէ անպատճառ տացեն. որև կարգեաց խմբ նց զզօրականս զի առցեն ։ Իսկ վարդպտքն մն ոչունելոյ զինչս, զի տայեն 'ի տուգանս. ելին 'ի շրջագայութիս և 'ի խնդիր ողորմութե յամենայն ազգս Հայոց ։

Իսկ ամ~ասեր քրիստոնեայքն թէպէտ աղքատք և չքաւորք էին. այլ ըստ կարողութե իւրեանց աղքատք և հարուստք. արք և կանայք անխնայաբար թափէին զինչս և զողորմութիս առաջի վրդպտացն ։ և նք առեալ զողորմութիս. ուրևմնէր գերի և բանտ արգել՝ և անզերծանելի պարտատէր՝ և այլ պակասաւոր՝ նախ նց տային և ազատէին. և յայսմանէ պատճառէ բազում գերիք, և բանտ արգելք, և պարտատեարք, ազատեցան. և ապա զմնացեալն տային իւրեանց ունող զօրականացն սակս տուգանին իւրեանց ։ Իսկ այսպիսեաւ շրջագայութբ մինչև 'ի չորս և 'ի հինգ ամիս վճարեցին զերեքհարիւր թումանն. և ինքեանք զերծան 'ի կապանաց ողորմութբն Ա.Յ և տրօք քրիստոնէից ։

Իսկ շահուողքէկն. որ մատնեաց զմօսէս վարդպտն յետ սակաւուց աւուրց սպանեալ եղև սրով 'ի զօրականաց շահին. ընկալեալ ստէն զհատուցումն վաստակոց իւրոց զսատակումն մարմնոյ. և անդէն զկորուստն հոգւոյ և զտանջանսն յաւիտենից ։

---

Պատմութն նեղութեց, և վշտաց. զորս կրեցին Հայ ազգաւ քրիստոնեայքն, որք բնակեալք են 'ի քաղաքն խլով.

## ԻԲ ։

## Ս ՀԻՐ ՍՆԴՐ Դ ԿՍՐԳԻ

պատմութե, զոր գրեցաք մն մելքիսեթի կթղկսին թէ գնաց նա յաշխարհն իւխաց. արդ յորժամ էհաս նա անդր՝ և էմուտ

'ի քաղաքն Միւռ յետ անցանելոյ աւուրց ինչ' 'ի նոյն Միւռէ քաղաքէ ումն աբեղայ. որոյ անունն էր Նիկողայոս. զորս ոմանս միջնորդս և բարեխօսս արարեալ առաքեաց առ մելքի սէթ կէթիղկոսն զի օրհնեսցէ զինքն եպիսկոպոս ազգին Հայոց. որք կան Միւռ քաղաքին և որոց շուրջ զնովաւ. վն զի 'ի ժամանակին յայն միկ ոչ գոյր եպիսկոպոս նց: Եւ միջնորդացն մատուցեալ առ կէթիղկոսն ընծայեցին զոսկիս բազում. և խնդրեցին առնել զնիկողայոս աբեղայն եպիսկոպոս. և կէթիղկոսին տեսանելով զյոլովութի առ ձեռն պատրաստ ոսկւոյն. նաև ակնկալութի ևս յոլովից ոսկւոյ առյապայն. Հաճեցաւ օրհնել զնիկողայոսն եպիսկոպոս Միւռայ:

Իսկ քահանայք և ժողովուրդք քաղաքին' իշխանք և ռամիկք' 'ի վաղուց ժամանակաց գիտելով զորպիսութի վարուց նիկողայի աբեղային. գումարեցան միահաղոյն ամենեքեան, և եկեալ առ կէթիղկոսն ծանուցին զբանս իւրեանց նմա' և ասացին. մեք գիտեմք զդա, և զորպիսութի վարուց դորա. վսորոյ ոչ է դա մեզ ընդունելի. մի զդա' այլ զայլոք արասցես մեզ զեպիսկոպոս.

Իսկ կէթիղկոսն քամահեալ անարգեաց զժողովուրդն և զբանս նց. և արտաքսեալ յերեսաց իւրոց յետս դարձոյց զնս. բայց ժողովուրդքն' ոչ թուլացան 'ի բանից իւրեանց' այլ 'ի բազում աւուրս' բազմօք բանիւք խօսեցան ընդ կէթիղկոսին. և ոչ թողին օրհնել զնիկօլն եպիսկոպոս:

Ապա կէթիղկոսն ելեալ 'ի քաղաքէն գնաց 'ի վանքն, որ անուանեալ սրբուհւոյ Ածածնին կայ շինեալ արտաքոյ քաղաքին. զոր լուեցիք Հաճկատար Ածածին ասեն. և անդէն առանց գիտելոյ ժողովրդոյն խմբէ գիշերի սկսաւ օրհնել զնիկող աբեղայն եպիսկոպոս: որում խրատ

դած

գած լեալ ժողովրդականաց քաղաքին ատժամայն 'ի նոյնում գիշերոյ իշխանք և ռամիկք վաղվաղակի գումարեցան 'ի միասին և ի՛ փոքր դուռն քաղաքին ելեալ փութանակի հասին 'ի տեղին․ աղաղակէին առ կթ̅ղկոսն մի՛ օրհնէր զդա՝ և մի՛ մատներ զմեզ և զեկեղեցիս մեր 'ի ձեռս անիրաւիդ այդմիկ․ զի մեք գիտեմք զդա՝ և զորպիսութի̅ վարուց դորա․ վա̅որոյ ոչ է մեզ ընդունելի։ Նու կթ̅ղկոն նստեալ իւր̅ աթոռոյ օրհնէր զնիկօլ աբեղայն եպիսկոպոս՝ և խաչիւն որ 'ի ձեռին էր սաստէր ժողովրդեանն․ և զբանս տգեղս, զոր ոչ է պարտ յիշել՝ ասէր նոցա․ և թէպէտ ողորմելի ժողովուրդքն ամբոխեալ և աղմկեալ յոքնակի աղաղակեցին․ ոչ լուա̅ւ նո̅ց կթ̅ղկոսն․ այլ օրհնեաց զնիկօլն եպիսկոպոս։

Նու յետ սուղինչ աւուրց կամեցաւ մելքիսէթ կթ̅ղկոն ելանել 'ի լոյս և գնալ 'ի քաղաքն կամենից․ և ժողովուրդքն հնարէին, զի թերևս զնիկօլն ընդ կթ̅ղկոսին ուղևորեսցեն 'ի գնալ․ իբրև խօսեցան ժողովուրդքն ընդ նիկօլին վա̅ գնալոյ ընդ կթ̅ղկոսին․ և նա խաբեաց զնո̅ ցուցանելով զինքն կամայօժար 'ի գնալն։ իբրև գնացին աւուրց ինչ ճանապարհ, ասաց կթ̅ղկոն ընդ նիկօլին․ բաւականէ այսքան գալն քո՝ այսուհետև խաղաղութի̅ դարձիր 'ի տեղին քո․ և 'ի գործ եպիսկոպոսութե քոյ․ ասաց նիկօլն՝ քո իսկ աչօք տեսեր զի այնքան հակառակեցան քեզ՝ և ոչ հաճէին յիս․ և այժմ զիա̅րդ իշխեմ գնալ իմէջ նո̅ց։ և այնքան հնարեաց նիկօլն․ մինչ որ կթ̅ղկոն զգիրս բանադրանաց՝ նզովից և կապանաց գրեալ իւր̅ ժողովրդեանն ետ 'ի ձեռս նիկօլայ եպիսկոպոսին․ ո̅յ զի թէոք ընդդիմակայեալ հակառակեսցի․

և ոչ ընկալցի զնա 'ի պատիւ եպիսկոպոսութե. լիցի 'ի ներքոյ բանադրանաց: և Նիկոլին առեալ զայս թուղթս և եկն 'ի Լով. ասաց ժողովրդեանն. դուք ամենքն ժողովեցարուք յաւուր կիրակէի յեկեղեցին՝ քանզի ունիմ խօսք ինչ խորհրդական համարակալպէս ասել ձեզ ամենեցուն: և յաւուր կիրակէին յորում և ժողովուրդք ժողովեալք էին յեկեղեցին՝ հանեալ զթուղթն բանադրանաց ետ ընթեռնուլ 'ի լսել ամենեցուն. իբրև զայն տեսին և լուան ամէնքն ժողովուրդքն տրտմեալ մեծաւ սգով՝ և վհատեցելով սրտիւ ապուշ մնացին. և ամփոփեալ եղեալ լռեցին. Իսկ կթղկն Մելքիսեթ՝ որ գնայր 'ի Կամենից. իբրև եհաս անդր. զկնի սակաւ աւուրց հիւանդացաւ՝ որ և մեռաւ իսկ յաղուհացից պահոցն 'ի ծաղկազարդի շաբաթօրն, 'ի տօնի յարութե ղազարու. 'ի մերում թուականին հազար և եօթանասուն և հինգ՝ և անդէն թաղեցաւ: Յետ այսորիկ զկնի անցելոց աւուրց և ամսոց ինչ. դէպ եղև Նիկոլայի եպիսկոպոսին գալ 'ի քաղաքն կամենից. և 'ի նոյնոյ քաղաքէն զոմն սարկաւագ որոյ անունն էր խաչկօ օրհնեաց աբեղայ. փոխանակ զանունն նր̃ և կոչեաց օնօփրիոս:

Նուկեսարացի գրիգոր վրդպտն. որ առեալ էր զգաւառական վրդպտական մօտէսի կթղկոսին. էր այր երևելի. զի վարուքն կարի պարկեշտ էր և չորական՝ և իմաստութեն փարթամ, բանիւքն և յոյժ համձարեղ. վն որոյ անուանի էր նա ի մէջ աշխարհի՝ որ ամ աշխարհ կախեալ կային զնմանէ: և եղև այսորիկ գրիգոր վրդպտս յաւուրսս յայսոսիկ գալ յաշխարհն իլախաց. և նախ եմուտ 'ի քաղաքն կամենից. անդ 'ի կամենից էր և Նիկոլ եպսկպսն. և կամեցան Նիկոլ եպսկպսն և այլք ոմանք զնորընծայ

աբե

աբեղայն զՕնոփրիոս արտաքս բերել՝ի քառաս
նից։ վ՜ն որոյ և եկեալ առ գրիգոր վրդ․պտն մե
ծարանօք հրաւիրէին գալ՝ի միւս եկեղեցին․
յորում զպատարագն մատուցանելոց էր նորըն
ծայն․ և նորընծայն դեռ ևս ոչ էր լիով պահեալ
զքառասունսն՝ քանզի տասնևհինգ աւուր օրհ
նեալ էր՝ զոր կամէին արտաքս բերել․ վ՜ն որոյ ա-
սաց վարդ․պտն՝ որովհետև ոչ է լցեալ զթիւ
քառասունն աւուրն․ ոչ է պարտ հանել՝ի քա
ռասնիցն․ այլ պարտ է լիով պահել զքառա
սունսն ըստ աւանդութե՛ հայաստանեայց եկե
ղեցւոյ՝ և կանոնաց հայրապետաց մերոց․ և
ապա հրաման է նորընծային մատուցանել զպա
տարագ և արտաքս ելանել՝ի քառասնից․ վ՜ն
որոյ և նոքա լռեցին զայն շաբաթն և ոչ բերին
արտաքս զնորընծայն։ Եւ՝ի գալ միւսում կի
րակէին կամեցան նիկօլն և այլք արտաքս բե
րել զնորընծայն․ վ՜ն որոյ ՝ի շաբաթօջն աւ
ուր միւսանգամ եկեալ հրաւիրեցին զվարդա
պետն․ և վարդ․պտն ոչ գնաց, այլ ասաց խօսքն
մեկ կու լինի։ իսկ նոքա ոչ եղեն ունկնդիր
բանից վարդ․պտին, և ոչ համբերեցին․ այլ
գնացին ՝ի յայնմ կիրակէին արտաքս բերին
զնորընծայն․ որ մատոյց զպատարագն․ և այս
կիրակէս՝ յորում զպատարագս մատոյց նորըն
ծայն․ դեռ քսանևերկու օր էր նր, որ քառա
սունք էր պահեալ։

Այլ եպիսկոպոսն նիկօլ արար յոյժ զանդուգն
և զանպատշաճ զգործ ՝ի կիրակէիս յայսմիկ՝ յո
րում զպատարագն մատուցին․ քանզի եկե
ղեցւոյն այնմիկ յորում էր վարդ․պտն զդուռն
փակեաց և զբանալին առ ինքն կալաւ։ Վ՜ն
այսմ գործոյ յոյժ վշտացաւ վրդ․պտն՝ վ՜ն որոյ
ասաց՝ այն մարդն անիծեալ լինի, որ այսօր
գնայ

գնայ յայն եկեղեցին։ և եպ̃ն յետ կատա րելոյ պատարագին, և արտաքս բերելոյ զնոր ընծայն. զայնմ եկեղեցւոյ զդուռն ևս փա կեաց. և եղեն փակեալք երկուց ևս եկեղեցեաց դրունքն։ և էին աւուրք աւագ տօներոյն՝ որ զկնի նորոյ կիրակէին հետագայ յերկու շաբա թոջ աւուրն դաւթի մարգարէին և յակոբայ Տ̃ն եղբօրն էր տօն, և այլ ըստ կարգի. և մնա ցին այսոքիկ աւուրքս եկեղեցիքն փակեալք առանց ժամի և պատարագի։

Ի վր̃ այսոցիկ յաւել նիկողն այլև զնենգու թիւն գործել առ վարդ̃պտն, և մշտացուցանել զնա. վ̃ղի գնաց առ վօյթն կամենից քաղա քին, որ'ի մեծէ իշխանէն վերակացու էր կար գեալ կամենից քաղաքին, որոյ անունն էր լու կաշ, խօսեցաւ եպ̃ն ընդ նմա և հաւանե ցոյց զնա՝ զի արգելցէ զվարդ̃պտն, և մի թող ցէ գնալ'ի լով և կամ յայլ քաղաքս, այլ'ի կամենից քաղաքէն դարձուցէ զնա, յետ դառնալ ընդ իւր եկեալ ճանապարհն և գնալ յայլ աշխարհ։ Վ̃որոյ և լուկաշ անուանեալ վօյթն առաքեաց զպատգամս առ վարդա պետն ասելով. մեծ իշխանն մեր թուղթ է ու ղարկեալ մեզ՝ թէ այդ վրդ̃պտդ, որ'ի թուրքի աշխարհէն եկեալ է չաշուտ է եղեր, հրաման չկայ որ'ի քաղաքէդ ելանէ. մի թողուք, որ եր թայ, թէ ոչ ձեր գլուխն կերթայ։ և այսպի սեօք բանիւք արգելեցին'ի գնալոյ զվրդ̃պտն, և վարդ̃պտն կայր անդէն իբրև զդիպահոջ։ Ապա արք ոմանք բարեպաշտօնք'ի ժողովր դոց քաղաքին մատեան առ վօյթն և ծանու ցին զանմեղութիւն վարդ̃պտին, ապա թէ հրա մանն եղև մն̃ վարդ̃պտին զի ելեալ գնասցէ ոչ թէ ի լով այլ դէպ'ի յետ ընդ որ և եկեալն էր

և վար

և վարդապետին ելեալ 'ի կամենիցոյ և եկն 'ի բուղդան և 'ի յուռուշելի, և 'ի ճանապարհէն գրեաց զգիր բանադրանաց նզովից և կապանաց խղճ նիկօլային՝ և առաքեաց 'ի լով. և նիկօլն ոչինչ հոգաց 'ի կողմանէ բանադրանացն, այլ կայր 'ի կարգի իւրում և 'ի քահանայագործութեան։ Նոյնց քահանայքն և ժողովուրդքն՝ այնք որք յառաջին ներհակ էին նիկօլին, 'ի բերան առեալ խօսէին, նաև յերեսաց ընդդէմ բերէին նմա, նաև ոմանք ոմանք ներհականային ևս, և օր աւուր զօրանային ներհակքն խղճ նիկօլին։ Այլև գրիգոր վարդապետն, ամ որպիսութիւն անցուածոցս այսոցիկ, այլև զանուղղայ վարս նիկօլին թղթով ծանոյց մեծէսի կթղկսին սբոյ Էջմիածնի, և խնդրեաց 'ի նմանէ զի և նա բարձու հրամանաւ սրբոյ Էջմիածնի և կթղկսական իշխանութեան բանադրեսցէ զնիկօլ եպիսկոպոսն, և մեծս կթղկսն ևս գրեաց զգիր բանադրանաց, և առաքեաց խղճ նիկօլայի եպիսկոպոսին։ և այսու պատճառաւ առաւել ևս զօրացան ներհակքն խղճ նիկօլին և 'ի չմարդի ունէին զնա։

Այս ոմանք 'ի ժողովրդականացն հարցումն արարին ընդ նիկօլին՝ թէ ընդէր ոչ գնաս առ գրիգոր վարդապետն և առնուս զարձակումն 'ի նորին կապանացն, և նա պատճառեաց թէ ոչ ունիմ զթոշակ ճանապարհի, և ժողովրդքն ժողովեցին զերիս հազար դուռուշս և ետուն նմա 'ի թոշակ ճանապարհի։ Յնուհետև եպիսկոպոսն, եթէ յիւրոց ինչ մտածութեանց, և եթէ 'ի սադրելոյ յիւրոց բարեկամացն, և թէ 'ի հարկելոյ ժողովրդոցն, ելեալ 'ի լովայ գնաց 'ի կողմանս կոստանդնուպօլսի, և կեսարիոյ· զի թերևս յուրեք գտեալ զգրիգոր վարդապետն

տացէ մեղայ և առցէ զարձակումն ՚ի նորին կապանացն։ Եւ գալով եկեալ եհաս ՚ի քաղաքն Բուրսայ, պատահեցաւ զի յաւուրսն յայնոսիկ անդ էր և Խարբերդացի Արիստակէս վարդապետն, որ՝ այս Արիստակէս վարդապետս և այն կեսարացի Գրիգոր վարդապետն, ունէին ընդ միմեանս զոխս նախանձու յոյժ սաստիկ։ Եւ եթէ զինչ էր պատճառ նախանձու և ոխակալութեանցն, բազում ժամանակաւ որոնեցի և զհաստատն ոչ գտի, և զանհաստատն ոչ գրեցի։ Եւ ՚ի պատճառէ այսմ նախանձու բազմօք բանիւք և պէսպիսեաւ կերպիւ խօսեցաւ Արիստակէս վարդապետն ընդ Նիկօլայի եպիսկոպոսին, և արգել զնա ՚ի գնալոյ առ Գրիգոր վարդապետն. երբեմն ասէր, դու եպիսկոպոս ես և նա վարդապետ, չունի զիշխանութիւն լսելոյ քո. երբեմն ասէր, ՚ի զուր և ՚ի նախանձու է բանադրեալ զքեզ, երբեմն ասէր, և ես վարդապետ եմ իբրև զնա ես արձակեմ զքեզ ՚ի կապանաց։ և այլ բազում կերպիւ խօսեցաւ և ոչ եթող գնալ ՚ի կեսարիայ առ Գրիգոր վարդապետն։ այնուհետև Նիկօլն ինքն ոչ գնաց՝ այլ գրեաց զթուղթ խնդրանաց և աղերսանաց առ Գրիգոր վարդապետն, թէ մինչ ՚ի Բուրսայ եկի, և աստէն հիւանդացայ և անկեալ կամ ՚ի մահիճս. վասնորոյ ոչ կարեմ գալ, խնդրեմ զի բարձցես յինէն զբանադրանսն և արձակեսցես ՚ի կապանաց, և առաքեսցես ինձ և ժողովրդեանն զթուղթ օրհնութեան, զի թերևս աղօթիւք և օրհնութեամբ քով աստի դարձայց և ողջութեամբ հասից ՚ի տեղին իմ։ Իսկ վարդապետն ՚ի տեսանելն զգիրն անկեղծիւք մտօք հաւատաց խօսից եպիսկոպոսին իբրև ճշմարտից խօսից, գրեաց զթուղթ արձակման և օրհնութեան եպիսկոպոսին, այլև զգիր օրհնութեան իլոլայ քաղաքին և առա-

քեաց

քեաց առ Նիկոլն, որ 'ի բուրսայ էր․ և Նիկոլն առեալ զթուղթն զայնոսիկ դարձաւ՝ և գնացեալ եհաս 'ի լով։ և լովացիք իբրև տեսին ըզթուղթն գրիգորի վարդապետին, ուրախացան և միաբանեցան ընդ եպիսկոպոսին։ Իսկ գրիգոր վարդապետն 'ի Հռոմ ճանապարհորդաց և յարանց գիտողաց, հաւատեաւ իւր եհաս թէ նիկոլ եպիսկոպոսն, յորժամ եկեալ է 'ի բուրսայ ոչ հիւանդացեալ է և ոչ տկարացեալ՝ այլ խորհրդակցութեամբ արհեստակէսն վարդապետին զկայ առեալ կացեալ է 'ի բուրսայ, և հնարիւք և պատրողականօք բանիւք արձակման զթուղթ առեալ է և գնացեալ 'ի տեղի իւր։ Եւ իւր այսմ խաբէութեան՝ զոր արարեալ է եպիսկոպոսն ընդ վարդապետին՝ կարի վշտացեալ վարդապետն, և վասն խաբէութեան գործոց նորա գրով ծանուցեալ է լովացւոց, այլև գրեալ թէ զնոյն առաջին նզովքն և բանադրանքն տակաւին կայ իւր այդմ եպիսկոպոսիդ, վասն որոյ և լովացիք յետս կացին յեպիսկոպոսէն, և ոչ ընդունէին զնա․ և անկաւ հակառակութիւն ի մէջ եպիսկոպոսին և ժողովրդոցն յոյժ սաստիկ։

Եւ մնացին այսպիսեաւ հակառակութեամբ մինչև հասին 'ի թուականն մեր հազարեօթանասուն և հինգ, յորում ժամանակի առաքեաց մօսէս կաթողիկոսն զմեծ աշակերտն իւր, զկեսարացի խաչատուր վարդապետն՝ վասն նուիրակութեան սրբոյ Էջմիածնի յաշխարհն արևմտական՝ յասարբեստանն և 'ի հոռոմստան։ Եւ էր խաչատուր վարդապետն այր հեզ և հանդարտ և քաղցրաբարոյ, ոչ անխնամ և անբան․ այլ իմաստուն և բանիբուն, որ լոկ տեսութեամբ միայն շահէր զամենեսին պատահեալսն, որոյ վասն զնա կարգեցին նուիրակ։ Եւ խաչատուր վարդապետն անցեալ զամե-

նիւք

նիւք տեղւօք եկեալ էհաս 'ի Կեսարիայ, և անդ-
պատահեցաւ մեծին վարդ̃պտին գրիգորի, և
գրիգոր վարդ̃պտն զբազում բանս հրամայա
կանս պատուիրեաց խաչատրոյ վարդ̃պտին՝
թէ 'ի հասանիլնքո 'ի լով մի գուցէ թէ ընկալ
ցիս զնիկօլն 'ի կարգ և 'ի պատիւ եպկպոսութե.
Իսկ խաչատուր վրդ̃պտն նուիրակեալ զամենե
սեան տեղիս եկեալ էհաս 'ի լով, առ որ մատու
ցեալ ժողովրդականացն սկսան բազմօրինակ և
կսկծալի զամբաստանութի առնել զնիկօլայէն
վ̃ն պէսպիսից անցուածոց և գործոց, որ 'ի նմա
նէ տեսեալէին և կրեալ: իսկ վարդ̃պտն ըստ
խրոհմքաղցու և հեզի բնութեն ոչ առ երեսս
յանդիմանէր զնիկօլն, այլ մեղմ և խրատօրէն
ինքն և նա մի այն խօսէր ընդ նմա՝ ըստ պատուի
րանին Տն̃ թէ աստաջիր նմա յորժամ դու և
նա միայն իցէք: Իսկ նիկօլն բնաւ ոչինչ հո
գայր յայնմ, զի ոչ 'ի վարդ̃պտէն ամաչէր, և
ոչ 'ի ժողովրդոց ամբաստանութենէն երկնչէր,
այլ իբրև զանշարժ լեառն արձանացեալ կայր
'ի կամս իւր:

Իսկ եղև երբեմն յաւուր կիրակէի աւետա
րան կարդալ, և նիկօլ եպկպոսն հրամայեաց
խրոհմ աբեղային թէ դու կարդա, իսկ խաչ
ատուր վարդ̃պտն ասաց թէ ոչ նա չկարդա՝ այլ
այն ոմն, իսկ նիկօլն ոչ անսաց բանից վարդ̃պ
տին այլ խրոհմ աբեղային ետ կարդալ զաւե
տարանն, իբրև ետես վարդ̃պտն թէ իմէջ
քահանայից և ժողովրդոցն յայտնի է հա
մարձակ քամահեաց զբանս իւր, և 'ի չմարդի
ունի զինքն, դարձաւ առ ժողովուրդն և ա
սաց, այն մարդն անիծեալ լինի, որ սորա յետևն
զծունր դնէ: զայս ասաց վարդ̃պտն, և ելեալ
յեկեղեցւոյն գնաց 'ի տեղին իւր 'ի վերնա
տունն,

տունն, ուր լինէր 'ի հասարակ աւուրսն ։ Իսկ ժողովուրդքն իբրև զայն լուան և տեսին՝ ինքեանք ևս ամէն միահաղոյն գրոհ տուեալ ելին արտաքս յեկեղեցւոյն, և մնացին յեկեղեցին Նիկօղն և այլք ոմանք, և զկնի արձակելոյ ժամին նոքա ևս գնացին 'ի տեղիս իւրեանց ։ Իսկ 'ի ժողովրդոցն Հայոց՝ դատաւորքն և իշխանքն եկին 'ի նոյն ցերեկին, և փակեցին զդուռնն եկեղեցւոյն և առին յինքեանս զբանալին՝ և մնաց եկեղեցին փակեալ աւուրս ինչ ։ Այլև դատաւորքն և իշխանքն Հայոց խօսեցան ընդ վարդապետին խաչատրոյ, և հաւանեցուցին զնա՝ զի նստցի յաթոռ և կարգեսցէ յատեան դատաստանի, առ ի դատել զՆիկօղն վասն յանդգնութեան, և այլևս անկարգութեան և յանցանացն ։ Իբրև իմացաւ եպիսկոպոսն զգործս զայս եբեր առ ինքն զերկուս ոմանս 'ի վկայիցն Փռանկաց, որ ի մէջ ամի դատաստանի նոքա գան և տան զվկայութիւն. և ըստ նոցին վկայութեանցն դատաւորքն տան զվճիռ դատաստանին, քանզի զայսպիսի կարգս ունին աշխարհն Իլախաց ի մէջ իւրեանց ։ Խօսեցաւ Նիկօղն ընդ վկայիցն այնոցիկ, և հաճեցոյց զկամս նոցա զի յորժամ կոչեսցէ զնոսա, և նոքա անյապաղ եկեսցեն 'ի կոչ նր ։ և յաւուր դատաստանին յորում նստաւ վարդապետն 'ի դատաստան, նստան ընդ նմա և իշխանքն և դատաւորքն Հայոց՝ կոչեցին և զՆիկօղն առ ի դատել, բայց Նիկօղն յառաջագոյն զվկայսն զայնոսիկ բերեալ էր 'ի տունն յայն, և 'ի տեղի թաքուն կացուցեալ էր զնոսա առանց գիտելոյ արանցն Հայոց ։ Իբրև կոչեցին զՆիկօղն 'ի ներքս՝ և նա եկեալ հրամայեաց իւրոց սպասաւորացն դնել զաթոռն իւր 'ի հանապազորդեան տեղին իւր, զի անդ նստցի ինքն, իսկ

իշխանքն

իշխանքն ասացին առ Նիկոլն՝ զինչ առնես, զի նստիս՝ զի՛ ՚ի դատել կոչեցելին զքեզ. կաց ՚ի յոտին այդր։ Իսկ Նիկոլն ասաց՝ և ով է դատողն իմ, ասեն իշխանքն, եկեալ նուիրակս, զոր տեսանես, և դատաւորքս, որք աստ կան։ Յայն ժամ բարձու ձայնիւ գոչեաց Նիկոլն առ թագուցեալ վկայսն, թե եկայք արտաքս, և նոքա առժամայն եկին, և կացին ի մէջ հանդիսին, առ որս ասաց Նիկոլն, վն Ք՛Ի ձեռովք աչօք տեսէք՝ և լերուք ինձ վկայք՝ զի ես եղկելս եմ, և սոքա աշխարհականքդ զոլով ժողովեալք են առ ՚ի դատել զիս. և վարդապետս այս որ ՚ի թուրքաց աշխարհէն եկեալ է աստ. ՚ի չարութենէ եկեալ է յայս երկիրս ՚ի գխտել զամենայն որ պխտութին մերոյ աշխարհին. և սա այժմ սոքօք նստեալն առ ՚ի դատել զիս։ Իսկ վկայքն ասեն, զորինչ մերովք աչօք տեսաք ամին վկայեմք, և ուրեւ տանիս զմեզ տամք զվկայութիս։ յայն ժամ ամքն ժողովեալքն ՚ի հայոց եթե քահանայք և եթէ իշխանք և դատաւորք, եղեն այսկուցեալք, և զարհուրեալք յերկիւղէն փոանկաց. և սկսան մի մի եղանել և փախչել, և վարդապետն ևս ելեալ գնաց ՚ի տեղի իւր։

Ո կնի այսոցիկ Նիկոլ եղկալն սկսաւ սատութբ և կեղծաւորութբ առաքել միջնորդս, և պատգամաւորս առ վարդապետն, և առ քահանայսն, և առ իշխանսն վն հաշտութն ասելով. բաւական է այսքան հակառակութիւն ձեր՝ և այլ մի ևս հակառակիք՝ և մի փակէք զեկեղեցին. այլ բացէք զդուռն եկեղեցւոյն. իսկ լովացիք ամքն գիտելով զխարդախութի նր ոչ հաւատային նմա։ Բայց վարդապետն նկատեալ իւրովք մտօքն ետես զի ցորքան գրդաւին ՚ի խռովութին, և զվէճ և զպայքար դնէին ընդ-

եղխա

եպիսկոպոսին, առաւել և բազում յորդորեալ յառաջագոյն ՚ի նմանէ գործ չարութեան. մն որոյ յաղագս վտանգիս այսմիկ յակամակամոքս կամեցաւ առնել զՀաշտութիւն ընդ եպիսկոպոսին, զոր և խօսեցաւ ընդ քահանայից, և ընդ իշխանաց, զի արասցեն զՀաշտութիւն՝ և նոքա ոչ կամեցան. ասաց վարդապետն, մն ապագայից չարեացն, որ հանդերձեալ է գալ յեպիսկոպոսէդ, երկնչիմ ես և կասկած կրեմ, թէ մի գուցէ ՚ի մերձ ժամանութեանս մերոյ մեծագոյն ինչ վնաս կրեսցեմք ՚ի դմանէ ։ Նոտուն պատասխանի, ամենեքեան մի երկիցես վարդապետ. զի մեք ունիմք զդ̅ւմ Նոննոս յառաջնոց և ՚ի վաղեմեաց թղթոց՝ զի ցորքան պատահիցի դատաստան իրիք ինչ գործոյ, մեր Հայոց ազգի դատաւորքն արասցեն զդատաստանս Հայոց. և ոչ թէ դատաւորք ազգին Փռանկաց, այլ և ունիմք զապրանս ընդ ապրանաց նոցա, և զխելս ընդ խելաց նոցա և դու զի ես երկնչիս ։ Նա վարդապետն ոչ բնաւ հաճեցաւ ՚ի բանս յայսոսիկ, այլ երբեմն հասարակ, և երբեմն առանձին խօսէր ընդ նոսա գալ ՚ի Հաշտութիւն, և նոքա ոչ կամեցան. յայնժամ կալեալ վարդապետն իւրով ձեռամբն զփողպատն իւր, թօթափելով ասաց, անպարտեմ ես ՚ի մեղադրութենէ դորին դուք գիտասջիք ։

Նիկոլ եպիսկոպոսն իբրև ետես թէ միջնորդութք իւրոց առաքելոց սուտ և կեղծաւորաց պատգամաւորացն լուացիք ոչ գան ՚ի Հաշտութիւն, և ոչ բանան զեկեղեցին. այնուհետև գնաց առ եկեղեցականս Փռանկաց՝ որք կան իմէջ քաղաքին Լովայ, և մանաւանդ առ այնոսիկ որք ՚ի կարգէն եզվայիթայ էն, միաբանեցաւ ընդ նոսա՝ և ետ զձեռագիր անլուծանելի ։ Նա

նիկո

Նիկողայոս եպիսկոպոս Հայոց՝ խնդրէր կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ. և մինչ 'ի հնազանդութիւն փափկին ամենեքեան հետևեալքն խնդրելք կատարել զամենն հրամանս որք առ'ի նմանէ: Նվր այսպիսի յարեաւ գլխաւորն եղվայիթայ կարգին, էառ և զայլս եկեղեցականս յայլոց ևս կարգացն, առին ընդ իւրեանս և զնիկոլ եպիսկոպոսն Հայոց, և տարան առ արքեպիսկոպոսն իւրեանց. և նա տոքօք առաքեաց զպատգամս առ իշխանն քաղաքին՝ զի հրամայեսցէ ժողովրդեանն Հայոց, կամ հնազանդեսցին եպիսկոպոսին իւրեանց, և բացցեն զեկեղեցին. և կամ եկեալ յատեան դատաստանի միմեանց յանդիման լիցին: և ըստ հրամանի արհի եպիսկոպոսին արար իշխանն, բայց ժողովուրդքն Հայոց, ոչ զեկեղեցին բացին, և ոչ 'ի դատաստան եկին. մինչև երեքանգամ այսպէս կրկնեաց իշխանն, և Հայք ոչ զեկեղեցին բացին, և ոչ 'ի դատաստան եկին:

Ապա յաւուր միում ժողովեցան բազումք եկեղեցականք յեղվայիթայ կարգէն. նա և յայլոցն ևս կարգացն. առին և զբազում տղայս 'ի դպրոցացն, գնացին առ արքեպիսկոպոսն իւրեանց. առին և զկարգաւորս 'ի նմանէ. գնացին առ իշխանն քաղաքին և առ դատաւորս. առին 'ի նոցանէ զզօրականս և զդատաւորս ընդ իւրեանս. ամենքն եկին 'ի դուռն եկեղեցւոյն Հայոց՝ զոր իշխանք Հայոց փակեալ էին: Նւ առաքեցին առ իշխանս Հայոց. զի կամ իւրեանք եկեալ բացցեն զդուռն եկեղեցւոյն. և կամ զբանալին առաքեսցեն. և նոքա ոչ իւրեանք եկին, և ոչ զբանալին առաքեցին: Յայնժամ նոքա որք եկեալք էին՝ հարեալ խորտակեցին զդուռն եկեղեցւոյն. և առեալ զնիկոլ եպիսկոպոսն

մուծին յեկեղեցին․ և 'ի նա յանձնեցին զեկե-
ղեցին ամենիւք ընչիւք․ որ վ̃ը բերի առ եկեղե-
ցի/ այնուհետև եղեալ զօրականացն փռանկաց
'ի խնդիր երիցանց և իշխանաց Հայոց․ զի իշխա-
նականաւ բռնութ̃ կալեալ արկանիցեն 'ի բան-
տըս և 'ի տուգանս․ և նք̃ փախուցեալք թաքեան
և ոչ բնաւ երևեցան ։ Իսկ իմէջ եկեղեցւոյն
կայր գանձատուն, և 'ի նմա գիրք և անօթք
յոյժ բազումք․ գրեանք աւելի քան զհազար
փերթ․ ամ̃ն ընտիրք և պատուականք և վար-
դապետականք․ յորս էին ոսկետուփ ա̃ծաշունչք,
և աւետարանք, և շարականոցք, և այլք գրեանք
բազումք ։ Այնպէս և անօթք, սկիհք, և խաչք,
քշոցք և բուրվառք, կանթեղք և աշտանակք,
շուրջառք և եմիփորոնք, թագք և վակասք,
ամ̃ք նշանք և սրբոց նշխարք․ և որ 'ի Հարց և
'ի Հաւուց 'ի վաղեմի և 'ի նախկին թ̃գրց ունէին
մուրհակք և նոմոսք․ և այլևս ինչ յոյժ բա-
զում․ սոքա ամ̃ն իմէջ եկեղեցւոյն էին 'ի նոյն
գանձատանն․ զորս գրաւեաց ընդ իւրով իշ-
խանութ̃ն նիկօլն ։ Ոչ միայն զայս եկեղեցիս՝
այլև զայլ եկեղեցիսն և զվանորայսն, որք 'ի քա-
ղաքին․ և որք շուրջ զքաղաքաւն էին․ և զամ̃ն
աւանդս նց̃․ զտունս և զանդաստանս․ զաղօ-
րիս և զխանութս, կալաւ եպիսկոպոսն ընդ իւրով
իշխանութ̃ն ասելով․ ես եմ եպիսկոպոս, իմ են
եկեղեցիք ամենեքեանք և աւանդք իւրեանց ։
Իսկ խաչատուր վարդապետն և ամենայն ժողո-
վուրդքն Հայոց որք 'ի լով կային՝ մնացին արտա-
քոյ եկեղեցւոյ․ քանզի թէ մտանէին յեկեղե-
ցին հարկէր նց̃ մտանել ընդ իշխանութ̃ փա-
փին․ և ընդ ունիլ զնորին դաւանութ̃ին․ այլ և
պարտէր հնազանդիլ նիկօլայի եպիսկոպոսին․ և
լովացիք ոչ ախորժէին զայսոսիկ․ վ̃նորոյ եղեն

վարանեալք և տարակուսեալք՝ և ոչ կարէին գտանել զճարինչ. և մնացին ժողովրդքն Հայոց որք 'ի լով քաղաքին էին առանց եկեղեցւոյ

Եղև զի վարդապետն խաչատուր ել 'ի քաղաքէն. և գնաց 'ի սուրբ խաչ կոչեցեալ վանքն. Իսկ 'ի ժողովրդոցն ոմանք որ կամէր գնալ առ նա՝ համարձակութբ գնայր և գայր. և ահա յաւուր միում եկին բազումք զինուորք և զօրականք զինուք և պատրաստութբ. և շուրջանակի պատեցին զվանքն. և 'ի հարցանելն տեսողացն պատասխանէին զինուորքն թէ 'ի թուրքաց աշխարհէն չաշուտ է եկեալ՝ և ահա 'ի յայս տեղս է, կամիմք ըմբռնել զնա: Իբրև սուղ ինչ ժամն էանց իմն. և տեսին, զի ահա եկն Նիկոլ եպկպսն իւրովք սպասաւորօքն և փառօք. և 'ի մերձենալն իւր առ զինուորսն հարցանէր ցնա՝ թէ վն էր ժողովեալ էք աստ. ասեն զինուորքն 'ի թուրքաց աշխարհէն չաշուտ եկեալ է աստ՝ կամիմք ըմբռնել զնա: առ որս ասաց Նիկոլ՝ ոչ է մարթ և պատշաճ ըմբռնելն ձեր զնա. այլ դուք դարձարուք և գնացէք 'ի տեղիս ձեր. և ես գնացեալ տեսանեմ և խօսիմ ընդ նմա. և զինուորքն ամենեքեան իսկոյն ցրուեցան և գնացին: Իբրև այսպ եղև զրաւ գործոյն. որոյ վն կարծեցեալ եղև 'ի ժողովրդոցն Հայոց՝ թէ 'ի հնարից եպկպսին եկեալ էին զինուորքն վասն երկեցուցանելոյ զվարդապետն: Իսկ եպիսկոպոսն գնաց առ վարդապետն էառ զնա անտի. և եբեր զնա ընդ իւր 'ի քաղաքն: Եւ մինչ էր վարդապետն 'ի քաղաքին. հանապազ գային առ նա աբեղայք և այլք ոմանք 'ի Փռանկաց. և առնէին զհակաճառութիւն ընդ վարդապետին իմն երկու բնութե, և մէկ բնութն. և իբրև զետիքէականա

հեր

Հերձուածողն խոստորեալ զՀայս. և՛ի նախ խոտու-
թե և յիմարութե մոլորեալ։ Իսկ վարդապետին
մատուցելով զգործս անցելոյն. և խորհելով զա-
պառնալեացն. և տեսանելով զներկայսն. գիտաց
զի ոչ գոյ ինչ օգուտ՝ այլ զուր աշխատանք և ի-
նանի վաստակ. վճարոյ եղեալ 'ի լռելոյ՝ և գնաց
զճանապարհս իւր մինչև եկեալ եհաս յԷջմիա-
ծին առ մեծս կթղկոսն. և առ այլ վարդապետսն.
որք իմքն ցաւագնին սրտիւ՝ արտասուաթօ-
րօք աչօք սգային վն ազգին Հայոց՝ որք էին 'ի
Լով քաղաքին՝ թէ զիարդ լինի փրկութին նց.

Իսկ ով Տէրն Բռն ասաց՝ նախ զհզօրն կապի-
ցէ և ապա զտունն նր աւար հարկանիցէ. այս-
պէս արար և Նիկօղ եպիսկոպոսն. զի յետ գնալոյ
վարդապետին. ոչ զգաղանն տեսլեանն դանիէ-
լի ասաց զմմն ժողովուրդսն և զգանձս և
զմմն ինչս եկեղեցւոյն՝ ուտել և մանրել և զմնա-
ցորդսն առ ոտս արկանել։ Քանզի ոչ'ի ժա-
մանակս կռապաշտից թգւրցն ունէին քրիստո-
նեայքն զհալածանս՝ այսպէս և յայսմ ժամանա-
կի եղև խիստ ազգին Հայոց բնակելոյն 'ի Լով
քաղաքին. քանզի կարի զօրութե զօրացաւ
Նիկօղ եպիսկոպոսն և բռնացաւ իւր ժողովրդեանն
Հայոց։ կալեալ զերիցունս առ ոտքն և զտա-
նէր սուղինչ ինչս և արկանէր 'ի բանտ՝ և առ-
նոյր 'ի նոցանէ զտուգանս զերիս հարիւր և չորս
հարիւր ղուրուշս. սոյնպէս և զիշխանս, որք
և դատաւորք էին կարգեալք՝ կալեալ տու-
գանէր։ Իսկ հասարակ զմմն ժողովուրդսն
վտանկէր. ոչ թողոյր 'ի թաղել զմեռեալսն
վասն գանձի. և յորժամ առնոյր զգանձս ըստ
հաճոյից կամաց իւրոց. ապա տայր զհրաման թա-
ղելոյ և զտեղի գերեզմանի առ ի թաղել. և յետ
թաղելոյն յորժամ զտապանաքարն իւր գերեզմա-

նին կամէին ձգել յայնմանէ պատճառէ մու
սանգամ առնոյր զգանձս . և ապա զհրաման
տայր ձգել զքարն ։ Այն պատճառի վն . և
պսակք և մկրտութիւնք խափանեցան . զորս տա
րեալ յայլ քաղաքս պսակէին և մկրտէին . և
զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին . և
զայսոսիկ առնէին 'ի ծածուկ թարց գիտելոյ
եպիսկոպոսին . և յորժամ իմանայր՝ մեծա
ցասմամբ զայրանայր . և ըմբռնէր զէրէցն և
զարարող արսն բազմօք խոշտանգանօք չարչա
րէր՝ և զծանրագոյն տուգանս առնոյր ։
Եղև երբեմն զի զումն երիտասարդ կամեցան
պսակել 'ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին .
որոյ վն երեք քահանայք բերին զի 'ի տան անդր
արասցեն զպսակն . և ծանուցեալ եղև այս
եպիսկոպոսին . որոյ առաքեալ զօրականս ունել զե
րիցունսն և զտեարս հարսանեացն և արկանել
'ի բանտ ։ սմին իրաց իրազգած եղեալ տեարց
հարսանեացն և երիցանցն . առ երկիւղէն
սկսան թաքչիլ . զումն յերիցանցն եդին 'ի մէջ
սնդուկի և կողպեցին իբր թէ կահք և
զարդք կանացի գոլ ։ և երկուքն յերիցանցն
մտին իմէջ սօբային, որ շինեալ էին իմէջ տանն
վն հրավառութե ։ Իսկ զօրականացն 'ի յուզելն
և 'ի խնդրելն զերիցունսն գտին իմէջ սօ
բային . հանին զնս 'ի սօբայէն և կապեցին
ձեռս 'ի յետս գլխիւաց և բոլորամբ սևա
ցեալ երեսօք և մարմնով . զի մուր սօբային սևա
ցուցեալ էր զնս . և այնպէս տարան զնս առաջի
եպիսկոպոսին ։ և եպիսկոպոսն յետ բազմաց անարգանաց
և սպառնալեաց էարկ զերիցունսն և զտեարս
հարսանեացն 'ի բանտ . և էառ զչորս հարիւր
ղուռուշ յերիցանցն . և զչորս հարիւր ղու
ռուշ 'ի տեարց հարսանեաց . և ապա եթող

որք

որք գնացեալք արարին զհարսանիսն։ Եւ բա-
զումք տղայք մեռանէին առանց մկրտութ̃ե.
և բազումք տղայք կային անմկրտեալք հնդե-
տասան և վեշտասան ամեայ՝ և բազումք մե-
ռեալք մնային անթաղք յամս բազումս։
Դնէին զմեռեալսն 'ի մէջ փայտեայ տապանի
և ընուին զտապանսն կպրով մինչև որ ծած-
կէր զմեռեալսն. և դնէին 'ի ցուրտ տեղիս
և պահէին. սպասելով այցելութ̃ե Տ̃ն՝ և բո-
վանդակ եօթն խորհուրդ եկեղեցւոյ և ա̃մ
ժամակարգութ̃ի խափանեցաւ։ և մնացին
ողորմելի ժողովուրդքն իմէջ անհնարից նե-
ղութ̃եց. առաւել քան զոր 'ի ժամանակս
կռապաշտութ̃ենն։

Ապա ժողովուրդքն յաղագս յոքնակի նե-
ղութ̃եց իւրեանց բողոք բարձին 'ի սուրբ ա-
թոռն Էջմիածին. վ̃ն զի տէր սիմօն անուամբ
զոմն քահանայ և զերևելի այր մի աշխարհական
առաքեցին առ կթ̃ղկսն տէր մօսէս՝ զի հո-
գասցէ, և հնարեսցէ ն̃ց զփրկութ̃ի. և կթ̃ղկսն
գրեաց զնամակս խոհեմականս՝ և լի իմաստու-
թ̃բ. խոնարհ և մաղթողականաւ բանիւ առ
թգ̃ւրն լեհաց և առ նորին իշխանսն. և առ
արք եպ̃կպսն քաղաքին լովայ՝ որ յազգէն
փռանկաց. նաև առ փափն։ Եւ խնդրեաց
թէ ողորմեցարուք տառապելոյ ժողովր-
դեանն. և շնորհեցէք զեկեղեցին նոքեանց՝
և մի խափանէք զեօթն խորհուրդ եկեղեցւոյ.
զոր ոչ է պատեհ առնել քահանայից Հ̃յ̃.
իբրև հասին նոմոքս այսոքիկ 'ի լով քաղաք. և
ժողովուրդքն Հայոց տարեալ մատուցին իւրա-
քանչիւր տեարց՝ թգ̃ւրին և այլոց։ Եւ նոքա
հրամայեցին թարգմանել 'ի գիր և 'ի բարբառ-
իլախաց. որոց յընթեռնուլն հաճեալ հաւա-

նեին ամենից բանից և որպիսութեց․ որոց բանից վերայ գթացաւ սիրտ Թագաւորին․ որոյ անունն էր Վլատիսլաւ․ զոր և հրամայեաց թէ տուք զեկեղեցին Հայոց յինքեանս․ բայց յեզվայի դայք ընդդիմացան և ոչ թողին՝ ասելով Թագաւորին․ այս եկեղեցական և հոգևորական գործ է՝ որ վերաբերի առ փափն․ և առ այլք եպիսկոպոսն․ և նոքա պարտին հոգալ զսա՝ որոց անկ է և պատեհ․ և ոչ քեզ՝ որ մարմնաւոր Թագաւոր ես․ վասն որոյ ոչ է քեզ պատեհ խառնիլ յայս գործ՝ որ է հոգևոր։ և Թագաւորն վասն գթալոյ՝ի տառապանս ժողովրդեանն Հայոց․ խնդրեաց յայլք եպիսկոպոսէն խուրեանց տալ զեկեղեցին Հայոց․ սմին ևս ընդդիմացան եզվայի դայքն, և ոչ թողին տալ։ Իսկ վասն առաւել գթալոյ Թագաւորին ի վերայ Հայոց ինքն Թագաւորն յարեաւ և գնաց յեկեղեցին Հայոց՝ զի տացէ զեկեղեցին Հայոց ինքեանս՝ի հայս․ իբրև զայն դիտաց Նիկոլ եպիսկոպոսն․ խսկոյն զգեցաւ զզգեստս պատարագի․ և բարձեալ զՀաղորդ պատարագին ի վերայ գլխոյ իւրոյ՝ և ելեալ եկն ընդ առաջ Թագաւորին․ որում՝ի տեսանելն Թագաւորին զարհուրեցաւ՝ի տէրունականէ խորհրդոյն․ և ոչ ինչ զօրեաց առնել․ այլ թողեալ զամ՟ դարձաւ՝ի տեղի իւր և յապարանս։

Ապա հարկ եղև Հայոց գնալ՝ի Հռոմ առ փափն՝ զոր և բազմօք աղաչանօք առին զթուղթս բարեխօսութե՝ի Թագաւորէն և յայլք եպիսկոպոսէն առ փափն․ և գնացին՝ի Հռոմ․ ետուն՝ի փափն նախ զխնդրանաց թուղթն մօսէսի կաթողիկոսին․ և ապա զԹագաւորին և զայլք եպիսկոպոսին։ իբրև ետես Նիկոլ եպիսկոպոսն թէ ժողովուրդքն գնացին՝ի Հռոմ․ գնաց ինքն ևս՝ի Հռոմ․ և անդ ևս անիրաւ եզվայի դայքն ներհակացան Հայոց՝ և ձախեցին զբանս

նց՝

նդ՝ որ ոչ եղև տուեալ եկեղեցին Հայոց. զորև ունայն դարձան ողորմելիք ժողովուրդքն. և եկին՝ ի Լով: Դարձաւ և Նիկոլ եպիսկոպոսն՝ ի Հռոմայ և եկն՝ ի Լով: և կայր ըստ առաջնոյ կարգին վտանգելով զժողովուրդն և ևս անառակութբ:

Յետ զառաջինն երկիցս և երիցս ևս առաքեցին Լովացիք զքահանայս և զերեսփոխանս յԷջմիածին առ կաթողիկոսն փիլիպպոս. զի Մովսէս կաթողիկոսն վախճանեալ էր. և փիլիպպոս կաթողիկոսն բազում անգամ զանազան կերպիւ զթուղթս գրեաց՝ ի Լով. և յիւրոց աշակերտաց և վարդապետաց առաքեաց՝ ի Լով. սակայն այնու ևս ոչ եղև օգտութն ինչ Հայոց ժողովրդեանն: Այլև՝ ի Լովայ քաղաքէն եկեղեցականք որք բարեպաշտօնք. որք էին աբեղայք և երիցունք գրոց աշակերտք. վն այսորիկ հալածանաց եկին յԷջմիածին՝ և անդէն բնակեալ կացին. որք էին՝ որդիք նշանաւորաց արանց. յորոց զոմանս ձեռնադրեաց փիլիպպոս կաթողիկոսն եպիսկոպոս Լովայ՝ և առաքեաց անդ առ՝ ի հովուել զժողովուրդսն. սակայն և այնու ևս ոչ եղև օգտութն ինչ ժողովրդեանն Լովայ: Այլև՝ ի սոյն ժամանակի՝ ի կրգէն Դոմինիկոսի Պօղոս անուամբ վրդպտ ոմն այր իմաստուն և երևելի յազգէն Փռանկաց. եկն յերկիրն Նախչուանայ ի մէջ ախթարմայիցն որք անդ կան. և փիլիպպոս կաթողիկոսն զբազում սէր և զբարեկամութիւն արար ընդ Պօղոսին այն. վն օգտի ժողովրդեանն մերոյ և փրկութն եկեղեցւոյն Լովայ: և Պօղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամեցաւ գնալ՝ ի Հռոմ. և գնալով զճանապարհս իւր հանդիպեցաւ՝ ի Լով քաղաք. և Լովացիք ևս բազմօք աղաչանօք խնդրեցին՝ ի Պօղոսէ և զբազում մեծարանս արարին նմա. և զգանձս

Եւ յոլովս առ 'ի Թոշակ ճանապարհի ետուն նմա. զի թերևս զօգնութիւն ինչ հնարեսցէ նմ՟ 'ի դուռն փափին: և յորժամ եհաս պօղոս 'ի Հռոմ. և մինչ նա զբանս ինչ բարեխօսութե՟ն վս՟ Հայոց առաջարկեալ էր. և խօսէր 'ի դուռն փափին. վաղվաղակի գնաց զկնի նր՟ և Նիկօղ եպ՟կպսն 'ի Հռոմ 'ի դուռն փափին. և խափանեաց զօգնութի՟ն պօղոսի ձեռնտուութե՟ եղբայրթոցն: և այսպ՟ յամենից կողմանց խափանեցաւ փրկութի՟ և օգնութի՟ տառապեալ ժողովրդեան լովայ քաղաքին. և ընդպօղոսին գնացօղքն տրտում և ունայն դարձան անտի: Եւ Նիկօղ եպ՟կպսն ևս դարձաւ 'ի Հռոմայ և եկն 'ի լով քաղաք. և կեայր ը՟ առաջնոց վարուց իւրոց. ևևս առաւել անառակ: և զվերոյասացեալ գրեանն. և զորբութե՟ն անօթսն. և զա՟մեն աւանդս եկեղեցւոյն. զորս վաճառեաց. և զորս կաշառս բաշխեաց. և զորս ձեռամբ հրէից խորտակեալ արար զարծաթ և վաճառեաց: և զայնքան զբազում և զանթուելի զինչսն և զգանձսն ցիր եցան արարեալ բնաւին վատնեաց՝ որ ոչինչ մնաց. միայն լոկ դատարկ քարեայ եկեղեցին. զի կեայր անառակ և զեղխ և չոմայտիւք վարուք՝ յայտնի և համարձակ յոչումեքէ վեհերելով: և բազումք գրեանք և անօթք 'ի նորին վաճառելոցն եկին յերկիրս Հայոց՝ և առ մեզ հասին. զորս վաճառականք գնով առեալ բերին. որ սքանչելի էր տեսողացն:

Եւ ողորմելի ժողովուրդքն լովայ. զվտանգս և զչարչարանս բազումս կրեցին. վս՟ զեօթն խորհուրդս եղեկեցւոյ խափանելոյն. և բազումք արք երկիւղածք. և վրէժխնդիրք հայրենեաց օրինաց մեկնեցան 'ի տանց և 'ի տեղեաց. և ե-

լեալք

լեալք 'ի բնիկ տէն հեռացան . անջատեալք յըն տանեաց և յազգաց . պանդուխտք , և նժդեհք շրջագայեալք յօտար աշխարհի . և այնպիսեաւ կենօք հեծելով և յոգւոց հանելով վախճանեցան ։ և զայլեւ չարչարանս և զնեղութիւնս յոքնակի կրեցին ժողովուրդքն հայոց՝ զի հալածումն մեծ էր իմն . որք և զրկեցան յեկեղեցւոյն իւրց՝ և յայնքանեաց ստացուածոցն . և իւրց ևս զգանձս վատնեցին 'ի դրունս իշխանաց և Թիւրքց . և աստ և անդ յուղեգնացութիւն ։ Իսկ այնքան աշխատեցան երկոքեան կողմանքն . այսինքն նիկոլն և ժողովուրդքն . զի լքան 'ի բազմօրակի հնարագործութենց և 'ի բազմաժամանակեայ ներհակութենց . քանզի սկիզբն խռովութեա եղև 'ի հազար և եօթանասուն և ինն թուին . որ զեկեղեցին յափշտակեաց նիկոլն . և մնացին այնպէս մինչ որ հասին 'ի հազարև հարիւր և երկու թւին մեր ։

Յորում ժամանակի տէր փիլիպպոս կճիլկան սրբոյ աթոռոյն Էջմիածնի գնաց յեմ , և անտի եկն 'ի մեծահանդէս քաղաքն 'ի կոստանդնուպօլիս , որոյ գալստեան համբաւն հռչակեցաւ ընդ ամն տեղիս , նաև 'ի լով քաղաքս ևս էհաս ։

'Ի սոյն ժամանակի հանճարեղ խորհրդական նիկոլ եպիսկոպսն , նկատեալ տեսութբ իւրոց մտաց , թէ ժողովուրդքն այնքան չարչարեցան , և ոչ կասեցան 'ի բերոյ կամաց իւրեանց . այլ տակաւին 'ի նոյն կամս յամառեալք կան , մ՟ որոյ խորհեցաւ գնալ 'ի կոստանդնուպօլիս առ կճիլկան փիլիպպոս , զի թերևս բարձցի յինքենէ անուն բանադրեցելոյ , նաև ընկալցի 'ի նմանէ իմն ժողովրդեանն զթողութ օրհնութն , և առ ինքն հնազանդութն ։ բայց

զի էր դատարկ և ունայն 'ի գոյից. և ոչ ունէր զպաշար ճանապարհի. վասն որոյ խորհէր գտանել սմին հնար. զոր և էգիտ այսպիսեաւ կերպիւ։ Այլ էր 'ի Թօխաթ քաղաքի յազգէն Հայոց այր ոմն երևելի և անուանի. որոյ անունն էր մահ դասի մարկոս. որ ետ զգանձս յոլովս սիմօն անուամբ որդւոյ իւրոյ՝ և առաքեաց յաշխարհն իլախաց վաճառականութեան աղագաւ և սիմօնս այս եկեալ էհաս 'ի լով քաղաք՝ հանապազ ուտէր և ըմպէր և կեայր 'ի խրախութեան. նաև եղև ծանօթ և բարեկամ ընդ նիկօլայի եպիսկոպոսին. զորև խոստացաւ եպիսկոպոսին, և ասաց. թէ ունիս զկամս գնալոյ առ կաթողիկոսն. մի՛ հոգար վասն պաշարի. զի որքան և պիտոյասցի քեզ դրամ վասն ճանապարհի զամենայն ես տամ. զորև ըստ իւրում խոստմանն ետ եպիսկոպոսն զերկուսհազար ղուռուշ նաղտ դրամ. իբրև զայն էառ եպիսկոպոսն. ապա ելեալ 'ի լովայ եկն 'ի բուղդան և գնայր առ կաթողիկոսն փիլիպպոս։

Զայս տեսեալ ժողովրդականացն Հայոց որք 'ի լով. թէ գնաց նիկօլ եպիսկոպոսն առ կաթողիկոսն. սահմանեցին և նոքա զայր ոմն երևելի յիւրոց կողմանէ, որ էր մի 'ի դատաւորացն Հայոց. որոյ անունն էր խաչկօ՝ գնալ առ կաթողիկոսն փիլիպպոս տուեալ նմա զգրեալ թուղթս և զպատուիրեալ բանս բազումս։ և նիկօլ եպիսկոպոսն և խաչկօ դատաւորն՝ որիշ 'ի միմեանց գնացեալ հասին 'ի կոստանդնուպօլիս՝ և պատահեցան կաթողիկոսին։

Այլ 'ի յոլով աւուրս զկնի բազմից խօսից և գործոց. կատարումն գործոյն այն եղև՝ զի կաթողիկոսն փիլիպպոս հրամայեաց՝ զի զբանս չորս գլխով յանձն առցէ նիկօլ եպիսկոպոսն. և զայն

ձեռնա

ձեռնադրով իւրով դրոշմեսցէ. և տացէ Փիլիպպոսի կաթողիկոսին ։

Նախ՝ զի զդաւանութիւն լուսաւորչին. և զնորին աթոռակալ հայրապետացն դաւանեալ խոստովանեսցի Նիկոլն, և իւր հետևողքն. այսինքն եկեղեցականք և աշխարհականք ։

Երկրորդ՝ զի զարարողութիւն հայաստանեայց եկեղեցւոյ արասցէ ինքն և իւր հետևողքն ։

Երրորդ՝ զի զկնի վախճանի Նիկոլին 'ի տեղի Նիկոլին եպիսկոպոս նստողն. 'ի կաթողիկոսէն Էջմիածնի լինիցի օծեալ եպիսկոպոս. և նորին հրամանաւն նստցի 'ի նոյնոյ վիճակին. և նոյնոյ կաթողիկոսին հնազանդ և հետևող լիցի ։

Չորրորդ՝ զի ինքն Նիկոլն միայն յիշեսցէ զանուն փափին. և զայնևս 'ի պատարագն միայն. և ոչ յայլինչ բանս և յարարողութիւնս ։ Նաև մի խառնեսցէ զջուր 'ի բաժակ սրբոյ պատարագին ։ Իսկ յեկեղեցականաց ժառանգաւորաց և 'ի կղերիկոսաց. ոչոք ընաւ յիշեսցէ զանուն փափին ։ սոյնպէս և մի յիշեսցէ զկնի Նիկոլին նստող եպիսկոպոսն զանուն փափին ամենևին. ոչ 'ի բանս և ոչ 'ի գործս՝ այլ միայն Նիկոլն. և զայնևս 'ի պատարագն միայն ։ Իսկ վասն յիշելոյ զանուն փափին՝ Նիկոլն ինքն խնդրեաց 'ի կաթողիկոսէն զի այնմ միայն ներուածս արասցէ. քանզի Նիկոլն ասաց թէ ձեռնադրաւն, զոր ես տուեալ եմ Ֆռանկաց՝ 'ի կարգէ լուծանեն զիս. գուցէ մահապարտ ևս առնիցեն. վասն այսորիկ ներեաց կաթողիկոսն ։ Իսկ զայս չորս բանս գրեալ 'ի քարտիսի. կնքով կնքեալ և ձեռնադրով դրոշմեալ Նիկոլն ետ կաթողիկոսին Փիլիպպոսի և կաթուղիկոսն ետ Խաչկօ դատաւորին. զի ընդ իւր տարեալ 'ի քաղաքն Լով 'ի պահեստի ունիցին վասն առյապայն զգուշութեան ։

և

և ապա կեդրենոս արձակեաց զնիկօղն 'ի կապանաց բանադրանաց. և ետ նմա զնոմոս եպիսկոպոսական իշխանութե իշխել իւր̃ ժողովրդոցն Հռոմայ: Նաև պատուիրեաց նմա զի զգաստասցէ 'ի Թափառականաց և 'ի խենեշից վարուց իւրոց՝ եկեսցէ 'ի կրօնս և 'ի բարեշաւիղ ճանապարհս արդարութե. որ վայելէ անոճ-ան և ստանձանի եպիսկոպոսութե. և նիկօղ եպիսկոպոսն զնմին հրամանս կեդրենոսին հոգւով չափ և յօժարակամօք յանձին կալեալ. և արձակեալ 'ի նմանէ եկեալ էհաս 'ի Հռով. քաղաք:

Նաև ժողովրդքն Հռոմայ համարէին թէ զղջացեալ և թողեալ իցէ նիկօղն զթիւր վարս իւր. բայց տեսանէին զի 'ի նոյն վարս կայ անփոփոխ: այլև յիշէին զանչափ գանձուցն իւրոց և զանօթոցն վատնումն. և զբազմապատիկ նեղութիւն՝ զոր հասոյց նոցա եպիսկոպոսն նիկօղ. այրեալ խորովեալ տոչորէին սիրտք նոցա: վն̃ այնորիկ ոչ կամէին միաբանիլ ընդ նմա. նա և առաւել փախչէին և կամէին նզովլ լինիլ 'ի նմանէ:

Նաև մինչ տակաւին ոչ էր գնացեալ նիկօղ եպիսկոպոսն 'ի կոստանդնուպօլիս. փիլիպպոս կեդրենոսն 'ի կոստանդնուպօլսէ զոմն վարդպետ յիւրոց աշակերտաց՝ որոյ անունն էր յօհան վարդպետ. որ էր տեղեաւ յարղնայ. այր փարթամ իմաստութբ̃. և հանճարեղ բանիւ. առաքեաց գնալ 'ի Հռով. զի թերևս գուն գործեալ հնար իմն փրկութե գտանիցէ եկեղեցեացն. և 'ի գնալն յօհաննու վրդպետն 'ի Հռով. և 'ի գալն եպիսկոպոսին 'ի կոստանդնուպօլիս. 'ի ճանապարհին պատահեցան միմեանց. և նիկօղ եպիսկոպոսն 'ի յօհանէ վրդպետէն ևս էառ զթուղթ առ կեդրենոսն. վն̃ նորեան յանձն արարութե. և գնաց առ կեդրենոսն 'ի կոստանդնուպօլիս: Իսկ

յօհան

յովհան վարդապետն հասեալ ՚ի Լով. մնաց անդէն մինչ որ Նիկոլ եպիսկոպոսն և խաչկօ դատաւորն ՚ի կոստանդնուպոլսէ դարձան և եկին ՚ի Լով:

Իբրև ետես յովհան վարդապետն թէ ընդդէմ մնան ժողովուրդքն եպիսկոպոսին. և ոչ կամին հնազանդիլ նմա սկսաւ միջնորդել ՚ի մէջ ժողովրդեանն և Նիկոլին վասն բառնալոյ զբազմաժամանակեայ զաղմուկն՝ և զխռովութիւն. և զբազում աւուրս բազմաւ խրատու՝ քարոզիւ՝ և դասու՝ և առանձնակի խօսելով ընդ ժողովրդեանն և ընդ եպիսկոպոսին. բազմաւ ջանիւ և յոլովիւ աշխատութեամբ հազիւ թէ կարաց հաւանեցուցանել զժողովուրդն հնազանդիլ եպիսկոպոսին: ապա ՚ի միասին առեալ յովհան վարդապետն զժողովուրդն և զեպիսկոպոսն եբերեալ էմուծ յեկեղեցին իւրեանց, զոր յափշտակեալ էր եպիսկոպոսն: Եւ եղև ՚ի մտանել ժողովրդեանն յեկեղեցին. որպէս զխառնումն դաւանց ՚ի հօտս ոչխարաց մարց իւրեանց գոչումն, և գոչումն, և ողբումն, և աղիողորմլաց և փղձկելով սրտիւ յորդառատ արտասուհեղուլ ժողովրդոցն յաչաց իւրեանց. մեծաւ հառաչմամբ վասն տարիալեաց կարօտանաց և փափագմանց որ առ եկեղեցին իւրեանց: և անդէն յեկեղեցւոջն ՚ի նոյնում ժամուն սկսաւ յովհան վարդապետն մխիթարել զժողովուրդն յաստուածայնոց գրոց և ՚ի վարուց և յօրինակաց սրբոց. որոյ բանից վերայ զուարճայր սիրտ ժողովրդոց. և ածեալ ՚ի համբոյր հաշտութեան զամենեսեան ընդ եպիսկոպոսին:

Եւ էհաս համբաւ հաշտութեանս առ թագաւորն Լէհաց՝ որոյ անունն էր եանգեաժիմիր. քանզի ՚ի քաղաքն Լով էր թագաւորն յաւուրս յայսոսիկ. որ և կոչեաց թագաւորն առ ինքն

զյովհան

զյօհան վրդ-պտն և առանձինն 'ի սենեկի խօսե-
ցաւ ընդ նմա զբանս բազումս. և լուաւ զպա-
տասխանիս հանճարեղս և համեղս բանիւ։ և սի-
րեաց Թգ-ւրն զվրդ-պտն և զշնորհակալութի
արար նմա վն միջնորդութե և հաշտեցուցա-
նելոյն զժողովուրդն և զեպիսկպսն. և զբազմա
ժամանակեայ խռովութիւն բառնալոյն. Յու-
ծնաց անդէն վարդ-պտն յօհան առ մի ողջոյն
և ապա դարձաւ և եկն 'ի սուրբ Էջմիածինն։
Իսկ ժողովուրդքն լռեալ և Նիկօղ եպիսկպսն։
կան 'ի մի նոյն պայմանադրութեն, զոր սահմա-
նեցին Փիլիպպոս կթղկոսն, և յօհան վարդա-
պետն մինչև ցայսօր՝ յորում զպատմութիս շա-
րադրեցաք 'ի Թուականիս մերում հազար և
հարիւր և ինն. 'ի մայիսի ամսոյ տասն։

---

Թէ որք և ոմք եղեն պատճառք գտանելոյ զսա և զգիտու-
թիւն արտաքինոց գրոց, և զորոշեալ քերականութե,
և նորոգեալ սխալեցին 'ի վարդապետս Հայոց,
որ բնաւին բարձեալ և անհետ էր լեալ։

## ԻԹ.

ՍՐԴ Ի ՀՆՈՅՑ ԵՒ ՅԱՌ-
ջնեաց ժամանակաց կայր դաս-
տուն վրդ-պտց 'ի քաղաքն բաղէշ,
'ի վանքն որոյ անունն ամրդօլ ասեն, որ յա-
ջորդելով մի' զմի էհաս մինչև 'ի ժամանակս
հարց մերոց. յորում ժամանակի էր յաջորդ
և առաջնորդ պետ և գլուխ վարդ-պտց տեղ-
ւոյն այնմիկ անն վարդ-պտ բարսեղ անուն, որ էր
այր երևելի և մեծանուն, և յոլով աշակեր-
տաց տէր։ և նոյն վանքն ամրդօլու յառաջա-
գոյն խրթին և յաւէտ շինեալ էր և այն ևս խար-
խալեալ էր 'ի հնութենէ, սա զամենեսեան շի-
նեաց միահաղոյն քակեաց, և ինքն վերստին

հիմաւ

հնարկեալ շինեաց և կատարեաց զձուլան-դակն, զեկեղեցին և զտունսն և զայլսն որ՚ ի նմա։

Այլ և էր ինքն բարսեղ վարդապետ՚ ի գաւառէն որ՚ ի տաթևացւոյն յառաջ եկեալ և սերեալ, այսպիսեաւ կարգաւ։ Նախ գրիգոր տաթևացին։ Նորին աշակերտ դանիէլ։ Նորին յովանէս Համշէնցին։ Նորին չորթան գրիգոր արճիշեցին։ Նորին ներսէս որ մատաղ ասի, Նորին ներսէս բաղիշեցին։ Նորին ներսէս ամկեցին։ Նորին բրդուծ յովանէս ոստանցին։ Նորին բարսեղ գաւառցին, որոյ վասն բանս է։ Նորին աշակերտ մոկացի ներսէս՚ ի գեղջէն ականջաւայ, որոյ մականուն բեղլու ասեն՝ զի մեծ էր բեղն։ Նորին աշակերտ մելքիսեթ-երևանցի,՚ ի գեղջէն վժանու։

Արդ այս բարսեղ վարդապետ յինքենէ խակ գիտակէր թէ գիտութե արտաքնոց իմաստից և քերականութե ոչ գոյ ի մէջ վարդապետացն Հայոց, և ինքն մեծաւ տարփանօք ըղձայր թերևս հասանիլ այնմ գիտութե ոչ միայն վն իւր, այլ մանաւանդ վն ազգին, զի արծարծեալ սփռեսցի ի մէջ ազգիս Հայոց, ոպ զի տմքն հասցեն այնց շնորհաց և գիտութե։ վն որոյ յարաժամ առեալ՚ ի ձեռս իւր զարտաքին գիրսն, և թէպէտ և ոչ գիտէր այլ անյապաղ և անձանձիր ընթեռնոյր, էր զի ուրեք ուրեք հասանէր իմաստութե, և մնայց բանին, և էր զի ոչ, բայց նա ամենև ջանիւ առանց ձանձրանալոյ միշտ ընթեռնոյր։

Իսկ ոպ Տէրն Քս յառակս երեք նկանակին ասաց, թէ ոչ տացէ վն բարեկամութե, սակայն վն ժտութե յարուցեալ տացէ նմա զինչ և խնդրեսցէ։ այսպէս և սմա եղ, որ անդադար և անձանձիր ոքնութե յար հանապազ

կա

կացեալ 'ի դասուն իմաստից դիտուէ բաղխէր զցայգ և զցերեկ աղօթիւք և ընթերցմամբ։ Իսկ աղբիւրն և տուօղն ամի իմաստութե սբ Հոգին ԱԾ, որ բերանով եակցին իւրոյ խոստացաւ. թէ խնդրեցէք, և տացի ձեզ. բաղխեցէք, և բացցի ձեզ. հայցեցէք, և առնուցուք, տեսեալ զանդանդաղելի զկանխելն և զբաղխելն սորա, շնորհեաց սմա զխնդրելն. զի ետ զտեսութի և զհանճար մտաց սորա խելամուտ լինել բանին, և ոճոյն, և շաւղաց արտաքնոյ գրոյ, առանց ուրուք առաջնորդելոյ և ցուցանելոյ։

Քանզի նախ զսկիզբն արար սահմանց գրոցն. կարդայր մինչև ցվերջ պրակին, և դարձեալ դառնայր 'ի սկիզբն պրակին, այնքան կարդայր և դառնայր, մինչև ամենից որպիսութեցն տեղեկացեալ լինէր՝ և ապա անցանէր 'ի միւս պրակն, այսպէս առնելով մինչև 'ի տասն պրակն սահմանացն կարդաց, և վճ հասու եղև՝ որ այլոց ևս կարէր ուսուցանել։ Իսկ ապա թողեալ զսահմանսն էանց 'ի պորփիւրն՝ տեսանել և փորձել զնորին ևս զորպիսութի, և սկսաւ մեծաւ ջանիւ ընթեռնուլ և մտածութբ խոկալ և 'ի բազում աւուրս յոքնակի աշխատութբ ընթեռնլով և դառնալով, 'ի պորփիւրէն զսեռն և զտեսակն ևս էգիտ շնորհօք սրբոյ Հոգւոյն։

Իսկ յաւուրս ծերութե իւրոյ այս բարսեղ վրդպտս, կոչեաց զամենեսեան աշակերտս իւր առաջի իւր, և զորինչ և գտեալ էր իմաստութի յարտաքնոյ գրոց դաս ասաց նց, զոր նոքա ամքն 'ի միտ առին, և ուսան։ և ապա սկսաւ խօսիլ ընդ նոսա և պատուիրել։ Որդեակք իմ սիրեցեալք, զորս հոգևորօք երկամբք ծնայ 'ի

Տէր զի նախնեաց վարդապետաց գրեանց մէջն զոր-
յիշեն, զսէր. և զհեզանս, և զառաքինութիւն, և
զյատուկ, և զպատահումն, և զառորդութիւն,
և զբացատութիւն։ որոց բազմաց և յոլովից պա-
տահեալ էք ի մէջ պարապմանց գրոցն, և գտա-
նուց գրոցն, և առ որս գրոցն, և այլոց այսպի-
սեաց։ Թէպէտ և ընթեռնումք, և անցանեմք,
այլ թէ զինչ են սոքա, և սոցին հետեւմունքն,
և բոլորն և մասունքն, և այլ որպիսութիւնքն մեք
ոչ գիտեմք։ և հարկ է վարդապետաց սոցին ամե-
նից քաջ գիտակ գոլ՝ զի թարց սոցին գիտու-
թեան, թէպէտ ընթեռնու ոք. զինչ և ընթեռ-
նու, և կարծէ իմացեալ զնա, այլ ոչ է իմա-
ցեալ ըստ պատշաճին և պարտին։ զի ամենից
իմաստութեանց և գրոց ներածութիւնք սոքա են,
եթէ նորեաց և թէ արտաքնոց։

Արդ որոց իբրև զանդառնալի կտակ մահու
պատուիրեմ ձեզ. և մանաւանդ ծանր և ան-
բառնալի հարկ իմն ձեր դնեմ. զի որպէս զիս
տեսէք զի հանապազ ընթեռնուլ զայս գիրս.
և բազմաւ խոկմամբ մտածել, և երկնել. այն-
քան մինչև գտանել զհետութիւն բանին. և
զորինչ և գտի շնորհելովն Տեառն զայն ամ ա-
հաւասիկ դասասացի ձեզ։ Իսկ այժմ մե-
ծաւ հարկիւ պատուիրեմ ձեզ զի և դուք այս-
պէս առնիցէք որքան և իցէք կենդանի. և
զայս՝ զոր ես դասասացի ձեզ՝ հանապազօր կար-
դացէք. և իմն սորին դուք ևս աճեցուցէք.
ընթեռնլով և յառաջ գնալով։ և զորինչ և տա-
ցէ ձեզ [illegible] Հոգւին զյինէն ուսեալն և զձեր
գտեալն. ձերոց աշակերտելոցն դասասացէք. և
միշտ վարժեցէք զնս 'ինոյնն մինչև ունակա-
ցի 'ի միտս նց. և դուք ևս պատուիրեցէք ձե-
րոց աշակերտելոցն՝ զի ըստ այսմ օրինակի ա-

բացեն ։ Եւ այսպէս յորդւոց որդիս առնելով հաւատամ՝ ի Տր̃ զի բանայ և ցուցանէ զմեծն ճանապարհս և զդրունս չքնաղի և պանծալւոյ գիտութեանս այսորիկ ։ Արդ լուսընկալ Հոգի բարսեղ վարդապետս ը̃ն ասացելումն պատճառեղև գտանելոյ արտաքնոց գրոց գիտութեն . և այսմ̃ պատուիրելով յաւելաւ առ Հարս իւր՝ և Հանգեաւ՝ ի Ք̃ս․ և եդին զնա՝ ի Հանգիստ գերեզմանի՝ ի նոյն վանքն ամրդօլայ, զոր ինքն նորոգեաց ։

Եւ ըստ պատուիրելոյ երջանկի վարդապետիս բարսղի երեք ոմանք յաշակերտաց սորին արարին․ որք էին՝ ի մոկաց գաւառէն միոյն անունն յօսէփ՝ ի գեղջէն որոյ անունն է ողմի, և միւսոյն Հայրապետ , և սորին եղբօր որդւոյն ներսէս , որք էին՝ ի գեղջէն որոյ անունն է ասկնջաւս ։ Եւ այս ներսէսս , բեղլու ներսէսն է , զոր՝ ի կարգ վարդապետացն յիշեցաք՝ ի վեր անդր ։ այս ներսէսս յոլով աշխատեցաւ՝ և առաւելագոյն քան զբարսեղ վարդապետն և քան զընկերս իւր ։ Եւ սա՝ ի միտս իւր եկեալ ներսէս վարդապետս և խոկմամբ՝ ի միտածեալ զմ̃մն ունայնութիս կենցաղոյս և զպատաղմունս սորա՝ և զպատրանս մեծութեն , զզջացաւ յաշխարհէ՝ և լքեալ թօթափեաց յինքենէ զաշխարհս , և զամենայն վայելչութիս սորին ։ քանզի մեծ անապատն նոր էր շինեալ և Հաստատեալ , որոյ զպատմութին կանխաւ ճառեցաք , և՝ ի նմին պատմութեն ներսիսի վարդպտի յիշումն արարաք , և այն յիշեալ ներսէսն այս է ։ և սորա լուեալ զառաքինական ճգնութիս միաբանից մեծի անապատին , ելեալ գնաց անդր ։ Եւ՝ ի միաբանից մեծի անապատին ոմանք աւեղայք , սկսան դասատունուլ զարտաքին գիրսն

գիրսն 'ի ներսիսէ վարդապետէն ։ և վճռի գործ-
նական առաքինութեան յարգոյ, և նախապատուե-
էր առ նոսա, զի զհոգիս զարդարելոյ փոյթ
ունէին և ոչ զբան, սորին վասն՝ ոմանք 'ի դա-
առնողաց յետս կացին ։ բայց ոմն աբեղայ
տէր մելքիսեթ անուամբ՝ որ էր յարարա-
տեան աշխարհէն, 'ի գեղջէն, զոր վժանասեն,
Սա ոչ թուլացաւ յընթերցմանէ արտաքնոց
գրոց, և ոչ մեկնեցաւ 'ի ներսիսէ վարդապետէն,
այլ ցորքան ժամանակս եկաց ներսէս վարդա-
պետն 'ի մեծ անապատն, եկաց անդէն և տէր
մելքիսեթն, և յորժամ ելեալ ներսէս վարդ-
պետն գնաց յերկիրն վասպուրականի 'ի լիմ կո-
չեցեալ կղզին․ որ է 'ի մէջ ծովուն՝ և շինեաց
անդ զանապատ․ այս տէր մելքիսեթս ևս
գնաց ընդ ներսիսի վարդապետին 'ի լիմ ։

Նաև յորժամ ժողովեցան յոլովք՝ և բազմա-
ցան միաբանք տեղւոյն․ հինգ այլևս եղբարք
միաբանեցան ընդ տեառն մելքիսեթի՝ և ամենե-
քեան 'ի ձեռս առին զգիրս արտաքինս՝ և սկ-
սան ջանիւ կարդալ ։ և յայտ արարեալ նշա-
նեցին յաւուրն ժամ մի առ ի միասին ժողովե-
լոյ․ որպէս զի իւրաքանչիւրոք 'ի նոցունց՝ զոր
ինչ և գտեալ իցէ 'ի բանից գրոց անդէն ամե-
նեցուն յայտնեսցէ՝ զի այլքն ևս ուսցին՝ որով
աճեցեալ և արծարծեցեալ առաւելագոյն գի-
տութեան այն ։ և այսպէս արարին զամս երկուս և
յայնմ հետէ միաբանեալք եղբարքն ձանձրա-
ցեալք յետս կացին յընթերցմանէ արտաքնոց
գրոց՝ զի աշխատութեան յոլովէր՝ և մխիթարու-
թեան սակաւ․ զի տակաւին ոչ էին թարգմանեալ
'ի մեր բանին․ և զճաշակ քաղցրութեան ոչ էին
առեալ․ որով ամենքն աշխատութիւնքն նուաստ և
երկրորդ նմին տեսանի ըստ վկայելոյն դաւթի
փիլիսոփային ։

Բայց տէր Մելքիսէթ՝ ոչ էթող զարտաքին գիրքն. և ոչ թուլացաւ ՚ի նորին ընթերցմանէ. այլ անդադարիւ տքնութբ զցայգ և զցերեկ ընթեռնոյր և մտածէր, և բերեալ առ ներսէս վարդապետն ցուցանէր, և հարցանէր թերևս ուղիղ իցէ գտեալն բանն։ Նա ընդ բազմաջանն ընթերցմանն, զոր առնէր և խոկայր ցանդ. հանապազ ՚ի տեսական իմաստութին, և զգործնական առաքինութին ևս իմաստնի բարձեալ տանէր, զի զկարգ անապատին հաւասար ընդ հասարակաց եղբարցն անպակաս կատարէր, նա և գերադոյն քան զնս, ՚ի գիշերի կանխէր յաղօթս և ՚ի պաղատանս առ Տր և տուօղն ամի իմաստութե ՚ի Տր Ած, բանալ նմա զդուռն իմաստութե գրոց՝ և խելամուտ առնել նորին հանճարոյ։

Նա զորինչ վասն նախասացեալ վարդապետացն պատմեցաք, սա բազմապատիկ առաւել քան զնս զերկս և զաշխատութիս կրեաց իվր արտաքնոց գրոց՝ զի թող զայլ ժամանակն զոր ընդ ընկերացն և կամ չափաւորիւ ձգնութբ զորքնութին կրեալ էր, այլ յատուկ տասն ամ առանց թուլանալոյ և ներելոյ ինչ, զմարմինն իւր ՚ի խաչ բարձեալ կարեօք և ցանկութբ հանդերձ ըստ պօղոսի։ և քան զայս ևսառաւել յամս երկուս յօրն մէկ հաց ճաշակեալ և ոչ այլ ինչ։ և յայն երկու ամն ամենևին լուռ եկաց և ընդ ումեք ոչ խօսեցաւ՝ այլ ընդ Ած, և ընդ գրոց իմաստութե։ և ամենևին մերձ հրոյ ոչ գնաց. և ճրագ, և կամ լոյս ՚ի խուցն իւր ոչ տարաւ, այլ միշտ ՚ի տուէ գիրս վերծանէր և ՚ի գիշերի խոկայր։

Իսկ անքննելին յամենից էից սէր Հոգին Ած որ քննէ զամենայն և զխորս Այ, հայեցեալ յանդ

յանդառնալի յոյս և յանձանձիր խնդրելն նր, եհեղ առ նա զշնորհս իմաստութե և գիտութե, և պարգևեաց զխնդրելին յաղագս առէպ ժտելոյ նր, ըստ առակելոյ իւրոյ եակցին ՏՆ ՅՆ:

Քանզի գիտութե ամենից արտաքնոց գըրոց անտարակոյս խլր հասեալ գիտող եղև, Սահմանացն, պորփիւրեն, ստորոգութե, պերիարմենիասին, աշխարհացն, առաքինութե, վերլուծականին:

Այլև զամենայն ազգաց տօմարն, որոց պատճէն գրեալ կայ 'ի միջի մերում, քաջ և անտարակոյս էհաս ամի, գիտելով զսկիզբն և զպատճառն և զամսն հետևմունս նց: Այլև քերականութե գիտութե եղև տեղեակ և գիտող առաւել քան որք էին 'ի ժամանակին:

Արդ` ոչ թէ այս միայն է շնորհք և գիտութեն նր, զոր պատմեմք. քանզի յԱծաշնչոց գրոց, և 'ի բանից վարդպտոց կարի յոլով բան 'ի բերան առեալ էր, որ հանապազ քաղէր: Այլ զայս արտաքին գրեանս յայն սակս յիշեմ և շնորհական լինիմ նմա, զի զայսպիսի այլաշաւիղ` և այլատեսակ` և այլանուն` և անընդել բանս առանց վարժողի և թարց ուրուք ուսուցանողի իւրովի էգիտ զամենայն յսկզբնէ մինչև ցկատարածն:

Եւ 'ի կատարել մարմնոյ հասակին, քան զոր առաւել կատարեալ էր իմաստութե և հոգւոյ հասակն, կամօք իւրովք վարդպտն ներսէս և վկայութե ամենից եղբարց անապատին, յառաջ կոչեաց զնա 'ի բարձրագոյն տեղի և 'ի պատիւ ըստ հրամանի ՏՆ թէ բարեկամ 'ի վեր մատիր, և շնորհեաց նմա զգաւազան վարդպտութե, որ յարաժամ քարոզութե աղբե

բաւար իմաստութե ջրով մխիթարեալ զովացուցանէր զլսօղսն ։

Նաւ յաւուրս ժամանակին այնորիկ, Մովսէս վարդապետն, որ եղև կաթողիկոս Էջմիածնի, այն էինչ նոր սկսեալ էր նորոգութի մէջ աթոռոյն Էջմիածնի և շինութի պարսպին ։ և համբաւ նորոգութե սրբոյ աթոռոյն և Մովսէսի վարդապետի կաթողիկոսութեն հրապարակեցեալ էր ընդ ամ աշխարհ, առ որ ամէն տենչացեալ գային 'ի տեսութի նորին ։ Յայսու աղագաւ և Մելքիսեթ վարդապետս ելեալ 'ի լմայ անապատէն եկն 'ի բարձրագահ աթոռն 'ի սուրբ Էջմիածին և երկրպագեաց. Իտանկոխի մէջ տեղւոյն և տաճարին՝ և հանդիպեցաւ տեսութե Մովսէսի կաթողիկոսին, և նորին աշակերտացն. յորոց գալստեան ուրախութի անպատում եղև ամենեցուն ։

Նաւ լինէր յորժամ Մելքիսեթ վարդապետն կամէր 'ի դաս և 'ի քարոզ. իբրև զյորձանս ուղխից և հեղեղաց ընթայր բանն 'ի բերանոյ նր. յորոց իմաստութե ամէն պատուշեղեալ հիանային և բաղձային ։

Նաւ յաւուրսն յայնոսիկ Մովսէս կաթղկսն զմեծ աշակերտսն իւր զկեսարացի խաչատուր վարդապետն եղբարբք ոմամբք առաքեաց 'ի Լեհաց աշխարհն յաղագս նուիրակութե սրբոյ Էջմիածնի. և վասն ոչ ընդ գիտակաց ախոյանի պատահեալք էին եղբարքն՝ որք ընդ խաչատուրոյ վրդպետին. վասնորոյ 'ի միոջ իւրեանց կարծէին զինքեանս գիտնականս և կարօղս ոմանս գոլ ։ Նաւ անդ 'ի Լով քաղաքի յազգէն փռանկաց պատրիք ոմանք եկին առ աշակերտս Մովսէսի վն հակաճառութե. և հարցին նոցա ցմեծն նախ 'ի քերականէ արհեստէն. և ասացին՝ վարեմ բառս անունն է թէ բայ. և մերքն անհմուտ գոլով զայլ և այլ

և այլ պատասխանիս առէին. յայնժամ նոքա
ժահելով և ծիծաղելով այսպէս արարեալք են
զմերովքն։ Եւ՚ի բազում աւուրս վս հակաճառու-
թեն այսպէս են արարեալ։ յայնժամ մերքն ՚ի
սիրտ և յոգի խոցեցեալք են, և իմացեալ՝ թէ
զայն, զոր գիտեն ոչ է գիտութիւն, այլ պարտ
է նց զարտաքին գիրսն կարդալ, և անդէն ՚ի
մտի եդեալք են հաստատութբ թէ գնամք
յէջմիածին առ Մելքիսեթ վարդապետն, զայլ
ամենայն ինչ թողեալ զարտաքին գիրսն կար
դամք՚ի նմանէ։ Իսկ յորժամ հասին յէջմիա
ծին առժամայն սկսան ՚ի նոյն գործն ձեռնար
կանել, և ոմանք ևս յեղբարց ՚ի միաբանիցն
Էջմիածնի, ընդ նոսին յարեցան ՚ի դասառ
նուլ։ Եւ յորժամ միաբանեալ եղբարքն եկին
առ Մելքիսեթ վարդապետն, և սկսան զդա
սառնուլ, նախ զքահանայքն սկսան, և ապա
զպորփիւրն, զստորոգութին, զպերիարմենի
ան, զաշխարհացն, զգովելին։ զկնի սոցա
ամենեցուն ամենից ազգաց զտօմարսն։

Իսկ ՚ի զրաւ այսմ ամի, զորս դասաաց Մել
քիսեթ վարդապետն աշակերտեալ եղբարցն մե
ծացնծութբ և բերկրելով հոգւով համբար
ձեալ զձեռս իւր յերկինս սկսաւ գոհանալ
զՏր և փառաւորէր և զշնորհս խոստովանէր
զԱյ և առէր աշակերտեալ եղբարցն։ Եւ
այլ ինչ խոկ ումն կամ մտածութին գոյր ՚ի սրտի
իմ բայց միայն վս իմաստութեանս այսորիկ՝ զոր
բազում և անթուելի չարչարութբ հազիւ
գտի, և այն ևս շնորհելովն Տն, երկնչէի թէ
առանց ումեք ուսուցանելոյ մեռանէի, և այս
պանծալի և չքնաղ գիտութիւնս ընդ իս ՚ի հող
մտեալ ամփոփիւր։ բայց արդ որովհետև դաս
տացի ձեզ՝ և զընկալեալն ՚ի Տէ զարծաթ

 քանին

բանին արկի 'ի սեղանատուրս՝ այսուհետև փո խանակ տրտմութեան ունիմ զմխիթարութիւն, զի թէպէտ ես մեռանիմ, այլ անրմանեալն առ ձեզ բան Տ՟ն Յիսյ յաշխարհի։ և զորինչ ես յամս հնդետասան, և այլ աւելի, մեծաւ տա ժանմամբ հազիւ կարացի գտանել. որդ՝ հեշտ և դիւրին յամիսս ութ ձեզ ընձեռեցի։ Բայց խնդրեմ 'ի ձէնջ եղբարք իմ սիրե ցեալք 'ի Տ՟ր, ո՟ր պատուիրեցին մեզ նախնիք վրդ.պետքն մեր զկտակ արարեալ և զհրրկ եդեալ խղճ՟ մեր, նոյնն նման և ես այսօր ձեզ պատուէ իրեմ, և զնոյն հարկ դնեմ խղճ՟ ձեր, զի մի թու լանայցէք՝ և մի տայցէք զհանգիստ աչաց կամ զննինջ արտևանաց, այլ բուռն առեալ զշաւ իղս իմաստութեանս այսորիկ, և յաւուրս կենաց ձերոց անդուլ և անդադար աշխատեցարուք խղճ՟ սորին մինչև յօր վախճանի ձերոյ։ և ես յու սամ 'ի ս՟բ հոգին Ք՟ծ՟՝ յաննախանձ պարգևա տուն, զի բազմապատիկ առաւելեալ արդիւ նաւորեսցէ զձեզ շնորհօք քան զմեզ, և զոր ինչ պարգևեսցէ ձեզ աննախանձաբար ուսու ցէք այլոց խնդրողաց՝ ովք և իցէ։

Յետ այսորիկ անկաւ 'ի մահճս հիւանդու թեն Մելքիսեթ վրդ.պետս. քանզի վ՟ն առաջնոց վշտամբերից հգնութեանցն, զոր 'ի լմայ անապա տին դիմակացեալ տևեալէր ցրտոյ և ստոնամա նեաց ձմերայնոյ. ցուրտ.քամի ունակացեալ էր 'ի մարմնոջ նր՟՝ յորմէ պատճառէ ստէպ ստէպ հիւանդանայր. յայն սակս հաճեցու ցեալ եղբարքն զՄելքիսեթ վրդ.պետն՝ և բե րին խղճ՟ նր՟ զբժշկն. զի թերևս բժշկականօք դեղօք փարատեսցէ զցուրտն 'ի նմանէ. իսկ բժշկին անհմուտ գոլով՝ յոլովագոյն 'ի գործ էարկ զջերմ դեղն 'ի մարմնն նր՟՝ յորմէ պատ

ճառէ

ձաւէ չորացեալ խշկեցան ամէ՛ն մասունք ներ
սին փորոտեաց նո՛ր։ քանզի ուժգին ջերմութե՛
դեղոյն այրեաց զմասունս ներսին անդամոց
նո՛ր. զսիրտ, զլեարդ, և զթոք, և զայլ մասունս։
որով հիւծեալ մաշեցաւ ամ՛ մի անդամոյն. և
այնու հիւանդութե՛ վճարեաց զկեանս զայս. և
գնաց առ վերին իմաստութե՛ն 'ի Տ՛ն Ա՛ծ։

Եւ եղև վախճան բաղմաշխատ վրդ՛պտիս
մելքիսէթի յերևան քաղաքի. 'ի վանս դամ
բարանի սրբոյ առաքելոյն անանիայի. և թա
ղեալ զնա 'ի հանգիստ հատորակաց 'ի բլուրն
զոր անուանեն կոզեռն։ զի վա՛ գերեզմանի կո
զեան վրդ՛պտին որ անդ է՝ այնպէս կոչեն զբ
լուրն. և անդ մերձ գերեզմանի կոզեան
վրդ՛պտին պատրաստեցին զհանգիստ. և անդ
հանգուցին զպատուական և զսրբասնունդ
նշխարս մարմնոյ նո՛ր. և գրեցին զանունն իւ՛ր
տապանին։ Եւ եղև վախճան սորին 'ի հազար
և ութսուն թուականիս մերոյ. Եւ 'ի
սկիզբն ձաւիս զոր 'ի կարգս վրդ՛պտացն յիշե
ցաք զդաւաացի բարսեղ վրդ՛պտան. և սորին
աշակերտ մոկացի բեղլու ներսէսն. և սորին
աշակերտ երևանցի մելքիսէթն 'ի վժան գեղ
ջէ. այն մելքիսէթն այս է՝ որոյ զպատմու
թի՛ն ձաւեցաք։

Իսկ այնք եղբարք՝ որք միաբանեցան և դաս
աւորին զորտաքինն 'ի մելքիսէթէ վրդ՛պտէն.
թէպէտ և ամ՛ոք ջանաց և աշխատեցաւ և կար
դաց ըստ իւրում կարի. բայց միոյն 'ի նոցանէ
սիմէօն անուամբ աբեղայ նորոգ երևտասարդ՝
որ էր ազգաւ ջուղայեցի. որք այժմ ընա
կեալէն 'ի սպահան քաղաքի։ այս սիմէօնս յոյժ
առաւելացոյց։ վա՛զի այն զոր կանխաւ պատ
մեցաք թէ աշակերտքն մովսէսի կթղիկսի գնա

ցեալ 'ի լով քաղաք պատահեցան հակաճառութեան փռանկաց. ընդ որս էր և այս տէր սիմէօնս. որոյ վն և այժմ 'ի ժամանակս առնլոյ զդասին կարի յօժարութբ և ջերմեռանդիւ սրտիւ և պարքատոչորիւ կարօտիւ առնոյր զդասն՝ և յարաժամ կարդայր: Իբրև վերջեղև զդասին. եղեալ տէր սիմէօնս յԷջմիածնէ գնաց 'ի սպահան քաղաք. քանզի տէր սիմէօնիս վրդպտն. որ էր կեսարացի խաչատուր վարդպտն, որ զյոլովհարանց վարս և զժամագիրս տպագրեաց. այս խաչատուր վրդպտս. 'ի մօտեսէ կթողիկոսէն առաջնորդ կարգեալ էր ջուղայեցւոց ժողովրդեանն. որք յասպահան քաղաքին էին: յետ աւարտման դասին եառ զտէր սիմէօնն և գնաց 'ի սպահան քաղաք 'ի վանս իւր՝ զոր իմէջ ջուղայեցւոց շինեալ էին. և խաչատուր վրդպտս զիմն աշակերտս իւր 'ի մարմնաւորանաց գործոց յապահով պահէր. վն որոյ և աշակերտքն միշտ և հանապազ 'ի կարդալ և յընթեռնուլ կային: և մանաւանդ վն տեսան սիմէօնիս առաւել զգութ և զխնամ ունէր. որոյ խնամարկութբն տէր սիմէօնս կարի առաւել աճեցոյց զուսումն իւր. զի զարտաքինն՝ զոր դաս էր առեալ յառաջ եբեր և սկսաւ կարդալ կարգաւ. և մտախոհ լինէր զցայգ և զցերեկ անդուլ և անդադարիւ տքնութբ. ոչ տալով զհանգիստ աչաց՝ և ոչ զքնինջ արտեւանաց: այլև ինքն տէր սիմէօնս 'ի բնէ ունէր զմիտս սուրս և զծննդական. և այս արտաքին իմաստութեան կարդալնեւ պատահեցաւ նմա 'ի տիս երիտասարդական հասակին՝ որ առնու և պահէ և աճեցուցանէ: և ջան՝ և երկն՝ և վաստակն անչափ էր. զոր կրէր յընթեռնուլն. զի բերանն յընթերցմանէ՝ և միտքն 'ի խոկմանէ

մանէ ոչ կայր պարապ ամենեւին. 'ի տան, 'ի ժամատեղ. 'ի դուրս. ուր եւ լինէր.

Նու զամս երիս 'ի յընթերցումն եւ 'ի խոկումն կապեալ ունէր զինքն բազմաւ ջանիւ եւ յօժարութբ. այլեւ մեծօք պաղատանօք եւ արտասուօք խնդրէր 'ի Հեշտալրոյ Տէ. զի արժանի արասցէ զինքն այնպիսւոյ չքնաղի եւ պանծալւոյ եւ գերագունական իմաստութե. զի խոր զմտլի իմն առ այն իմաստութին բեւեռեալ ունէր զտարփումն ցանկականի մասին:

Նու 'ի բազմաժամանակէ եւ 'ի մշտաջանէ աշխատութենն յաւելաւ տեսական իմաստութի 'ի միտս սորա շնորհօք սրբոյ Հոգւոյն Ս.Յ. որ Համապազ զարդարէ զեկեղեցիս Քի բստ բազմազանից շնորհաց իւրոց. որպէս ուսուցանէ նորին առաքեալն սուրբն պօղոս՝ թէ ումեմն 'ի Հոգւոյն տուեալէ բան իմաստութե. այլ ումբ բան գիտութե. եւ այլն: Ս.րդ՝ նոյն նը Հոգին պարգեւեաց սմա զբան վճխո՝ եւ գերապանծ՝ եւ շնորհալի 'ի քարոզութիս 'ի Հակաճառութիս՝ 'ի մեկնութիս Ս.ծաշնչոց գրոց. կամ արտաքնոց գրոց. 'ի բնական քննութիս, եւ 'ի փիլիսոփայական արուեստս. անհամեմատ եւ գերիվերոյ եղեւ քան զնմին վարդապետս ժամանակիս այսորիկ. որք ամքն խոնարՀեալ առ նա ուսանէին 'ի նմանէ դասիւ եւ այլով կերպիւ:

Նու վճղի 'ի մայրաքաղաքն տապահան գոլով սոցա, որ բուն մայրաքաղաքն է Պարսից. յորմէ ազգէ արք փիլիսոփայք գային եւ պհարցաքննութի եւ զհակաճառութի առնէին. եւ տէր սիմէօնս զնմին եւ կօղս հիացուցանէր փիլիսոփայականս արուեստիւ եւ բնականաւ քննութբ տալով նց զպատասխանի: Նու ամենից նախապատուաց

արանց

արանց Ջուղայեցւոց տեսանելով զարժանաւորութիւն սորա վկայեցին առաջի խաչատրոյ վրդ͞պտին. այլեւ իւր եւս խաչատրոյ վրդ͞պտի տեսանելով զնա 'ի շնորհս Ա͞ծայինս. կոչեաց զնա յեւս գերադրոյն պատիւ եւ աստիճան. եւ ետ նմա զգաւազան վրդ͞պտութե զի յորդառատի բանիւ քարոզութեն բերկրեալ զուարձացուցանէր զմիտս լսողացն: եւ ոչ ունէր զկարիս քարոզ գրքի կամ հարցնատեսի. այլ առձեռն պատրաստ զինչեւ պատշաճ պիտոյանայր ժամուն, բնաբան ինչ առեալ յԱ͞ծաշնչոց գրոց. գեղեցկիւ եւ կարգաւորիւ եւ պատշաճաւորիւ շարադրութե յօրինեալ յարդարէր զբանն. 'ի փառս Ս͞բ Հոգւոյն տուողին շնորհաց:

Եւ մինչեւ էր 'ի սպահան քաղաքին. երկք անգամ զարտաքինն եւ զքերականութինն դաս ասաց ընկերաց իւրոց եւ աշակերտակցացն:

Եւ ապա եկեալ յասպահանայ եկն 'ի գերադրական եւ 'ի բարձրագահ եւ 'ի Ք͞րիստոնեայ ս͞ր աթոռն Էջմիածին. յորոյ գալստենէ ուրախութի անպատում եղեւ անդ եղեալ աշակերտացն. եւ առժամայն պատրաստեցան 'ի դաս առնուլ. ոչ միայն Էջմիածնի միաբանքն. այլ եւ բոլորից վանորէից գրոց աշակերտեալ աբեղայքն. եւ միահամուռ ժողովեցան անձինք երեսուն եւ սկսան առնուլ զդաս՝ Նախ՝ սկիզբն արարին 'ի քերականութենն. եւ ապա զարտաքին գրեանն բովանդակ մինչեւ ցվերջն: զկնի նորին զԹուղթն պօղոսի զեբրայեցւոց գլուխն: եւ ամենեքեան օգտեալք եւ լուսաւորեալք յիմաստից սորա՝ որք էին բաւական ինքեանց եւ այլոց:

Եւ երեւանայ քաղաքի քահանայքն եւ ժողովուրդքն յոյժ հաճեալ 'ի բարս եւ 'ի բնու

թիւ

թիս սորա. զի յոյժ բարեբարոյ և հեզահոգի և զանընչասէր բարս ունէր. եկին առ փիլիպպոս կթղկոսն և մեծօք թախանձանօք խնդրէին զնա իւրեանց առաջնորդ կարգել: և նա ըստ խնդրոյ նց արար այնպէս. առաքեաց 'ի վանս նոցա, որ է 'ի գաւառին գաւնեայ՝ անուամբ ամենափրկչին. որ մականուամբ ասեն Հաւուցթառ:

Նա յետ ամաց ինչ արար զգիրս մի և անուանեաց տրամաբանութի. և է այս գիրքս իբր ներածութի արտաքնոց գրոց՝ քանզի շարագրեալ բառքն, և բանքն, և միտքն, և ոճն, արտաքնոց գրոց դժուարաւ ըմբռնի մտաց մարդկան և բազմի աշխատութե պէտք են Իսկ այս, զոր սիմէօն վարդապետս արար. իբր ներածութի արտաքնոց գրոցն ամենեցուն. և որ ինչ այլևս որ առ սոսա վերաբերին: զի թէ գայցէ ժամանակ յապագայս. որ գիտութի արտաքնոց գրոց ապառեսցի յազգէս Հայոց՝ զորօրինակ յանցեալ ժամանակս և 'ի մերս էր լեալ՝ ոչ պատմեցաք. այս սիմոն վարդապետս արարեալն, զոր անուանեաց տրամաբանութի. աւանց ուսուցանողի՝ եթէ ոք կարդայ կարէ գիւրաւ հասկանալ և իմն հասանել՝ և ապա սովաւ յարտաքին գիրքն ձեռնարկել:

Նաև գիրքն պրոկղի իմաստասիրի, զոր 'ի Վրացլեզուէն թարգմանեալ է 'ի մեր լեզու՝ այլ ոմն նախադոյն եղեալ սիմէօն անուամբ. քահանայ. և այս սիմէօն վարդապետս զայն գիրքն ևս ուղղեաց: վնզի առաջին թարգմանութեն աշխատութիս բազում տայր կարդացողին. զի հոլովք անուանցն և խոնարհմունք բայիցն, և շարադրութիք բառիցն՝ ոչ էր ըստ պատշաճին. և ըստ քերականի արհեստի. յաղագս որոյ

և

և միտք բանին ընդ նմին այլայլէր։ այլ և յօրով տեղիս կրկնաբանութիւնք կային միոյ բանի՝ և ընթերցողն զբազում աշխատութիւնս կրէր և զօգուտս սակաւ գտանէր։ Իսկ սա ըստ քերականի արհեստին զամ ուղղեալ յարդարեաց որ դիւրաւ իմանի կարդացողին. և զբազում օգտութիւն շնորհէ մտաց մարդոյ։

Յետ այսոցիկ ձեռնէարկ հոգեաց գրքին զի գնա ևս ուղղեալ դիւրացուսցէ. և մինչ դեռ նոր սկսեալ էր յայն. քարոզութեան աղագաւ ելեալ գնաց յաշխարհն յունաց. և էհաս 'ի քաղաքն յեւդոկիայ՝ որ այժմ ասի Թօխաթ։ և անդէն տկարացեալ վախճանեցաւ՝ և անդէն թաղեցաւ։ և եղև վախճան սորա 'ի մերում թուականիս. հազար և հարիւր և վեց 'ի փետրվարի ամսոյ քսանևօթն՝ յաղուհացից պահոցն։

Զկնի սոցին պատմեցուք զայլոյ ումեմն զմաքրակենցաղ առնն զարդիւնաւորութիւն որոյ անունն ստեփաննոս վարդապետ յորջորջիւր։

Սա էր ինքն 'ի մայրաքաղաքէն լովայ և յազգէն Հայոց. յազատէ և 'ի վարթամէ տանէ. բարեպաշտից ծնողաց զաւակ. որ 'ի տիս տղայութեան իւրոյ վարժեցաւ 'ի դպրատունս լովացւոց գրով և լեզուաւն լատինացւոց. և ուսաւ զարուեստ քերականութեան և զճարտասանական։

Իսկ 'ի ժամանակին յորում Նիկոլ եպիսկոպոսն լովայ նեղէր և վտանգէր զհայազուն ժողովուրդսն՝ ծնողք ստեփաննոսի մն բարեպաշտութեան և ուղղափառութեան հանեալ զսա 'ի լովայ առաքեցին 'ի սուրբ աթոռն Էջմիածին 'ի ժամանակս փիլիպպոսի կաթողիկոսին. Իսկ յորժամ էհաս ստեփաննոս յԷջմիածին ուսաւ զլեզու և զգիր հայոց. և 'ի բերան էառ զսաղմոս և զշարական և զայլ եկեղեցական զուսմունս։

Յայնուհետեւ սկսաւ ընթեռնուլ զա̃ծաշունչ գիրս և զերկոտասանից վրդ̃պտաց՝ և զփիլիսոփայից. և վ̃զի յառաջն գիտէր զլեզու և զգիրս լատինացւոց՝ յետոյ ուսաւ և զմերս. և զերկոսեանսն առ միմեանս համեմատելով խոկայր 'ի նոյնն և մտավարժիւր. վ̃որոյ առաւելաւ քան զայլ ընկերս իւր. այլև էր մտօքն սուր և ծննդական. առնող և պահօղ և միշտ ընթերցօղ. և վարուքն մաքրակենցաղ՝ և պարկեշտ. Որոյ զուսումն և զմաքրութն վարուց տեսանելով ամենից վարդապետաց վկայեցին առաջի փիլիպպոսի կաթողիկոսին. այլև ինքեան իսկ տեառն փիլիպպոսի տեսանելով զարժանաւորութիւն նր̃. կոչեաց յեւս գերադրական 'ի փառս. զի յետ օրհնելոյ զնա կուսակրօն քահանայ ետ նմա զիշխանութիւն վարդապետական։

Նա ինքն ստեփաննոս վարդապետ օր ըստ օրէ վարժէր և կրթէր զանձն ուսմամբ՝ և պարկեշտուք վարուք. վ̃որոյ ընկալաւ զշնորհս 'ի հ̃ոգւոյն սրբոյ. և'ի նորին պարգևաց թարգմանեաց զչորս գիրս 'ի լատինականէ գրէ և'ի լեզուէ 'ի հայ գիր և լեզու. որոց մինն է յօսէպոս պատմագիրն. բայց ոչ բովանդակն. այլ զայն միայն, որ վ̃ն եէմի քաղաքին. և հրէից ազգին պատերազմունք յարեան՝ որ է վեց հատոր։ Նա երկորդ՝ դիոնէսիոսի արիսպագացւոյ գիրքն. զի թէպէտ առաջին թարգմանեալն ստեփաննոսի սիւնեցւոյն գոյր 'ի մէջ մեր. այն համառօտախօս և դժուարահասկանալի էր. իսկ սորայս թարգմանեալն ևս նոյն է. բայց դիւրահասկանալի է՝ որ ոչինչ մնայ անհաս յընթերցողէն. զի մեկնութիւն յաճախ է և դիւրահաս։ Նա երրորդ գիրք՝ որոյ անունն է գիրք պատճառաց. այլև կոչեն զնա 'ի վեր

քան

քան զընականս. որ է Ծառանութեան գիրք՝ զի Ծառանութիւն է համբաւն նոցա՝ և է ինքն պրակք երեսունևվեց: Զորրորդն գիրք՝ բանք առակաւորք՝ որ զվարուց և զկենցաղավարութենէ մարդկան պատմէ իբր թէ օրինակ համ մարդկան. որոյ մակագրութիւն էր լատինական լեզուաւն, Հայելի վարուց. և յորժամ թարգմանեցին 'ի Հայոց լեզուս. այլուրիք զնոյն մակագրութիւն մակագրեցին Հայելի վարուց: և յոյժ համեղ և անուշ են բանք այսորիկ գրոյ:

Արդ՝ մինչև ցարդ՝ այսքան զարգունս արար սա յեկեղեցիս Հայոց:

---

Պատմութիւն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին Աջոյն:

Ա:

ՈՐՊԷՍ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՐԻ կոյ կարգ և սահման իմն ազգիս Հայոց. զի հայրապետ ազգին, որ է կաթուղիկոսն, յերիս ամս միանգամ հանէ զնուիրակ յաթոռոյն՝ որ գնացեալ առ համայն ազգս Հայոց նուիրէ զմեռոնն և առնու զտուրս ողորմութեան ժողովրդեանն և բերէ 'ի սուրբ աթոռն: Այսպէս և հայրապետն տէր Փիլիպպոս. որ էր կաթուղիկոս սրբոյ Էջմիածնի առաքեաց զմեր նուաստութիւնս՝ որ էաք ձեռնասուն աշակերտ նորին, 'ի գործ նուիրակութեան սրբոյ Էջմիածնի յաշխարհն յունաց. որ է ընդ իշխանութեամբ Օսմանցւոց: և եղև հասանել մեր 'ի քաղաքն ամասիայ՝ յորում ամի էր և թուականն մեր հազար և իննսուն և չորս՝ պատահեցաւ անդ լինիլ և սեբաստացի ներսէս վարդապետին. որ յետոյ եղև կաթուղիկոս սըսայ. և որ 'ի բազում աւուրս 'ի կարգս զրուցատրութեան. յաւուր միում ասաց ներսէս վարդապետն առ

մեզ. յորժամ օրհնէք զմեռոն՝ զոր սրբութն բերէք իմն. և մեք ասացաք զԱջ սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին. և զԱջ Թադէոսի սրբոյ առաքելոյն. և զսբ նշանն որ 'ի կենաց փայտէն. և զգեղարդն որ մխեցաւ 'ի կողն Տն: և նորա թողեալ զամ ասաց, վն լուսաւորչի Աջոյն զայդ՝ որ լուսաւորչի Աջ ասես աջոյ Աջն է թէ ձախոյ. մեք ասացաք թէ աջոյ Աջն է. ասաց ներսէս վարդապետն, բնակիչք կթղկոսարանին այս ասեն՝ թէ ստուգիւ և հաստատեալ Աջ սբյ լուսաւորչին այն է, որ 'ի սիս է. և բերեն զվկայ ստուգութե նորին զայն բանն՝ որ 'ի շարադրութիս հայրապետաց գրեալ է վն ստեփաննոսի հայրապետին և վն լուսաւորչի Աջոյն. որոյ գրեալ պատճէն այս է: տէր ստեփաննոս ամս չորս 'ի սորա աւուրս եղև անհնարին աղէտ. զի անօրէն գուռզ սուլթանն եգիպտոսի քանդեալ աւերեաց զաթոռ լուսաւորչին սրբոյն գրիգորի՝ զկլայն հռոմկայն՝ և 'ի սուր սուսերի մաշեաց զամ. և զմնացեալսն խաղացոյց 'ի գերութի. ընդ որս և զհայրապետն սուրբ. և անդ վախճանի: Եւ զԱջ սրբոյ լուսաւորչին գրիգորի անդ տարեալ. և յորժամ եմուտ ընդ ապարանս նց պատժեաց զնոսա մահուամբ. ոչ 'ի ձեռն տապանակին զայլազգիսն. մինչ զի անհամար և անթիւ էին մեռեալքն. մինչև դարձուցին զԱջ ձեռն սբ լուսաւորչին գրիգորի յերկիրն կիլիկիոյ առ բարեպաշտ թգւորն հեթում. և ապա դադարեցաւ ցասումն 'ի նոցանէ: Արդ նորա այսու վկայութբս ասեն թէ այն Աջն որ 'ի սիսէր. ստուգիւ այն է Աջ սրբոյ լուսաւորչին. իսկ զայդ Աջդ, զոր արդ ունիք յԷջմիածին. ոչ գիտէք թէ այդ լուսաւորչի

ածն է. եթէ ունիք զվկայութի՛ւն 'ի նախնեաց մեր գործին՝ ցուցէք: Իսկ մեր լսելով զայս լսեցուք զի պարզմտութ̃ ունէաք զհաւատ հաւատատու Ս. Ջն այն. և 'ի նունոց հաւատոց ոչ երկմտեցաք, բազմաւ հոգաբարձութ̃ հետևեցաք գտանել զվկայութի՛ւն 'ի գրոց. ոչ թէ վ̃ մերոյս հաւատոյ հաստատութե՛ն՝ այլ վ̃ յայտնելոյ ճշմարտութեն. և հարցողաց պատասխանատուութե:

Նա 'ի շրջիլն մերում յամենայն քաղաքս և 'ի գիւղս, եթէ արևելից և թէ արևմտից, ուր և գտանէաք զծերունի վարդ̃պտ, եպիսկոպ, կամ քահանայ, հարցանէաք վ̃ սորին խնդրոյ: Այլև յամենայն եկեղեցիս ուրեք պատահէաք, ամենից գրոց անդրէն եղելոց զյիշատակարանսն ընթեռնուաք, յորոց գտաք զբազում վկայութի, որոց զատուել հաւատոյն առեալ ասէն շարագրեցաք: Գնացաք 'ի սպահան քաղաք՝ և մինչ որոնէաք զյիշատակարանս գրոց, գտաք զաւետարան մի՝ որոյ յիշատակարանն էր այսպէս:

Արդ գրեցաւ սբ̃ աւետարանս 'ի թուին Հայոց, ութհարիւր և ութսունևութն ձեռամբ գրիգորի սուտ անուն կրօնաւորի, 'ի վանս որ կոչի արգիլան, ընդ հովանեաւ մօրս լուսոյ սրբուհւոյ Ածածնին, և տեառն յուսկայ որդւոյ սրբոյ գերեզմանին, 'ի հայրապետութե լուսաւորչին, քանզի յայսմ ամի վերացեալ եղև Ս. Ջն 'ի սմայ՝ և ոչ գտանեմք զինչ եղև, յառաջնորդութե սրբոյ ուխտիս մկրտչի վարդ̃պտին:

Համդիպեցաք 'ի սեբաստիայ 'ի վանս սրբոյ հրեշտակապետին և անդ էր ճաշոցգիրք մի, որոյ յիշատակարանն էր այսպէս գրեալ:

Նա արդ, գրեցաւ ճաշոց գիրքս 'ի քաղաքս արծկէ հանդէպ սբարարի ծովուս՝ որ մանր

Ճիւղք ելանեն, ընդ հովանեաւ պատերազմի սրբոյ Նշանիս, և ամենամաքրի սրբուհւոյ Ածածնի կաթողիկէիս, 'ի հայրապետութեն մեծի աթոռոյն՝ որ էր 'ի սիս խախանեցաւ. զի զԱջն սբոյ լուսաւորչին անդի գողացան, և յամն երկու ազգս Հայոց անտերունչ մնաց, 'ի դառն և 'ի չար ժամանակիս՝ յորում շարժեալ էր պիղծ ջիհանշայն, զի Թուականս Հայոց, ութհարիւր և իննսուն էր՝ որ այս ամենայն բանս եղև ։

Գնացեալ 'ի սպահան քաղաք ինձ Ջուղայեցւոց, գտաք զյամաւուր մի՝ որոյ յիշատակարանն էր այսպէս գրեալ ։

Եւ արդ՝ գրեցաւ այսմաւուրս 'ի Թուականութես Հայոց մեծաց, ութհարիւրևիննսուն ամին, յերկիրս վասպուրականի, 'ի քաղաքն վան կոչեցեալ. ընդ հովանեաւ սրբուհւոյ Ածածնի տաճարիս և այլոց սրբոց. 'ի հայրապետութեն մեծի աթոռոյն սսոյ՝ որ յայսմ ամի զլուսաւորչի Աջն գողացեալ տարան, և աթոռն ունայն մնաց, 'ի դառն և 'ի չար ժամանակի, 'ի պարոնութեն ջհանշահին, որ չարութե խուրով լցեալ գնաց 'ի վրաց տուն, և վրացիքն զինչ քրիստոնեայք, որ կայր 'ի Հայոց ազգէն. զամենեսեան բռնութե 'ի շամշուլտայ բերդն արգելեցին. և այլ ամենեքին նոցա ոչ օգնեցին ։ և չար ջհանշէն չարեօք զօրօքն խուրովք գնացեալ ինո. և էառ զդղեակն շամշուլտոյ. և ինն հազար անձինս քրիստոնէից և այլ աւելի հանդերձ քահանայիւք 'ի սուր սուսերի մաշեցին և զկանայսն և զտղայսն գերի վարեցին. որոց զաղէտ տարակուսանացն ով կարէ պատմել կամ գրել ։

Այլև գնացաք մեք 'ի քաղաքն ուրհայ. և 'ի վանքն ուրհայոյ ուր կայ տապանն սրբոյն եփրեմի խորին ասորւոյ. տեսաք զճաշոց մի

որոյ յիշատակարանն էր ըստ այսմ օրինակի ։

Այս արդ՝ եղև սկիզբն Ճաշոցիս 'ի մէջ ուխտոն Մատնավանք. և աւարտեցաւ 'ի քաղաքն յար ծկէ. յամի ութհարիւրերրորդի. իննսուներոր դի. և երկրորդի ամի. 'ի թագաւորութեան Ջհանշայի որ դւոյ ղարայիւսուֆին. և 'ի հայրապետութեան աթո ռոյ լուսաւորչին մերոյ տեղապահի տեառն կի րակոսի ընդհանուրց հայոց կաթողիկոսի. զի մինչ 'ի սոյն ամս Ս. Էջմիածին լուսաւորչին մերոյ գրիգորի 'ի սիս էր. և ամենայն ազգս հայոց հնազանդեալք էաք աթոռոյն կիլիկիոյ. և այժմ շնորհիւ նո րին. և օժանդակութեամբ հոգւոյն սրբոյ, վերս տին եկն 'ի նոյն վաղարշապատ Ս. Էջմիածին շո ղակաթի տաճարին, և հաստատեցաւ աթոռ հայկազնի սեռի, գերապատիւ և հրաշափառ, զոր պահեսցէ հաստատուն Տէր Յիսուս, Ամէն ։

Այլև գտաք զաւետարան մի, երբև ընթեր ցաք զյիշատակարանն, և էր գրեալ այսպէս ։

Այս արդ՝ սկսեալ եղև սուրբ աւետարանս յարգին, 'ի վերադիտողութեան հայկազնի սեռի երկուց կաթողիկոսաց տեառն գրիգորի և տեառն կիրա կոսի զի յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս այս, չորս ամ էր, որ լուսաւորչին Ս. Էջմիածին կորեալ էր 'ի սըսոյ՝ և եղ համբաւն 'ի վաղարշապատ, վասն որոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսք, քահա նայք, եօթն հարիւր անձն, և հաստատեցին զա թոռն յԷջմիածին, և եդին զոմն կիրակոս ա նուն այր առաքինի և ճգնաւոր կաթողիկոս, և հաս տատեցին զաթոռ սրբոյ լուսաւորչին ։ 'ի յաշ խարհակալութեան համզայ սուլտանին . 'ի թու ականութեան հայոց, ութհարիւր և իննսուն և երեք ամին ։ և այս ևս այսպէս ։

Այս յետ գրելոցս այսոցիկ ունիմք զայլևս հաս տատագոյն պատմութիւն վասն գալստեան լուսաւ

որչի

որչի Կ.ջոյն 'ի սբ̃ աթոռն յԷջմիածին , զի իմ
պատահեալ 'ի քաղաքն անկիւրիայ , գտի զայս
մատուր մի յեկեղեցին , զոր սբ̃ Հոգի անուա
նեն , որ ունէր զյիշատակարան կարի երկարա
բան , բայց վ̃ր կարևորի գոլոյ բանին , զամ̃ն
բանն նունով շարադրութ̃ն անպակաս գրեցի
աստ ։ և վ̃ր երկարութ̃ն ոճոյն մի լինձ լցիս մե
ղադիր և միաւաջնոյ շինողին , զի ո՛չ պատմու
թ̃ն այնչ̃ պահանջէ քանզի երկար է պատմու
թ̃ն որոյ սկիզբն է այս ։ Կ.րդ գրեցաւ սբ̃ գիրքս
յամի Թուականութ̃ես Հայոց իննհարիւր և
տասն ամին , յերկիրս քաջբերունեաց , 'ի քաղաքս
արճէշ , ընդ հովանեաւ ամենօրհնեալ սրբու
հւոյ Կ.ծածնի տաճարիս , 'ի հայրապետութ̃ե
տեառն զաքարիայի կթ̃ղկսի ամենից Հայոց , և
'ի բռնակալութ̃ե ազգին նետողաց ջհանշայի
փաթշահին ։ որ և բազմօք հենիւք և անթուովք
զօրօք ։ և գնացեալ եմուտ 'ի տունն իրաղայ
և զամ̃ն գրաւեաց ընդ ձեռամբ իւրով ։ և հա
սեալ 'ի մեծ քաղաքն ասպահան , որ է շօշ քա
ղաք ։ յոր մարգարէն դանիէլ զտեսիլն տեսա ։
որ էր ամուր և բազմամարդ որոց ընդ իմացեալ
նմա պատերազմեցան ։ և յաղթեալ նշ̃ էառ
զքաղաքն ։ և զամ̃ն զօրսն սրոյ ճարակ տուեալ
և 'ի սուր սուսերի մաշեալ ։ քանդեալ և աւե
րեալ ։ և ըզջուր գետոյն կապեալ իվերայ քա
ղաքին ։ զի որք 'ի նզմունս և 'ի ներքնատունս
և 'ի դարանս մտեալ էին և թաքուցեալ ։ ամենե
քեան ջրասոյզ և հեղձամղձուկ եղեալ սատա
կեցան ։ որ և քաղաքն ամ̃ տապալեցաւ իվ̃րն նշ̃
զի հողաշէնէր ։ Նա անտի գնացեալ եմուտ 'ի
հրէ և 'ի խորասան ։ և զամ̃ տունն թաթարաց
նուաճեաց ընդ ձեռամբ իւրով ։ և դարձեալ
եկն 'ի թախտն իւր , 'ի քաղաքն շահաստան 'ի

թաւրէզ։ Սորա ընդ առաջ գնացեալ մեծ հայ
րապետն տէր զաքարիայ աթոռակալ սրբոյ խա
չին աղթամարայ. որ էր թղւրաղն 'ի թոռանց
և շառաւիղէ արքային գագկայ բազմօք ըն
ծայիւք և պատարագօք։ զոր յոյժ սիրով ըն
կալաւ արքայն արքայից ջհանշայ փաթշահն
և գլխոյն բէկում խաթունն. և պատուեալ
մեծարեցին զնա. և ետուն նմա զխլայ և զպար
գև զԱջ լուսաւորչին մերոյ սրբոյն գրիգո
րի. և զպատիւ պատրիարգութեն։ Սորա ա
ռաջնորդութեամբ Այ և կամաւ սրբոյ լուսաւ
որչին և հրամանաւ փաթշահին եկեալ յԱծ
արեալ և յԱծանկար սբ գրիգորաշէն և երկ
նահանգէտ կթղկէ սբ Էջմիածինն՝ յաւաքե
լաշնորհ աթոռ սրբոյն գրիգորի. և նստաւ ինք
նակալ պատրիարգ է հանուր ամ̃ քրիստոնէա
կանի ազգի. որք են ընդ ամ̃ ոլորտս տիեզերաց.
և արարեալ զաշխարհս ամ̃ լինիլ մի հօտ և մի
հովիւ ըստ բանին Ք̃ն. և հովուէր զամ̃ն 'ի
հաւատս ուղղափառ նիկիականի սրբոյ դաւա
նութե. Ընդ այնմ ժամանակին եղև ցասնուլ
փաթշահին իւր̃ո ամիրային բաղէշու. և բար
կութե առաքեաց զչորաղորագլուխս երկոտա
սանիւք հազարօք հեծելազօրօք իւր̃ո. քաղաքին
խլաթայ՝ և գնացեալ աւարեալ քանդեցին
զնա՝ և բդ̃մաւար 'ի մի ժողովեալ նստան իւր̃ո
բերդին և նեղէին յառնուլ զնա. և զնոյն հան
դերձեալէին առնել 'ի բաղէշ՝ և մուշ 'ի խութ
և 'ի սասունք և յամ̃ն գաւառսն նր։ Զոր տե
սեալ նորընծայ պատրիարգն տէր զաքարիայ
զտարակուսանս աշխարհին այնորիկ զգերեվա
րիլն և մատնիլն 'ի ձեռն անօրինաց։ զաւերիլն
և զքանդիլն. զխախտումն եկեղեցեացն. և
զտապալումն սբոց սեղանոցն. զգերեվարիլ սըր

բու

բութեցն. և զխափանումն փառաբանութեցն
Մ.Ծ. և զտարաշխարհիկ լինելն նմ խառնիճա
ղանճ ժողովրդեան՝ զգերիլն և զտառապանելն:
Զայս նմ զմտաւածեալ մեծ Հայրապետն
տէր զաքարիայ. և'ի միտս իւր բերեալ զբանն
տերունական. որ ասէ՝ Թէ եսեմ հովիւն քաջ՝
հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վ̃ր ոչխարաց. և
կատարեալ գործով զբանն. եդ զանձն իւր
ի վ̃ր բանաւորի հօտին Ք̃Ի ի վ̃ր նմ̃ի ժողո
վրդեանն բաղիշու. և զօրացեալ 'ի Հոգւոյն
սրբոյ. և արարեալ զսիրտ իւր իբրև զկարծր
վեմ. և մտեալ առաջի Թգրին, ետ զանձն իւր
փրկանս փոխանակ բաղմաց. տուեալ զձեռա
գիր և մտեալ գամամն առնուլ զհարկս յամիրայ
էն բաղիշու և տալ կայսերն առ 'ի մնալ երկ
րին 'ի խաղաղութե՝ և առնել զաղօԹս վ̃ն կե
նաց Թգրին և որդւոց նր: Որոյ հաւանեալ ար
քայն և դշխոյն ետուն նմա զնշանագիր և զհրա
ման առնել զինչև կամեսցի, և նր ելեալ երե
սաց նց վաղվաղակի ձիընԹայ արշաւմամբ գը
նացեալ էհաս 'ի քաղաքն բաղէշ: Որոյ ընդ ա-
ռաջելեալ ամիրայն հանդերձ ամենևիւք մեծա
մեծօքն իւրովք, և մեծարեալ փառօք տարաւ
զնա 'ի գլուխ բերդին, և խոստացան առնել
զկամս նր և տալ զինչև խնդրեսցէ, բայց միայն
զի յետս դարձուսցէ զամենայն հեծելազօրսն
'ի բերդէն խլաԹայ: Եւ նա առեալ զվկայ
ութի 'ի բերանոյ նց գնաց 'ի խլաԹ, և ետ զօ
րագլխացն կրկին ձեռագիր, և ցուցեալ նց
զնշանագիր փառաշահին և համոզեաց զնս՝ որք
խաղաղութբ գնացին 'ի տեղիս իւրեանց, և
ինքն դարձաւ 'ի բաղէշ և նստաւ ամիս երիս
և առեալ զխոստացեալ հարկն կայսերական,
և տարեալ մատոյց առաջի փառաշահին՝ և արար

զխաղաղութի նմէջ նց, և ազատեաց զամենն խառնիճաղանճ ժողովուրդն զհայ և զտաճիկ ՚ի ձեռաց անօրինաց և՚ի դառնէ գերութենէ, զոր Ա՟ծ ազատեսցէ զնա յամէ փորձութե՟ հոգւոյ և մարմնոյ ամէն։ Իսկ նր դարձեալ ՚ի փառաշահէն նստաւ յաթոռն իւր ՚ի մէջ Ս.Էջ միածինն, և մեծարանօք խիլայեալ եղև յեր կուց դոռողաց յայլասեռից, ՚ի թուրքմանէ փառաշահէն և ՚ի քրդոյ ամիրայէն, ոմ զզօ րաւորել ՚ի դարեհէ առ ՚ի հովուել զհաւա տացեալ ժողովուրդս իւր։ Իսկ եղև կրկին անգամ գնալ ընհանշայ փաթշահին ՚ի տունն իրաղայ, ՚ի շիրազ և ՚ի քրման, և էր նր որդի մի հասանալի անուն՝ որ շրջէր թափառական զվերին կողմամբ գաւառին արարադեան, և նա նենգութբ չարախօսաց ոմանց կամեցաւ ըմբռնել զմեծ պատրիարգն զտէր զաքարիայն՝ և պահանջել ՚ինմանէ զգանձս և զինչս։ զոր ի- մացեալ մեծ հայրապետն զնենգութի նորա, և առեալ զՍ.Ջ սբյ լուսաւորչին հանդերձ այլօք սպասուք յաւուրս ձմերայնոյ և գնացեալ մինչ ՚ի բադոճան և անտի եկեալ ՚ի բերդն բի ալոն իջեալ ՚ի մէջ ուխտին արգիլան ուր հնգու ցեալ կայ պատուականն նշխար սբյ վարդապետին ստեփաննոսի տէր յուսկայ որդւոյն։ Իսկ անդ հասեալ յայտնեաց զգանձն Ա՟ծային զՍ.Ջ սբոյ լուսաւորչին մերոյ սբոյն գրիգորի. հանդերձ խաչալամովն որնկարեալ կայր ՚ի մի կողմն պատկերն տէրունական. և՚ի միւս կողմն լուսաւորչին մերոյ սրբոյն գրիգորի. և թա գաւորին տրդատայ. և չքնաղագեղիկուսին սրբուհւոյն հռիփսիմեայ. այլև ոսկեթել յօրի նուածով և ազդի ազդի գունով. երանգ ե- րանգ զարդարեալ սրբով ուրարովն. որ զարմա նալի է

նալն է տեսողացն : Սա դէմ եդեալ գալ 'ի Հայրենի աթոռն իւր 'ի գեղեցկայարմար գըմբեթայարկ մը խաչն ախթամարայ : Սա եւ համբաւ գալոյն հնդերձ սրբով Ս. Ջոյն եւ խաչալամոյն, որ բարձրացեալ կայր 'ի ծայրս ձողոյ եւ խաչ ոսկի կառուցեալ 'ի գլուխս նր . ընդ որ գրոհ տուեալ ամենից բնակչաց գաւառացն ըն որ գայր հայրապետն եւ ամբն ընդ յառաջ ընթանային խնկօք եւ մոմեղինօք եւ զենմամբ խոյոց եւ զուարակաց եւ երկրպագութի մատուցանէին սրբոյ Ս. Ջոյն . եւ հայրապետին՝ եւ համբուրէին զնա մեծօք փափագանօք մինչեւ եկեալ էհաս 'ի գաւառն տոսբայ . եւ մտեալ 'ի քաղաքն վան . բազմօք երկպաօք եւ վարդպետօք . քահանայիւք եւ բազմամբոխիւք ժողովրդովք՝ ձիօք եւ ձիաւորօք . եւ խաչալամն առաջի . եւ քահանայքն յառաջ եւ յետոյ երգէին քաղցուք եղանակօք . եւ այնպէս պերճ եւ փառաւոր եմուտ 'ի քաղաքն վան : Իսկ պարոնն այն՝ որ նստէր յամուրն շամիրամայ 'ի բերդն վանայ մահմուտ բէկ կոչեցեալ . որ էր կաթնեղբայր ջհանշայ փատշահին . ետես զպայծառութի քրիստոնէիցն եւ ցանկացաւ տեսութե սրբոյ Ս. Ջոյն . եւ յղեալ տարաւ 'ի գլուխ բերդին . եւ եղեըն մտանել մեծի հայրապետին սրբով Ս. Ջոյն ըն դուռն վերին բերդին՝ ընդ առաջել գուռոյն մահմուտբէկ . ամենիւք մեծամեծօքն իւրովք . տամբ եւ ամիրզայ որդւովքն . եւ ամենիւք ընտանեօքն . եւ երկրպագութի մատուցանէին սրբոյ Ս. Ջոյն եւ համբուրէին . եւ զաղերս պատարագաց նուիրէին . եւ մեծարեալ խնկայեաց զհայրապետն՝ եւ դարձոյց յօթեւանս իւր : զոր տեսեալ բազմութե քաղաքին եւ գաւառին օր ըստօրէ գային յերկրպագութի սրբոյ Ս. Ջոյն .

և յողջոյն մեծի հայրապետին բազմօք ընծայիւք և պատարագօք: Նա յետ աւուրց ինչ առեալ զհրաման 'ի պարոնէն գնալ 'ի հայրենի աթոռն իւր 'ի յաղթամար. և իբրև ել 'ի քաղաքէն ելին ընդ նմա բազմութիւք եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝ և քահանայից և ամ̃ ազատագունդ խօջայքն վանայ՝ ձիօք և ձիաւորօք սպառազինեալք: և եկեալ հասին մերձ ծովահայեաց քաղաքին ոստանայ. որում ընդառաջ ելին ամ̃քն բնակիչք քաղաքին քահանայիւք և բազմամբոխիւք ժողովրդօք 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս. խնկօք՝ և մոմեղինօք՝ և բարձրաձայնիւք եղանակօք. մինչ գրեթէ քան զհազար մարդ աւելի կայր յառաջ և յետոյ մեծի հայրապետին: և խաչալամն առաջի գնայր ունելով 'ի գլուխն զխաչ ոսկեփայլեալ լուսոյ նման: և այնպէս շքեղիւք փառօք եմուտ 'ի քաղաքն յոստան. իբրև տեսին այլասեռ բնակիչքն որք յոստան զխրախութին զայն 'ի խորխոցեցան ը̃ պայծառութի և ընդ համարձակութի հայրապետին. որ 'ի գաւառէն տարբերունւոյ մինչ 'ի քաղաքն յոստան խաչալամով էր եկեալ՝ եպիսկոպոսօք՝ և վարդապետօք՝ և բազմօք կարգաւորօք և ժողովրդօք. վ̃ որոյ ժողովեցան 'ի միասին առ իշխան քաղաքին. որ էր ազգաւ քուրդ. ժանտ և անագորոյն ամենևին Թշնամի քրիստոնէից. և խորհեցան խորհուրդ չար զի գաղտագողի նենգեսցեն հովուապետին: զոր իմացեալ զչարութ̃ինց քաջ դիտապետն. և ը̃ լուսանալ առաւօտուն առեալ զսբ̃ Աջն գնաց 'ի յեղր ծովուն ուր նաւահանգիստն էինէր: Օ որ իմացեալ ամենից եկեղոյն ընդ նմա. որք 'ի վանայ, և որք յայլոց գաւառաց ելին զհետ նը̃ և եկին հանդէպ Ածապահ կղզւոյն

ալս

աղթամարայ մեծի բերդին մանաձկրտի, որ է
քարադաշտ։ Եւ անդ զտեղին առեալ օրհնեաց
զամէն շնորհաբաշխ սրբով աջոյն և համբու
րեալ զամ՚ ՚ի համբոյր սրբութե. և արձակեաց
զնս խաղաղութբ և օրհնութբ գնալ ՚ի յարկս
իւրեանց։ Եւ ինքն էառ զնշ Ս. Գն լուսաւոր
չին և եմուտ ՚ի նաւ և գնաց յամրենակ կղզին
յաղթամար ՚ի հայրենի ժառանգութի իւր։
զոր իբրև ելին ՚ի ցամաք ընդ առաջ ելին նմա
ամենայն բնակիչք տեղւոյն յեզր ծովուն խնկօք և
մոմեղինօք՝ և քահանայիւք՝ քաղցրաձայնիւք
երգանակօք և առեալ տարան զնշ Ս. Գն՝ և եդին
՚ի գեղեցկայարմար սբ. խաչն աղթամարայ. և եր
կրպագութի մատուցանէին սրբոյ Ս. Գոյն և հայ
րապետին. և զօրհնութի և զփառաւորութի
վերառաքէին հրաշագործողին Ս. Յ. որ արժա
նի արար զամէն տեսութե շնորհաբաշխ սրբոյ
Ս. Գոյն լուսաւորչի. եմուտ ՚ի յամուր կղզին
աղթամար և հանգեաւ ՚ի գմբէթայարկ սբ.
Ս. Գն ՚ի բուն տեղւոջն իւր։ ՚ի թուականութեա
մերում ինն հարիւր և տասն և մեկ ամին. ՚ի
սկիզբն տարւոյն. որ էր նաւասարդի ամսոյ
տասնևմէկ. յաւուր ուրբաթի սբոյ յակօբի պա
հոցն եմուտ սբ. խաչն աղթամար՝ ՚ի պահպա
նութի մեզ ամենից հաւատացելոց. որոց եղև
ուրախութի ամենայն ոչ սակաւ։ Եւ զայս լու
եալ ամենից բնակչաց գաւառացն օրըստօրէ
գային յերկրպագութի սրբոյ Ս. Գոյն՝ և յողջոյն
մեծի հայրապետին բազմօք ընծայիւք և պա
տարագօք. և օրհնութբ մեծաւ ուրախու
թբ դառնային յարկս իւրեանց՝ փառաւորե
լով զամենասբ զերրորդութիւն. զՀայր և զՈրդի
և զսբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն։

Ս.րդ

Ա.րդ այս պատմութիւն մինչև ցայս վայր ծանոյց մեզ թէ լուսաւորչի սբ. Ա.ջն հաւատեալ և ստուգիւ դարձեալ է 'ի սըսայ և եկեալ է յԷջմիածին. այլև գնացեալ է յաղթամար: Ա.յլև 'ի կարգս թուականացն և գրեալ կայ թէ ինն հարիւր և տասնևմեկ թուին զաքարիայ կաթուղիկոսն, էառ զլուսաւորչի Ա.ջն ընդ իւր և տարաւ յաղթամար:

Ա.րդ՝ թէպէտ գոն և այլևս այսպիսիք բանք և պատմութիւնք, զորս ժողովեցաք 'ի գրոց վն սրբոյ լուսաւորչի Ա.ջոյն թէ հաւատեալ եկեալ է Ա.ջն 'ի սբ. Էջմիածին. սակայն զամենն ոչ շարագրեցաք աստ՝ զի մի գուցէ լիցի երկարութիւն բանիցն ձանձրութիւն ընթերցողացն. այլ զայս քանս բաւական համարեցաք շարակարգել աստ. յայտ առնել անխարդախաբարուց և ճշմարտասիրաց արանց իմաստնոց զոր պիտութիւն անցուածոց ժամանակաց: Ա.յսու հետև ժամ է մեզ պատմել վն սբոյ լուսաւորչի Ա.ջոյն թէ որպ դարձաւ յաղթամարայ և եկն 'ի սբ. Էջմիածին:

Մ՝երձ մայրաքաղաքին Նախջուանու կայ գաւառ մի, զոր անուանեն շաբունուց ձոր. և յայսմ գաւառի կայ գիւղ մի, զոր անուանեն ածօպի. և մերձ այսմ գեղջս կայ շինեալ 'ի վաղեմեաց ժամանակաց վանք մի յանուն սրբուհւոյ Ա.ծածնին՝ զոր անուանեն ածօպու վանք. և միաբանից այսմ վանիցս եպիսկպս մն որոյ անունն էր վրթանէս եպիսկպոս. այր խորագէտ և խելամուտ 'ի գործս իւր. և ճարտարաբան 'ի խօսս. սա գնացեալ 'ի յաղթամար գողացաւ զԱ.ջն սրբոյ լուսաւորչին և եբեր դարձեալ 'ի սուրբ Էջմիածինն: զայս արար վրթանէս եպիսկպոսն խորհրդով և կամօք կթղկոսացն Էջ

միած

միածնի․ որոց անուանքն էին սարգիս և յօ
հաննէս։ Եւ նախ գնաց վրթանէս եպիսկոպոս
յանձանօթ աշխարհ և անդ այլափոխեաց զա
նունն և զզգեստն․ և հարթեալ թեթևացոյց
զմօրուսն․ և եղև 'ի կերպ մուղդասոյ՝ անգէտ
գրոց և կարդալոյ․ այլև իվերոյ քան զծունկն
կապեաց պարանաւ զբարձն և կաղացոյց զջիլն․
և եղև իբրև զբնական կաղ՝ որ 'ի գնալն իւր
կաղայր։ և ապա գնացեալ 'ի կղզին աղթամա
րայ՝ և անդ բնակեցաւ՝ և առնէր զպաստաւո
րութի վանացն․ և օրաւուր ընդելացաւ նշ̅
վ̅ բարուք սպասաւորութեն․ մինչ որ կարգե
ցին զնա լուսարար եկեղեցւոյն․ և պահօղ
անօթոցն և սրբութ̅ն վանիցն․ և մնաց նա 'ի լուս
արարութե̅ն եկեղեցւոյն յամս եօթն։ և 'ի ժա
մանակին յայնմիկ պատահեցաւ 'ի միում ա
ւուր․ զի եկին յոլովք արք վաճառականք՝ զոր
Հայոց բառիւ փոքէզիկ ասեն՝ և այլազգեաց
բառիւ չարչի ասեն․ այս չարչիքս գրաստուք
և խշովք շրջելով գիւղէ 'ի գիւղ եկին և հասին
մինչ 'ի նաւահանգիստն աղթամարայ․ և այնո̅
խշովքն և գրաստովքն իւրեանց մտին 'ի կղզին
աղթամար վաճառելզկտաւ և զաստառ, զչիթ
և զալաջայ՝ և զայլ ինչ։ և էին այս չարչի արքս
'ի գիւղաքաղաքէն ջուղայու․ քան զի 'ի ժա
մանակին յայնմիկ տակաւին չէին եր ջուղայ․ և
մնացին երկու և երեք օր անդէն 'ի կղզւոջն։
Իսկ վրթանէս եպիսկոպոսն հերձեաց զխշոյ միոյ
զկուրդլինն, որ է պաղանն․ և բերեալ զլուսաւոր
չի Մ․ջն ընդ նմին և զվառն, որ է խաչվանն․ և
զուրարն․ զորև խմէջ անցեալ պատմութեդ
յիշեաց․ և զայս երեքեանս եդ խմէջ խշոյ կուր
դլին՝ և դարձեալ կարեաց ո̅պ և էր յառա
ջագոյն․ և զայս արար թաքուն․ և անդխուելի
յամէ

յամէ մարդկանէ. բայց միայն իշխյ տիրոջն յայտ նեաց. որում և պատուիրեաց զի բարուք պահ տպանեսցէ. զի մի վնաս ինչ պատահիցի Ա՟ծն. այլև միևս ուրեք յամեսցի. այլ փութանակի ա ռեալ հասցէ 'ի Ջուղայ: և զկնի գնալոյ չորչոցն յետ աւուրց ինչ՝ և ինքն վրթանէս եպիսկոպոսն պատճառանօք ինչ ելեալ 'ի կղզւոյն և գնաց ուրեք. իբրև հեռացաւ 'ի վայրացն յանծանօթ տեղիս. ապա արձակեաց զկապուտիցն, զոր առ Ջադոյն կապեալ էր՝ և ուղի անկեալ գնայր բաղ մաւ ճեպով: Իսկ բնակիչք աղթամարի կըղ զւոյն իբրև տեսին թէ անցին պայմանեալ ա ւուրքն. և ոչ եկն լուսաւորչն իւրեանց. գնա ցեալ աստ և անդ հարցին և ոչ գտին: և իբրև ծանեան թէ ոչ է Ա՟ծն 'ի տեղւոջն իւրում. յայնժամ սկսան յամեն ճանապարհս և յուղիս կարի ստիպով հետամուտ լինել զի թերևս հա ցեն. իսկ գնացող խնդրակքն. իբրև պատա հէին եկող ճանապարհորդաց և հարցանէին թէ զկաղ այր մի տեսիք. և եկողքն պատաս խանէին թէ չիք մեր տեսեալ զայր կաղ. և այս ու կերպիւ զերծաւ վրթանէս եպիսկոպոսն. և ե կեալ էհաս 'ի գիւղաքաղաքն Ջուղայ. և որոն մամբ եկեղ եգիտ զտուն առնն՝ որ էր տէր իշխյն և բազմաւ տագնապաւ հոգայր վն Ա՟ծն թէր ևս ամբողջ հասանիցէ Ա՟ծն 'ի Ջուղայ. իբրև լուաւ յառնէն՝ և ետես զպատղանն յորում ինքն եդեալ էր զԱ՟ծն՝ զի ամբողջ կայր Ա՟ծն. յայն ժամ մեծաւ ցնծութե ուրախ եղև և փառս ետ Ա՟յ: Ապա գնացեալ վրթանէս եպիսկոպոսն առ առաջնորդս և առ քահանայսն Ջուղայու. և ծանոյց նոցա զպարան իւր. և նոքա զարմացան ընդ արարեալ գործն նր. և լցան երկնայնով խնդութբ. և գնացեալ հանին զԱ՟ծն. և զխաչ

ալ

ղամն և զուրարն՝ և բերին՝ յեկեղեցին. և վաղվաղակի առաքեցին աւետաւորս 'ի սբ աթոռն Էջմիածին առ կաթողիկոսն սարգիս և յօհաննէս՝ որոց կամօք և խորհրդակցութբն գնացեալ էր վրթանէս եպիսկոպոսն յայս գործ։ Իբրև լուան նոքա ևս առաւել ցնծացեալ զուարճացան և լցան երկնային խնդութբ. և վաղվաղակի եկեղեցականօք աշխարհականօք և ամենիւք երևելեօք արամբք աշխարհին ա-րարադու յուղի անկեալ գնացին ընդ առաջ սրբոյ Ս. Աջոյն. և գտին զՍ. Աջն 'ի Նախչուան քաղաքի. զի մինչ 'ի գալն կաթողիկոսացն, ջուղայեցիք և վրթանէս եպիսկոպոսն զՍ. Աջն բերեալ էին 'ի Նախչուան քաղաք. և անդ 'ի Նախչուան քաղաքին պատուեալ փառաւորեցին զսբ Ս. Աջն լուցմամբ պայծառաց մոմեղինաց՝ և բուրմամբ անուշահոտոց խնկոց՝ և զենմամբ խոյոց և զուարակաց. և կատարեցին անդէն զուխտս և համբուրեցին մեծատենչիւք փափագանօք զսբ Ս. Աջն. և ապա աշխարհախմբով բազմութբ առին զսբ Ս. Աջն և բերին 'ի սբ աթոռն Էջմիածին. և հանգուցին 'ի սեպհական և 'ի բնական աթոռն իւր։ Իսկ կաթողիկոսունքն և ամն որք աշխարհին եկեղեցականք և աշխարհականք զբազում և զանթուելի պարգևս բաշխեցին վրթանէսի եպիսկոպոսին. այլև որքան նուէրք և աջահամբոյր, զոր նուիրեցին ժողովուրդքն սրբոյ Ս. Աջոյն՝ զայնևս զբովանդակն շնորհեցին վրթանէսի եպիսկոպոսին. այլև կարգեցին կաթուղիկոսունքն և ամն ժողովն՝ զի վրթանէս եպիսկոպոսն լիցի աթոռակալ կաթողիկոսացն՝ որոք և իցէ կաթողիկոս իմէջ սրբոյ աթոռոյն՝ որքան և իցէ վրթանէս եպիսկոպոսն կենդանի. որ և արար զաթոռակալութին մինչ 'ի ժամանակս

ծերու

ծերութե իւրոյ։ և ապա վն անկարութե մարմնոյն
գնաց 'ի վանքն ծօպու մերձ իւրոց ազգակա
նացն վն պաշտպանելոյ իւրոյ ծերութեն. և
անդէն վախճանեցաւ և թաղեցաւ 'ի թուին
իննհարիւր և քառասուն և երկու. ուր և գրեալ
է իւր տապանին իւրոյ. Իսկ կթղիկոսունքն Էջ
միածնի իբրև զհայրենապատուէր կտակ. աւ
անդութի ունէին ի մէջ իւրեանց զի յամ ամի
'ի տարւոջն միանգամ գնային 'ի վանքն ծօպու
մատուցանէին զպատարագ. և զպաշտմանդրամ
բաժանէին վանականացն. և կերակրէին զաղ
քատս վն հոգւոյ վրթանէսի եպկպսին. և մինչ
'ի ժամանակս դաւթի կթղիկոսին, և մելքիսեթի
կթղիկոսին կայր այս աւանդութի որ զայն կա
թուղիկոսունքն և կատարէին։ Իսկ վերոյ ձա
ւեալ պատմութիւն որ վն գալստեան սբյ Աջոյն
է՝ որ յաղթամարայ դարձաւ և եկն 'ի սբ Էջ
միածին ոչ թէ հարևանցի բանք և զրոյցք են,
այլ հաստատուն և հայրենատուր աւանդու
թի պատմի յամենն գաւառս՝ որք են շուրջ
զնախչուան քաղաքաւն, և մանաւանդ 'ի գաւ
առին շահբունուց ձորու՝ և որք մերձ նմա վա
նորայք են, զի ամէն եկեղեցականք և աշխար
հականք միաբանութի պատմեն զայս պատմու
թիւն՝ թէ ձեռամբ վրթանէսի եպկպսին եկն
լուսաւորչի Աջն յԷջմիածին, յորոց առեալ
մեր զհաւաստին գրեցաք աստ։ Եւ կայր լու
սաւորչի սբ Աջն անդ 'ի սբ Էջմիածինն մինչև
'ի ժամանակս առաջին շահաբասին, որ տարաւ
'ի քաղաքն սպահան, և 'ի ժամանակս շահ
սեֆի թգւորին գնացեալ փիլիպպոս կթղկսն
յասպահան քաղաք խնդրեաց 'ի շահսէֆի թգւ
որէն, և առեալ էբեր դարձեալ 'ի սբ Էջմիա
ծինն 'ի սեպհական աթոռն իւր, ուր և գրեալ

կայ 'ի պատմութեան փիլիպպոսի կթղիկոսին. և կայ նոյն սբ. Աջն անդէն 'ի սբ. Էջմիածնին մինչև ցայսօր՝ և պատուի ըստ արժանոյն իւրոյ փառաւորութբ. բազմաւ, 'ի փառս իւր և զօրացուցանողին զնա Քի։ Եւ այն զոր ի մէջ անցեալ պատմութենդ յիշեաց զխաչալամն և զուրարն, ահաւասիկ սոքա երկոքեան ընդ սրբոյ Աջոյն կան 'ի սբ. Էջմիածնին պահեալք հաստատունք վկայ.ք սրբոյ Աջոյն, և մանաւանդ սքանչելագործութիւնքն, որք լինին 'ի սրբոյ Աջոյն հաստատել վկայ։

Եւ յորդորեալ շարակարգեցաք զպատմութիւս զայս 'ի թուականիս մերում, հազար եւ հարիւր եօթան եւմի ամին, յուլիսի ամսեանն 'ի մէկն, 'ի սբ. աթոռն Էջմիածնին, 'ի ժամանակս կաթղիկոսութեան տեառն յակոբայ Ջուղեցւոյ, և 'ի թգ.րութեան Պարսից երկրորդ շահաբասին, և Օսմանցւոց թգ.րին սուլթան մահմատին որդւոյ սուլթան իբրահիմին։

---

Շարադրութիւն կթղիկոսացն մերոց առեալ և օկսեալ՝ 'ի Ներսիսէ կլայեցւոյ, և կարգաւորեալ և հաւա-ցեալ մինչև ցժամանակս մեր։

## ԼԱ.

## ԶԿԱՐԳՍ ԿԱԹՈՂ

իկոսացս վն այս 'ի սրբոյն գրիգորէ լուսաւորչէն ոչ առեալ գրեցաք· զի 'ի բազմաց սրբոց և իմաստնոց, և հաւատարմոց արանց գրեալէ այն՝ որ և յայտնէ ամենեցուն· իսկ որ յետ սրբոյն ներսէսի կլայեցւոյ է, ոչ կայ բովանդակն 'ի մի վայր գրեալ այլ մասն մի աստ՝ և մասն մի անդ, իսկ մեք զբովանդակն հաւաքեցաք աստ 'ի մի վայր։

Եւ զանուանս կթղիկոսացս ամենեցուն յորոց

հաւաքեցաք․ եթէ զասայ կթղկացն, և թէ զԷջմիածնի կաթուղիկոսացն յերից տեղեաց հաւաքեցաք, մասն մի 'ի Թուականաց, որք նախքան զմեզ գրեալ էին, որոց ենքն ՚Ի՚ լիցի վարձահատոյց․ և մասն մի 'ի կոնդակաց վանորէից, զոր շնորհեալ էին կթղկոսունքն իւրաքանչիւրոց վանորէից։ և մասն մի 'ի յիշատակարանաց գրոց, որք յիւրաքանչիւրոց կթղկաց ժամանակս գրեալք էին։ և մեր ժողովեալ զամն կթղկաաց անուանսն, սկսաք շարադրել զնս ը կարգի Թուականին, զի որ 'ի նախկին Թուոջն էր նախադաս կարգեցաք։ և որ յերկրորդում Թուոջն էր, երկրորդ դաս կարգեցաք։ և որ յերրորդում Թուոջն էր երրորդ դաս կարգեցաք։ և որ 'ի չորրորդում Թուոջն էր՝ չորրորդ դաս կարգեցաք, և այսպէս առնելով հասուցաք մինչև 'ի մեր ժամանակս։ Եւ այսմ առնելոյ սկիզբն 'ի վեցհարիւրերքան Թուէն սկսաք, և մինչ 'ի ութհարիւր Թիւն ուղիղ էր, և յետոյ նորին խառնակ և շփոթեալ, և մանաւանդ զի բազումս և յոլովս ոչ կայր, զորս բազմաւ աշխատութը շարակարգեալ հասուցաք 'ի մեր ժամանակս։ Իսկ այնք Թուականքն որք յիւրաքանչիւրոց կթղկաց 'ի սկիզբն գրեալ կայ, ոչ թէ զնոցին կթղկաց նստելոյ զառաջին ամն նշանակէ, այլ միայն նշանի վն կարգեցաք զի այն Թուոյն դիւրաւ ճանաչեմք զայն կթղկոսն։ այլև թէ լինին երկու կարապետ կամ երկու պօղոս ժամանակաւ մերձակայ միմեանց՝ այնու Թուոյն դիւրաւ բաժանեմք յիրերաց, և ոչևս տարակուսիմք արդեօք միեն տքա թէ երկու։

Իսկ այնք Թիւքն որք զկնի կաթուղիկոսացն գրեալ կայ՝ որ ցուցանէ թէ այս անուն կթղկս, այսքան ամ յաջորդեաց։ այսց Թուոցս, զբա

զումս

զուածս ոչ գրեցաք, միայն զամսն, քանզի եր կու և երեք օրինակ 'ի միասին բերեալ տեսաք՝ զի ոչ զուգաբան ասէին, վասն որոյ և ոչ գրեցաք. Բայց որք զուգաբան ասացին զնոցին թիւսն գրեցաք ։ և այս ասացեալ երկոքին թիւքս, ինքն սոյ կաթուղիկոսացն կայ գրեալ, իսկ ինքն Էջմիած նի կաթուղիկոսացն ոչ 'ի սկիզբն գտաք թիւ գրեալ՝ և ոչ 'ի վերջն, քանզի Էջմիածնի կաթուղիկոսաց զանուանսն միայն 'ի յիշատակարանաց գրոյ հաւաքեցաք, որք զկաթուղիկոսաց ոչ զսկիզբն և ոչ զվախճանն ցուցին ։ Նա և Էջմիածնի կաթուղիկո սունքն՝ որ ի մէջ միոյ թուոյ՝ երկու և երեք և չորք կաթուղիկոսք կան գրեալք այս է՝ զի յիշատա կարանք գրոյն և կարգ թուականին այնպէս ցուցին ։ այլև 'ի կարծիս մեր թուեցաւ թէ այնքան կաթուղիկոսք լեալեն 'ի միում ժամանա կի, և 'ի միում թուականի ։ այլև ոչ եղեաք հասու թէ որոք 'ի նոցանէ իցէ առաջին ա ռաջնակաւ՝ և որոք վերջին, այլև ոչ այնմ, թէ որոք իցէ 'ի նոցանէ ինքնակալ, և որոք ընդ ձե ռամբ, և կամ լուեալ ։ այլ զայս միայն ցուցին մեզ յիշատակարանք գրոյն՝ վասն որոյ և մեք այն պէս կարգեցաք ։

Այլ արդ՝ օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ և խոստման մերում, արդէն այժմիկ սկսցուք զկարգ կաթուղիկոսացն 'ի սրբոյն Ներսիսէ կլայե ցւոյ կարգաւ՝ և հասուսցուք մինչև 'ի ժամա նակս մեր ։

ՈԺԴ՝ մեռաւ Գրիգորիս կաթուղիկոսն, և նստաւ եղբայր նորին Ներսէս ամս եօթն ։

ՈԻԱ՝ մեռաւ տէր Ներսէս, և նստաւ տէր Գրիգոր եղբօր որդի նր, ագուստոսի տասնև երեք, յաւուր հինգ շաբաթի ։ տէր Գրիգոր քարավէժն ։ տէր Գրիգոր ապիրատն ։ տէր

Յոհան մեծաբարոյն ։ զսա ընկեցին և փոխանակ սորա եդին կթղկս զտէր Դաւիթ արքակաղնեցին ամս երկու, մեռաւ տէր Դաւիթս և դարձեալ նստաւ կթղկս նոյն տէր Յոհանն յառաջ և յետոյ ամս տասնևհինգ ։

ՈԿԹ՝ տէր Կոստանդին բարձր բերդցին ամս քառասունևեօթն ։

ՉԺԷ՝ տէր Յակոբ գիտնականն ամս, ժը ։

ՉԼԵ՝ տէր Կոստանդին պրօնգործն կեսարացի ամս երեք ։

ՉԼԹ՝ աքսորեցին զԿոստանդին պրօն գործն. և եդին կթղկս զտէր ստեփաննոս Հռոմկլայեցին ամս չորս, զսա և զլուսաւորչին Ա.ջն գերի տարան ՚ի քաղաքն մըսր ։

ՉԽԲ՝ տէր Գրիգոր անաւարզեցին ամս ժդ ։

ՉԾԶ՝ տէր Կոստանդին կեսարացին հերձուածող ամս տասնևհինգ ։

ՉՀԱ՝ տէր Կոստանդին լամբրօնացին ամս դ ։

ՉՀԶ՝ տէր Յակոբ սսեցին ամս տասնևչորս. զսա ընկեցին և եդին զտէր Մխիթար ՚ի Թոռնին. չղ ։ ամս տասնևչորս ։ մեռաւ այս Մխիթարս՝ նստաւ դարձեալ աքսորեալն տէր Յակոբ սըսցին ամս չորս ։

ՊԺԴ՝ տէր Մեսրոպ ամս տասնևերեք ։

ՊԻԴ՝ տէր Կոստանդին ։

ՊԻԵ՝ տէր Պօղոս ։

ՊԻԹ՝ տէր Թէոդորոս ամս ութն ։

ՊԽԴ՝ տէր Կարապետ ։

ՊԽԷ՝ տէր Դաւիթ ։

ՊԾԲ՝ միւս տէր Կարապետ ։

ՊԿԵ՝ տէր Գրիգոր, զայս Գրիգորս որ մականուն խանձողատ կոչի աքսորեցին, և ՚ի նոյն թուին եդին զտէր Պօղոսն, վն̃ որոյ զնոյն թիւն իմն նոյն տէր Պօղոսին կրկին անգամ գրեմք ։

ՊԿԵ

ՊԿԵ՝ տէր Պօղոս։

ՊՀԹ՝ տէր Կոստանդին։

ՊՁԴ՝ տէր Յովսէփ։

ՊՁԹ՝ տէր Գրիգոր, որ մակ անուն մուսաբէկենց կոչի։

Մինչև ցայս վայր զորս գրեցաք կաթուղիկոսունք սոայ էին, որք 'ի սիս նստէին և վարէին զկաթուղիկոսութիւն, զի տակաւին ոչ էր նորոգեալ սուրբ աթոռն Էջմիածին, և յայսմ ժամանակի նորոգեցաւ. քանզի Աջ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին 'ի սուրբ Էջմիածինն յայտնեցաւ, վն որոյ ժողովեցան 'ի բազմաց աշխարհաց որք իշխանք և նշանաւորք, եկեղեցականք և աշխարհականք, և օրհնեցին զտէր Կիրակոսն կաթուղիկոս, և հաստատեցին զկաթուղիկոսութիւն 'ի մէ Էջմիածինն, ոպ և պատմէ Թովմայ վարդապետն։ վն որոյ յայսմհետէ զայնոսիկ կթղկոսունսն շարագրեմք, որք 'ի մէ Էջմիածինն նստան. որոց առաջինն է տէր Կիրակոս. Իսկ եղև նորոգումն սրբոյ Էջմիածնի, ութհարիւր և իննսուն թուին, վն որոյ գրեմք զթուականն։

Թուականն. ՊՂ. կթղկս տէր Կիրակոս։

Թուականն, ՊՂԲ, զտէր Կիրակոսն հանեն 'ի կթղկութենէ և նստաւ մակուեցի Գրիգորն զալալով, այս Գրիգորս նորոգումն արարեալ է սրբոյ Էջմիածնի մասամբ ինչ։

Թուականն, ՋԴ։ նոյն տէր Գրիգոր այլև եղև կթղկս տէր Արիստակէս։

Թուականն, ՋԺ նոյն տէր Գրիգոր և նոյն տէր Արիստակէս, այլև եղև կթղկս տէր Զաքարիայ

Այս տէր Զաքարիայս, նախ կթղկս էր աղթամարայ, և 'ի. ՋԺ. թուին յորժամ եկն

Ջահանշահ փաթշահն 'ի Թաւրէզ, սա բազմօք ընծայիւք գնաց ընդառաջ փաթշահին 'ի Թաւրէզ. և փաթշահն ետ սմա պարգևս զկթղկսութիւն սբոյ Էջմիածնի և զԱջ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, այլ ընդ նմին զխաչալամն և զուրարն, զորոյ Զաքարիայ կթղկսն ընդ իւր ունելով զԱջն եկեալ 'ի սբ Էջմիածինն նստաւ կթղկս Էջմիածնի: և նոյն խաչալամն և ուրարն ահաւասիկ պահեալ կան 'ի սբ Էջմիածինն վկայ սրբոյ Աջոյն թէ անդ է:

Թուականն. ՋԺԱ: տէր Զաքարիայ կթղկսն առեալ ընդ իւր զԱջ սրբոյ լուսաւորչին գնաց յաղթամար. Նաւասարդի տասնևվեցն. յաւուր ուրբաթի սրբոյ Յակոբայ պահոցն:

Թուականն. ՋԺԵ: նոյն տէր Գրիգոր և նոյն տէր Արիստակէս: Այլ և եղև կթղկս տէր Սարգիս:

Թուականն. ՋԻԳ: նոյն տէր Սարգիս. այլ եղև կթղկս տէր Յովհաննէս:

Թուականն. ՋԼԵ: նոյն տէր Յովհաննէս. այլ եղև կթղկս միւս այլ տէր Սարգիս: Այս Յովհաննէս և Սարգիս կթղկսաց ժամանակին լուսաւորչի Աջն դարձեալ է յաղթամարայ՝ և եկեալ է 'ի սբ Էջմիածինն ձեռամբ Սրգանէսի եպիսկոպոսին:

Թուականն. ՋԽԲ: նոյն տէր Սարգիս՝ այլ եղև կթղկս տէր Արիստակէս:

Թուականն. ՋԽԷ: նոյն տէր Սարգիս. այլ եղև կթղկս տէր Թադէոս:

Թուականն. ՋԾԳ: նոյն տէր Սարգիս՝ այլ եղև կթղկս տէր Եղիշէ:

Թուականն. ՋԾԵ: նոյն տէր Սարգիս՝ և նոյն տէր Եղիշէ՝ այլ և եղև կթղկս տէր Ներսէս:

Թուականն. ՋԿԳ. կթղկս տէր Զաքարիայ:

Թուականն. ՋԿԹ. կթղկս տէր Սարգիս:

Թուա

Թուական. ՋՀԸ. կաթողիկոս նոյն տէր Սարգիս.

Թուական. ՋՁԵ. կաթողիկոս տէր Գրիգոր։

Թուական. ՋՂ. նոյն տէր Գրիգոր. այլ եւ եղեւ կաթողիկոս տէր Ստեփաննոս սալմաստեցի։

Թուական. ՋՂԴ. նոյն տէր Ստեփաննոս. այլ եւ եղեւ կաթողիկոս տէր Միքայէլ։

Թուական. ՌԷ. նոյն տէր Ստեփաննոս՝ եւ նոյն տէր Միքայէլ։ այլ եւ եղեն կաթողիկոք տէր Բարսեղ եւ տէր Գրիգոր։

Թուական. ՌԺԴ. նոյն տէր Միքայէլ եւ նոյն տէր Բարսեղ եւ նոյն տէր Գրիգոր։ այլ եւ եղեւ կաթողիկոս տէր Ստեփաննոս առընջեցի։

Թուական. ՌԻԵ. նոյն տէր Գրիգոր։ այլ եղեն կաթողիկք տէր Թադէոս՝ եւ տէր Ազարիա։

Թուական. ՌԼԵ. նոյն տէր Գրիգոր եւ նոյն տէր Ազարեալ այլ եւ եղեւ կաթողիկոս տէր Դաւիթ։

Թուական. ՌԽԲ. նոյն տէր Դաւիթ. այլ կաթողիկոս տէր Մելքիսեթ։

Թուականն. ՌԾԲ. նոյն տր Դաւիթ եւ նոյն տր Մելքիսեթ։ այլ եւ եղեւ կաթողիկոս։ տէր Սրապիոն։

Թուական. ՌՀԳ. նոյն տէր Դաւիթ եւ նոյն տէր Մելքիսեթ. այլ եւ եղեւ կաթողիկոս տէր Սահակ։

Թուականն. ՌՀԸ. կաթողիկոս։ նոյն տէր Դաւիթ եւ նոյն տէր Սահակ այլ եւ եղեւ կաթողիկոս տէր Մովսէս ամս երեք եւ կէս։

Թուականն. ՌՁԲ. նոյն տր Դաւիթ եւ նոյն տր Սահակ այլ եւ եղեւ կաթողիկոս տէր Փիլիպպոս. ամս քսանեւերկու եւ կէս ու՝ ի սորին առաջնորդութեամբ մեռաւ. Դաւիթ յամսեանն օգոստոսի։

Թուական. ՌՃԴ. կաթողիկոս. տէր յակոբ ջուղեցի. որ կայ այժմ յաւուրս մեր. եւ վարէ զիշխանութիւն կաթողիկոսութեան։

Բարդ՝ ի հազար եւ քառասուն եւ երկու թուին եղեալ կաթողիկոսունքն, որքեն դաւիթ եւ

մելքիսեթ. այս դաւիթ և մելքիսեթ կա թուղիկոսունքս են. զորս 'ի պատմագրիս սկիզբն գրեալեմք. թէ առաքեցին առ սրա պիոն վարդապետն գալ և լինիլ կաթուղիկոս. որև եկեալ եղև կաթուղիկոս սրբոյ Եջմիած նի 'ի հազար և յիսուներկու թուականին մեռաւ, և 'ի հազար և յիսուներեք թուին սրապիոնս դարձաւ և գնաց յամիթ. և 'ի հա զար և յիսունևհինգ թուին. և յապրիլի քսանևերեքին վախճանեցաւ: Եւ յետ գնա լոյ սրապիոնիս զիշխանութիւն կաթողիկոսութեան նոյն դաւիթն և նոյն մելքիսեթն ունէին' և վարէին. բայց նախանձ և գրգռութիւն և հա կառակութիւն ոչ սակաւ անկաւ ի մէջ դաւթի և մելքիսեթի վասն կաթողիկոսականի իշխանութեան. վասնորոյ մելքիսեթն եմուտ 'ի ներքոյ ծանր զա բալի և իբաց եհան զդաւիթն' և ինքն մի այն վարէր զկաթողիկոսութիւն. և յաղագս ծանրու թեան զաբալին' զոր ոչ կարաց վճարել' ետ զկա թողիկոսութիւն մելքիսեթն իւր եղբօրորդի սա հակին. և ինքն փախեաւ յաշխարհն Օսման ցւոց և գնաց 'ի պոլ' և անդ վախճանեցաւ: և զիշխանութիւն կաթողիկոսութեան վարէր սահակ կաթողիկոսն. և վասն ծանրութեան զաբալին. զոր ոչ կա րաց վճարել. նաև փախեաւ յաշխարհն Օս մանցւոց: Յետ փախստեան սորին ամենայն ազգն Հայոց արևելականք և արևմտականք միաբա նեցան և առաքեցին զմօսէս վարդապետն կաթողիկոս սրբոյ Եջմիածնի 'ի մերում թուականիս հազար և եօթանասունևութին' յունվարի տասներեք ին. և 'ի հազար և ութսունևմէկ թուին. 'ի մայիսի ամսոյ տասնևչորսին վախճանեցաւ: և 'ի հազար և ութսուներկու թուին' և յուն վարի տասնևերեքին զփիլիպպոս վարդապետն օրհ

նեցին

նեցին կաթողիկէ սրբոյ Էջմիածնի․ որ վարեաց սա զիշխանութիւն կաթողիկոսութեան 'ի ժամանակս իւր Ձոխ և փառաւոր․ մինչ 'ի ժամանել Թուականին մերոյ 'ի հազար և հարիւր և չորս ամին․ և 'ի նմին ամի, 'ի մարտի քսան և հնգին վախճանեցաւ սա ։ Իսկ զկնի սորա յաջորդեաց զաթոռ կաթողիկոսութեան Ջուղայեցի յակոբ վարդապետն․ քանզի 'ի հազար և հարիւր և չորս Թուականին․ և յապրիլի ամսոյ ութն օրհնեցին զյակոբ վարդապետն կաթողիկոս սրբոյ Էջմիածնի ։ և այժմ սա վարէ զիշխանութիւն կաթողիկոսութեան մինչև ցայսօր, որէ Թուականն մեր հազար և հարիւր և տասն և մէկ՝ յուլիսի ամսոյ չորս․ որև հայցեմք 'ի տեառնէ զի երկարամօք պահեսցէ զսա յուրախութիւն սրտից մերոց և 'ի փառս անուան իւրոյ․ ամէն ։

---

Կարգ վարդապետաց․ սկսեալ 'ի գօշէ մխիթարայ գաւառ զանուն որ իջանէ յէջմիածնայ գաւառաւն ։

ԼՐ․

ՄԽԻԹԱՐԻՉ ՎԱՐ

Վարդապետն մխիթար որ մականուամբ գօշ կոչի ։ Նորին աշակերտ յովաննէս որ է վանական ։ Նորին աշակերտ վարդան ։ Նորին աշակերտ ներսէս ։ Նորին աշակերտ եսայի, որէ 'ի նիչ գաւառէ ։ Նորին աշակերտ յօհան որոտնեցին ։ Նորին աշակերտ գրիգոր տաթևացին ։ Նորին աշակերտ դանիէլ ձգնաւոր ։ Նորին աշակերտ յոհաննէս համշէնցին ։ Նորին աշակերտ թորոս ։ Նորին աշակերտ գրիգոր տարօնացի ։ Նորին աշակերտ յովաննէս որ մականուն շիրաք ասի ։ Նորին աշակերտ ղուկաս կեղեցի ։ Նորին աշակերտ սրապիոն ուռհայեցի ։ որ եղև կաթողիկոս սրբոյ Էջմիածնի ։ Նորին աշակերտ գրիգոր կեսարացի ։ Նորին աշակերտ մովսէս սիւ

նեցի. որ եղեւ կթղկս սրբոյ Էջմիածնի. եւ նորոգօղ նմին. Նորին աշակերտ փիլիպպոս կաթղկոս սրբոյ Էջմիածնի. Նորին աշակերտ անարժան եւ մեղապարտ գրիչս առաքել. եւ իմ աշակերտ մակուեցի վարդան։

---

Այլեւ կարգ Վարդապետաց։

Ր յորելին են կարգ վրդպտցն մերոց ոչ առաջնոցն այլ վերջնոցն. Նախ գրիգոր տաթեւացին. եւ նորին աշակերտն դանիէլ. նորին յովաննէս համշենցին. Նորին գրիգոր յարձիշոյ. որ մականուն չորթան ասի. եւ միւս աշակերտն թորոս վրդպտն. Իսկ չորթանի աշակերտն ներսէս. որ մատաղն ասի. Նորին ներսէս բաղիշեցին. Նորին ներսէս ամկեցին. Նորին աշակերտք երկու. յոհաննէս ոստանցին 'ի գեղջէն վանուշատայ. եւ աղուրիս 'ի Հայոց մեծաց 'ի գեղջէն շահկերտոյ, որ է մերձ քաղաքին նախչուանու. Իսկ աշակերտքն յոհաննէս ոստանցուն սիմէօն ապարանցին, եւ բարսեղ գաւառացին. սիմէոնի աշակերտն կարապետ կաջօն. եւ նորին միւս փոքր սիմէօն Ջգնազգեացն. եւ բարսղի աշակերտքն. բուժիկ յոհաննէս բաղիշեցին. եւ այլք բազումք. եւ յովանիսիս աշակերտ խաչատուր բաղիշեցին. եւ այլ արեւելեանքս ամէն 'ի չորթանէն սերեցան։

Դարձեալ նոր սկսայց 'ի յովաննէ համշենցւոյն. Նորին միւս աշակերտն թորոս, որ 'ի վերոյ ասացաւ. թորոսի աշակերտ գրիգոր տարօնեցին. Նորին յովաննէս շիրաքն. Նորին ղուկաս. որ էր 'ի խորձունեաց գաւառէն, որ է կեղի. Նորին պետրոս կարկուցին. եւ սրապիոն ուրհայեցին՝ որ եղեւ կթղկս սրբոյ աթոռոյն Էջմիածնի տարի մի եւ վեց ամիս. եւ փոխե

ցաւ

ցաւ առ Ք՟ս : Այլև նորին աշակերտքն բար սեղ․ որ է 'ի սասնոյ 'ի նՃոյ գաւառէն 'ի գեղ ջէն որ ասի մարման : և յոլովս փ հզօրեցին : և ես նուաստ կարապետ բանի սպասաւոր բաղխե ցի 'ի գեղջէն փարխնդոյ ․ զորս լուաք 'ի պատմա գրացս ․ և զոր աչօք մերովք տեսաք ․ զի չէին ինչ պակաս յառաջնոց վրդ՟պտացն ուսմամբ՝ և գործովք այլև գերագոյն :

---

Թէ վ՟ն որոյ պատճառի զՀայազգին քրիստոնեայս հանին 'ի քաղաքամիջէն Սպահանու ․ և տարեալ յեզր քա ղաքին յայնկոյս գետոյն բնակեցուցին :

## ԼԳ․

# Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԹԱԳԱՒՈ

րութեն երկրորդ շահաբասին ․ որ ունէր զգահոյս թգ՟ւրութեն իւրոյ 'ի մեծահան դէս քաղաքն ասպահան :

Ա՟ւ եղև այս շահաբաս թգ՟ւրիս ելանել 'ի քա ղաքէն ասպահանու ամենիւք զօրօքն իւրովք և գնալ 'ի քաղաքն ղազվին ․ և կարգեաց զվերա կացուս և զիշխանս զոմանս յերևելի արանցն քաղաքին ասպահանու զի հովուեսցեն զքա ղաքն ըստ պայմանի քաղաքականաց կարգաց : Ա՟ւ ըստ բազմաց պատուիրանացն ․ առաւել և կարև որ քան զամենեսին զայս պատուիրեալ հրամայ եացն ․ զի արգելումն և խափանումն արասցեն գինւոյ ․ զի ընաւ մի երևեսցի 'ի քաղաքին գինի ․ մի ընաւ ոք ճմլեսցէ զխաղող՝ և արասցէ զգինի ․ և մի ոք վաճառեսցէ զգինի ․ և մի ոք արբցէ զգի նի ․ և ընաւ մի երևեսցի նշան կամ հոտ գինւոյ ․ ոչ առ ռամիկս և ոչ առ իշխանս ․ կամ սպայս զօրս հեծելոց ․ և թէ առ ոք գտցի՝ թէ առ վա ճառօղս՝ և թէ առ գնօղս ․ խրատեսցեն զայն պիսիսն տուգանաւ ․ և հատցեն զունչսն և զա կանջսն ․

կանջօն. և թէ յետ յանզգամութիս գտցեն յաձախեալ զայնպիսիս գլխովին սպանցեն. զորովայնն պատառելով՝ և զգլուխն կտրելով. և այլեւս ազգի ազգի տեսակս տանջանաց խիստ ածելով։ քան զամենայն բան զայս առաւել կարևոր պատուիրեալ շահին իւրոց կարգեալ քաղաքապետացն. և ինքն եղեալ յասպահանու գնաց 'ի ղազբին։

Եւ յետ ամսոց ինչ անցանելոյ եպարքոսի թագաւորին. զոր ինքեանք էհտիմալդօվլաթ ասեն. որում անունն էր մահմատբէկ. էր 'ի ղազբին քաղաքին 'ի սպասու թագաւորին. հարցանէր յեկողացն յասպահանայ վասն որպիսութեան քաղաքին. և վասն պէսպիսեաց ընչից իրաց՝ և մանաւանդ վասն գինւոյ։ և քանիցս որ էհարց 'ի սմանէ և 'ի նմանէ. ամենեքեան միապէս ասացին թէ ոչ հաստատեցաւ արգելումն գինւոյ զի հանապազ շրջին արբեալք արք գինւով՝ 'ի հրապարակս և 'ի փողոցս և յամենայն տեղիս։ Իսկ էհտիմալդօվլաթն յայս հոգալով հարցանէր 'ի սմանէ և 'ի նմանէ. թէ ընդէ՞ր ոչ հաստատի արգելումն գինւոյ 'ի յասպահան քաղաքի. և ամքն ըստ իւրում կարծեաց առնէր զպատասխանի։ Բայց ոմանք՝ որք զոխս ունէին ընդ ասպահանայ քաղաքի տարուղին, զվնասն խիստ նոցա բարդելով ասացին. թէ դուցէ տարուղէն թոյլ տայ վասն շահու իւրոյ՝ որպէս զի ինքն կալեալ զվաճառօղսն և զգնօղսն տուգանեսցէ. և զկաշառս առցէ. և յոլով գանձս շահեսցի 'ի նոցանէ։

Իսկ էհտիմալդօվլաթն զայս բանս լուեալ այլոց ևս բանից, զոր լուեալ էր 'ի պատմողաց ծանոյց թագաւորին. և 'ի մէջ զրուցաց թագաւորն և էհտիմալդօվլաթն, որ ընդ միմեանս. ասաց էհտիմալ

դօվլաթն

դօվլաթն ընդ Թիւրին. եթէ հրամայեսցէ արքայ. զոմն հաւատարիմ 'ի ծառայից Թիւրո րին առաքեսցուք 'ի քաղաքն սպահան. զի վերստին մունեդիկ բարձու աղաղակաւ շրջեցուսցէ ի մէջ քաղաքին՝ և արասցէ զարգելումն գինւոյ. և ինքն անդէն կացեալ ծածկապէս զննեալ գիտասցէ թէ ստոյգ են բանքն. որք վն տարուղին ասացան։ Եւ առ այս բան հաւանեալ Թիւրին հրամայեաց էհոխմալ դօվլաթին՝ թէ արասցես ըստ ասացելումդ։ Իսկ էհոխմալ դօվլաթն ընտրեաց 'ի թագաւորականաց ծառայից զոմն յառաջակայից սպասաւորաց թագաւորին՝ այր զգաստ և փոյթ 'ի գործս իւր 'ի տիս երիտասարդութե՝ որոյ անունն էր Նաջաֆղուլիբէկ. և պատուիրեաց նմա գնալ 'ի քաղաքն սպահան՝ զի վերստին արգելումն արասցէ գինւոյ՝ ոչ զի բնաւ մի երևեսցի գինի 'ի քաղաքն սպահան. այլև ծածկաբար քննեալ տեղեկասցի ամենից բանից որք վն տարուղին ասացան։

Իսկ Նաջաֆղուլիբէկս պատուիրանաւ էհոխմալ դօվլաթին փութացելովք մտօք և գուազացելով սրտիւ ելեալ 'ի ղազբինու և եկեալ էմուտ յասպահան քաղաք. և սաստկաւ տագնապաւ. և բազմաւ սպառնալեաւ՝ և ահարկուաւ բանիւ զարհուրեցուցանելով զամենեսեան զարգելումն արար գինւոյն։ և եհան յոմն հրապարակս մունեդիկ, որ է ջառչի, որք ելեալք քարոզեցին բարձու աղաղակաւ թէ հրամանաւ Թիւրին արգելեալ է գինին. և առ ով և գտցի թշնամի է Թիւրին և մահապարտ. անպատճառ զայնպիսին սպանանեն։ Այլև ինքն Նաջաֆղուլիբէկն պատրաստեաց զարս բազումս. պատուիրեալ նոց հնարաւ որ գործս ցուցեալ

ցեալ նց առաքեաց յամն տեղիս քաղաքին. և ուր և կարծիս ունէին լինել գինւոյ. զի արքն այնորիկ անդ յակնձիւս կացեալ զցայգ և զցերեկ զննեալ գիտեսցեն զամ երթևեկս ։ և այսպ առնելով յոլովից արբեցող արանց արար զխրատս ։ տուգանելով՝ և զունչս և զականջս՝ և զձեռս և զոտս հատանելով. սակայն և այնու ևս ոչ կարաց խափանումն առնել գինւոյ ։ Խուվն բազմից և զանազանից հնարագործութեց 'ի վարանս խորհրդոց մտանէր. նաև հարցանէր 'ի սմանէ և 'ի նմանէ թէ ոպ պարտի լինել կատարումն գործոյն ։

Յայսմ վայրի ոմանք երևելիք արք 'ի թգւրի ծառայից, որք նախածանօթք էին այս նաջափղուլիբէկիս. յաւուր միում հրաւիրեցին զնա 'ի տունս իւրս 'ի պատիւ սիրոյ աղագաւ. այլև երևելիք արք բազումք կային յայնմ խրախութն ։ Ընդ որս էր և իշխան ոմն՝ որ էր գրապանթգւրականաց գրեանց. զի ամքն գրեանք տան թգւրին նմա յանձնեալ էր զի պահեսցէ. ում և պիտոյացն տացէ և առցէ ։ և իմէջ հանդիսին այնմիկ ընդ բազմաց խօսիցն եկեալ խառնեցաւ և զրոյց գինւոյն. որոյ վն բանս հարցողականս առաջարկեալ նաջափղուլիբէկս թէ զարմանամ զի ընդէր ոչ հաստատի արգելումն գինւոյ. զոր այսքան հրամայէ թգւրն. և մեք ևս զայսքան չարչարանս և զպատիժս իվերայ ածեմք. և տակաւին ոչ կարեմք խափանումն առնել գինւոյ. և նստեալ արքն ամ որք ըստ իւրոց կարծեացն խօսէր և առնէր զպատասխանի ։

Իսկ գրապան իշխանն արար զպատասխանի նաջափղուլիբէկին՝ թէ 'ի ձեր է աշխատանքըն ձեր. և ոչ հաստատի արգելումն գինւոյդ.

զի պատճառք բազումք գոն. և մանաւանդ այս՝ զի ամ̃ ազգ իմիասին խառն 'ի խուռն ընդ միմեանս բնակեալ են. մահմետականք, որք ոչ ըմպեն զգինի. և այլևս ազգք, որք ըմպեն զգինի՝ այսինքն փռանկք՝ հայք՝ և ջհուդք։ Արդ՝ դուք եթէ ըմբռնէք զոմն, որ ունի ընդ ինքեան զգինի. և 'ի հարցանելն ձեր թէ ուստի բերես՝ և ուր տանիս. նա պատճառէ յայն ումն հայոյ տանէ յայն ումն հայոյ տուն տանիմ. յայնժամ խափանի հրամանն ձեր՝ և արգելումն գինւոյ. այլև ամ̃քն արք մահմետականք որոց և յօժարի կամքն զգինի ըմպելոյ՝ մտանէ 'ի տունս նց և ըմպէ զգինի. նաև 'ի նոցունց գնէ յոլովիւ գնով՝ և տանի յայլ ուր և ըմպէ. և այս ամ̃ պատճառ է խառնխուռն բնակիլն ազգացդ։ Արդ եթէ հաւաստեաւ կամիցի թ̃գւրն զի վերասցի գինըմպութ̃ն 'ի քաղաքես. բաժանեալ տրոհեսցէ զազգս զայսոսիկ 'ի միմեանց. զմահմետականսն անխառն յայլոց ազգաց բնակեցուսցէ 'ի քաղաքամիջի աստ. և զայլ միւս ազգսն զհայս և զջհուդս հանեալ 'ի քաղաքէն տարեալ յեզր քաղաքին 'ի պատշաճաւոր տեղիս բնակեցուսցէ. և իւրաքանչիւրոց ազգաց ըստ իւրում պատշաճին զկարգս և զսահմանս կարգեսցէ՝ և նոցին զվերակացուս կարգեսցէ. ապա յայնժամ զորինչ և հրամայեսցէ թ̃գւրն և իշխանքն իւր անխափան կատարի ամ̃։

Եւ զբանս այս՝ զոր խօսեցաւ գրապան իշխանն, հաճոյ թուեցաւ բազմականացն ամենեցուն. և ես նաջաֆղուլիբէկին. զոր և ամփոփեալ պարուրեաց 'ի պահարանս մտացիւրոց. և խորհէր թէ 'ի պատշաճի ժամու ծանուցից էհտիմադդօվլաթին. բայց ինքն բազմաւ հոգաբարձութ̃ե փոյթ յանձին կալեալ

ջանայր

ջանայր կատարել զհրաման Թագաւորին և արգե լել զգինին։

Իսկ յաղագս բանին, զոր խոստացաւ գրաւան իշխանն 'ի հանդիսին յայն. տաացին ոմանք ոչ յիւրոց միայն յառաջարկեալ. այլ յայլոց յառաջարկութենէ. որ է այսպէս։

Ողի՞ն սովորութիւն է Թագաւորաց ունել զներ քինիս 'ի տան իւրեանց 'ի սպասաւորութիւն ինքեանց և կանանաց իւրոց. զայս կարգս այս երկրորդ-շահաւս Թագաւորս առաւել բազ մացոյց. քանզի զբաղում կանայս ժողովեաց յամենից ազգաց. ըստ այսմ և զբաղում ներ քինիս ստացաւ իւր։ և 'ի բազմութենէ ներքի նեացն, զոմանս 'ի նոցանէ վասն ծերութեան. և զոմանս վասն անհաճելութեան. և զոմանս յայլ ինչ պատճառս հանեալ 'ի տանէ Թագաւորին իբրայարձակեցին՝ գնալ յայլ ուրեք ինքեան զատ առանձին կեալ։

Նա այսոքիկ ներքինիքս, որք հանեալք լի նէին 'ի տանէ Թագաւորին. եկեալ բնակեին 'ի մէջ քաղաքին. 'ի շամշապատ անուանեալ Թաղն վասն այսոց պատճառաց։

Նաև զի այս Թաղս մերձէ տան Թագաւորին. զի եթէ ինքեանք կամեսցին գնալ 'ի տուն Թագաւորին. և թէ յընկերաց իւրեանց 'ի տանէ Թագաւորին կամեսցին գալ առ սոսա. դիւ րին լինի և փոյթ վասն մօտակայութեան։

Երկրորդ՝ սոյնպէս և շուկայքն և վաճառա նոցին մօտակայ է Թաղն այն։

Երրորդ՝ և մանաւանդ վասն ջրոյն, որ 'ի բոլոր տարին անպակաս է ջուր տեղւոյն այնմիկ՝ քան զի մեծ առուն ջուր, սակաւ ինչ փոքր քան զգետ գայ յայն Թաղն և գնայ 'ի չարբաղն, որ է Թագաւորական այգի։ և անտի գնայ 'ի տուն Թա

դաւորին՝ որ ամ գործ և կարիք նոցա այսու-
ջրովս կատարի՝ մարդոց և անասնոց՝ այգեստա-
նաց և ծաղկոցաց՝ և այլոց գործոց։ Արդ՝
այսորիկ այսպէս։

Այլև զայս ևս պարտ է գիտել. զի մեծ և
առաջին շահաբեան աւերողն Հայաստանի աշ-
խարհին և կործանողն Հայոց ազգին. 'ի ժամա-
նակին յորում զազգն Հայոց քշէր և տանէր
'ի պարսկաստան. 'ի Հայոց ազգէն բաժին մի
քրիստոնեայք՝ զոր Դաշտեցիք անուանեն.
վն լինելոյ նոցին 'ի դաշտ անուանեալ գիւղէն՝
որ է 'ի գաւառին գողթան՝ բերեալ բնակե-
ցոյց յայսմ տեղւոջ 'ի շամշապատ կոչեցեալ
թաղս իմէջ մահմետականաց։ Եւ վն լաւութե
տեղւոյն յայլոց տեղեաց քաղաքին՝ մահմետա-
կանք բազումք եկեալ 'ի թաղս այս բնակեցան։
Նոյնպէս և 'ի Թգրի տանէն ելեալ ներքինիքն,
եկեալ աստէն բնակեցան։ Եւ յամենից տե-
ղեաց աստի և անտի անդր ժողովելոյ մարդ-
կան. ոչ բաւէր տեղին տանիլ զամենին. այլ
զնեղութիւս յոլովս կրէին վն տեղւոյ։ վն որոյ
միաբանեալ միւս մահմետականացն ընդ ներքի-
նեաց Թգրին՝ ակսան հարստահարել զդաշտե-
ցի քրիստոնեայսն զի արտաքսեսցեն զնս 'ի տե-
ղւոջէն. ոչ զի ինքեանց ընդարձակութի լիցի։
Եւ յայսմանէ պատճառէ զբազում բանս ան-
բաստանութե ասէին նոքա Հայոցն դաշտե-
ցւոց՝ զորս 'ի զուր՝ և զորս իրաւ։

Եւ քանզի հրաման Թգրին վն արգելման գի-
նւոյ էր. և այժմ ևս Պարսիկք յայնմանէ կող-
մանէ ակսան զամբաստանութի առնել զքրիս-
տոնէից. եթէ նոքա գինարբու ազգք են և հա-
նապազ գինեաւ ողջեն զջուրն. զի յորժամ
զխաղողն ձմլեն զքաղցուն գինի առնեն և

զկնճեռն վաթեն 'ի ջուրն՝ որով պղծի ջուրն։ և յորժամ քաշեն զարաղ, զմնացեալ մրուրն վաթեն 'ի ջուրն՝ որով պղծի ջուրն։ և յորժամ կամին լուանալ զկարաս գինւոյն, բերեալ դնեն իմէջ առուին մէկևերկու օր 'ի թրջոց. և ապա լուանան. և լուացունք ջուրցն դարձեալ թափի յառուն իմէջ ջրոյն՝ որով պղծի ջուրն։

Արդ՝ զայսպիսի ամբաստանութե̄ բանս՝ և զայն բանն են՝ զոր գրապան իշխանն ասաց նաջափղուլբէկին՝ և զայլ բազում բանս զորս 'ի զուր և զորս իրաւ ասէ 'ի շամշապատ թաղն եկօղ և ասէն բնակօղ ներքինիքն ասացեալ էին գրապան իշխանին. զոր յայնմ ժամու գրապանն ասաց նաջափղուլբէկին։

Եւ յորժամ շահն և էհտիմալդօվլաթն դարձան 'ի զաղբինու և եկին յասպահան. հարցումն արարին վ̄ս գինւոյ արգելման՝ կատարեցաւ թէ ոչ. յայնժամ նաջափղուլբէկն վշտագնեցելով սրտիւ ասաց. թէ որքան ունէաք զկար՝ ջանացաք՝ և ոչ եղև խափանումն գինըմպութե̄. և 'ի բազում վարանս խորհրդոց մտայոյզ լինէր էհտիմալդօվլաթն սակս արգելման գինւոյ. քանզի ըստ օրինաց իւրեանց և ըստ առասպելաբանից գրեանց իւրց̄ անօրէն համարին զգինին և ինքեանց մեղք զըմպելն նորին։

Իսկ նաջափղուլբէկն 'ի դիպօղ ժամու զգրապան իշխանին բանն խօսեցաւ առաջի էհտիմալդօվլաթին. և բանն հաճոյ թուեցաւ նմա՝ և այլոց ևս բազմականաց. և էհտիմալդօվլաթն 'ի պատշաճի ժամու զխօսեցեալ բանն գրապան իշխանին խօսեցաւ առաջի թ̄գ̄ւորին. Ոչ միայն 'ի միում աւուր. այլ յամի դիպօղ ժամու էհտիմալդօվլաթն և այլք նախարարքն՝ որք խօսօղք էին առաջի շահին հանապազ

այնու

այնու կերպիւ խօսէին առաջի Թագաւորին. մ̃չի էհտիմալդ-օվլաթն եւայլ նախարարք զբա ղում փոյթ ունէին հանելոյ զքրիստոնէայսն 'ի քաղաքամիջէն ։ եւ այնքան խօսեցան մինչեւ հաւանեցուցին զկամս Թգ̃րին. որ գրով զհրա ման արար. Թէ ովոք գինարբուք ազգք են ե լեալք բաժանեսցին 'ի մահմետականաց. եւ գնացեալ յեզր քաղաքին որիշ բնակեսցին ։

Յետ ընդունելոյ զայս հրամանս 'ի Թգ̃րէն էհտիմալդ-օվլաթին. կոչեաց զդաշտեցիսն առաջի իւր, եւ ծանոյց նմ̃ զհրամանս Թգ̃րին. եւ հրամայեաց նոցա ելանել 'ի քաղաքամիջէն եւ գնալ յեզր քաղաքին. եւ Թէպէտ նմ̃ դժուա րին էր ելանել 'ի բնակութեց իւրեանց՝ յա ղագս որոյ գնացին 'ի դրունս մեծամեծաց եւ յոլովս աղաչեցին՝ զի գուցէ մնայցեն 'ի տե ղիս իւրե̃՝ եւ ոչոք լուաւ բանիցն̃. զի իշխանքն՝ որք էին մահմետականք՝ ամենեցուն կամք եւ դի տաւորութիք միաբան էին առ 'ի հանել զնս̃ ։ Արդ այսպիսեաւ կերպիւ. եթէ 'ի հրամա նէ Թգ̃ւորին. եթէ 'ի բռնութե̃ իշխանացն. եթէ 'ի հարստահարութե̃ մերձակայ մահմե տականացն. անճար մնացին դաշտեցի հայքն ելին 'ի տանց եւ 'ի բնակութեց իւրեանց. եւ գնացեալ ոմանք 'ի Ջուղայ. եւ ոմանք 'ի դաւ րապատ զատուն վարձեցին. եւ անդէն հովա նաւորեցան ընչիւք եւ ընտանեօք իւրեանց ։

Իբրեւ եղեւ որ զդաշտեցի ժողովուրդն ի բաց հանին մահմետականքն՝ այնուհետեւ սկսան զմիւս այլ ժողովուրդն Հայոց հանել 'ի քա ղաքէն ։ Իսկ էին սոքա յազգէն Հայոց ժո ղովածու ժողովուրդք. որք յիւրաքանչիւ րոց աշխարհաց վտարանդիք եղեալ էին եւ ե կեալք ատրպատականի աշխարհի բնակեալք.

որք էին 'ի համթայ՝ 'ի գաղկոյ՝ 'ի բաղիշոյ՝
'ի մշոյ՝ և 'ի բերկրոյ՝ յարճիշոյ՝ 'ի վանայ.
յարծկոյ՝ յերզնկոյ՝ 'ի դերջանայ՝ 'ի բաբեր
դոյ՝ յարզրումայ՝ 'ի սպերոյ՝ 'ի բասենոյ՝ 'ի
կաղզվանայ՝ 'ի շիրակվանայ՝ յարարատեան
մանաւորոց գաւառացն յամենեցունց՝ յալաշ
կերտոյ՝ 'ի մակուայ՝ 'ի խոյեայ՝ 'ի սալմաս
տայ՝ յորմոյ՝ և այլևս իւրաքանչիւրոց աշխար
հաց: Որոց մն հրամայեաց առաջին շահաբասն
զնմին ժողովել և վարել յաշխարհն Պարսից.
զորև բերեալ յասպահան քաղաք. և իմէջ
քաղաքին բնակեցուցին 'ի թաղն որոց թօրոս
կան, և շխշապանայ աւեն զանուանեն: Նման սո
ցին հրամայեաց նոյն մեծ շահաբասն, որ զերևա
նայ քաղաքի բնակսն տեղացի հայքն հանին
յերևանայ և վարեալ տարան յասպահան քա
ղաք՝ և բնակեցուցին իմէջ քաղաքին խառնի
խուռն ընդ մահմետականացն 'ի թաղն՝ զոր
թաղթիղարաջայ՝ և բաղաթ կոչեն:

Նա՛ 'ի ժամանակիս յայսմիկ 'ի թգւրութե
այս երկրորդ շահաբասիս. յետ հանելոյ զդաշ
տեցւոց ժողովուրդն. սկսան զերևանցւոց և
զշխշապանցւոց ժողովուրդն ևս հանել. քան
զի կոչեաց էհտիմալ դօվլաթն առաջի իւր
զաւագն երևանցւոց՝ որոյ անուննէր խօջայ
յակօբճան ընդ այլոց ևս արանց՝ և ծանոյց նց
զհրաման թգւրին. թէ պարտիք ելանել 'ի
քաղաքամիջէ աստի և գնալ յեզր քաղաքին
բնակիլ: Նա՛ զբաղում բարութիւնս խոստացաւ
առնել նց. քանզի կարի քաղցրութե խօսեցաւ
ընդ երևանցւոց: Իսկ ժողովուրդքն Հայոց
թէպէտ ոմանք հաւանեցան, այլ ոմանք ոչ
հաւանեցան. սոպռ և բիրտ ազգս Հայոց.
և սկսան դժկամակ և դիմադարձ լինել. և

զաղո

զաղաղակս և զշփոթս և զխռովութիւնս յարուցանել՝ որոյ կատարումն եղև մահու ինքեանց : քանզի ամենեքեան խմբովին եկեալ ժողովեցան յանգս գնացից թագաւորին՝ և 'ի մերձիլ առնն թագաւորին սկսան ամենեքեան զբողոք բառնալ առ թագաւորն. որոյ այնպէս առնելն յոյժ դժուարին և ծանր թուեցաւ թագաւորին. վասն որոյ ցասեաւ զայրացմամբ թագաւորն ի վերայ ժողովրդեանն Հայոց: և 'ի պատճառս յայսմանէ որ ցասեաւ թագաւորն ի վեր Հայոց քաջալերութեն ընկալեալ և զօրացեալ առիւծացան այլազգիքն ի վերայ Հայոց. և սկսան բռնութե վարել զնո. քանզի կարգեաց Եհախմալդ-օղլաթն զիշխանս համդերձ զօրականօք ի վեր ժողովրդեանն Հայոց զի միւս տացեն նց զներումն ժամանակի՝ որ օր աւուր կամկար եղանիցեն. այլ փութանակի աւանց ներելոյ ժամանակի ուժգին բռնութե հանցեն 'ի քաղաքամիջէն :

Իսկ յայսմ վայրի անճար մնացին ժողովուրդքն Հայոց. զի յամենից կողմանց հատուցեղի յուսոյ և ապաստանի նց թէ 'ի թագաւորէն և թէ յիշխանացն. զի զամենեսեան ցասուցին ի վեր ինքեանց. և նոցին ի վեր կարգեալ իշխանքն և զօրականքն յոյժ նեղութե առնելէին զնոսա ելանել՝ ի քաղաքէն: Արդ յորժամ յաճախեցաւ բեռն ի վեր գլխոցն Հայոց՝ ապա թողին զբնական գոռոզութին իւրեանց՝ զոր 'ի բնէ բնաւորեալ ունէին յինքեանս. և զխեղս և զգօնութիս յինքեանս բերեալ սկսան յողոք անկանիլ առ իշխանսն. քանզի գրեցին զարզայ՝ և հասուցին 'ի ձեռն Եհախմալթ-օղլաթին՝ առ զի միւս ներեսցեն զինքեանս. այլ զներումն և զժամանակ տացեն՝ զի կամկար եղանիցեն: և այսմ բանի հաւանեցաւ Եհախմալդ-օղլաթն՝ և հրամայեաց

այնպէս լինիլ. և ապա 'ի բացկացին 'ի նոցանէ հանօղք զօրականքն :

Զկնի այսոցիկ շահն և էհտիմալդօվլաթն և այլք նախարարքն խորհուրդ արարեալ հաճեցան տալ նոցա զտեղիս բնակութե յայնկոյս գետոյն մերձ առ Ջուղայեցւոց : Քանզի նոր տուեալք քաղաքին ասպահանու այնպէս է. զի մեծ գետն, որդայ և մտանէ 'ի քաղաքն ասպահանու՝ յարևմտից դայ, և գնայ 'ի կողմն արևելից. իսկ քաղաքն և ամ̃քն մահմետականքն և տունն թգ̃րին, և վաճառանոցքն. և այլ ամ̃ն ինչ և իցէ՝ որ առ քաղաք վերաբերի՝ սոքա ամենեքեան 'ի հիւսիսային կողմն գետոյն են : Իսկ Ջուղայեցիք 'ի հարաւային կողմն յայնկոյս գետոյն են տեղաւորեալք զատ և ուրոյն յայլոց ազգաց. և այժմ զտեղին՝ զոր կամեցան տալ այսմ 'ի քաղաքէ հանեալ ժողովրդեանս. այլուրէ մերձ Ջուղայեցւոց հաճեցան տալ. մերձ և հուպ և կից Ջուղայեցւոց առ եզերբ գետոյն : և այսմ խորհրդոյ ամ̃քն հաւանեցան՝ թգ̃ւրն և իշխանքն և Հայոց ժողովուրդքն. և այլք ամենեքեան որք լուան : Իսկ ապա հրամանաւ թգ̃ւրին էհտիմալդօվլաթն առաքեաց զարս երկրաչափըս՝ որ զնշանակեալ տեղին չափեցին և ետուն ժողովրդեանն. և ժողովուրդքն բաժանեցին յինքեանս իւրաքանչիւրոց ըստ իւրում ասկի : և սկսան շինել զտունս և զտեղիս բնակութե իւրեանց՝ եթէ երևանցիք՝ եթէ դաշտեցիք. եթէ միւս այլ խառնիճաղանճ ժողովեալ ժողովուրդքն. ամենեքեան իշխասին յայսմ տեղւոջ զետեղեալ բնակեցան : Որդ պատճառ հանելոյ քրիստոնէիցն 'ի քաղաքամիջէն ասպահանու՝ արբուին գինւոյ եղև. ըստ այսմ օրինակի ոչ և պատմեցաք :

Բայց

Բայց ժողովուրդքն քրիստոնէից զատա
ջինն 'ի հանելն զինքեանս 'ի քաղաքէն դժուա
րէին. զի ծանր թուէր ինքեանց ելանելն 'ի
բնակութեաց իւրեանց. բայց այժմ յոյժ դիւ
րասիրտք են և գոհանան զՍ.Ճ. զի խնամոր
կութեամբ Ս.Ճ եղեալ կատարեցաւ այս գործս
իվերայ քրիստոնէից. և է գոհանալն քրիստո
նէից վն բազմաց պատճառաց: Նախ զի անդէն
ի մէջ քաղաքին քրիստոնեայքն և մահմետա
կանքն խառնիխուռն ընդ միմեանս բնակեալք
էին. և ոմանք ոմանք 'ի թերահաւատ արանց
քրիստոնէից հանապազօր տեսանելով զդիւր
և զվայրասահ և զմարմնապաշտ օրէնս մահմե
տականաց՝ և միշտ զքարոզս և զպատմութիս
օրինաց նց լսելով թերանայինս 'ի քրիստոնէա
կանաց հաւատոցս. մինչև իսպառ վերջացեալ
դառնային 'ի քրիստոնէութէ 'ի կրօնս մահմե
տականս՝ և լինէին մահմետականք: Երկրորդ՝
եթէ ուստերք քրիստոնէից հաճէին դստե
րաց մահմետականաց՝ կամ թէ ուստերք մահ
մետականաց հաճէին դստերաց քրիստոնէից՝
այնքան 'ի ծածուկ և 'ի գաղտնի հնարէին
և խօսէին մահմետականքն ընդ քրիստոնէից
ուստերացն և դստերացն մինչ զի զկամս նց և
զյօժարութի ինքեանց հաւանեցուցեալ դար
ձուցանէին 'ի կրօնս մահմետի. և զայսպիսս
բազում տեսաք մերովք աչօք, որք գնացեալ
անկան 'ի տունս մահմետականաց. և թէպէտ
զբազում ջանային քրիստոնեայք հանել զնն
անտի ոչ լինէր՝ այլ ուրանային: Երրորդ՝ զի
անդէն 'ի քաղաքամիջին տեղիք քրիստոնէիցն
նեղ էր և անձուկ՝ և սակաւաջուր, որ վն ջրոյ
աղութեիս յոլովս կրէին. և աստէն 'ի նորում
տեղւոջ ընկալան զտեղի լայն և ընդարձակ.

յորում զատունս մեծածախս և զվայելչութ՟ այն
և ընդարձակ զանազանիւք յօրինուածովք.
վերամբարձութք յարկօք՝ և ամարանօք հովա
նոցօք՝ որոց առաջի տեղիք զբօսանաց՝ պար
տէզք՝ և ծաղկք՝ և ծառք մրգաբերք:
Զորորդ՝ զի անջատեալ որոշեցան յօձաբարոյ
ազգէն մահմետականաց. որ հանապազօր խա
ծատեալ նենգէին եղզուէին զքրիստոնեայսն.
և այժմ ամէն քրիստոնեայք 'ի միում տեղւոջ
գումարեալ կան եղբայրութ՟ գոհանան զԱ՟Ծ
Ո՟յ որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

Պիտելի է՝ զի յորժամ զսկիզբն արարին 'ի
հանել զքրիստոնեայսն 'ի քաղաքէն: Թուա
կանն մեր էր հազար և հարիւրեչորս՝ յորժամ
հանին զդաշտեցիսն: և 'ի հազար և հարիւրև
հինգ թուին հանին զերևանցիսն: և այժմ
որ զպատմութիս գրեցաք՝ է թուականն մեր
հազար և հարիւրևութն. որք եղին 'ի քաղա
քամիջէն և ժողովեցան 'ի նոր տեղին ուր շի
նեցին զյարկ բնակութե. և ոչ մնաց 'ի քաղա
քին 'ի ժողովրդենէն քրիստոնէից. այլ ամէն
ժողովեցան 'ի նոր տուեալ տեղին:

---

Այլև պատմութի ըստ յեղանակի անցելոց
պատմութեց: զի ոչ յոլով տեղիս պատ
մեալ եմք եթէ մեծ և առաջին շահաբասն. ոչ
թէ երկիցս և երիցս վարեաց զազգս Հայոց յա
տրպատականէ աշխարհէ 'ի պարսկաստան. այլ
յոլովանգամ՝ այժմ և այժմ: Ու յորժամ էր
թուականն մեր հազար և վաթսունևեօթն.
միւսանգամ հրամայեաց վերոյ ասացեալ թագւ
որն առաջին շահաբաս վ՟ ազգին Հայոց ար
տասահմանն առնել զամէն յատրպատականէ
աշխարհէն և վարել յաշխարհն Պարսից:

Որդ

Արդ հրամանէ եկեալ գնացին նորին իշխանքն բազմօք զօրօք 'ի քաղաքն Երեւան և 'ի գաւառս նր, 'ի Գանձայ և 'ի գաւառս նր, 'ի Թաւրէզ և 'ի գաւառս նր յԱրտաւիլ և 'ի գաւառս նր, և սկսան զքննութի և զորոնումն առնել ի մէջ ազգին Հայոց՝ Թէ որոք իցեն բնիկ բնակն 'ի հարց և 'ի հաւուց տեղականն, և որոք ոչ, այլ յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու: զբնիկսն Թողին, և զեկամտացն ամէն զանուանսն գրեցին 'ի քարտէսի, և կացուցին իւրնց յազգէն Հայոց պետս և վերակացուս՝ և անուանեցին զնս մէլիք. և նոցա յանձնեալ աւանդեցին զամենն ժողովուրդսն, զի Թէ ոք պակասեսցի 'ի գրեցելոց ժողովրդոցն փախստեամբ կամ այլով կերպիւ, նոքա գտեալ ածցեն 'ի գումարս ժողովրդոցն. և Թէ ոչ գտցեն ինքեանք լիցին պարտաւորք Թգւրին, և արժանիս սպանանելոյ: Արդ՝ այսպիսեաւ օրինակաւ զամենն հանին 'ի բնակեալ տեղեացն և վարեալ տարան 'ի պարսկաստան:

Իսկ բաժանեալ տրոհեցին 'ի նոցունց զքարագործ արուեստաւորսն զամենն, և տարան 'ի քաղաքն ասպահան վն արուեստին, որ պիտոյանայր անդ 'ի գործս շինուԹեց տան Թգւրին, և համօրէն ազգին Պարսից. և անդ յասպահան բնակեցուցին:

Իսկ զայլսն զամենն վարեցին և տարան 'ի քաղաքն Փահրապատ, և անդէն զոմանս 'ի քաղաքին, և զոմանս 'ի գեղօրայսն բնակեցուցին. որք ոչ մնացին, և ոչ աճեցան, այլ օր աւուր պակասեալ եւ վատնեալ սպառեցան, վն դաժանի և մգռահոտոյ և վնասակարի օդոյն, որում ոչ էին ընդելք: և Թէպէտ բազումք կամեցան փախչել՝ ոչ կարացին. քանզի պատուէր ունէին 'ի Թգւ-

՚ի Թ̃քրէն ճանապարհի պահօղքն, զորս ռահ
դար կոչեն, թէ որք գան եւ մտանեն յաշխարհն
Փահրապատու թողուլ՝ եւ որք ելանել եւ գնալ
կամին յաշխարհէն ոչ թողուլ: Եւ թէ գտանի
ցեն զոք թաքուն գնացեալ ըմբռնեալ սպան
ցեն, վասն որոյ ոչոք կարաց փախչել, եւ անդէն
մնացեալ վատնեցան մահուամբ եւ կոտորմամբ
զի առաւել քան զտասն հազար տուն հայք՝
գնացեալ էին. եւ այժմ չորսհարիւր տուն հա
զիւ թէ մնացեալք են: Եւ այժմու ժամանա
կիս եթէ պատահի ումեք քրիստոնէի գործ
ինչ կարեւոր ճանապարհորդութ̃ե կամ այլ
ինչ իրաց, պարտի գնալ առ քաղաքապետն եւ
խնդրել զթուղթ հրամանի եւ նշանի առ ռահ
դարսն զի մի արգելցեն՝ եւ մի դարձուսցեն զնա,
եւ քաղաքապետն նախ առնու ՚ի գնացողէն փո
խանակ անձին նորա զայլոք յերաշխի, եւ ապա
տայ նմա զթուղթ, եւ ապա ճանապարհորդն
գնայ զճանապարհս իւր:

Իսկ զքարահատ արուեստաւորսն՝ զորս բե
րին ՚ի քաղաքն սպահան, ՚ի հարաւային
կողմն քաղաքին յայնկոյս գետոյն բնակեցու
ցին, ՚ի տեղին ուր զգաւուրի ազգն էին բնակե
ցուցեալ խառն ընդ նոսին բնակեցուցին զքա
րահատ Հայսն:

Եւ այժմ ՚ի թուականիս Հայոց, հազարե
հարիւրերեւթին՝ յամսեանն մայիսի տասներ
ցին հրամայեցաւ ՚ի Թ̃րէն յերկրորդ շահաբա
սէն, զի այս Հայոց ժողովուրդքս՝ եւ ընդ սոսա
եւս ազգն գաւուրի ելանիցեն յայսմանէ տեղւոջէ
եւ գնասցեն ՚ի տեղին ուր երեւանցիք՝ եւ շլշա
բանցիք՝ եւ դաշտեցիք բնակեցան, ապա եւ
անդ բնակեսցին: զի ամենայն այլասեռ եւ այլ
ահաւատ ազգ որոշեսցին ՚ի մահմետականաց,
զի

զի մահմետականք անխառն՝ ի նոցունց բնակելով սոք գտանիցին, վասն որոյ և ազգն Հայոց և ազգն գաւրաց եղեալ գնացին՝ և մերձ վերոյ ասացեալ քրիստոնէից բնակեցան։

Իսկ թէ որ հարցումն արասցէ վասն ազգին գաւրի այսէ։ Զի մեծ և առաջին շահաբասն անվթար նենգաւորհն, որպէս զազգն Հայոց յատրպատականէ աշխարհէն վարեալ էած՝ ի Պարսկաստան, սոյնպէս և զազգն գաւրաց արտասահման արարեալ յիւրեանց բնիկ աշխարհէն ՝ի քիրմանայ՝ և յեզդայ՝ և՝ ի շիրազայ՝ և յայլոց տեղեաց իւրեանց և բերեալ էած յասպահան, և նոքօք լցուցեալ շինեաց և մարդաշատ արար զասպահան։ Եւ այս գաւրերս այսպէս եկեալ էին յասպահան և անդ բնակեալ, և այժմ զնոսա ևս հանեալ յայնմանէ տեղւոջէ տարան մերձ Հայոց ազգին՝ ի կողմն ինչ՝ և անդ բնակեցուցին։

---

Պատմութիւն վասն ազգին Եբրայեցւոց բնակելոյն յասպահան քաղաքի, և այլոց ևս Եբրայեցի ազգին՝ որք են բնակեալ ընդ իշխանութեամբ թագաւորութեան Պարսից, թէ վասն որոյ պատճառի դարձուցին յիւրեանց օրինացն՝ ի կրօնս մահմետի։

ԺԴ։

ՅԵՏՀՐԱՆԵՆԻ ԱՅՐՕՊԻՆ Հայոց՝ ի քաղաքամիջէն ասպահանու՝ սկիզբն արարին և զազգն Եբրայեցւոց հանել։ Վասն զի՝ ի ժամանակս թագաւորութեան այս երկրորդ շահաբասս, և՝ ի թոռնականութեան Հայոց, հազար և հարիւր և վեց՝ յաւուր միում որ էր ուրբաթ օրն այն ընդ մերձենալ երեկոյին՝ որ լուսանայր՝ ի վաղորդեան օրն շաբաթ. նոյն էհտիմալդօվլաթն՝ որոյ անունն էր Մահմատբէկ, որ և զազգն Հայոց էհան՝ ի քաղաքամիջէն ասպահանու, և այժմ կամի զի և

զազգն

զազգն Եբրայեցւոց հանել. վն որոյ պատրաստեաց զզօրականս և առաքեաց ի վր ազգին Եբրայեցւոց, որք են ջհուտ ազգն, թէ դուք ամ ազգդ Եբրայեցւոց պարտիք ելանել 'ի քաղաքամիջէ տանն և գնալ արտաքոյ քաղաքին 'ի միում յեզերաց քաղաքիս բնակել. զի որովհետև ոչ էք հաւատոյն մահմետի անօր ազգ էք, ելէք 'ի քաղաքէս, և արտաքոյ քաղաքիս բնակեսջիք, քանզի այսպէս հրամայեցաւ վն ձեր 'ի թագաւորէն։

Առ որս զաղերս արկեալ Եբրայեցւոց ասելով. որովհետև այսպէս հրամայեցաւ վն մեր 'ի թագաւորէն հրաման թղթերին ի վր գլխոյ մերոյ՝ կատարեմք անպակաս զհրաման թագաւորին. բայց խնդրեմք 'ի ձէնջ զներումն յաւուրս երիս՝ զի ուստերօք և դստերօք և ամենիւք ընչիւք և ստացուածովք մերովք ելեալք գնասցուք։ և մանաւանդ տեսանէք եւս զի օրս տարաժամեալ է. այլև հիւանդք և ցաւագարք, ծերք և մատաղ մանկունք յոլովք գոն, որք ոչ կարեն այժմ զգիշերային գնալ, վասն որոյ խնդրեմք 'ի ձէնջ զներումն զերիս աւուրս։

Իսկ եկեալ զօրականքն ոչ տային զթոյլ և զներումն կենլոյ մինչ 'ի վաղուեան օրն, այլ սաստիկ տագնապաւ և փութով ելանել յայնմ երեկոյի. քանզի այնպէս էր հրամայեալ նց էհանիմայ դօվլաթն, ոչ ներել և ոչ թողացուցանել մինչև ցառաւօտն, այլ 'ի նոյնում երեկոյի և 'ի նոյնում գիշերի հանել զնս զամենեսին ամենիւք ընտանեօք իւրեանց։ և թէ ոք մնասցէ 'ի վաղուեան օրն, զգանս, և զբանտս, և զտանջանս ածցեն ի վերայ այնպիսւոյ առնն, զի ոչ հնազանդեցաւ հրամանաց էհանիմայդօվլաթին՝ և ոչ գնաց։

Օ այս

Օյս արար Էհախմալդօլվաթն առ եբրայ-
եցիսն, ո՟ղ զի նովաւ Եբրայեցիք լուծօղք և
անցաւորք գտանիցին շաբաթուն իւրեանց՝
զոր դատարկացեալք պահէին ։

Իսկ զօրականքն էհախմալդօլվաթին, որք
եկեալ էին 'ի հանել զեբրայեցիսն տանջելով և
հարկանելով, և սրօք և բրօք և վիրաւորելով
բռնութեամբ արտաքս վարեցին զա՟մն Եբրայե-
ցիսն յիւրաքանչիւր բնակութեանց, զկահ և զկա-
րասիս նց՟ ցրուեցին, և զդրունսն խորտակեցին։
Իսկ Եբրայեցիքն զճիչ և զկական բարձեալ
աղաղակաւ լալով և ողբալով, իւրաքանչիւ-
րոք կալեալ զձեռանէ ուստերաց և դստերաց
իւրեանց, և զանկողինս և զձորձս բարձեալ
յուսն իւրեանց ելին 'ի տանց իւրեանց 'ի գիշերի
'ի տարադէպ ժամու, և շրջէին 'ի դրունս
մահմետականաց 'ի փողոցս և 'ի պողոտայս՝ և
ուրք էր՝ որ գթայր 'ի նոսա ։

Այս եղեալ Եբրայեցւոցն 'ի քաղաքէն և
գնացեալ ի մէջ ջուղայու և գաւրապատու, և
անդէն եւս ոչ գտին զտեղի կելոյ, քանզի եկին
զօրականք ոմանք ո՟ղ թէ յէհախմալդօլվաթէն
առաքեալք՝ և պատուիրեցին ջուղեցւոց և
գաւրապատցւոց մի՛ տալ նց՟ զտեղի՝ վնօրոյ և
ոչ ետուն. և մնացին արտաքոյ յարկաց ամենայն
ազգն Եբրայեցւոց ։

Իսկ եկն ձմերայ նոցա վտանգ և վիշտ մեծ.
քան զի ժամանակն էր ցուրտ աշունն և բա-
կիզըն ձմեռան. և ցուրտն կարի վշտացուցեալ
վտանգէր զնոսա. զի արտաքոյ յարկաց բա-
ցօթեայք կային. և բազումք կային ի մէջ նոցա
ալք և կանայք ողորմելիք ։ Նա և մահմետա-
կանք որք հանդիպէին՝ հայհոյէին՝ անար-
գէին՝ զզուէին՝ հարկանէին՝ և զբազում նե-
ղութիս

զուլթիս հասուցանէին ողորմելեացն այնոցիկ. Ո՛ կնի այսորիկ իբրև ետես եհոխմալդօղվաթն՝ թէ անհնար է նմ կամաւ գալ՛ի տաճկութի, խորհեցաւ բռնութ՛բ ածել՛ի տաճկութի: քանզի հրամայեաց ազգին մահմետականաց՝ և մանաւանդ արանց զինուորաց. զի ուրև գտցեն զայր Եբրայեցի կալեալ բերցեն ՚ի դուռն եհոխմալդօղվաթին. վասնորոյ ամ՛ք որք մահմետականաց ուրև գտանէին զայր Եբրայեցի. կալեալ կապեալ ածէին առաջի եհոխմալդօղվաթին: Եւ նա զառաջինն մեղմով խօսէր ընդ նոսա և ասէր՝ եկայք դուք մարդիկք դարձարուք յունայն օրինաց ձերոց. և ծաներուք զարարիչն և զՏր Ա՛ծն երկնի և երկրի՝ և լերուք մեզ եղբարք:

Իսկ Եբրայեցիք պատասխանեալ ասէին. զՏրն և զԱ՛ծն երկնի և երկրի ճանաչեմք՝ և պաշտեմք. բայց ձեզ եղբայր լինել ոչ կամիմք. և յօրինաց մերոց ոչ դառնամք. զի օրէնքն մեր ճշմարիտ է և Ա՛ծատուր. զի ձեռամբ մօսէսի մարգարէին ետ Ա՛ծ՝ որում դու իսկ գիտակ ես:

Ասաց եհոխմալդօղվաթն. եթէ դայցէք ՚ի հաւատս մեր՝ լինիք մեզ եղբարք սիրելիք. այլև զբազում գանձս և զպարգևս և զմեծութիս տամք ձեզ:

Առ այս բան՝ ոմն այր Եբրայեցի՝ որոյ անունն էր յոսէփ պատասխանեալ ասաց. յոր ժամ աշխարհիս հողագործաց արանցն որ գայ առ մեզ՛ի գնել զաղբ մարդոյ վ՛ն պարտիզաց. մեք նախ զգինն առաքին առնումք և ապա տամք զաղբն նոցա. իսկ դուք զգանձս և զպարգևս եդեալ ի վ՛ր ձերդ հաւատոյ ձգէք ի վ՛ր մեր: զայս ասաց այրն յոսէփ՝ զի թերևս առ այն բան զայրասցի եհոխմալդօղվաթն ի վ՛ր նր և սպան-

ցէ

ցէ զնա: Սոյնպ̃ և ամ̃քն հրէայքն ասէին. սպան զմեզ զամենեսեան. զի լաւ է մեզ ամենեցուն մեռանիլ քան թէ յօրէնս ձեր մտանել:

Եւ Եհտիմալդօվլաթն ասաց՝ գիտեմ զի զայդպիսի զայրացուցիչ բանսդ այնու աղագաւ ասէք՝ զի ես զայրացեալ խլ̃ ձեր սպանից զձեզ. բայց այնպէս գիտակ լերուք զի բնաւ ոչ զոք 'ի ձէնջ սպանանեմ. այլ մեղմագոյն և երկար չար չարանօք այնքան տանջեմ զձեզ՝ մինչ զի յամենից կողմանց վհատիլք դառնայք յօրէնս մեր:

Իսկ արքն Եբրայեցիք համախորհուրդք եղեալ զբանս աղաչանաց մատուցին առ էհտիմալդօվլաթն խնդրելով զտեղի բնակութեան՝ և ասացին: Ամ̃ զազգն Հայոց հանեալ 'ի քաղաքամիջէ աստի և յայլուր ետուր նց̃ զտեղի բնակութեան: սոյնպէս և մեզ տուր զտեղի բնակութեան կալոյ 'ի վայրի ուրեք յեզերս քաղաքիս, զի առ սակաւ սակաւ շինեսցուք մեք իւրաքանչիւրոց մեզ զտուն բնակութեան, և ելեալք 'ի քաղաքէս անդ գումարեալ բնակեսցուք:

Իսկ Եհտիմալդօվլաթն համախորհուրդ եղեալ ը̃ այլոց ևս իշխանացն Պարսից՝ ցուցին նց̃ զտեղի ուրեք հեռի 'ի քաղաքէն. և զանուն տեղւոյն գօզալդարայ կոչեն՝ որ է մերձ մուսալաս խմամին. և տեղիս այս էր անպատեհ և անձեռնտու: նախ՝ զի կարի հեռի էր 'ի քաղաքէն: Եւ երկրորդ՝ առանց ջրոյ էր. և թէ 'ի հեռուստ ջուր բերէին ոչ գայր, և ոչ հասանէր՝ վն̃ վայրացն հեռաւորութեան. և թէ 'ի տեղին ջրհոր փորէին ոչ բղխիւր ջուր զի լեռնական և վիմային էր տեղին: Օ այս անպատշաճ տեղիս յայն սակս ցուցին զի այսու ևս յանձնար և 'ի տարակուսի մնասցեն Եբրայեցիքն. վն̃յ և Եբրայեցիքն ոչ կարացին գնալ 'ի տեղին յայն. այլ մնացին արտաքոյ և բացօթեայք.

Յայս

Յայսմհետէ մտախոհեղեալ է հոխմալ գօղվաթին առ սակաւ սակաւ 'ի տանջանս մատնել զԵբրայեցիսն։ Եւ 'ի վաղուց և 'ի հնոց ժամանակաց 'ի միում տեղւոջ յեղերս քաղաքին արտաքոյ շինութեց և բնակութեց 'ի վայրի ուրեք՝ կայր տեղի ինչ բաժր պարսպեալ և դրուն իվերայ. բայց 'ի ներքս 'ի պարսպին տուն կամ բնակութի բնաւին ոչ գոյր. այլ լոկ միայն պարիսպ շուրջանակի բոլորեալ։

Հրամայեաց է հոխմալ գօղվաթն պարսիկ զօրականացն. զի երկու երբայեցի առն մէկ զօրական կացցէ իվրն չարչարիչ. և զնմ ըմբռնեալ և առձեռն տարեալ երբայեցիսն կապանօք տանիլ և լնուլ ի մէջ պարսպին այն, և զջուր ցանել յատակս նր իվր երեսաց երկրի. և մերկ մարնով նստուցանել իվր երկրի։ Եւ եր ժամանակն ցուրտ աշունն որ 'ի ցանել ջրոյն զերեսօք երկրի տամկանայր երես երկրի և մանաւանդ-թէ սառնոյր. և զերիս տիւս և զերիս գիշերս այնպ մնացին երբայեցիքն անօթի և անսուաղ. զի ոչոք տայր նոցա զկերակուր. և ազգականք Եբրայեցւոցն եկեալ արտաքոյ կացեալ յետ ուստեքուստ պարսպին բերեալ զհաց ձգէին իմէջ պարսպին առ ի լինիլ կերակուր Եբրայեցւոցն. և զայնեւս զինուորացն յափշտակեալ ուտէին՝ և ոչ տային Եբրայեցւոցն։ զկնի հրամայեաց է հոխմալ գօղվաթն՝ որ հանեալ անտի բերին 'ի քաղաքն և արկին 'ի բանտ։

Յաղագս Եբրայեցւոց հարցումն արար է հոխմալ գօղվաթն ընդ առաջնորդն և գլուխն օրինաց իւրեանց, զոր սադր ասեն ինքեանք. թէ սոքա կամաւ ոչ գան 'ի հաւատս մեր՝ զինչ արասցուք. մարթէ բռնութբ դարձուցանել թէ ոչ. պատասխանի արար սադրն. ոչ գոյ հրա

ման յօրինաց մերոց զոք բռնութեամբ դարձուցանել ։ Երկին Եհարց Եհտիմալդօվլաթն ․ ապա զինչ արասցուք ․ ասաց սատրն , ինձ ոչ է փոյթ՝ դու գիտես ։

Դարձեալ կոչեաց Եհտիմալդօվլաթն զԵբրայեցիսն առաջի իւր և ասաց գալ 'ի հնազանդութիւն և մտանել յօրէնս մահմետի ․ զի ովք գայ յօրէնս մեր տամք նմա զպարգևս երկութեան՝ և նա ազատի 'ի տանջանաց և նստի հանդարտութեամբ 'ի տան իւրում ․ և ովք յառաջադոյն գայցէ 'ի հաւատս՝ տամք նմա զպետութիւն և զիշխանութիւն ։

Այր ոմն յայնցանէ որոյ անունն էր Աւատիայ ․ նախ քան զամենն սա եկեալ եկաց առաջի Եհտիմալդօվլաթին՝ և յօժարութեամբ յանձն էառ ուրանալ զՔրիստոնէութիւն և դաւանել զտաճկութիւն հաւատոյ ։ Որոյ բանից վր յոյժ ուրախացեալ բերկրեցաւ Եհտիմալդօվլաթն ․ և մնոտի զթովլ յարգեալ գովեաց և սիրեաց զնա ․ և կոչեաց զնա իւր եղբայրագիր ․ և զամ ըզզգեստս անձին իւրոյ՝ զոր զգեցեալ էր հանեալ զգեցոյց նմա ․ և մինչև ցմատանիս մատանցն հանեալ եդ 'ի մատունս նր ․ և այլևս զինչս յոլով պարգևեաց նմա և յինքն յանկոյց զմիտս նց ։

Իսկ այս ուրացօղ այրս աւատիայ ․ եղև հնարացոյց իշխանացն Պարսից ․ քանզի ասաց զարս Եբրայեցիս զբաղումն իմաստին մի պահէք ․ և կամ թէ զչորս և զհինգս իմաստին յատեան մի բերէք ․ զի քաջալերեալ հաստատեն զսիրտս իրերաց ․ այլ երկու և երեք միայն բերէք ․ և բռնութեամբ դարձուցէք՝ զի նոքա կամաւ ոչ դառնան ։ Այլ և նախ կալարուք զքահանայսն նց՝ զոր խախամ ասեն ․ և իւր նր բազմաւ ջանիւ ջանացէք ․ խոստմամբ պարգևաց և սպառնա-

լեզք տանջանաց. Թերևս դարձուցանիցէք զնա. զի թէ նա դարձաւ ա̃մքն դառնան: ըստ այսմ օրինակի յոլով հնարս եցոյց Պարսից այն աւատիայն: Որոյ խրատովն ստէպ յուզմամբ որոնեալ Պարսիցն գտին զխախամն որոյ անուն էր Ասյիտ՝ և բերեալ կացուցին առաջի Էհտիմալդօլվաթին: աւ որ ասաց հաւանեաց բանից իմոց և կատարեա զհրամանս Թ̃գրին. եկ դարձիր յօրէնս մեր մահմետականս. և առ յինէն զպարգևս և զբարութ̃իւս յոլովս. իսկ խախամն ոչ էր յանձին կալեալ այլ հրաժարեալ էր: և այլևս զբանս բազումս խօսեցան իշխանքն ը̃ն խախամին՝ և նա ոչ հաւանեցաւ. այլ խնդրեաց զհրաման գնալոյ՚ ի տուն իւր, և իշխանքնետուն նմա զհրաման գնալոյ: և անդէն առժամայն ուրացօղն աւատիայ. ազդեալ իշխանացն ոչ թողուլ զնա գնալ՚ ի տուն իւր. այլ առ ին քեանս պահել. և այնպէս արարին իշխանքն. Եւ ՚ի վաղիւն դարձեալ կացուցին յատենի. և զնոյն բան հրամայեցին դառնալ յօրէնս մահմետի. և յայնմ ևս նուագի ոչ հաւանեցաւ խախամն: Եւ յերրորդումն աւուր ևս այսպ̃ կատարեցաւ գործն: Իսկ յաւուրն չորրորդի յետ բազմաց բանից, զոր խօսեցան ը̃ն խախամին, հատին ի վ̃ր նր̃ զվճիռ զի թէ ոչ դառնայ յօրէնս մահմետի պատառեսցեն զորովայնն և կախեսցեն յուղոտէ և շրջեցուսցեն ի մէջ քաղաքին. և զինչսն և զընտանիսն առցեն յաւարի. Զայս վճիռ հատին. և զուղտն բերեալ առժամայն նստուցին անդէն. և եկեալ դահճացն բացին զորովայնն. և հանեալ զսուրն իւրեանց հարկէին զխախամն կամ ուրանալ կամ զորովայնն պատառել: և խախամն յահէ սպանմանն. այլև առ՚ ի գութս ընտանեացն թուլացաւ.

լցաւ. վասն որոյ դաւանեցուցին նմա զդաւանութիւն հաւատոյն իւրեանց՝ և դարձուցին յօրէնս մահմետի. և ուրախացան ի վ̃ր ն̃ր անպատմաւ ուրախութ̃բ։

Յետ այսորիկ որ զխախամն դարձուցին 'ի հաւատս իւրց̃. յարանցն Եբրայեցւոց ածէին յատեան մի և երկու և ասէին ցնոսա զինչ ես ունիք ասել՝ զի ահա խախամն ես եկն 'ի հաւատս և դուք զի ես յամառեալ դիմադարձիք. և Եբրայեցիքն ոչ հաւանէին։ վ̃ն որոյ հրամայէին իշխանքն զօրականացն տանիլ զԵբրայեցիսն 'ի բանտն. և նոյնժամայն միւսանգամ բերել. և այնպէս բազումանգամ տանէին և բերէին։ և 'ի տանիլն և 'ի բերելն՝ զօրականքն և ծառայք և սպասաւորք իշխանացն, որք կային 'ի տեղիսն. թքանէին՝ հայհոյէին՝ հարկանէին՝ ապտակէին՝ զարկուցանէին զգետնի. և ընդքարշս տանէին. և բերեալ կացուցանէին առաջի իշխանացն և էհտիմալդօվլաթին։ և բռնութ̃բ դաւանեցուցանէին զդաւանութիւն հաւատոյն մահմետի. և Եբրայեցիքն առ վտանկի տանջանացն ակամայիւք կամօք դաւանէին։ և յետ դաւանելոյն բերէին Պարսիկքն ագուցանէին դաւանողաց զնոր կապայ. և տային նց̃ զպարգևս յարքունականէ գանձէ իւրաքանչիւր առնն զերկու թուման դրամ. և թողուին գնալ 'ի տունս իւրեանց։ և որք ոչ ուրանային դարձուցեալ 'ի բանտն պահէին. և ապա կրկին և երեքկին և բազմակի բերեալ յառաջ կացուցանէին և հարկէին ուրանալ։ և այնպէս առնելով զա̃մ կալեալ արսն դարձուցին 'ի կրօնս մահմետի. և ամսաչափի միոյ աւուրս զերիսհարիւրս և զյիսուն այր դարձուցին յօրէնս մահմետի.

Այսուհետև Եբրայեցիքն տկարացան առաջի Պարսից. զի կէս մասն 'ի նոցունց դարձան յօրէնս Պարսից. և Պարսիկքն զօրացան ի վ̄ր Եբրայեցւոց. և այլ ոչ ևս անսային ն̄ց կալ այլ բռնութ̄բ կալեալ զԵբրայեցիսն որ աւուր ածէին առաջի է հոխմայդ-օլվաթին՝ և բռնութ̄բ դարձուցանէին 'ի կրօնս մահմետի:

Եւ այնքան հետևեցան Պարսիկք և բռնացան ի վ̄ր Եբրայեցւոց առ 'ի դարձուցանել զնոսա. և ոչ արարին ներումն և ոչ սակաւ մի. մինչև զո̄մ ազգն Հրէից զբնակեալսն ի մէջ քաղաքին սպահանու դարձուցին 'ի կրօնս մահմետի. վ̄զի սակաւք էին ազգն Հրէից բնակեալք յասպահան քաղաքի. իբրև երեք հարիւր տուն՝ պակաս և ոչ աւելի:

Եւ 'ի զրաւել ամ̄ցն կարգեցին ի վ̄ր ն̄ց մահմետական մօլլայ, որ ուսուսցէ ն̄ց զօրէնսն մահմետի, և հանապազ տարցի յաղօթանոցն Պարսից, զի Պարսկօրէն աղօթեսցեն. և մանկանց ն̄ց ուսուսցէ զգիրս և զաւանդութիւս մահմետականս: այլև օրինադրեցին Հրէից զի զդստերս իւրեանց տացեն մահմետականաց, և 'ի դստերաց ն̄ց ինքեանք առցեն: այլև միարասցեն զենումն կենդանեաց ոչ յառաջն առնէին, այլ 'ի շուկայէն 'ի մահմետականաց զենողաց առցեն զմիս: և այլևս այսպիսի օրինադրութիւս բազումս կարգեցին Պարսիկք ի վ̄ր Եբրայեցւոց:

Իսկ որք Հրէայքն էին՝ ոչ գնային 'ի մաչիթն Պարսից. նաև ոչ բնաւ մօտանային ն̄ց. և ոչ գնէին զմիս 'ի շուկայէն. այլ ծածուկ 'ի տունս իւրեանց զենուին ոչխարս. և կամ թէ առանց մսոյ անցուցանէին աւուրս բազումս: Եւ լինէր զի երբեմն երբեմն վ̄ն ահի և երկիւղի մատնողացն և Պարսիցն գնային Եբրայեցիքն 'ի

շուկայն՝

շուկայն՝ և գնէին զզենեալ միս 'ի Պարսիկ զենո ղաց. և անկներև բաց համարձակ առաջի ամենեցուն բերէին 'ի տունս իւրեանց ոչ թէ իւրեանց ուտելոյ վասն՝ և ոչ ուտէին. այլ 'ի ծածուկ ձգէին առաջի շանց՝ և շունքն ուտէին. և զայլ բազում այսպիսի գործս ունէին ազգն Սեբաստացւոց՝ որովք յայտնեալ ստուգեցաւ թէ ոչ կամին թողուլ զօրէնս Հրէութեան:

Բայց աւատխայ՝ և իւր գործակից չար ընկերքն՝ որք ընդ նմա ուրացան. ստքա յոյժ ուրախ և հաստատ էին իմն իւրեանց նորագիւտ հաւատոյն կրօնիցն մահմետի՝ վասնորոյ շրջագայեալ իմէջ Սեբաստացւոց յուզէին, զննէին, տեղեկանային, թէ որոք կամակար միոք իցէ հաւանեալ օրինացն մահմետի՝ և որոք ոչ. այլ տակաւին ունի 'ի ծածուկ զօրէնս Հրէութեան: Սոյն յայսմ պատճառէ բազում նեղութիւնս հասուցանէին ազգին Հրէից՝ զորս իրաւ և զորս անիրաւ. քանզի կալեալ զոմանս 'ի Հրէից հարստահարեալ և բանադէճ լեալ գատափետ առնէին. և ասէին, ընդէր դու ոչ գնաս 'ի մզկիթն յաղօթել՝ այլ գնաս 'ի ժողովարանն Հրէից: և ոմանց թէ զորդին քո առ խախամն առաքես յուսանել՝ և ոչ առ մօլայն: և ոմանց թէ միս ոչ առնուս 'ի շուկայէն այլ 'ի տան քում զենումն առնես: և այլ այսպիսի գործս բազումս առնէին ընդ Հրէից ուրացօղքն 'ի նոցունց. և Սեբաստացիքն վն երկիւղին Պարսից բազում աղաչանս արարեալ նց և կաշառս տուեալ՝ հազիւ ուրեմն կարէին զերծանիլ 'ի ձեռաց նոցա:

Սոյն ազգն Հրէից յոյժ վշտացեալ 'ի սիրտ և յոգի խոցեցան իմն արարմանց ուրացողացն. և զայլրագին սրտմտութե և նախանձու լցեալք եղեն.

եղեն. և եդին հաստատութիւն 'ի միտս իւրեանց
սպանանել զուրացողն. նախ զուատիայ զի
նա կարի չարագոյն էր:

Այր այր ոմն յազգէն Հրէից յոյժ վրէժխն
դիր օրինացն Հրէութեան՝ որոյ անունն էր փին
հաս. սա նախանձախնդիր գոլով օրինացն հայ
րենի եւ այր 'ի սիրտ և յոգի սպանանել զուա
տիայ: և հանճարեալ հնարիւք եգիտ զայլևս
արս երիս յազգէն Հրէից խորհրդակից և ըն
կեր ինքեան՝ վասն սպանման պղծոյն ուատիայի.
անունն միոյն իսահակ՝ և երկրորդին մաւիհ՝
երրորդին յուդայ. սոքա չորեքեանս միաբա
նեալ և հաստատութիւն պայմանեցին 'ի միջի
իւրեանց 'ի դէպ ժամու սպանանել զուա
տիայ՝ զորև սպանին:

Զկնի սատակման պղծոյն ուատիայի խոր
հեցան չորեքին արքն կորուսանել զպիղծ գէշ
նն. և թէպէտ բազմաւ կերպիւ խօսեցան՝ ոչ
կայացաւ խորհուրդն նոցա. այլ հաւանութիւն
չորիցն այսմ արարին, զի իբրև էհաս գիշերն
և ի մէջ գիշերին բարձեալ զդի պղծոյն ուա
տիայի տարեալ հեռացուցին 'ի տանց իւրեանց՝ և
ի մէջ պողոտային 'ի կողմն ինչ ընկեցին զնա. և
ինքեանք աներևութացան:

Այնուհետև ազգն Պարսից, ոչինչ խօսե
ցան և կամարարին ընդ ազգին Հրէից, ոչ պա
հանջէին 'ի նոցունց զհարկս արքունի, և ոչ զայլ
ինչ ծառայութիւն իշխանականս, այլ իբրև
զազգն Պարսից համարեալ ունէին զնոսա և
մտեալ յօրէնս մահմետի, քանզի թողին զնոսա
'ի կամս իւրեանց կեալ: թէպէտ և գիտէին Պար
սիկք՝ զի ոչ են մտեալ Հրէայք յօրէնս մահ
մետի, այլ առ ժամանակաւն այնպէս թողին:

Այլ Հրէայք 'ի ժողովս և յազգս իւրեանց

զօրէնս

զօրէնս և զաւանդութիւնս Հրէականս կատարէին և ոչ զմահմետականս։ Նա և ասեն թէ մեք զամենայն ամի հարկն, զոր տալոցեմք արքունի միանգամ որոշեալ զատեմք և արկանեմք 'ի գանձանակ և պահեմք՝ զի յորժամ խնդրեսցեն վաղվաղակի տամք և զերծանիմք։ այլև ասեն զայն երկու թումանն, որ յաւուրն ուրացութե՟ ետուն մեզ զպարգևս՝ զայնևս պահեալ եմք. և հանապազ զիւրաքանչիւր տարւոյ շահն ընումք ի վ՟ի· զի յորժամ խնդրեսցեն տուեալ զերծանիմք 'ի նոցանէ։ Եւ մինչև ցամս այս որում զպատմութիս շարագրեցաք՝ որ է թուականն մեր հազար և հարիւրերինն· և մարտի ամսոյ տասն այսմ ըստ ասացելումն կան պարսիկք և Հրեայք՝ և ապագայն Ա. Յ է գիտելի։

---

Այլ այսու գիտելի է՝ զի յաւուրսն յորում զՀրէայսն՝ որք էին յասպահան քաղաքի զամ՟ն թէ կամաւ թէ յակամայ դարձուցին յօրէնս մահմետին՝ այնուհետև էհասիմալդօլվաթն զհրովարտակ հանեալ 'ի թ՟գ՟րէն առաքեաց ամ՟ն աշխարհս տէրութե Պարսից առ իշխանս աշխարհաց· զի ուրեկեսցեն ազգք և ժողովուրդք Հրէից թէ 'ի գեղս և թէ 'ի քաղաքս ամենեքեան թողցեն զօրէնս Հրէութե, և առասցեն զօրէնս մահմետի· որք կամաւ հնազանդեսցեն բարւոք է՝ և որք ընդդիմասցեն՝ բռնութե և տանջանօք ածցեն իշխանքն զայնպիսիսն 'ի հաւատն մահմետի։ Եւ իբրև հասանէր հրամանն արքունի 'ի տեղիսն առ ժամայն որպ՟ հուր բորբոքեալ ընդ եղէգն գումարէին զամենայն Հրէայսն· և հարկէին կատարել զհրամանս թ՟գ՟րին։ և ամ՟ ազգն Հրէից ուրեք կային ոչ կամէին մտանել յօրէնս մահմետի·

տի. այլ ոմանք կաշառօք՝ և ոմանք փախստեամբ՝ և ոմանք այլինչ հնարիւք զերծանէին։ Իսկ որք յանհնարս մնային յակամայ կամօք և առ երեսս կեղծաւորութբ մնանէին յօրէնս մահմետի, և թէպէտ առաջս Պարսից ձեւնային մահմետական գոլ՝ այլ ոչ էին. այլ հրէութն օրինօքն կային ամէն 'ի ծածուկ։

Եւ 'ի ժողովրդականացն հրէից՝ որք յեւրաքանչիւր քաղաքս Պարսից բնակեալք էին անհնարք լեալք յակամակամօք և առ երեսս միոյն յօրէնս Պարսից՝ այսոքիկ են։ որք 'ի քաշան, 'ի զում, 'ի թաւրէզ, յարտաւել 'ի ղազբին, 'ի լառ, 'ի շիրազ, 'ի բանտարի քում։ Եւ որք կաշառօք, և փախստեամբ, և կամ յայտնի ըդխմակալելով ոչ միոյն յօրէնս Պարսից՝ այսոքիկ են, որք 'ի գուլփէքան, 'ի խուանսար, 'ի բանտար, 'ի շուշտար, 'ի համադան, յեզդ, 'ի քրման, 'ի խորասան, 'ի դումաւանդ, յաստարապատ, յերկիրն գիլանու, 'ի գեղօրայն փահրապատու։

Իսկ 'ի փահրապատ քաղաքի բնակեալ հրէայքն յայտ յանդիման կացեալ ընդդիմացան հրամանաց արքունի՝ և ոչ միոյն յօրէնս մահմետի. և նոյ վերակացու իշխանն՝ որոյ անունն էր միրզաատղ, իբրև լուաւ թէ զհրէայսն, որք յասպահան քաղաքին էին, ածին յօրէնս մահմետի, այն իշխանն ևս սկսաւ ձեռնարկանել 'ի փահրապատ քաղաքի բնակեալ հրէայսն բռնութբ ածել 'ի տաճկութի։ և զայս արար իշխանն նախքան զգալն թղթականի հրովարտակին. և հրէիցն վշտացեալ 'ի նորին բռնութէն խօսեցան առ երեսս իշխանին՝ թէ ոչ է հրամայեալ քեզ 'ի թղթէն մր այդպիսի իրաց. և զիարդ ընդվայր տանջես զմեզ. և յայսմ բանէ սակաւինչ թուլացոյց իշխանն զբռնութին.

բայց

բայց յոյժ ոխնկալ եղեւ 'ի սրտի իւրում եւ համբեր ցորժամ եկն հրովարտակն արքունի ։ Այնուհետեւ կոչեաց իշխանն զՀրէայսն եւ ասաց՝ զինչ եւս ունիք ասել՝ զի ահաւասիկ հրովարտակ հրամանաց թգ՟ւորին ։ արդ եկեալ կատարեցէք զհրամանս թգ՟րին՝ եւ կալարուք յանձին զօրէնս մահմետի ։

Եւ Հրէայքն յայտնի եւ համարձակ կացին ընդդէմ ասելով ։ ոչ ընդունիմք զօրէնս մահմետի՝ եւ ոչ թողումք զհայրենի օրէնս մեր՝ եւ դու զորինչ կամիս արա ընդ մեզ ։

Իսկ իշխանն զբազում չարչարանս էած 'ի վ՟ նոցա ։ բազումանգամ 'ի կախաղանի կախեալ բրածեծ առնէր զն՟ս այնքան մինչեւ անշնչանալ նց՟ ։ եւ բազումանգամ 'ի ջուր լճին հեղձամղձուկ առնելով՝ եւ հանեալ դարձեալ բրածեծ առնէր ։ այլեւ զօրականս 'ի տունս նց՟ առաքէր առ 'ի զինչս նց՟ յաւարել՝ եւ զկանայս նոցա խայտառակել՝ որք եւ կարի առաւել եւ անպատկառաբար արարին զայս գործ ը՟ Հրէից կանանցն ուստերաց եւ դստերաց ։ եւ Հրէայքս այսպիսի հարուստք եւ ընչեղք էին՝ որք յոլովք 'ի սոցանէ ունէին 'ի մէջ շուկային զխանութս որ է դուքան՝ յորում վաճառէին պատուական կումաշս եւ արծաթեղէն անօթս ։ որոց վ՟ հրամայեաց իշխանն ազգին մահմետականի զի զամ՟ ինչս խանութայն Հրէից յաւար հարցեն ։ զոր եւ առժամայն կողոպտեցին ։

Եւ 'ի Հրէից արանցն կալանաւորք էին ըմբռնեալք քան զհարիւր արս աւելի ։ որոց ամենեցուն պարանոցն արկեալ շղթայս երկաթեայ ծանր եւ երկայն ։ եւ զամենեսեան այնու շղթայիւն կապեալ զկնի միմեանց շուրիշար ։ քանզի մի էր շղթայն ։ եւ հանապազօր բերէին 'ի

գուռն իշխանին 'ի դատել՝ և տանելին 'ի բանտըն 'ի պահել:

Եւ երկարեցաւ գործս այս մինչև յերիս և 'ի չորս ամիսս. և 'ի բազմաց չարչարանացն, զոր եած ի վերայ նոցա իշխանն ինքնևս ձանձրացաւ: ապա հրամայեաց նոցա թէ որովհետև ոչ կամիք մեկնել 'ի Հրէութենէ առ էք ի վերայ ձեր զնշան ինչ յայտնի որով ամենքն տեսօղք ճանիցեն զձեզ թէ Հրեայք էք: և զայս հրաման յանձին կալան Հրեայք մեծաւ յօժարութեամբ:

Եւ այլևս զնեղութիւնս և զտանջանս բազումս կրեցին Հրեայք. այնքան մինչ զի նեղիչք նոցա Պարսիկք ձանձրացան 'ի նեղել զնոսա՝ և յետս կացին, և խնայեցին զՀրէայսն 'ի չարչարելոյ. և նոքա այսպէս ազատեալք եղեն 'ի ձեռացն Պարսից. և տակաւին կան 'ի հայրենի հաւատս իւրեանց Հրէական. իսկ յապագայն Ա՟Ծ է գիտելի. որում փառք յաւիտեանս ամէն:

---

Վ՟ն շարժման մեծի քաղաքին Թաւրիզու:

## ԿԱ:

## Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ

Հայոց հազար և իննսունն՝ փետրուարի ամսոյ 'ի հինգն յաւուր ուրբաթու՝ 'ի քաղաքն Թաւրէզ, և 'ի շրջակայ գաւառսն իւր, եղև յանկարծակի և յեղակարծում ժամուն ահագին գետնաշարժ ուժգնակի բախմամբ, զի հաստատակուռ թանձրութիւն երկրի դողայր որպէս զտերևինչ՝ զոր ունելով ոք 'ի ձեռին խաղացուցէ, կամ զջուրինչ յամանի այսր և անդր տարաբերիցէ: քանզի ահագին որոտմամբ թնդաց երկիր դուալով 'ի սանդարամետս անդնդոց՝ և զկնի եղև շարժն և արար զկործանումն և զտապալումն և զքայքայումն ամե-

նից

նից շինուածոց քաղաքին : Ո ի մեծամեծ և լայնանիստ և բարձրաբերձ և պարմանատես շինուած, որ կայր ի մէջ քաղաքին, որ ՚ի հնոց ժամանակաց և ՚ի Թգ̃րց մնացեալքն ոչ որ տեսողացն յայտնէ՝ զբաղումն ՚ի նոցանէ ՚ի վայրկեան ժամու փլուզեալ հողաբլուր առնէր :

Որպէս և անուանի շինուածն՝ զորս ուստաշագրտ ասէին այսու շարժմամբս բլաւ, և զբազում ուղտս և այլ անասունս ՚ի ներքոյ իւր եառ՝ որք ՚ի ցրտոյ և ՚ի ձիւնոյ ձմերանն հովանաւորեալք էին ի մէջ նորա :

Այլև բարձրաբերձ յօրինեալ եղջիւրք և մինրայք մաչիթաց ՚ի բարձրադիտակէ և յերկնաբերձէ բարձունէ բարձանցն խորտակեալ բեկեալ տրամատեալ զառ ՚ի ստորև սորեալ ՚ի վայր գլխեալ, և զարկուցեալ յերկիր ի բաց ցնդէին :

Նա և անուանի և լայնանիստ և բարձրաբերձ և հոյակապ և հռչակաւոր շինուածն որում շամղազան ասեն՝ որ է ՚ի քաղաքէն սակաւ ինչ հեռի ՚ի կողմն շոր գետոյն, սորա առաստաղն ամ̃ փլաւ, և մնացին շուրջանակի որմունքն, և այն ևս ՚ի հիմանցն խախտեցաւ, և ՚ի չորից կողմանց պատառեցաւ : և բաժանեցաւ ՚ի չորս մասունս՝ որ կայ այնպէս մինչև ցայսօր :

Իսկ վն̃ տանց և ապարանից՝ բաղանեաց և փուռթկայից, որ է քարվանսարայ, ով կարէ թուել՝ որոց հիմն ի վերտապալեցան, և բազումք կենդանիք մարդք և անասունք, կահք և կարասիք, գանձք և ստացուածք մնացին ՚ի ներքոյ հողոյ, որոց խոյզ արարեալ աւուրս քանի, կամ երեսուն, պեղեալ զհող և զքար հազիւ կարէին գտանել զմեռեալս և զինչս :

Թէպէտ եղև մ̃իս բազում քաղաքին Թաւ

րիզու

րիզու շարժմամբս այսու, այլ առաւելապատիկ վնաս շրջակայ գաւառին եղև, ո՛ր խոսրովշայ, և ուսկու՝ կոչեցեալ գաւառացն, և դուխուրկան գեղջն, .քանդումն և տապալումն, և մարդոց և անասնոց կորնչումն:

Նաև ՚ի սաստիկ և յուժգնակի շարժմանէ պատառեցաւ հաստատակառոյց թանձրութիւն երկրի, և ելին սեաւ ջուրք ըղխեալք իբրև զաղբիւրս՝ և գնայր ջուրն զգնացս իւր: և յետ երից աւուրց դարձեալ եղև շարժ ուժգնակի, և կորեան աղբիւրքն: և յայլ տեղիս երևեցան այլք աղբիւրք մնունք, և ժողովք ջրոց ո՛ր զառաջին սեաւ ջուրն, և որքան ժամանակս կայր շարժն, կային և աղբիւրք սեաւ ջուրցն, և յետ դադարման շարժին կորեան և նոքա:

Այլ ասացին ոմանք թէ խաչնարած ոմն հովիւ, որոյ առաջի հօտք ոչխարաց արածէին ՚ի վայրի ուրեմն, և յաւուր միում ընդ լինիլ շարժին՝ իսկոյն պատառեցաւ թանձրութիւն երկրի՝ և բացաւ խորութիւն անդնդոց յորում սուզեալ ընկղմեցաւ հովիւն, և մասն ինչ յոչխարացն, և կենդանոյն կլեալք յերկրէ, և ոչ ևս երևեցան:

Նաև գիւղ մի ողջոյն՝ որ շինեալ կայր ՚ի ներքոյ քարանձաւ լերան միոյ, և յորժամ եղև շարժն, պատառեալ բաժանեաց զկարծրութիւն վիմաց լերանն, և խորտակեալ քայքայեաց զնա՝ և իբրև զհողաբլուր սարեալ խճով քարով ի վե՛ր գեղջն և ծածկեալ զգեղն ողջոյն. և կորուսեալ անյայտ արար ընաւին:

Նաև ժամանակ շարժմանս այսորիկ, էր ժամանակ ձմերան և սաստիկ ցուրտ՝ քանզի ձիւնամեծ եղև ձմեռն այն՝ և ոչ թէ միանգամ կամ երկիցս և երիցս շարժեցաւ և դադարեցաւ,

այլ

այլ երկարեցաւ շարժումն մինչև 'ի վեց ամիս։ բայց մինչ յերկուս ամիս սաստիկ սաստիկ լինէր շարժն. քանզի լինէր՝ որ 'ի միում աւուր ընդ-տիւ և ընդ գիշեր, հնգանգամ և վեցանգամ շարժ լինէր. և էր, որ աւելի և պակաս լինէր։ և մինչև յերկուս ամիս այսպէս լինէր յամ̃ աւ-ուր, և զկնի երկու ամսոյն, 'ի տասն աւուրն միանգամ, և 'ի քսան աւուրն, և յերեսուն աւ-ուրն միանգամ գայր շարժն։

Եւ յայսմանէ պատճառէ ահաբեկք և սրտա-մեռք և խելաթափք էին լեալ ամ̃ենքն յահէ շար-ժին՝ որ յանկարծակի գայր. և թէպէտ բա-զումք փախստեամբ ձողոպրեալք ելանէին 'ի տանց՝ նոքա զերծանէին 'ի փլմանէն և 'ի մեռա-նելոյն, այլ յոլովք միայն 'ի ներքոյ փլուզեալ յարկացն և հեղձամղձուկք լեալք սատակէին։ վն̃ որոյ ոչ կարէին հանդուրժել և ի̃ յարկա-բնակել, այլ ելեալք ուրաքանչիւրոք 'ի բա-ցեայ արտաքոյ յարկաց, ոմանք առ դուրս տանց, և ոմանք յայգիս, և 'ի բուրաստանս, և ոմանք յայլ պատշաճաւոր տեղիս վրանօք և տաղաւարօք կային զժամու զայն, մինչև ցան-ցանել բարկութե̃ Տ̃ն։ քանզի յայտնի եղև բնակչաց աշխարհին, նաև ամենից տեսողա-ց, թէ ոչ էր այն ըստ կարգի սովորականի շարժման, այլ յայտնի պատիժ պատուհասի բարկութե̃ Տ̃ն հասեալ էր ի վ̃ նոցա ըստ նմանութե̃ն Նինուէացւոց։

Իսկ բնակիչք քաղաքին և գաւառացն, երբև տեսանէին զինքեանս պատժապարտս առաջի Տ̃ն, զի հանապազօր խրատէր զնոսա գաւազանաւ բարկութե̃, և նոքա եկեալ 'ի միտս մշտապաղատ աղօթիւք և խնդրուա-ծովք, ուխտիւք և պատարագօք, դիմեալ

կար

կարդայէն առ այն՝ որ կարողն էր ապրեցուցանել զնս 'ի վտանգէն, զի թէ պէտ մն պարտեաց մեղաց բարկութբ խրատեաց և արտմութբ յանդիմանեաց այլ արարչականաւ գթութբն և նախախնամականաւ ողորմութբն ողորմեցաւ նմ․ որոյ բնութբ իսկ է ողորմին արարածոց իւրոց ըստ մարգարէին բանի, գթած ողորմած է Տր երկայնամիտ և բազումողորմ։ Որև ոչ իսպառ մնաց 'ի բարկութե և ոչ յաւիտեան պահեաց զոխս․ այլ հեռի արար 'ի նոցանէ զմեղս նց ըստ բացատրութե երկնի և երկրի, և գթացաւ 'ի ստեղծուածս իւր որպս զհայր և զմայր իւր զաւակաց, մն զի յիշեաց թէ մարդիկ են և բաղկացեալք 'ի հողոյ։ Ափոխեալ տարածեաց իւր նոցա զգութ և զողորմութի իւր, և էբարձ 'ի նոցանէ զպատուհասն և ետ հաստատութի երկրի՝ և հանդարտութի աշխարհին, և զխաղաղութի մարդկան, որք կեան գոհանալով զնմանէ յամենայնում ժամում, զի թէ պէտ խրատելով խրատեաց այլ 'ի մահ ոչ մատնեաց։ Որովք յայտնեալ ցուցաւ ամենակարող զօրութին անմահի թգաւորութե նց, և գութ, և ողորմութի մարդասէր կամաց նորա։

---

Պատմութի վն գերեզմանին և ոսկերացն վարդապետին․

## ԼՕ։

ՈՐՊԷՍ ԳՐԵՑԱԼ Ի պատմութՆս վարդապետիս, որ նեն գութեամբ և հնարիւք ետ կոտորել զազգն Հոռոմոց Պարսից ազգին․ և զայս նախանձս և ոխս տակաւին ունին 'ի մտի ազգն Հոռոմոց․ և մինչև ցայսօր հնարին վրէժխնդիր լինիլ նախանձուն այնմիկ։ և ամաց յամս գան

մար

մարդիկք 'ի Հռոմոց ազգէն առ 'ի գողանալ զոսկերս վարդպատրկայ. զի տարեալ ՚ի մէջ իւրեանց կատարեսցեն իղձ նր զցանկամն իւրեանց ոգ̄ւ և յօժարի սիրտք իւրեանց ։

Այս եղև զի յամս և 'ի ժամանակս յետինս 'ի Թուականիս Հայոց Հազար և տասն ևերեքին. դարձեալ եկին յազգէն Հռոմոց արք երկու գողանալ զոսկերս վարդպատրկայ՝ որ Թաղեալ կայ իմէջ եկեղեցւոյն 'ի գիւղն խորդոմ 'ի Հայուձոր կոչեցեալ գաւառին 'ի վասպուրական աշխարհին ։ Արդ զոսկերսն վարդպատրկայ Թաղեալսն իմէջ եկեղեցւոյն՝ որ նախկին շինեալ է իղձ երեսաց երկրի իղձ բնականի գետնոյ. և ապա հողով ծածկեալսն զայն եկեղեցին և կուտեալսն զհող բազում իղձ նր՝ որ եղեալ է մեծ բլուր. որ կարծի 'ի տեսողացն թէ 'ի սկզբանէ յաւիտենից Ածաստեղծ բլուր է և ոչ շինովի. և հողն ծածկեալ է զեկեղեցին և առաւելեալ բարձրացեալ. և ապա յետոյ 'ի գլուխ բլրին միւսանգամ նոր եկեղեցի են շինեալ իղձ գագաթան ներքնոյ եկեղեցւոյն. և յայսմ եկեղեցւոջ կատարեն քահանայքն զժամակարգութիւն և զխօթն խորհրդս եկեղեցւոյ. Նաև գիւղականքն անդ գան և աղօթեն. և գիւղն ոչ է շուրջ բոլորիւ զեկեղեցեաւն՝ այլ յարևելից կողմն եկեղեցւոյն 'ի սիրտ բլրին. և յարևմտից կուսէ եկեղեցւոյն և բլրին ծովն է՝ զոր վանայ ծով կոչեն իբրև քսան կանգուն հեռի յեկեղեցւոյն ։ այլև գետ ջրոյ 'ի յարևելից կողմանէ գեղջն և եկեղեցւոյն գայ. և 'ի հարաւայնոյ կողմանէ նոցին անցանէ և խառնի 'ի ծովն ։

Այս եկեալ երկոքին Հռոմքն նախ ձևացուցեալսն զինքեանս իբր զայր առաքինի և հաւատարիմ և հրաժարեալք յաշխարհականաց իրաց.

այն

այնքան մինչ որ քահանայքն և ժողովուրդքն
հաւատացեալենն՝ և զբանալին եկեղեցւոյն 'ի
նոսա տուեալ և զնմ լուսաւոր եկեղեցւոյն և
ժամկոչ են կարգեալ: և նոքա թէ յետ յոլո
վից և թէ յետ սակաւուց ժամանակաց. 'ի դի
պող ժամանակի յարևմտից կուսէ եկեղեցւոյն
իբրև տասնևհինգ կանգնաւ հեռի եկեղեցւոյն
ծակեալ են զգետինն փորեալ են նաղմ. և այնմ
նաղմ փորելով յառաջ գնացեալ են զի թերևս
մտցեն 'ի ներքին եկեղեցին յորում ոսկերքն
վարդապետաց թաղեալ կայր. և զփորեալ հողն
նաղմին բերեալ են 'ի ծովն թափեալ 'ի գլխոյ
փլին. քանզի եզր ծովուն փուլ է՝ զոր ալիք ծո
վուն տարեալ է: և որովհետև գիւղն 'ի յարև
ելից կողմն բլրին էր՝ և արևմտից կողմն անբնակ
էր. յայսմանէ պատճառ է անքոյթ էր 'ի մարդկա
նէ տեղին. վասնորոյ արքն վստահացեալ զայս
գործէին: Արդ 'ի թափեալ հողոյն և 'ի հարե
լոյ ալեաց ծովուն՝ պղտորեալ են ջուրքն և պղ
տորութիւն ջուրցն խառնեալ է ընդ ջուրս գետոյն
և զաւխիլեր ընդ գետն գնացեալ. քանզի ջուրք
գետոյն ուռկան տուեալ կանգնեալ կան յեզր
ծովուն: Իսկ գեղականքն տեսանէին զի ջուրն
որ հանապազօր պարզ և յստակ էր այժմ պղ
տոր է. ասէին անձրև ոչ է եկեալ և հեղեղ ոչ
է իջեալ՝ և վն էր են ջուրքս պղտոր. ասէին ընդ
միմեանս և հնանային և խնդրէին զպատճառն.
և շրջելով և որոնելով պատահեալ են թա
փած հողին. և ապա գտեալ են զծակն և
զնաղմն. ապա կալեալ են զարսն զայնոսիկ և 'ի
ծածուկ և 'ի ներսագոյն տան արգելեալ. և
այնքան հնարեալ են գեղականքն մինչ արքն այ
նոքիկ զստոյգն ասացեալ են. թէ եկեալ եմք զի
զոսկերսն վարդապետաց հանցուք՝ և տարցուք

ապա՝ 'ի գեղականացն· որք խորհրդականքն էին լեալ թաքուն 'ի խառնաճաղանճ ազանց 'ի գիշերի միում զերկոսին զարսն զայնոսիկ եդեալ էն 'ի նաւ մի և հանեալ 'ի մէջ ծովուն և յառաջ խաղացուցեալ տարեալ 'ի մէջ ծովուն և կապեալ էին քար 'ի պարանոցս նց՝ և այնպէս թողեալ էն 'ի խորս ջուրց ծովուն։ Արդ՝ կատարումն գործոյս այսպէս եղեալ է. զոր ծերք և վաղեմիք մարդիկք պատմեցին. իսկ գեղականքն այնուհետև առաւել զգուշութ̄ պահէին զեկեղեցին զայն 'ի հանապազորդեան ժամանակի. իբր զաւանդութին ստացեալ յորդւոց 'ի հարց՝ 'ի փառս Ած. և այս եւ այսպէս։

Յաղագս շարժին որ եղև 'ի Վան քաղաքին. և խուռումն շրջակայ երկրին։

ԼԱ։

ԱՐԴ. Ի ԹՈՒ. ԱԿԱՆՈՒ. թեան Հայոց հազր և իննսուն և եօթին. յապրիլ ամսոյ յերկուսն. յաւագուրբաթու գիշերին՝ որ լուսանայր 'ի լոյս աւագ շաբաթ աւուրն. անցեալ հասարակ գիշերոյն և ժամանեալ ժամ առաւօտուն որև զառաւօտու աղօթսն կատարէին։ եղև յանկարծակի թնդիւն և գոռումն՝ որոյ զկնի շարժ ահագին. որ 'ի բնակչաց այնքան գաւառացն ոչըք էր տեսեալ այնպէս ահագին շարժ։

Յորմէ շարժմանէ բլաւ ներքին բերդի պարիսպն վանայ քաղաքին 'ի թաւրիզու դարգահէն մինչ 'ի ղանի բուրջն. և այլևս այսր և անդր բազումք տեղիք 'ի պարսպէն փլուզան և բլան. և որք ոչ բլան խախտեցան՝ զորս յետոյ քակեցին զամ և նոր շինեցին։

Նաև եկեղեցիքն վանայ քաղաքին ոմանք խախտեցան.

տեցան. և ոմանք աւերեցան. սբ. սահակ ա-
նուամբ եկեղեցին բնաւին աւերեցաւ. զոր
յետոյ խօջայ ախիջանն շինեաց: Եւ Էջմիա-
ծին անուամբ եկեղեցին խախտեցաւ. զոր սոյն
խօջայ ախիջանս զայն ևս նորոգեաց առաւել
քան զառաջինն: Եւ սրբոց առաքելոց եկեղե-
ցին 'ի ներսնոյ կողմանէն առաստաղն բլաւ.
զոր խօջայ ատոմեանք նորոգեցին: Եւ սբ. պօ-
ղոս եկեղեցւոյ կաթուղիկէն բլաւ. զոր գերա-
քենց վրրաքն շինեաց:

Եւ 'ի մաչիթացն, միայն մուստաֆայ փաշի
մաչիթն մնաց և սորա մինըէն. իսկ այլ մա-
չիթքն և իւրեանց մինըէքն ամէն փլան: և վե-
րին բերդի մաչիթի մինըայն ևս փլաւ:

Եւ բազումք տունք և ապարանք և շինուածք
փլան. և ներքոյ իւրծ առին զբազում մարդիկ
և զանասուն. և այնքան բազումք էին մեռեալքն
որ սայլիւ բարձեալ տանէին արտաքս 'ի քաղա-
քէն: և 'ի թաղելն ոչ բաւէին հատանել
զգերեզմանս. այլ պատառեալ զերկիր վիհ մեծ
առնէին և 'ի մեռելոցն զութն և զտասն պա-
տեալ կտաւով դնէին 'ի վիհն և հողով ծած-
կէին:

Եւ յաւուրս ութն անդադար 'ի շարժման
եկաց երկիրն, որք ոչ կարէին 'ի տունս բնակիլ.
այլ 'ի բացեայ վայրի վրանով կային. զի յայն
ութն օրն անդադար 'ի շարժման եկաց եր-
կիրն որպ զնաւ իմն երեսաց ջրոյ: և զկնի այնո-
րիկ սակաւ ինչ հանդարտեցաւ. որ 'ի չորս
օրն, և 'ի հինգ օրն, և 'ի տասն օրն միանգամ
շարժիւր. և այնպ մնաց մինչ որ յունիս ամիսն
լնցաւ. և ապա հաստատեցաւ երկիր ողոր-
մութեամբն Ա.Յ:

Եւ զկնի առաջնոյ շարժին իւրաքանչիւրք.

որք

որք զերծան 'ի մեռանելոյ. եկին 'ի տունս իւրեանց սկսան պեղել զհողն. և 'ի ներքոյ հողոյն հանէին զինչս և զմարդս՝ որք 'ի ներքոյ հողոյն մնացեալք էին։ Թէպէտ մեռեալքն անթիւք էին. այլ բազումք ևս կային՝ որք խնամօքն Ա.Յ կային կենդանիք, զորս հանին 'ի ներքոյ հողոյն. վն զի յետ տասնևհինգ աւուր կենդանի մարդ հանին 'ի հողոյ։

Այլ յաւուրս այսմ շարժմանս եղև գործ-ինչ յորոյ վերայ բազումք զարմանային. այր ոմն աղքատ և չքաւոր. ազգաւ հայ և հաւատով քրիստոնեայ՝ 'ի նոյն քաղաքէն վանայ։ այրս այս նախքան զշարժումն ելեալ 'ի քաղաքէն գնաց 'ի քարափոս անուանեալ գիւղն վն մուրանալոյ։ և կային այսմ առն երկու որդիք փոքր իբրև տասն ամաց աւելի կամ պակաս. և այսոքիկ երկու տղայքս մնացին 'ի տունս իւրՑ և հասեալք 'ի յերեկոյն ըստ հանապազորդեան սովորութեան ննջեցին. և 'ի գիշերին յորում շարժն եղև՝ սոցա տունն ևս բլաւ. և 'ի ներքոյ մնացին մանկունքն. Իսկ սոցա հայրն՝ որ գնացեալ էր 'ի քարափոս գիւղն. ննջեալ էր 'ի տան ուրումն. և 'ի լինելն շարժին անկեալ էր գերան տանն և խորտակեալ զոտս առնն. և յայսմանէ պատճառէ մնաց այրս այս 'ի գիւղն քարափոս մինչև համբարձումն, որ ողջացան բեկեալ ոտք նորա։ ապա ելեալ եկն 'ի քաղաքն և ետես փլուզեալ զտուն իւր. և համարէր ինքն և այլք ամքն թէ մանկունքն 'ի ներքոյ տանն մնացեալ մեռան. ևապա ժողովեալ զարս ոմանս էբեր անդր՝ որք պեղեցին զհողն ԺԱ. տեսին զմանկունսն կենդանի 'ի ներքոյ հողոյն. և հիացեալ զփառս մատուցին Ա.Յ. վն զի էր անցեալ աւուրք քառասուն և չորք զկնի շարժին՝ որք

Ծնացին մանկունքն ինքեանց հողոյ. և շնորհօք և ողորմութեամբն Ա.Յ կենդանի արտաքս ելին մանկունքն: և որք լուան և տեսին հիացեալ զարմանային. որոյ լուրն եհաս մինչև 'ի փաշէն քաղաքին. և տարեալ փաշէն զմանկունսն առաջի իւր և հարցեալ ստուգեաց զամ. և գրեալ 'ի քարտիսի զայս գործ՝ որ կատարեցաւ իվր մանկանցն. և պահեաց առ իւր 'ի յիշատակ սքանչելեացն Ա.Յ: Այլև հարցին զմանկունսն վս կերակրոյ, թէ զինչ ուտէին. և նոքա ցուցին սակաւ փշրանս հացի թէ զայս ուտէաք երբեմն երբեմն. և վս ջրոյ ցուցին ամանն ինչ յորում կայր բազկի թթու. որ 'ի ծարաւին զայն ուտէաք և զովանայաք. բայց զտիւ և զգիշեր ոչ գիտէաք: Եւ մանկունքն այնոքիկ կան ցարդ ևս կենդանի շնորհօք ամենակարողին Ա.Յ:

Այլև ամքն վանորայք երկրին վանայ փլուզեալք աւերեցան. վերին վարագ՝ և ներքին վարագ. և եկեղեցի սրբոյ հօրն թոդկայ. և մեծ եկեղեցին սալնապատայ վանիցն. շուշանից վանքն. ղուռուպաշայ վանքն. խեքուց վանքն. էրմէրայ վանքն. սրխու վանքն. բերդակու վանքն. կենդանանից վանքն. կունկու վանքն. անդուանրու վանքն. ալերու վանքն. արջակու վանքն: Եւ յայս ասացեալ վանորէից. երկու վարագ՝ և կունկու վանքն՝ և խեքուց վանքն միայն շինեցան՝ իսկ այլքն մնացին աւերակ: Եւ գեղորայք՝ որք 'ի վանայ բոլորն կային ամենեցուն շինուածքն բլան. և նոցին եկեղեցիքն ևս ընդ նոսին աւերեցան: Իսկ նորագեղի եկեղեցին մէկ արտաչափ 'ի յիւրտեղոյն իբրացոստեալ հեռացաւ և ապա բլաւ:

Եւ յայսմանէ շարժմանէս բազումք աղբիւրք որք յաւիտենից ժամանակաց բղխէին ցամաքեցան՝ որպէս և եղնաբերդի աղբիւրքն՝ որք վեց ջրաղաց բանեցնէին ամենեքին ցամաքեցան ։ որ եղբերդն անտի փոխեցին վասն չգոլոյ ջուրց՝ և տարեալ 'ի զաւրիկ շինեցին ։ Սոյնպէս և ըներքին փոդաս անուանեալ գիւղն՝ որոյ աղբիւրքն ցամաքեցան՝ և առ ի չգոյէ ջուրց տարան զայս ևս 'ի զաւրիկ շինեցին ։ Եւ աղբիւրք աւանաց գեղջն՝ որք էին աղբիւրք երկոտասանք ամենեքին ցամաքեցան ։ որք ոչ երևին այժմ ։

Եւ 'ի ձորն մեծափառի ուխտին հոգւոց վանից կայր լեառն մի մերձ վանիցն ։ որ և զանուն լերինն աբեղներ կոչէին ։ 'ի գիշերին՝ յորում շարժն եղև՝ հաստատուոյց արարչակերտ կարծրագոյն վիմական լեառնն այն՝ յահագին շարժմանէն խախտեալ բեկբեկեալ քայքայեալ զառախտորև սորեալ 'ի ձոր անդր փլուզեալ զձորն ամենայն լնոյր ։ և երիս արս 'ի ներքոյ իւր առեալ եսպան ։ և զճանապարհն խափանեաց ։ որ յայլմէ կողմանէ արարին զճանապարհ ։ և զջրղայն խափանեաց որ յայլում տեղւոջ շինեցին ։ զձորն լցեալ զբազում աւուրս արգել զգնացս ջուրց գետոյն ։ որ յետոյ զկնի բազմաց աւուրց առ սակաւ սակաւ ապա արար ջուրն ինքեան գնալոյ զճանապարհ՝ և գնա զգնացս իւր ։ Եւ 'ի գաւառն հաւու ձորոյ մերձ 'ի վանքն էր մեծու արտաչափ տեղմի գետինն սուզեալ յերկիր կրու ։ և եղև խոր և ահագին փոս մինչև յանդունդս ։ և 'ի միջոյ փոսոյն 'ի յանդնդոց ելեալ սեաւ ջուր և ծովացաւ անդէն ի մէջ փոսին ։ և կայ այնպէս մինչև ցայսօր ։

Եւ վանաց քաղաքի փաշէն և այլք իշխանքն ։ զամենայն եղեալ գործս զայսոսիկ գրով շարա

գրեալ առաքեցին 'ի քաղաքն կոստանդնուպօլիս. և ծանուցին թգւորին սուլթան իբրահիմ խանդքարին. թէ այսքան շինուածոյ քաղաքաց և գեղորէից. մաչիթաց և եկեղեցեաց աւերումն եղև: Բայց վանայ քաղաքի խօջէքն առաքեցին առ խօջայ ռօհիջանն՝ որ յաւուրսն յայնոսիկ 'ի կոստանդնուպօլիս էր՝ հրաման առնուլ 'ի թգւրէն վն վերստին շինութե աւերեալ վանորէիցն և եկեղեցեացն. որ և խօջայ ռօհիջանն առեալ զհրաման 'ի թգւրէն առաքեաց 'ի վան առ խօջայսն. և նոքա սկսան շինել զեկեղեցիսն քաղաքին՝ որք նախ պատմեցաք և զվարագայ վանից: Այս նախ կիրակոս վրդպտն, որ էր առաջնորդ վարագայ վանիցն յանձնէաւ շինել զժամատունն՝ զոր և շինեալ կատարեաց. և խօջայ ամիրխանն զսբ խաչի եկեղեցին. և մորխասչալապին զսբ ծածնի եկեղեցին. և խօջայ դիլանչին զսբ սիօնի եկեղեցին: և խօջայ յովանէսն զսբ նշանի եկեղեցին: զայսոսիկ եկեղեցիսս շինեցին՝ և մնաց բերդոյ եկեղեցին. և քառասուն աբեղայից եկեղեցին. և զվանից պարիսպն ևս շինեցին շուրջանակի բոլանդակ: Այս կատարեցաւ շինումն ներքին վարագայ վանիցն՝ և այլ վանորէից և եկեղեցեաց. և կան իւրաքանչիւրոք 'ի տեղիս իւրեանց ողորմութեն Այ՝ որում փառք յաւիտեանս:

Պատմութիւն և պատճառք կողոպտելոյ զանուանի վանքն Վարագ կոչեցեալ · և տանելոյ զաւագ նը Նշանն 'ի բերդն Խօշաբոյ · և դարձուցանելոյ անտի 'ի Վան քաղաք :

## ԼԲ:

## ՏԷՐՆ ԽՕՇԱԲՈՅ

բերդին որում սուլէյմանբէկ ասէին. եղև երբեմն զի զճանապարհորդ կարաւանն՝ որք 'ի վանայ գնային 'ի Թաւրէզ և 'ի Թաւրիզու 'ի վան՝ առ զկարաւանացն բեռինսն բռնութե բանայր՝ և որինչ նրաց և հաւանէր՝ սուղ ինչ գին ձգէր խլր տիրոջն և կորզեալ 'ի տիրոջէն յինքն առնոյր զինչսն. և պատճառէր թէ գնով գնեցի :

Նաև 'ի սոյն ժամանակի էր իշխան և հրամանատու վանայ քաղաքին անն մեծագոյն իշխան, զոր հուսէյնաղայ ասէին. որ էր 'ի նոյն քաղաքէն վանայ. առ որ մատուցեալ արանցն, որոց զինչսն և զապրանսն յափշտակեալ էր սուլէյմանբէկն. արարին զբողոքում անբաւանութեան զսուլէյմանբէկէն : Իսկ հուսէյնաղէն զորաւրեալն սուլէյմանբէկին ծանոյց 'ի դուռն Թագաւորին յաստամբօլ. վն որոյ հրաման եղև 'ի Թգրէն առ հուսէյնաղէն վն սուլէյմանբէկին. թէ զառեալ զինչսն դարձուսցէ առ տէարսն՝ և սուլէյմանբէկն ոչ դարձոյց. վն որոյ և հուսէյնաղայն առեալ զամն զօրսն վանայ. այլև ժողովեալ զամ շրջակայ զիշխանսն ազգին մարաց. ընդ որս էր և մեծ իշխանն մարաց եզդիշէր, որ էր տէր ջուլամէրկայ՝ և շատախայ. և այլոց բազմաց գաւառաց և բերդորէից. և նոքօք գնացեալ նստաւ խլր խօշաբու բերդին՝ յորում ամրացեալ նստէր սուլէյմանբէկն. և յերկս ամիս նստեալ մնային՝ և ոչ կարին ամ աւերեցին. վն որոյ սուլէյմանբէկն



անձար

անձար և ՚ի տարակուսի լեալ անհնար միաց.
զբազում կաշառս ոսկւոյ և արծաթոյ տուեալ
եզդիչէր մեծի պարոնին. զի թերևս զհուսէյն
աղէն և զայլսն զամենն առեալ ի բացգնասցէ.
որև կատարումն գործոյն եղև այնպէս. զի
առին զինչս բազումս ՚ի սուլէյմանբէկէն և ի
բաց գնացեալ ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս:

Զկնի գնալոյ նց̃ իբրև սակաւ ինչ աւուրք
իվերայ անցին. յայնժամ եկն առ սուլէյման
բէկն այր ոմն գոռոզ արիւնարբու և արիւն
ահեղ. յաղթող պատերազմող և անպարտելի
ախոյեան՝ որոյ զանունն ջօմար ասէին: Որում
պարգևեալ էր խոնդքար Թգ̃ւրն Օսմանցւոց
զպատիւ և զիշխանութի փաշայութե՝ և առա
քեալ էր երկիցս և երիցս ՚ի քաղաքս և յաշ
խարհս իշխել նց̃ ը̃ կարգի օրինացն Օսման
ցւոց. բայց սա ՚ի գնացեալ տեղիսն կարի բըռ
նութբ̃ և անիրաւութբ̃ վարեալ էր զիշխանու
թի. կեղեքելով՝ կողոպտելով՝ յափշտակելով.
և ը̃ ամենայնեան անիրաւութբ̃ վարելով. եթէ
ընդ սպայից եթէ ընդ ռամկաց: և ուրև գնա
ցեալ էր յամենից տեղեաց համբաւ անիրաւ
ութե և ամբաստանութե եկեալ էր առ Թգ̃ւրն
և առ վէզիրն: վասնորոյ յորժամ լուեալ ՚ի
փաշայութէ քաղաքաց՝ և եկն ՚ի դուռն Թգ̃ւրին
ոչևս յաւելլին տալ նմա զիշխանութի և զփա
շայութի: Նա այս գործս յոյժ ծանր և
վշտագին երևեցաւ ջօմարին. վասնորոյ ապս
տամբեալ ՚ի կողմանէ Թգ̃ւրին եւ ՚ի կոստան
դնուպօլսէ. և եկեալ ՚ի կողմանս բուրայու
և անկիւրիոյ: առ որս յարեցան արք սրիկայք
և ելուզակք. որք էին ամենեքեան գողք և
աւազակք. և աշխարհաւերք և նմանօղք
նոյին չարագործութբ̃. և նոքօք բնակէր ՚ի լե

րինս

րինս և յանապատս՝ և այնպէս անցուցանէր
զկեանս իւր: Եւ յորժամ յօժարէր կամք իւր
ծոքումբք իջանէր 'ի լեռնէն՝ և դարանամուտ
լինէր լմ̃ր Ճանապարհաց՝ և երթևեկ կարաւա
նաց խլէրայբալխաւ՝ զորս կոտորէր՝ և զորս
փախստական առնէր. և զոսկի և զարծաթ և
այլ զորինչ և կամէր առեալ գնայր: և ոչ թէ
'ի սակաւ աւուրս և 'ի ծածուկ վայս առնէր.
այլ յայտնի և համարձակ և 'ի բազում աւուրս.
այնքան մինչ զի երթևեկութ̃ն Ճանապար
հաց խափանեցաւ՝ որոյ համբաւն գնաց 'ի
կոստանդնուպօլիս և էհաս առ թգ̃ւրն: վ̃ն
որոյ հրաման ել 'ի թգ̃ւրէն կարգել զզօրա
գլուխ բազմօք զօրօք և գնալ պատերազմիլ ը̃ն
նմա և սպանանել. և կարգեալ զօրագլուխն յո
լովիւք զօրօք եկեալ պատերազմեցաւ ը̃ն նմա.
ոչ կարացին սպանանել՝ սակայն փախուցին 'ի
տեղւոջէն: Եւ չօմարն ուրեք գնայր զնոյն գործ
գործէր. վ̃նորոյ հրաման եղև 'ի թգ̃ւրէն առ
իշխանս և զօրագլուխս ամենից աշխարհաց՝ զի
ուրեք գնասցէ չօմարն. այնորիկ աշխարհի իշ
խանքն և զօրքն մարտուցեալ պատերազմեսցին
ընդ չօմարին՝ և սպանցեն: և թէ լիցէ ոք՝ որ
բերցէ զգլուխն և զնշանն չօմարին՝ զբազում
պարգևս և զմեծութիւ առնլոց է 'ի թգ̃ւրէն.
քանզի աջոյ ձեռաց ծկիկ մատն իմէջ ձեռաց
ափին մածեալ կպած էր անմեկնելի՝ սորին վ̃ն
ասացին զնշանն բերցէ: և յաղագս այսպիսեաց
հրամանաց թգ̃րին՝ ուրեք գնաց չօմարն ա̃մքն
զօրք և իշխանք աշխարհացն հալածական արա
րին զչօմարն. և յոչ գտանելն զտեղի դադար
ման 'ի հալածիլն իւրում չօմար՝ և գալով
եկն և էհաս մինչև սուլէյմանբէկն: և յա
ղագս առիւծասիրտ արիութե̃ն նր̃ և յաղթա
կանի

կանի պատերազմին ընկալաւ զնա սուլէյման բէկն՝ և ասաց․ եղիցուք երկոքեանս եղբարք՝ և պահեսցուք զհայրենի զիշխանութիւն մեր՝ և ի միասին վայելեսցուք ։

Դարձեալ այլևս պատմութիւն որ պիտոյ է 'ի մէջ այսմ պատմութեանս ։ Յայն վերոյ ասացեալ Հուսէյնաղէն 'ի պատճառէ իմեքէ արար ըղ սէր և զմիաբանութիւն ընդ մեծի իշխանին մարաց եզդիշերին՝ զի զդուստր եղբօր իւրոյ ետ 'ի կնութիւն եղբօր եզդիշերին ․ որոյ անունն էր խոսրով փաշայ ․ և այսպէս երկոքեանս եզդիշէրս և Հուսէյնաղայս կարի սիրով միաբանեցան և եղեն խնամիք և բարեկամք ։

Դարձեալ այլևս պատմութիւն ։ Այս Հուսէյն աղայս ․ յոյժ զօրացաւ և մեծացաւ 'ի մէջ քաղաքին վանայ ․ այնքան, զի սորին հրամանաւն էին փաշայն և ղադին՝ և ենկիչար աղասին՝ և ղուլար աղասին՝ և այլքն ամենքն ․ և ապա յիշխանաց քաղաքին տասն իշխան՝ ընդ որս էր և ղուլար աղասին ։ իսկ այլ իշխանքն փախստականք եղեն յահէ սորա ։

Այլև պատահեցաւ գործ ինչ այսպիսի ։ Ըստ սովորութեան է Օսմանցւոց ազգին որ զհին փաշայն մանզուլ առնեն և 'ի տեղի նորա 'ի դրանէ թագաւորին նոր փաշայ առաքեն, այսպէս և զվանայ քաղաքի հին փաշէն մանզուլ արարին՝ և նոր փաշայի մուսալիմ ուղարկեցին 'ի վան 'ի դրանէ թագաւորին ։ Իսկ Հուսէյնաղէն և հին փաշէն միաբանեալ ոչ ընկալան զեկեալ մուսալիմն նոր փաշային՝ այլ յետս դարձուցին յըստամբօլ ։ Իսկ վանայ քաղաքի պարոնայքն, որք վշտացեալք էին 'ի Հուսէյնաղայէն, գաղտ 'ի նմանէ և 'ի ծածուկ յոլով բանս ամբաստանութեան գրեցին զնմանէ՝ և ընդ դարձուցեալ

մուսա

մուսալիմին ուղարկեցին 'ի դուռն Թագաւորին.

Յետ սուղ ինչ աւուրց 'ի դրանէ Թագաւորին եկն Սինան անուամբ իշխան մի ենկիչարի աղասի 'ի քաղաքն վան. եմուտ 'ի բերդն, եւ տիրեաց վերին բերդին՝ եւ ամենից ենկիչարեացն. եւ յետ սղից աւուրց այս նոր եկեալ Սինան աղայս, որ ենկիչար աղասի էր՝ 'ի վերին բերդէն սկսաւ Թօփ ձգել խիստ ապարանից փաշային՝ աւերլով. Թէ հրաման է Թագաւորին խիստ քո գնալդ ։ վասն որոյ ելեալ գնասցես 'ի քաղաքէս, այլ ձգէր Թօփ խիստ տան Հուսէյն աղային եւ առաքէր զպատգամս առ նա Թէ մի պահեր զփաշէն այլ ուղեւորեա ։ Իսկ Հուսէյնաղէն եւ փաշէն երկուցեալք 'ի Թօփէն ելեալ գնացին 'ի ներքնոյ բերդի հիւսիսային կողմն մերձ Թաւրիզոյ դրանն, եւ մնացին 'ի տեղին, զոր աւեն պայթիտունք՝ եւ անդ ամրացան. զի Թօփին որ գայ 'ի վերին բերդէն ոչ պատահի այնմ տեղւոյ՝ զի քարափ լերինն 'ի վերուստ հովանի է խիստ նր, իսկ վանայցուն Թէպէտ եւ Թշնամիք էին Հուսէյն աղային՝ եւ ատէին զնա. այլ զի կարի երկնչէին 'ի նմանէ, վասն որոյ ժողովեցան եւ նոքա անդ Հուսէյնաղային ։

Իսկ ենկիչար աղասին առաքեաց զօրս 'ի բերդն խօշաբայ եւ զեկոյց սուլէյմանբէկին զեկեալ հրաման Թագաւորին՝ եւ զղօղէլն Հուսէյն աղային եւ զփաշային, իսկ սուլէյմանբէկն վասն անցելոյ քինուն՝ եւ նախանձուն վրէժխնդրութեան՝ բազմաւ ցանկութեամբ ցանկայր այնպիսւոյ լրոյ, ոչինչ դանդաղեալ՝ այլ շեշտակի յարուցեալ ինքն յոլովիւք զօրօք, առեալ ընդ իւր եւ զջօմարդն՝ զոր յառաջդ յիշեցաք՝ եւ գնացեալ հասին 'ի վանքաղաք ։ եւ 'ի շրջակայ գեղօրէից քաղաքին այսր եւ անդր շրջէին հանապազ

զի գուցէ 'ի ձեռս ածցեն զհուսէյն աղէն, որև շրջելով գնացին 'ի գիւղն արջակ, և անտի 'ի գիւղն խառակունիս, և գիւղս այս հուսէյն աղայինն էր՝ և առ 'ի վրէժխնդրութն ․քինու հուսէյն աղային զգեղի տանուտէրն 'ի ձող բարձրացուցեալ էսպան սուլէյմանբէկն ։

Իսկ անտի ելին սուլէյմանբէկն և չօմարն զօրօքն իւրեանց՝ գնացին 'ի վարագայ վանքն. և զորինչ համբաւ յառաջմէ լուեալ էին զմեծահանդիսէ ուխտէն վարագայ՝ այժմ աչօք տեսեալ և մօտ նկատեալ զննէին զնմ․ և մտախոհ եղեալ խոկային թէ այսպիսեաց հոյակապից և հուչակաւորաց մեծաշէնից վանից, գոն բազմաժամանակեայ մթերեալ ինչք և ստացուածք, կահք և կարասիք պղնձեղինաց, արծաթեղինաց, և ոսկեղինաց. և արդ ժամ է մեզ զի 'ի ձեռս մեր գրաւեսցուք զնմն ։ Իսկ յայսմանէ պատճառէ յանկարծակի կալան զնմն բնակիչս վանացն՝ կապեցին և պահէին 'ի կալանս, և մի մի բերեալ առաջի իւրեանց հարցանէին վն ստացուածոց վանացն՝ և խնդրէին 'ի նոցանէ․ և նոքա որինչ յայտէր ցուցանէին, և վն այլոցն ասէին թէ 'ի քաղաքն են տարեալ զամենայն և անդ պահեն, զի վն ահի գողոց և աւազակաց աստէն ինչ ոչ թողուն ։

Իսկ 'ի բնակչաց վանիցն, թէպէտ չարչարեցին զոմանս առաւել և զոմանս սակաւ, այլ զնս զնմն թողին, և 'ի նոցանէ ոմանք եգիտ հնար փախչելոյ փախեաւ անդառնալի, բայց երեք աբեղայք ծերք 'ի միաբանից վանացն, որոց անուանքն էին տէր յօհաննէս, և տէր սահակ, և տէր մօսէս․ զսոսա կալան և պահէին կապանօք և բազմաւ զգուշութբ, և ասէին․ այլք բնակիչքն մանկագոյնք են՝ ոչ են տեղեակք

պաշտարանաց վանիցս, որքա հինաւուրցք և ծերք են որքա գիտակք են ամենեւ։ Եւ բերեալ առաջի նախ հաւանականիւք բանիւք, և ապա սպառնալեօք խնդրեին ցուցանել նց զպաշտարանս վանիցն, և աբեղայքն ասեին մեք բնաւ ոչ եմք գիտակք յորոց դուքդ ասէք, քանզի կամօք և յօժարութե սրտի յանձին կալեալ զմահ և մեռանել և ոչ ցուցանել։

Եւ յետ բազմի հարցման և պատասխանւոյ սկսան չարչարել զնս. և նախ կախեցին զնս յոտից նց և խստագոյն հարին բրօք կարի անողորմ և անչափ։

Եւ ապա իւրաքանչիւր աբեղայից զերկոսին ձեռսն տարան յետսկոյս, և զերկու բոյթս ձեռացն կապեցին ի վ՜ր իրերաց, և արկին պարանս ի մէջ երկուց ձեռաց նց, և՛ի բարձր տեղւոջէ կախեցին զնս, և բերեալ զծանր վէմս եդին ի վ՜ր Թիկանց նց. և Թողին այնպէս 'ի կախաղանին, որք մնացին մինչև ցերեկոյ, որով քակեցան օդուածք երկոցունց ձեռաց նց, և աբեղայքն ողբալով աղաղակեին Թէ ոչ գիտեմք զխնդրելին ձեր՝ և անօրէնքն ոչ անսային։

Յետայսորիկ արկին գալարան չուան 'ի գլուխս աբեղայիցն, որ է այսպէս. զի զպարանս կանԹեղին որ բարակ է և պինտ. կապեցին և արկին' ի գլուխս աբեղայիցն բոլոր իբրև զօղ, և անցուցին փայտ ի մէջ պարանին, և սկսան մանել զփայտն, և 'ի մանել փայտին պարանն եւ ոլորեալ և մանեալ եղև՝ սաստկիւ պնդուԹե, և Թաղեցաւ ի մէջ մսոյ եւմորԹոյ գլխոյ աբեղայիցն։ և իբրև' ի մամուլս պնդեալ սեղմեալ եղև գլուխ նոցա, և ամքն միսք և մորԹք և երակք գլխոյն և պարանոցացն այտուցեալ արիւնոտուշոտք եղեն, և երկոցունց աչաց նոցա

համա

համարէին 'ի բաց ուտել 'ի տեղեացն, և աբեղայիցն անշնչացեալ և ուշագնաց եղեալ իբրև զմեռեալ անկանէին 'ի գետնի :

Իսկ ապա բերին զպարանս բարակ և պինդ՝ և կապեցին յերանս աբեղայիցն, և քարշեալ 'ի վեր կախեցին 'ի բարձր տեղեաց զիւրաքանչիւրոյն՝ և շուրջ զնոքօք բոլորեալ անօրէնքն և զօրքն իւրց հայհոյէին, թքանէին, այպանէին ասելով, զայդ.քան չարչարանօք կրէք՝ և ընդէր ոչ ցուցանէք զդարանան վանացն, և աբեղայքն ոչ ցուցանէին վնզի զմահ յանձն առեալ էին :

Զկնի սորա եկեալ չօմարն ինքն երբաց զծածուկ մարմինս աբեղայիցն, և էարկ դատառակ ի վ՜ր առնացի անդամոցն, և ինքն 'ի բերան իւր առեալ ատամամբն ծամէր զայն, յոր մէ յոյժ վշտացան աբեղայքն և անշնչացեալ անկան իբրև զմեռեալս :

Արդ զայսքան սաստիկ տանջանս կրեցին ողորմելիք աբեղայքն, և դրեթէ յիւրաքանչիւր չարչարանս յատուկ յատուկ մեռանէին և կենդանանային, և մանաւանդ 'ի վերջին չարչարանս յայս՝ որ կարի սաստիկ տանջանք էր և 'ի բազմաց տանջանացն ձնշեալ մաշեալ և վտանգեալ եղեն մարմնով որք ոչ զօրէին ի վ՜ր ոտից կանգնիլ : Զայսքան չարչարանս զորս յանուանէ յիշեցաք երևելիք և յայտնիքն էին, զորս 'ի շարագրութիւ բանիւ բերեալ գրեցաք. իսկ որք փոքրագոյնքն էին՝ զորս մեք թողաք դու զայն մտօք.քով իմացիս. և զայս ամենայն համբեալ ներգործէր անխծեալ և անողորմ, անԱԾ և մարդատեաց գազանն այն չօմարն :

Իսկ յետ այսքանեաց վշտաց և նեղութեանց, իբրև գիտաց չօմարն թէ աբեղայքն ոչ ցուցանեն

զդա

զդարանն՝ ինքնին իսկ յարուցեալ 'ի խնդիր-
րոնել և յուզել զդարանս վանիցն, քանզի
էառ 'ի ձեռն իւր զմուրճ, որ է քլունկ և
սկսաւ շրջագայիլ իմէջ վանիցն յեկեղեցին և
'ի տունն և յամենայն տեղիս, կանգնէր և հայէր,
և դիտեալ նկատէր զամենայն տեղիս, ապա ուր
և համարէր դոլ կարծիք և նմանութիւն դարա
նի, մինչ զի այնմիկ զոր 'ի ձեռին ունէր՝ բաղ
խէր զտեղին ։ Եւ այսպէս շրջագայելով եկն
և մտին 'ի մի յեկեղեցեացն՝ և յորժամ էհար
զկարծեցեալ տեղին, նոյն ժամայն ել ձայն
թնդման, վասորոյ վաղվաղակի քակեցին զտե
ղին և գտին զխոր մի լի ոսկեղինօք, վասնզի
զամենայն ոսկեղէն անօթս վանիցն անդ լցեալ
թաքուցեալ էին, զորս զամենայն արտաքս բե
րեալ ժողովեցին 'ի մի վայր ։ Եւ 'ի գտանելն
այնմիկ առաւել յորդորեցին՝ և բազմաց այնպի
սեաց դոլ զկարծիս դարան, և կարի որոնմամբ
սկսան հարկանել զամենայն տեղիսն ։ Եւ ան
տի գնացին յայլ եկեղեցի, և 'ի բախելն թըն
դաց տեղին, և վաղվաղակի քակեցին, և գտին
զդարան մի դատարկ զի ոչինչ գոյր 'ի նմա ։

Եւ թողեալ զայն գնացին 'ի միւս այլ եկեղե
ցին, և 'ի բաղխելն պատահեցաւ տեղին ուր էր
մեծ դարանն՝ յորում պահեալ էին զաւագ սբ
նշանն և զամենայն անօթս եկեղեցեացն ։ Եւ
վաղվաղակի քակեցին և գտին զդուռն դարա
նին, և մտեալ 'ի ներքս տեսին լի գանձիւ, և
զաւագ սբ նշանն բազմօք դաստառակօք պա
տեալ և իմէջ գեղեցկաշէն յարկեղ եդեալ, և
'ի վերոյ քան զամենեսեան անօթսն բազմեցու
ցեալ, զոր Սուլէյմանբէկն ինքնին 'ի գիրկն իւր
առեալ զսբ նշանն և էբեր արտաքս ։ Եւ ապա
արտաքս բերին զայլևս անօթսն, որ էր բազում

արծաթ

արծաթեղէն՝ էին սկիհք, և խաչք, և խաչ մի մարդաչափ որոյ կշիռն էր մէկ խոնդքարի լիտր, և նմ՟ իւր գրեալ ունէր դաւթի խաչ։ բազումք ոսկետուփ և արծաթապատ աւետարանք, և այլք գրեանք։ և արծաթեղէնք բշոցք և բուրվառք և կանթեղք։ և պատուճականք և մեծագինք շուրջառք, և վարագոյրք, և բեմի ծածկոցք, և այլև կահք և կարասիք՝ բազումք, զորս անդէն պահեալ էին, զմ՟ հանեալ բերին արտաքս։ որինչ արծաթեղէնք իրք էին եդին նմէջ մնդկի, և որինչ պղնծեղէնք էր խորտակեցին, և այլ զորինչ և գտին բարձին ձիոց, նաև զաէ՟ նշանն իւրով զարդուքն։ և կալեալ երեցմի բերին և կարգեցին գնալ ը՟ սրբոյ նշանին վմ՟ սպասաւորելոյ նմա։ և սուլէյմանբէկն և չօմարն զօրօքն իւրեանց առեալ զայն ամ՟ գնացեալ հասին 'ի խօշաբ։ Պ.րդ՝ ամենեքեանք անօթքն և ինչքն վարագայ այսպիսեաւ կերպիւ գնաց 'ի խօշաբ։ յորում ժամանակի էր թոռ՟ականն մեր հազարևհարիւր։

Իսկ երեքին աբեղայքն՝ որք այնքան տանջեցան, թէպէտ և տեսեալ ապրեցան զամիս մի՝ այլ իբրև զմեռեալ զեռուն, զի ձկլամահօք կենօք կային և ըղձային մահու, որև զկնի ամի միոյ հասեալ նմ՟ նոցա մահն հանդոյց զնս՟ 'ի տառապանաց իւրեանց։

---

Վասն գնալոյ հուսկերտոյն 'ի Ջուլամերկ·

ԼԹ։

ԻՍԿ ՃՈՒՄԱՅՆԵՐԳԱԿԻՆ և փաշէն՝ որք 'ի պայլթի տունան մտեալ էին և ողջեալ, մնացին անդէն այնպիսի մինչև յերկու ամիս, և թօփն 'ի վերին բերդէն հանապազ զներքին բերդն և զքաղաքն ծե

ծէր և աւերէր։ Ապա Հուսէյնաղայն նկատեալ խորհրդով գիտաց զի ոչ ուստեքէ գոյ նմա փրկութիւն եթէ ոչ 'ի խնամոյն իւրոյ յեղդիչէրէ մեծ պարոնէն. վասն որոյ յիւրոց հաւատարմաց զոմանս թարց ընաւլին ումեք գիտելոյ առաքեաց առ եղդիչէր ասելով. յայտ է քեզ զի իշխանքն վանայ և սուլէյմանբէկն խմթընամիքեն. արդ ոչ ուստեքէ գոյ ինձ հնար փրկութեան, եթէ ոչ 'ի քէն. վասն որոյ վաղվաղակի պարտիս հասանիլ ինձ յօգնութիւն։ Իսկ մեծ իշխանն եղդիչէր զհրաման արար իւրոյ իշխանի ումեմն՝ որոյ անունն էր միրաբէկ՝ առնուլ զզօրս և գնալ. և նա առեալ ընդ իւր զզօրս հազար և հինգհարիւր. պատրաստութեամբ յոլովից զինուց և մանաւանդ թփանքաց։ որոց փութանակի հասեալ յերկիրն վանայ 'ի պատեհաւոր տեղիս 'ի մերձակայս քաղաքին շրջէին. զի թերևս զհուսէյնաղէն 'ի ձեռս ածեալ առեալ գնասցեն։

Իբրև զայս ետես փաշէն թէ զօրքն եղդիչէրին եկին 'ի տանել զհուսէյնաղէն. խորհեալ 'ի միտս իւր գիտաց զի յետ գնալոյ նորա ինքն միայն մնայ. վասն որոյ փութացաւ ինքն և յառաջքան զհուսէյնաղէն ելեալ 'ի վանայ քաղաքէն իւրովք պաշտօնէիւք գնաց՝ յո̃ և կամեցաւ։

Նայց թօփն հանապազ 'ի վերին բերդէն ծեծէր զներքին քաղաքն և աւերէր, զի յառաջին շաբաթու աղուհացից սկիզբն արարին թօփձգելոյ՝ և մինչև 'ի Հոգւոյ գալստեան ձգեցին, որոյ վասն ձանձրացան ամենքն քաղաքացիքն իշխանք և ապայք և ռամիկք։ խորհուրդ արարին մեծամեծքն և ղուլլար աղասիքն, թէ վասն առն միոյ ընդէր է զայսքան չարչարանս կրել

մեղ, կալցուք զՀուսէյնեանն՝ և տացուք 'ի ձեռս իւրոց խնդրողացն։ և ոմանք զայս խորհուրդ ծանուցին Հուսէյնեանցին, և նա կամեցաւ զի զգլխաւորս այնմ խորհրդեանն՝ որք էին զուլլար աղասիքն, հնարիւքիմն սպանանել։ և այս խորհուրդ ևս յայտնեցաւ զուլլարաղասոյն և այլոց գլխաւորացն։ վ̃ որոյ ը̃ լուսանալ առաւօտուն, զուլլարաղասիքն և այլք գլխաւորքն իւրաքանչիւրոք առեալ զդրօշ նշանաց իւրեանց գնացին 'ի ներքին բերդին յայն դուռն՝ զոր խսկալի դուռն ասեն, անկեցին զդրօշն ի վ̃ պարսպին և աղաղակեցին՝ թէ զուլն դարձաւ՝ զուլն դարձաւ, իբրև զայն լուա̃ն սպայազօրքն, ամ̃քն առեալ զզէնս իւր̃ց ընթացան 'ի ներքոյ դրօշին իւր̃ց։ և մնաց Հուսէյն աղէն ինքն միայն և որդիք և ծառայք իւր, որ և երկուցեալ Հուսէյնաղայն՝ զի միգուցէ ըմբռնեսցեն զինքն, յայն ժամ ծառայքն Հուսէյնաղային պարանաւ կախեցին զնա 'ի ներքին բերդին պարսպէն, որ իջեալ գնացեալ խառնեցաւ 'ի զօրս եզդիշէրին, և զօրքն եզդիշէրին առեալ զՀուսէն աղայն գնացին 'ի շադաղ և անտի 'ի Ջուլամերկ առ եզդիշէր։ և այս ևս այսպէս։

---

Պատմութիւն վ̃ս ապստամբման պիղծ չամբրին.

Խ։

ՅՈՐԺԱՄ ՍՈՒԼԷՅՄԱՆ բէկն և չօմարն աւարեալ կողոպտեցին զվանքն վարագայ՝ և առեալ գնացին 'ի խօշաբ, անդէն մնացին մինչև յայտնութէ յիմնակն, ապա եկեալ լրտեսացն պատմեցին նմ̃, թէ ահաւանիկ Հուսէյնաղէն յայս նիշ աւուր ելանէ 'ի Ջուլամերկայ և գնայ առ խոնդքար թագ̃ւրն։ յայնժամ կամօք և խորհր

դակ

դակցութ̅ր սուլէյմանբէկին առեալ ջօմարն
զհարիւր այր և ի վ̅ր բերկրւոյ և արճիշու գնաց
՚ի պահել զճանապարհն հուսէյնաղային զի
թերևս սպանցէ զնա։

Իսկ այն հրաման թղթերին, որ՚ի վաղուց ժա
մանակաց եղեալ էր վ̅ս ջօմարին, թէ ուր և
երևեսցի ջօմարն այնմ աշխարհի զօրապետքն
զօրօքն իւրեանց մարտիցեն ընդ նմա, և սպանցեն.
որոյ սակս և փաշայն արզրումայ ՚ի լսելն իւր
զգալն ջօմարին, զամ̅ իշխան չորս հարիւր ա-
րամբք առաքեաց զկնի ջօմարին։ որոց եկեալ
հանդիպեցան ջօմարին ՚ի գաւառին կեղւոյ
ուրև մարտուցեալ կռուեցան ընդ ջօմարին և
յաղթեցին նմա՝ քանզի զօրքն ջօմարին հարիւր
էին և նք̅ չորս հարիւր, վ̅ս որոյ զզօրսն ջօմարին
զոմանս սպանին և զոմանս փախուցին։ և ինքն
ջօմարն ութն միայն արամբք եղեալ ՚ի կողմն
ինչ և զերծաւ ՚ի նոցունց, և կամեցաւ դառնալ
և գնալ ՚ի խօշապ առ սուլէյմանբէկն և յուղի
անկեալ եկեալ մինչ էհաս ՚ի կասըն ոստանայ։

Իսկ բաջ առօղն ոստանայ, որ զճանապարհն
պահէ, և զբաջն առնու ՚ի ճանապարհորդաց,
ետես զջօմարն ՚ի հեռաստանէ՝ և իմացաւ, որ
ջօմարն է, և վաղվաղակի ինքն զխանջալն իւր
՚ի բաց ձգեաց յինքենէ, և սկսաւ այսր և անդր
օրանելով շրջագայել՝ զայս արար պատճառա
նօք զի մի գիտասցեն զնա ոստանցի գող և սպան
ցեն։ Այլև ջօմարն ևս ետես զայրն ՚ի հեռաս
տանէ. և ասաց իւրոց արանցն՝ մեզ թէ միաս
ինչ հասանէ, յառնէս յայսմանէ հասանէ, վ̅ս
որոյ ՚ի հասանելն ձեր առ նա սպանէք զնա՝
և մի թողուք։ Իբրև եկեալ հասին առ այրն ջօ
մարն և արքն իւր, հարցին ցայրն թէ զի շրջիս,
և նա խաբեաց զնոսա և ասաց ճանապարհորդ
եմ

եմ և աստ եկեալ կորուսի զխանջալն իմ, և չըր-ջելով որոնեմ զի գուցէ գտայց զնա։ և 'ի լսելն զայս յառնէն սկսան ինքեանք ևս շրջագայիլ առ ի իմանալ զստոյգն։ և փոքրինչ շրջեալ այսր և անդր գտին զխանջալն, և այնու համարեցան իրաւացի Ճանապարհորդ գոլ զայրն, վ՞ որոյ ոչ սպանին այլ թողին 'ի գնալ։ և այրն քանզի հմուտ էր վայրացն, ընդ թաքնագնայ ձորակ ինչ, նախքան զանցանելն չօմարին զկապն, փութանակի էհաս 'ի գիւղն․ զեկոյց զօրականացն թէ աւազակն չօմարն եկեալ է 'ի կապն, և այս համբաւ վաղվաղակի հուչակեցաւ առ ամենեսեան զօրականս, որոց մջէն չեչտակի ձիարշաւ ընթացմամբ գնացին՝ ոմանք դէպ 'ի կապն, և ոմանք դէպ 'ի վերին Ճանապարհն․ և զերկոսին Ճանապարհսն կալան։ Իսկ չօմար ոչ գնաց ընդ վերին Ճանապարհն, այլ ընդ Ճանապարհս կապին եկեալ էմուտ 'ի կապն՝ և ընդ այն կամէր անցանել։

Այս է կապս այս այսպիսի ինչ․ զի է քարանձաւ բարձրագոյն, և 'ի ներքոյ քարանձաւին ծովն ծովացեալ է անհնով խորութբ, զոր Ա՛ծ միայնէ գիտելի որքանութի խորութե նորա բայց 'ի հնոց և 'ի վաղեմեաց ժամանակաց զսիրտ քարանձաւին իմաստութբ և բազմաւ աշխատութբ քարահատիւք արուեստաւորօք հատեալէն զքարն և արարեալէն զՃանապարհ մի որ ուղևորք գնան, բայց ոչ թէ լայն՝ այլ այն քան որ միայն մի բեռնատար գնայ՝ և ոչ երկու։

Իսկ չօմարն որ Ճանապարհաւ կապին մըտեալէր և գնայր, ոչ գիտէր թէ ժողովեալ են անդ մարդիկք վ՞ ինքեան՝ և պահեն զբերան կապին՝ վ՞ որոյ և անհոգ գայր, և յորժամ էհաս յայս կոյս յեզր կապին իմացաւ զայն և

յան

յանհնարին վտանգս աղէտից և տարակուսանաց ըմբռնեցեալ եղև, զի յառաջ ընդդէմ նր̃ գնալ երկնչէր՝ թէ միգուցէ թփանքաւ հարեալ սպանցէն, և յետս դառնալ ընդ որ եկեալն էր ոչ կարէր, զի յոյժ նեղ էր տեղին, վն̃ որոյ յամենից կողմանց անճարեալ մնայր յանհնարինս։ Իսկ հայեցեալ Ջօմարն տեսանէ մերձ ինքեան փոքրինչ զառիվայր տեղի՝ և սուրբ վիմաց իբր զուղինչ ձորակ իջեալ յեզր ծովուն, և թէ պէտ դժուարին էր. այլ 'ի տագնապէ սպանմանն, Ջօմար իջեալ իվայր 'ի ձիոյն կալաւ զպախուցն և ընդ այն ինքն և ձին իջին յեզր ծովուն։ ապա հեծաւ ի վր̃ ձիոյն և կալեալ զպախուց երիվարին, քաջադոյն պատրաստութբ̃ զընդեաց զինքն՝ և ուղղեալ վարեաց զերիվարն իմէջ ծովուն, և յորժամ վարեաց զերիվարն իմէջ ծովուն զառաջինն խորասուզեալ ընկղմեցաւ, և գրեթէ էհաս մինչև յատակս ծովուն՝ քանզի զբաղում ժամս անյայտ լեալ ոչ երևեցաւ։ և իբրև անցին ի վր̃ պահք ինչ՝ տեսին արքն, որք զբերան կային պահէին, զի 'ի հեռու վայրի ելին յերես ջրոյն երիվարն և Ջօմարն, և յայնքան հեռի վայրի ելին և երևեցան մինչ զի թփանք ոչ հասանէր, քանզի կամեցան ձգել զթփանս և սպանանել զնա, և զի ոչ հասանէր, վն̃ որոյ և ոչ ձգեցին։ Իսկ բազմաց գովութեց արժանին այն երիվար, բարձեալ զվերբեռեակն իւր և տանէր՝ ոչ թէ իբրև զցամաքային կենդանի՝ այլ իբրև զջրային կենդանի գնայր լողալով չնչէր, փնչէր, փուքն դայր. զանբաւ խորութի ջրոց ծովուն յուզմամբ հատանէր, և գնայր լողալով և եկեալ էհաս յեզր ծովուն և ել 'ի ցամաք 'ի կողմանս ոստանայ։

Նու յորժամ ել չօմարն 'ի ցամաք, ոչ գիտէր զատհմանս և զճանապարհս, կամ զցամաքային և զտղմային տեղիս վայրացն՝ և 'ի տագնապէ երկիւղին, վարեաց զերիվարն հանդէպ երեսացն և գնայր, ոչ թէ իմ՛ն երկրի այլ իմ՛ն օդոյ· որ և 'ի գնալն հանդիպեցաւ յոյժ սաստկի տղմային տեղւոջ որում լայնութիւն և խորութիւն բազում էր: այլև գիտէր ինքն չօմար նաև տեսանէր իսկ, զի բազմութիւք զօրաց գաւառին գրոհ տուեալ ընթանալով միտեն զկնի նորեան, եթէ դարձեալ գնայ ընդ ցամաքային վայրս՝ երկնչի անկանիլ 'ի ձեռս նոցա: վն՛ որոյ անդրէն ևս մտրակեալ զերիվարն վարեաց իմէջ տղմոյն, և թէ պէտ 'ի սակաւ ինչ տեղի գնաց, այլ յոլովութիւն տղմոյն արգել զնա իմէջ իւր զբազում ժամս, և բազմաւ ջանիւ և աշխատութե՛ այսր և անդր տարաբերելով հազիւ ուրեմն ել 'ի տղմոյն երիվարն և ընդ իւր է հան զչօմարն: Նու յորժամ ել 'ի տղմոյն չօմարն միւսանգամ վարեաց զերիվարն հանդէպ երեսացն առ 'ի փախչել, և ո՛չ առաջաք անհմուտ էր որպիսութե՛ վայրացն, ոչ գնաց 'ի կողմն ճանապարհին և կամրջին, որ և մօտ իսկ էր նաև զերծ անիւր իսկ, թէ գնացեալ էր, այլ գնաց հանդէպ երեսաց իւրոց: և 'ի գնալն իւրում պատահեցաւ շամբրամայ առուին ջրում ոչ գոյ հնար անցանելոյ բաց 'ի կամրջէն, զի յոյժ լայն է և խոր՝ և երկուց կողմանց թմբերն բարձր՝ ընդ որ մարդ և ձի ոչ կարէ իջանել և ելանել, և առ եզերբ այս առուին գնաց չօմարն սակաւ ինչ զառ ի վեր և դարձաւ՝ և եկն 'ի գիւղն կեմ կոչեցեալ:

Մինչ այսպիսի ամ՛ն անցք անցին ը՛ չօմարին, զօրք երկրին, որք գրոհ տուեալ շրջապատին ըն-

թանային

թանային զկնի յօմարին, եկեալ հասնէյաւուրս շամիրամայ ․ և փութացեալ կալան զանցս կամրջին՝ քանզի հմուտ էին վայրացն ։ Եւ ոմանք 'ի նոցանէ եկին 'ի գիւղն կեմ և գտին անդ զյօմարն՝ որ իջեւանէր 'ի ձիոյն և յանդաստանի ուրեք զօղեալ՝ որք և շուրջանակի պատեալ պաշարեցին զնա ։ և յօմարն ունէր ընդ իւրեան զչորս տապանչայ թփանք՝ զորս ուղղեց 'ի ձգել և ոչ էառ հուր՝ քանզի բարութն թրջեալ էր իմէջ ջրոց ծովուն և տղմոյն, և կայր 'ի տապակուսի զի քաղէին ոգիւքն և զօրք երկրին՝ որք շուրջ զնովաւ պատեալ կային, ոմն 'ի նոցանէ՝ որոյ անունն էր շէխուբէկ ․ քաջութե՛ անձապարեալ ուղղեաց զթփանքն հանդէպ յօմարին և ձգեալ եհար զգլուխն՝ և անդէն սատակեաց զչարն և զանիծեալն զայն յօմար ։ Եւ նոյնժամայն կտրեցին զգլուխն և զաջոյ ձեռն՝ առին և զձին, և տարան առ եզդիշէր պարոնն իւրեանց ։ և եզդիշէրն զձին պահեաց առ ինքն, և զգլուխն յօմարին և զաջոյ ձեռն նշան ընդ նմին առաքեաց 'ի կոստանդնուպօլիս առ թգրն ։ Եւ թգրն տեսեալ զգլուխն՝ և լուեալ զբոլխութն սպանմանն, և ուրախացեալ յոյժ պարգևեաց զբազում պարգևս պատուականս եզդիշէրին, այլ և զերկիրն տէրութ. նմա ինամեա, զորև արդէն իսկ եզդիշէրն տիրէ երկրին տէրութ., և որքան ինքն կենդանի է տիրէ ։

Բայց էր ձին հսկայաձև՝ բարձրահասակ՝ հաստաբազուկ՝ լայնալանջ՝ երկայնավիզ՝ կապուտագոյն՝ գեղեցկատես՝ սիգաձեմ՝ և իբր զբանաւոր ընտրող ժամանակին, և դիպուծածոյն ․ և ճանաչօղ տեառն իւրոյ ։ և կայ նա այժմ առ եզդիշէր պարոնն ․ և ստացեալ էն 'ի նմանէ հինգ քուռակ ։

Արդ սատակումն պղծոյն չօմարին այսպէս եղև ոճ և պատմեցաք․ ժամ է մեզ յայտնել զսատակումն սուլէյմանբէկին․ և զդարձումն սրբոյ Նշանին պատմել ՚ի վանայ քաղաքն։ Քան զի և պատմութիւնս մեր վն սրբոյ Նշանին է․ և ոչ վն ամբարշտաց արանց։

---

Պատմութիւն վն սատակման սուլէյմանբէկին։

## ԽԱ.

## ՈՐՊԷՍ ՊԱՏՄԵՑԱՔ

յառաջդ․ թէ սուլէյմանբէկն կողոպտեաց զվանքն վարագայ․ առեալ զամն անօթսն և զսուրբ Նշանն և տարաւ ՚ի բերդն խօշաբայ՝ և անդ պահէր։

Իսկ զի հոգւոց վանքն՝ որ յիշի ՚ի մէջ պատմութե վերափոխման սրբուհւոյ Ածածնին․ զոր ՚ի սրբոյ առաքելոյն բարդուղիմէոսէ շինեալ է․ և անդ ամփոփեալ է կենդանակիր պատկեր սրբուհւոյ Ածածնին․ այս վանքս յերկիրն խօշաբայ է ընդ իշխանութեն սուլէյմանբէկին։ Սորին վն յորժամ եկն սուլէյմանբէկն ՚ի խօշաբ․ կոչեաց առ ինքն զառաջնորդն հոգւոց վանից զտէր պետրոս եպիսկոպոս․ և իբրև երախտաւոր ձևանալով նմա ուրախութե ասէր՝ բերի ՚ի վարագայ զձեր մեծ սուրբ Նշանն։ Արդ՝ տամ զնա քեզ զի տարեալ դիցես ՚ի վանքն մեր՝ զի անդ կայցէ։ Իսկ եպիսկոպոսին նկատեալ մտօք՝ և խորհեալ թէ ոչ է մնալոյ այն իւրոյն․ վնորոյ պատասխանեալ էր ոչ դոյ հնար այդմ սրբոյ Նշանիդ առ մեզ մնալոյ՝ զի ՚ի բնէ հարց և ՚ի հաւուց նոցա է այդ ստացուած՝ և ոչ մեր։ և ոչ էր տարեալ պետրոս եպիսկոպոսն զսուրբ Նշանն ՚ի հոգւոց վանքն թէպէտ սուլէյման

բէկն

բէկն բաղում անգամ ասացեալ էր ։ Բայց և
ասացեալէր սուլէյմանբէկն թէ դու ոչ տա
նիս ․ ես այլոց քահանայից տամ, և առաքեմ
'ի վանքն ․ պատասխանեալէր եպիսկոպոսն՝ յորժամ
դու զքո նշանն առաքես 'ի վանքն ․ ես զմիա
բանս իմ առեալ ելանեմ անտի և գնամ ․ դու
գիտես և քո վանքն ։ ապա սուլէյմանբէկն
թողլէր տուեալ՝ և ոչ էր առաքեալ ։

Իսկ հայազուն քրիստոնեայքն՝ որք 'ի վան
քաղաքի և 'ի գաւառս նո էին՝ միահաղոյն
սրտաբէկ և միջակոտոր՝ տրտմաթախիծ ան
մխիթար լեալք զուգ զգեցան վս կողոպտե
լոյն վարդապ՝ և մանաւանդ վասն սրբոյ նշա
նին ․ և հանապազօր հաշէին, մաշէին, հե
ծէին, և հառաչէին, թէ զիարդ արդեօք իցէ
հնար փրկութն սրբոյ նշանին ։ Յորոյ այր ոմն
երևելի և բարեպաշտօն քրիստոնեայ 'ի խօ
ջայից քաղաքին վանայ ․ որ էր սա Ինքն խա
նէնց խօջայ Թումայի որդին ․ որոյ անուննէր
մօրխաս չալապի ։ այս մօրխաս չալապիս ա-
ռեալ զբաղում աղերս և եկեալ 'ի խօշաբ առ
սուլէյմանբէկն ․ մատոյց զաղերսն, և զբա
զում աւուրս կացեալ անդէն ․ նա և զբաղում
արս միջնորդս արկեալ աղաչէին զսուլէյման
բէկն վս փրկութն սրբոյ նշանին ․ և նա ոչ
հաւանեցաւ զի տացէ ։ Իսկ 'ի հազար ղուռու
շէն սկիզբն արար մօրխասչալապին տալով և
էհաս մինչ 'ի եօթնհազար ղուռուշն զի տա
ցէ զնր նշանն ․ և սուլէյմանբէկն ոչ ետ ։ և
յետ յոլովից աւուրց անդէն կեցոյ մօրխասչալա
պուն ․ իբրև ոչ ետուն զնր նշանն, ելեալ 'ի խօ
շաբայ տրտմեցելով և թախծեցելով սրտիւ
գնաց 'ի վան քաղաք ։

Իսկ ոմն ասէ մարգարէն ․ թէ զայր մեղաւոր՝

չարիք իւր որսան 'ի կորուստ. սոյնպէս և չարիք սուլէյմանբէկիս որսացին զինքն 'ի կորուստ՝ այսպիսեաւ կերպիւ. քանզի իշխանքն սուլէյմանբէկին արք տասն կամ ևս աւելի. խորհեցան 'ի միասին սպանանել զսուլէյմանբէկն. զի ասէին թէ, որքան սուլէյմանբէկն պարոն եղեալէ՝ երկիր և աշխարհ մեր բնաւին աւերեցան. զի ոչ երբէք դադարեցաւ հեծել չարժութեն՝ և հինահարութեն՝ և աւար՝ և կռիւ՝ և վրդովութեն՝ և որքան սա կենդանի է՝ գիտեմք զի ոչ լինի խաղաղութեն. վս որոյ սպանցուք զսա՝ զի խաղաղասցի խռովութի աշխարհիս մերոյ.

Զայս խորհուրդս արք ոմանք իմացեալ զգացուցին սուլէյմանբէկին. թէ երեքին փառաւորք իշխանքն քո՝ որ է մալայ ղասում՝ և մուստաֆայբէկ՝ և իբրահիմբէկ՝ գլուխ եղեալ են և այլովք ևս իշխանովք խորհեալեն առ 'ի սպանանել զքեզ. և սուլէյմանբէկն կալեալ զերեսին զիշխանսն զայնոսիկ եարկ 'ի բանտ կապեալ երկաթի շղթայիւք. և ըմբռնումն երից իշխանացս եղև յառաջին շաբաթին աղուհացից. իսկ կապեալ իշխանքս թղթով և միջնորդով՝ բազմաւ կերպիւ զաղաչանս և զխնդրուածս արարին առ սուլէյմանբէկն զի արձակեսցէ զինքեանս, և նա ոչ արձակեաց.

Իբրև գիտացին իշխանքն թէ ոչ արձակէ՝ այլ սպանանէ. խորհեցան զայլևս հնարս զի բերին առ ինքեանս զանձերն սուլէյմանբէկին. որոյ անունն ևս մուստաֆայբէկ էր. և 'ի բազում աւուրս յոլովիւ կերպիւ խօսեցան ընդ նմա՝ զի թերևս կարասցէ զհնար ինչ գտանել վն փրկութե նց. և 'ի խորհիլն և 'ի խօսիլն ասացին իշխանքն ընդ աներոջ սուլէյմանբէկին.

կին․ Թէ կարէիր դու փրկել զմեզ՝ մեք զքեզ իշխան և պարոն կարգէաք մեզ 'ի տեղի սուլէյմանբէկին․ քանզի և որդի իշխանի ես դու։ և արդարև որդի իշխանի էր այս մուստաֆայ բէկս։ արդ եթէ դու սպանցես զսուլէյման բէկն անպատճառ զքեզ կացուցանեմք իշխան 'ի տեղի սուլէյմանբէկին․ և յոյժ հաւատալն անբողջն բազմաւ երդմամբ և պէսպիսով բանիւ զուխտ հաստատեցին․ այնքան մինչ որ հաւանեցաւ բանից իշխանացն․ քանզի ոչ էր այր խորագէտ՝ այլ պարզամիտ՝ վն որոյ հաւանեցաւ։

Օ կնի սորին հնարեցին զգործ այսպիսի․ զի երից իշխանացս այսոցիկ կապելոցս՝ ունէին որդին և երկոցունցն երկու ծառայք․ Թաքուցին զսուրս 'ի ներքոյ հանդերձից իւրեանց․ և յարտաքուստ զգեցան զզգեստ կանացի՝ և ածին սաւանս իվ̄ր իւրեանց․ և ձևացան որ̄պ զհաւատարի կանայք։

Այսոքիկ երեքին արքս՝ որք և կերպացան կանայք և սուլէյմանբէկի աներ մուստաֆայ բէկն․ յաւուր միում ընդ ծագել լուսոյ աւուրն ելին և ուղղեցան՝ և գնացին 'ի բերդն․ եկին և հասին յառաջին դուռն բերդին․ և դռնապանքն բերդին և այլ արքն տեսանէին զի սուլէյմանբէկի աներն գնայ՝ և ունի առաջի իւր զփոքրիկ մատաղ մանուկ որդին իւր՝ և երեք կանայք զկնի նր․ Իբրև եկեալ հասին 'ի դուռն բերդին՝ յայնժամ դռնապանքն հարցումն արարին 'ի մուստաֆայբէկէն վասն կանանցն․ և նա ասաց, թէ կանայք կապելոց իշխանացն են․ երթան առ կինն սուլէյմանբէկին աղաչել զնա՝ զի և նա բարեխօս լիցի առ սուլէյմանբէկն վասն արանց սոցա․ զայս բան իբրև լուան դռնապանքն թոյլ ետուն 'ի գնալ՝ և

նոքա անցանելով ընդ ամենայն դրունս բերդին հասին մինչև 'ի վերին դուռն. և անդ ևս հարցումն արարին դռնապանքն. և մուստաֆայբէկն սոցին ևս արար պատասխանի ըստ առաջնոյ կերպին վասն որոյ դռնապանքն թող ետուն. քանզի ոչ ոք և տեսանէր զմուստաֆայբէկն՝ և առաջինն զտղայն. և լսէին զպատասխանին, աներկբայ հաւատային. զի համարէին թէ ոչ յերեկն և յեւանդն գնայ և գայ մուստաֆայբէկն առ սուլէյմանբէկն՝ սոյնպէս և այժմ, վասն որոյ թողուին 'ի գնալ.

Իսկ նոքա անցանելով զամենեսեան դրունս եկեալ հասին յապարանս սուլէյմանբէկին. և եկեալ կացին 'ի դուռն տանն՝ յորում սուլէյմանբէկն ննջէր 'ի գիշերի. որև յայնմ ժամու տակաւին իմէջ անկողնոյն կայր՝ բայց էր արթուն. և կինն սուլէյմանբէկին և երկու աղախինքն ևս 'ի տան անդր. Իսկ նախեմուտ 'ի ներքս 'ի տունն մուստաֆայբէկն. եբաց սուլէյմանբէկն զերեսն և ետես զաներն իւր 'ի տանն՝ և երեք կանայք արտաքոյ դրան տանն՝ և դարձեալ ծածկեաց զերեսն անկողնաւն. զի համարեցաւ զկերպացեալ կանայսն ստուգիւ կին գոլ. և կարծեաց թէ վասն կապելոյ իշխանացն բարեխօսելոյ գան. վասն որոյ ծածկեաց զերեսն իւր: Իսկ առժամայն չեչտակի ընթացեալ կերպացեալ կանանցն և անկան ի վր սուլէյմանբէկին. և սրովք իւրեանց ծակոտեալ խողխողեցին և սպանին. և սատակումն սուլէյմանբէկին եղև յաղուհացից հինգերորդումն շաբաթու յուրբաթօրն. վասնզի յորում աւուր սուլէյմանբէկն զվարագ կողոպտեաց. 'ի բոլորել տարւոյն 'ի նոյնում աւուր և ինքն սպանաւ:

Յետ

Յետ սպանման սուլէյմանբէկին ․ եկին երեքին արքն սպանօղք սուլէյմանբէկին․ փութանակի բացին զդուռն բանտին․ և հանին ՚ի կապանաց և ՚ի բանտէ զերեսին կապեալ իշխանսն ։ որոց ելեալ ՚ի բանտէն եկին ՚ի դուռն բերդին․ եկին և ժողովեցան առ նոսա և այլ ևս ուխտադիրք ընկերքն իւրեանց․ և այլևս արք յոլովք՝ և աղմկեալ խօսէին ։ Իսկ երեքին սպանօղք արքն դարձեալ մտին ՚ի բերդն․ և գնացին ՚ի տունն՝ յորում սպանին զսուլէյմանբէկն․ և առին զգլի մարմնոյ նր՝ պատեցին ձորձով ինչ․ և բերին արտաքս ՚ի դուռն․ բերդին իմէջ անբոխեալ արանցն․ թէ տեսէք ձերովք աչօք և հաւատացէք․ զի անկարծիք և ստուգիւ սպանաւ սուլէյմանբէկն ։ Իբրև արկին զգէշն իմէջ նց՝ նոյնժամայն նք երեքին սպանօղքն և անէրն սուլէյմանբէկին , փութանակի դարձան և մտին ՚ի բերդն՝ և փակեցին զդուռն բերդին՝ և յինքեանս կալան ըզ բերդն ։ այնու միտօք թէ մեք սպանաք զսուլէյմանբէկն․ վասնորոյ մեք լինելոցեմք իշխան ՚ի տեղի նորա ։

Իսկ կինն սուլէյմանբէկին ելեալ ՚ի գլուխ պարսպի բերդին բազում աղաղակեաց դէպ ՚ի քաղաքն՝ և յաղագս բարձրութեն ոչոք լուաւ ։ Իբրև ետես կինն թէ ոչ եղև լուեալ ձայն նր ՚ի քաղաքին․ էառ զգլուխ ղաւուխն սուլէյմանբէկին և զքիշմիրի շալն նր․ զի յորժամ սպանին զնա ՚ի գլուխն էր՝ և էր արիւնաթաթախ պատեաց զղաւուխն շալովն և ձգեաց իմէջ քաղաքին․ և ղաւուխն գնացեալ անկաւ առաջի տան ումեմն հայոյ քրիստոնէի՝ որոյ անունն էր խօճայվատոյ, որ ՚ի տեսանելն ծանեաւ զի պարոնի ղաւուխն էր․ բայց վն արիւնաթա

թախ

թախ գոլոյն երկխուղակարծ եղև թէ մի գուցէ սպանեալ իցեն զպարոնն. որք և առժամայն փութացեալ հասին 'ի դուռն բերդին, և տեսին զի հաւաստեաւ սպանեալ էր սուլէյմանբէկն.

Այս խօջայ վառոյ ատացեալս. վասն զի բարեկամ էր սուլէյմանբէկին զի զսիրալի խնամս և զպայծառութիւս բազում տեսանէր 'ի նմանէ. սա ծածկաբար ասպնեաց զարս՝ և զեկոյց եղբարց սուլէյմանբէկին. որոց անուանքն էին աւագին իբրահիմբէկ. և կրտսերոյն էվլիայբէկ. քանզի նոքա իւրաքանչիւրոք յիւրեանց բերդոջն կային. որք և ոչ կարի հեռիք էին 'ի խօջաբայ՝ որոց 'ի լսելն փութանակի զօրականօք հասին 'ի խօջաբ. Իբրև եկին 'ի դուռն բերդին՝ ոչ բացին նոցա զդուռն սպանօղք արքն՝ որք մտեալ էին ի մէջ բերդին. և 'ի սակաւ աւուրս մնացին այսպիսեաւ աղմկաւ ամքն արք. և յաւուր միում աղմկեալ ժամու եղբայրն սուլէյմանբէկին էվլիայբէկ. էհար սուսերբ զմալաղասուտն և սպան զնա. քինախնդիր լեալ արեան սուլէյմանբէկին.

Այս զկնի անցելոցս այսոցիկ. կինն սուլէյմանբէկին՝ որ տակաւին ի մէջ բերդին էր. 'ի միում գիշերի թարց ընաւին ումեք գիտելոյ ինքն միայն կախեաց զպարան 'ի բերդէն և 'ի վեր քարշեաց զայր մի յարանցն իբրահիմբէկին 'ի վեր 'ի բերդ անդր. և նոքա քարշեցին 'ի վեր զայլևս տասն այր՝ ընդ որս և զիբրահիմբէկն. ապա այս իբրահիմբէկս և արքն իւր հետամուտ եղեն սպանօղ արանցն սուլէյմանբէկին՝ որք անդ 'ի բերդին էին. և նոքա փախուցեալ մտին 'ի Ջաբախանէն. և իբրահիմբէկն հուր էարկ 'ի Ջաբախանէն յորմէ հրոյ

հրդեհեալ

հրդեհեալ բարութն 'ի վեր էառ զտունն՝ ը նմին և զարսն. և ընդ յօդս ցնդեաց՝ որք և փերթ փերթ եղեալ հոսեալ 'ի վայր իջանէին:

Այնուհետև Իբրահիմբէկն տիրացաւ բերդին և ամենայնի երկրին. և սորին եղբայր էվլիայբէկն գնաց 'ի տեղի իւր յառաջին բերդն ուրև նախ բնակէր՝ որոյ զանունն ապաղայ աւէին. Արդ զաստակումն սուլէյմանբէկին պատմեցաք. այսուհետև պատմեսցուք զպարտութն Իբրահիմբէկին և զդարձն սորա Նշանին 'ի վան քաղաք:

---

Պատմութիւն վ՜ պարտութն Իբրահիմբէկին. և դարձի սորա Նշանին 'ի Վան քաղաք:

ԽԲ:

## ԱՐԴ Ի ՕՐՌԻՌՅՍՄ

ամի՝ որ Էվլիայբէկն դարձաւ և գնաց յառաջին բերդն իւր՝ յապաղայ կոչեցեալն. և Իբրահիմբէկն էմուտ 'ի բերդն խօշաբայ. և ընդ իւրով իշխանութբ նուաճեաց զբերդն և զգաւառսն. և յաւուրց յաւուրս առ սակաւ սակաւ հարցեալ տեղեկացաւ ամենից թշնամեաց իւրոց. նաև այնոցիկ որք 'ի սպանումն սուլէյմանբէկին համախոհք էին: և օր աւուր սակաւ սակաւ զամենն զնոսա կոտորեաց՝ և ոչումեք խնայեաց. այլև կալաւ զկինն և զդուստրն սուլէյմանբէկին և եդ 'ի բանտի. և բազմակերպիւք չարչարանօք չարչարեաց զնո՝ զի ցուցանիցեն ըզ մնացուածս գանձուց սուլէյմանբէկին. իբրև էառ զոր ինչ էգիտ՝ և յետոյ զնոսին եսպան:

Սոյն այս Իբրահիմբէկս վերստին կոչեաց առ ինքն զառաջնորդն հոգևոց վանից զպետրոս

րոս եղկելին. և ասաց տամ ՝ի քեզ զՏէր նշանն տար ՝ի վանքն մեր՝ և անդ պահեա զնա՝ զի անդ կացցէ. և պետրոս եղկելին սմին ևս արար զպատասխանի ոմ̃ և արար սուլէյմանբէկին. և ոչ տարաւ զՏէր նշանն ՝ի վանքն. այլ մնաց ՝ի բերդն խօշաբայ:

Իսկ յորժամ յորմէհետէ սուլէյմանբէկն զՏէր նշանն հանեալ ՝ի վարագայ եբեր ՝ի խօշաբ. գրեթէ ցասումն և պատուհաս տեղացեալ լցաւ յերկիրն խօշաբայ. զի երկիրն ոչ տայր զպտուղ՝ և թէ լինէր՝ հազիւ զսերմն առնուին. և հեծելարժութիւն և խռովութիւն լցաւ գաւառն: այլ և կենդանիքն ոչ աճէին այլ տակաւին պակասէին: այլ և յաւուրս ամառան ՝ի ս̃բ գրիգորի պահոցն սաստիկ և անչափ ձիւն եկն՝ որք բազումք ասէին թէ երկու կանգուն նստաւ. և անասունք ամենայն առանց արօտի մնացին վ՟ն ձեանն յոլովութեն. և այնու պատճառաւ անասունք յոլովք սովամահք եղեն: Նաև այսոցիկ անկաւ մահ անասնոց յերկիր նոցա. և որում գայր հազար գլուխ ոչխար. հարիւր գլուխ ուրեմն մնայ: վ՟որոյ բնակիչք երկրին խօշաբայ ժողովեցան առ իբրահիմբէկն՝ և ծանուցին զաւերումն աշխարհին. և աղաչէին դարձուցանել զՏէր նշանն ՝ի տեղի իւր՝ զի վերասցի պատուհասն ՝ի նոցանէ: Նաև ինքն իբրահիմբէկն դողեցաւ. զի ցաւ դողութե յայտնեցաւ ՝ի մարմինն: այլ և ցաւ իմն ոմ̃ թէ քամի գոյացաւ ՝ի նա՝ որ կալաւ զմէջն և ըզբարձն և զորունսն և հանապազ տանջէր զնա. այլ և կինն իբրահիմբէկին հանապազ թախանձէր զնա. և պէսպիսովք բանիւք խօսէր ընդ նմա. զի դարձուսցէ զՏէր նշանն ՝ի տեղի իւր. և վ՟ն վերայ ասացեալ պատճառացդ. հաճեցաւ

Իբրահիմբէկն զի դարձուսցէ զսբ̃ Նշանն 'ի տեղի իւր։

Որևս ազդեցաւ այս վանայ քաղաքի ժողովրդոցն։ և նոքա լցան երկնային խնդութբ̃. և նոյնժամայն վերոյ ասացեալ մարխասա չալապին առեալ ընդ իւր զոմանս 'ի ժողովրդականացն. և փութանակի հասին 'ի բերդն խօշաբայ. մատեան առաջի Իբրահիմբէկին խօսեցան առնա բանիւք աղաչանաց. և եդին առաջի նր̃ ըզդրամս երկու հազար ղուռուշ նաղտ, և առին զսբ̃ Նշանն և զմնացորդս անօթոցն՝ եթէ զխաչ և եթէ զայլ ինչ՝ եկին 'ի վան քաղաք. վն̃ որոյ դրոշ տուեալ ամենից ընկեց գաւառին քրիստոնէից զային յերկրպագութի սրբոյ Նշանին՝ և արտասուօք գոհանային զԱ̃յ՝ որ եբեր զսբ̃ Նշանն միւսանգամ առ նս̃։ Իսկ 'ի շուրջառացն զերկուսն առեալ էր չօմարն՝ և վն̃ իւրն կարեալէր զչնթիան և զգեցեալ։ Իսկ զսբ̃ Նշանն ոչ ևս տարան 'ի վանքն վարագայ. զի կասկած և զերկիւղ կրեալ. մտածելով զանցեալ արհաւիրսն. այլ պահեցին 'ի վան քաղաքին 'ի տիրամայր անուանեալ եկեղեցին։ Իսկ եղև դարձ սրբոյ Նշանին 'ի վան քաղաք հազար և հարիւր և չորս թուականիս մերոյ. շնորհօք Տն̃ մերոյ Յի̃ Քի̃ որում փառք յաւիտեանս ամէն։

---

Պատմութիւն վն̃ նշխարաց սրբոյն Յովհաննու կարապետին, որ յայտնեցաւ 'ի ժամանակս յետինս, զոր 'ի հին Ջուղայ պահեալ կայր 'ի վաղուց՝ ժամանակաց։

## ԽԳ.

## ՐԴ Դ ԺԱՄԱՆԱԿԻՆ

յորում թգ̃ւրն Պարսից շահաբաս կոչեցեալն՝ մեծն և առաջինն էհան զժողովուրդսն Ջուղայեցւոց 'ի հին Ջու-

Ջուղայոյ, և վարեալ տարաւ զնա յերկիրն Պարսից 'ի քաղաքն սպահան։ Իսկ ժողովուրդն Ջուղայեցւոց ոչ կարացին զինչս և զստացուածս իւրեանց զամեն բառնալ և տանիլ ընդ ինքեանս. քանզի հրաման թ̃գրին սաստիկ էր իւ̃ իշխանացն, որք որով փութացուցանէին զնա ճեպով ելանել 'ի տեղւոյն և գնալ՝ վն̃ որոյ ոչ կարացին առնուլ ընդ ինքեանս զինչս իւրեանց, այլ իւրաքանչիւրոք պահելով զթաքուստ և զգաղտուստ արարեալ 'ի յարկս, և 'ի խորս, և 'ի վիհս, և 'ի պատշաճաւոր տեղիս, և այնպէս թողեալ գնացին։ Իսկ շրջակայ գեղորէից ընակիչքն և գաւառականքն, որք մերձ էին հին Ջուղայոյ. գիտէին զպահուստն, զոր Ջուղայեցիքն արարին. վն̃որոյ գային նոքա յարաժամ և յուզէին. որոնէին, և պեղէին զհող և զքար յաղագս գիւտի ընչից. և բազումք զբաղում ինչս գտանէին։

Ի սոյն եղև՝ զի այր ոմն այլազգի և կրօնիւքն մահմետական. 'ի գեղջէն որոյ անունն ասեն մէհրամ. եկեալ 'ի հին Ջուղայ 'ի յորոնումն և 'ի յուզումն ընչից։ և եկեալ յեկեղեցին՝ զոր վերին կաթան ասեն. անդ յորոնելն իւրում 'ի յարևելեան որմն աւագ խորանին. եգիտ զաման ինչ խեցեղէն եդեալ՝ և իմէջ ամանոյն զփայտեղէն արկղ մի փոքրիկ՝ որ է ղութի։ Իբրև էհան զարկղն փայտեայ 'ի միջոյ խեցեղինի ամանոյն՝ և եբաց զփայտեայ արկղն. իսկոյն բուրեաց նման յորդադոյն անուշահոտութ̃ի. և այնու զգաց 'ի յոգի իւր այրն այլազգի թէ նշխարք սրբոյ է այն. և էր իմէջ արկեղն մասունք ոսկերաց մանր և մեծ. և ընդ նոսա կտոր մի մագաղաթ՝ և իվերայ գիր ինչ գրեալ։ Ի առեալ այրն զարկղն զայն ոսկերքն և մագաղա

թիւն

Թիւն տարաւ 'ի տուն իւր, տեսանել Թէ զինչ պարտ է խորհիլ վ՟ն նորա. և մնաց նշխարն 'ի տանն ն՟ր աւուրս բազումս: և սկսաւ ինչք և ստացուածք ն՟ր օր աւուր նուազիլ. և կենդանիքն և անասունքն մեռանիլ. և ամ՟քն ինչք ն՟ր չնչեցան մինչև որդիքն ևս մեռան: Ու եկեալ այրն 'ի միտս իւր գիտաց՝ Թէ 'ի նշխարացն է պատահումն այն՝ որ դիպեցաւ նմա. վ՟նորոյ հանեալ զնշխարսն 'ի տանէ իւրմէ այնուհետև տարեալ 'ի վայրի և 'ի բացեայ տեղիս իմէջ քարակուտաց ինչ պահեաց զնա՝ զի Թերևս վերասցի ցասումն Տ՟ն 'ի տանէ ն՟ր. և ոչ եղև վերացեալ:

Յետայսորիկ եկեալ այլազգի այրս այս. 'ի հռչակաւոր ուխտն 'ի վանք սրբոյ նախավկային, որ 'ի դարաշամբ կոչեցեալ գեղջն է. և անդ յայտնեաց զամենայն որպիսուԹիւն եպիսկոպոսի ումեմն. որոյ անունն էր Շմաւօն. որ էր նա խածանօԹ այլազգւոյն այնորիկ 'ի վաղուց ժամանակաց. իսկ եպիսկոպոսն պատուիրեաց բերել զայն առ ինքն: և իբրև եբեր այլազգին զարկղն և ետ ցեպիսկոպոսն. և 'ի բանալն առժամայն բուրեցաւ հոտ անոյշ և էլից զտունն. և ետես զմասունսն նշխարացն. և առեալ զկտոր մագաղաԹն և ընԹերցաւ՝ և էր գրեալ ի վ՟ր նորա այս ինչ:

Այս է մասն նշխարաց սրբոյն յովհաննու կարպետին. զոր գրիգոր լուսաւորիչն եբեր 'ի հայս. և եդ 'ի քաղաքն խորամ. իսկ 'ի յաւերման խորամ քաղաքին. չորս հարիւր և քսան ևմէկ Թուին Հայոց բերին 'ի Ջուղայ: Այսքան բանքս գրեալ էին ի վ՟ր մագաղաԹին. և եպիսկոպոսն շմաւօն գոհացեալ զԱ՟Ծ ընդ գիւտ նշխարաց սրբոյն յօհաննու, և լցեալ

ուրախութեամբ մեծաւ, և հաճեալ զմիտս այլազ-
գւոյն առնեալ նմա զինչս, և առեալ զնշխարսն
'ի նմանէ. և այրն գնաց 'ի տեղի իւր։

Եւ յետ աւուրց ինչ յայտնի եղև այս ժո-
ղովրդականացն Ջուղայեցւոց գնացելոցն յաս-
պահան՝ որոց պետ և գլուխ էր խօջայ Նազարն,
ոչ միայն Ջուղայեցւոց այլև ամենայն հայազուն
քրիստոնէից բնակելոցն ընդ թագաւորութեամբն
Պարսից, քանզի յոյժ հզօր և երևելի էր խօ-
ջայ Նազարս, նա և սիրելի թագաւորին Պարսից
շահաբասին։ Եւ այս խօջայ Նազարս առա-
քեաց զարս ոմանս 'ի Ջուղայեցւոց առ եպիսկոպոսն
շմաւօն՝ և խնդրեաց 'ի նմանէ զմասն նշխարացն,
այլև զբանս սպառնականս և երկիւղալիս. և ա-
ռաքեալքն 'ի խօջայ Նազարէն եկեալ պահան-
ջէին յեպիսկոպոսէն զմասն նշխարացն, յորոյ եր-
կիւղէ զանգիտեալ եպիսկոպոսն, ոչ կարաց թա-
քուցանել կամ զերծանիլ 'ի Ջուղայեցւոց,
խորհեցաւ տալ 'ի նոսա զնշխարսն. Բայց 'ի
մասանցն զմեծկտորն պահեաց առ ինքն թաք-
նաբար, որ էր գլուխ թիակին՝ որ էր տեղի բո-
լոր ոսկերն, որ է 'ի վերայ ուսին, իսկ զայլ ևս մա-
սունսն և զմագաղաթն գրեալ եդին 'ի նոյն
յարկեղն, և ետուն Ջուղեցւոց. որք տարան
յասպահան քաղաք առ խօջայ Նազարն։

Իսկ եպիսկոպոսն շմաւօն պահեաց զնշխարսն այն
առ ինքն մինչ 'ի ժամանակս յայս՝ յորում է թուա-
կանն Հայոցս հազար և հարիւր և երեք, և 'ի սոյն
ժամանակի մեծ վարդապետն յակօբ, որ էր և սա
Ջուղայեցի, նորոգեր զնոյն վանքն սրբոյն ստե-
փաննոսի Նախավկային, բազմօք և անթուօք
ծախիւք և մեծաւ աշխատութեամբ. սկիզբն ար-
ար եկեղեցւոյն 'ի հիմանէ մինչև ցկատարումն
կոփածոյ վիմօք, այլև զպարիսպն նմա և

զամն շինուածսն , որք 'ի նմա, զամն 'ի հիմա նէ ձեռնարկեալ վերստին նորոգեաց։ Նա և եպկպսն շմաւոն եկեալ առ մեծ վրդպետն յա կօբ ծանոյց նմա վն նշխարացն ․ և ասաց թէ կամիմ զխաչ շինել յաղագս իմոյ յիշատակի՝ և անդ հանգուցանել զնշխարն զայն, իսկ վարդա պետն ծանոյց եպկպսին , թէ ոչ գոյ հրաման 'ի կանոնաց դնել զնշխարս սրբոց ներքոյ խաչի, այլ յայլ արկեղ։ Վն որոյ կազմեցին վն նշխա րացն զայլ ինչ արկղ արծաթեայ աղեւսաձև , և արարեալ զոսկեօծ և ընդելուզեալ ակամբք պատուականօք , և անդ հանգուցին զնշխար սրբոյն յօհաննու կարապետին։ Նա և գրեցին իվր պահարանին համառօտիւ բանիւ զամն անցուածս պատահմանցս այսոցիկ , և եդին 'ի նոյն վանս սրբոյ Նախավկայն Է այլոց բազմա հաւաքից սրբութեցն՝ որք կան անդէն։ որք են բարեխօս վն ամենից քրիստոնէից՝ մանաւանդ պահապան և պարծանք աշխարհիս Հայոց, որք կատարեն զամենայն բժշկութիւնս առ ամն նեղելոց , որք դիմեն առ նոսա , որովք փառաւորի անունն Յն մերոյ Քի Այ օրհնե լոյն յաւիտեանս ամէն ։

---

Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկողայոսին։

## ԽԴ։

ԱՅՍ ԵՐԱՆԵԼԻ նահատակս Նիկողայոս էր 'ի քաղա քէն տիգրանակերտոյ, որ այժմ ասի յամիթ, ծնեալ և սնեալ 'ի նոյն քաղաքին՝ և էր մանուկ տիօք իբրև տասնևհնգից ամաց, տեսլեամբն գեղեցիկ՝ և հասակաւն վայելուչ, զաւակ քրիստոնէից, և ազգաւ 'ի Հայոց։

Նաւ յաւուր միում մինչ դեռ շրջէր Նիկո
ղայոս ի մէջ շուկային ըստ հանապազորդի սովո
րութեն իւրոյ, յայնժամ այր ոմն հաւատովն
մահմետական՝ որոյ այլեւ անունն մահմետ էր,
մերձեալ առ Նիկողայոս ձեռն ածէր զերե
սօքն՝ և փարէր աղխատաւորիւ ցանկութբ՝ ոչ հա
նապազ անսանի ունակացեալ առ մահմետա
կանս. Իսկ Նիկողայոս սաստկիւ բարկութբ
դժուարացեալ ընդ այն ի բաց վարէր յինքէ
նէ ։ և էր այլումն այր, որ նա ևս անուամբն մահ
մետ էր և հաւատովն մահմետական. այս մահ
մետ, որ այժմ խաղայր ընդ Նիկողայոսիւ, ասաց
նմա վն այնմ մահմետի, թէ զխարդ է՝ զի ընդ
այն մահմետին առնես զսէր և զյարակցութի,
և ընդ իս ոչ առնես, և Նիկողայոս ասաց,
զքո մայրն և զնր մայրն ևս այսպէս առնեմ։ և
նոյնժամայն այս մահմետ ասաց մերձակայից
արանցն, և խանութպանացն. վն Ն-ն վկայք
լերուք՝ զի դուք ձեռքն լուայք, որ հայհոյեաց
զօրէնադիրն մեր զմարգարէն մահմետ։ և ժո
ղովեցան բաղումք մահմետականք ի բերել զշուն
կաստաղեք անդր ի մէջ նորա, և յափշտակեցին
զՆիկողայոս և տարան ՚ի դատաւորանն առ դա
տաւորն, և ՚ի նոցանէ լինեին ոմանք դատա
խազք՝ և ոմանք վկայք՝ և ոմանք վրէժխնդիրք՝
և դատապարտէին ՚ի մահ զՆիկողայոս։

Եհարց դատաւորն ՚ի Նիկողայոսէ՝ թէ
արդարև հայհոյեցեր զպատգամաւորն զմահ
մետ, ետ զպատասխանի Նիկողայոս, ես ոչ հայ
հոյեցի, և ոչ զբան ինչ ասացի պատգամաւորին
մահմետի, այլ այրս այս աղխատաւորիւ ցանկու
թբ փարէր զինև ի մէջ մարդկան՝ և ամօթով
առնէր զիս՝ վն որոյ և ես զմայր սորա քֆրեցի։
Իսկ այս մահմետս, որ խաղայր ընդ Նիկո

ղայո

ղայոսի՝ դատախազ լինէր թէ զՄահմետ ըզ
պատգամաբերն քփրեաց՝ այլ և ասաց ունիմ՝
աՀաւասիկ երկու այր վկայ, զոր և ածեալ կա
ցոյց զարս առաջի դատաւորին, որոց եկեալ
առաջի դատաւորին վկայեցին թէ մեք լուաք
'ի դմանէ, որ քփրեաց Մահմետին ։ Ասաց
դատաւորն Նիկողայոսի՝ որովհետև այդքան
Մահմետականք ժողովեալքեն իվ̄ քո՝ և այ
դու կերպիւ դատապարտեն զքեզ՝ գիտեմ զի
ոչ թողուն զքեզ կենդանի՝ այլ սպանանեն. վս̄
որոյ լուր բանից իմոց և լեր մուսուլման՝ զի զերծ
ցիս 'ի մահուանէ, և Նիկողայոս ոչ կամելով յան
ձին լինել Հաւատոյն Մահմետի ։ Բազում ան
գամ ասաց դատաւորն. տամ քեզ զբազում
գանձս և զստացուածս պատուականս՝ և զկին
գեղեցիկ՝ եթէ գաս 'ի Հաւատս Մահմետի. և
Նիկողայոս ասաց, ես զլոյս Հաւատս իմ ոչ թո
ղում, և զուղիղ օրէնս Ք̄ի Յ̄ի իմոյ ոչ փոխա
նակեմ ընդ ձերդ օրինաց՝ և դուք թէ անպարտ
սպանանէք զիս՝ դուք գիտէք ։ Իսկ որք վրէժ
խնդիր Մահմետականքն էին Հարկէին զդատաւ
որն առնել զսիջիլ մահուան իվ̄ Նիկողայոսի՝
զի սպանցեն զնա, և դատաւորն արար զսիջիլ ։

Իսկ Մահմետականքն, որք իբրև զչար գա
զանք ծարաւիք էն արեանց քրիստոնէից, առին
զսիջիլն և զՆիկողայոս տարան առաջի փաշ
ային, որոյ անունն էր Մուստաֆայ փաշայ ։ և ծա
նուցին նմա զամենայն յոլովիւ ամբաստանու
թ̄ե ։ և փաշայն ասաց առ Նիկողայոս, լուր բա
նից իմոց, և դարձիր 'ի պայծառ Հաւատս Մահմե
տի, որով պայծառացեալ է ամենայն աշխարհ
ոպ̄ և տեսանես. և ես կարգեմ զքեզ ինձ Հանա
պազորդ առաջակայ սպասաւոր՝ և իբրև զորդի
ընդունիմ զքեզ, և տամ քեզ զբազում գանձս

և պատուական զստացուածս՝ և զկին գեղեցիկ դուստր իշխանաց՝ զորոյ և կամիս, և զպետական իշխանութիւն, և զայլ բարութիւս բազումս: Եւ ետ պատասխանի Նիկողայոս՝ ՚ի բարութեցդ այդի ոչինչ պիտոյէ ինձ ամենևին, այլ թէ առնես ինձ զբարութիս, թող ինձ կեալ իմովս հաւատով, և թէ ՚ի զուր դատապարտէք զիս և սպանանէք՝ դուք գիտէք: Ռաղումնդամ ասաց փաշայն տամբեր զմեծութիւս, և զփառս՝ եթէ դառնաս ՚ի քոյդ հաւատոյ ՚ի հաւատս մահմետի՝ և Նիկողայոս ոչ դարձաւ: Իսկ մահմետականքն բազմաւ բանիւ թախանձէին զփաշայն տալ զհրաման և զլծիւ սպանանել զՆիկողայոս, իբրև գիտաց փաշայն թէ ոչ դառնայ Նիկողայոս ետ զլծիւ և զհրաման սպանանել զնա:

Յայնժամ ժողովեցան դունդք դահճացն իլ՟ նորա, և մերկացուցին զնա ՚ի հանդերձից՝ և գլուխ ՚ի բաց և բոկոտն, և զձեռս ՚ի յետս կապեալ, և առեալ տարան զնա ՚ի շրջեցուցանել յամէն տեղիս քաղաքին, և մունետիկն առաջի նր՟ հրատարակելով դնայր: և բերին զնա ի մէջ մեծի մէյդանին ՚ի տեղին ուր զմահապարտաց զոտս և զձեռս խորտակեն իլ՟ վիմին՝ որ կայ հաստատեալ անդր, և անդր ևս բազումնդամ ասացին դահիճքն, դարձիր ՚ի քոյդ հաւատոյ ՚ի հաւատս մահմետի՝ և մի ևս յամառիր. զի ահաւասիկ այժմ խորտակեմք զձեռս քո և զոտսդ, այնպէս և այլ մահմետականքն ասէին, և Նիկողայոս ոչ ումեք հաւանեցաւ բնաւ: Եւ յայնմ պահու յերիցանց քաղաքին, մարտիրոս անուամբ ոմն քահանայ եդեալ հաղորդ ի մէջ արմաւոյ և բերեալ ետ զՆիկողայոս, զոր առեալ ճաշակեաց, և ՚ի տեսանելն զայն դահճացն. աղմկեցան, և սկսան զհար

ցումն

ցուծն առնել․ Թէ զինչ էր այն, զոր երեցն ետ ց՛Նիկօղայոս, և երեցն փութով խոյս տուեալ փախեաւ 'ի տեղւոջէն՝ և փրկեցաւ։ Իսկ դահճացն 'ի բազումանգամ ասէին ց՛Նիկօղայոս Թէ եկ, դարձիր յօրէնս մահմետի, և փրկիր 'ի մահուանէ, իբրև ոչ դարձաւ, ապա ասացին դահճիճքն ց՛Նիկօղայոս, որովհետև ոչ լսես մեզ՝ և ոչ հաւանիս մտանել յօրէնս մահմետի, արդ տարածեա զձեռն քո ի վ͞ր վիմիդ զի խորտակեսցուք։ Եւ երանելին՝ Նիկօղայոս ինքն իրովի տարածեաց զերկոսին ձեռսն ի վ͞ր վիմին․ և դահճիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբազուկսն երկոցունց ձեռացն, և ապա խնդրեցին զոտսն, և նա տարածեաց․ և դահճիճքն խորտակեցին զոլորս երկոցունց ոտիցն։ Եկաց Նիկօղայոս այնպ͞ խորտակեցելովք անդամօք յայնմ աւուր անդէն ի մէջ թէատրոնին անկեալ․ և յերկրորդումն աւուր մատուցեալ քրիստոնէիցն առ փաշայն և առ դատաւորն՝ և խնդրեցին տալ զհրաման բառնալոյ զնա անտի և տանիլ 'ի տուն իւրեանց․ և նոքա ետուն զհրաման, և եկեալ քրիստոնէից բարձեալ զնա տարան 'ի տունն իւրեանց։ և մնաց կենդանի Նիկօղայոս յետ խորտակելոյ զձեռսն և զոտսն աւուրս երիս, և ապա աւանդեաց զսբ͞ հոգին իւր իբրև զխունկ անոյշ 'ի ձեռս Ք͞ի։

Եւ 'ի գիշերին այնմիկ Տ͞ռն Ք͞ի փառաւորեաց զնա երկնայնով լուսովն՝ որ էջ ի վ͞ր ն͞ր․ զոր քրիստոնեայքն ամենեքեան՝ որք անդր էին ժողովեալ՝ ակներև տեսին և ուրախացան․ մեծաւ խնդութ͞բ և ցնծութ͞բ փառաւորէին զԱ͞ծ։ այլև ինքն ս͞րբն՝ Նիկօղայոս մինչ կենդանին էր պատմեաց՝ Թէ 'ի ժամուն յորում խորտակեցին զձեռս իմ և զոտս․ տեսի զի զայ

պայծառ շողացեալ յերկնից իջեալ եմուտ 'ի բերանս իմ: Ն՟ւ յետ մահուան սրբոյն, 'ի վաղև անդր ժողովեցան բազմութիւք քրիստոնէից, բարձեալ զնահատակն Քի սաղմոսիւք և օրհնութբ տարան 'ի գիրս գերեզմանացն Հայոց՝ և անդ 'ի կարգս սրբոց նահատակացն հանգուցին 'ի գերեզմանի: և այժմ ցաւագարք և հիւանդք գնան 'ի սուրբ գերեզմանն, և գտանեն զառողջութի իւրաքանչիւրոց ցաւոց աղօթիւք սբ նահատակին Նիկողայոսի և շնորհօքն Քի Յի մերոյ՝ որում փառք յաւիտեանս Ամէն: Ն՟ւ եղև կատարումն նահատակութե սրբոյ Նիկողայոսիս 'ի Թուականութեա Հայոց հազար և իննսուն և մէկ. յաւրիլի ամսոյ տասնևհինգ 'ի թգւորութե ազգին Օսմանցւոց սուլթան իբրահիմին, որ նստէր 'ի մեծ քաղաքն ըստամբօլ. և 'ի կթղիկոսութե բարձրագահ աթոռոյն սրբոյ Էջմիածնի տեառն փիլիպպոսի պատուականի հայրապետի:

Այլև մինչ կենդանի էր սբն Նիկողայոս. պատահեցաւ անդ 'ի յամիթ քաղաքի վարդապետ ոմն, որոյ զանունն ոչ գտաք. որոյ եկեալ առ սուրբն Նիկողայոս և կալեալ զձախձախեալ աջն նր համբուրեաց՝ և խնդրեաց 'ի նմանէ թէ զսուրբ աջ քո զայս շնորհեա ինձ. զի ես հանդերձեալեմ զեկեղեցի շինել՝ և դնեմ 'ի հիմն եկեղեցւոյն այնմիկ զսբ աջս: և նրն Նիկողայոս յօժարութբ ետ. քանզի ասաց արդէն իսկ կտրեա և առ 'ի քեզ. և մինչ կենդանի էր ոչ կտրեցին՝ այլ յետ մահուանն կտրեցին. և վրդպտն յինքն էառ զսբ աջն Նիկողայոսի մեծաւ փափագանօք և տարեալ եդ 'ի հիմն եկեղեցւոյն, զոր շինեաց: Այլև զվէմն զայնևս յորոյ վերայ խորտակեցին զձեռս և

զոտս

զոտս սրբոյն Նիկօղայոսի. զայնեւս գողացա
վարդ̃պտն և տարեալ եդ 'ի հիմն եկեղեցւոյն,
զոր շինեաց. որով փառաւորի անուն Տ̃ն մե
րոյ Յ̃ի Ք̃ի յաւիտեանս յաւիտենից Ա̃մն։

---

Պատմութ̃ն նահատակութ̃ե խոստովանողի վկային
Ք̃ի Խաչատրոյ։

ԽՆ։

ԱՅՍ ԵՐԱՆԵԼԻ
նահատակս էր 'ի քաղաքէն տի
գրանակերտու՝ որ այժմ ասի յա
միթ. ծնեալ և սնեալ 'ի նմին քա
ղաքի՝ և էր ինքն յազգէն Հայոց. և կային սմա
ծնօղք և եղբարք և այլք ընտանիք բազումք.
և էր ինքն իբրև ամաց քսանից՝ աւելի կամ պա
կաս. գեղեցկատես և վայելչահասակ. այլև
էր յոյժ աղօթասէր՝ և ունկնդիր գրոց ըն
թերցման. զորինչ և կարդային քահանայքն
յեկեղեցիս զաւետարան և զճաշու գիրք. և
մանաւանդ թէ այսմաւուրք և պատմութիւնք
վկայից։ և յա̃մ աւուր անպակաս էր նա յեկե
ղեցւոյն և յաղօթից իւրաքանչիւր կարգեալ
ժամս. և մերձ տանն իւր՝ ուր ընթեռնուն զա̃մն
գիրս՝ կալեալ էր իւր տեղի աղօթից. և յոր
ժամ ընթեռնուին զպատմութ̃ն նահատակու
թ̃ե վկայից. իբրև զյորդառատ աղբիւր
բղխէին արտասուքն յաչացն. և ցանկայր
ինքն մեծաւ յօժարութ̃բ նահատակակից լի
նիլ սրբոց վկայիցն։ և հանապազ 'ի տան իւրու̃
իւրոց ընտանեաց՝ և արտաքոյ ընդ իւրոց յարա
կից ընկերացն ասէր. թէ ես ոչ կամիմ իմով
բնականաւ մահուամբ մեռանիլ. այլ կամիմ նա
հատակիլ. և 'ի վ̃ր իմոյս ճշմարտի հաւատոյս մե
ռանիլ։

ռանիլ։ Եւ էր սա աշակերտեալ առն ումեմն քրիստոնէի՝ որ ունէր զարուեստ չլընկարութեն. որ շինէ զկողպէյս և զայլ այսպիսի մանր իրս. և հանապազ ընդ իւրում վարպետին նստեալ ՚ի խանութն ի մէջ շուկային գործէին զարուեստն իւրց̃. և էր խանութ սոցա մերձ մեծ մզկթին՝ զոր ջումայ մաչիթ ասեն։

Եւ յաւուր միում ի մէջ խանութին ասաց խաչատուրն ընդ իւրում վարպետին. թէ աւասիկ իջեալ ՚ի խանութէս գնամ. բայց կարծեմ թէ այլ ոչեւս գամ ՚ի խանութս։ Եւ ոմանք ասացին թէ ասաց խաչատուրն՝ յայսմ գիշերի տեսիլ երազոյ երևեցաւ ինձ՝ և հրամայեցաւ ինձ նահատակութն. և երթամ ես ՚ի նահատակիլ. վն̃ այն ասեմ թէ ոչեւս դառնամ ՚ի խանութս։ ապա յետ այսց բանից իջեալ ՚ի խանութէն գնաց ՚ի մեծի մաչիթի բակն. և կացեալ առ ընթեր ջրոյն լուանայր զձեռս ջրովն՝ որ հեղանիւր ՚ի բարձր տեղւոջէն։ Եւ յայնմ ժամու եկեալ այր ոմն մահմետական. որ էր ծնքն ամիր և կանաչագլուխ. հայհոյեաց զխաչատուրն, և ասաց. իբրաց գնա ՚ի տեղւոջէդ զի և ես լուացայց. և խաչատուրն հայհոյեաց զնա և զկանաչն նր̃։ Եւ ՚ի խօսիլ սոցա երկոցունց ընդ միմեանս, ժողովեցան բազումք մահմետականք իվր̃ նր̃. և յափշտակեցին զխաչատուրն և տարան առ դատաւորն. և սկսան ոմանք դատախազ լինիլ՝ և ոմանք վկայք՝ և ոմանք վրէժխնդիրք. և դատապարտէին ՚ի մահ զխաչատուր։ Եւ ի մէջ դատարանին խօսեցաւ դատաւորն ընդ խաչատրին և ասաց. որդեակ դու մանուկ ես՝ և նորոգ երիտասարդ. խնայեա ՚ի մանկութի քո՝ և փրկեա զանձն քո. քանզի այդքան մահմետականք՝ որք ժողովեալեն իվր̃ քո՝ ոչ

թողուն

Թողուն զքեզ միայն կենդանի․ այլ հաւանեաց բնից իմոց՝ դարձիր՝ի մոլարից օրինացն՝ և մուտ 'ի հաւատս մահմետի․ որ բարի է և երանելի․ ոմ̃ և տեսանես զմ̃մն մահմետականս․ որք բարգաւաճեալք են բարեկեցիկ կենդանութբ՝ և հզօրացեալք են թ̃ւրութբ̃․ և ժառանգօղք են աստի կենացս և հանդերձելոյն ։ Իսկ երանելին խաչատուր ետ զպատասխանի և ասաց՝ մոլար օրէն ձեր օրէն է․ որպէս և է մարգարէն և պատգամաբերն ձեր սուտ մարգարէ․ իսկ մեր օրէնս ճշմարիտ է և Ք̃ոս դիր․ ոմ̃ և ինքն Ք̃ս ճշմարիտ է՝ որում դուք ես վկայէք․ և ես զՔ̃ս Ա̃ծն իմ ոչ ուրանամ․ և զլոյս հաւատս իմ ոչ թողում․ և սուտ օրինաց ձերոց ոչ հաւանիմ․ եթէ թողուք զիս , և թէ սպանանէք․ և թէ իբրև զնասխմի քերթէք զիս՝ ես 'ի հաւատոյս իմոյ ոչ դառնամ։ և դատաւորն զբազում բանս խօսեցաւ ընդ նմա․ և զբազում բարութիւս խոստացաւ տալ նմա՝ զգանձս և զստացուածս՝ և զկին՝ և զպետական իշխանութիւս․ և խաչատուրն բնաւ ոչ հաւանեցաւ ։ Նու ոմանք 'ի մահմետականացն գնացեալ առ մուֆթին ծանուցին․ թէ այր , որ զպատգամաբերն զմահմետ՝ և զնորին հաւատն հայհոյէ՝ զինչ պարտ է նմա առնել․ և մուֆթին ետ զֆաթվայ․ որովհետև զպատգամաբերն զմահմետ , և զնորին հաւատն հայհոյեաց․ և ինքն ասաց՝ թէ իբրև զնասխմի քերթէք զիս յիմոյս հաւատոյս ոչ դառնամ․ պարտ է զնա քերթել ։ և զայս ֆաթվայս առեալ մահմետականացն բերին առ դադին․ և զինջիլ արարին․ և ապա առեալ զխաչատուրն տարան առ փաշայն և ծանուցին նմա զմ̃մ ։ Իսկ փաշայն իբրև ետես զվայելուչ մանկու

թի

թն Խաչատրոյ. բազմօք խանդաղատակինօք բանիւք խօսեցաւ ընդ նմա. և ասաց՝ տամ քեզ զբազում գանձս՝ և զպատուական ստացուածս՝ և զպետական իշխանութիւն. և զկին գեղեցիկ ըզդուստր իշխանաց. որում և դու հաւանիցիս. եթէ դառնաս՛ի քոյդ հաւատոյ և ընդունիս զհաւատս մահմետի. լինիս այսքան բարեաց տէր՝ նաև զանձն քո փրկես՛ի մահուանէ: Իսկ երանելին Խաչատուր ետ զպատասխանի. զայդ ամ բարիքդ՝ զոր խոստացար տալ ինձ՝ սուտ է և ընդ նայն՝ քեզ անցաւոր է. նաև հաւատն ձեր սուտ է՝ զի սուտ մարգարէի է կարգեալ. իսկ իմ հաւատ ճշմարիտ է՝ և նոր. զի՛ի Քէ է կարգեալ. որոյ ճշմարտութեան դուք իսկ վկայէք. ոչ թէ հարևանցի սպանանէք զիս. այլ թէ կենդանույն քերթէք զիս. ես զՔս Այն իմ ոչ թողում՝ և զնորին ճշմարիտ հաւատն ոչ ուրանամ. ասաց փաշայն գուցէ բանդագուշեալ և՛ի խելաց թափեալ իցէ՝ տարեալ պահեցէք. զի թերևս՛ի խելս և՛ի զգօնութիւն գայցէ. և տարեալ պահեցին ժամս երկու. և մահմետականքն ամ առ նա եկեալ աւաղէին, և խնայէին, և ասէին. մի կորուսաներ զվայելուչ մանկութիւն քո. և նա ոչ հաւանեցաւ բանից նց: Դարձեալ կոչեաց փաշայն զԽաչատուրն առաջի իւր՝ և քան զառաջին բարութեամբ աւելի խօստացաւ տալ նմա. միայն թէ ուրանայ զքսական հաւատն՝ և դաւանի զմահմետական հաւատն. և Խաչատուր ոչ ուրացաւ: ապա այնուհետև փաշայն ետ զհրաման և զլճիւ սպանանել զնա:

Յայնժամ եկեալ դահճացն իբրև զգազան արիւնախանձ պատեցան շուրջ զնովաւ՝ և մերկացուցին զնա՛ի զգեստուց. և կապեցին ըզձեռս՛ի յետս. և առեալ տանէին՛ի տեղի

տպանման. և մունետիկն, որ է ջառչի հրատարակելով գնայր առաջի նր։ և ժողովեցան իւր նր բազմութիւնք մահմետականաց իբրև զաւազ ծովու անթուելի, որ ոչ բաւէր վայրն տանիլ զնա. և իբրև զգազան կատաղի կրճտէին զատամունս իւրեանց իւր նր. հարկանէին, կափահարէին, և ընդ քարշտանէին. և այնպէս հանին զնա 'ի միջին բերդէն։ և իբրև ելին 'ի դրանէ բերդին. անդէն առաջի դրան միջին բերդին, որում Նոր դուռն ասեն. ասաց նցա Խաչատուր դահճացն՝ թէ քերթեցէք զիս մն հաւատոյ իմոյ և սիրոյ՝ զոր ունիմ առ Քս Ին իմ։ Յայնժամ անօրէնն և մարդադէմ գազան դահիճքն պատառեցին զմորթ մարմնոյ նր յաջոյ ուսէն մինչև ցձախոյ ուսն. և քերթեցին զկաշին թիկանցն և իջուցին մինչև ցքամակն՝ և շրջեցին զկաշին իւր միջացն. այլև յաւաջուստ կողմանէ քերթեցին զմորթ լանջացն մինչ 'ի ներքոյ ստեանցն. և շրջեցին ըզ մորթն իւր փորին. և ապա տարեալ շրջեցուցանէին ի մէջ քաղաքին 'ի շուկայս և 'ի պողոտայս. 'ի փողոցս և 'ի հրապարակս։ և 'ի տեսիլ զարմանալի գործոյն ամենայն որ ճեպով ընթանայր այր և կին՝ ծեր և տղայ. միանգամայն տնարգել աղջկունք՝ և ամենից տեսողաց մարմինքն սոսկացեալ սարսէին։ Իսկ տեսիլ կերպարանաց սրբոյն Խաչատրոյ զուարթ էր և պայծառ իբրև զհրեշտակի Այ. և ոչինչ կասիւր յայնքաներաց տանջանացն. այլև ինքն Խաչատուր յաւաջագոյն ուսեալէր զբազում նախիմի խաղս՝ զոր նախիմն ինքն ասացեալէ իւր իւրոյ նահատակութեն. և իւր անօրէնութեն Քսի զԱծաբանութի զայնոսիկ զխաղսն՝ արդէն այժմ այս Խաչատուրս իւր

իւրոյ

խուրդ քերթելոյն բարձրաձայնիւ եղանակաւ երգէր և շրջէր ի մէջ քաղաքին յամենայն տեղիս ուրեք տարան զնա դահիճքն: իբրև աւարտեցաւ շրջեցուցանելն՝ ապա ածին զնա դահիճքն ի մէջ մեծի մէյդանին 'ի տեղին՝ յորում զմահապարտաց զձեռս և զոտսն խորտակեն: և մահմետականքն պահէին առաւել և ժողովէին և բազմանային. այլև քրիստոնեայք ևս բազումք եկին, և ժողովեցան 'ի տեղին՝ և տեսանէին զայն: խօսեցան դահիճքն ընդ Խաչատրոյն թէ մի՛ ևս յամառիր և դիմանար հրամանաց իշխանաց՝ դարձիր յօրէնս մեր. և փրկեա զանձն քո 'ի մահուանէ. զի տակաւին գոյ քեզ հնար կելոյ՝ և դեղօք բժշկելոյ: սոյնպէս և այլ մահմետականքն, և իշխանք ասէին. թէ գոնեայ բան մի միայն ասա 'ի դաւանութեն մերոյս հաւատոյ. և այն բաւական է մեզ առնել զպատճառ՝ և այնու ապրեցուցանել զքեզ: Այլ ոմանք 'ի մոլաներացն ասէին ցԽաչատուր. թէպէտ և մեռանիս, և կորուսանես զմանկութին քո՝ և զրկիս յայսց կենացս. այլ զի մի և զհոգի քո մեռուցես. և յայնց կենաց ևս զրկեցիս: արդ 'ի զրաւ քոյոց կենացդ տուր ըզդաւանութին հաւատոյն մահմետի. զի կեցցէ հոգի քո՝ և ժառանգեսցէ զանանց կեանսն: Իսկ օ՟ն Խաչատուր բնաւ ոչ ումեք հաւանեցաւ՝ այլ իւրաքանչիւրոց ըստ պատշաճին տայր զպատասխանի. և անշարժ կայր ի վ՟ր հաւատոյս քրիստոնէութեն. և համարձակ և անխափան զՔ՟ս Ա՟Ծ դաւանէր:

Իսկ առաջնով ժամանակաւ հաստատեալէին ի մէջ մէյդանին զվէմ մի՝ յորոյ վ՟ր խորտակէին զձեռս և զոտս մահապարտաց. ասացին դահիճքն ցԽաչատուր՝ որովհետև յամառիս. և

ոչ լսես մեզ. արդ տարածեա զձեռսդ քո ի վր
վիմիդ՝ զի խորտակեսցուք. և նա յօժարկա
մօք խուրովք տարածեաց զձեռսն ի վր վիմին. և
դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբա
զուկսն երկոցունց ձեռացն: ապա խնդրեցին
զոտսն. և նա տարածեաց զերկոսին ոտսն. և
դահիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց ո-
տիցն: և սբ արիւնն նր՝ որ յորդառատ հեղա
նիւր յանձնէն՝ թաթաւեալ էր զամենայն մար
մինն՝ և թացեալ էր զվայրն ամ: Այնուհետև
ոչ ևս կարաց նստել այլ անկեալ պարզեցաւ ընդ
երեսս գետնոյն: իսկ քրիստոնեայք՝ որք շրջա
պատեալ հայէին աղիողորմ ողբօք և արեան ար
տասուօք լային. սոյնպէս և մահմետականք
բազումք լային արտասուօք՝ և հայհոյէին զօ
րէնս և զառաջնորդս և զիշխանս և զդատաւո
րս իւրեանց: և ամքն սոսկացեալք զարմացեալք ա-
պուշ մնային. և հարցանէին զմիմեանս թէ ար
դեօք իցէ ումեք 'ի ձէնջ տեսեալ այսպի գործ.
քանզի յոյժ սարսռելի էր տեսիլ գործոյն:
Եւ այնուհետև սբն Խաչատուր յոյժ նուա
ղեցաւ 'ի սաստկից և 'ի կարծրագունից տան
ջանացն. և տապիւր, պապակեալ 'ի ծարաւոյ՝
վնորոյ աղաչեաց զարսն, որք շուրջն կային, և
խնդրեաց 'ի նոցանէ զջուր. և գթացեալ առ
նա ոմանց գնացեալ բերին նմա զջուր խեցեաւ
ամանոյ լինէ՝ և այնու խեցեաւն էարբ զջուրն:
այլ և աղաչեաց սուրբն Խաչատուր զմերձ կա
ցեալ քրիստոնէայսն գնալ առ քահանայս և
բերել ինքեան զհաղորդ. և քահանայքն վն եր
կիւղի մահմետականաց ինքեանք ոչ եկին. այլ
զհաղորդն եդին իմէջ հացի, և ետուն ցքրիս
տոնեայսն՝ և նք բերեալ ետուն ցԽաչատուր.
և նա առեալ ճաշակեաց զհացն հաղորդաւն՝ և

գոհացաւ զՏ.Յ.: և այնպէս խողխողեցելովք անդամօք անկեալ կայր ի մէջ թէատրոնին մինչ 'ի նսեմանալ երեկոյին: Իսկ բաղձեցի խաչատուր վարդպտն, և բաղոճեցի սամոնել աւե դայն 'ի նսեմանալ երեկոյին եկին առ սբն Խաչատուր, և ի վր սրբոյ մարմնոյն անկեալ կսկծագնիւ այրմամբ լային և համբուրէին զսուրբ գլուխն նր՝ և արգահատեալ մխիթարէին զնա յուսադրականօք բանիւք՝ և հաստատէին 'ի հաւատս: Ասաց սբն Խաչատուր ցխաչատուր վրդպտն, գիտես իսկ, զի ոչ ունիմ զձեռն որով կալեալ զսբ աջդ քո համբուրեմ. վասնորոյ խնդրեմ 'ի քէն, մատո զսբ աջդ քո 'ի շրթունս իմ. զի համբուրեցից. և վարդպտն մատոյց զաջն իւր 'ի սբ շրթունս Խաչատրոյ, զոր համբուրեաց փափագանօք: այլև ասաց սբն Խաչատուր առ վարդպտն. խնդրեմ 'ի քէն աղօթել վն իմ. պատասխանեաց վարդպտն, որդեակ մեք թէպէտ ունիմք զկարգ և զաստիճան քահանայութե. այլ մեղաւորք եմք և պարտականք առաջի Տ.Յ. իսկ դու շնորհօքն ԱԾ և քոյով նահատակութբդ գտեր զողորմութն 'ի ՏՐ և բացեր քեզ զճանապարհ արքայութե Տ.Յ. և ունիս զհամարձակութն առաջի ԱԾ. վասնորոյ դու բարեխօսեա վն մեր. և վն երկիւղի մահմետականացն ոչ կարացին յոլով ժամս կալ առ նա՝ այլ առին զաղօթս սրբոյն և փութանակի դարձան 'ի տեղիս իւրեանց:

Իսկ մնաց սուրբն Խաչատուր այնպէս խողխողեցելով մարմնով կենդանի, մինչոր էանց մէջ գիշերոյն. և ապա աւանդեաց զսբ հոգին իւր առ ՏՐ որ զնա ունէր անոյշ: և յետ աւանդելոյ հոգւոյ սրբոյն փառաւորեաց զնա ՏՐն ԱԾ. զի լոյս պայծառ էջ յերկնից ի վր նր. և

եկաց

եկաց յօգուտ ժամու. զորս տեսին զօրականքն, որք մերձն կային և պահէին զնա: այլ և խանութպանք յոլովք. որք մերձ էին և այլթուրք. այլ և արքն՝ որք ի մէջ մզկիթանին խչի տախտակացն ննջեալք էին, զի ամառնային էր ժամանակն. ամենեքեան տեսանէին զլոյսն. և փառաւորէին զԲԾ. և երանի տային սրբոյն Խաչատրոյ. և վկայէին վասն հաւատոյս քրիստոնէութեն ճշմարիտ գոլ՝ որոյ վն այսպիսի նշան յերկնից երևեցաւ: և 'ի ծագել լուսոյ առաւօտուն ընդ ամենայն տեղիս հռչակեցաւ համբաւս այս՝ և որք լսէին. փառաւորէին զԲԾ Իսկ 'ի լուանալ աւուրն քրիստոնեայքն մատեան առ զաղին՝ և առ փաշայն. և խնդրեցին զհրաման տալ, թաղել զսուրբն. և նորա ետուն զհրաման. բայց զտասնևհինգ ղուռուշ էառ առպաշին. և ապա քահանայ մի և ութն աշխարհականք եկին և բարձին զմարմին սրբոյ նահատակին խչի դագաղի՝ և տարան 'ի գերեզմանատունս Հայոց՝ ուր ժողովեցան անբաւ բազմութիւնք քրիստոնէից. ոչ միայն Հայք՝ այլ և Հոռոմք. և Ասորիք և եաղուբիք՝ այլ և յոլովք մահմետականք ոմանք 'ի զբօսնուլ և ոմանք 'ի զննել. և քրիստոնեայք ամենքն ջերմեռանդիւք փափագանօք համբուրէին զսբն. որս պահեցին զնա մինչև ցվերջինք աւուրն վն համբուրելոյ ժողովրդոցն՝ զի գրեթէ ոչ էր մնացեալ ժողովուրդ 'ի քաղաքին, որ ոչ երեկեալ 'ի թաղումն սրբոյն. որք ողբային զնա քեանս՝ և երանէին զսուրբն. և մխիթարէին զծնողս նր. և մեծաւ փառօք թաղեցին զսբն 'ի կարգս նահատակացն: Իսկ 'ի գիշերին յայնմիկ միւսանգամ Տր ԱԾ փառաւորեաց զնահատակն իւր, զի միւսանգամ լոյս պայծառ էջ

յերկնից ի վ̄ր սրբոյ գերեզմանին Տ̄ր̄· զոր տեսին պահանորդք քրիստոնեայքն՝ որք վ̄ն խորամանկելոյ մահմետականացն զգուշացան գերեզմանին՝ զի մի նենգեսցեն· այլև բազումք որք ՚ի քրիստոնէից՝ որք վ̄ն սիրոյ սրբոյն մնացին զգիշերն զայն անդէն ՚ի գերեզմանատունսն՝ տեսին զլոյսն· և յառաւօտուն եկեալ պատմէին ամենեցուն: Նաև արդէն իսկ բժշկութիւնք բազումք կատարին ՚ի սրբոյ գերեզմանէ Տ̄ր̄ ի վ̄ր ցաւագարաց՝ և հիւանդաց· որք հաւատով դիմեն առ նա: այլև խեցին այն՝ որով զջուր էարբ ս̄ն Խաչատուր՝ զբժշկութիւն կատարէ· զի հիւանդք՝ որոց վերայ հեղուն զջուր խեցեան այնմիկ՝ գտանեն զառողջութիւն աղօթիւք սրբոյ Խաչատրոյն՝ և շնորհօքն Ք̄ի Յ̄ի մերոյ· որում փառք յաւիտեանս Ամէն:

Այլև շնորհն Ա̄ծային վասն պատուոյ և սիրոյ նահատակին իւրոյ սրբոյն Խաչատրոյ· առար զայսպիսի խնամս ի վ̄ր ժողովրդեան իւրոյ քրիստոնէից· զի յաւուր Թաղման սրբոյն՝ մահմետականք, որք եկեալ էին անդ ՚ի գերեզմանատունսն· ոմանք ՚ի նոցանէ զչարացան և նախանձաբեկք եղեն ը̄ փառաւոր Թողումն ս̄ն Խաչատրոյ· և գնացին առ փաշայն՝ և չարախօսք եղեն զքրիստոնէից՝ թէ ժողովեցան քրիստոնեայքն ամենեքեան՝ ի վ̄ր սպանելոյն այնորիկ· և իբրև զվկայ և զնահատակ բազմամբոխս հանդիսիւ և մեծաւ փառօք թաղեցին զնա· և այնու ցուցանեն զխուրեանց հաւատն Ճշմարիտ գոլ՝ և զմեր հաւատս սուտ: վասն որոյ հրամայեաց փաշայն թէ զգոյշ կացցեն զօրականք յանցս Ճանապարհաց՝ զի ՚ի վաղուեան աւուրն յորժամ գնասցեն քրիստոնեայք ՚ի գերեզման սպանանելոյն այդահող կատարելոյ· յայնժամ զմ̄ն

կալեալ

կալեալ և բերեալ արտացեն 'ի կալանս՝ զի ես գատապարտեալ զնս տուգանեցից։ և զայս զչարախօսութիս և զխորամանկութն խորհուրդս ոչ գիտէին բնաւ քրիստոնեայքն՝ այլ Տն փրկեաց զժողովուրդն իւր սուղինչ պատճառաւ։ Ոի յայնմ աւուր այր մի փաշալու՝ և այր մի քաղաքացի սպահի պատուաւոր կուռէցան ընդ իրեարս․ և որք քաղաքացի սպահիք և ենիկիչարիք էին զինուորականք դասք՝ քամահանս լնքեանց համարեալ զայն՝ վրէժխնդիրք եղեն․ և կանգնեցան 'ի կուիւ ընդ փաշային․ և արգելեալ փակեցին զփաշայն զօրօքն իւրովք իմէջ միջին բերդին շաբաթ մի։ և փաշայն, և քաղաքացիքն այնու խռովութէն պատաղեալք եղեն․ և քրիստոնեայքն ազատեցան բարեխօսութէ սրբոյն Խաչատրոյ և ողորմութէն Այ բարերարին։ Իսկ եղև նահատակութն սրբոյս Խաչատրոյ 'ի թուականութես հայոց հազար և հարիւր և մէկ՝ յօգոստոսի ամսոյ քսանն, 'ի կթղկոսուն տեառն՝ փիլիպպոսի որ 'ի բարձրագահ աթոռն նր Էջմիածին․ և 'ի թգաւորութն Օսմանցւոց սուլթան մահմատին՝ որ նստէր 'ի կոստանդնուպօլիս մեծի քաղաքին։

---

Պատմութն Նահատակութն Միրոն անուամբ քրիստոնէին։

ԽՕ։

ԱՅՐ ՈՄՆ ՈՐՈՅ անունն էր Միրոն․ էր սա յաշխարհէն վասպուրականի 'ի գաւառէն գնունեաց՝ որ այժմ ասի յամուկ․ 'ի գեղջէն․ որ կոչի ալիւր։ և էր ինքն ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ․ և քրիստոնէից զաւ

տկ. ունէր զմայր և զեղբարս, որք մուծին զնա 'ի կարգ աշխարհի. և ածին նմա զկին. և վն մարմնաւորաց կարեաց իւրոց այրս այս սիրուն յարեցաւ առ այլազգի մահմետական ոմն. առ նոյր 'ի նմանէ զվարձս՝ և ծառայէր նմա պաշ տականութբ վն վարձուն.

Եւ եղև յաւուրս գարնայնոյ. զի տէրն Սիրոնին առաքեաց զնա 'ի քաղաքն ղլաթ զի բերցէ միրգ վն ընտանեաց իւրոց առ 'ի յուտել. և նա գնացեալ էառ զկեռաս՝ եբարձ ձիոյն, և եբեր 'ի վան քաղաք. և մինչդեռ ի մէջ քաղաքին վանայ քարշէր զձին բեռամբն իմէջ պողոտային. եկին ժողովեցան իվր նր մանկունք մահմետականաց. և իւրաքանչիւրոք ընթացեալ յափշտակէր զկեռաս 'ի բեռանէ անտի. իսկ Սիրոն ոչ թողոյր յափշտակել, այլ հալածէր զմանկունսն. և ոմն 'ի մահմետականաց մանկանցն առեալ բռնաքար և էհար զՍիրուն քարիւն. իսկ Սիրոն առեալ զքարն ձգեաց առ ձգօղն. և դիպաւ քարն 'ի գլուխ տղային՝ և վիրաւորեաց. և այնու պատճառաւ անկաւ մանուկն 'ի մահիճս և հիւանդացաւ յամիս երկուս՝ և յետոյ սատակեցաւ տղայն 'ի պատճառէ վիրացն. իսկ տէրն Սիրոնին փախոյց զՍիրոնն. զի թերևս փրկեսցի 'ի ձեռաց մահմետականաց. իսկ Սիրոնն գնաց 'ի գիւղն իւր յալիւր 'ի տուն իւր.

Իսկ ալեր գեղջ շահնէքն՝ որք էին մահմետականք. ըմբռնեցին զՍիրուն և արարին 'ի կալանս. իսկ քրիստոնեայք գեղջն զյոլով կաշառս ետուն շահնոցն զի թողցեն զսիրուն՝ և նոքա ոչ թողին. Յալ զգացուցին ընտանեաց սատակեալ մանկանն. և նքլեալ վրէժխնդիր արեան մեռելոյն գնացին առ փաշայն. տուին

զզօրա

զզօրականս և առաքեցին զհետ Ներոնին. որոց գնացեալ ածին զՆերոնն՝ ի քաղաքն վան առ փաշայն։ Իսկ փաշայն առաքեաց առ դատաւորն և առ մուֆթին՝ և էհարց թէ զինչ հրամայեն օրէնքն մահմետի վս̄ առնս այսմիկ. մահապարտ գոլ և մեռանիլ՝ թէ անպարտ գոլ և ազատիլ. և նոքա ոչ համարեցան զՆերոնն մահապարտ այլ անպարտ և ազատ. վս̄ որոյ և փաշայն ոչ սպան զՆերոնն։

Բայց սուլտանք քաղաքին, որք ծարաւեալք էին արեան քրիստոնէից՝ ոչ անսացին փաշային և դատուն և մուֆթոյն, այլ գումարեալք խմբաւին երկու և երեք հարիւր սուլտայք և գրոհ տուեալ ժողովեցան ի վր̄ անպարտի երանասարդին Ներոնին։ Ամ̄քն մերկացուցեալ զսուրս իւրեա̄ ի վր̄ Ներոնին թիւր և խանջալ, մեծաձայնօք խրոխտանօք ահացուցանէին զնա՝ թէ դարձիր՝ ի հաւատս մահմետի, և տաճկացիր, ապա թէ ոչ սրախողխող և քարկոծ լեալ մեռանիս՝ ի ձեռաց մերոց։ Այլև բերին զբարակ պարան և նովաւ ամրագոյն պատեցին զերկոսին բազուկսն ուսոցն մինչև ցթաթք ձեռացն սաստկիւ պնդութ̄բ, և՝ ի սաստկէ պնդութենէն պայթեալ հերձան բերան եղնգանցն յոքոց հոսեալ արիւնն հեղանիւր ՝ի ձեռացն։ այլև զբազմագոյն տեսակս տանջանաց ածին ի վր̄ նորա, հարկանել և կառափնատել և ընդքարշ տանիլ՝ և անսուաղ պահել՝ ի կալանս, և ամ̄քն իւր զկատաղի գազան զատամունս ի վր̄ կրճտել՝ և իւրաքանչիւրոք զսուր իւր ի վր̄ նո̄ շողացուցանել, և ասել թէ տաճկացիր, ոչ միայն փրկիս՝ ի մահուանէ, այլև զբազում արդիւնս և զբարութ̄ս հատուցանեմք քեզ։ Իսկ Ներոնն ոչ հաւանէր ասելով՝ ղլսա հաւատսիմ

ոչ թողում, և խաւարից օրհնաց ձեռոց ոչ հաւանիմ. այլ և մայրն և եղբարքն և այլք բարեկամք նորա հանապազ ասեն ինձ լալով՝ թէ այժմ վն փրկելոյ զանձն քո առ երեսս դաւանես զդաւանութիւն նց, և յետոյ գնասցես յայլ յաշխարհս և յիշխանութիւն քրիստոնէից՝ և անդ պաշտեսցես համարձակ զքրիստոնէական հաւատն քո։ Իսկ թէպէտ բազմիցս աղաչեցին՝ սակայն նա ոչ էառ յանձն ասելով, թէ առ օրեայ մահս, որ արդ հասեալ է ինձ իմ, նաև անդէն ուրեք լինիմ պատահելոց է ինձ, և վն աղիցինչ ամաց կենացս զխարդ կորուսից զհաւատս իմ, և եղէց դատապարտեալ յԱյ։ և ինքն Սիրուն ուրախ էր և բերկրեալ սրտիւ վն իրոյ խոստովանութեն և նահատակութե. և վկայէր գոյն երեսացն, որ օրաւուր առաւել պայծառանայր տեսիլ երեսացն և դիմացն։

Իսկ մարդադէմ գազանքն սուլտանքն յաւուրս քան կապեալ զձեռս 'ի յետս գլուխ 'ի բաց շրջեցուցանէին ի մէջ քաղաքին վանայ, զի փաշայն և ղադին և մուֆթին ոչ տային զհրաման սպանանելոյ։ և վն քննութեանցն միակամ եղեալ սուլտայիցն ամցն՝ յաւուրս երիս առդելեալ խափանեցին զկանչելն՝ զոր 'ի գլխոյ մնիրային կանչէին 'ի ժամ աղօթիցն իւրեանց, ասելով թէ խանգարեալ խափանեցաւ, և յերկիր սուղաւ հաւատս մահմետական՝ զի անհաւատ հայ զմուսուրմանն սպանեալ է։ Իսկ ըստ հանապազորդի սովորութե, զոր կապեալ շրջեցուցանէին զՍիրուն բերեալ հասուցին 'ի նալբանտնոցի շուկայն, և անդէն 'ի սուլտայիցն ոմն չարագոյն, որ 'ի ձեռին իւրում ունէր մերկ զխանջալն, ուժգին բախմամբ էհար 'ի թուլակուշտն սիրունին, և նա անկաւ ի վր երեսացն։

և

և այլ ոմն սուխտայ առեալ զծանր վէմ մի էզարկ ի վերայ գլխոյ Սիրունին և ջարդեաց զգլուխն և ի բաց ցնդեցաւ ուղեղ գլխոյն, և այնու էառ Սիրուն զվախճան կենաց, և մեռաւ ։ Ապա եդին պարան յոտն, և քարշեալ տարան արտաքոյ քաղաքին 'ի տեղին ուր զմահապարտսն սպանանեն, և անդէն զմեռեալ մարմինն քարկոծեցին այնքան, մինչ որ ծածկեցաւ 'ի քարանցն, և ապա թողեալ ի բաց գնացին արեանարբու գազանն սուխտէքն ։

Եւ 'ի նմին գիշերի Տէրն Քս̃ փառաւորեաց զնա լուսովն երկնային՝ որ էջ ի վր̃ նր̃ ․ զոր ոչ միայն քրիստոնեայք այլև յոլովք մահմետականք տեսին՝ և առ ամենեսին պատմէին ։ մինչև էհաս համբաւն առ նորին սպանող սուխտայսն ․ յորոց ոմանք եկեալ հաւաստեաւ տեսին՝ և գնացեալ պատմեցին այլոցն ։ և նոքա առաքեցին 'ի սպասաւորաց իւրց̃ զորս՝ որոց եկեալ գտին զմարմինս շանց մեռելոց՝ և բերեալ արկին ի վր̃ սրբոյ մարմնոյ Սիրունին՝ զի թերևս ամփոփեսցի լոյսն ․ այլ լոյսն ոչ ամփոփեցաւ մինչև ցլուսանալ տուընջեան շնորհօքն Քի̃ Այ̃ մերոյ ։ Իսկ 'ի վաղուեան աւուրն մատուցեալ քրիստոնէիցն առ փաշայն և առ զադին խնդրեցին զհրաման թաղելոյ ․ որոց հրամանաւ եկին քրիստոնեայքն և բարձեալ տարան 'ի դիրս հասարակաց քրիստոնէից՝ և անդ թաղեցին զՍիրուն անուն խոստովանողն հաւատոյս քրիստոնէութե̃ ։ Եւ եղև նահատակութի̃ Սիրունիս 'ի հազար և հարիւր և չորս թուականիս մերոյ ․ յամսեանն օգոստոսի, որ օր հինգ էր ամսոյն ․ 'ի կթղկսութե̃ տեառն յակոբայ ․ որ 'ի գերագահ աթոռն սուրբ Էջմիածին ։ և 'ի թագաւորութե̃ Օսմանցւոց սուլթան

մահմատին, որ նստէր 'ի կոստանդնուպօլիս մեծի քաղաքին։ Իսկ վէմն այն՝ որով ջարդեցին զգլուխ սրբոյ Սիրունին. այժմ լուանան և խմեն հիւանդաց հեղուն զջուրն. և հիւանդն առողջանայ շնորհօքն Քրիստոսի Յիսուսի մերոյ՝ որում փառք յաւիտեանս Ամէն։

Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ քրիստոնէին ։

ԽԱ։

ԱՅՐ ՈՄՆ ՄԽԻԹԱՐ Ա-նուամբ քրիստոնեայ՝ որ էր 'ի քաղաքէն վանայ և յազգէն Հայոց, քրիստոնեայ ծնողաց զաւակ, և էր այրս այս Մխիթար երևելի 'ի մէջ քաղաքին վանայ, առաջի փաշային, և զադւոյն, և ենկիչար աղասոյն, և այլոց իշխանացն մեծին, վասն զի կարի ձիավար էր և զինախաղաց և ուժնդակ, այլև խելօք կորովի, և խօսիւք քաղցրական, վասն որոյ ամենեքեան ենկիչարիքն և սպահիքն և յոլովք իշխանացն նմա բարեկամք էին։

Իսկ եղև զի առաջեալ Մխիթարս յաւուր միում ընդ ևւրոց յարակից արանց նստեալ 'ի տան իւրում քնարիւք և երաժշտականօք նուագարանօք զգինի ըմպեալ ուրախանային, և 'ի լուր երաժշտականի եղանակին ժողովեալ յոլով տղայք մահմետականաց 'ի դուրս և յերդիս և ի վերոյ որմոց զլսոյնուէին։ Իսկ Հայրն Մխիթարայ ելեալ առ տղայսն իբրև վարէր 'ի տեղւոջէն, և ոմանք 'ի տղայոցն հակառակեալ հարին զնա, և նա գնացեալ 'ի տուն պատմեաց թէ տղայքն հարին զիս, յայնժամ Մխիթար ըստ արիականին քաջութեան իւրոյ շարժեալ 'ի ցասումն բարկութեան ելեալ 'ի տանէն մերկունելով

նելով զխանձալն 'ի ձեռին իւրում սկսաւ հե
տամուտ լինել զկնի մանկանցն, և հալածե
լով հոյհոյութբ անարգեր զհաւատս և զօ
րէնս մահմետականաց։ Իսկ 'ի նմին ժամու այր
ոմն մահմետական անուանն հաջի էիւբ, որ էր մեր
ձակայ դրացի Մխիթարայ տեառնէր, և լսէր
զհայհոյանս և զանարգանս՝ զոր տայր Մխի
թար մահմետականաց մանկանցն, ասաց մեղա
դրանօք առ Մխիթար՝ լուեալ 'ի հայհոյանացդ.
զի անպատեհ է զայդքան հայհոյանս տալ ման
կանց՝ որք են մահմետականաւ հաւատով։ Իսկ
Մխիթար թողեալ զմանկունսն՝ և սկսաւ հե
տամուտ լինել զկնի հաջի էիւբին և հալածե
լով հայհոյէր։ Եւ 'ի հալածելն պատահեցաւ
անդէն եղբայր ղուլլարաղասուն, և նա ևս
մեղադրանօք ասաց Մխիթարայ մի առնել
զայդպիսի անպատեհ գործդ, իսկ Մխի
թար դարձեալ 'ի նա, և սկսաւ բարկութբ զնա
ևս հայհոյել։

Իսկ որ հաջի էիւբն էր գնացեալ առ սուխ
տայն և ամբաստան լինելով զՄխիթարէն,
սկսաւ վշտագնիւ սրտիւ պատմել նմ զբանս և
զգործս Մխիթարայ, յայնժամ ժողովեալ
բազումք սուխտայք իմաստին եղէն վրէժխնդ
դիրք անարգանացն հաւատոյ մահմետի, գնա
ցեալ ծանուցին փաշային, և առին 'ի նմանէ
զզօրականս և եկեալ կալեալ կապեցին զՄխի
թար՝ և տարան 'ի բանտն փաշային, և արարին
բանտարգել։ Իսկ վանայ վերին բերդին են
կիչարիքն, որք էին բարեկամք Մխիթարայ
անտեղեակք էին այսոցիկ, և յորժամ լուան
թէ կալան զՄխիթար և արկին 'ի բանտ, յայն
ժամ յիսուն ենկիչարի և երկու չօրվաջի ե-
կեալ 'ի դուրս հանին 'ի բանտէն զՄխիթար

և

և առեալ տարան 'ի վերին բերդն ի մէջ իւրեանց՝ և անդ պահեցին աւուրս երկուս, իբրև տեսին թէ հանդարտեցան սուխտայքն՝ և այլ մահմետականքն, և ոչինչ առնեն զՄխիթարեն, թողին զնա, որ գնաց 'ի տուն իւր։

Իսկ անօրէն սուխտէքն վերստին ժողովեցան՝ և գնացեալ կալան զՄխիթար. կապեցին և տարան առ փաշայն. և փաշայն առաքեաց առ մուֆթին և առ ղադին, եհարց թէ զինչ հրամայեն օրէնքն մահմետի վ՟ն այսմիկ՝ սպանանել թէ ոչ. և նոքա ոչ ետուն զհրաման սպանման, վ՟ն որոյ և փաշայն ոչ սպան. այլ հրամայեաց թողուլ ազատ։ Իսկ որ սուխտէքն էին ոչ թողին. այլ կապեալ զձեռսն 'ի յետս և գլուխ բաց և բոկոտն, այսր և անդր շրջեցուցանէին 'ի դրունս իշխանաց, հարկանէին, կառափնատէին, թքանէին, և պէսպէս կերպիւ տանջէին, և ասէին. ուրացիր զհաւատս քո՝ և պաշտեա զմեր հաւատս՝ ապա թէ ոչ սրախողխողեալ և քարակոծ լեալ մեռանիս 'ի ձեռաց մերոց, զայսպիսի բանս ասելով մերկացուցեալ զսուրս իւրեանց՝ զորս 'ի ձեռսն ունէին խաղացուցանէին ի վ՟ր նորա։ Իսկ Մխիթար՝ յամենայն տեղիս ուրև շրջեցուցին զնա՝ բարձրաձայն և համարձակ առաջի ամենեցուն հայհոյէր զմահմետ՝ և զնորին հաւատն՝ և զօրէնսն՝ և բազմօք բանիւք անարգէր. ոչ թէ զմի օր այլ յամենայն աւուր. և արիութ՟բ սրտի իւրոյ ասէր՝ վ՟ն սնոտի և դուզնաքեայ մահուան միթէ երկուցեալ 'ի ձէնջ ուրանամ զհաւատն իմ ճշմարիտ՝ և զՏ՟ր Յ՟ս իմ զՔ՟ս։ Այլ և ամենեքեան բարեկամք Մխիթարին և ծնօղքն և յարակիցք երիտասարդքն եկեալ առ նա մաղթելով ասէին՝ թէ առ 'ի հաճել զկամս

սուխտ

սուխտայիցն առերեսս և առժամուս ատա ըղ-
բան ինչ՝ և յետոյ գնացեալ յայլ աշխարհ պաշ-
տեսցես զհաւատն քո ։ Իսկ Մխիթար ամենև-
ին ոչ հաւանեցաւ բանիցն, այլ արիականաւ-
որտիւ՝ և պայծառօք դիմօք և համարձակ դաւ-
անէր զՔ՟ն Ա՟Ծ առաջի սուխտայիցն՝ և անար-
գէր զօրէնս մահմետի ։ Նայև փաշայն և ենկե-
չարաղասին առաքեցին առ Մխիթար և խոս-
տացան տալ նմա զբազում գանձս և զատացու-
ածս՝ և զպատուական ձիս և զզէնս, և զպետա-
կան իշխանութիւն՝ զի թերևս ատասցէ զբանինչ
'ի հաւատոյս սուխտայիցն՝ և զերծուսցէ զանձն
իւր 'ի մահուանէ՝ քանզի կարի յօժար կամօք
խնայէին 'ի նա վ՟ն արիագունի և զարմանալւոյ
քաջութեան. և Մխիթար ոչ հաւանեցաւ 'ի բանս
նոցա վ՟ն Ք՟նականաց հաւատոցն ։ Իսկ սուխ-
տէքն հանապազօր այսր և անդր 'ի դրունս
իշխանացն շրջեցուցանէին, քանզի փաշէն՝ և
ղադին՝ և մուֆթին ոչ ետուն զհրաման սպանա-
նելոյ, որոյ վ՟ն զայրացան սուխտէքն՝ և զամե-
նայն մաչխթաց կանչելն արգելին յաւուրս
յերկս, ասելով. Հաւատն մահմետի խանգա-
րեալ խափանեցաւ՝ և յերկիր սուզաւ՝ զի այր
անհաւատ զհաւատն մարգարէին մահմետի
յայտնի և համարձակ հայհոյէ ։

Եւ յաւուր միում մինչդեռ շրջեցուցա-
նէին 'ի պողոտայս քաղաքին, ոմն չարադոյն 'ի
սուխտացն, որ և մերկ 'ի ձեռին ունէր զխան-
ջալն, ուժգնիւ բախմամբ եհարկ 'ի թիկնս
մէջն Մխիթարին, և թուուցեալ ցայթեցաւ
արիւնն ընդ երեսս որմոյն՝ որ մերձ էր, յորմէ
բաղխմանէ անկաւ Մխիթար իվ՟ր երեսացն,
և այլս սուխտայքն դիմեալ իվ՟ր սրախող-
խող արարեալ ծակոտեցին զնա՝ և անդէն մե-

ռաւ ։

տաւ ։ Եւ ապա եդին զպարան յոտս նորա եւ քարշեալ տարան արտաքս 'ի քաղաքէն 'ի տեղին յորում զամենայն մահապարտս սպանանեն, եւ անդէն ժողովեալ անթիւ բազմութիւն մահմետականաց քարկոծեցին զմեռեալ մարմինն, այնքան, զի 'ի ներքոյ քարանցն ծածկեալ անյայտ եղեւ մարմինն, ապա թողեալ իւրաց գնացին արիւնարբու եւ մարդադէմ գազան սուխտայքն ։

Իսկ 'ի նմին գիշերի գիշերապահ ենկիչարեքն, որք 'ի վերին բերդին էին, տեսանէին զի լոյս մեծ փայլատակեալ եւ ճառագայթեալ կայր 'ի վերայ նորա, որոց ընդ լուսանալ առաւօտուն եկեալ 'ի մէջ քաղաքին ամենեցուն պատմէին զտեսիլն զայն ։ Եւ յերկրորդումն աւուր մատուցեալ քրիստոնեայքն առ փաշայն՝ եւ առ ղադին խնդրեցին զհրաման թաղելոյ զսուրբն, եւ նոքա ետուն զհրամանն ։ Վասն որոյ գումարեալ ամենայն եկեղեցւոյ քահանայք եւ ժողովուրդք բազմախուռն հանդիսիւ, բարձին զպատուական մարմին նորա՝ եւ տարեալ 'ի դիրս Հայոց 'ի կարգս քրիստոնէից թաղեցին զնա սաղմոսիւք եւ օրհնութեամբ 'ի փառս Քրիստոսի պսակողին զնա ։ Իսկ եղեւ նահատակութիւն սորա 'ի թուականիս մերում հազար եւ հարիւր եւ հնգին 'ի նոյեմբերի ամսոյ տասն եւ երկուսին . 'ի կաթողիկոսութեան մեծափառի աթոռոյն սրբոյ Էջմիածնի տեառն Յակոբայ, եւ 'ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմուտին, որ նստի 'ի Կոստանդնուպոլիս մեծի քաղաքին ։

Պատ

## ԽԲ :

## ԱՅՐ ՄԻ ԱԶԳԱՒ

հայ եւ հաւատովն քրիստոնեայ որոյ անունն էր Սեւերոս, եւ էր յերկրէն ոստանայ, եւ վն կարեաց աղքատութեան իւրեանց ամենիւք ընտանեօք իւրեանց ելեալ գնացին յերկիրն բարմայ՝ որ այժմ ասի ախբալ, եւ բնակեցան՝ ի գիւղն բալասան : Եւ այրս այս Սեւերոս վն մարմնաւոր կարեաց իւրոց յարեցաւ առ քուրդ իշխան ոմն՝ որոյ անունն էր բաքդար աղայ, որ էր իշխան բերդին՝ զոր լուիքան կոչեն, եւ էկաց Սեւերոս ՚ի սպասաւորութեան բաքդար աղայ իշխանին ամս երկուս :

Եւ եղեւ զի ոմանք ՚ի ծառայից բաքդար աղային, որք էին հաւատով մահմետականք եւ ազգաւ քուրդք, եւ ծառայակիցք Սեւերոսի, նախանձեալ ընդ նմա, յաւուր միում կացին առաջի բաքդարաղային ասելով զՍեւերոսէն, թէ մեք բազում անգամ լուաք ՚ի դմանէ՝ զի ասէր դառնամ ՚ի քրիստոնէականաց հաւատոյս՝ եւ լինիմ մահմետականաւ հաւատով, կարի ճըշդիւ լինէին վրէժխնդիրք. եւ ստիպէին զպարոնն դարձուցանել զՍեւերոսն ՚ի քրիստոսականաց հաւատոցն : Իսկ իշխանն բաքդար աղայ էհարց յՍեւերոսէն վն ճշմարտութեան իրացն, եւ լուաւ զպատասխանի, թէ ոչ ուրանամ զքրիստոնեական հաւատս իմ, այլ դարձեալ զոր ասեն իմ՝ ի իմ զըանդ զայդ : վն որոյ ոչ լուաւ բաքդար աղայն վկայութեանց իւրոց ծառայից, այլ սաստեաց իւրոց ծառայիցն լռել, եւ ներեաց Սեւերոսին ասելով, թող տուք դմա կեալ ՚ի

հաւատս

հաւատս իւր։ և թէպէտ բաքդար աղայն սաս-
տեաց չարախօսացն զի խանգարեսցի բանն, սա-
կայն ոչ խանգարեցաւ այլ օր աւուր առաւել
ճարակեցաւ բանն մինչև էհաս առ մեծ իշ-
խանն խօսրով փաշայ։

Սա էր խօսրով փաշայս եղբայր եգիշէրի
մեծի պարոնին, և տէր աշխարհին, և իշխան
իւր բաքդար աղային, զոր և վկայքն չար կա-
լեալ զԱ՛ւետիսն տարան առաջի խօսրով փա-
շային՝ որ բնակէր ՚ի բերդին՝ որ կոչի փիզան,
և զնոյն վկայութն վկայեցին առաջի նորա։
Եհարց խօսրովփաշայ զԱ՛ւետիսն վս՛ երացն
ճշմարտութե՛, և նա դաւանեաց զՔ՛նական
հաւատն, և խօսրովփաշայ հրամայեաց ունել
զնա ՚ի կալանս, և զկնի աւուրց բերեալ ա-
ռաջի իւր էհարց զնա և էգիտ հաստատուն ՚ի
հաւատս Ք՛ի՛ դաւանելով զինքն քրիստո-
նեայ։ և ասէր ՚ի պատասխանին իւր թէ զի-
արդ մարթ է ինձ թողուլ զլոյս և գնալ զհետ
խաւարի, զի Ք՛ս՛ ինքն լոյս է՝ սոյնպէս և հա-
ւատն, որ առ ՚ի նա։ Իսկ առաջնորդն ձեր՝ զոր
մարգարէ ասէք՝ ինքն պատրիչ է և խաբեբայ՝
և ամենայն բան իւր սուտ է։ Յայնուհետև կա-
մեցան նախ ողոքականօք բանիւք և հնարիւք
որսալ զնա, զի ասաց խօսրով փաշայ տամ քեզ
զպարոնութի, և զգիւղ, և զդուստր իշխանին,
որում և դու հաւանիս, և բերեալ զպատուա-
կան երիվարսն իւր ամենիւք ոսկիակազմօք սա-
րուքն կացոյց առաջի նորա, և ասաց· ընդ իս
հանապազ պահելով փառաւոր և մեծապա-
տիւ իշխան ունիմ զքեզ, եթէ հաւանեսցիս
իմոց բանից, և Ա՛ւետիսն ոչ հաւանեցաւ։

Ապա կոչեաց խօսրովփաշայն զառաջնորդս
ընդունայնից օրինաց իւրեանց հարցանէր ցնս՝

թէ զիարդ հրամայեն օրէնք գրոց ձերոց վն
առն այսորիկ, որոց զպատասխանի արարեալ՝
թէ ասացեալ բանդ, որ զդմանէ իրաւացի, և
հաստատեսցի վկայիւք, անհնարինէ կեալ դմա
եթէ ոչ հաւատոյն մահմետի, և կամ թէ ան
պատճառ մեռանիլ։ Այլ առ այս բան նախկի
սուտ վկայքն եկեալ անդէն առաջինն ևս վկայ
եցին զառաջին սուտ վկայութին իւրեանց։
Այլ խոսրովփաշայն բաղումանգամ առաջի
իւր բերեալ զԱւետիսն զնոյն բան հրամայեաց
նմա՝ թէ ուրացիր զքրիստոնէական հաւատս
քո՝ և ընկալ զմահմետական հաւատն՝ և ես զոր
բարիս և խոստացեալսն առաւելաբար տամ
քեզ, և Աւետիսն ոչ ուրացաւ զքրիստոսական
հաւատն իւր։ Իսկ խոսրովփաշայն իբրև ե-
տես թէ Աւետիսն պինտ կայ 'ի հաւատս Քրիստոսա
կան՝ և ոչ կամի դառնալ 'ի նմանէ. վնորոյ
հրամայեաց արձակել 'ի կապանաց՝ և թողուլ
'ի կամս իւր կեալ հաւատոյն Քի։ Իսկ կար
դացողք օրինացն մահմետի մոլայք և մուդա
ռիսք ժողովեցան առ խոսրովփաշայն՝ և'ի բա
նից գրոց իւրեանց խօսէին ընդ նմա, թէ պար
տականես դու բռնութբ ածել զնա 'ի ճշմա
րիտ հաւատս մեր, և թէ ոչ հաւանեսցի սպա
նանել, և խոսրովփաշայն թօթափելով զօձիսն
իւր ասաց անպարտ եմ ես յարենէ առնդ այդ
որիկ՝ և անմասն յայդց դատաստանաց. եթէ
լսէք բանից իմոց՝ թողէք զդա՝ զի անպարտէ.
և թէ ոչ թողուք դուք գիտէք։

Իսկ մոլայք և մուդառիսք ամենին գումա
րեալք իվր Աւետսին, յափշտակեցին և տարան
զնա իմէջ իւրեանց, և սկսան զարդարել զնա ազնուով
և պատուականաւ հնդերձիւ ևանուշահամիւք
կերակրօք և ըմպելեօք, և ախորժ իւք բանիւք

զօ՟արձացուցանել զնա, և զամենեսեան խոստացեալսն խոսրով փաշայն կրկնակի տալ նմա խոստացան, և Պետրոս ոչ դարձաւ 'ի Քրիստոնէականաց հաւատոյն։ Յայնուհետև երբև ետես թէ ոչ դարձաւ, սկսան չարչարել զնա պէսպէս օրինակաւ, և մանաւանդ զի 'ի պարանոցէն մինչև ց յոտսն զա՟մ փափուկ տեղիս մարմնոյն ծակոտեցին ծայրիւ սրոյ, յորոյ մարմինն ոչ մնաց ձեռնաչափ տեղիմի անծակ, յորոյ յարենէն ներկեցաւ ամենայն մարմինն և զգեստ անձինն՝ որ զտեսողաց մարմինսն սոսկացուցանէր։ Իսկ խոսրով փաշայն միւսանգամ խնդրեաց զՊետրոսն, երբև ածին զնա առաջի նր՟, տեսեալ զնա այնպիսի արիւնաթաթաւով մարմնով, սոսկացեալ զարմացաւ, և սաստկիւ բարկութեամբ մեղադիր եղև մօլայիցն։ և յայնժամ ևս հրամայեաց թողուլ զՊետրոսն կալ 'ի հաւատս իւր, իսկ արիւնարբու մօլայքն ոչ թողին։ Այլ առեալ տարան իմէջ մէյդանին արտաքոյ բերդին, և անդ ևս բազումանգամ ստիպեցին զնա ասելով՝ ուրացիր դու զքո հաւատն՝ և ընկալ զմեր հաւատն՝ ապա թէ ոչ հատանեմք զգլուխ.քո. և նա ոչ հաւանեցաւ, և ոչ ուրացաւ. վա՟ որոյ սրով հատին զգլուխ երանելոյ առնն Պետրոսին։ և 'ի ժամ նահատակութեան իւրոյ Պետրոս զերեսն իւր դէմ ընդ արևելս ունէր և չարեաց արբանեակ մօլայքն բռնութեամբ դարձուցանէին զդէմս նորա 'ի կողմն հարաւոյ, և սուրբն ոչ անսաց նց՟, այլ ուղղեաց զդէմս իւր ընդ արևելս, և այնպէս կատարեցաւ իմ՟ Քրիստոսականին հաւատոյս դաւանելով զՔ՟ս Ա՟ծ ճշմարիտ։

Եւ 'ի գիշերին յայնմիկ Տ՟րն Ք՟ս փառաւորեաց զվկայն իւր նշանաւ երկնայնոյ լուսոյ,

որ էջ

որ էջ ի վ͞ր նր, որում եղեն ականատեսք ամ͞ն բնակիչք փիղանայ բերդին, եւ որք շուրջ զնովաւ էին, այլեւ ինքն խոսրովփաշայ, որ՚ի բարձրաւանդակէ տան իւրոյ հայեցեալ տեսանէր զսիւնաձեւ ճառագայթեալ լոյսն ի վ͞ր նորա, այլեւ սպանողք մօլայքն. մ͞ի որոյ սպանողք մօլայքն փութացեալ բարձին անտի զմարմինն Ղեւոնդին եւ տարան յայլումն տեղի ՚ի տան ուրումն պահեցին մինչեւ լուսացաւ օրն, եւ ապա կոչեցին զեղբայր Ղեւոնդին՝ որոյ անունն էր Թաբաւուկ, հրամայեցին նմա բառնալ զմարմինն նր եւ տանիլ թաղել: Որոյ ժողովեալ զարս քրիստոնեայս, զքահանայս եւ զաշխարհականս, բարձեալ զնահատակն տարան ՚ի գիւղն, զոր անուանեն առակ, եւ անդ հանգուցին զնա ՚ի գիրս տապանի սաղմոսիւք եւ օրհնութ͞բ եւ երգօք հոգեւորօք: Նա եղեւ կատարումն նահատակութեն երանելւոյ առնս. Ղեւոնդս ՚ի թուականութեանս մերում հազար եւ հարիւրեւհնգին յամսեանն մարտի քսան՚ի փառս Քրի Այ մերոյ օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից ամէն.

---

Յաղագս պատժոյն Այ որ եղեւ ի վ͞ր առն ումեմն որ ՚ի ժամ մահուանն իւրոյ ուրացաւ:

ԽԺԹ:

# Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅԵՏԻՆՍ

յամս թագաւորութեան Պարսից արքային մեծի եւ առաջնոյ Շահաբասին, ՚ի Նախչուան քաղաքի, որում քաղաքի իշխան էր մախսուտ սուլթանն, եղեւ սքանչելիքն Այ ի վ͞ր առն ումեմն ուրացողի որոյ զանունն ասէին Ղարաչօրակ: Նա էր այրս այս հաւատովն քրիստոնեայ՝ եւ քրիստոնեայ ծնողաց զաւակ, բայց էր ինքն ծոյլ եւ պղերգ յօրինացն Այ, եւ

հեռացեալ յամենից կարգաց և կրօնից քրիս տոնէութեն, ոչ երթայր 'ի ժամատեղ և յաղօթս. ոչ խոստովանէր՝ և ոչ հաղորդիւր. ոչխոկայր թէ մահկանացու է և մեռանելոց. ոչ յիշէր զհատուցումն ըստ գործոց՝ ոչ և պատմեն ամ֊այն գիրք։ այլ էր հեռացեալ յամենից պատուիրանացն Ա.յ. և զամենայն աւուրս կենաց իւրոց շրջէր 'ի կրպակս և 'ի շուկայս, 'ի փողոցս և 'ի հրապարակս, 'ի դրունս այլազգեաց և իշխանաց վաճառել զինչս, քանզի արուեստ իւր ստացեալ էր զդալալութիւն, որ զայլոց ինչս առեալ վաճառէ այլոց, և այսպէս մնացնա զամմն ժամանակս կենաց իւրոց, քանզի առեն պատմողքն՝ որք ականատեսք են գործոյս՝ թէ մինչ 'ի վաթսուն ամն էհաս նա՝ աւելի և կամ պակաս։

Եւ եղև՝ զի հիւանդացաւ այրս այս զարաչօրակ զհիւանդութի մահու, և կոչեցին առ նա քահանայ՝ որ խոստովանեցոյց զնա. բայց մն զի գիտէր քահանայն զանուղղայ վարս նր և զմոլար կենցաղավարութի նր։ և յաղագս փրկութե հոգւոյ նր ասէ ցնա քահանայն։ եղբայր՝ դու ինքնին գիտես, զի զկեանս քո՝ ծոյլ և պղերգանցուցեր՝ և ոչ երբէք յիշեցեր զօրս զայս՝ թէ մահ կամ դատաստան կայ քո առաջի։ Արդ՝ եկեալ այսօր էհաս քեզ, խնդրեմ 'ի քէն լուիցես ինձ՝ և սակաւ ինչ ապաշխարանս յանձնառցես զպահս և զաղօթս, և եթէ մեռցիս այսուհիւանդութեամբս, Ա.ծ ինքն թողութի շնորհելոց է քեզ՝ զի խոնարհեցար կամօք քովք՝ և զապաշխարութի յանձն առեր, նա և զվարձս բարեաց ընդունիս դու յԱ.յ։ ապա եթէ ողջասցիս, և ելցես 'ի հիւանդութենէ այդի յայնժամ կատարեսցես զուխ

տեալ

տեալ ապաշխարանս քո. եւ ես հաւատամ յՔ͞Ս՝
որ վ͞ս այս սակաւ ապաշխարանացս՝ զորս յանձն
առնուս տացէ քեզ Ք͞Ս զառողջութ͞ն կատա
րեալ՝ զի ելցես 'ի հիւանդութենէդ։ Ո՜ այս
ամենայն խօսեցաւ ընդ նմա քահանայն՝ զի
թերեւս զղջասցի։
Իսկ նա ոչ միայն ոչ զղջացաւ, այլ եւ զմեծա
գոյն մեղս եւ զչարիս գործեաց դժոխարեալ եւ
խոժոռեալ ընդ բանս քահանային. վաղվա
ղակի կոչեաց առ ինքն զոմանս 'ի մահմետակա
նաց՝ եւ ասաց ն͞ց բերել առ ինքն մօլլայ եւ մու
ղրի. եւ իբրեւ բերին, յայնժամ ձեռամբ ն͞ց ու
րացաւ զՔ͞Ս եւ զհաւատսն ն͞ր, եւ եղեւ մահմետա
կանաւ հաւատով եւ դաւանութ͞բ։ Իսկ իբրեւ
զայս գործեաց ողորմելին եւ թշուառականն այրն
այն ղարաչօրակ. ամ͞ք քրիստոնեայք՝ որք էին
'ի քաղաքին, սուգ անմխիթար զգեցան. ոչ մի
այն վ͞ս կորստեան ն͞ր, այլ եւ վասն Ք͞Սականաց
հաւատոցս, զոր ծաղր եւ այպն արարեալ քամա
հանօք հայհոյէին մահմետականքն։ այլ եւ մահ
մետականքն ուրախացեալք 'ի ձայն ցնծութե
հրճուէին, եւ խայտային վ͞ս ուրանալոյ առն
այնմիկ՝ վ͞ս զի երեւելի ոք էր ուրացողն։ Իսկ
յետ ուրանալոյ ն͞ր անցին իբ͞ր աւուրք չորք՝ մե
ռաւ ուրացողն հիւանդն, եւ ժողովեալ ամ͞ն
բազմութիւն մահմետականաց քաղաքին՝ ոչ
միայն կարգաւորք եւ հասարակ մարդիկք, այլ եւ
երեւելի եւ անուանի արք եւ իշխանք, եւ զարդարե
ցին զինքեանս 'ի զէնս եւ 'ի զարդս երեւելիս՝ եւ
պայծառահանդերձից, եւ զդագաղն ն͞ր առաւել
պճնազարդեալ պաճուճեցին, եւ 'ի պատուէ
նորա արտաքս բերին զալամ եւ բարձրացուցին
զթուղ աւելի քան զքսան, եւ բազմաշքովք եւ
երեւելեօք փառօք տարին 'ի դիրս մեռելոց իւրց
թաղեցին զնա։

Իսկ արդարադատն ԱԾ՝ ոչ իսպառ անտես
արար զժողովուրդս իւր՝ և զՀաւատս քրիստո
նէութե. այլ իսկոյն շարժեալ 'ի նախանձ ար
ար զդատաստան և զվրէժխնդրութիւն: զի ոչ
յետ չորից աւուրց ուրանալոյ իւրոյ, ապա սա
տակեցաւ ղարաչօրակն, սոյնպէս և յետ չորից
աւուրց Թաղման իւրոյ՝ յաւուր միում ընդ մեր
ձենալ երեկոյին տեսին զղարաչօրիկ ուրացօղն,
զոր Թաղեցին մահմետականքն, զի ելեալ էր
'ի վՀէն՝ յորում Թաղեալն էր՝ մերկ և խայտա
ռակ՝ և գարշադէմ և այլագունակ, իբրև
դշուն կատաղի, և զպատանն իւր արկեալ ի վեր
ուսոց իւրոց գայր ընդ մէջ քաղաքին 'ի շուկայն
և 'ի կրպակսն շրջէր. և որք տեսանէին զաՀի
Հարեալ ահաբեկ լինէին, քանզի ամքն ճանա
չէին զնա. և 'ի զարՀուրելոյ տեսլենէ նր ամ
ոք Թողեալ զգործս և զխանութս իւրց Հապ
ճեպ տագնապաւ Հազիւ ճողոպրեալք փախ
չէին 'ի տեղւոջէն անդառնալեօք գնացիւք:
Իսկ ոմանք յայլազգեացն զլամս ինչ արկին ի
մէջ Հրապարակին՝ Թէ ոչ է սա ղարաչօրակն այլ
այլ իմն նոր երևեալ ինչ: յայսմանէ պատճառէ
և վն ստուգելոյ զիրն, միաբանեցան արք տասն
ևս աւելի, և գխոտեալ նկատեցին զժամն՝ յորում
ղարաչօրակն եկն 'ի շուկայն, յայնժամ միաբա
նեալ արքն գնացին 'ի վիՀն՝ յորում եդեալ էր
ղարաչօրակն՝ տեսին զի ոչ էր անդ, և այսպէս
արարին՝ ոչ միանգամ, այլ չորանգամ. որով
առաւել ստուգեցաւ Թէ նա է: Իսկ յամենայն
աւուր եկանէր ընդ մերձենալ երեկոյին զպա
տանն 'ի յուսն արկեալ և գայր 'ի շուկայն. և
մինչ 'ի լուսանալ առաւօտուն շրջէր, և ընդ
լուսանալ առաւօտուն դարձեալ գնայր 'ի
դիրն իւր մտանէր. և յաւուրս եօԹն այսպէս

առնէր

տունէր: յորոյ զարհուրելի տեսլենէն սարսեալ սասանեցաւ քաղաքն ամենայն. և ընդմերձենալ երեկոյին՝ յորում պահու ժամանէր ժամ գալստեան նր՝ թողուլին ամքն զխանութս և զգործս իւրեանց՝ և փախչէին 'ի տունս իւրեանց՝ այլև գաւք գիշերապահից զինուորացն՝ որոց զհասաս ասէն՝ նոքա ևս լուեցին 'ի գիշերի շրջելոյ. քանզի երկնչէին:

Նաեւ մահմետականացն զամօթի հարեալք շառագունեալք՝ կորագլխեալք՝ կարկեալք՝ ափշեալք յերկիր նայէին, ապա խորհրդականքն 'ի նոցանէ զկնի եօթնից աւուրց եկեալք խմբեն զխորհուրդ արարին, քանզի ընտրեցին զարս արիասիրտս՝ և զքաջազօրս՝ և զկորովիս աւելի քան զերեսուն. և վառեցին զնս զրահիւք և պատերազմականօք զինուք, նետիւք և աղեղբք, սուսերօք և այլովք զինուք. և պատուիրեցին նց սպանանել զպարաջօրակն և կորուսանել: և պատրաստեալք արքն դէտ անկեալք կային զգուշութբ՝ և երկիւղիւ տագնապեալք սպասէին գալստեան ուրացողի մեռելոյն: Նաեւ երեկոյեան պահուն՝ 'ի մերձենալ հանապազորդեան ժամուն տեսին զի գայր, և պատրաստեալ արքն ընթացան առաջի նր զի սպանցեն, իսկ նորա ընդ կրունկն դարձեալ զփախուստ առեալ և գնացեալ եմուտ 'ի յորջն՝ յորմէ ելեալնէր՝ յորում թաղեցին զնա: իսկ զինակրից արանցն հասեալք 'ի տեղին անդէն խողխողեցին զնա սրովք, և կորեցին զգլուխն. տարան յայլ հեռաւոր տեղի և կորուսին: և այսպիսեաւ օրինակաւ բարձաւ չարն 'ի միջոյ, և ամ այլազգիքն սկսան հայհոյել զպարաջօրակ զուրացողն, և վկայէին վն հաւատոյս քրիստոնէութե ճշմարիտ գոլոյն: Նաեւ զայս ամենայն գոր

ծեւց սատանայ զի խախտեսցէ զհաւատս Քրիստոնէութեան, բայց սովաւ առաւել հաստատեցաւ ճշմարիտ հաւատս Քրիստոնէութեան՝ և բարձրացաւ անուն Տն մերոյ Յի Քի։ և ամ̃ն Քրիստոնեայք առաւել հաստատեցան ի մ̃ջ հաւատոյս Քի, և մեծաւ գոհութ̃ փառաւորեցին զԱ̃ծ վ̃ն յայտնելոյն զճշմարիտն։

---

Յաղագս մասնաւորի հրկիզութեան որ եղև՝ ի Կոստանդնուպօլիս մեծի քաղաքին։

## Ն։

ԱՅՍՄ ՀՐԿԻԶՈՒԻ թեն ոչ էաք մեք ականատեսք՝ քանզի մեք 'ի սբ̃ աթոռն Էջմիածին էաք յայնս աւուրսն։ այլ յեղբարց մերոց վարդպտց պատահեցաւ ոմն անդ 'ի Կոստանդնուպօլիս՝ որոյ անունն յորջորջիւր Ստեփաննոս վարդպտ տեղեաւ գոլով 'ի գեղջէն Մեղրոյ։ որ խւրոց կենցաղավարութեանց զիրակութի գրեաց առ եղբարս՝ որք էին յԷջմիածին՝ յորում քարտէսի և զԿոստանդնուպօլսի մեծի քաղաքի զհրկիզութիւն էր գրեալ՝ որում ինքն անդէն էր լեալ ականատես։ զորոյ զքարտէսն առեալ զնոյն գրեալն նովին շարադրութ̃ արդէն աստ գծագրեցի, այց պատճառաւ վ̃ն։ Նախ զի զաւ ձեռն պատրաստ գրեալն ոչ 'ի դէպ համարեցայ երկրորդել։ և երկրորդ, վ̃ն խմբս բազմակի աշխատանացս՝ որով ձանձրացեալեմ. զի արդէն 'ի մետասան ամ̃ն մօտ որ աշխատիմ ի վերայ այսմ պատմագրիս, վ̃ն զի 'ի հարիւր թուին սկզբնաւորալի գրել, և արդ 'ի հարիւր և 'ի տասնևմէկ թուին մօտ, և տակաւին աշխատիմ ի վ̃ս սորա։ և երրորդ զի ծերացեալեմ և կարիպականեալ 'ի զօրութեանց,

և

և մաՀն եկեալ Հանապազօր յանդիմանն իմոցս աչաց կանգնեալ է. և գիտեմ թէ ես մեռանիմ և այս գիրքս մնայ կիսակատար, կրեալ աշխատանքն իմ ա͞մքն ընդ վայր կորնչին, զի ոչ ումեք փոյթ է մտանել յաշխատութիւն և 'ի զրաւ Հանեալ կատարել. վասն որոյ փութամ, Ճեպիմ, զի թերևս Հանից յաւարտ՝ զի մի անկատար մնասցէ, և աշխատանքն իմ կորիցէ ։ Իսկ գրեցեալն ստեփաննոսի վարդապետին՝ զոր 'ի կոստանդնուպօլսէ առաքեալ էր՝ այս է ։

Բայց սակայն յաղագս բիւզանդեայ իրագործութեանց և վշտաբերականաց եղելութեանց՝ անբերելեաց տառապանաց՝ և վտերականաց դիպուածոց ով կարէ արտայայտել վիպասանութեամբ 'ի ձեռն ներտառականի քարտիսի ը͞ս նունոյ տեսակի. վասն զի ա͞ծ ասասու էր այն բարկութի. և սոգտանք մեղանաց ամենից անձանց ներՀակաց շարժութեանց. վասն որոյ ը͞ս նախախնամութեէին Հասարակակին զլխու առ մի ենթակային՝ իբր առ ի զգաստութի բոլորին. ապաթէ ոչ և զընդՀանրականացն շաՀեցին պատիժ յերկուս կեանս՝ ը͞ս տէրունականի Հրամանի և պայմանի՝ ըստ աւուրց նոյին գոլ. և ըստ ապագային առ վախճանականաւ յաւիտենին ։ Ուստի իբր զարՀուրականք՝ և տեսութիք երկիւղալիք՝ ձայնք սոսկաբերողունք, և ձայթմունք յոգնորակք. աղաղակք բազմազանք՝ և տարակոյսք անսպառականք ։ Այլ և ըստ այսմ եղանակի արդիս նշանագործեցաւ. որոյ վն տեսարանամ առ այս վիպասանութի ։ Քանզի յամսեանն յուլիսի 'ի քսաներորդի և նախկնորդի ը͞ս Հռոմայականի տումարի ։ և 'ի թուականութեսս արամազեան վիճակի՝ Հազարերորդի և Հարիւրորդի եւթներորդի կալուածի. յա-

ուր շաբաթու յիններորդում պահու : պատա
հի իրս չարաբաստութե՟. և գործ կսկծալից
այսմիկ քաղաքի մեծի : Ոչ ի 'ի հիւսիսականէ
կողմանէ քաղաքին մերձ առ ծովու նորին լինի
հրաձգութե դիպուած յոյժ յոյժ անընդհատև
երևակայութե՟ ըստ վախճանի նշանի : քանզի
սկսեալ 'ի Նորակերտէ պալատէն արքայի զաւ
խլեր՝ և լայնատարածիւ և բազմաւ միջոցաւ
և սահմանաւ առնու զբոլորոքումն վառման
հրայրեցութե՟. մինչ 'ի կամարն Ջրաբերական:
և անտի ապա դարձեալ լայնանայ և երկայնա
նայ զաւախլայր մինչ ի նոյն տեղին ուստի սկսաւն.
սաստկի վոռեաստկանի հողմոյն նպաստութե՟:
Եւ այսմ յառաջս երկուս բաժանեալ Ճարակ
մամբ և սպառմամբ հասանէր մինչև 'ի գագաթ
բլրին. ուրանօր ժողովարանք մեծամեծք այլ
ազգեաց կառուցեալք երևէին. առ արտաքին
տեսութիւ պատշաճագործեալք արժանի հի
ացման ըստ նունոյ դիտաւորութե՟ : Եւ անտուստ
հապա իսկոյն և կանխագոյն յառաջս երիս բա
ժանիւք՝ և ըստ իւրաքանչիւրոց ծայրից բաժա
նելոց փութացեալք լինէին առաջի եղեալս ին
քեանց յիրին կատարակործանումն՝ ըստ ստիպման
և բաղխման յաջողակի հողմոյն: իբր պայմանաւ
սահմանաւ և տարազու իմն՝ ըստ բանականացն
ուրուք : Քանզի և ոչ դրեցաւն Ճախրաւեալ
երկուց եզերաց հանդերձ առամիջոցաւն . հա
մանգամայն 'ի մի վայր կողոպտեալն լրապէս տա
պալմամբ և ապականութե՟ ամենից շինուածոց
զկառուցմունս. այսինքն բարձրաբերձից աշտա
րակաց. և ոսկեզօծից պալատաց. գեղեցկադրից
տարաւանդակաց՝ և յօրինածախակերտից ապա
րանից և տանց : Եւ զի երկուց ծայրից որպէս
առացաւն. միոյն իջանելով 'ի գագաթէ անտի

առ

առ արևելս կոյս. պարուեալ ընդ ծովեզերօքն, և անցանելով ընդ դրունս մաքսապետականին. և աւազակոչականին վախճան առեալ առ տունն վանից։ Իսկ ծայրն երկրորդ ի առ արևմուտս Ճեմեալ սաստիկ իւր խորոյն զօրութե. սաուչմամբ և պարփակմամբ իւր նոյնոյ եղանակի դիմեալ առ աշտարակօքն եօթնակերպեան և դոյզն ինչ բաղկացութե միջոցին. առ ծովու տորակայեալ և անցեալ ընդ դուռն Նորակոչին. Համդերձ միջոցականաւ եղերբն զետեղանան առ ծայրն առաջին։ այսմ և ըստ այսմ օրինակի վեցից տասանց և երից ժամուց յամենից դարդուց խորոց ունայնացեալ գտաւ մայրաքաղաքն երևելի։ ըստ Հոռմոց այլայլականաց պատահմանց. վոււեստականաց և Նոտոսաց. փոթորկաց և այլոց բազմաց։ մինչ զի զքարինս այրեալ բնաւին յաձխեն կացոյց։ Ու՛ արդ՝ անդ էր տեսանել զտագնապ Հասարակաց՝ զվիշտ բոլորից՝ և զկականումն ընդՀանրից։ անդ էր տեսանել զբաղխումն կրծից՝ զաղաղակ բարբառոյ՝ և զարտօսր աչաց։ Անդ էր տեսանել զդալարումն աղեաց՝ զմորմոք սրտից՝ և զՃիչ ձայնից։ Անդ էր տեսանել զանուրաձևութիւն անձանց՝ զբեկումն միջաց՝ և զթափումն մտաց։ զի Հուրն սոսկալի յաւէտ բորբոքեր՝ և զարՀուրեցուցանէր. ապարանք փլանէին, որոտմունք լինէին, և ցոլմունք երևէին։ Սաստի փարթամք տարակուսէին, ռամիկք յուսաՀատէին. և աղքատք վարանէին։ վիրաւորք գոչէին՝ ծնողք սգային՝ և որդիք դառնապէս լային։ վասն բարձման յոյսն ցն՝ վերացաւ օգնութիւն յինքեանց՝ և մերկացան յամենից ընչից իւրեանց։ տե՛ միանգամայն մեկուսացան, ՚ի միմեանց Հեռացան՝ և անյայտ եղեն։ զի

քայքայեցան՝ փետակտեցան՝ և բաժանեցան՝ հարք յորդւոց՝ և որդիք 'ի հարց՝ մարք 'ի դստերաց՝ և դստերք 'ի մարց. բարեկամք 'ի բարեկամաց՝ և սիրելիք 'ի սիրելեաց իւրեանց. անգիւտ լեալ տակաւին 'ի միմեանց ըստ տէրունականի հրամանին։ Նաև ճանաչել ոչ կարէին զմեռեալս իւրեանց 'ի թաղումն դիականց. զի ըստ երից հազարաց աւազին գողորանց մեռելոց՝ ըստ յայտնի տեսութեանց՝ ըստ զննողաց հոգաբարձութեանց կարգեցելոց։ Սաստի տրտմութիւնք՝ ուստի հեծութիւնք՝ ուստի խուովութիւնք առաւելապէս ներտարածեցաւ յընդհանուրս. ըստ գրոյն՝ թէ տարեկանք ձեր 'ի սուգ դարձցին։ Նա կատարեցաւ այս ամենայն վն մեղաց մերոց. 'ի խրատ և 'ի զգուշութիւն անձանց հակակայից ծայրից։ Նաև արդ սիրելի ոչ անկ հաւատացելոց՝ 'ի կորուստ և 'ի կործանումն վարկանիմ արկանել ընդ ոտիւք զայսպիսի իրադարձութիւն. այլ մանաւանդ արժանի առնել պատմութեան. ապաթէ ոչ դուք ողջերուք 'ի Տն ամենի ամէն։

---

Պատմութիւն Օսմանցւոց Թագաւորաց։ Օսման օղլու կարգն այսէ՝ որ կոչի Խոնդքար։

ԾԱ.

# ՕՍՄԱՆՕՂԼՈՒ. ԿԱՐԳՆ

և սկիզբն, որք եղեալք էին և բազմացեալք. բազմաց քաղաքաց և գաւառաց տիրեալք և թգրեալք։ Հայոց թուին վեց հարիւր և ութսուն մէկին. 'ի յօսմանձուկէ գիւղաքաղաքէն. ոմն օսման անուն մեծատուն ժողովեալ զիւր նմանիս և եղեալ պատերազմեցաւ ընդ իւր բոլորի պարոնայսն՝ և էառ զնս՝ և փոքր փոքր մեծացաւ. և եղև թա

գաւոր

գաւոր բազմաց քաղաքաց և գաւառաց։
Իսկ ըստ ոմանց այր մի շինական հողագործ տաճիկ։ որ թողեալ զհողագործութիւն և ժամանակ մի գող եղև՝ և սակաւ սակաւ զօրացաւ. և գնացեալ յարեցաւ 'ի սուլտան ալատինն. և առեալ զօրս 'ի նմանէ գնաց էառ զբուրսայ քաղաքն։ Եւ յետ նր թագաւորեաց որդի նր սուլտան օհրան. և սա էառ զէնկիշէհէրն և եբուսաց։ Եւ յետ նր թագաւորեաց որդի նր սուլտան մուհամատն։ Եւ յետ նր որդին իւր մուրատ թգւրեաց։ Եւ յետ մուրատին որդի նր պայազիթ, որ իլտրում կոչիւր. զսա լանկ թամուրն յերկաթի ղաֆասն եդ։ Եւ յետ նր միւս այլ մուրատն։ Եւ յետ նր միւս այլ մուհամատ, որ էառ զստամբօլ քաղաք. 'ի թոռականիս մերոյ ինն հարիւր և երկու։ Եւ յետ նր թգւրեաց սուլթան բայազիթն. 'ի սորա ժամանակն էր մաթէոս վրդպտն 'ի սևաստու վանքն։ Եւ յետ սորա որդին իւր սէլիմ՝ որ սահմանեաց վտղայ ժողովելն։ Եւ յետ նորա թգւրեաց որդին իւր սուլէյման խոնդքարն՝ որ քան զամէն շատ թգւրեաց և շուրջ եկն զերկրաւ։ Եւ յետ սորա թգւրեաց որդին իւր միւս այլ սէլիմ։ Զսա ասեն թէ հրէի որդի էր. քանզի սորա հայրն անզաւակ էր՝ և մայրն ծնաւ զաղջիկ մի. և ջհուտ կին մի ծնաւ զտղայ. և գանձիւք թագուհին հաւանեցոյց զջհուտն՝ և փոխեաց զաղջիկն ընդ տղային. և անուանեցին սէլիմ. այս է սորա պատճառն։ Եւ յետ սորա որդին իւր մուրատ. որ զսև գդակն հագոյց քրիստոնէից ազգին։ Եւ յետ սորա որդին իւր միւս այլ մուհամատ։ Եւ յետ սորա որդին իւր ահմատ։ Եւ յետ սորա թգւրեցուցին զիւր եղբայրն զմուստաֆայն.

ֆայն երիս ամիս. և յետ երից ամաց մանզուլ ապարին իշխանքն զՄուստաֆայն՝ և թագաւորեցուցին զաՀմատի որդին: Եւ յետ չորս տարւոյ ենկիչարիքն սպանին զՕսմանն. և թագաւորեցուցին միւսանգամ զՄուստաֆայն՝ զոր ասէին թէ պակասախելք էր: Ի Թուականիս մերում Հազար և եօթանասուն և մէկին. թագաւորեաց մէկ տարի և վեց ամիս՝ և բարձին: Եւ թագաւորեցուցին զՕսմանի որդին զՄուրատն ՚ի Թուին Հազար և եօթանասուն և երկուսին. ՚ի սորա ժամանակին և ՚ի սոյն ամին կարմիր գդակքն՝ որք են զլլպաշքն, առին զԲաղդատ: Այս սուլթան Մուրատս Հայրն սուլթան Օսմանն Հանապազ թադբիր սուրաթ եղեալ շրջէր ի մէջ քաղաքին Ստամբօլայ ՚ի ղաՀվայխանէքն և ՚ի մէյխանէքն և յայլ տեղիս. լսէր և տեսանէր զանկարգութիւս և զանիրաւութիւս ենկիչարոցն և սպաՀոցն. և անխնայ կոտորէր զնա զմեծս և զփոքունս. վասն որոյ միաբանեցան դասք ենկիչարոցն և սպանին զսուլթան Օսման թագւորն: Եւ ՚ի նմին ժամանակի էր ՚ի յարզրում քաղաքին ապազափաշայն յոյժ արի և քաջ պատերազմող՝ և բազմաՀնարել. սա վասն թագւորի արեան վրէժխնդրութեան սկսաւ կոտորել զենկիչարիսն. և յարզրումոյ սկսեալ յիմ քաղաքս և ՚ի գաւառս կոտորելով գնաց մինչ ՚ի յանկիւրիոյ. և յոյժ անխնայ և սաստիկ չարչարանօք սպանանէր՝ մինչև սպառել ամենից ենկիչարաց: յանկիւրիոյ դարձաւ և եկն դարձեալ յարզրում, զբերդն ամրացոյց՝ և նստաւ ՚ի մէջին: Այլև զկարաւանսն, որք յարևելից և յարևմտից գային յարզրում և գնային. արգել զամենն Հնարիւք և խաբէութեամբ մինչ որ բազումք կարաւանք ժողովեցան. ապա յաւուր միում զամենեն զատացուցանօղն յափտաշկեաց՝ եթէ

նալտ

նաղտ և եթէ վէճ ։ և յետոյ ապստամբեցաւ 'ի Թ̃րէն՝ և եղև ջալալի ․ այլև կամեցաւ միաբանիլ ը̃ Պարսից ․ զի քեռորդին իւր բազմօք զօրօք առաքեաց առ շահաբաս Թ̃ւրն Պարսից ։ Իսկ սուլթան մուրատ Թ̃րն առաքեաց իվ̃ր այս ապազայփաշայիս զեւր վէզիր խոսրով փաշայն ․ որ եկեալ էառ զերդն արզրումայ և զապազայփաշայն կալեալ տարաւ յըստամբօլ ։ 'ի Հազար և եօթանասուն և եօթն Թուին մեռաւ Թ̃րն եդ̃ զապազայն 'ի բանտի՝ և յետոյ սպան ․ 'ի Հազար և ութսուն և երեք Թուին յօգոստոսի ամսոյն ։ Այս սուլթան մուրատս առաքեաց զեւր վէզիրն զխոսրով փաշայն գնալ իվ̃ր բաղդատոյ և առնուլ զնա ․ և խոսրովփաշայն գնացեալ եմուտ յերկիրն Պարսից 'ի կողմն Համադանայ՝ և էհաս մինչև 'ի քաղաքն դարգազին ․ քանզի զբաբիլօն ոչ կարաց առնուլ զի ձմեռն և ցուրտն էհաս իվ̃ր ․ դարձաւ և եկն 'ի Թօղաթ ․ վ̃ն որոյ Թ̃ւրն սուլթան մուրատ առաքեաց զմուրթուզափաշայն սպանանել զխոսրովփաշայն ․ և նա եկեալ 'ի Թօղաթ սպան զխոսրովփաշայն՝ Հազար և եօթասուն և եօթն Թուին ․ այս այն սուլթան մուրատն է՝ և վէզիր խոսրովփաշայն է ․ զոր խաչակ կէթ̃ղկսի ներհակութ̃ե Ճաւին յիշեալեմք ։ Թուին Հազար և ութսուն և երկու օգոստոսի ամսոյն ․ սուլթան մուրատն սաստիկ եռաախտաբար զԹութունն ընդ̃ ամ̃ն աշխարհս տէրութ̃ե իւրոյ ․ զամ̃ ղահվախանէք՝ որք յամ̃ն քաղաքս կային՝ քակեալ աւերեաց և խափանեաց ․ վասն զի 'ի ժամանակին յորում ենկիչարիքն զսուլթան օսմանն սպանին, 'ի ղահֆախանայսն նստեալ զապանման խօսան խօսէին խմելով զղահվայն և քաշելով զԹութունն ։ Թուին Հազարևութ

սուն

սունևերէք, սուլթանմուրատն գնաց խվ̄ր ընդ Հայ
'ի պատերազմ, և ըն Հացեք Հնազանդեալք նմա
դարձուցին յինքեանց։ Թուին Հազարևութ-
սունևերէք 'ի ժամանակս այս սուլթան Մուրա
տիս ծուազատիկ արարին ազգն յունաց. յո
րում ժամանակի էր վէզիր բայրամ փաշայն՝
որ էր ինքն յազգէն յունաց, վ̄ն որոյ արար երես
պաշտութի ազգին յունաց՝ և զազգն Հայոց
Թիւր ծանոյց Թ̄գւրին, որոյ վ̄ն բարկացաւ
Թ̄գրն և սպան 'ի Հայոց մէկ քահանայ և երկու
աշխարհական։ Թուին Հազար և ութսունև
չորս՝ յամենայնն մարտի՝ էլ սուլթան Մուրատն
'ի ստամբօլու և գնաց խվ̄ր երևանայ 'ի պատե
րազմ՝ յամենայնն օգոստոսի էՀաս անդ. և ու
նէր ընդ իւր եօթնՀարիւր Հազար պատերազ
մող Հեծեալ՝ Թող զծառայականս և զբեռնա
կիրս։ և մեծաւ զօրութ̄բ ծեծեաց զբերդն.
որ 'ի մէկ օրն ընդ տիւ և ընդ գիշեր վեցՀարիւր
և այլ աւելի Թօփ Հարին բերդին, վ̄ն որոյ
յիննն օրն էառ զբերդն։ և զիշխան բերդին՝
զորդին ամիրգունայ խանին զԹաՀմազղուլի
խանն իւրովք իշխանօքն առաքեաց յըստամ
բօլ. այնքան պաՀեաց՝ որ անդէն մեռաւ. այս այն
ԹաՀմազղուլին է՝ որ զԷջմիածնի քարերն ա-
ռաքեաց յասպաՀան։ Այս սուլթան Մու
րատն զմուրթուզափաշայն տասնևՀինգ Հա
զարքաջ պատերազմօղիւք զօրօք եդ իմէջ բեր
դին երևանու՝ և ինքն անցեալ գնաց մինչ 'ի Թաւ
րէզ, ձմեռն և ցուրտն էՀաս խվ̄ր, այլև Համ
բաւ եկն 'ի ստամբօլայ, վ̄ն որոյ անտի դարձաւ
խվ̄ր վանայ եգնաց 'ի ստամբօլ։ Թուին, Հազար
և ութսունևՀինգ, յամենայնն դեկտեմբերի
'ի ժամանակս այս սուլթան Մուրատիս, Թ̄գրն
Պարսից շաՀ սէֆի եկեալ պատեաց զբերդն

Երևանայ և ունէր ը՟դ իւր զզօրս պատերազմօղս
հարիւրհազար Թող զբեռնակիրս և զայլս,
երեք ամիս նստաւ ի վ՟ր բերդին՝ և բազմօք
ջանիւք և չարչարանօք հազիւ կարաց առնուլ
զբերդն. և 'ի զօրացն Օսմանցւոց կարի զբա
զում կոտորեաց, և յինքն կալաւ զաշխարհն
ամենայն, և յՕսմանցւոցն զերիս փաշայս և
զայլ նշանաւոր 'իշխանս ը՟դ իւր տարաւ յասպա
հան՝ ուր և անդէն մեռան: Ի թուին Հազար և
ութսունևեօթն ապրիլի քսանևութին նոյն
սուլթան Մուրատն գնաց ի վ՟ր Բաղդատայ, և
'ի նոյեմբերի վեցն եհաս 'ի Բաղդատ, և
ծեծեաց զբերդն հզօրզօրութ՟բ երեսունև
ութն օր, և դեկտեմբերի չորսն էառ զբերդն.
և զզօրսն Պարսից, որք անդ էին խայլաւ կոտո
րեաց զքննախնդրութ՟ն արարեալ վ՟ն իւրոց
զօրացն, զորս կոտորեցին Պարսիկք յերևան:
և զփառաւոր իշխանն Պարսից, որ էր 'ի մէջ բեր
դին, որոյ անունն էր խալաֆբէկ բազմօք չի
խանօք առաքեաց յըստամբօլ՝ և անդ մեռան:
և յիւրոց իշխանացն կարգեաց զիշխան 'ի Բաղ
դատ՝ և զամենայն աշխարհն յանձն արարնմա.
ապա դարձաւ 'ի Բաղդատայ՝ և գնացեալ է
մուտ 'ի ստամբօլ մեծաւ փառօք՝ 'ի Թուին
Հազար և ութսունևութն յունիսի ամսոյ յեր
կուսին: Ի թուին Հազար և ութսունն ևնին եղև
հաշտութ՟ի իմէջ երկուց ազգացն և թագ՟ւորացն
Օսմանցւոց և Պարսից, զի թագ՟ւորն Պարսից
Շահսէֆի զերևան էառ, և թագ՟ւորն Օսման
ցւոց սուլթանմուրատն զԲաղդատ էառ, յետ
առնլոյ զքաղաքս զայսոսիկ միաբանեցան եր
կոքին թագ՟ւորքն՝ և արարին զհաշտութ՟ի, պայ
ման եդեալ, մինչև ցերեսուն տարիս պահել
զհաշտութ՟ին, վ՟ն որոյ ա՟մք աշխարհք արև

լեայք և արևմտեայք օրհնեն և զողորմին տան երկուց Թագաւորացն, զի կան 'ի խաղաղութե. զի նախքան զբարիշութիւն 'ի փախստեան և 'ի Թարատեան կային, յափշտակութենէ և յաւարառութէ, 'ի գերութենէ և 'ի սպանութենէ, 'ի սով և 'ի սուր, և մանաւանդ ողորմելի ազգս Հայոց: Բայց սուլթան մուրատ Թագաւորս կարի առաւելաւ արիութեամբ և քաջութեամբ և սրտեղութեամբ և խելօք. և յոյժ հնազանդեցոյց զՕսմանցին, որ 'ի յիշել զանուանն սարսեին, զի Թագաւորն սուրաթ եղեալ հանապազ շրջէր 'ի մէջ քաղաքաց և 'ի մէջ բանակի զօրացն, և 'ի մէջ ենկիչերոյն և սպահօյն. և տեսանէր, և լսէր զչարութիւն և զանիրաւութիւնս նց, այլև 'ի մէջ գաւեհկաց շինականաց շրջեալ հարցանէր՝ և տեղեկանայր 'ի նոցանէ զանիրաւութիւն և զյափշտակութիւն փաշայից և իշխանաց, և 'ի վաղուէան աւուրն առ ժամայն չարամահ արարեալ սատակէր: և զբազում զօրեղ և զնշանաւոր փաշայս և զիշխանս, և զշեխս և զդատիս և զմուֆթիս կոտորեաց, և անխնայ կոտորէր իբրև զոչխար՝ վս որոյ ամենայն սարսեալ դողային 'ի մանէ: Բայց և որ զիւրև շրջակայ ազգք և Թագաւորք կային սարսեալ դողային 'ի մանէ, զի ոչ զաւխեծ յաղթօղ և զօրեղ էր 'ի մէջ ամենեցուն: և այսպէս մեծափառօք և յաղթողև զօրութեամբ վարեաց սա զԹագաւորութիւն 'ի կեանս իւր: Իսկ 'ի Թուին հազար և ութսուն երկուին 'ի սրբոյ սարգսի շաբաթու հինգշաբաթոջ աւուրն մեռաւ այս սուլթան մուրատ Թագաւորս և ամենայն աշխարհ կսկծացը մեռանելովն նր. և մինչ տակաւին յոգւոջ կայր սուլթան մուրատս եած առաջի իւր զեղբայրն իւր՝ որոյ անունն էր սուլթան իբրահիմ, և կացոյց զնա Թագաւոր 'ի տեղի իւր՝ և ինքն

մեռաւ

մեռաւ՝ ի նոյնում աւուր: Թուին հազար և ութ սուներնին նստաւ Թգւր սուլթան Երուսաղեմի և ոչ արար զգործ ինչ արժանի յիշատակի՝ ոչ զարիութի և ոչ զուղղութի: Նայց ՚ի սորա ժամանակն ազգն Օսմանցւոց կազմեցին զբազում նաւս՝ և լցին պատերազմողիւք արամբք՝ և համբաւեցին թէ գնամք ի՛վ ՚ի մալթայու կղզւոյն՝ և խաբուածեալ գնացին ի՛վ ՚ի կրետոյ կղզւոյն, որ էր ՚ի ձեռն վէնէտիկցւոց, և դիւրաւ առին զնա՝ զի բնակիչք կղզւոյն յօժարեցին յառնուլն Օսմանցւոց: և առին Օսմանցիք զկրետէ կղզին ՚ի վէնէտիկցւոց, ՚ի Թուին հազարերնին սունեհնգին: Այս սուլթան Երուսաղեմի հետևեցաւ զորովայնս և զախտս բուծանել՝ քանզի խոտորեցաւ յախտս ըգամոլութե կարի առաւել, զի թող զկանայս և զհարճս իւր՝ զբոզս և պահէր առ ինքն: այլև զկանայս և զդստերս իշխանաց բռնութե ածեալ կատարէր զկամս իւր յայտնի և համարձակ. վա որոյ վշտացան ազգն և իշխանքն իւր՝ և միաբանեալ զորդին նր որոյ անունն էր սուլթան մուհամմատ եդին ՚ի տեղի նորա Թգւր, և այսպ զսուլթան Երուսղեմն սպանին, ՚ի Թուին հազար և իննսունև եօթնին: Թուին հազարերնիննսուն և եօթնին, յուլիսի ամսոյ քսան և եօթն նստաւ սուլթան մուհամմատ Թգւր և ոչ արար զգործ ինչ արժանի յիշելոյ՝ զի տկար է զօրութե այլև մարմնով, նաև հասակաւ տղայ՝ և հաղիւ թէ զաշխարհ տէրութե իւրոյ նուաճեալ պահէ, և այնպէս կայ մինչև ցայսօր՝ յորում է թուականն մեր հազար և հարիւր և տասն և մէկ. և այսպայն ՏՆ ԱՄ է գիտելի՝ որում փառք յաւիտեանս ամէն:

Յորժամ յանկթամուրն եկեալ է, Իլտրում
պայազիթն 'ի բուրսայ եղեալէ զաթոռ
որ է թախթն: Յետոյ որդի նորա սուլթան մու
րատն առեալ է զատրանայ: Յետոյ սուլթան
մուհամատն առեալ զըստամբօլ` 'ի թուին
Հայոց ինն հարիւր և երկու: և առ զկաֆայն, և
զաղ քրման, և զտրապիզոն, և զբաղում քաղաք
և զգաւառս անցեալ սուլթան մուհամատն
Իսկ սուլթան պայազիթն հասեալ 'ի սուլթան
սէլիմն: 'Ի թուին ինն հարիւր և վաթսուն և երկ
սուլթան սէլիմն յորժամ թագւորեաց` եղ բազ
մօք զօրօք գնաց ի վր շահիսմայիլին և պատերազ
մեցաւ 'ի չալտրանն` և ոչ կարաց առնուլ զնա
դարձաւ յետ` և եառ զկամախ ինն հարիւր և
վաթսուն և չորս թուին: ինն հարիւր և վաթ
սուն և հինգ թուին եառ զամիթ: Իսկ յետոյ
Ինն հարիւր և վաթսուն և վեց թուին եառ
զմըր բազմաւ ջանիւ: Ինն հարիւր և վաթսուն
և եօթն թուին առին այլազգիքն 'ի յամիթ
զմեծ կաթուղիկէն զսուրբն թէոդորոս '
Հայոց` և արարին իւրն աղօթանոց: Ինն հա
րիւր և եօթանասուն թուին մեռաւ սուլթան
սէլիմն. նստաւ սուլթան սուլէյմանն: Ինն հա
րիւր և ութսուն և չորս թուին սուլթան սու
մանն բազմօք զօրօք եղ և գնաց ի վր շահթա
մազին 'ի թաւրէզ` և ոչ կարաց յաղթել նմա
դարձաւ և եառ զբաբիլոն, որ է բաղդա
Բայց 'ի ճանապարհին զբազում նեղութի
կրեաց. քանզի հանդիպեալք եղեն աշագ
մեծի գետոյ միոյ. որ թուրքի բառիւ տողու
ղումաց` որ է ինն ձիւղ: և տարեալէ զբ
զում մարդս` և զբազում գանձս գետն այն
հազար և հինգ թուին բացին զնոր դուռն
թայ, որ հայի ընդ արևելս. զի առաջին չինօ

չոր

դրունս եր բացեալ՝ և անցեալ եր բազում
ժամանակ իւր̃. և յետ ժամկց էառ Թուրքի
Թգ̃րն զամիթ. եւեւս, որ մէկ դուռն իմէջ բեր
դին եր եղ և մուտն՝ խցին զնա. որ անուանի ջըր
դուռն հրամանաւ Թգ̃րին. Հազար Թուրքին նո
րոգեցաւ յամիթ սբ̃ կիրակոս ։ Նննհարիւր և
իննսուն և իննն Թուրքին սուլթ.ն սուլէյմանն կըր
կին եղ բազմօք զօրօք՝ և գնաց իւր̃ շահ Թահմա
զին 'ի Թաւրէզ և ոչ կարաց առնուլ։ դարձեալ
իւր̃ շամիրամայ կերտին, որ է վան. և էառ զնա։
Յետոյ մեռաւ սուլթն սուլէյմանն. նստաւ որ
դին̃ սուլթան սէլիմն։ 'Ի հազար և տասն և իննն
Թուրքին սուլթան սէլիմն զբզ̃ում զօրս առաքեաց
իւր̃ կիպրոսի կղզւոյն. երկու ամ պաշարեաց
զնա՝ և էառ. և զբզ̃ում քրիստոնեայս կոտորեաց՝
այս Թգ̃րս ութ ամ Թգ̃րեաց ։ Յետոյ որդի
սորա Թգ̃րեաց սուլթան մուրատն։ 'Ի հազար և
քսան և իննն Թուրքին նեղացաւ Թգ̃րն 'ի հրէից
համարձակութէն. և վերայոյց զփակեղն 'ի
գլխոց հրէիցն և քրիստոնէիցն ամ̃. բայց 'ի տե
ղիս տեղիս կաշառ եառուն և առին զհրամանն, ե-
դին զփակեղ յետ տամնևութն ամի. ապա կոս
տանդնուպօլիս և այլ բազում քաղաքք մնացին
գդակով։ Նու այս Թգ̃ւրս սուլթան մուրատս
առաքեաց զբազում զօրս իւր̃ Պարսից աշխար
հին՝ և էառ զԹաւրէզ՝ և զերևան՝ և զգան
ջայ՝ և զարաշ՝ և զշամախի մինչև 'ի դուռն ալա
նաց։ երեսուն աւուր ճանապարհ զլայնութի
և զերկայնութի տիրեաց աշխարհացն. տասն
և հինգ ամ հեծելակոխ եղեալ՝ 'ի սովէ և 'ի
սրոյ բազումք մեռան. և բազումք երկիրք աւե
րեցան. յետոյ սակաւ մի խաղաղութի եղև.
Յետ մեռանելոյ սուլթան մուրատին նստաւ
որդին̃ սուլթան մուհամատն 'ի Թուրքին Հայոց

հազար և քառասունեւչորս. և ոչ արար զխաղաղութիւն: ՚Ի սորա ժամանակին բազում քաղաք և երկիր աւերեցաւ՝ զի ոչ կարէր վարել զթագաւորութիւն. Ծառայքն և պարոնայքն ամենն ապստամբեցան, և զերեսդարձուցին ՚ի նմանէ: քանզի էնքն միայն ոչ էր իշխանաւոր. յորժամ տայր զքաղաք մի փաշային միոյ՝ կամ պարոնի միոյ. յետ տասն աւուր՝ կամ քսան աւուր՝ մայրն կամ քոյրն՝ կամ խուր կինն. կամ վէզիրն տային այլոյ փաշային. և առնուին զբազում կարմիր գահեկան: Օտնգրանակերան զամիթ ՚ի վեց ամիսն էին փաշային եռուն. կայր զի փաշայն գայր. կայր զի փաշային վաքիլն գայր. Նաքա երբ գային, գիտէին զի բանի յետքն փուչ է, նաքա այլ սկսանէին ՚ի կողոպտել և ՚ի թալանել զքաղաքն և զերկիրն: Օ ինչ երկարեմ, զի գրով ոչ կարեմ պատմել՝ ՚ի յամիթ աստ և անաշինութիւն կայր, ապա յամթոյ կէսաւուր հոզէն, որ ՚ի դուրս ելանես, մինչ ՚ի մեծ քաղաքն ստամբօլ աւերութիւն էր, ուր ուրէք գտանիւր շինութիւն: ՚Ի յայս սուլթան մահամատի ժամանակին ՚ի չօռում գիւղաքաղաքին յայտնեցաւ եաղիչի անուն, և ունէր զեղբայր մի հասան անուն, ոչ ՚ի թիւրքանէ տոհմէ էր՝ և ոչ ՚ի մեծէ ազգէ այլ գուեհիկ և ոչինչ. քան զամ մարդիկ. զբազում աւերութիւն արար՝ և զհարկապահանջութիւն ձգեաց ՚ի գիւղ և ՚ի քաղաք մինչ ՚ի դուռն ընկզանդիոյ քաղաքին: Ժողովեցան գանդատաւորք՝ գնացին ՚ի սուլթան մահմատն թէ երկիրք և քաղաքք ամենն աւերեցան յոչինչ ումէքէ. Թիւրքն զհրաման արար, ժողովեցան յամիթ քաղաքին, յիսուն հազար մարդ աւելի և ոչ պակաս, զօրագլխաւն իւրեանց գնացին խիլ՛ինի և ոչ կարացին յաղթել:

այլ

այլ նիզականք յաղթեցան ։ Ի յուրհայ էր հասր լեալ, և զուրհայոյ բերդն մեծաւորն՝ ի բերդէն ձգեաց, և տիրեաց բերդին և քաղաքին ։ Եւ գլուխ քաջանայ մի և տանուտէր մի նահատակեաց, վ̅ն գանձ ժողովելոյ՝ և մեծամեծս 'ի տանջկաց շատ սպան, և շատ վնասարար ուր հայքաղաքին 'ի պատմել չիգալ, երեք ամ խ̅լ̅ի գնացին և յաղթեցան զօրագլխաւն իւր̃յ և ոչին չացան ։ Յետոյ նեղացաւ Թ̅գ̅րն և հնարք խնացաւ, առաքեաց զբազումդ գանձս և զխելայս և կոչեաց զնա՝ և անցոյց զմեծ ծովն և արար զօրագլուխ զօրացն իւրոց ընդդէմ Փռանկին և մաճառին ։ այնքան տկարացաւ այս Թ̅գ̅ւորս՝ որ ոչ կարաց յաղթել, այլ զհնարս խմացաւ և արար զայս ։ Ինն տարի թագաւորութի արար սա, 'ի սորա ժամանակն խանգարեցաւ Օսման օղլու Թագաւորութիւն ։ Ի հազար և յիսունևերեք Թուին մեռաւ սուլթան մուհամմատ՝ նստաւ որդին սուլթան ահմատ ջհանգիրն տղայ հասակաւ ։ Թուին հազար և վաթսունևօթն մեռաւ սուլթան ահմատն և Թ̅գ̅ւորեաց եղբայր նորին սուլթան մուստաֆայն, արարին բեգամայ՝ կեցեալ չորս ամիս Թ̅գ̅ւր, և հարկեւ նատուցին 'ի վայր, և Թ̅գ̅ւորեցուցին զեղբօր որդի նորա զսուլթան օսման տղայ հասակաւ, տասն և չորս ամեայ ։ Եւ յայսմ ամի Թուին հազար և եօթանասուն գնաց խ̅լ̅ի լեհայ 'ի պատերազմ սուլթան օսմանն հանդերձ Թաթար խանիւն, և դարձան բազմօք դերեօք, և բեզամայ արարին ամենայն երկիրն նորա ։ Ի յայսմ ամի Ա̅ծ էառ զվրէժ դերեացն 'ի սուլթան օսմանէն ։ յարեան զօրքն խ̅լ̅ի իւր և սպանին ։ և Թ̅գ̅ւորեցուցին զսուլթան մուստաֆայն զհօր եղբայրն նորին հանեալ 'ի յարգելանոցէն ։

Այլևս բանևկարգ Օսմանցւոց թգ՟ւորցն։

ՉԽԶ. թգ՟րեաց օսման յազգէ տաճկաց ամս. ԾԲ. որոյ անուամբն օսմանլու կոչեցան։

ՉԾ. մեռաւ սուլթան օսմանն և թգ՟ւորեաց օրխան որդի ն՟ր ամս. ԻԹ։

ՉԿԱ. էառ սուլտան օրխանն զատրանայ։

ՉՀԹ. թգ՟ւորեաց մուրատ ամս. ԾԹ։

ՊԼԷ. թգ՟ւորեաց պայազիթ ամս. ԺԴ։

ՊԾԱ. մեռաւ պայազիթն և. թգ՟ւորեաց մահմետ որդի ն՟ր ամս. ԺԹ։

ՊԾԱ. թգ՟ւորեաց մահմետ ամս. ԺԹ։

ՊՀ. թգ՟ւորեաց մուրատ ամս. ԻԹ։

ՊՂԹ. թգ՟ւորեաց մահմետ ամս. ԼԱ։

ՋԲ. էառ սուլթան մահմետն զբիւզանդիայ։

ՋԼ. մեռաւ սուլթան մահմետն. և թագաւորեաց պայազիթ որդի ն՟ր։

ՋԼ. թգ՟ւորեաց պայազիթ ամս. ԼԱ։

ՋԿԱ. թգ՟ւորեաց սէլիմ ամս. Թ։

Սի սէլիմ սպան զհայրն իւր զսուլթան պայազիթն՝ և ինքն թգ՟րեաց. վ՟ն որոյ եղև խռովութի ի մէջ երկուց եղբարցն սուլթան սէլիմին և ահմատին. և եղև սուլթան ահմատի որդի մուրատն սօֆի։

ՋԿԲ. առաւ սուլթան ահմատն որդւովք և դստերօք իւրովք. և փախստականք եղեն զօրք ն՟ր։

ՋԿԲ. սուլթան սէլիմն կոտորեաց զզօրս շահիսմայիլին։

ՋԿԳ. կամ. ԿԴ. սուլթան սէլիմն գնաց ի վ՟ր շահիսմայիլին. և պատերազմեցան ՚ի չալտրան՝ և ոչ կարաց առնուլ զնա։

ՋԿԴ. էառ սուլթան սէլիմն զկամախ։

ՋԿԵ. էառ զամիթ։

ՋԿԷ.

Ջ ԿԳ. եառ զշամ՝ և զմսըր։

Ջ ԿԵ. չարացաւ սէլիմն և արար զառաջին տղայ ժողովն 'ի Քրիստոնէից։

Ջ Հ. մեռաւ սէլիմն և թագաւորեաց սուլէյման որդի նորա ամս. ԽԵ։

Ջ ՀԵ. գնաց սուլթան սուլէյմանն 'ի պուտուն 'ի Թախտն ընկուզաց և եառ զնա։

Ջ ՁԴ. եառ սուլթն սուլէյմանն զբուղդատ։

Ջ ՂԲ. մաղաքիայ վարդապետն դերջնցի գնաց առ սուլթան սուլէյմանն և վերացոյց զտղայ ժողովելն հրամանաւ նորին 'ի դերջանայ՝ և 'ի բաբերդու։

Ռ. ԺԵ. գնաց սուլտան սուլէյմանն ի սիգէթվար։ և անդ մեռաւ 'ի սէյիթիվար։ և թագաւորեաց սէլիմ որդի նորա ամս. Թ։

Ռ. ԺԶ. թագաւորեաց սուլտան սէլիմն։

Ռ. ԻԴ. մեռաւ սուլտան սէլիմն և թագաւորեաց մուրատ որդի նր ամս. Ի։

Ռ. ԽԴ. յունվարի վեցն մեռաւ սուլթան մուրատն՝ և թագաւորեաց մահմետ որդի նր յունվարի. ԻԵ. ամս. ԺԵ։ սա եառ զերկուս բերդս 'ի մաճարէն։

Ռ. ԽԴ. դեկտեմբերի. ԼԱ. մեռաւ սուլտան մուրատն. և թագաւորեաց մահմետ որդի նր յունվարի. ԺԵ։

Ռ. ԾԲ. մեռաւ մահմետ՝ և թագաւորեաց ահմատ որդի նր ամս. ԺԴ։

Ռ. ԿԶ. առաքեաց սուլթան ահմատն զթաթարխանն և զխալիլփաշայն իւր շահաբասին և ոչ կարացին առնուլ զնա. այլ աւերեալ զթաւրէզ և զշրջակայս նր դարձան յետս։ Նոյն յայսմ ամի մեռաւ սուլտան ահմատն՝ և թագաւորեաց մուստաֆայ եղբայր նր. նոյեմբերի ԺԹ. օրն չորեք շաբաթի ամիսս երիս։

Նոյն 'ի սոյն ամի ընկեցին իշխանքն զսուլտան մուստաֆայն. և թագաւորեցուցին զօսման որդի սուլտան ահմատին փետրվարի. ժդ. օրն երկու շաբաթի, որ թագաւորեաց ամս. դ:

ՌԿԷ. թագաւորեաց մուստաֆայ ամիսս. դ. և 'ի սոյն ամի թագաւորեաց օսմանն ամս. դ: ժդ. ամսոյ փետրվարի ժզ. օրն երկու շաբաթի:

ՌՀԱ. սպանաւ սուլտան օսմանն 'ի զօրաց իւրոց. և հանեալ 'ի բանտէն զսուլտան մուստաֆայն զեղբայր սուլտան ահմատին վերստին թագաւորեցուցին մայիսի. ժը:

ՌՀԲ. ընկեցին զսուլտան մուստաֆայն և թագաւորեցուցին զսուլտան մուրատն. յօգոստոսի ամսոյն. լա. յաւուր կիրակէի:

---

Ազգաբանութիւն Պարսից թագաւորացն:

ՇԻ:

ՍԿԻԶԲՆ ՇԷԽ ՍԷՖԻՆ Է, որ էր իշխան արտաւիլու. որոյ որդի է շէխ հայդար. այս հայդարս էառ իւր կին զդուստր եաղուբ թագաւորին թաւրիզոյ. որ էր թոռն ջահնշայ թագաւորին: և 'ի շէխ հայդարէն և 'ի քուռէրէն եաղուբ թագաւորին. ծնանի որդի՝ և անուանի իսմայէլ: այս հայդարս և իւր կինն խորհէին սպանանել դեղով զեաղուբ թագաւորն. զի իւրեանք առնիցեն զթագաւորութիւն: և սիրոյ պատճառանօք կոչեն զեաղուբ թագաւորն 'ի ճաշ. և տան ուտել նմա զդեղեալ կերակուրն. և յետ ուտելոյն զգաց թէ դեղեալ է կերակուրն. և բռնութեամբ նոցունց ևս տայ ուտել 'ի կերակրէն: և սոքա երկոքեանս մեռան 'ի միասին եաղուբ թագաւորն և քոյրն իւր և շէխ հայդարն. և սպանանի

անտիրանայ աշխարհն. և լինին խռովութիւնք և պատերազմունք: և զմանուկն խմայել փախուցանեն 'ի կղզին ախթամար՝ և անդ սնանի և հասանէ յարբունս հասակի. յայնժամ առեալ զնա ազգականաց իւրոց բերեալ յայտնեն ամենեցուն՝ թէ սա է երկուց կողմանց ժառանգն. քանզի որդի է շեխ հայդարին և քուեր որդի եաղուբ թագաւորին. վասն որոյ ամենեքին հաւանեալ կացուցանեն զնա թագաւոր 'ի տեղի եաղուբ թագաւորին: և այս խմայելս ծնանի շահ թահմազն. և նա զերկրորդ շահ խմայելն. և զշահ խուդաբանդէն: զկնի շահ թահմազին թագաւորէ երկրորդ շահ խմայելն. զկնի այս խմայելիս շահ խուդաբանտէն. զկնի սորա թագաւորէ որդի սորա առաջին շահաբասն. զկնի սորա թագաւորէ թոռն սորա շահ սէֆի. զկնի սորա թագաւորէ որդի սորա երկրորդ շահաբասն. որ էր կարի քրիստոնէասէր և ուղղադատ: զկնի սորա թագաւորէ որդի սորին շահսէֆի անուանեալ. զկնի սորա թագաւորէ եղբայր սորին շահխմայելն:

---

Վասն անուանց և որպիսութեանց պատուականաց Ականց:

ԾԳ.

ԱՌԱՋԻՆ ՈՐ ԿՈՉԻ ՅԱԿՈՒԹՆ,

բարքն այն է, որ թէ մարդ 'ի բերանն առնու զծարաւն կտրէ. և թէ զոսկին հալես և զեղութն 'ի մէջ հալած ոսկւոյն ձգես. ոչ այրի՝ և ոչ գոյնն աւերի՝ և ոչ պայծառութիւն. այլ և ասացեալ են թէ ովոր լինի հետն պահէ՝ նա մօտ մարդկան ընդունելի է և զարկուածի լաւ է:

Սարդիոնն. որ է սէյլանն, արիւն որ էր թայ յինքենէ. 'ի քթէն կամ յայլ տեղեաց. որ

երկաթի

երկաթի կամ քարի խոց չլինի․ զսէյլանն ՚ի հետն ապահելն զորիւնն կորէ։ և ներ կրակում ոչ այրի ոմ̅ զհաղութն՝ ոմ̅ որ ՚ի կրակն մնանէ նոյնո̅մ ելանէ․ և ոչ գոյնն աւերի և ոչ ձիլան։ Նոյնպէս և գեղլն սէյլանն, որ է թիլայ և պի ձատի և տապաղիօն ասեն։

Ամրուխթին ըզպյխտին եթէ օձին գէմ բռնես․ ՚ի տեսանելն օձի աչացն ջուր իջանէ՝ և կուրանայ օձն․ և բազումք են վկայեալք այս բանիս փորձելով բազումանգամ։ և թէ զաֆարանաւ խըճ ամաղի քարի լաւ լուսէ և ՚ի աչքն քաշես՝ զաչաց լոյսն աւելցնէ։ և թէ զմրուխթն ՚ի մատն լինի կամ ՚ի հետն նա մեա սակարք թունաւորք չմերձենան ՚ի նա։ այլև սեաւ հազ ասեն․ որ այլ ՚ի յայն հազալուն մարդ չի ազատիլ՝ և արիւն ձգելոյ փորցաւութն լաւ է՝ և փորձած է։

Յասպիս, որ է զապարճատ․ կանաչ գեղնագոյն է սակաւ մի․ խասիաթն այն է, որ ՚ի յինքն շատ հայիլն զաչայ լոյսն աւելցնէ․ և կամ թէ աղեն ՚ի յաչքն քաշեն զաչաց բորն տանի՝ և գոթութն լաւ է։

Եգրոն, որ է ալմազ՝ որ հին և նոր լինի․ հինն լաւ է՝ և զո̅մ քար ուտէ՝ և կտրէ՝ և ոչ մաշի։ և ծաղութի և սէյլանիպէս ոչ կրանայ․ ՚ի կրակն ոմ̅ մնանէ՝ նոյնպէս և ելանէ ՚ի կրակէն։ և թէ կտրեն զինքն․ թէ մեծ կտրի թէ փոքր նա եռանկիւնի կտոր լինի․ կամ քառանկիւնի․ կամ վեց անկիւնի․ և սէր թիզ փերթիզ․ այսինքն գլուխն սուր և թէն սուր։ և արճճով կտրի․ զի նօսրացնեն զարճիճն և դնեն զալմասն ՚ի մէջ արճճին․ և պատատեն և դնեն խըճ երկաթի օսրին․ և երկաթի կռանով հարկանեն խլերայ արճճին

որ

որ ալմասն'ի մէջն է. կտորի ալմասն և մնայ'ի մէջ արճճին. և չի սփուիլ այսինքն տաղմիշ լինիլ. արճճի գիջութիւն զինքն ժողով պահէ. յետոյ բանան զարճիճն և հանեն զկտորեալ ալմասն և'ի բան տանին. և թէ արճիճ ոչ գտանի. դնեն ի մէջ մեղրէ մոմի. և տասնեւեր կու տակ թղթով պատատեն և հարուն կուանով 'ի պատատեալ թղթին վերայ,ուր է ալմասն. ի_ մէջն կտրատի ալմասն: Ձգեն զթուղթն մոմովն ի մէջ եռացեալ ջրոյ. հալի մոմն և թուղ թըն յերեսն ելանէ. և մնայ կտրած ալմասն'ի ջրոյ տակն. յետոյ հանեն և ծեծեն'ի պողպատ ալմաստի հաւանն' և'ի բան տանին: զի այս լուած ալմաստին զմեծագին ալմասն տաշեն հագագներն: և իշխտապահելն զուրախութի բերէ: այլ և ասացեալ են'ի բարոյից գիրքն թէ երկու պատերազմողաց' յոր կողմն որ աւելակչիւ ալմաս լինի. այն կողմն յաղթող լինի. և զստոյգն Ա՟ծ գիտէ: և թէ կլինն որ 'ի ծնունդն յամենայ. զալմաս քարն'ի բա զուկն կապեն արձակի Ա՟ծ. Նու զայս գործս ունի անդամանդեայ քարն' զոր'ի ձախձեռն բռնէ ծնօղ կինն. և բաղումանգամ փոր ձեալ են զայս:

Ա՟կամն, որէ յէյնըլհըր. զինչ որ'ի յեա ղութն բարք կայ ամէնն յակատն կայ. զի'ի հետ վերցնօղն գարշ գողութի և քոր և այլ այսպիսիք չի լինիր: մալն և շնորհքն չի պա կասիր. և մօտ մարդկան ինքն և խօսքն ընդու նելի լինի՝ և խելաց շահ ունի: և որչափ գի նի խմէ նա խելքն զինքն չի թողուր, ասա ցեալ են, և ես չեմ հաւատար զի գինին աւիւ ծոյ կաթն է. ուղղ ըմպէ ագահութեա՝'ի փա ռաց'ի խելաց' և յապրանաց թափի:

Ա՛մեթիստոս, որ է լալն. բնութիւն այն է. որ թէ 'ի բերանդ առնուս նա զծարաւն տանի. ոչ յեղուլթն ունի զայս: և 'ի յուրախ արար մաջունն թէ ծեծեն և խառնեն սըրտին ուրախութիւն է. և զհոգն և զցնորքն տանի 'ի սրտէն: և թէ յաչաց դեղոն խառնեն, աչաց լուսոյն լաւ է՝ և սրատես առնէ:

Ոսկէ քարն՝ որ է Թիլայ. բնութիւն այն է՝ որ թէ բարակ շորով փաթաթես և կայծ դնես իվ՛ր ոչ այրի շորն: և ովոք որ 'ի հետն վերցնէ գիշերավախ և յերազոյ անհոգ կենայ և 'ի չար պատահմանէ ազատի Ա՛ծ:

Բ՛իւրեղն՝ որ է պլլորն՝ բնութիւն այն է՝ թէ որ ծեծեն և հիմ խոց լինի ցանեն իվ՛ր ողջանայ: և թէ զակռան սրբեն՝ ակռւին զժանկն տանի: և 'ի հետ պահելն վատերազ և գիշերախար չի լինի: և ներկուճի կարմիր՝ և կանաչ՝ և դեղին՝ և զամ գոյն ընդունի: և 'ի կրակն կրանայ՝ և չի դադարիր. և կրացեալն յաչաց դեղոն մտանէ:

Կ՛ոճազմն՝ որ է լաղուարտ՝ երկնից գունովն է կապոյտ. և լաւն այն է՝ որ տամարոտ և սպիտակ չ լինի: և 'ի կրակն զգոյնն չփոխէ՝ և ոսկի նօղտանէր ունենայ. և թէ 'ի Թիղապի ջուրն ձգես զլաղուճարտն 'ի նոյն ժամն սպիտակի և լինի ոչ զձիւն: և 'ի փուանկն մաղպուլ է: և մեծամեծ կտոր լինի. և հազար դրամ կտոր տեսի: և վեց հարիւր դրամն 'ի հազար և հարիւր թուին ծախեցաւ 'ի հալապ տասնեհինգ ուխալ. և յառաջմէ քառասուն ուխալ էր ծախուճէր՝ յօղբէկեն կուգայ:

Մ՛արգարիտն յայտնի է՝ և երկու ցեղ է. մէկ ցեղն փուրթգալ. և մէկ ցեղն հարմուզի: և հարմուզի մարգարտին, շիրին ասեն. բոլոր լինի

լինի և գիւր և փայլուն և ծակն փոքր այդ է մարգարտին լաւն, համեմատին այսինքն չիրլին․ և փուրթգալն դուր չի լինիր և փայլուն չէ՝ որ զչիրինին․ և փուրթգալն չիրին մարգարտին ուրալ գինն ամէ․ այլ՝ի կրակն և կրանայ։

Մարջան․ զոր հայերէն բուստ ասեն, լաւն խորու կարմիրն է․ և լինի բաց կարմիր․ և լինի սպիտակ․ և ծառխպէս ՚ի ծովն բուսնի։ և փայտխպէս ցեցկերուէլ՝ և որդնոտի՝ և ծակ ծակի։ և թէ ՚ի թթուն ձգեն սպիտակի։ և՚ի կրակն կրանայ և սպիտակի։

Յեամանի՝ լաւն սեալն է՝ այսինքն որ թափանցնի․ խորու կարմիր է՝ և միջակ կարմիր՝ և բաց կարմիր լինի և.քառասուն դրամէն աւել մարդ չէ տեսեալ՝ և ասեն թէ տուն փլելոյ կամ պատ անկանելոյ լաւ է՝ որ չէ տեսեալ յեմանի հագնողն ՚ի տան ներքև կամ պատի ներքև մնացեալ։ և մօտ Օսմանցիք և Պարսիկք և յամուռմիք մախպուլ է այս .քարս․ զի զանուննս գրեն խղն և ՚ի մատնին դնեն։ բայց լինի սպիտակ գոյն՝ և դեղին՝ և մաւի այլ լինի․ բայց խորու կարմիրն՝ որ միագոյն լինի և առանց տամարի այն լաւ է․ և մատնու.քարն՝ որ լաւ լինի երկու ոսկալ կամ երէք արժէ։

Լեղին կարմիր լինի՝ բաց կարմիր, և ալ լինի․ լաւն մէկ գոյն լինի և առանց տամարի․ գինն յեամէնուն ուրալ գինն ամէ։

Օձի.քարն չորս ցեղ է՝ սև և դեղին և կարմիագոյն է և այլ գոյնք։ լինի որ բոլոր բոլոր վարդ լինի․ և լինի որ նօղտայ լինի․ և լինի որ երկայն երկայն և նաղաշ լինի․ և ամ ցեղն ՚ի յօձու խորխ նմանի․ և ամ ցեղ օձու .քար թէ որ ՚ի դուր.քարի վերայ .քացախ կամ լէյմունի ջուր դնես․ և զայս .քարն խղն.քացխին

դնես

դնես և երկու քարք լինին օձու քարքն. ո՞պ կեն դանիք շարժին՝ և գան ողջունեն զմիմեանս և հեռանան 'ի միմեանց։ և խասիաթն այն է, զի թէ օձ թունէ զմարդ իւր լեսանին սրբեն, պուտմի արբուցանեն և քսեն իւր թունին. 'ինոյն օրն ազատի Լ.Է. և հնդիքն խիստխիստ խնդրեն զայս քարս, և գնով առնուն. և իւրեանց թգւրն 'ի թագն և 'ի մատն զայս քարս դնէ, և մէկ մխալն երկու ոսկի աժէ ։

Լու է քարմի, զոր օձի քար ասեն և թուրքերէն խտրէլիազ աղչասի ասեն. բոլոր և սպիտակ լինի 'ի սատաֆի ջինսէն է. մէկ երեսն ղուպայ է և մէկել երեսն դուր. և 'ի դուր երեսն ունի մարղուրայ բարակ սև թել, և է ո՞պ զօձ կուտապեալ, բարք սորա այն է, որ թէ ռուպ, որ է պէգմազով իւր օձիկ ցաւոյն կարմիր տեղին դնես. նա կպի իւր կարմիր տեղին. և ութն օր չի փրթիր 'ի վրայէն մինչև որ ողջանայ Լ.Է.

Լասա՝ որ է գոյնն կանաչ փէրփէրի գոյն, և կայ 'ի յինքն կարմիր կէտեր շատ և մօտ ֆուանկն մախպուլ է, և պինտ է 'ի բանիլն, և շատ է ամէն տեղ կայ ։

Խամահի՝ որ է երկաթ չինի, որ է սանկ հատիտ՝ և հայերէն սղուն քար ասեն, և ծիրանի գոյն է ամէնն, և երբոր 'ի լեսանն սրբես նա կարմիր լինի, և կայ որ աղ լինի սրբածն, և կայ որ մօռ լինի, որ է ծիրանին, և դեղին լինի, և սպիտակ լինի, բայց կարմիրն որ' ի սրբածէն ելանէ ուռուցի լաւ է, թէ վարդի ջրով 'ի լեսանն սրբես և զսրբածն իւր ամենայն ցեղ ուռուցին քսես նա օգտէ Լ.Է.

Պզահ որ թուրքաց բառով պապաղօրի ասէ յամէնից գունից շաղկապեալ է յինքն, և

յեմմնու երկրէն եղանէ . և 'ի ֆռանկն մախպուլ է և մեծամեծ լինի՝ և չոր է և պինդ ։

Մղնագիս՝ Թուրքերէն Մղլատուզ՝ Հայերէն Ադամանդ՝ սևագոյն է, և յայտնի է ։ Թէ որ 'ի հետն պահէն նա ջղացաւին լաւ է . և այլ զլևեոցուցչին զխաղիչն այսով առնեն . և Թուրք զպլյնուժայի ասէ՝ որ է հարաւայոյց . և զերկաթն յինքն քարշէ և անշարժ հագի են առացեալ այսմիկ . և Թէ որ մէկ գիշեր դնես զայս քարս և զԹուրն կամ զդանակն 'ի մէկ տեղ՝ նա վաղիւն այն Թուրն և դանակն զերկաԹն յինքն քարշէ . և աժան է ամէն տեղ ։

Յեաշմ . ամէն լեզուաւ յեաշմ ասեն՝ լաւն սպիտակ Թղթոյ գոյն է . և այլ ցածն պալքամին՝ և ախմարաց փերփերի գոյնն՝ և ձիԹապտղի գոյն՝ և այլ ցածն սևն՝ և տամարոտն ամէն գոյն լաւ չէ . և լինի, որ երեքհազար դրամ և այլ աւելի լինի մէկ կտորն ։ և մօտ Թուրքն մախպուլ է՝ և սպիտակն 'ի Պարսիկն մախպուլ է . և սպիտակին խաԹայի ասեն 'ի յաշղարու հնդկաց երկրէն գայ ։ և ասեն Թէ կայծակի լաւ է՝ որ տեղոր լինի կայծակ չի ընկնիր . սպիտակին սաֆն՝ որ հարիւր դրամ լինի . չորս ոսխալ աժէ . և այլքն ցած գին աժեն ։

Լիլում . յարապի ֆրհամ ասեն . լաւն սաֆի է, լուրջ գոյն ունի՝ և 'ի Թափանցնի՝ և 'ի լուրջ եաղուԹ նմանի . բայց ջուրն չի խաղալ զերդ եաղուԹ . և մեծ երկու և երեք միխալ այլ կու լինի՝ և աժան է ։

Սլէյմանի՝ որ է տակտակ . մէկ տակն սպիտակ և մէկ տակն սև . և մաւին և սպիտակն լաւ է . և խիստ պինտ է 'ի բանիլն . և մօտ 'ի ֆռանկ պատուական է այս քարս ։

Սէպաճ . և է սև քար և ԹեԹև և խիստ խո

րու սև է գոյնն, և թէ 'ի ջուրն ձգես նա 'ի ջրին երևան ելնէ ։ և իւր խասիաթն այն է՝ որ թէ 'ի փոքր տղեկան աչաց դէմն կախեն 'ի օրանն, նա զփոքր տղեկան զլուրջ աչքն սև այնէ, փորձած է՝ և հային 'ի յայս քարս զաչաց լոյսն աւելցնէ ։

Տէհնէֆուանկի, որ արապի տէհնէճ աւէն, թէ քացխով կամ լիմոնի ջրով խլր՟ ջօհարդար դանակին սրբես՝ նա ոսկէ գոյն կամ արծաթի գոյն ելնէ 'ի դանակն, ինքն քար է կանաչ և ֆսթուղի գոյն, նօղդա մի ֆստուխի գոյն, նօղտա մի կանաչ, և ոսկէ գոյնն որ ելանէ 'ի սրբածն՝ լաւն այն է, և 'ի աչաց դեղսն մտանէ, մէկ մաղաղն, երեք ուխալ, և չորս ուխալ արժէ՝ և 'ի կրակն չեմ փորձեր ։

Փիրօզայ, երեք ցեղ է՝ խաշաղի, նշապուրի, և շապաէքի՝ լաւն սաֆն է՝ որ առանց տամարի լինի, և գունով խաշաղին է, և այլ բացագոյն նշապուրին է, և շապաէքին սպիտակգոյն շուտ ծերանայ և կանաչի ։ և ասացեալ են վ՟ն փիրօզայի՝ թէ ով որ 'ի մատն հագնի 'ի դրամէ պակասութի չքաշէ, և խօսքն ընդունելի լինի, և չէ պարտ հագնողին որ անպատեհ խօսք խօսի, և մտածէ թէ փիրօզայ եմ հագեր խօսքս ընդունելի է, և կու այրի 'ի կրակն ։ և խաշաղին՝ որ թէ միջակ բակլայի չափ լինի, յիսուն ուխալ ածէ, և նշապուրին կէս գինն ածէ, և շապաէքին երկու դրամ արծաթ ածէ ։

Մղնադիսֆզայ՝ որ է արծաթի քաշօղ, որ զարծաթն 'ի յինքն քաշէ, թէ հանցոր ոսկւոյ և երկաթի և պղնձի և այլ խառնուք որ 'ի մէկ տեղ լինի, այս քարս զարծաթն ըմբռնէ ոս՟ մղլադուզն զերկաթն ։ և ժանկաւի գոյն է այս քարս, և թափանցնի, և սուղ է, և 'ի հապա

շու

շու երկրէն գայ· ապա հնդիկքն խիստ կուզեն զայս, և ասեն մշնադխաֆղայ, որ է արծաթի անդամանդ, և զարծաթն քարշէ յինքն ողղադաց մարդ, որ միշտ արծաթասէր և արծաթ քարշող է։

Օ այսոսիկ բանս, որք վն ականց են՝ զորս և աշխատասիկ գրեցաք այժմու ժամանակիս, ժամանեալ ումն քաջհմայ սարդիս անուամբ՝ ի մերս ազգէ, հմուտ և տեղեակ բանից գրոց, որ բնակէր 'ի քաղաքն բերիայ՝ որ այժմ ասի հալապ։ Նա էր կարի վարժ 'ի լեզուն արապի, և օսմանցու, և ֆռանկի։ այլև ծանօթ հոռոմի լեզուին և ջհտի լեզուին։ և էր ինքն արուեստիւ ակնադործ՝ որ զպատուական ակունս հարթէ և շինէ, այլև գնող և վաճառօղ սոցին։ և եղև 'ի գնալն մեր յենէմ՝ յորժամ հասաք 'ի հալապ՝ պատահեցաք այսմիկ սարդսի քաջհմայի, որ 'ի կարգս զրուցաց հանապազ խօսէր ընդ մեզ զօրպիսութենէ ականց՝ և բանք նր իբր զհաւաստի թուելով 'ի միտս մեր· աղաչեցաք զնա թէ զայդուսիկ զօրըանիւ ասես, գրով շարադրեալ տուր մեզ վն օրինակի։ և նա վն մերոյ խնդրոյ գրեալ ետ, և մեք վասն հասարակաց օգտի ի մէջ այս պատմագրիս շարակարգեալ գրեցաք։ Նախ զի մեր է խնդրեալ։ և Երկրորդ զի նորագիւտ է բանս։ և 'ի ձէնջ պատահողաց խնդրեմք, նախ մի առնել մեզ քամահանս, և երկրորդ, ասել Ած ողորմի տեառն սարդսին այնմ, և մեզ· ասեմք և մեք՝ և ձեզ ամէն։

Իսկ որք զկնի գրեալ բանքս են՝ որ վն ականց, յառաջնոց ժամանակաց կայր օրինակն, զայն և 'ի սոյն կարգ դասեալ գրեցաք վն օգտի ընթերցողաց, 'ի փառս Ա.Յ։

Այս է գիրք ջօհարացն՝ որք կան խնդրոյ աշխարհին՝ թէ յոր
տեղւոյ հատ կու լինի․ Նախ և առաջին ալմաստն ։

Ալմաստն, տասնևերկու ազգք են՝ յերկուց
տեղաց ելանեն, ղատիմին 'ի զուլումաթէն
է ։ Ասացին թէ աղէքսանդր գնաց 'ի զուլու-
մաթն 'ի լեռան մի տակ հասաւ յանկարծ ձիոյն
նալն ըլըղաւ, հարցաւ թէ ինչ լինի այս․
իմաստունքն, որք կային 'ի հետն՝ ասացին
թէ ալմաստ է, յերկնից ցօղէն հաստ լինի․
աճամն խուդայն կատէ դորա ։ ասացին աղէք-
սանդրին՝ թէ այս լեռան յետևն աւաղուտ
դաշտէ, ամէնն ալմաստ է և անմարդաբնակ է,
և թռչնոց 'ի զատ այլ երբ չկայ 'ի հոն ։ աղէք-
սանդր ուզեց 'ի յայն ալմաստէն․ ասացին թէ
հեծեալքն թող 'ի լեռան գլուխն ելնին՝ և 'ի
լեռան գլուխն անասնոց լաշ ձգեն․ 'ի հոն
մեծ թռչունք կան, ալմաստն կու կպնայ 'ի լա-
շերն․ կառնուն թռչունքն ու կելնան 'ի լեռան
գլուխն նստին ուտեն, նա հեծեալքն երթան
թռուցանեն՝ ինչ որ կպեր է 'ի լաշերն ամէն 'ի
հոն կու մնայ, և այնպէս արարին որչափ կարա-
ցին ։ այն ալմաստն խիստ ղիմաթով է, և այլ
մարդ 'ի հոն չէ գնացեր, ու այժմուս ժամա-
նկիս ինչոր հին ալմաստ կայ յայն ալմաստէն է ։
'Ի հնդկաց երկիրն կատեն թէ խիստ ղիմաթ-
ունի, ապա 'ի ամէն աշխարհ ղիմաթ չունի
մօտ 'ի ջօհարջիք ։ կրակէն կու ելնայ. քան զնորն
աղէկ է, ու մեց թարկէ յոր կողմն շրջես երեք
թարկ կու երևնայ ։ ջօհարջիքն ասացին թէ
քան զտասնևմէկ ղէրատն 'ի վեր չի լինիր,
շատ սուտ է, քսանևերեսուն էլ կու լինի՝ չեն
տեսեր ջօհարջիքն հին ալմաստ ։ Ապա նոր
ալմաստն 'ի կուճրաթ, 'ի տաքան, 'ի քալըքար
կայ, իմէջ մահուայ տիլիպէջանայ կարու-
ձանի

Ճանխփուայ կենայ , երեսուն ու քառասուն
զիրաթ կենայ , կու փոքրեն քանց խոր , ու տա
մար ունի խմէջ տամարին կու լինի՝ կու հանեն
լուանն 'ի հողի միջէն կու ենայ. եօթն բուանկ
կու լինի՝ հինգ ցորենն մէկ մանճալի կասեն ։
կու ենայ նաւաթի՝ զէյթի՝ փատղի , պխլօրի՝
դեղին , կարմիր , սեւ . քանց ամէն աղէկ նաւա
թին է , ու պխլօրին , յետեւ նորա զէյթին , ու
փատղին , այլ պաղերն քան զէսոնք չեն ։ ալ
մասուին զիրաթն հինգ ցորեն է՝ Ճոհարներուն
թիւրն ալմաստն է , երկու զիրաթ նաւաթի
կամ պխլօրի աղէկ ջրով՝ որ լաւքա չի լինի 'ի քալ
պար կայ , երկու ֆլօրի առնուլ կու լինի . ու
փուանկին քառասուն ֆլօրի ծախել կու լինի.
թէ մուշտարի լինայ այլ աւելի . թրաշէն ենու
ծակեն զատ 'ի փուանկն էլ մարդ չի գիտնար ։
թրաշեղածն՝ չորս զիրաթն տասնհազար օթ
մանի ծախել կու պիտի ։ փուանկն 'ի հալապ
կարչի Ճոհարներու թիւրն է ալմաստն՝ ամե
նուանց թրաշի երք մի չէ՝ էնոր համար որ 'ի
քաներն խառնակ շատ կենայ , հազի թրաշ
չեղնայ մաւրում չի լինար ։ Ու է խալխաթն հար
ցանես՝ նա մարդ որ բուանկն մասնայ լինի նա
ալմաստն տանխու թիւրաց քաղցր երևնայ , ու
խօսքն դարուլ լինի , 'ի չարէ չվախենայ , փոր
ցաւութիւ չ.քաշէ՝ կամ քերչափածի . մուացկաս
չ լինի , տայիմ փառաւհ կենայ , թէ ուզեն որ
մանրեն խմ՜ն սալի ուտան մարդոյ՝ մահադեղ է ։

Նաղութի զիրաթն չորս ցորեան է , եա
զութն յերկուց իրաց հաւ կու լինի . զադի
մի , սէյլան հաւ կու լինի , կըզի մի է չորս
փարանկ լայնքն է , չորսհարիւր փարանք
երկայնքն է , այն լեռանն սալանդիր տաղի
կասեն , ադամ 'ի յայն լեռան կասեն 'ի դրախ

տէն իջաւ, ասեն այն շնորհին եաղութն եղաւ, այն լեռնէն 'ի զատ այլ տեղ չի լինիր ։ Հանց իմացիր որ չորս գոյն ունի, կարմիր ու լուրջ դեղին ու սպիտակ ։ կարմիրն եօթն գոյն է, ծովագոյն, նռնագոյն, արղաւանի, տուրտի, խըմրի, ,,քացխի գոյն՝ պալխի ։ Ու լուրջն հինգ-գոյն է՝ երկնից գոյն է, լեղկի կանաչ կուզար կէ ։ դեղինն չորս գոյն է՝ մոմի, թուրնջի, յերդի պլօրի, այսոնք շատ հաւլ կու լինի, ապա զի մաթ չունին, է նոր որ դեռ խամ է ։ ծովագոյն կարմիրն թամամ այարն ջրովն որ քան զիրամթ լինի երկու հազար ֆլօրի արժէ ։ զատ զաէյլա նայ մադանէն այլ տեղ չկայ՝ և ոչ 'ի խորասան ։ եաղութ լուրջ գոյն թաւուսի ունի ու սամա նի 'ի հնդստան զիմաթ ունի. զէրայ հնդիքն թագպանտի գլուխն կապեն. ուդեղինն 'ի շրվան գին ունի խուշտկի, խիստ աղէկ է՝ ու դե զնի ճանաչելն դժար է. զէրայ ֆռանկն զպլօրն կու ներկէ որ եաղութէն չի ճանչվիր. աղէկ մարդպխտի որ ճանչնայ ։ Հանց իմացիր յայնըր հըրն ևւր ջէնս եաղութն հաւլ կու լինի ։ ու 'ի թիրմիլ կանաչ կարմիր հաւլ կու լինի, կասեն թէ զապրաճաթն այլ յուրմէն հաւլ կու լինի. այն տեղն՝ որ եաղութն հաւլ կու լինի ջրոտ տեղ մի է. մարդիք քանց խոր փորեն աւազուտ տեղ մի է կու լուանան. կոհկահ քար կու ել նայ՝ որ կինաչ ու սպիտակ թէ լերես տամար կու լինի փայլուն իմացիր այն հուր. մէկ մարդ զու նար կանաչ ջրով որ ամէն դեհ շրջէն հանց կա սեն որ ամէն դեհաց ջուր կու կաթէ նի գինն, երեքհարիւր ֆլօրի է՝ միլիոն սէյլանի մատա նէն հաւլ կու լինի զիմաթ չունի, տասն ֆլօ րի 'ի յարապստան գին ունի ։ Նայ եաղութի նոր մադանն մօտ 'ի պանտարն պանկալայի

ծովն

ծովեզերն հալ կու լինի, պանկու կու ասեն Ճզիրայ մի է, եաղութն որ աղէկ ջրովն կանաչ գոյն ու նուան գոյն է, 'ի յայն Ճզիրայն հալ կու լինի մանշուր է ըռքնակի որ քարպի կակուղ է, 'ի կրակէ 'ի դուրս չի ելնար, սէյլանն քանց այն այլ աղէկ է, մօտ 'ի փուանկն պինան ու կակուղն մէկ է, համան լաւ ռանկ թող լինի զիմաթունի, զեաղութն ջրով ու նուան գոյն կուզեն 'ի կակուղն չեն հայիր:

Լալն` իմացիր որ յառաջ ժամանակն լալ չկայր, թէպէտ մի ջէմշէտ անուն` 'ի նորա ժամանակն ժաժք եղաւ որ շատ մարդիք մեռան` մօտ 'ի պալաշխան բարձր լեառն մի կայր, 'ի ժաժքէն պատառեցաւ այն լեառն` Ա.Ճ պքան չելեօքն լալն 'ի հօն երևեցաւ. այս աղէկ լալերս որք կան 'ի մարդիք 'ի մօտ, 'ի յայն լեռնէն այլ տեղ չկայ այնպէս, որ ամէն երեք հար իւր տարի ապա մէկանգամ 'ի դուրս կուգայ: ապա լալն եօթն գոյն ունի, ափուլի, ռամանի, աթաշի, յունանի, խըմրի, պղրապի, պասալի: գիտացիր, որ տասնևմէկ զիրաթ թամամ պայր լինի; քառասուն ֆլօրի աժէ. ապա թէ երեք կամ չորս զիրաթ թամամ պայր այս վառան լինի, փաք զիրաթն հինգ ֆլօրի աժէ, ռամանին ու աթաշին 'ի դորա կէս գինն աժէ, ու պասալին էլ. գիտացիր, որ լալի խասաթն տաք է ու չոր. ասացածեն իմաստունքն` թէ ովոր 'ի հետն լալ պահէ ամէն մարազի աղէկ է, միջացաւի լաւ է` մարդկան աչաց աղէկ երևնայ, վատ երազ չտեսնու, տղայոց հետ պահելն չէ լաւ, դիւաց այլ աղէկ է, 'ի մաջուն խառնելն ուրախ առնէ, երեսի գոյնն կարմիր լինի մատայ բանայ:

Զմրուխտն, երեքցորենն մէկ բութլէ, բութ

լոյ կու ծախուի, իմացիր որ յառաջ քան հազարեհինգհարիւր տարի, յերկու բանից հալ լինէր, և իւր մատանն մարամօտն է, էն զմրուխթի, գինն, հինգհարիւր եստամնւլեց բուխթլ լինի փլօրի է, ապա այս զմրուխթս որ 'ի մարդկաց ձեռն է 'ի փռանկստան հասիլ կու լինի այլ տեղ չկայ. երեք գոյն է, բուզխանի ռեհանի, բանջարի: ռեհանին ու բանջարին աւելի գին չունին. ապա բուզխանին մէկ մթղալն 'ի հնդստան, երկու հարիւր փլօրի գին ունի, ռամանին այլևայն գինն է: հանց տասցին թէ զմրուխթի թաղխթն պաղ է և չոր, և այլք ասացին թէ աղէկ է' ով որ 'ի հետն պահէ աչաց ցաւ չտեսանէ, լոյն աւելնայ, երկարա ժամանակ լինի. հաւ կոյր չլինի: Ասացին թէ զմրուխթն փայխզահրն քանց ամէն զահր է, մարդոյ որ զահր տուած լինի, երկու ղիրաթռամանի ուղտի կաթնով տանինա ազատուի Ա.ճէ, բռտունքն 'ի դուրս ձգէ' և թէ վիշապօձ տեսնու 'ի դիմացն բռնէ աչքերն պատռի. կարի՛ կամ օձ խայթէ վարդեջրով հմայեն իմ՞ քսեն ողջանայ, ցնոր չքաշէ կամ հոգայ:

Իմացիր որ Մարգարիտն, յերից բանից 'ի դուրս չէ 'ի պահրի ղատիփ հասլ եղաւ. Ձըղրայ մէլ կայ ղեսիմալաքան մօտ 'ի ղատիփ լու մարգարիտն 'ի յայն Ճզիրայն է: մէկայլ դահթեռւեհ' մօտ 'ի պանկալայ' քապուլ մանչուր է 'ի հոն շատ հասլ կու լինի, ապա մէկ մողալ կամկէս մողալ պիկաս կու գտուի, ապա մանր շատ կու գտուի մէկայլ 'ի մարայմօտն կայ շամածովկայ բոլորն բանտարներ ունի շատ կու բերեն. իմացիր որ դորա ջանավարն քանց հաւ է' ու զերմն քանց ձկան կու ձգէ 'ի ծովն, սադափն 'ի նորա սերմանէն հասլ կու լինի երբ

անձ

անձրեւն գայ 'ի մայիս ամսին լինի, եւ նման 'ի ծովու երեսն տաքնան ու գոյանան, եւ գիշերն երթան 'ի ծով, մինչ 'ի քառասուն օրն հանց առնեն ապա գոյանան. խացակն ու դեղինն 'ի տարէն եղանակէն է՝ գիտացիր, որ ուլթն ղիբաթ դուման լինի՝ աժէ ուլթուն փլօրի. թէ մէկ մթղալ լինի սպիտակ քաֆուրի, հազարեւ հինգ հարիւր փլօրի աժէ՝ չորս ղիրաթն վաթսուն աժէ՝ երկու ղիրաթ սպիտակ քաֆուրին քառասուն աժէ։ դեղին գոյնն մոմին գոյնն գին չունին. թէ հարցանեն այս ծանրութե մարգարիտն ինչ աժէ, հարի չտեսնուս գին չգնես խասխաթն սուր է ու թայ է. շաւքուին աղէկ է՝ աչից եւալուն. թէ ալաջայ լինի մարդ, աղկեն ու քացախով քսեն ողջանայ ԿԷ։

'Ի մայիր՝ որ փիրուզայն. 'ի չորս իրաց դուրս չէ իւր մադանն 'ի նշաւուր է. աղէկն ու ղիմաթոյն 'ի հոն կու լինի։ երկու մատանն 'ի խոճանտ է. այն էլ հանցոր հինգ փլօրին պակաս չի լինիր։ երէք քանն 'ի քիրման 'ի գեղն շահաւապ է՝ քանց առաջինքն չեն արմուխ ամէն։ չորս քանն 'ի սպիր է ղիմաթ չունի՝ քանց նշաւուր այլ աղէկչայ։ աղէկ սաֆին՝ քսան ղիրաթն չորս հարիւր փլօրի աժէ. ու սաֆի աղէկն՝ մէկ ղիրաթն մէկ փլօրի աժէ։ ապա զաւալն 'ի մչկէն է 'ի թայէն՝ 'ի կրակէն՝ 'ի քաւուրէն. թէ պահեն իւր գոյն չի երթայ։ ջօհարջիք ասացին՝ թէ քանց ամէն քարեր աղէկ է. շատ խասիաթ ունի՝ ոլոր հետպահէ խշմթփուրց չտեսնու. վաղ ինէքն 'ի նա հայի հօգ չի քաշէ. աչաց ցաւի աղէկ է. ժամանակ երկայն՝ պարպքաթի մալի. վատ երազ չի տեսնու։

Փադահր 'ի հետ պահելն շնորհաւոր է. մաթօլի հայաթ կասեն. որ շաբաթն վեց ղիրաթ

հարնէ խմ̃ր .քարին ուտէ իւր ժամանակն
հարիւրեկքեան տարուց լինի ցաւ չտեսնու. ով
ուտէ կամ 'ի հետ պահէ սրտով լինի. վատ
աչք չբանի. օձ կամ իժ չխայթէ. ուտօղն
վարդի ջրով հարնէ ուտէ. եղմով ուտէ որ 'ի
յակուան չի համնի զարար է. թէ առես ուստի
հասլ կու լինի. նա լեռն մի կայ չիրաղայ մօտն՝
շապան .քար կասեն այն լեռանն որձ եղան
կու լինի. մեծ կտոշներ ունի այլ խոտ չի ու-
տեր՝ շապան .քար կասեն այն խոտէն 'ի զատ
այլ խոտ չի ուտեր. էն ունի զփայղահրն 'ի
փորն: Այսա մօհլայն այլ յայն լեռն կու լինի՝
խորու ձոր մի կայ յայն .քարերուն կու կաթէ.
տարին հազար մեխալ անձախ հասիլ կու լինի.
խասլիաթն այն է՝ որ բարձր տեղաց անկեալ լի
նի ուխուրտ՝ նա կէս մեխալ խմցնեն ողջ լինի:
Այն տեղն Թ̃ուրական է. հարիւր ղօշէն ապա
մէկ ղօշ հասլ կու լինի. այն որ ունի լաղար է
ումեծ կտօշնի ունի՝ և իմէջ ճրօքվլին կու լի
նի ուկակուղ է երբ 'ի բերան դնեն .քար կու
դառնայ. թէ տասն մթղալ լինի երկուհա
րիւր Փլօրի ածէ. և թէ երկու կամ երեք
մթղալ լինի տասնեհինգ փլօրի ածէ: շատ
կան որ ամալի կանեն. կամիս որ գիտնաս՝ հա
րէ խմ̃ր .քարի՝ թէ սպիտակ ենայ՝ ամալի է. թէ
այլ գուն ենայ. նա հաւան է: Փայադահրի
տեղն առնավէ տաճրի այն կրով .քսէ 'ի ձեռնդ-
դեղինն աղէկ է. կրակն թէ ծուխ եղաւ 'ի
տեղն իրք չմնաց աղէկ է. թէ հող մնաց վատ է:

---

Նշ. ևս բան վասն փանզահրին:

Պազարըլթէս՝ որ է փանզահրն և հայ.ք թու-
նադեղ ասեն. և այսոր բնութ̃ին զաւագ-

Թրեաքի

Թրիւքի բնութ̃ին ունի. և կերպն նման է կաղ
նոյ պտղի. և երկայնուկ և բոլոր լինի մէկ
մէկի ներքև տակվի տակ է. մէջն ոտ̃ կուտէ. և
գոյնն այս քարիս հողի գոյն է՝ և 'ի սևութ̃ն
զարնէ և քիչ 'ի կարմրութ̃ի. լաւն այն է՝ յոր
ժամ կաթնով խիլ̃ քարին քսեն կարմրագոյն
լինի. և այն որ լաւ չէ երբ որ տրորեն գոյնն կա
նաչ կու լինի. և զինքն 'ի վայրի քօշի փորն կու
գտնուն. 'ի չիրվանու դեհն կու լինի. և
բժշկապետերն խօսք շատ են ասեր. և հաքի
մարանիս չինօղն ասերէ թէ այն եղին կերա
կուրն քան զօձ քան զմուղալ ասեն՝ այլ կերա
կուր չունի. և այս պատճառաւս այս քարս կու
կապվի յեղին փորն. և այնոր համար թրեաք
փառուխ կասեն. և այս քարիս հարելյ գոյն
շատ կու լինի չէ լաւ. ապա լաւն այն է՝ որ հա
րեն կարմրախառն սևագոյն զարնէ. և 'ի շամ
զերդ զայդ փանղահրդ կու զուգեն հանց որ
մէկմէկից բուանց կու ճանչվի. և խուր փորձելն
այն է որ զասեղն 'ի կրակն դնեն որ կարմրի ապա
կոխեն խիլ̃ այն քարին թէ չինուածու է՝ սեաւ
ծուխ ելանէ՝ թէ ստոյգ փանղահր է դե
ղին ծուխ ելանէ։ զինքն բուզխանի ջրով
տրորեն և օծեն օձահարի օգտէ. և յոյն պահն
զցաւն խաղաղցնէ. և օգտէ ամ̃ գազանահարի
և զչարութ̃ին խափանէ։ և թէ տասնևերկու
գարէ քաշ տան օգտէ սրտին վատուժութ̃ն և
անձինն ուժտայ լաւ. և խուր առնելուն չափն
կէս դանկ է. ով ամէն օր ասկից կէս դանկ
ուտէ խլսի յամ̃ չար վտանկէ՝ և յամ̃ մահացու
դեղոց. և տաք բնութ̃ է, օգտէ. այն պատ
ճառուն որ այս խասիաթն կու գործէ զբանն
ոչ բնութենուն և այս դեղիս բնութ̃ին խիստ
տաք է՝ գիտացիր։

Հանց

Հանց իմացիր որ ամպարն 'ի ջօհարի կարգ-
չէ. ապա 'ի ջօհարի կարգ բան ածի. յեամա
նի ծովերեան կու լինի. զուլումաթն քանի մի
կղզի 'ի հոն ծառեր կան. յայն ծառերուն
քանց տոլխ քանց մեղր իջնու՝ խիստ շատ ձանձ
իջնու 'ի վրան. իջնու 'ի ծառերուն շատ՝ որ
քանց առու ելնայ երթայ 'ի ծովն 'ի ծովու
երեան քան զմոմ բռնէ՝ յեզր զարկէ մարդիք
'ի շուռ գան 'ի ծովեզերն՝ ու ժողովեն հինգ
լիտր ու տասն. անգամ մի պազըրկաներն քանց
քար մի գտան՝ որ մարդ չէր հանդիպեր 'ի վրան.
քան զքարեր գարձեր։ Գիտացիր՝ որ ամպարն
չորս ազգ է. շամամի՝ ու խաշխաշի՝ ու թափա
ղի. և փաստղի։ շամամին բոլոր կու լինի՝ երբ կոտ
րէն իմ՛ նա քանց խաշխաշ լինի։ խաշխաշին էլ
այնպ. թափաղին էլ սպիտակ է մէջն ու ամուր
է։ փաստղին կակուղ է։ զշամամին իմանամք
տասն մթղալ հինգ ֆլօրի առնուլ կու պի
տի. և յայլ տեղ ծախես նա տասնևհինգ՝ և
այլ աւելի կու բերէ։ խաշխաշին չորս ֆլօրի
առնուս տասնևերկու կու ծախուի. թափա
ղին ու փաստղին երկու ֆլօրի գնես վեց աժէ
յայլ տեղ։ ամպարն անոյշ հոտ ունի՝ զմարդոյ
տամաղն անուշ պահէ. սաւդան տանի. աչից
աղեկ է. քերի, գլխացաւի աղեկ է։

Լաջվարդի քանն 'ի պալաշխանն է. 'ի քաշ
էլ կու լինի՝ ամայ ամալի է. ինչ որ 'ի տներն
կու բանին քաշի է. 'ի շամիշաղ սևազոյն քարմի
կայ սղկեն ու բերեն ծախեն, 'ի կրակէն 'ի դուրս
չելնայ. պալաշխին տասն օր 'ի կրակն կենայ չի
աւիրիր՝ զէրայ ջօհիր է։ Հանց իմացիր՝ որ աղեկն
քանց հաւկիթ զկեղև ունի սպիտակ ու կա
կուղ. հարիւր մթղալն քսանևհինգ ֆլօրի
աժէ. խամն էլ վասլայ վասլայ կու լինի հա

րիւր

բիւր մթղալ լոճանան քսանեւհինգ մթղալ կերնայ․ ով գիտէ լոճանալ շատ շահ ունի․ ան լոճայն քանց քաշի է։ ամալին ու պալաշխին կրակն գիտէ․ աչաց աղէկ է քանց ծարիր քաշէլն յիստակ պահէ․ ձինար ցաւի աղէկ է․ միջացաւի ՚ի թարքիպ ձգէ։

Մարջանն յերիս տեղիս կու լինի՝ ՚ի քաղաքն Թունէ ՚ի մղրիպայ դեհն է․ այլոճի ՚ի ծովէն կու հանեն քանց մարգարիտ․ քանի որ ՚ի ծովն է կակուղ է՝ երբ հանեն ՚ի դուրս ամրանայ։ քաղաքմի էլ կայ ՚ի ֆռանկստան բիսայ կասեն․ ՚ի հոն էլ կու լինի։ ՚ի հրմզայ պանտարներն էլ կու ելնայ սև կու ելնայ․ ուսր կասեն․ նի սպիտակն իրք մի չէ․ կարմիրն նաթրաշն ՚ի կուձրաթ գին ունի․ թրաշեղածն ՚ի յարեւելք արծաթի հետ բարաբար ատնուն․ խասլիաթն մուացկտոին աղէկ է․ գլուխն չժաժի՝ սրտի ուժայ՝ թուլթիայն խառնեն աչաց աղէկ է։

Աղեղն երիս տեղիս կու լինի՝ յեամանն՝ երկու ՚ի կուձրաթ՝ պարվաձ շատ հալ կու լինի՝ երէք ՚ի քալպարկայ․ քանց եամանն ինչ են․ եամանի խասլիաթն յինքն հայիլն չարկամին աղէկ է․ տղացկանի հեւռն աղէկ է։

Յեաշմ ինքն խաթայու և չինայ դետ մի կայ իւր քարերն յեաշմ է՝ հինգ գոյն ունի․ սպիտակ՝ զէյթի՝ կանաչ՝ սև՝ ըռզիանի։ զէյթին քանց ամէն աղէկ է՝ ջօհար է․ յայնտեղն ովոր ՚ի հետ չի պահէ նի էհտիպար չէն էներ․ տարին հինգհազար ֆլօրի հասիլ կու լինի․ ով հետ պահէ ժաժք չի լինի․ մարդոյ սիրտ չի թունայ կայծակի աղէկ է։

## ԾԳ.

# ԻՍԿ ԵՐԴ ՅԵՏ ՆԵՐԿՈՏԵԱՄՆ

ամի կենաց իմոց նուաստ յօհաննիսի որ ծանեայ զիս. բայց վայ ինձ զի զպատուիրանաւն Տ̃ ոչ գնացի: Իսկ 'ի մերս հայոց թուականի հազար և քսանևմէկ. եր ոմն թագաւոր տորպատականի 'ի յայլազգեաց դաւհման անուն շահ կոչեցեալ 'ի կարմիր գլխաց. յոյժ խաղաղասէր և անագահ մինչ ասիւր 'ի ծերագունից թէ զհնգետասան ամի հարկն ոչ է առեալ յերկրէ իւրմէ: այլև զբաջ վաճառականաց՝ և զմաքս՝ զոր վ̃ն իւր 'ի գանձի իւրում ժողովեալ լինիւր. եբարձ յաշխարհէ տէրուե իւրոյ: Այլև կանայք լկտիք՝ որք 'ի քաղաքին նստեին և հրապարակայայտ զբաղում խոտորեցուցանէին՝ և զհարկս տային յարքունիս: և զանասելի օճրագործութիւն սոդոմականաց ախտիցն ընտաւորեալ 'ի պարսիկս՝ զայն ամենայն վճռի հրամանաւ խափանեաց՝ և ուր ուրէք թէ երևէր չարաչար տանջանօք սպանանել հրամայէր: և 'ի մերում թուիս հազար և քսանեչորս մեռաւ ասացեալ շահն թագաւորեալ ամս յիսունևմէկ:

Իսկ ոմն 'ի յորդւոց նո̃ր խամայել անուն՝ զոր յառաջագոյն 'ի հօրէ իւրմէ արգելեալ կայր 'ի կլայ վ̃ն իրաց ինչ յանդգնութե. և այժմ ելեալ թագւորեաց 'ի տեղի հօր իւրոյ. և սուր 'ի գործ արկեալ սպան զեղբարս իւր հարազատ թուով եօթն. և սկսեալ զնախարարս զօրաց իւրոց սպանանել զոմն յայտնի և զոմն գաղտնի. մինչ գրեթէ սպառել ջանայր զամ̃ ազգն Պարսից.

ևյց. և զայս ծանուցեալ տիրատեաց Պարսիցն թէ հատեալ է կորուստ անձանց իւրեանց ։ Նոյն ամիրխան անուն իշխան թաւրիզու. և մահմետ ամն իշխան արարադեան գաւառին, մականուամբ թօխմախ կոչեցեալ. և այլք ոմանք՝ զորոց ոչ գիտեմ հաւաստեաւ զանուանս նոցա. միաբանեալ ընդ արբանեկաց խամայիլի սպանին զնա 'ի գաղտնի. ոչ գիտելով զօրոց նորա զմահ նորին խամայելի ։ և 'ի դիւան դատաստանի յոչ նստիլն ասացեալ լինիւր յոմանց թէ 'ի լրտեսութիւն գնացեալ է յայլոց թագաւորաց վիճակ՝ և դառնալոց է մինչև 'ի յամ մի. զայս կարծեցեալ լինիւր. և յետոյ ստուգիւ իմացեալ ամենեցուն զկորուստ նորին ։

Իսկ դարձեալ ամքն միաբանեալ գնացին 'ի խորասան՝ և բերին զոմն խուդաբանդայ կոչեցեալ՝ չեխ գոլով եղբայր խամայիլին. և որդի նոյն թահմազ շահին կարգեալ 'ի հօրէն իւր մէ տէր աշխարհին խորասանայ. զնա թագաւորեցուցին 'ի տեղի խամայիլին ։ բայց անարի և վատթար 'ի գործ թագաւորութե և պակասեալ 'ի լուսոյ ևս ։

'Ի սորա յերկու ամի իշխանութե թւրն բիւզանդիոյ ազգաւ օթմանցի մուրատ անուն որև խոնդքար ասի. զհրաման էհան զօրաց իւրոց գալ իվր աշխարհիս կարմրագլխոյն. և եկեալ ոմն զօրագլուխ լալայ կոչեցեալ բազմօք զօրօք եկն և էհաս յերկիրն արարադեան. և դերեաց ընդ հայ և ընդ տաճիկ թուով վաթսուն հազար. և տարեալ խաղացոյց յերկիրն հոռոմոց ։ և 'ի միւս ամին դարձեալ շարժեալ խաղաց իվր վրաց և հասեալ 'ի փայտակարան քաղաք որ է տփխիս. և շինեաց բերդս 'ի նմա

և

և ամրացոյց. և եդ անդ արս բազումս պատե
րազմողաց։ Նոյն զամն բագրատունի թ̃գ̃ր վրաց
սիմոն կոչեցեալ. որ երբեմն վ̃ն անհնազան
դուն ըմբռնեալ էր 'ի յառաջասացեալ թահ
մազ շահէն՝ և ակարացեալ 'ի հաւատոցն. և
կայր առ նա ընդ ձեռամբ։ Իսկ 'ի թ̃գ̃ւրէն
խամայիլէն շնորհեաց զհայրենի իշխանութին
և զտեղիսն սիմոնին գնալ իշխել իւրոցն. և
օրինօքն մնալ մահմետի։ և նա գնացեալ 'ի տեղի
իւր 'ի տփխիս յանդիմանեալ եղև յառաջնոր
դաց և 'ի քահանայից իւրոց. մանաւանդ 'ի
կնոջէն և յընտանեաց իւրոց. ուրացող և ապե
րախտ կոչելով զնա՝ և ոչ հաղորդելով ը̃նդ նմա՝ 'ի
յայսմանէ ստրջացեալ նո̃ զղջացաւ 'ի տաճկու
թ̃է և դարձեալ վերստին զխաչն Ք̃ի երկր
պագելի. և զխաչեալն Ք̃ս՝ Ա̃ծ ա̃մի. և լուր
եղև համբաւս այս առ Պարսիկսն. և զի մե
ռեալ էր խամայէլն՝ և այլքն ոչինչ կարելով առ
նել նմա. շնորհուկս եղեն կալ 'ի քրիստոնէու
թեն՝ գոնեայ միայն հաւատարմութի և մտեր
մութի արասցէ ընդ տանն շահին։ Նոյն այժմ
լալայն փախոյց զսիմոնն զայն. և շինեաց յեր
կիր նո̃ր զբազում բերդս՝ զոր ոչ գիտեմ զան̃ն
գրել վ̃ն անտես լինելոյն մեր 'ի տեղեացն. սա
կայն լուաք թէ 'ի տփխիս՝ 'ի դումանիս՝ 'ի
գօրի՝ 'ի լոռի՝ և յայլ տեղիս շինեաց բերդս.
և եթող 'ի նմա զօրս. և ինքն անցեալ 'ի յալանս
գնաց 'ի դուռն երկաթի. և շինեաց անդ ևս
բերդս՝ և աւի դամուր ղափի և եդ զզօրս 'ի նմա
բազում. և զօրագլուխ ոմն սոման անուն յոյժ
հնարաւոր և անողորմ. և ինքն դարձաւ առ
թ̃գ̃ւրն իւր՝ և սատակեցաւ 'ի նմանէ 'ի խօսս
քսուաց. բայց վրէժխնդրութի Ա̃յ ոչ ետ
նմա կեալ վ̃ն արեանց անմեղաց։

Իսկ 'ի Թուին հազար .քանևութն եղև սաստիկ և մեծ տարաժամ մահ 'ի յատրպատական և յամենսեան աղուանս. և կոտորեր զբազումս յամենից ազգաց. մինչ բազումք տունք անտերունչք. և բազումք հարք և մարք անզաւակք մնացին. և երկիրս աղուանից իմէջ այսպիսւոյ վտանկի գոլով զմեռեալսն սգալով և զկենդանի զանկեալսն և զինքեանս ևս հոգալով մտածմամբ. ասէին՝ ոհ թէ զերծանիմք 'ի տարաժամէ մահուանէս՝ թէ ոչ։ Ի յայս յեղակարծ ժամուս յանկարծակի եկն և եհաս վերայն և զօր մահուն մոռացեալ օսմանն այն. զոր յառաջագոյն ձեռնարկեալ առ Թաթարսն՝ որ զայթաղտսի. և զամենայն կովկասային լեռնականս լակզինս ժողովեալ առ ինքն 'ի գամուր զաւին. բազմօք և անթուօք արեանարբուօք հեծելովք. և նոքօք ել և եկն յայսկոյս կուր գետոյն. և զիշխանսն գանձայոյ և պարտաւոյ փախստական արարին. և ինքեանք սփռեալ ընդ դաշտս և ընդ լերինս. զգանձայ և զպարտաւ. զմարաբերդ՝ և զխաչէն՝ զվարանդայ՝ և զդիզակ՝ 'ի չարէքի կոչեցեալ գետոյն մինչև 'ի գետն երասխ. 'ի միում աւուր յաւարի հարեալ գերեցին՝ և զանհամարս սրով սպաննին. և զկնի չորից և հնգից աւուրց դարձան 'ի տեղիս իւրց։

Դարձեալ 'ի սոյն ամի է երկուց պատժոցս մահուն և սրոյն. եղև ահագին և անասելի սով սաստիկ. այնքան, մինչ զի մարդիկք գազանապէս անկան 'ի հմակերութի. վն որք մնալոյն 'ի մահուն՝ և վն անինչք և անյարկք շրջելոյն 'ի գերչացն. քանզի ամքն գաւառք հայոց՝ որք է իշխանութե կարմրագլխոյն կային՝ քակեալք աւերեցան. և թէ ուրէք յանկեան մնացեալ լինէր շինութի զետեղեին տնանկք՝ և մերկք՝

արք և կանայք. ծերք և երիտասարդք. տղայք և աղջկունք. և առանց օթեվանի արտասուալցիւք դիմօք շրջէին՝ 'ի դրունս օտարաց՝ և յերդս այլոց առ 'ի խնդրել զկերակուր անձանց իւրց: Նա յոչ բաւելն կերակրոց. ուժեղքն 'ի նոցանէ մտանէին գաղտ 'ի փարախս խաշանց և 'ի գոմս արջառոց. և յոչ կարելն զենուլ զմեծամեծսն յանասնոց առ 'ի չունելոյ զսուր ընդ ինքեանս. և յուժ անձանց ըմբռնէին զորթս դիեցիկս և զգառինս մատաղս և զուլունս. և պատառէին զկողսնց և հանեալ զսիրտ և զփորոտիքն ուտէին հում. և ելեալք գաղտ գնային. և ոչոք կարծիս ունելով այս 'ի նոցանէ լինիլ. մինչ տեսեալ ոմանց զնս յայնպիսիս գործս՝ և հաւաստեալ գիտացին զայս: Իսկ անզօրքն 'ի նոցանէ 'ի կոյտս աղբից անասնոց և ձիոց. որոնեալ գտանէին զհատս գարւոյ և ուտէին: Այլև ոչ գիտելով զսրբոյ և զանսրբոյ 'ի հերունհետէ և 'ի վաղէ ժամանակէ 'ի փողոցի անկեալք ոսկերք՝ վեր առեալ 'ի քարի եդեալ և քարիւ զփոշի առնէին և 'ի բերանս իւրեանց արկանէին և յոգւոց հանեալ մռնչէին: Այլև զհնացեալ փոկ կաշեաց. և զմաշեալ արեխ 'ի բեկոր ինչ խեցւոյ 'ի յեփոցի եդեալ և առեալ ուտէին: Ա՜յ տեսողութեան եղբարք: Նա իբրև եղև գարունն՝ սփռեցան ալքաղքն յերեսս դաշտաց. սկսեալ մարմնով ոտն զերամակս այծեաց. և իբրև զջոլիրս հօտից ուտելով զբանջարս վայրի և զխոտս կանաչս՝ և ոչ յագենային. քանզի կոչեալէր յերկիր սով՝ և զօրութիւն հացի բեկեալ ըստ մարգարէին. մանաւանդ ուռուցեալ 'ի գլխոցն մեռանէին. ոմանք 'ի տեղի արօտիցն՝ որք ոչ կարէին դառնալ. և ոմանք եկեալ 'ի գեղամիջի 'ի տակս

որմոց՝

ողմոց՝ և ՚ի յանկիւնս տանց աւերածոց մեռանելին։ Իսկ թէ լինէր ոք երկիւղած Նմ առեալ ՚ի դիականցն ինն և տասն և այլ աւելի ՚ի վիհ ինչ՝ և կամ խոր արկեալ զհողն ի վր փլուցեալ ծածկէր. և թէ ոչ, մնայր անթաղ։ Իսկ լուր լինէր բազմաց թէ այս անուն տանուտէր՝ կամ մեծատան որդի մեռեալ է՝ և դի նր ահաւանիկ յայս նիշ տեղի է. և լուեալ բազումք ՚ի սիրելեաց և ՚ի ծանօթից նր՝ եղուկ և վայ կարդային անձանց իւրեանց. եւս և զթաղելն ՚ի վաղն ձգելին. և ՚ի վաղուէն ՚ի միւս վաղն վս բազմաց ձանձրութեցն. և դարձեալ լսելին յոմանց թէ դին այն պատառեալ ՚ի գազանաց ցրուեցան ոսկերք նր. և զայս լուեալ անհոգ լինելին. և այսպէս մնայր անթաղ։

Եղուկ թշուառականիս և պատմութեա եղբարք. քանզի բազումք ՚ի պղծոյ մսէ զազիր շանց և կատուաց կամաւ յագեալք եղեն. և մարմնոց մարդկան եւս։ քանզի ՚ի սահմանս ամարասայ յերկիրն վարանդայ և դիզակայ ՚ի գեղջ միում, ումեմն մեծատան միամօր որդի մի գոլով եօթնամեայ. և կանայք այլք ՚ի մերձակայ գեղորէիցն ժողովեալ բնակելով մերձ մեծատանն՝ կերակրելով ըստ պատահմանն ՚ի մեծատանէն՝ յաւուր միում պատրանօք զտղայն ՚ի տունս իւրեանց կոչելով կանանցն և սպաննեալ զմի ոտն հանդերձ անդամօքն կերեալ. և յերեկոյին ծնօղք տղային որոնեալ զտղայն և ՚ի տուն այրի կանանցն գտեալ զգլխատուր դիակ տղային իւրեանց։ Նաև լուաք եւս թէ ծեր ոմն զմարմին դստերն իւրոյ կերեալ է ՚ի նոյն երկրին։ Եւ այլ յոմն տեղիս այսպէս։ եղև վիշտ սովուն, ՚ի հազար և քսան և ութին. և ՚ի քսանեկնին թուականիս։

Այս լինի պատժապարտիս՝ զի մահուամբ
և որով և սովու կոտորեալ մարդկան մարմնոց
գազանք այնքան կերեալք. մինչ զի տնաստունք
շունք վայրենացեալք արտաքոյ շինի զկենդանի
մարդիկս որսային։ Նոյն գայլք 'ի ճանապարհի-
ևս և 'ի շինամիջի 'ի տունս մտեալ զմարդիկք
'ի ննջման արտաքոյ քարշէին և ուտէին։ և
իմէջ խաշանց մտեալ զխաշնարածն ուտէին
և խաշանցն ինչոչ մեղանչէին։ Նոյն զթիւ մա
հուամբ և սովու և որով մեռելոցն և գերելոցն
բնաւ ոչ կարեմ ընդ թիւ բերել՝ և գրով ար
կանել. բայց թէ իմ զքարտէզս և զմելանս
առաջի ձեր արկից ըստ դպրացն դաւթի որ
առ երուսաղէմիւ։

Իսկ 'ի հազար և երեսունևերկու թուին.
դարձեալ հրաման եղև 'ի մուրատ խոնդքա
րէն. զօրապետացն և զօրաց իւրոց ելանել
իվեր երևանայ և առնուլ զնա. և եկին իսկ և
աւերեցին. և բազում եկեղեցիս քակեալ զքա
րինս 'ի շինուածս բերդին տանէին. որք և կա
մեցան զմեծ եկեղեցին ևս, որ երկուերեսի ասի,
քակել. իսկ ոմն վրդ՟պտ առաքեալ անուն որ
և յետոյ կթղկս եղև յիշատակ նորին օրհնու
թե եղիցի. եմուտ առաջի փաշրատին զօրա
պետի զօրուն՝ և ոչ ետ թողուլ քակել զեկեղե
ցին։ բայց վայ լսելեացս և պատմութենս. զի
յաւուրս երեսուն ջորիք և երիվարք և բա
զումք տաճիկք յինքեանց անծանօթք բնակե
ցան յեկեղեցին։ Նոյն եղև ասացեալն 'ի մար
գարէէն՝ զի մտին հեթանոսք 'ի ժառանգու
թի Տ՟ն՝ և պղծեցին զտաճար նր՟ ս՟ր։

'Ի սոյն թուին եղև վախճան մեծի և երան
աշնորհի վրդ՟պտին մերոյ յոհաննու. և զի էր
նա յերկրէն ծարայ փոքր սիւնիս կոչեցելոյ. 'ի
վանիցն

վանիցն Թադէոս սրբոյ առաքելոյն. որդի ումեմն ազատի և բարեբարոյի Ջհանշահ կոչեցելոյ. յազգէ դօփեայ և Հասանայ։ և էր նա աշակերտ մեծի վրդ՟պին Ղուկասու Հախբատեցւոյ՝ յոյժ սրբասէր և Ա՟ծ ասէր. հեզ և աղօթօղ՝ քարոզօղ ուղղափառայ՝ և յանդիմանօղ ստահակաց՝ սիրօղ ուղղութեց՝ և պատուօղ տօնախմբութեց. յոյժ ընթերցասէր և գրասէր. մինչ զի զբազում գրեանս ետ գրել իւրն յիշատակ. և այլ սպասք և զարդք եկեղեցւոյ յօրովք։ և ալևորեալ և լիովք աւուրբք հանգեաւ 'ի ՌԼԲ հազար և երեսուն և երկու թուականիս մերոյ։ որոյ պատուական մարմինն եդեալ կայ 'ի յերկիրն գեղամայ 'ի գիւղն վասակաշէն հուպ դամբարանի վրդ՟պտին սարգսի։

Իսկ 'ի հազար և երեսուն և չորս թուին 'ի խռովութէն մուրատայ հրամանն եղև 'ի դամուրզափ առ օսմանն՝ գնալ առ ինքն 'ի կոստանդնուպօլիս. որ և գնաց իսկ և պատուեցաւ 'ի նմանէ՝ զօրապետ և իշխանաց իշխան կարգելով զնա բոլոր արևելեանս 'ի բիւզանդիոյ մինչ 'ի յայլանս. և ետ 'ի ձեռս ն՟ր զօրս բազումս՝ թուով վեցից հարիւրոց հազարաց՝ և առաքեաց ի վ՟ր շահաստան քաղաքին թաւրիզու. որ և եկն իսկ յոյժ խռովութեամբ և էառ զնա՝ և աւերեաց աւար առնելով զամենայն ինչ որ 'ի նմա. և շինեաց զբերդ՝ այլ ոչ ժամանեաց աւարտման բերդին, այլ անդէն սատակեցաւ. ոչ եղեալ արժանի լսել աստէն 'ի թգ՟ւրէն իւրմէ զգովութի իւրոյ յաղթութեն. և զի հատուցմունք համդերձելոյն դատողին ամենեցուն է յայտնի։ Իսկ այլոց իշխանացն և զօրաւորացն բազմաւ պատերազմաւ ընդդէմ կացեալ կարմրագլխացն և աւարտեցին ըզ

 բերդն.

բերդն. և կարգեցին 'ի նմա զօրս ծառայ անու-
ամբ. և կացուցին զօրապետս զոմանս ներքինի Ջա-
ֆար անուն. և ինքեանք դարձան 'ի տեղիս իւրեանց
է ինքեանս ունելով զանմաքուր շաղիղն:

Այսուհետև դարձցուք 'ի կարգ պատմու-
թեան կարմրագլխացն. քանզի էր զայսու ժա-
մանակաւ Թագաւոր նոցա յառաջ ասացեալ Խուդա-
բանդայն. և սորա գուն գործեալ ընդ զօրաց
օսմանին յոյժ ջանիւ՝ յաճախիւք վշտօք՝ բազ-
մաւ աշխատութեամբ. յոլովից աւուրց պատերազ-
մաւ. և յերկոցունց կողմանց անչափ արեանց
հեղմամբ. և ոչ կարաց խափանել զնոսա 'ի գոր-
ծոյ շինութեան բերդին Թաւրիզու: Այլ յայն
ժամ դեռևս ունէր ընդ ձեռամբ զսեաւ այգի
կոչեցեալն՝ և զգանձակ, որ է գանջայ. և շահն
գնացեալ անդ հանդերձ պատուանեաւ որդւոյն
իւրով ամիրհամզայ կոչեցելով. և զօրաժողով
եղեն անդ ամենեքեան կարմրագլուխքն խոր-
հիլինչ վասն Թաւրիզոյ և օթմանի զօրացն: և
տիրատեաց կարմրագլուխքն յաւելին զվէրս
իւրեանց վիրաց խուդաբանդային. մանաւանդ ին-
քեանց իսկ կրկին և երեքկին. վասն զի այն եղև բե-
կումն նոցա վերստին. զի սրախոց 'ի գաղտնի սպա-
նին զորդի շահին. քանզի շուք Թագաւորի 'ի
տղայն երևէին. և 'ի նմանէ կարմրագլուխս պար-
սիկքն յոյժ երկչէին: և իբրև այս այսպէս եղև.
ցրուեցան պարսիկքն իւրաքանչիւրոք ոչ գի-
տելով զտեղի իւր իբրև զգիշատեալ հօտ՝
որոց ոչ իցէ հովիւ: Այսու և զի խոլոխտ հրաման
Թագաւորին մուրատի օթմանցւոյ պատեալ էր զնոսա
որպէս կղզի նման ծովու: Այլ շահն խուդաբան-
դայ յոյժ հեծեծանօք թախիտ սրտիւ և լիով
տրտմութեամբ գնացեալ 'ի խորասան առ միւս որ-
դին իւր աբաս՝ անդէն թողեալն 'ի գահն իւր

յատր

յատրպատականս տիրել խորասանոյ . առ նա
հասեալ խուժադուժն այլին՝ յետ սակաւուց
ամաց մեռաւ . ոչինչ քաջութիւն ցուցեալ յազ
գին իւրում անարին այն :

Իսկ թագուորեաց աբաս որդի նորա ը նմա յոյժ
քաջ և յաղթող 'ի պատերազմի . վասն զի զգիլան՝
որ է ջօջանեթ ապստամբեալ 'ի հօրէն սորա .
առաւն քաջութբ նուաճեաց զնոսա ընդ ձե
ռամբ : Նայև օղբեկն կոչեցեալ 'ի բաղխայ և
'ի բուխարայէ ելեալ եառ զհերի քաղաք՝ և
զայլս 'ի տեղեաց շահին ընդ ձեռամբ արար .
մինչդեռ նա 'ի յարտաւելն էր գնացեալ վասն
նուէրմանց և ընծայից բաշխելոյ առ շիրմի
հարցն իւրոց և հաւուց : Իսկ լուեալ դարձաւ
անտի . և գնացեալ զօղբեկն զամն կոտորեաց՝ և
զամն փախոյց՝ և զտեղիսն իւր դարձեալ հաս
տատեաց . այլև երկիցս և երիցս անգամ զօրս ար
ձակեաց իլխրայ նց . և յետոյ ինքն գնացեալ
զբաղդումս 'ի նոցանէ սպան յոյժ պատերազ
մաւ . և զորդի թագուորի նց ըմբռնեալ դարձաւ
'ի տեղի իւր 'ի ղազուին . և այսպ նուաճեաց
զնոսա : և այժմ է իշխանութի նր 'ի խորասա
նայ մինչև 'ի յարտաւէլ և 'ի յերասխ գետ :

Իսկ 'ի հազար և երեսունևեօթն թուա
կանին դարձեալ հրամանն ել մուրատ խոնդքա
րէն ումեմն փահրատ կոչեցելոյ առնուլ և շի
նել երևանոյ . զի յառաջքան զժամանն նա
ունէր զզօրապետութի կողմանս արևելից յետ
ղալային . և այժմ վերստին զիւր առաջին իշխա
նութիւն շնորհեաց նմա՝ և առաքեաց իվր գան
ջայոյ հեռացուցանել զսակաւ մնացեալ կարմ
րագլուխսն՝ որք անդ . և շինել 'ի նմա զբերդ և
դառնալ : որև եկն իսկ ծանու զօրու և արար
ըստ հրամանի խոնդքարին . հերքեաց՝ մերժեաց՝

Հեռացոյց, տարակացոյց, ուրոյն կացոյց, զա-
տոյց, խեաց կացոյց, Հալածեաց, փախստա-
կան արար, վտարեաց, մեկուսացոյց. և ինքն
զհետամտեալ մինչ 'ի գետն Երասխ զբազումս
գերեաց, և զորս ետ ճարակ սրոյ. այլև գետա-
հեղձ արար զյոլովս՝ և ինքն դարձաւ և շի-
նեաց զբերդ 'ի գանձայ. և կարգեաց 'ի նմա
զզօրս ըստ օրինի իւրեանց ծառայ կոչմամբ. և
ինքն դարձաւ առ կայսրն իւր:

Իսկ շահաբասն յորժամ ետես զեղեալս
ամ՟ն առ աշխարհն իւր. երկեաւ ևս մ՟ն տե-
ղւոյ շիրմի հարցն իւրոց և հաւուցն արտաւի-
լոյ՝ գուցէ և զնա առցեն. և ևս յառաջ 'ի ներս
'ի պարսիկս ձեպեսցեն. զդեսպանս արձակեաց՝
զհրեշտակութիս առաքեաց առ մուրատ խոնդ-
քարն. առ 'ի խաղաղութին համոզել՝ և սէր ը՟
միմեանս առնել. և ընդ այս ոչ եղև լսելի գո-
ւողին, զպատանդս խնդրելով 'ի նմանէ. և շա-
հաբասն յաւելեալ առաքել եղբօր իւրոյ զոր-
դին. հ՟նդերձ մեծաւ իշխանաւ դայեկաւ և եր-
կերիւր զինակրիւ սպասաւորով առ խոնդքարն
մնալ պատանդս անդէն 'ի ստամբօլ մ՟ն խաղա-
ղուէ 'ի մէջի իւրց. որ և խաղաղութին եղև իսկ:

Եւ 'ի հազար և քառասուն և չորս թուին մե-
ռաւ մուրատ խոնդքարն և թգւորեց սուլթան
մահմետ որդի նորա ընդ նմա: և յաւուրս այս
մահմետխարեան փռանկք՝ որք մաճարք կոչին
եկն ծովու բազմօք նաւուք, և են 'ի պատե-
րազմ ընդ սոցա ամս հինգ և յամենայն ամի յաւ-
նէն ընդ միմեանս ահագնիւ և սաստկիւ պատե-
րազմաւ և կոտորմամբ իրերաց ոմ՟ տապարա-
ւորս և կացնաւորս մայրահատաց հատանեն
սպառելով զմիմեանս հրով և սրով: և 'ի միւ-
սում ամին երկաքանչիւրոց կողմանց յաղթայ

իւրեանց

ւերեանց դարձեալ զօր հասեալ լինի 'ի Թե կուն՝ և լինի նոր նորոգեալ պատերազմն՝ յետինս ամին կրկինևս քան զառաջինն ամն ։ Այս 'ի Թուականիս հազար և քառասուներնին յորում եմք , է այսպէս , և ապագայն ՏՆՐ.Ղ է յայտնի , Թէ զինչ լինելոց է յայնմ , որում շնորհելոց է կողման ինչ զպարտութի և կողմանինչ զյաղթութի , զի գրեալէ ոչ թէ իւրով զօրութե զօրանայ հզօրն՝ այլ ՏՐ տկար առնէ զհակառակորդս իւր ՏՐ սուրբ է , ևնա կարողացուցէ զհաւատացեալս խաչին իւրոյ ։

Ր.յժմ դարձեալ երկրորդեսցուք վն սիմօնի Թթուորին վրաց Թէ զինչ եղև , քանզի սիմօնն յորժամ փախեաւ 'ի լալայեն , գնացեալ 'ի յանկեան ուրեք ինչ իւրոյ աշխարհին ընակէր 'ի մնացուս և 'ի կապան տեղիս , և 'ի սիրտ իւր խոցեալ լինէր վն առ ման իւրոյ երկրին՝ և հնար իրացն ինչոչ գտանել կարէր , վն յոյժ խորխոլինելոյ համբաւկին իւրոյ՝ ապաւէր խնամոցն Ր.Ղ ։ զպատգամս յղէր՝ և զհարկս խոստանայր մուրատին , երբեմն տալով և երբեմն ոչ տալով , ապստամբէր 'ինմանէ և զաւազակս իւր բերդիցն արձակէր՝ պատճառն զզօրք բերդիցն արկանէր՝ առ մուրատ Թթուրն համբաւէր, և 'ինմանէ զիմաստն նմա շնորհեալ լինէր ։

Այս յորժամ Թթուրեաց սուլթան մահմետն, սիմօնն զխորհուրդ ապստամբութե իւրոյ յայտնեաց այսպէս , զհարկն ոչ տալով՝ և զաւազակսն յոյժ բազմացուցանելով ։ յաւել ևս, և ինքն զօրաժողով եղև՝ և յարեաւ իւր ընդդէն գօրոյ, և յամխաս ութն ներղեաց զնոսա և էառ զնա. և քակեալ զքարինսն բերդին ողամբ այլազգեացն տանել հրամայեաց և 'ի կուր գետն արկանել և ապա զարմն կոտորեաց սրով,

և զկանայս և զորդիս նոցա աւար բաշխեաց զօրաց իւրոց վրաց ։ Ի յայսմանէ ամենայն ազգն հագարու՝ ի սիրտ խոր խոցեցան, եւ յոյժ սրտմտեալ և 'ի բարկութեն ցասման հարեալ մահմետ խոնդքարին՝ և յոյժ տագնապաւ հրաման էհան, և զտեղի փահրատին և զիշխանութեն նորին տալով ներքինւոյն Ջաֆարի՝ որ 'ի Թաւրէզ, և առաքեաց խիստ սիմոնին առնուլ զվրէժ անարգանաց և զարեան օթմանականի և խամյէլականի գնդինև յորժամ 'ի Թ̃ւրէն էառ զհամարձակութիւն զայս երկրորդ վիրադչեզըքն այն Ջաֆար, յոյժ խրոխտացաւ և արձակեաց զհրաւիրակս ընդ կողմանս իշխանութեն իւրոյ, և ինքն եւ 'ի Թաւրիզոյ և եկն յարարադ. և ժողովեցան անդ ամենեքեան հրաւիրեալքն առ նա զօրք բազումք. և սուրհանդակս արձակեալ 'ի հեռաւոր տեղիս գիւղից և քաղաքաց տանիլ զկերակուր ինքեանց և ձիոց, պատրաստել յանդս ճանապարհաց իւրեանց ։ Այլև զթիւս.քանից հազարաց արանց արկեալ ռամկաց հայոց և տաճկաց ամենից աշխարհաց ունելով 'ի ձեռս իւրեանց որթուց և թխաց, տապարաց, և կացնաց, բահաց, և փայտատաց, բրիչ տանց հիմանց, այլև խիստ էառ զհարկս 'ի ժողովրդենէ արտաքոյ նոմոսաց իւրեանց ։ և ապա ելեալ գնաց յոյժ երկիւղիւ, զի 'ի վաղուց հետէ զփորձ առեալէին բազումանգամ 'ի.քաջութենէ սիմոնի՝ և 'ի հնարիմաց պատերազմացն իւր. և 'ի նմանէ պարտեալ ամօթալեօք դիմօք յետսէին դարձեալ ։ և այժմ իբրև հասին յերկիրն վրաց զնոյն կարծելով երկնչէին, և զտեղի առին աւուրս երեք՝ և չև ևս էր եդեալ զմարտ ճակատուն և ոչ զպատգամն և զդեսպանս առ իրեարս առաքեալ ։

Եւ վրացեացն խորհեալ ընդ միմեանս ասեն ընդ սիմոնին թոյլ տուր՝ զի տարցուք այսօր զտունս և զընտանիս մեր առ լերամբք, և մեք դարձցուք յամենայնէ սրտէ և յամենայնէ զօրութենէ մերմէ արեանչափ և մահու պատերազմեսցուք ընդ թուրքացն՝ և յաղթեսցուք ն՜շ զօրութ՜բն Ա՜Ծ։ Բայց վ՜ն ընաւին բառնալոյ զսահման աղօթից՝ 'ի յազգէս քրիստոնէից՝ մինչ զի 'ի բոլոր տարին ամենեւին 'ի դուռն եկեղեցւոյ ոչ ընթանան 'ի փոքունց մինչև 'ի մեծամեծս, վ՜ն այսմ իրաւունքն Ա՜Ծ ոչ ետ զթոյլ կատարել խորհրդոցն վրաց․ զի ասէ Ա՜Ծ մարգարէիւն՝ ապա թէ ոչ դառնայք առ նա զսուր իւր սրեալէ՝ և զաղեղն լարեալ․ կամ թէ ասէ՝ մի թէ վերանայցէ փայտատ առանց փայտահարի, և սղոց առանց ուրուք ձգելոյ․ և դարձեալ ասէ, ես սպանանեմ և ես կեցուցանեմ, հարկանեմ և ես բժշկեմ։ և կամ ասէ, զի զոր կամի Տ՜Ր կորուսանել, նախ յիմարեցուցանէ․ վ՜որոյ յիմարեալ սիմոնին այժմ նաև 'ի գինի սակաւուք արամբք․

Եւ յայնմ կողման յորում էր սիմոնն՝ թուրքացն ամենեւին ոչ ունելով կարծիս զսիմոնին անդ լինելն, բայց աւարի պատճառաւ թուրքացն գունդ ինչ բաժանեալ և 'ի կողմն այն գնացեալ․ և տեսեալ զվրացի ոմն ըմբռնեն՝ և յառաջ ինչ գնացեալ սակաւ զսիմոնին գունդն տեսանեն, և 'ի յըմբռնելոյն հարցեալ զոյն լինել այնմ, և լուեալ 'ի նմանէ թէ նա ինքն իսկ է սիմոնն․ և տաճկացն յոյժ երկուցեալ յետս կնդնին և վաղվաղակի զարս զօրաւորս արագընթացիք երիվարօք առ բանակն հասուցանեն՝ և ջաֆար զօրապետին յայտնեն և նոյն յոյժ զուարճացեալ և բաղմաց քաջից արանց խրա-

խրախոյս տուեալ առաքէ, և գնացեալ ըմբռնեն զսիմոնն՝ և բերեն առ նա։ և 'ի գալն ելեալ Ջաֆարն ընդ յառաջ յողջունել զսիմոնն, և ապա 'ի լեզուս իւրց̃ մեծաձայնիւ հնչմամբ օրհնեցին զՔ̃Ս 'ի լուր բանակին, և սիմոնին զնոյն երկրորդեալ ասէ՝ օրհնեալէ Ք̃Ս և անփոփոխ Տ̃րութի նր̃, զի Տ̃ր մեռուցանէ, և Տ̃ր կեցուցանէ, իջուցանէ 'ի դժոխս, և հանէ։

Իսկ Ջաֆարն անդէն սուրհանդակ արձակեալ առ խոնդքարն աւետել նմա, և ինքն առեալ զսիմոնն ժամանէ 'ի Թաւրէզ։ և հրամանել 'ի խոնդքարէն յ̃մն տեղիս տէրութե̃ իւրոյ զարդարել զփողոցս քաղաքաց, և ամենայն ոք յաւուրս երիս նստիլ 'ի խրախութ̃ե ընդ տիւ և ընդ գիշեր, և եղև այնպէ̃։ և զսիմոնն առ խոնդքարն տանիլ։ և Ջաֆարին պահեալ զսիմոնն 'ի Թաւրէզ յաւուրսն ձմերան և գարնան, և 'ի յամարան ժամու առաքեաց առ կայսրն որ 'ի բիւզանդիոյ։ Իսկ 'ի գնալն հասեալ 'ի կարնոյ քաղաք զտեղի առին, մի̃ ումեմն իշխանի հրովարտակաց դպրի, որ 'ի լեզուս իւրեանց եազիճի ասեն, ընդ իւր ունելով արանց՝ աւելի քան քանից հազարաց, ապա տամբեալ 'ի յաւագէն իւրմէ՝ և 'ի Թ̃գւրէն ևս, և այս երկու ամ է՝ որ զգլխահարկ ժողովրդեանն որ մի̃ Թ̃գւրց է յինքն կորզեալ ժողովէ։ Արդ մի̃ սիմոնին զգուշութե̃ պատուէր տուեալէ զօրաց իւրոց յափշտակել 'ի տանողացն՝ և առ ինքն հասուցանել, յաղագս այս պատճառի սիմոնն արգելեալ կայ 'ի յարզրումքաղաքի։ Բրդ օրհնեալէ Ք̃Ս՝ զի մերձն նմա է գիտելի։

Բանք համառօտք նշանակեալք Թուականաւ, յսկզբնէ մինչև ցմեր ժամանակս։

Թուականաւ նշանակեալ համառօտ բանիցս։ Թէպէտ օրինակն յառաջնոց ժամանակաց գոյր, այլ ոչ էր կարգաւ ըստ կարգի Թուականին, և մեք կարգաւորեցաք։ Եւ որ կորուստ՝ ոչ էր ժողով՝ ի միվայր՝ այլ մասն ինչ աստ և մասն ինչ անդ. և այնպէս ցիրեցան, իսկ մեք ժողովեցաք՝ ի մի վայր զորս և գտաք։ Եւ որ կորուստ և զորինչ՝ ի մեր ժամանակս գործեցաւ նշանաւոր բանք՝ զայնս ևս ընդ սոցին դասաւորեալ գրեցաք զիւրաքանչիւրսն յիւրում տեղւոջ։ և հոգալով զայս տքնութիւնս յոլովս կրեցաք, և յայն սակս՝ ի գիրս մեր դասակարգեալ գրեցաք։ և զպատճառս զայս գիտելով. քո անմեղադիր լիցիս մեզ, և մանաւանդ յիշեսցես՝ ի մասն բարի առ Տէրն ամենի՝ ողջ լեր՝ ի Տէր։

---

ՈՒՆ։

# Ի ՀԱՅՈՑ ԹՈՒԱԿԱՆԻՆ

տասն կարգեցաւ հինգհարիւրակն՝ որով ուղղեցաւ զատիկն։ Թուին յիսուն և երկու քաղրդաշուրթն, էր գլուխ խմայ եղացւոց։ Թուին, վաթսուն երևեցաւ մահմետ։ Թուին, ԿԲ, բաժանեցան վիրք՝ ի միաբանութենէ Հայոց։ Թուին, ՀԲ, զարձէշեաւ Թուրքն։ Թուին, ՀԴ, տէր կումիտաս շինեաց զՀռիփսիմէն վանք՝ և ասաց զանձինքն։ Թուին, Ճ, խրեցին ապուպաքըն, օմարն, օսմանն, ամս, ԺԲ։

Թուին, ՃԲ, ելն տաճկաց՝ ի Հայս։

Թուին, ՃԵ, տէր ներսէս հայրապետն։ զՍբն սարգիս շինեաց՝ ի դուին, և զվիրապն սբ։

Թուին,

Թուին, ՃԺԳ, երևեցաւ մի խաչն վարագայ։
Թուին, ՃՀԱ, յօհան օծնեցին պայծառա
ցաւ 'ի Հայս։

Թուին, ՄԻԳ, շրջիտէր եսայի մուրացիկն։
Թուին, ՄԼԵ, տէր սողոմոն շինէ զմաքենիսն։
Թուին, ՄԽԵ, սահակ և յովսէփ կատարեցան
'ի կարնոյ քաղաքն՝ որ է յարզրում։

Թուին, ՅԽԱ, տէր մաշտոցն տասամբ ձգնաւ
որօք պայծառանայր։ Թուին, ՅՂԹ, սմբատ
տիեզերակալն հիմնարկեաց զկաթողիկէն 'ի
յանի։

Թուին, ՆԺԴ, շինեցաւ հախպատ և սանա
հին։ Թուին, ՆԻԲ, թագուհին սմպատ պարսպէ
զյանի։ Թուին, ՆԻԸ, կատարեաց կատրամիտէ
զկաթուղիկէն յանւոյ։ Թուին, ՆԿԵ, զարթեաւ
Ա՟ծասաստ բարկութիւնն՝ և ելին ազգն թուր
քաց ի վ՟ր քրիստոնէից՝ և կոտորեցին անխնայ
'ի վասպուրականն՝ յաւուրս սենեքարիմայ․
և սենեքարիմ նեղեալ յայլազգեաց ետ զաշ
խարհն իւր 'ի վասիլ թագաւորն յունաց, և ինքն
եկեալ 'ի սեբաստիա հինգ որդւովքն, որք են
դաւիթ, ատոմ, կոստանդին, վէստ, ապու
սահլ։ Թուին, ՆՀ, 'ի սոյն ժամանակս վախ
ճանի տէր սարգիս կթղկսն՝ և գերեզմանն նր կայ
'ի հոռոմոսի վանքն՝ որ եկաց հայրապետ երե
սուն ամ, բայց 'ի կենդանութեն իւրում ձեռ
նադրեաց զպետրոս հայրապետն․ զգետա
դարձն՝ որ եկաց ամ՝ ԼԸ․ և ինքն սարգիս զկնի
երկու ամի վախճանի։ Սա այս սարգիս խնդրեաց
'ի ստեփաննոսէ տրօնեցւոյ զբանս բազմամլի
ալի պատմութեն, որ և արար։ սկսեալ 'ի նախա
հայրն ադամ, յորժամ ել նա արտաքս 'ի վայ
րէն վայելչութե, երեք հազար․ և հասոյց
մինչի չորսհարիւրերեսուներկու ամն, թուա
կանին՝

կանխ՝ յորում ամի վախճանեցաւ Գրիգոր Նարեկացի այրն սքանչելի։ Նաեւ զկնի նր սկսանի արեւմտակէս լանգովարդեցի, եւ պատմէ լալագին դառնիւք ողբովք զամ աղէտս անցիցն՝ որք անցին Է Հայս 'ի շրջակայ ազգացն՝ եւ զաղանդն Թոնդրակեցւոյն. եւ հաստուցանէ մինչ 'ի հինգհարիւրերեսուն թուականն աւելի կամ պակաս։ Թուին, ՆՀԸ, արձակումն սատանայի, հազար ամն լցեալ եղեն՝ եւ ահաւոր նշանք եղեալ բազում, զի երկինք հերձաւ յարեւելից յարեւմուտս՝ եւ լոյսն 'ի վայր հոսեցաւ, եւ եղեւ խաւար, եւ երեւեցան աստեղք եւ ձայնք ահաւորք։ Թուին, ՆՁԹ, ամբաստ մագիստրոսն զբզնայր գունդայ չինեաց։ Թուին, ՆՂԴ, շարժ եղեւ յեզնկան, եւ փոխեցաւ գոյն լուսաւորաց 'ի կարմրութի, եւ մառախուղն պատեալ էր զերեսս երկրի. եւ 'ի շարժելն եկեղեցիք եւ մեծամեծք շինուածք խախտեցան՝ եւ քաղաքն աւհասարակ փլաւ՝ եւ պատառեցաւ գետինն՝ եւ էկուլ զբազում արս եւ զկանայս, եւ շատ օր գայր ձայն յանդնդոց։

Թուին, ՇԱ, տէր պետրոս կթղկսն էբեր ըզկենաց փայտն 'ի պոնտոս՝ որ է տրապիզոն. 'ի ժամանակս վասիլ Թգւրին արար զջրօրհնէք՝ եւ գետն արգելաւ 'ի յետս ժամ մի. եւ անտի գընաց տէր պետրոս 'ի կոստանդնու պօլիս՝ եւ կացեալ անդ ամս չորս՝ եւ անտի եկեալ 'ի սեբաստիայ առ որդիսն սենեքերիմայ. եւ 'ի սեբաստիայ վախճանի։ Թուին, ՇԷ, նստաւ տէր խաչիկն. որ է քեռ որդի տեառն պետրոսի կթղկոսին. մինչեւ 'ի յայս տէր խաչիկս, յիսունեւհինգ կթղկսք անցեալէն, այս յիսունեւվեց՝ զսա աքսորեցին 'ի տարապարտ, եւ կացուցին զայրն Ն,Ծ զգենոսկորոս զհայրն հուչակաւորից վանիցն սա

նահ

նահնոյ, և ապա դարձեալ կԹղկոն աղուանից ընկեց զտէր Դէոսկորոսն յաԹոռոյն յաւուր մկրտուԹեն Քրի, պատուեցին զքօղն Հայրապետական, և դարձուցին զտէր խաչիկն՝ ի տեղի իւր։ Ի սորայ աւուրսն աւերին զանի՝ ի Թուրքէն. կոտորեցաւ ։ Թվին ըստմբօլոյ տուկիծ անուն, տարեալ՝ ի մօտն զտէր խաչիկն Հարկ՝ ի բանտ երեք ամ. և պահանջէր՝ ի նմանէ զգանձն տեառն պետրոսի կԹղկսին։ Թվին, շժդ, բարձան Թգւրք յանւոյ, որ էր վերջին Թգւրն յովհաննէս։ Թվին, շխե, փռանկն էառ զեՂէմ։ Թվին, շխԹ, յոյնք ծուապատիկ են արարեալ։ Թվին, շծ, ոչ վառեցաւ լոյսն յեՂէմ, յաւուր շաբաԹու՝ այլ՝ ի կիրակի յինն ժամ կիրակէին։ Թվին, շծա, ՝ի տօնի ծառազարդարին ծուապատիկ արարին տասն ազգք. Հայք, և ասորիք ուղիղ կացին։ Թվին, շհա, Թգւրն դաւիԹ էառ զտփխիս։ Թվին, շհդ, Թգւրն դաւիԹ էառ զանի՝ ի տաճկէն՝ և մեռաւ, և Թագաւորեաց որդի նր դեմետր։

Թվին, ոէ՝ փոխեցաւ առ Քս Թգւրն դեմետր. և նստաւ որդի նր դաւիԹ։ Թվին, ոժ, Թգւրեաց մեծն գորգի. և էհար զշահի արմէնն սաստկիւ պատերազմաւ։ Թվին, ոժբ, եկու զԹաթարսն՝ ի յանի մեծն գորգի էառ զնա։ Թվին, ոժե, շարժ եղև յեզնկան։ Թվին, ոժէ ահագին շարժ եղև յեզնկան, ժբռ մարդիկք մեռան։ Թվին, ոիե, Թգւրն եՂմի էհար զսալահադինն սուլԹանն՝ ի դուռն եՂմի որ եկեալ էր. Ձխու, հոգւով առնուլ զեՂէմ։ Թվին, ոլդ, Թարգմանեաց մխիԹար պատուեալ քահանայ կաթուղիկեցի զպատճառս խաւարման արեգական և լուսնի, ՝ի պարսկէ միջէ, ոճիքէ անունն, զոր ասէր Թարգմանեալ՝ ի

յունաց 'ի պարսս ։ Դարձեալ 'ի սոյն Թուին խաւարեցաւ արեգակն ։ Դարձեալ 'ի սոյն Թուին մեռա սուլտան սալահադինն․ եւ առ զՀեմ 'ի փռանկէն ։ Թուին, ոխէ, Թագաւորեաց Հայոց լեւոն ։ Դարձեալ 'ի սոյն Թուին յոյնք ծուազատիկ են արարեալ ։ Թուին․ ոխթ, խան գարունն զատկին սուտ գատն Սուրբ եւ Յոյնք, բաց 'ի Հայոց ։ Թուին․ ոծբ, փռանկն եւ առ զԹագաւորութիւն Հոռոմին ։ Թուին, ոծթ, զԻւանէ աԹաբականն կալան 'ի խլաթ ։ Թուին, ոկբ, վախճանեցաւ մխիթար վարդապետն․ որ մականուն գոշ կոչեցաւ ։ Թուին, ոկը, մեռաւ Թագաւորն լեւոն ։ Թուին, ոհդ, խորազմն եկ 'ի Հայս որ Հայրն յօհաննու Հաւատոյ 'ի Վ̃ռն ։ Թուին, ոձ, Թաթարն զխորազմն կոտորեաց եւ առ զգանձակ ։ Թուին, ոձե, Թաթարն եւ առ զանի եւ զամմն տիեզերս ։ Դարձեալ 'ի սոյն Թուին շարժ եղեւ յերզնկան, եկեղեցի մի փլաւ ։ Թուին․ ոձէ, եւ առ Թագաւորն զլօռի եւ զանի ։ Թուին․ ոձը, խաւարեցաւ արեգակն ։ Դարձեալ 'ի սոյն Թուին մեռաւ աւագն ։ Թուին․ ողա, պաչօն եւ առ զկարնոյ քաղաքն, Հոռոմք զերզնկան ։

Թուին․ չ, վանական վարդապետն վախճանեցաւ ։ Դարձեալ 'ի սոյն Թուին մանղուխանն Թագաւորեաց ։ Թուին, չգ, շարժ եղեւ յերզնկան ։ Դարձեալ 'ի սոյն ամի արղուն խանն նստաւ․ սա Համարեաց զՍ̃ն, եւ եդ Հարկ իւր ամենից գլխոց ։ Թուին․ չե, Հուլաւու խանն նստաւ ։ Թուին․ չը, դաւիթ Թագաւորն վրաց յափխազն եմուտ ։ Թուին․ չթ, սուլթանն մսրայ կոտորեաց զզօրս Թաթարին․ որ էր գլխաւորն իԹբուղայն ։ Դարձեալ 'ի սոյն Թուին․ Հուլաւու խանն եւ առ զՀալապ ։ Թուին․ չժ, սպանաւ ղզքարիայ ։ Դարձեալ 'ի սոյն Թուին

բաղդատ աւերեաց։ Թուին, չժա. Հուլաւ ու խանն նստաւ։ Թուին. չժդ. շահպանտինն տարաւ զվարդպան վարդան 'ի մօտ Հուլաւու խանին. զբաղումբանս իմաստութեն հարցումն արար. և մեծաւ պատուով պատուեաց զվարդպան։ Թուին. չժդ. աբաղ խանն նստաւ։ Թուին. չժե, կոստանդին կաթուղիկոսաւն բերաւ 'ի փռանկաց զհիւանդ օծանելոյ կարգն օրինակն, զձեթ օրհնելոյն և հիւանդ օծանելոյն։ Թուին, չժզ, արղուն խանն նստաւ։ Թուին, չժէ, շարժ եղև յերզնկան յաւուր կիրակէի, ժնա, մարդիկ.ք մեռան։ Դարձեալ 'ի սոյն Թուին մոլորեցան տասն ազգ.քրիստոնեայ.ք. հայ.ք և ասորիք ուղիղ կացին։ Դարձեալ 'ի սոյն Թուին մսրցին էառ զանտիոք։ Թուին, չի. լևոն թգւր նստաւ։ Թուին. չէ. շարժ եղև յերզնկան. ԱԾ պահեաց, որոշ փլաւ։ Թուին. չլզ. մայիսի ամսոյն, ահագին շարժ եղև յերզնկան, բազումք մարդիկք մեռան, որ զթիւն միայն ԱԾ գիտէ։ Թուին. չլը. մեռաւ լևոն և աքսորեցաւ կոստանդին կլթիկեան՝ և մեռաւ յօհաննէս կլթիկեան. և նստաւ տէր ստեփաննոս կլթիկեան. և զորապօլիս էառ թուրքն։ Թուին, չլթ. սաստիկ շարժ եղև յերզնկան ԱԾ պահեաց որոշ փլաւ։ Թուին. չխ. մոլորեցան յոյնք և արաբին զծուաղատիկ. և 'ի յայնմ ժամանակին 'ի կիլիկիոյ երկիրն կային Թգւրք հայոց. մեր հայոց ազգս երկու են բաժանուեր՝ կէսքն Է յունաց են կացեալ.ք. և կէսքն ուղիղեն կացեալք։ Թուին, չխա. զհուռոմկլայն էառ մսրցին. և զտէր ստեփաննոսն գերի տարան։ 'ի նոյնս էր ծուաղատիկն։ Թուին. չխդ. նստաւ տէր գրիգոր անաւարզացին։ գնաց հեթում 'ի ղանղաղան. եւ հրամանն 'ի խանէն աւերել

զեկե

զեկեղեցիս. մեռաւ Հեթում. չէ, Թուին.
Թուին. չծե. 'ի գաւառիս տարօնոյ. 'ի Հրեշ
տակացոյց ուխտին և 'ի սրբոյ մենաստանին զա.
զարու վանք կոչեցեալ. ընդ Հովանեաւ սրբոց
առաքելոցն 'ի Հայրապատութե տեառն գրի
գորի. և 'ի Թգւորութե կիլիկեցւոց նահանգին
լեւոնի որդւոյ Թորոսի. և յեպսկպսութե սրբոյ
ուխտին զազարու վանիցս տեառն աբրահամու.
և 'ի կայսերականն բռնակալութե ազգին նետո
ղաց զարբանտայ խանին. որ էր այր չար, և ատե
ցող քրիստոնէից. և պատրեալ 'ի գիւթականց,
և յաղանդաւորաց չեխացն. և խորհուրդ չար
խմբ̃ջ բերելով գործակցաւն իւրեանց սատա
նայիւ. սկսան մարտնչիլ ընդ անյաղթելի վե
մին Քրի և Հանել զՀրովարտակ ընդ ամն
տիեզերս, որ ընդ իւրով իշխանութբ էին իւր
քրիստոնէից. այնու կամ դառնալ 'ի մոլար
դաւանութեն մահմետի, կամ տալ զխարաճ
ամէն մարդ իւրոյ գլխոյն զութն դահեկան. և
Թուք և ապտակ 'ի յերեսն և զմուրուսն ձն
ղել. և սև կարկառն մի իւր 'ի աջոյ ուսին կարել.
նախատինք վն Քրի. և չար դեսպանքն իւրե
զարեանարբու գաղան արձակեցան իւր ամ
քրիստոնէից ընդ ամ քաղաքս և 'ի գաւառս.
'ի վանորայս և յամն տեղիս. քննայոյզ լի
նէին աՀացուցանելով զամն. քանզի այսպէս
գրեալէր 'ի մաՀաբեր Հրովարտակին, ոչ զժամ
օրՀնել. և ոչ յեկեղեցի մտանել. և ոչ զմանկունս
մկրտել. կամելով միաՀաղոյն բառնալ զամն
կրօնս քրիստոնէից. Իսկ բանաւոր Հօտքն
Քրի անխախտելի մնացին 'ի Հաւատս քրիստո
նէութե. քաջալերելով Հոգևորականաւ Հրամա
նաւն, որ ասէ՝ երանի է ձեզ յորժամ նախատե
ցեն զձեզ և որոշեսցեն. ետուն զամս Հարկին

զօրս խնդրէին. և յանձնառուին յօժարութբ՟ զնախատինս և զտանջանս վս՟ երկնաւորի յուսոյն՝ և զթեթև լուծն Քի՟ ի վր՟ աջոյ ուսոյն։ Իսկ անօրէն և ամբարիշտ ղարբանտայ խանն իբրև էտես թէ այնու ոչ կարաց յաղթել բանաւորի հօտին Քի՟, յաւել այլևս հարուածս ի վր՟ քրիստոնէից. կամ զամենն ներքինիս առնել կամ զմիակն հանել. կամ դառնալ՝ ի պիղծ դաւանութին մահմետի։ լսեմք թէ բազումք մեռան յայսմանէ հարուածոյ վս՟ անուանն Քի՟, այլ առ մեզ դեռ ևս ոչէ հասեալ մահաբեր հրաման պղծ ղարբանտայ խանին. և զառաջի կայն Ա՟ծ գիտէ։ Արդ եթէ այցաքասյէ ողորմածն Ա՟ծ՝ և անցուցէ զանպարտ խռովութե՝ ի քրիստոնէից՝ և լիցի համարձակութբ՟ զքնականս պաշտօնս կատարել առաջի Քի՟, զաս ազատս մայր որդիք լուսոյ աւազանին մաքրագործի դասք սրբազ գետոից. և ընդ եր ջանիկ արժանախումբ ձեռոյ սրբոյ հանէսդ։

Թուին, չկե. շարժ եղև յերզնկան՝ ի յօրն եօթն և ութ հեղ երերայր. Ա՟ծ պահեաց որոշ բլար՝ Թուին. չկզ. զաշխարհն էսպան ջանիբէկն. և ախինն նստաւ։ Թուին. չկդ. դեկտեմբերի ութն՝ օրն ուրբաթ շարժ եղև յերզնկան. ժամ մի էկաց կարծեցին թէ այլոչ շարժի. կրկին շարժեցաւ՝ պարիսպն բլաւ։ Թուին. չլ. Թուղթամ իշխան զրիմին առաքեաց զզօրս՝ ի դավրէժ և զքսան բիւր դերի տարաւ։ Թուին. չլդ. քեղայոյ խանն նստաւ։ Հարձեալ՝ ի սոյն Թուին. բուրհան զադին էսպան զտէրն սեբաստիոյ։ և զտեփաննոս եպիսկոպոսն սեբաստիոյ նահատակեաց։ և սրբոյ քառասնից զվանքն քակեաց։ Թուին. չլդ. Թուրքն էառ զօրոմն, և կախեն վարդապետն և երեմիայ, վարդապետն

ալեւոն մեռան ։ Թուին . պլե . Թամրազ խանն գնաց մինչ 'ի դիմիշխ . և եկն էհաս
էկաց ամս . ժէ . գնաց 'ի սմրղանդ մեռաւ ։
Պարձեալ 'ի սոյն Թուին, Լանկ Թամուրն եկաւ 'ի դավրէժ, և 'ի Նախչուան, և զխան կոտորեաց աւելի քան զերեքհազար մարդ ։ Թուին, պԼԴ, եկաւ Լանկ Թամուրն 'ի սմրղանդայ բազմօք զօրօք և եկեալ աւերեաց զսեբաստիայ, և գնաց 'ի յանկուրիայ, զխոնդքարին եղբայրն զիլդրում բայազիԹն եդ 'ի զափան ։ Թուին, պխա, դարձեալ եկն 'ի բաղդատ, և արար զբազում աւերս 'ի միջագետս, և դարձաւ յաշխարհն իւր ։ և էր սուլտան ահմատ որդին սուլտան աւհիսն 'ի յանջայ բերդն, և վրաց Թագերն եկն խլՙ բերդին և էառ զսուլտան աւհիսն տարաւ 'ի տփխիս, և Թամուրն իբրև լուաւ զայս, պխԹ, Թուին դարձեալ եկն խլՙ վրաց և էառ զշատ գերի, և գնաց յաշխարհն իւր, և սատակեցաւ, պծդ, Թուին ։ Խոջէն, պխբ, զտէր Թորոսն և զտէր զաքարիայն սպանին ։ Թուին, պծե, զարայ իւսուֆն՝ որ 'ի Թամուրէն փախեաւ և էջ 'ի շամ, և կապանօք տարան 'ի մըր, և անտի եկն 'ի կարփոյ երկիրն և գնաց 'ի դավրէժ՝ և էառ մինչև 'ի սուլԹանիայ ։ Թուին . պծէ . դարձաւ 'ի յարճէշ և 'ի յարծկէ և շմեզդին ընկերեալ Նմա արարին զշատ աւեր վանայ և ոստանայ . և միւս տարին շմեզդին հեծեալքն եկին և այրեցին զլատուան . և բարկացեալ ամիրեզդին գնաց և այրեաց զվաԹսուն գիւղ 'ի բաղիշոյ ։ Առաջին գալն շահռուխին . պկհ . Թուին . և խոյն տանու տէր՝ յաղԹեաց Թուրքմանին և գնաց ։ Երկրորդ՝ գալն ։ պհը . Թուին . և աղեղնաւորն տանուտէր . կոտորեաց

զԹուրքն 'ի սալամաստ. և զբուսայխան ղան եդ՝ և գնաց յաշխարհն իւր: Երրորդ գալն. պծե. Թուին՝ և խեցգետինն տանուտէր: Թուին. պհ. ջալալթէն եկն յաշխարհս հայոց: Թուին. պհա. շահրուխն եկն 'ի ղարաբաղն: Թուին. պհբ. ալէքսանդրն եկն: Թուին. պհը. ջահանշէն զշամշուլտոյ բերդն եառ: Թուին. պհթ: Դարձեալ եկն շահրուխն. դեմետրէն դէմ գնաց 'ի ղարաբաղն: Դարձեալ 'ի սոյն Թուին մահ տարածեցաւ: Թուին. պձե. ղուլն եկն 'ի յերզնկան և սպանաւ զքանդարն յորդւոյն. և նստաւ ջահանշէն: Թուին. պձթ. շամշուլտէ առաւ. և ղռ. այր կոտորեցաւ. և իննհազար գերեցաւ: Թուին. պղ. զլուսաւորչի Աջն 'ի սսայ գողացան և բերին յէջմիածին. և զնոր վիրապայ հայր տէր կիրակոսն զկթղկս օրհնեցին և եդին յէջմիածին՝ և անդ հաստատեցին զկթղկոսութիւն: Թուին. պղբ. զտէր կիրակոս կթղկսն փոխեցին վն նախանձու. և մակուեցի գրիգոր եպիսկոպոսն նստաւ կթղկս զօրալով և Թուրքով. և զիս և զսարգիս վարդպտն տուգանել ետուն. և զինչ վատութի, որ արարին կիրակոսի կթղկսին և սարգսի վարդպտին և ինձ, Ած թողու զմեղս նոցա: Թուին. պղգ: ջահնշէն զախլցխայ գերեցոյց: Թուին. պղե. ջալալթէն գնաց խլր շահրուխն իւր մահուամբն մեռաւ:

Թուին. ջա. երեկ ջիհանշային եառ զերզնկան: Թուին. ջբ. սուլթան մահմադն եառ զստամբօլ 'ի ձեռաց Թգւորին յունաց մանուկին: Թուին. ջէ. շարժ եղև յերզնկան. լբ. մարդիկք մեռան: Թուին. ջժ. չիթաւին եառ տրապիզոն: Թուին. ջժգ. Հասանբէկն գնաց 'ի վրացտունն և գերեցոյց: Դարձեալ. 'ի սոյն Թուին,

Թուլին զպարոն լոյսն նահատակեցին 'ի կափայ։
Թուլին. ՉԺԸ. մահ անկաւ ամենայն աշխարհ.
Նաղաշ վարդապետն զող ըն ասաց։ Թուլին. ՉԻԳ.
զտէր գրիգոր քահանայի որդին զդաւիթ նա
հատակեցին 'ի խարբերդ։ Թուլին. ՉԼԱ. մե
ռաւ սուլթան մահմատն՝ և նստաւ որդի նորա
սուլթան պայազիթն։ Դարձեալ՝ 'ի սոյն
Թուլին շարժ եղև յերզնկան. Լա. հոգեկք ներքև
հողին մնացին։ Թուլին. ՉԼԲ. աղուբ բէկն
ըխայ տաղն էառ։ Թուլին. ՉԼԳ. եա
ղուբ բէկն չեխ հայդարն էառ։ Թուլին. ՉԼԹ.
եաղուբ բէկն մեռաւ. սունխուրն կանգնե
ցաւ։ Թուլին. ՉԽԲ. սպահան կանգնեցաւ.
և յետ նր ալվանտն։ Թուլին. ՉԾ.
կարմիր գլուխ շահխմայէլն պատերազմեցաւ
ընդ ալվանտին և փախոյց զնա. և ինքն էառ
զթաղթն և նստաւ։ Թուլին. ՉԿԲ. սուլթան
սելիմն էսպան զհայրն իւր զպայազիթն և ինքն
նստաւ։ Թուլին. ՉԿԳ. սալիշմէն շահի հե
ծելն կոտորեաց. այլև թագաւորեաց շահն։
Թուլին. ՉԿԴ. սուլթան սելիմն գնաց 'ի չալ
տրան. կռուեցաւ ընդ շահին, և կոտորեաց
զշահն։ Թուլին. ՉԿԵ. սուլթան սելիմն գնաց
էառ զշամ և զմըսըր։ Դարձեալ 'ի նոյն Թու
լին սուլթան սելիմն արար զմանչ ժողովելն։
Թուլին. ՉԿԸ. սուլթան սելիմն չարացաւ՝
տղայ ժողովեաց 'ի քրիստոնէից։ Թուլին.
ՉՀ. մեռաւ սելիմն և նստաւ սուլթան սու
լէյմանն։ Դարձեալ 'ի սոյն Թուլին 'ի սե
բաստիայ բաղանիս շինեցին։ Թուլին. ՉՀԱ.
այրեցին զպէխլին որդին սափարն։ Թուլին.
ՉՀԵ. սուլթան սուլէյմանն գնաց էառ ըզ
Թաղթն ընկռուզայ, որ է բուտում։ Դարձեալ՝
նոյն Թուլին աթմաջայ խալիփայն եկաւ։

Դարձեալ 'ի սոյն թուին մեռաւ շահ Իսմայիլն,
և թագաւորեաց որդին իւր շահթահմազն:
Թուին. ՋՀԳ. տուլխոյ Հոռոմքն գլուխ քա
շեցին. և Հուսէյն փաշէն իպր գնաց զՀոռոմքն
ջարդեաց և գերեաց: Թուին. ՋՁԲ. զտեւու վա
նաց հայրապետ աբեղայն այրեցին: Թուին.
ՋՁԴ. 'ի շէմբուռկու գիւղէն երեք մի այրեցին:
Թուին. ՋՁԵ. զխօջայ օգջայն նահատակեցին
'ի սեբաստիայ: Թուին. ՋՁԷ. յոյնք ծաղկազար
դին զատիկ են արարեալ: Թուին. ՋՂ. շահթահ
մազն գնաց 'ի վրացտուն և աւերեաց զտփխիս
և զերկիրն ամ, զբազում գերիս արար և անհա
մար: Դարձեալ 'ի սոյն թուին հումայ փաթ
շահն եկն յոտն շահթահմազին և գնաց: Թուին.
ՋՂԷ. ալխասն եկն և հանեալ տարաւ
զխոնդքարն 'ի թաւրեզ իւր եղբօրն վերայ, որ
աւերեաց զթաւրեզ: Իսկ տէրն թաւրիզու
շահթահմազն եկեալ աւերեաց զխնուս՝ զբա
սեն՝ զարզրում՝ զդերջան՝ զկեղի՝ զբաբերդ՝
զեզնկան՝ զըսպեր: Թուին. ՋՂԸ. մահ եկն:
Թուին՝ ՋՂԹ. յարզրում քաղաքի զաղատոր
դիւան եօթանասուն հոգիս ջարդեցին 'ի մէկ
գիշերի՝ և մեծ աղէտ եղև:

Թուին. ՌԳ. խոնդքարն եկն իվր շահթահ
մազին, նաւաւ 'ի նախչուան զսահաթ աւերեց՝
և զբազում գերիս արար: Թուին. ՌԴ. կեղեցի ղու
կաս վրդպն զհռոմայեցւոց տօմարն՝ ի յոռք հան
եաց: Թուին. ՌԸ. որդիք խոնդքարին կռուեցին
'ի ղօնիայ. սէլիմն զբայազիթն փախոյց մինչև յըզ
րում: և նա գնաց 'ի շահն երեք որդւովքն՝ և
անդ սպանին զնա: Թուին. ՌԹ, սուլթան պայա
զիթն չորս որդւովքն՝ երեսունհազար մար
դով եկն շահթամազի յոտն: Թուին. ՌԺԲ,
մահ տարածեցաւ: Թուին. ՌԺԵ, սուլթան
սուլէյ

սուլէյմանն գնաց նվերայ փէջայ և անդ մե-
ռաւ ։ Թուին ․ ռժգ ․ Նստաւ սուլէյմանի որ-
դին սէլիմն ։ Թուին ․ ռժէ ․ սիմօն եկն շահ
Թահմազի յոտն ։ Թուին ․ ռժԹ ․ աղջկան
բոզն եղեր յերզնկան ։ Թուին ․ ռի ․ առին զկիպ
րոս կղզին ։ Թուին ․ ռիբ ․ շահԹահմազն մե-
ռաւ ։ Թուին ․ ռիգ ․ շահիսմայիլն Թախտ նըս
տաւ՝ երկու տարի ։ Թուին ․ ռիդ ․ մեռաւ
սէլիմն և նստաւ սուլԹան մուրատն ։ Թուին ․
ռիե ․ ագևոր աստղն ելաւ և երևեցաւ ։ Դար
ձեալ՝ ի սոյն Թուին շարժ եղև յերզնկան յոյժ
ահագին ՝ի նոյեմբերի հնգին իմէջ գիշերի ․
մարդ ՝ի շէն չկարաց պառկիլ չորս ամիս՝ և
ապա դադարեցաւ ։ Դարձեալ ՝ի սոյն Թուին
շահիսմայիլն մեռաւ ։ Դարձեալ ՝ի սոյն Թու
ին՝ զշահԹահմազն իմէջ բաղանեաց խեղդե
ցին ․ յետ նորա զսուլԹան հայդարն սպանին ,
զպզտիկ շահ իսմայիլն ՝ի բերդեն դուրս բե
րին ՝ի Թախտ ելաւ ․ յետ նծ ամիր համզայ մեր
զէն ։ Թուին ․ ռիէ , խուտաբանտայն եկեալ
Թախտին նստաւ ։ Թուին ․ ռիը , զերևան առ
ին ։ Թուին ․ ռիԹ ․ լալափաշէն երեկ զերևան
գերեցոյց ։ Դարձեալ ՝ի սոյն Թուին մեծ և
առաջին շահաբասն ՝ի մաշատուն ՝ի Թախտ
նստաւ ։ Թուին ․ ռլ , ներղացաւ սուլԹան մու
րատ Թգւրն ՝ի հրէից համարձակուԹէն ․ և
վերացոյց զփակեղն ՝ի գլխոց հրէից և քրիստո
նէից ամ ․ և սահմանեաց զգդակ դնել ։ Թու
ին ։ ռլբ , յերևան բերդ շինեցաւ ։ Թուին ․ ռլգ ,
շարժ եղև յերզնկան՝ յունիսի տասնևեօԹն
ու լուսաւորչի երկու շաբաԹի երեք ժամն ,
յանկարծ դողումն եղև ․ քաղաքն առհասա
րակ բլաւ ․ ժեռ ․ այր և կին մեռան ․ եռ ․ մարդ
այլ ՝ի ներքև հողոյն մնաց , զորս կիսամահ հանե

 ցին ․

ցին. որն ապրեցաւ՝ և որն սախատ մնաց: Թուին. ռլդ, օսման փաշայն գնաց առաւ զՇրվան և զԹաւրէզ: Թուին. ռլէ. Ֆահրատփաշայն զԳանձայ էառ: Թուին. ռլթ, քուրթն գլուխ քաշեաց եկեալ յերզնկայ: Թուին. ռխ. գզիրօղլին ելաւ Ջալալի. քուրդ ազգաւ: Թուին. ռխա. սեւատու տաճիկն չարացաւ՝ և էառ սրբոյ Լուսաւորչի զեկեղեցին: Դարձեալ 'ի սոյն Թուին Իբրահիմ փաշայն աւերեաց զամիթ հարկապահանջութբ: Թուին. ռխգ. մեռաւ սուլտան մուրատն՝ և նստաւ սուլթան մահմատն Թգւր: Թուին. ռխդ՝ ղարայ եազըչին ելաւ Ջալալի: Թուին. ռխե, ապստամբեցաւ ղարայ եազըչին: Դարձեալ 'ի սոյն Թուին Ներքինի Ջաֆար փաշայն ելաւ Ջալալի նըստաւ 'ի Թաւրէզ: Դարձեալ 'ի սոյն Թուին 'ի մայիսի ամսոյ խաւարեցաւ արեգակն: Դարձ. 'ի սոյն Թուին ահագին շարժ եղև յամասիայ. և 'ի չօռում. և շատ շինուածոց տապալումն եղև. մինչ 'ի չորս ամիսն՝ և ապա դադարեցաւ երերումն: Դարձեալ 'ի սոյն Թուին մահ անասնոց եղև սաստիկ: Թուին. ռխը, մարտի ամսոյ տասնևօթն, այնքան դառնաշունչ ձմեռն եղև, որ սրբոց քառասնից բազմահանդէս զուխտն խափանեաց, որ չկարացաք զսովորական տօնախմբութին առնել: Դարձեալ 'ի սոյն Թուին զօրացաւ ղարայ եազըչին և էառ զուրհայոց բերդն հոկտեմբերի ինն, յաւուր յերեք շաբաթի. որ և յառաջագոյն 'ի քաղաքն էր. այս եազըչիս աշխարհաւեր կապադովկիոյ սուխթայ գոլով. և ժամանակս ինչ էկաց 'ի յուրհայ առ մօլլայ մի ուսման աղագաւ. և յետոյ եղև Թֆանքչի՝ և էկաց զինուորութբ 'ի սպասաւորութիւն այլոց իշխանաց. յաղ-

Թօղ

թող՝ ի պատերազմունս. և յետոյ ինքնագլուխ ե-
ղեալ ժողովեաց զընկերս ապստամբեալ՝ ի թա
գաւորէն, բազմացոյց զզօրս իւր. մինչ զի ասե-
ին թէ զերեսուն և զվեց հազարապետս ունէր
որ բօլուկպաշի կոչէին։ և ասեն թէ յամ աւ-
ուր զայսչափ ծախս ունէր, այս է՝ ի միօրն. զերե
սուն մոթ գարի տայր երիվարացն. և այս մի
ջագետաց մոթն է, որ ամէն մոթ՝ երկուհա
րիւր քսանևչորս լիտրն գայ հռոմանց լտրումն.
և չորսհարիւր լիտր հաց. հարիւր և տասն ոչ
խար. երեսունևհինգ լիտր բրինձ. տասն
լիտր իւղ. և հինգհարիւր ղուռուշ ռոճիկ.
զի յօրն հազար ղուռուշ ծախք ունի ասէին։
Դարձեալ՝ ի սոյն թուին հուսէյն փաշէն ապս
տամբեցաւ՝ ի թգրէն՝ և կողոպտեաց զբա
զումտեղիս՝ և եկեալ պաշարեաց զկեսարիայ.
և՝ ի նոյն ամին գնացեալ յուրհայ միաբանե
ցաւ ը̅ եաղիչուն։ Եւ եօթն մարդ՝ ի գլխաւո
րաց քաղաքին էսպան եաղիչին. զոմանս կախե
լով՝ զոմանս խեղդելով. զի որն պարոնէր. և որն
չաւուշ. և ինքն տիրեաց քաղաքին. և յիւրմէ
փախուցեալ էր փոխանորդն փաշային։ Դար
ձեալ՝ ի սոյն թուին, հոկտեմբերի. ժե. ին,
յաւուր երկուշաբաթի փիալայ փաշայն և մախ
սուտբէկն եկին ի վր̅ եաղիչուն յուրհայ. և զաա
տիկ պատերազմ արարին՝ ի դիմաց սբ̅ գասա
ռակին՝ և ոչ կարացին առնուլ զնա. Դարձեալ
՝ ի սոյն թուին հոկտեմբերի տասնևութին, եկն
մէզիրն, որ փոխանորդ է թգ̅րին մահմետ փա
շայ կոչեցեալ՝ սա եկն ի վր̅ եաղիչուն յուրհայ
և խսարեցաւ քաղաքն. եօթանասունևերկք
օր։ Դարձեալ՝ ի սոյն թուին ղարայեաղիչին
եկն՝ ի չօռում և նստեալ անդ աւերեաց զշր
ջակայ երկիրն հարկապահանջութբ̅։ Դար
ձեալ

ձեալ ՚ի սոյն թուին ապստամբեցաւ քօսայ սա
ֆարն։ Թուին, ուխթ, հուսէյն փաշայն, որ ապս
տամբեալ էր ՚ի թգւրէն և աւերեալ զբազմ
երկիր և միաբանեալ ընդ եազիճոյն. եազի
ճին ըմբռնեալ զսա ըստ խնդրոյ վէզիրին ետ ՚ի
ձեռս նր. և այս պատճառաւս հաշտութին ա
րարին ընդ միմեանս, մանաւանդ ՚ի ծածուկ
կաշառօք կուրացոյց զաչս վէզիրին՝ և դարձաւ
՚ի նմանէ չուեաց յուրհայոյ ՚ի դեկտեմբերի
քսանեչորս յաւուր շաբաթի՝ և գնաց յամիթ
կուրացեալն կաշառօք։ Դարձեալ ՚ի սոյն թու
ին ղարա եազիճին չարչարեաց զուրհայ սաստ
կիւ հարկապահանջութբ. և գլխատեաց քահա
նայ մի աբրահամանուն. և զայր մի տանուտէր
աքմնդար անուն. յունվարի քսանևերկու յաւ
ուր երեք շաբաթի։ Դարձեալ ՚ի սոյն թու
ին ղարայ եազիճին տիրեաց թօխաթոյ՝ և ամա
սիոյ՝ և մարզուանու՝ չօռումու՝ և եղև սով,
որ մէկ լիտր ալիւրն երեսով փլորի մի եղև.
և մէկ քիլայ գարին՝ մէկ ղուռուշ։ Դարձեալ
՚ի սոյն թուին ապստամբեցաւ ղարաղաշ։ Թու
ին. ռծ, աւերեաց ղարայ եազիճին զսեբաստիոյ
կողոպտելով և այրելով. և զբազումս կոտորե
լով. և եղև սով մեծ։ Դարձեալ ՚ի սոյն
թուին ղարայ եազիճին յաղթեաց իբրահիմ
փաշային ՚ի կեսարիայ։ Դարձեալ ՚ի սոյն թու
ին թալնեաց և կողոպտեաց լաւանդն՝ որ սաթր
չի կոչիւր զսիս քաղաք կիլիկեցւոց։ Դար
ձեալ ՚ի սոյն թուին ապստամբեցաւ ահմատ
փաշայն։ Դարձեալ ՚ի սոյն թուին հասանփա
շայն եկն ՚ի յամիթ։ Թուին. ռծա, հասան փա
շայն խաարեցաւ ՚ի թօխաթ։ Դարձեալ ՚ի
սոյն թուին սատակեցաւ ղարայ եազիճին։ Դար
ձեալ ՚ի սոյն թուին այրեաց ջալալին զթօ
խաթ

խաթ .քաղաք ։ Դարձեալ 'ի սոյն թուին ներ
.քինի խոսրովփաշայն նեղացոյց զամիթ հարկա
պահանջութբ ։ Ի թուին, ռծբ, ապստամբեցաւ
թաւուլն ։ Դարձեալ 'ի սոյն թուին առաջին
շահաբասն եկն 'ի թաւրէզ՝ պատերազմեցաւ
ը օսմանցւոյն և էառ 'ի նոցունց զթաւրէզ և
զնախիջուան ։ Թուին. ռծգ, նոյն այս շահաբասս
էառ զերևան .քաղաք պատերազմաւ 'ի յօսման
ցւոց ։ Դարձեալ 'ի սոյն թուին Ջղալօղլի սար
դարն եկն՝ զինչ որ Ջալալի կայր զամենն ժողո
վեաց և զղարաղաշն այլ էբեր 'ի հետն տարաւ
'ի շահին վերայ ։ Դարձեալ 'ի սոյն թուին
մեռաւ սուլտան մահմատ խոնդքարն՝ և նս
տաւ սուլթան ահմատն թգւր ։ Դարձեալ 'ի
սոյն թուին ապստամբեցաւ ընջաղան։ Ի թուին.
ռծդ. ապստամբեցաւ յուլարղատին ։ Դար
ձեալ 'ի սոյն թուին ապստամբեցաւ Ջանփո
լատցի ալի փաշայն, որ էր ամիրայ .քիլիսու. և
զօրացեալ սա էառ զհալապ .քաղաք՝ և տիրեաց
նմա ամս երկու և կէս ապստամբեալ 'ի թգւրէն ։
Դարձեալ 'ի սոյն թուին Ջղալօղլի սարդարն
բազմօք զօրօք եկն յերևան. այս գալս որս առա
ջին գալն, որ եկն խլըն շահին. և յայսմանէ պատ
ճառէ նոյն առաջին շահաբասն զատրպատա
կանի ~ի բնակիչսն զհայ՝ զտաճիկ՝ զջհուտ 'ի
միասին .քշեաց և տարաւ յասպահան, այս է մեծ
սուրգունն ։ Դարձեալ 'ի սոյն թուին մինչ
դեռ Ջղալօղլին ամրացեալ էր 'ի բերդն վա
նայ պաշարեցին զնա զօրքն Պարսից. նա 'ի
գաղտ դրանէն ելեալ եմուտ 'ի նաւ և փա
խուցեալ գնաց յարծկէ և անտի՝ անկաւ բերդն
խնուսայ. և ապա գնացեալ յարզրում ժողո
վեաց առ ինքն զզօրս իւր ։ և զօրքն Պարսից
ժողովեալ զերկիրն ուշտունեաց գնացին յաշ

խարհն

խարհն իւրեանց: Թուին, ՌԾԵ. Ջղալօղլի սարդարն երկրորդ անգամ եկն ի վր շահին 'ի Թաւրէզ և պատերազմեցան. և կոխվեցաւ Ջղալօղլին և փախեաւ. և զղզլպաշն զնոցա խազնէն եառ, տասնևերկու փաշայ իւրով հեծելովն ջարդեաց: այս պատերազմս հոկտեմբերի քսանևհինգն եղև. և ինքն Ջղալօղլին գնաց 'ի համիթ և անդէն մեռաւ 'ի փետրվարի վեցն. և խիստ սով եղև 'ի վան՝ և յարզրում հայր զորդին եկեր և որդին զհայրն. ոչ շուն մնաց ոչ կատու. որք կերին զամէնն. այնչափ մարդ ջարդեցաւ 'ի սովուն, որ գլուխ չելանք թաղելով խոր փորեցին և ներս լցին: Դարձեալ 'ի սոյն թուին նոյն առաջին շահաբասն գնաց ի վր գանջայու և եառ զնա յօսմանցւոց: Դարձեալ 'ի սոյն թուին սաստիկ սով եղև յստամբօլու մինչև 'ի Թաւրէզ՝ և բաղդատայ մինչև 'ի դամուրղափին զշուն՝ զկատու՝ զմեռեալ մարդ և զկենդանի մարդ կերին. 'ի սաստիկ սովէն: Դարձեալ 'ի սոյն թուին. յայս սովուս պատճառէն. գայլքն զօրացան իվերայ մարդկան և զկենդանի մարդիկք պատառեալ ուտէին վն որոյ մարդագայլ անուանեցին զայն գայլն: Թուին, ՌԾԶ. առաջին շահաբասն գնաց 'ի շամախի և պատերազմաւ եառ զնա 'ի յօսմանցւոց: Դարձեալ 'ի սոյն թուին Ջալալին եկն յարզրում. մայիսի տասնևօթն. օրն կիրակի: յուլիս հինգ օրն կիրակի էր՝ շատ անողորմ բանարար: Թուին, ՌԾԷ. առաքեաց սուլթան ահմատն զմուրատ փաշայն ի վր ջանփոլատցի ալիփաշային 'ի հալապ. և եկեալ կոտորեաց զզօրսն 'ի դաշտին, որ կոչի դօգարչինլուկ. և զինքն փախստական արար: Դարձեալ 'ի սոյն թուին աւերեաց թաւուլ անուան Ջա

լալին

քալին զխարբերդու գաւառն և զբալուճայ : Դարձեալ 'ի նոյն թուին. սօֆին էին յարզրում յուլիսի երեսուն, որն շաբաթ՝ երկիրս ամէն թէ գիւղ է թէ քաղաք վաստակն խիստ այրեաց : օգոստոսի մէկն՝ գնաց. որն երեք շաբաթի : Խուճին, ածր. մուրատ փաշէն սուրգուն արար : Խուճին. ածթ. Եղ մուրատ փաշայն ըստամբօլու բաղմօք զօրօք և գնաց թաւրէզ և խիստ ձիւն էկն ասկարին վերայ խիստ զպուն ձգեաց. չիխփաշայն և ֆռանկին ընկան. յետ դարձաւ եկն 'ի համիթ, ձմերեաց 'ի համիթ : Դարձեալ 'ի նոյն թուին յուլիսի երեսուն և մէկն. որն երեք շաբաթի. սօֆին էկն յարզրում խիստ կռիւ արար հետ թուրքչաքիրմաղին՝ հետ թաթարին. Եղ օգոստոսի երեքն՝ գնաց օրն ուրբաթ, տեղւոյս տէրն հասան փաշայն էր : Թուին, ակա. մուրատ փաշայն մեռաւ 'ի համիթ՝ և էառ զվէզիրութին նասֆ փաշէն : Դարձեալ 'ի նոյն թուին նասֆ փաշէն եղ 'ի համթայ և զէլչին 'ի հետն տարաւ 'ի ստամբօլ՝ և արար զբարիշութին հետ ղզլպաշին՝ և էլչին յետ դարձոյց հետ հասանփաշին՝ և զարսեցիքն որ կոտորեցին : Թուին, ակէ. առաջին շահաբասն գնաց զվրաց տունն գերեցոյց : Թուին. ակզ. առաջին շահաբասն զԷջմիածնի քարերն. և զսրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչի աջն հանեալ յԷջմիածնէ. բարձեալ տարաւ յասպահան : Դարձեալ 'ի նոյն թուին 'ի գիւղաքաղաքն 'ի յուլաշ զնե փրկիչ եկեղեցին շինեցաք : Թուին. ակե. օրու զահմատ փաշէն էկն խլթ երևանայ. երկու ամիս և կէս նստաւ չկարաց առնուլ. ջարդեցաւ և յետս դարձաւ : Դարձեալ 'ի նոյն թուին ուռուսն կոխեաց զողապլիզն : Թուին, ակզ.

սուլտան

սուլտան մուստաֆայն նստաւ Թգւր երկրո-
ամիս՝ այլ և 'ի նոյն ամին փոխեցին զնա՝ և նստու-
ցին զսուլտան օսմանն Թգւր: Դարձեալ 'ի
նոյն Թուին և 'ի սորէ ամսոյ տասն և 'ի նոյեմ
բերի ամսոյ տասնեւութն. առաջին շահաբասն
'ի գիւղն ագուլիս զոտէր անդրէասքահանայն
նահատակեաց. վն Բնականի հաւատոյս՝ և
անդ յագուլիս 'ի խցաձորի եկեղեցին Թաղե
ցին: Ի Թուին. ռկե. խալիլփաշէն եկն 'ի Թաւ
րէզ ջարդեցաւ՝ և դարձաւ: Դարձեալ 'ի
սոյն Թուին մահ անկաւ. հարիւր և քառասուն
տղայ մեռաւ 'ի գումիշխանէն 'ի մէկ օրն:
Դարձեալ 'ի սոյն Թուին մեռաւ սուլԹան
ահմատն. նստաւ եղբայրն սուլտան մուստա
փայն յաԹոռ Թգւրութե հարիւր օր: Ի Թուին.
ռկէ, և կէս, մանզուլ արարին զսուլտան մուս
տաֆայն. և եդին Թգւր զսուլտան ահմատի
որդին զսուլտան օսմանն: Թուին. ռկը, 'ի
նաւասարդի ամսին շող Թրաձև երեցաւ յարև
ելից դէմ յարևմուտս. և զկնի շողոյն յարև
ելից աստղ մի երևեցաւ միշտ ընԹանայր 'ի
հիւսիս: Թուին. ռկԹ. սուլտան օսմանն գնաց
'ի պատերազմ խվն լէհին և ոչ կարաց առնուլ:
Դարձեալ 'ի սոյն Թուին մինչ Թգւրն օսման
խվն լէհին էր. 'ի կողմն հիւսիսոյ երկինքն վա
ռեցաւ կէս գիշերի. որպ Թէ արեգակն 'ի
յամպն վառէ, 'ի ծագել ժամուն այրի, նոյնպէս
եղև: և յորժամ Թգւրն դարձաւ 'ի պատե
րազմէն և գնաց 'ի ստամբօլ՝ իւր ղուլն չարա
ցաւ Թէ մեզ այսպէս Թգւր ոչ է պիտոյ. զար
կին սպանին զԹագաւորն: Թուին. ռհ. ծովն
ստամբօլայ պաղեցաւ յունվարի ամսոյ տասնև
չորս՝ որ մարդ շրջէր ի վր: Թուին. ռհա. նոյն
սուլտան մուստաֆայն կրկնակի նստաւ Թգւր.

և կալաւ զաթոռ թագաւորութեն հարիւր և յի
սուն օր․ և կրկնակի մազուլ արարին զնա՝ զի
խելացն պակաս էր ։ Դարձեալ 'ի սոյն թուին
առաջին շահաբասն գնաց զղանդահար քա
ղաքն եւ առ պատերազմաւ ։ Դարձեալ 'ի նոյն
թուին իմամղուլի խանն գնաց զհուրմուզ
քաղաքն եառ պատերազմաւ ։ Ի թուին․ ռհը․
նստաւ սուլթան մուրատն թագ 'ի սեպտեմբե
րի ամսոյն ։ Դարձեալ 'ի սոյն թուին ապաղայ
փաշայն, որ նստէր յարզրում քաղաքի․ ելեալ
յարզրումայ և գնաց մինչև յանկիւրիայ, և շատ
էնկիչարի ջարդեաց զանազանօք և չարեօքտան
ջանօք․ վրէժ խնդիր լինելով արեան սուլթան
օսման թագւորին․ և դարձեալ եկն 'ի յարզրում ։
Դարձեալ 'ի սոյն թուին մանչ ժողովօղն եւ ։
թուին․ ռհգ․ բաղդատոյ նստող բաշէր փա
շէն մարդ ուղարկեաց առաջին շահաբասին․
թէ եկ, որ զբաղդատ քեզ տամ․ շահաբասն
գնաց․ իսկ փաշէն ստեաց, և ոչ ետ․ իսկ շահն
իւրով թրովն էառ զբաղդատ։ թուին․ ռհգ․
յօգոստոսի ամսոյն՝ 'ի համթայ գիւղն, որ կո
չի քապիկ․ եղև նշան մեծ․ որ ծնաւ կին մի
մեռած զաւակ՝ երկու գլխէն․ մէկ գլուխն
մարդոյ և մէկ գլուխն հորթոյ․ և մարմինն
անարատ հորթոյ՝ ոտքն՝ կճղակն՝ ագին ա_
մենն հորթու նման՝ բայց մին գլուխն մարդոյ ։
Դարձեալ 'ի սոյն թուին, ուռուռսն եկն զօրա
պիզոնայ զներքին բերդն էառ․ ապրիլի քսան
ևերեքն օրն կիրակի․ եկաց չորս օր՝ և ապա
գնաց․ երկուհարիւրեքառասուն ղայեխ էր․
հազար և հինգհարիւր ուռուս ջարդեցաւ ։
Դարձեալ 'ի սոյն թուին՝ վրացի մովրովն
պատերազմեցաւ ընդ զզլպաշին․ և 'ի նոցանէ
կոտորեաց զբազում հեծեալս․ և զղաւչղայ

խանն. զուսուֆ խանն. զղազախ խանն սպան։ Դարձեալ զզլպաշքն յետ երկուց ամաց միւս անգամ զօրաժողով եղեն ի վր Աբասւոյ. և գլուխ Աբաս էր նոյն մուրշիդն. որ և յայսմ պատերազմի ևս կոտորեաց մուրշիդն զզօրս զզլպաշին. և զամիրգունայ խանն. զշահբանտայ խանն. զսելիմ սուլթանն սպան։ Դարձեալ 'ի սոյն թուին յարզրում նստող աբազա փաշայն զկարաւանսն, որ յարևելից և յարևմտից գային յարզրում և գնային. հնարիւք և խաբէութբ արգել զամենեսեան. մինչ որ բազումք կարաւանք ժողովեցան. և ապա յաւուր միում ամենեն զինչսն և զապրանսն յափշտակեաց եթէ նաղտ և թէ մեղ։ և յետոյ ապստամբեցաւ 'ի թագւորէն և եղև ջալալի։ այլև կամեցաւ միաբանիլ ընդ պարսից զի զքեռորդին իւր բազմօք զօրօք առաքեաց առ շահաբաս թագւորն Պարսից։ Թուին. ՌՀԵ, հաֆիս ահմատ փաշէն. երեքհարիւր հազար մարդով եկն իվերայ բաղդատայ ոչ կարաց առնուլ. հեծելն ջարդեցաւ և յետս դարձաւ։ Դարձեալ 'ի սոյն թուին օսմանցիք զերիս ոսկիս խարաջ առին 'ի հայոց։ Թուին. ՌՀԸ. խալիլ փաշայն վէզիր եղև, եկն արզրում ի վր ապազին. իսկ ապազէն գլուխ քաշեաց, վերստին զենկիչարիսն ջարդեաց. զվեց փաշայ ըմբռնեաց՝ զերկուսն 'ի դուրսն սպանեաց. և զչորս փաշէն 'ի բերդն տարաւ. և զբերդի դուռն փակեաց. և խալիլ փաշէն նստաւ ի վր բերդին՝ երկու ամիս և կէս. եօթն նաղում բանալ ետ, յետքն չկարաց առնուլ, ել և գնաց. և 'ի կէս Ճանապարհին զթօփերն 'ի վայր ձգեաց. և ապաղայն յետևն վազեաց. զութսուն ղաթար ուղտ. և զվաթսուն ղաթար ջորի, ամէնն բեռնով. և զշատ մարդըմբռնեաց.

ըմբռնեաց. և զշատ այլ ջարդեաց. վաղվրն գնաց 'ի Թօխաթ։ Դարձեալ 'ի սոյն թուին՝ յառաջնոյ շահաբասէն մօսէս վրդպտն էառ զհրամա̃ն լուսարարութե սրբոյ Էջմիածնի. որ և եկեալ յԷջմիածին զսկիզբն արար նորոգութե սրբոյ աթոռոյն՝ եկեղեցւոյն՝ և պարսպին. և այլ շինուածոցն ամենից։

Թուին,ռհէ,խոսրովփաշայն վեզիր եղև. և եկն յարզրում ի վերայ ապազային. վրացի մովրովն 'ի հետն էր. տասնևհինգ օրն, ռշգ, թօփկպոյց երեք դիմաց բլուց զբերդի պարիսպն. ըմբռնեաց զապազայն և տարաւ 'ի ստամբօլ։ Թուին. ռհը, առաջին շահաբասն մեռաւ 'ի Փահրապատ 'ի յաշրաֆ քաղաքի. և փոխանակն նր,նորին թոռն շահսէֆին 'ի սպահան թախտ նստաւ թգւր։ Դարձեալ 'ի սոյն թուին և յունվարի ամսոյ տասներեքն յաւուր տնօրէնութե Տն զմօսէս վրդպտն օրհնեցին կթղկս սրբոյ Էջմիածնի։ Դարձեալ 'ի սոյն թուին այս մօսէս կաթուղիկոս գնաց յասպահան առ թգւրն շահ սէֆի. զբազում գանձս ծախեաց 'ի դուռն թագաւորին և զբազում աշխատութիւս կրեաց. և հազիւ էբարձ զհարկս թուման մուղադէն, որ եդեալ էր ի վերայ սրբոյ յաթոռոյն Էջմիածնի. յայնմհետէ եղև սուրբ աթոռն ազատ։ Թուին. ռհթ. 'ի Հայոց ազգէն քրիստոնեայք՝ որք էին 'ի լով քաղաքին. ոչ ընկալան զեպսկպն իւրեանց. որոյ անունն էր նիկոլայոս. հակառակեցան և ոչ հնազանդեցան նմա. իսկ եպսկպն յարեցաւ յաբեղայսն փռանկաց. որք էին յեզվայիթայ կարգէն. և ետ զձեռագիր նց եմուտ 'ի հնազանդութի և 'ի դաւանութի փափին. և եղև ինքն փռանկ. և նոցին օգնականութբն յափշտակեաց զեկե-

ղեցին Հայոց. յոյժ բազմաւ անօթիւ և ղախ մերով. և զամենն անօթս եկեղեցեացն և զլախ մերն վատնեալ կորոյս և ոչինչ մնաց՝ միայն դատարկ եկեղեցին. և այնպէս մնաց մինչ'ի Հազար և Հարիւր և մէկ թիւն մեր: Դարձեալ'ի սոյն թուին խոսրով փաշայն մէ զերն առաքեցաւ'ի սուլթան մուրատ թագաւորէն գնալ իվր բաղդատայ. և նա գնաց դէպ'ի Համադան. և Հաս մինչև դարգազին. և անտի դարձաւ և եկն'ի թօխաթ ձմերեաց. իսկ սուլթան մուրատ թագաւորն առաքեաց զմուրթուզայ փաշայն'ի թօխաթ, որ զխոսրով փաշայի գլուխն կորեաց: թուին. ՌՁԱ. մոխիր տեղաց իվր սելէնիկու. երեք օր՝ և երեք գիշեր: Դարձեալ'ի սոյն թուին լէհայ երկիրն մէկ մարդոյ խաչանց մէջ մահանկեր է. նա Ս.Յ.քուփրէ սրիր թէ երբ կու սպանես նա եկ և կեր. Ծ. նմա պատուՀաս կուտայ՝ որ ինքն չուն կու լինի և զատակած խաչինսն կուտէ: Դարձեալ'ի սոյն թուին վախճանեցաւ մեծահաւատ սուրբ Հայրապետն մօսէս կաթողիկոսն յերևան քաղաքի. 'ի մայիսի ամսոյ տասնևչորս՝ և թաղեցին զնա'ի կոզեւ կոչեցեալ բլրին՝ Հուպ գերեզմանի կոզեան վրդպտին: թուին. ՌՁԲ. 'ի բէլղրատ քաղաքի տաճիկ մի խօղէ եղեր: Դարձեալ 'ի սոյն թուին և յունվարի տասնևերեքին. յաւուր տնօրէնութն Տ̃ն մօսէս կթղկսի աշակերտ զփիլիպպոս վրդպտն օրհնեցին կթղկս սրբոյ Էջմիածնի: Դարձեալ'ի սոյն թուին և օգոստոսի ամսոյն սուլթան մուրատ թգւորն կարի սաստիկ եսախ արար պիղծ թութունին, և իւր տէրութն աշխարհն զամ ղափախանայսն խափանեաց: թուին. ՌՁԳ, մօրոբեցան յոնք և արարին զծուաղատիկ, իսկ Հայոց ազգն,

ազգն, հապաշն, տորին, և զփոխին ուղիղ կա
ցին և Ճշմարիտ։ Դարձեալ 'ի սոյն Թուին և
յօգոստոսի ամսոյն սուլթան մուրատն գնաց
'ի Լէհայ վերայ 'ի պատերազմ, և հնազան
դեալ դարձուցին։ Դարձեալ 'ի սոյն Թուին
և յօգոստոսի ամսոյ զ վերոյ ասացեալ զապազայ
փաշայն սպան Թագաւորն սուլթան մուրատ։
Թուին․ ՌՁԴ․ սուլթան մուրատ Թգրն եօթն
հարիւրհազար մարդով եկն խլը երևանայ բեր
դին նստաւ։ Թօփով ծեծեաց զբերդն մեծա
զօրուԹբ՝ և յինն օրն էառ զբերդն․ և զիշխան
բերդին զԹահմազղուլի խանն իւրով պարո
ներովն առաքեաց 'ի ստամբօլ։ տասնևերկու
հազար մարդ․ քաջ պատերազմող եդ ի մէջ բեր
դին․ և ինքն էանց գնաց 'ի Թաւրէզ և անտի
դարձաւ խլերայ վանայ և գնաց 'ի ստամբօլ։
Դարձեալ 'ի սոյն Թուին․ զմանօղլին բերեալ
'ի ստամբօլ սպան զնա Թգրն։ Նոյն զելէզ փա
շայն սպան 'ի նոյն ամն։ Դարձեալ 'ի սոյն Թու
ին․ զհուսէյն աֆանտի մուֆտին սպան Թգրն։
Դարձեալ 'ի սոյն Թուին 'ի մայիսի ամսոյ տասն
և չորս՝ օրն չորեք շաբաԹ, սուրգուն արար
Թգւրն՝ Հայոց՝ Հոռոմոց՝ և Տաճկաց։ Դար
ձեալ 'ի սոյն Թուին՝ յօսմանցւոց յաշխարհն
մէկ լիտր լեղակն՝ ուԹսուն և եօԹն ռխալ եղև։
Թուին․ ՌՁԵ․ Թագաւորն Պարսից շահսէ
ֆի, հարիւրհազար մարդով եկն խլը երևանայ՝
նստաւ երեք ամիս․ բազմաւ աշխատուԹբ
և պատերազմաւ զբերդն էառ յօսմանցւոց․
և զիշխան բերդին զմուրԹուզայ փաշէն․ և
զայլ բազում զօրս 'ի նոցանէ սպան․ և զշխե
քան փաշէն՝ և զբէրահիմ փաշէն՝ և զմամին փա
շէն ըմբռնեաց՝ տարաւ յաշխարհն Պարսից․ և
'ի յերևան կարգեաց իշխան զքալպալալի խանն։

Դարձեալ 'ի սոյն Թուին, ոսխորդ գիւղն վերուստ 'ի վայր իջաւ. և վնիցս փագախն անդ շինեցաւ։ Թուին ՌՁԶ. ոսխորդու աղբիւրն վերականգու Թէ բաղխեցի մահդասի սիմէօնին 'ի գիւղն ի ջաւ։ Թուին ՌՁԷ. ապրիլի ԻԹ. օրն շաբաթ. սուլ Թան մուրատն գնացին բաղդատոյ 'ի պատե րազմ. և 'ի նոյեմբերի վեցն եհաս 'ի բաղդատ. և ծեծեաց զբերդն՝ լը. օր՝ մեծաւ զօրութե. և 'ի դեկտեմբերի տասնեչորսն օրն ուրբաթ էառ զբաղդատ քաղաք. և դարձեալ եկն 'ի հա միթ։ Դարձեալ 'ի սոյն Թուին Թաթարն եկն յերկիրն արարատու։ Դարձեալ 'ի սոյն Թուին փիլիպպոս կաթողիկոսն զլուսաւորչի աջն խնդրեալ 'ի շահսէֆի Թագւորէն. և հանեալ յասպահա նայ եբեր 'ի սբ Էջմիածին։ Թուին ՌՁԸ. յունիսի երկու. հօգւոյ գալստեան կիրակին դարձաւ սուլթան մուրատն և էմուտ 'ի ստամ բօլ մեծաւ փառօք։ Թուին ՌՁԹ. սբոյ սարգսի շաբաթու հինգ շաբաթ օրն՝ մեռաւ սուլ Թան մուրատն. և նստաւ 'ի տեղի նր Թգւր՝ նո րին եղբայր սուլթան իբրահիմն։ Թուին ՌՂ. փետրվարի ամսոյ հինգ՝ յաւուր ուրբաթու. սաս տիկ և ահագին շարժ եղև 'ի Թաւրէզ քաղաք, և 'ի շրջակայ գաւառսն իւր բաղումք տունք և շինուածք կործանեցան. և բազումք մարդիկք 'ի ներքոյ հողոյ մնացին. և շամղաղան ամարաթն. և ուստաշագրդ ամարաթն բլան. և 'ի մէկ օրն՝ հինգ և վեց անգամ շարժ կու լինէր մինչ երկու ամիսն։ յետ նորա տասնեհինգ օրն. և 'ի քսան օրն. և երեսուն օրն միանգամ շարժ կու լինէր. այսպէս էկաց մինչև 'ի հինգ ամիսն. ապա դադարեցաւ ողորմութեն Տն։ Դար ձեալ 'ի սոյն Թուին, ուռուսն եկն ղաղախու բերդն էառ և գշատ մարդ ջարդեաց յօսման լուէն։

ղուէն։ Թուին. ՌՂԱ. մայիսի ամսոյ երեք՝ մեռաւ Թագաւորն Պարսից Շահսէֆի։ Դարձեալ ՚ի նոյն Թուին եւ ՚ի մայիսի վերջ՝ փոխանակ Շահսէֆուն եդին Թագաւոր ՚ի տեղի նորա զնորին որդին զերկրորդ Շահաբասն։ Թուին. ՌՂԲ. դարձեալ օսմանցին յետ էառ պատերազմաւ զքաղաքն Ազախի ՚ի ռուսէն։ Դարձեալ ՚ի նոյն Թուին եկն մարախ երկիրն Արարատու։ Թուին. ՌՂԵ. ՚ի Թագաւորութեան սուլթան Իբրահիմին օսմանցիք սաֆարարին ծովու եւ համբաւեցին՝ Թէ գնամք ի վերայ Մալթայ կղզւոյն՝ եւ խաբտուեալ գնացին ի վերայ Կրիտէ կղզւոյն, որ էր ՚ի ձեռն վենետիկցւոց եւ գերաւ առին զնա՝ զի ընակիչք կղզւոյն յօժարէին յանուլն օսմանցւոց։ Թուին. ՌՂԸ. յապրիլ ամսոյ յերկուսն յաւագուրբաթու գիշերն ՚ի լոյս աւագ շաբաթ աւուրն. սաստիկ եւ ահագին շարժ եղեւ ՚ի վանայ քաղաքն եւ յիւր երկիրն. եւ բլաւ կէս պարսպի քաղաքին. եւ յոլով եկեղեցիք եւ մզկիթներ եւ բազում շինուածք կործանեցան եւ զբազում մարդիկս առին ՚ի ներքեւ։ եւ եկեղեցիք վարագայ վանիցն աւերեցան. եւ այլեւ վանորայք՝ որք ՚ի գաւառին էին՝ աւերեցան։ եւ յաւուրս ութն. ՚ի շարժման եկաց երկիրն ոչ գնաւ խիստ երեւսայ ջրոյ՝ եւ ապա հանդարտեցաւ, որ ի չորս օրն՝ եւ ի հինգ օրն՝ եւ ՚ի տասն օրն միանգամ շարժէր. եւ այնպէս մնաց մինչ որ յունիս ամիսն կատարեցաւ. եւ ապա զհաստատութիւն էառ երկիր ողորմութեամբն Աստուծոյ։ Դարձեալ ՚ի նոյն Թուին ազգն օսմանցւոց. մաղուլ արարին զսուլթան Իբրահիմն ՚ի Թագաւորութենէ եւ յետոյ սպանին. եւ եդին ՚ի տեղի նորա Թագաւոր զնորին որդին զսուլթան Մահմատն յալեալ ամսոյ քամնեւեօթն։ Դարձեալ ՚ի նոյն

Թուլին՝ երկրորդ շահաւեասն գնաց խլէ ղան դաւհար քաղաքին և էառ զնա· և զղալաւխատըն զաթլամ արար։ Դարձեալ 'ի սոյն Թուլին զօրքն Պարսից, որք էին 'ի Թիֆլիս քաղաքին· զօրաժողով եղեալ գնացին խլէ կախեթու տիրոջն Թամրազ Թ̃ւրին վրայ· և իմէջ պատերազմին սպանաւ որդի Թամրազին որոյ անունն էր դաւիթ՝ որ էր ժառանգ Թ̃ւրութեն· իսկ Պարսիկք առին զգլուխն դաւթին· ընդ նմին և զնորին բայդաղն՝ որ էր խաչալամ· և զդաւթի գլուխն 'ի ձող ցցեցին· և զխաչն գլխիվայր 'ի բայդաղէն կախեցին· և այնպէս 'ի Թիֆլիս քաղաքէն մինչև յասպահան տարան առաջի Թ̃ւրին երեանց երկրորդ շահաւեասին· և յամ քաղաքս Պարսից մեծաւ ցնծութե̃ զխրախութի առնէին· և քրիստոնէիցն էր մեծ սուգ և տրտմութի՝ զի քրիստոնէից Թագաւորութին անկաւ։

Ի Թուին· ռճ̃· փիլիպպոս կթողիկոսն 'ի սբ̃ Էջմիածնէ գնաց յեմ̃· բայց ամ մի բոլոր 'ի քաղաքսն հռոմաստանայ շրջեցաւ· և 'ի միանել· ռճ̃ա· Թուին, եմուտ յեմ̃· զսուրբ յակոբայ մէջն գոյնզգոյն քարամբք և մուտախիլներով սալեաց· և զաւագ բեմն բարձրացոյց քանզի կարի ցած էր։ Թուին· ռճ̃ա, փիլիպպոս կթողիկոսն ել յեմ̃այ և գնաց 'ի ստամբօլ՝ անդ եկաց մէկ տարի զքաղաքին եկեղեցեաց պարտքն վճարեաց· որ էր· լռ̃· ղուռուշ· և այլ բազում կարգս ուղղութե հաստատեաց անդ։ Դարձեալ 'ի սոյն Թուին իւրոյ քաղաքին նիկօլ եպսկոպոսն եկն 'ի ստամբօլ առ փիլիպպոս կթողիկոսն և մեղայ ասաց արձակեալ 'ի կապանաց բանադրանաց· և զեպիսկոպոսական իշխանութի ընկալեալ 'ի նմանէ գնաց իւրոյ քա

ղաք

ղաք 'ի տեղի իւր։ Դարձեալ 'ի սոյն Թուին
Հնդստանայ Թգ-ւրն շաՀիջան. Է. լաք մարդ-
ուղարկեաց ղանդ-աՀարայ վերայ ավրղանկել
փաշաՀզատէն. սայդուլէ խանն սարդար կար
գեաց. որք գնացին. Ը. ամիս և կէս նստան. Իւ.
սպաՀիք վայր անկան. Թող զբաջիխաթխարի
օրդ-ու բազարի Հալալ խօրն։ Թուին. ՌՃԸ.
փիլիպպոս կաԹղիկոսն եւ 'ի ստամբօլայ և մեծաւ
փառօք եկեալ էՀաս յԷջմիածին յաԹոռն
իւր։ Դարձեալ 'ի սոյն Թուին. գարիշու-
քուրն. Է. լաք մարդով եկն ղանդ-աՀարայ
վերայ. Գ. ամիս նստաւ երիշ արար. Ռ. մարդ-
վայր անկաւ՝ ոչ կարաց առնուլ յետ դարձաւ։
Թուին. ՌՃԴ, զԷջմիածնի ղանգակատան Հիմն
արկին և սկսան 'ի շինել։ Դարձեալ 'ի սոյն
Թուին. յօգոստոսի ամսոյ. Ը. յաւուր չորեք
շաբաԹի. աւուրք լուսնին. Ի. և արեգակն
յաւխուծ կենդանակերպն էր. կէս աւուրն
անցեր էր. երեքմասն արեգական խաւարեցաւ
և աստեղք երկնից երևեցան ոմ 'ի գիշերի։
Թուին. ՌՃԴ. 'ի մարտի ամսի. ԻԵ. յաղուՀա
ցից Հինգերորդ կիրակէին վախճանեցաւ տէր
փիլիպպոս կաԹղիկոսն 'ի սուրբ Էջմիածին.
և տարեալ Թաղեցին 'ի սուրբ Հռիփսիմէ եկե
ղեցւոյ մէջն։ Դարձեալ 'ի սոյն Թուին և յա
պրիլի ամսոյ. Ը. 'ի տօնի ծաղկազարդին զՋու
ղայեցի յակոբ վարդապետն օրՀնեցին զկաԹղիկոս
սրբոյ Էջմիածնի։ Դարձեալ 'ի սոյն Թուին
բաղխշու տէր աւդալխանն չարայաւ և ջալալի
կամէր լինել. վորոյ մալաք մաՀմատփաշէն վա
նայ ճաղմօք զօրօք եկն 'ի բաղէշ քաղաք՝ զաւ
դալխանն փախուցին՝ և 'ի տեղի նր եղբին խան
զնորին որդին՝ որոյ անուննէր դ-իւադին։ և յետ
մերոյ ամի եկն աւդալխանն և խորամանկուԹբ

սպան զորդին իւր դիադեմն. և դարձեալ ինքն նստաւ խան։ Դարձեալ 'ի սոյն Թուին. զդաշ տեցի հայերն 'ի սպահանայ քաղաքի միջեն հա նին և յեզր քաղաքի բնակեցուցին հրամանաւ երկրորդ շահաբասին։ Թուին. ՌՃԵ. զերև անցիսն և զայլևս հայերն հանին 'ի սպահանայ քաղաքի միջեն. և յեզր քաղաքին բնակեցու ցին հրամանաւ երկրորդ շահաբասին։ Դար ձեալ 'ի սոյն Թուին ազգն քրդաց նահատա կեցին զայր ոմն քրիստոնեայ աւետիս անուն՝ հայ ազգաւ՝ յաշխարհին մարաց՝ 'ի բերդն, որ կոչի միգան. և Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնայնով լուսով, որ եջ 'ի վերայ նորա։ Թուին. ՌՃԴ. զջհուտ ազգն՝ որք 'ի մէջ յասպահան քա ղաքին բնակեալ էին. բռնութեամբ և չարչարա նօք տաճկացուցին ազգն Պարսից։ Ընդ սոցին և զայլևս ջհուներն, որ յայլ քաղաքսն Պարսից բնակեալեն բռնութեամբ տաճկացուցին։ Դար ձեալ 'ի սոյն Թուին դադիմնայ թագաւորն մե ռաւ և թագաւորութիւն խանգարեցաւ՝ զի ոչ գոյր նմա որդի ժառանգորդ թագաւորութեան նորա։ Դարձեալ 'ի սոյն Թուին՝ և 'ի փետրվարի ամ սոյ. ԺԵ. վախճանեցաւ ջուղեցի սիմոն վարդա պետն 'ի Թօխաթ քաղաքի՝ և անդեն թաղե ցաւ. սա կարի վարժ էր քերականութեան ա րուեստին. և հանճարոյ արտաքնոց գրոց՝ և քա ջաբան հակաճառօղ ընդդէմ ամենից ազ գաց։ Թուին. ՌՃԷ. ղարաղալխանի տէր մեծ երխաթաւն. որոյ անունն էր ղալ. գնաց յասպա հան 'ի դուռն շահին. և ձեռն տուութեամբ շա հի էհոխմալդօլվաթին ոչ սպանաւ. այլ կեն դանի դարձաւ յաշխարհն իւր։ Թուին. ՌՃԹ. մարտի ամսոյ. ԺԱ. պաշխաչուխի թագաւոր աղէք սանդրն մեռաւ՝ և իւր փոխանակ որդին թագա

ւորեաց

բեւց անուն բագրատ։ Դարձեալ ՚ի սոյն թուին. այս բագրատ՝ որ փոխանակ հօր իւրոյ ալէքսանդրութգր նստաւ, իւր խորդ մայրն զորին զերկոսին ղաչան խաւարեցոյց՝ զի ներհակութի անկաւ ՚ի մէջ նց. այլեւ իշխանքն երեքոց անմխաբանք եղեն. երկիրն աւերեցաւ, եւ թգւորութին խափանեցաւ ։ Դարձեալ ՚ի սոյն թուին եւ յապրիլի ամսոյ մէկ աղուհացից հինգերորդկիրակէին գործեցաւ այս, քանզի կարի ցըրտային ծանր ձմեռն եղեւ՝ եւ պաղեցաւ ծովն գեղամոյ եւ սեւան կղզին, որ է ՚ի մէջ ծովուն, սորին բնակիչքն՝ որքան ամուր էր պաղն զերեսօք պաղին երթային եւ գային, եւ յորժամ թուլացաւ պաղն՝ որ ոչ բառնայր զմարդ. յայնժամ կամեցան ջարդել զսառն զի ճանապարհ արարեալ արտաքս գայցեն ՚ի ծովէն, վ՞որոյ առաջնորդ վանից կղզւոյն բարսեղ անուամբ վարդապետ, էառ ընդ իւր զմէկ աբեղայ. եւ զմի սարկաւագ. եւ զերիս աշխարհականս. մտին ՚ի տուփ եւ սկսան կոտորել զպաղն. եւ կոտորելով հասին ՚ի կէս ծովուն. յանմհետէ սկսաւ շնչել հողմն ուժգին, եւ կամեցան յետս դառնալ ՚ի կղզին՝ ոչ եթող հողմն, որ ալեօք ջուրցն զկոտորեալ սառն բերեալ բառնայր իւրի տեղոյն, որով ծանրացեալ տուփքն անցին ՚ի ներքոյ սառին, եւ սուզան ՚ի ծովն. վրդպետն եւ աբեղայն եւ երկու աշխարհականք ։ Իսկ սարկաւագն, եւ մէկ աշխարհականն փրկեցան ՚ի հեղձմանէ ողորմութբն Այ։ Դարձեալ ՚ի սոյն թուին եւ յապրիլի ամսոյ երեսունեմէկ յերկու շաբաթ աւուր, կայծակն է հար մէկ ձի սպան, զոր մերովքն աչօք տեսաք ։ Դարձեալ ՚ի սոյն թուին եւ յուլիսի ամսոյ քսանեմէկն յաւուր շաբաթու կրակ անկաւ ՚ի մեծ քաղաքն ըստամբօլ մինչ ՚ի

վաթ

վաթսունևվեց ժամս այրեցաւ բազումն տե-
ղի: Դարձեալ 'ի սոյն Թուին հրաման արար
Թգ̄ւրն Պարսից երկրորդ շահաբասն, որ յազ-
գէն մահմետականաց, հազարևհինգհարիւր
տուն Թուրք տարան 'ի կախէթ լցին' որ անդ-
բնակին: Թուին հազարևհարիւրտասն, կով-
կասլերան բնակեալ վրացիքն' ազգն, որ ասի
Թուշ, և փշաւ' եկին 'ի գեղերն և զայս հազար
և հինգհարիւր տուն Թուրքս 'ի սուր քաշե-
ցին 'ի ծերոց մինչև ցատընդխայն: Դարձեալ
'ի սոյն Թուին. շահն զէ հոխմալ դօվլաթն ըն
կեց յիշխանութենէ վն̄ արձակման երիսթաւ-
ւին, քանզի ասացաւ առաջի խանացն նաև ա-
ռաջի շահին, թէ թելադրութ̄ երիսթաւին
կոտորեցին վրացիքն զհազարևհինգհարիւր
տուն Թուրքսն: Դարձեալ 'ի սոյն Թուին
նոյն երիսթաւն եղբօրորդիքն զիւր գլուխն
կտրեցին և տարան առ սոյն շահին, այս գործե-
ցաւ թելադրութ̄ շահնաւազ խանին Թիֆլի-
զու, որ և ինքն ևս յազգէն վրաց էր, ոչ̄ զի
ինքն հաւատարիմ երևեսցի առաջի շահին:
Դարձեալ 'ի սոյն Թուին Թամրազ Թգ̄ւրն, որ
էր տէր կախէթու, ելեալ 'ի վրաստանայ
գնաց յասպահան առ երկրորդ շահաբասն հնա-
զանդ նման և ոչ̄ սովորութենէ նենգաւորն ազ-
գին Պարսից, զառաջինն սիրով և մեծարանօք
ընկալան զնա, բայց յետոյ վն̄ Ք̄ն̄ականի հաւա-
տոյն և օրինացն' բանիւ իշխանացն նենգեաց
զնա շահն և ձգեաց յերեսաց, և առաքեաց յաք-
սորս յաշխարհն Փահրապատու 'ի քաղաքն
աստարապատ. և անդ մեռաւ, և բազումք ասե-
ին թէ կամօք շահին դեղեալ մեռուցին զնա:
'ի Թուին, ռ̄ճ̄ժ̄. գնաց Թամրազն 'ի սպահան, և
'ի հազար և հարիւրևտասներկուսին մեռուցին
զնա:

զնա ։ այլ եւ յարանցն, որք ընդ Թամբաղիս էին զընտիրան սպանեին ։ բայց զմարմին Թամբաղին հրամանաւ շահին տարան յերկիրն իւր 'ի կախեթ առ Թոռն նմին Թամբաղի ։ Ի թուին, ՌՃԺԴ, յամսեան դեկտեմբերի, յետ անցանելոյ մէջ գիշերին 'ի խոր առաւօտուն, երեւեցաւ վարսաւոր աստղ մի յերկինս իմէջ յարեւելից եւ հարաւոյ, եւ զվարսն իւր դէպ յարեւմուտս ունէր ձգեալ՝ եւ յելանելն իւրում, որ աւուր՝ ուշ ելանէր, եւ այնպ յուշելանելով գնաց մինչ 'ի յերեկոյն, եւ յորժամ է անց զմէջ գիշերոյն դարձոյց զվարսն իւր եւ ձգեաց դէպ յարեւելս, եւ այնպէս գնալով էհաս մինչ 'ի յերեկոյեան լոյսն՝ եւ ապա անյայտ եղեւ ։ Այլ եւ 'ի սոյն Թուին, եւ յամսեանն ապրիլի ։ Դարձեալ երեւեցաւ աստղմի գիսաւոր ընդ արեւելս 'ի կողմն հիւսիսոյ՝ յառաւօտու պահուն, եւ զվարսն իւր ունէր ձգեալ՝ 'ի կողմն արեւմտեան, եւ յելանելն իւրում որ աւուր յուշ ելանէր, եւ այնպէս գնալով էհաս մինչ 'ի լոյս առաւօտուն, եւ անյայտ եղեւ ։

Պատճառ առնելոյ գրիս պատմութեանց Յորում եւ յիշատակարան առնողին ։

## ԾԱ ։



## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԳՈՀՈՒ-

Թե՛ բարերարութեն ՏՆ իմոյ եւ փրկչին ՅԻ ՔԻ. որ ետ զկարողութի ինձ նուաստի եւ տկարի եւ անարժանի բանի սպասաւորի առաքեալ կոչեցելոյ ։ 'ի վերջին դարուս եւ յերեկոյացեալ ժամուս ։ 'ի բնէ նորոգ սկսանել յառնել եւ 'ի շարադրել զնորոգ յառաջածեալ զգիրս զայս, որ կոչի պատմագիրք ։ Նա եւ հաստանել յաւարտ սորին, որ կատարեցաւ ։ Ա ռ որոյ զերեսս 'ի գետնի եդեալ արտասուս

լից

լից աղաչանօք կարդամ առ նա և ասեմ. Գոհանամ զքեն Տ՟ր Ա՟ծ իմ, և օրհնեմ զքեզ և զՍ՟ր ծնօղն քո, և զլուսակառոյց տաճարն քո, և զբնակարան քո զՍ՟ր Էջմիածին։ Տ՟ր իմ և Ա՟ծ իմ Յ՟ս Ք՟ս. քոյ, և քոյոյն է ամենայն պարգևական բարիս՝ դու ես բան և տուօղ բանի. գիր և գրօղ. և ամենայն պատրաստութի՟ գրոյ. եղիցիս դու օրհնեալ ընդ Հօրդ ստեղծողի. և ընդ Հոգւոյդ զարդարողի. յամենից արարածոց և յամենայն յաւիտեանս. ամէն։

Այսուհետև դարձուցից զբանս իմ և յայտարարից. արդ յապատուհից և մեհականաց անձանց։ և յօրինագանն արուեստն փիլիսոփայականաւ յոգ փացելոց իմաստասիրաց. և գործնականաւ առաքինութե՟ մաքրազարդեալ սրբոց և համօրէն ծննդոց սրբոյ աւազանին՝ ի Տ՟ն հաւատացելոց եղիցի ծանուցեալ. նա և մեծաւ աղերսանօք խնդրեալ՝ ոչ զի մի լինիցիմ մեղադրանօք քամահեալ իբրև ՚ի վեր քան զկար ձեռնարկեալ. և ոչ զմտահաճ յանդգնեալ՝ և յանձին քաջութի յուսալով ձեռներեց լեալ, և յայս գործ՝ որ յաւէտ ՚ի վեր է քան զկար մեր՝ ձեռն մխեալ։ Այլ ՚ի հարկեցուցիչ հրամանէ երիցս երջանկի և Տ՟նայսակ հայրապետին և սրբոյ աթոռոյ Էջմիածնի յաջորդի տեառն փիլիպպոսի ամենից Հայոց կթ՟ղկսի. վ՟ն զի ինքն բազմահանճար հայրապետս տէր փիլիպպոս. և ամենայն արք իմաստունք և առաքինիք և ծերագոյնք, որք զկեանս իւրե՟ց ձգեցին յառաջնով ժամանակաւ և ասովաւ. որոց և տեսեալ էին զամենայն իրակութիս և զանցուածս՝ որք ճառեցան ՚ի գիրս պատմութեան այսմիկ. այսինքն զաւերիչն աշխարհին Հայոց՝ և զգերիչն և զվտանիչն քրիստոնէից.

տօնէից. այլև զնուազին և զպակասին եկեղե-
ցականաց կարգաց։ և զանչքանալն և զաւերն
բարձրագահին և Ք̃նաբնակին աթոռոյն սրբոյ
Էջմիածնի։ այլև սոցին նորոգութի և այլևս
բանք պատմութեց՝ որք և գրեցան յայսմ շարա-
գրութես։ որոց վս այնք մարդիկք ամքն մե-
ծաւ տարփանօք և յաւէտագունիւ ըղձիւ բաղ-
ձային արձանացուցանել՝ ի գիրս յիշատակի՝ ի
գիտութի յապայ եկելոց. որք յանցնիւր դարս
և ժամանակս յառաջադային։ Նաև համա-
պաղ մաղթողականաւ բանիւ խնդրէին՝ ի փիլիպ-
պոսէ կթղկսէ զի հրամայեսցէ ումեք կատարել
զայս գործառնունի պատմագրութես։ Նաւս և
ինքն կթղկսն փիլիպպոս զառաւելագոյն փոյթ-
ունէր.քան զմմն սակս այնր իրաց, վնորոյ հար-
կէր երբեմն զայս՝ և երբեմն զայն՝ զի կատարես-
ցեն զայս գործս, և յոլովից ոմանց և լերոցն աշա-
կերտաց եղև հարկադիր զի թերևս ոք յանձն
առեալ կատարեսցէ։ Իսկ նք հմուտ գոլով գի-
տելին զբազմազան աշխատութիւն, որ՝ ի սմա ոչ
եւտուն զանձինս՝ ի տաժանումն յայս, այլ յին-
քեանց՝ ի բաց.քեցեալ ձողոպրեցան։ Իսկ նու-
աստս և տրուպս յամենին առաքեալ կոչմամբս
պարաաւոր բանի, գոլով խնտեղեաւ՝ ի քաղա-
քէն թաւրիզու, և յաշակերտութենէ սոյն
տեառն փիլիպպոսի կթղկսի, և՝ ի միաբանու-
թենէ լուսակառոյց աթոռոյն սրբոյ էջմիած-
նի, որ և սատէն իսկ մնեալ և վարժեալ, և
յաւուրս ծերութե ժամանեալ, նա և ակնու-
նիմ զի ընդ հովանեաւ սորին ամփոփիլ՝ ի հող.
զի թերևս որ՝ ի սմա խորհրդակատարութեցն
լինիցիմ հաղորդեալ։ վս որոյ յետ ամենեցունց
իբր անարգի միոջ եղև ահեղ հրամանն հայրապե-
տին իմ ինձ տկարիս, և ոչ զոլար կենդանի

ոմն

ոմն ըմբռնեալ 'ի վարմից և յորոգայթից և ոչ կարիցէ զերծանիլ. սմին սարասիւ գոգջիք և զեղկելիս ըմբռնեալ 'ի վարմ գործոյս այսմիկ: և այս յաղագս այսքանեաց պատճառաց:

Առաջին՝ ո՞չ 'ի վերդ ցուցաւ զի ոչ կարացի զերծանիլ 'ի հրամանէ հայրապետին, թէ պէտ և բազում միջնորդօք յայտարարեալ խոստովանեցայ զիմ տկարութի՛ն ոչ գոլ բաւական այսմ հրագործութեան: Երկրորդ, ոչ միայն 'ի հարկելոյ փիլիպպոսի կթղկսին, այլ մանաւանդ 'ի հարկելոյ մեծահոգւոյ և երկայնամտի հայրապետիս տեառն յակոբայ կթղկոսիս ջուղայեցւոյ, որ զկնի փիլիպպոսի կթղկսին յաջորդեաց զգահն հայրապետական զաթոռն սբ. Էջմիածնին, սա ևս հարկեաց զիս յայս գործ՝ որ զկնի վախճանի փիլիպպոսի կթղկսին 'ի բաց թողեալ էի. զի կարի բազմախոնջ և աշխատաւոր և տաժանելի թուեցաւ ինձ այս գործ, վն որոյ 'ի բաց կացի և հրաժարեցայ 'ի սորին առնելոյն. և մնաց խափանեալ այս գործառնութիւն 'ի ժամանակս ինչ: ապա այնուհետև որբազան հայրապետն մեր յակոբ կթղկոս վերստին յիշումն արար այսմ գործոյ՝ և էած զիս իւր առաջի և բազմազանաւ կերպիւ բանից միւսանգամ զիս էմոյծ 'ի սոյն յայս գործ: այնուհետև յոքնակի վշտամբերիւք կրիւք հազիւ թէ զայսքան պատմութիւն հաւաքեցի և գրեցի Երրորդ՝ և ես ինձէն իսկ տեսանելով զաւերս հայաստանի աշխարհին, և զնուաղին մերոյս ազգին, և զչարութիւն մահմետականաց, կսկծալեաւ մորմոքմամբ այրիւր սիրտ իմ, վն որոյ յօժարեցայ յարձանագրութիւն սոցին: Չորրորդ և մանաւանդ յաղագս առ Տր յիշատակի 'ի մասն բարի, զի հայելով 'ի յոլովութի յանցանաց, և 'ի սատ

տանս խղճմտաց և բնաւին ոչ ունելոյ ներան
ձին մանկինչ նշուլից բարեաց, յուսալով յա
ռատ ողորմութե մարդասիրին Այ՝ որ և
զվարձս բաժակի միոյ ջրոյ ոչ անտես արար,
հոգացի զսա, իբրև զլումայս այրւոյն արկի ի
գանձանակն Տն, զի թերևս սովաւ գտայց ներ
ումն աններելեաց իմոցս պարտեաց, որ զտիրա
կանն պատկեր ադեղացուցի 'ի տղմալւոյ գայ
ռի՞ Այ, և մեծաւ յուսով ապաւինեալ 'ի բարե
խօսութն ընդունական ձերդ մաղթանաց զի
սրտի մտօք խնդրեցէք յաղէնիաղէ Տէ զի ինձ
չանարդիս պարգևեսցէ զիւրն զողորմութն և
զմեղացն իմոց զթողութի, ոմ և բերցն զաղա
րու մաղթանօք շնորհեաց նմին զյարութի ։ Մն
զի և ես այսու դիտաւորութբ և յուսով յանձն
առի զայսպիսի յոքնաշխատ և զբաղմաւորկ և
զտաժանելի գործս՝ և յաւուրս յոլովս 'ի սմին
դեգերելով և 'ի յոլով երկիրս և յաշխարհս
շրջագայելով 'ի խնդիր զուցաց պատմու
թե, ոչ միայն 'ի քրիստոնէից, այլև յայլոց
ազանց հարցանելով, և ամենից զասացեալսն
գրելով, և մն զստուգութի բանին գտանե
լս, եղև զի զմի պատմութի, տասն անգամ և
այլ աւելի կրկնելով գրեցի, և զամս ինն 'ի
սմին դեգերելով, և զինչս ծախելով, հազիւ
թէ զայսքան պատմութիս 'ի մի վայր հաւաքե
ցի և գրեցի, և բնաւ ոչօք եղև ինձ ձեռնտու,
այլ միայն Տր իմ Յս՝ էր ինձ օգնական ։
Այլև յորժամ հրամայեաց ինձ փիլիպպոս
կթղկոս առնել զայս գործ, և ես սկսայ առնել·
էր թուական մեր հազար և հարիւր՝ և յամս չորս
աշխատեցայ · և հաւաքեցի զմասն ինչ պատմու
թե · իսկ զկնի վախճանի փիլիպպոսի կթղկսի
ւքեալ թողի և 'ի բացկայի 'ի սմանէ տեսանելով

զյոքնակի վտանգն և զմտատանջ երկն աշխատանաց որ'ի սմա, որ'ի վեր քան զկարն իմ ծանր թուեցաւ իմում տկարութեանս ։ և մնաց խափանեալ այս գործ ցժամանել թուականին մերյամն, ՌՃԿԵ, և այնուհետև հրամանաւ յակոբայ կթղկսին կրկնակի մտաք յայս գործ՝ և սկսաք յառնել մինչև ցհասանել թուականին մերոյ, ՌՃԺԱ. ամին։ և յայսմ վայրի եղև դադարիլ մեզ 'ի գործառնութեանս այսմիկ ։ Այլ թէպէտ 'ի շրջագայութիւն աշխարհաց 'ի բազում տեղիս մանաւորաբար եղև գրեալ 'ի սմանէ սակայն սկիզբն սորին եղև 'ի բարձրագահ աթոռն 'ի սբ Էջմիածին, և կատարումն ևս 'ի նոյն տեղին, շնորհօք սորին սրբոյ և Միածնակի տաճարիս ։ Եւ ունի գիրքս այս պատմութիւն ամաց վաթսնից, և այն ևս որինչ եղև գտեալ և'ի սեղանաւորս արկեալ՝ շնորհօքն Այն ։ Իսկ թերին և թիւրն և այլ սոյնպիսիքն յիմս տգիտութէ և'ի տկարութէ, վն որոյ աղաչանօք խնդրեմ'ի ձէնջ ներումն ։ Այլ դիպեցաւ պատահիլ ինձ այս գործ, ոչ'ի ժամանակս առոյգ երիտասարդութէ, այլ յողորմելի ծերութէ, վն զի ծեր էի. նաև յոյժ ցաւագար մարմնով. և'ի լուսոյ աչքս պակասեալ և'ի պնդութէ ձեռքս թուլացեալ դողայր. սոյնպ և յայլոց յամենից կարողութեց ակարացեալ. և մահու հրաւէրք ամենեքեան հանդէպ աչաց եկեալ կացեալ. և սպառնալիք գեհենին ևս քան զևս ի վերայ իմ յանձնեալ ։ Վասնորոյ զերեսս իմ առաթուր ձեր եդեալ և զոտերն Այ առ ձեզ բարեխօսս ծեալ. մի՛ տաունգանեալ անտես առնիցէք զաղաչանս իմ. այլ հայցեմ, մաղթեմ, խնդրեմ, ժտեմ մեծաւ պաղատանօք, զի շնորհիցէք մեզ զՏծ ողորմին և զԱծորդին և զհայր մեր յերկինս։

կինս 'ի նոյն կարգին ։ եթէ նստեալ կայք և թէ կանգուն 'ի յոտին. խնդրեմ ոչ գանդաղիլ և ծուլանալ յասելոյ սոցին ։ և զոր դուք մեզ ընձեռէք՝ և ձեզ լիցի մասն և բաժին յաւուրն ահեղին. առաջի արդարոյ դատաւորին Քի փրկչին ։ Որում պատիւ և երկրպագութին և անզրաւ փառաբանութին՝ յամենից արարածոց. յիմանալեաց և 'ի զգալեաց. անլռելեաւ պատագոչութբ. Ամէն ։

Պատմութին կենաց Ոսկանայ Վարդապետի Երևանեցւոյ տպագրողի գրոյս՝ և այլոց ։

ՆԱ ։

ԼՐՍԱԱՕԳԱԻՀԱՑ բարեպաշտ ծնողաց զաւակ՝ որոց անուանքն էին Թորոս և գօհարագեղ. որք 'ի ժամանակս երկրավտարութե շահապազին վարեցան Է երևանցւոցն 'ի սպահան քաղաք. և անդ զարգացեալք ամուսնացան. յորոց ծնաւ Ոսկանս այս 'ի թուին հայոց ռկգ. ին. յամսեանն յունվարի ։ Իբրև զարգացաւ ետուն զսա յուսումն գրոց. որև ուսաւ ըստ կարի 'ի քահանայից աշխարհականաց. մինչև 'ի գալն մօսէսի կթղիկոսին 'ի ժամանակս վարդապետութե իւրոյ 'ի սպահան. զոր յոյժ սիրով ընկալան սպահանայ հայազունք քրիստոնեայքն՝ մինչ զի զխաչատուր ոմն վարդպտ զայր հոգի և սրբասուն յաշակերտաց սորա ընտրեցին ինքեանց զառաջնորդ. որ մնացեալ 'ի սպահան զուղղութիւս յոլովս յարդարեաց. կարգս, բարեձևութիւս, դպրոցս, և այլս յոլովս. որով բազումք եղեն վարժեալք գրովք ձայնովք. յայնմ ժամանակի և մանուկս այս Ոսկան. 'ի տիս տղայութե կարի ցանկացող



եղև

եղև այնմ մենաստանի և վարժարանի. բայց ծը
նօղք սորին դժկամք լինէին գնալոյ սորին 'ի վր
ժարանն յայն. սակայն ինքն յաւէտ տոչորմամբ
ըղձայր կարդալ և ուսմանն. որ և ծածուկ 'ի ծնօ
ղացն գնայր առ վարդապետն Խաչատուր սակս ուս
ման, և կրօնաւորութե. զոր գիտացեալ ծնողացն.
գնացին 'ի դարձուցանել զնա անտի: Արք բա
զումանգամ ջանացեալք ոչ կարացին հաճե
ցուցանել զնա կամաց իւրոց. քանզի երկիցս և
եռիցս գնացեալք պատճառանօք ինչ բերեալ
առ ինքեանս ոչ թողուին անդրէն դառնալ:
Իսկ ինքն այնքան ջանայր փախստեամբ, մինչ
ձանձրացեալք ծնողացն թող ետուն նմա մնալ
անդր: Իսկ նա իբրև մնաց անդր ուսաւ զսաղ
մոսն. և զշարականն ըստ սովորութե Հայոց
'ի սակաւ ժամանակս. և զայլ գիրս ածայինս
'ի միւ եւս՝ զկթղկեայն՝ զպօղոս՝ և զեսայի:
Յորում ժամանակի զմօսէս վարդապետն շահն
խնդրեալ տարաւ առ ինքն 'ի բաբելոն սակս
զմոմ՝ ապխտակացուցանելոյ. յորում վայրի
տուեալ նմա տղայս չորս յիւրոց փոքունց ծա
ռայից. զորս ուսուցեալ վերստին տարեալ
յանձնեաց շահին զտղայսն հանդերձ ապխտա
կացուցելովք մոմիւքն. յորում վայրի ընկալաւ
և զհրաման լուսարարութե սրբոյ Էջմիածնի.
զի որոյ գրեաց առ Խաչատուր վարդապետն, զի
գնասցէ յԷջմիածինն առ ինքն, որ և անյա
պաղ յարուցեալ գնաց: և 'ի գնալն նորա
անդր, և 'ի ժամանելն յԷջմիածին, զմօսէս
վարդապետն կթղկս ձեռնադրեցին, և նա զկնի
ձեռնադրութենն իւրոյ զխաչատուր վարդապետն
նուիրակ էր կարգեալ տանն արևմտականի.
իսկ ինքն կթղկան չուարարեալ եկեալ էր վերս
տին 'ի սպահան, 'ի տեսութի և 'ի շնորհաւո
րութն

բութն նորընծայ Թագաւորին շահսէֆւոյն : քան
զի յաւուրսն յայն ամին մեռաւ շահաբասն, և
Թգրեաց շահսաֆին : Որ և եկեալ ՚ի սպահան ըն
կալաւ զխնդիրս ՚ի Թգրէն, այսինքն վերացումն
հարկուր Թուման մաղԹային . զոր շահաբասն
հաստատեալ էր յանձնառութբ մելքիսեԹ
կԹղկսին . իսկ աշնանն երբև դարձ արար յէջ
միածին զօսկանս և ընդ իւր առեալ եած յէջ
միածինն ՚ի տիս մանկութն : Երբև եկն սա ՚ի մե
Թուականն ՌՀ կԹղկսին ետես անդ զմելքիսեԹ
վարդպետն վժանցի, զայր կորովի և բանիբուն,
զգաստոյն հանճարոյ բնաբանականին մանաւորս
բարբայց սա զոչինչ փոյթ կալաւ յանձին հետև
ել նմին . զի ինքն տղայ էր հասակաւ, մանաւանդ
զի առ ոչոք գոյր իմէջ հայոց այն գիտութին :
Նաև ս զի ոմքն պարսաւօղք էին այնմ արհես
տի, որք էին արք երևելիք, և Թուէին Թէ
դոյ գիտութի ՚ի նմա : Նա և էին առեցօղք գի
տութե, և եպերօղք վեհազանցին այնմիկ . վն
ոչ գոլոյ ինքեանց հասու գիտութեն այնմիկ :
մանաւանդ զի ոչ կարէին իսկ հասու լինել՝ վն
որոյ և ոչ սա հետևեցաւ նմին տեսանելով զմե
ծագոյնսն պարսաւօղս գիտութեն լուսաւորի,
և ծածապարդելի . առանց որոյ անհնար է մարդ
կան զիր ինչ ճշմարտապէս իմանալ՝ և զբաւս
ծածնչոց գրոց ուղղակի բացատրել : Բայց
երբև դարուն եղև մելքիսեԹ վարդպետն ճա
նապարհ արարեալ գնաց ՚ի կողմանս տարպա
տականի, զի նորա եղբօր որդի գոյր գերեալ
յերկիրն ղազղնու՝ զկնի նր հետևեցաւ զի Թե
րևս կարասցէ ազատել զնա . որոյ երԹեալ ոչ կա
րաց գտանել սակս արհաւրին, որ ՚ի կողմանն
այնոսիկ դիպեցաւ : Քանզի զօրապետն օսման
ցւոց խօսրով փաշայն եկեալ ՚ի կողմանսն ա

նոսին վրդովելոց զամենեսեան ։ մի որոյ դարձ
տրաբեալ են վերստին յերեւան ։ Յորում ժա
մանակում, եւ վարդապետ սորին խաչատուր կեսա
րացին եկն յերկրէն Սարմատացւոց հանդերձ
սիմոնիւ Ջուղայեցւով՝ որ էր ընդ նմա մանո
ցին եւ աշակերտ նորին . որք յիլով պատկառանս
բազում էին կրեալք ՚ի տեղեաց քրիստոնէից՝
սակս անհմուտ գոլոյն քերականութե եւ ուս
ման իմաստասիրականաց արհեստից ։ Սա այ
նորին իբրեւ հասին յԷջմիածին տեսանելով
զտէր մելքիսէթն կարի սիրով ձեռնարկեալ
ուսան զգիրս քնաբանականս . զորքան նա
գտեալ էր բազմաւ ջանիւ ։ Նախ զահմանն
դաւթի ներգինացւոյ յանապատուջն՝ որ էր
եանւըորոց եւ սա սկսաւ ուսանիլ՝ մինչեւ ՚ի ժամա
նակ ինչ ։ Իբրեւ այսեղեւ, աւեղայք եւ ընկերա
կիցք սորին, որք էին յԷջմիածինն, յարեան իմ
կթողիկոսին մօտէսիաստելով կամ մեղ եւ ըհրաման
տուր զի գնացեալք յերեւան զգաս աւցուք ՚ի
մելքիսէթէն՝ եւ կամ զնաբէր ՚ի տեղիս. զի սառ
իմէջ Էջմիածնիս դաս աստացէ ։ յորմէ անձա
րացեալ կթղկոն հրամայեաց մելքիսէթին գնալ
յԷջմիածինն դասատել աւեղայիցն անցեն,
դ.ք կամեցին ։ Իբրեւ մելքիսէթն գնաց խաչա
տուր վրդն ոչ կամեցաւ գնալ յԷջմիածինն
այլ մնալ յանապատին երեւանայ ։ սոցա երկուցս
հարկեղեւ, (այսինքն սիմոնին եւ ոսկանին) միայն
մնալ ընդ վարդպետին խաչատրոյ՝ զի սոքա երկո
քեանս էին սեպհական աշակերտք նորին՝ ՚ի մանկ
կութե ։ Նայսմ վայրում սիմոնն սկսաւ ստել
ամին, քանզի նա աւագագոյն էր ։ Տես տէր ոս
կան, հարկ է մեզ ՚ի մէնջ մնալ սա ընդ վար
դապետիս ։ այս դիտութի եւս կարի հարկաւոր
է մեզ՝ զի գնացեալ յայահան միմեանց ու

սուս

սուսցուք: Թէ դու զկամս ունիս ուսանելոյ՝ դու երթ. ես մնացից աստ 'ի սպասաւորութե անին: իսկ եթէ ոչ ունիս: ես երթայց՝ և դու աստ վարդապետին սպասաւորեա: Սա ևս անտեղեակ գոլով հմտութեն, և տղայ հասակաւ. մանաւանդ զաւագութին շնորհելով սիմոնին, մնաց ինքն առ վարդապետն յերևան, իսկ սիմոնն գնաց ընդ մելքիսեթին յԷջմիածինն, զդաստեառ անդ զպորփիւրն և զմատորոգութին, բայց զպետրիարքինիսան մինչև 'ի տասնևչորս ալրակին: յայսմ վայրում 'ի սպահանայ խնդրակք եկին խաչատրոյ վարդապետին զի տարցին 'ի սպահան, ընդ որոյ և սորա երկոքեանս գնացին. Իբրև գնացին 'ի սպահան զմնացալոյն ևս ուկանս 'ի սիմոնեն դասեաւ: իսկ զմնացեալսն 'ի պետրիարքինիսաեն. և զքերականութին որ 'ի նախնեաց, 'ի միասին չինեցին. զի և սա կարի արագամիտէր: Յաւուրսն յայնոսիկ մեռաւ մօսէսն, ձեռնադրեցին զփիլիպպոսն կթղիկս: իբրև փիլիպպոսն կթղիկս եղև, գրով խնդրեաց 'ի խաչատրեն զսէր ոսկանն, զոր և առաքեաց: բայց սա եկեալ 'ի սբ. Էջմիածինն հանդիպեցաւ վարդապետի միոյ՝ դաղմատացւոյ. որոյ անունն էր պօղոս ազգաւ տալեան, յոյժ կիրթ յառմն ուսմունս իմաստասիրութե: Որոյ բազմիցս պատահեալ տրամաբանութբ եգիտ զնա բանիբուն և կարի հմուտ. թէպէտ 'ի լեզուէ սակաւ ինչ տկար մերովս բարբառով. Սորոյ թողեալ զամենայն, հետևեցաւ նմա ամիւ զօրութբ, ուսաւ սակաւ ինչ զլեզու լատինականն և զտառ: Ուսաւ և զարհեստ քերականութեն լիապէս՝ զոր և թարգմանեաց իմերս. յորմէ և ժողովեաց զկարճառօտ քերականութի մի. նա և ուսաւ զմին գիտութիս համա

ռուտիւք. այս ինքն, զընդհանրականն. զփիլի-
սոփայութիւն, և զգերփիլիսոփայութիւն, և
զաստուածաբանութիւն, նաև զերկրաչափութիւն,
և զաստեղագաշխութիւն. բայց ոչ լիապէս և
ըստ ախորժակաց իւրոց. այլ մասնաւորապէս
սակս կարօտութեան մարմնաւորաց կարեաց:
Բայց զաշխատութիս, հալածանս, և ստրկութիս
յոլովս կրեաց՝ թէ՛ ի կթղիկոսէն. թէ յընկերակ-
ցաց իւրոց՝ և թէ յազգէս մերմէ. և թէ՛ ի սար-
կաւագունից արանց. քան զինքն, քանզի ամ̃ն իմ
նի յարեան իբրև իմ օտարի՝ և ոանհարգ եղեն
խորոխսալով և մեծաւանելով. և 'ի տրամա-
բանութիս ձեռնարկելով և հակաճառելով՝
զորս ոչ ուսեալ էին, և ոչ լուեալ. ուր թո-
ղից զկրթութիւն և զներհուն գոլն: Իսկ նա
զայսոսիկ տեսանելով թէպէտ կարի քաջ գի-
տէր զտմարդութի և զբռութի Հայոց. սա
կայն անձամբ զփորձ առնլով իմանայր յաւէտ
զնախնեաց բողոքեալն, որք բազմազանա-
եղանակաւ բողոքեն իմէջ գրոց. յաւէտ ևս
թարգմանիչքն ի վէհք, ոմ̃ մովսէս յողբսն: Իսկ
սա իմէջ ամենից չարակրութեցս և յորդակո-
տակաց հեղեղաց փորձանաց՝ յոչումեքէ և յոչ
ուստեքէ տեսանելով մխիթարութեան՝ այլ յաւ-
էտ վշտաց և պէսպէս քամահանաց և արհամար-
հանաց, սկսաւ թարգմանել զաւեալն իւր քե-
րականութի 'ի Լատինացւոց 'ի Հայս. զնորի
սորին զբանս աղօթից. և զկլիմանիկս. նաև
զէլէմէ թուոլ լօջիկային: Իսկ յետ ժամանա-
կաց երկարաձգեցելոց՝ մեռաւ կթղիկոսն Փիլիպ-
պոս, նստաւ յաթոռ նորին տէր յակոբ Ջուղայե-
ցի. սա ևս սկսաւ խոսել առ ժամանակ ինչ:
Իսկ նա անէր ամ̃ի մ̃ի Բ̃ի առնելով զբանս երե-
մայն՝ ակն կալեալ նմա և համբերեցից. Բայց

յետ

յետ ժամանակաց պատահեցաւ. զի եղբայր Ոս կն վրդ̃պետիս Աւետիս անուամբ այր բարեպաշտօն և երկիւղած պատահեալ յերկրին Հօլանտ բու Մատթէոսի գրագրի. որ ձեռն արկեալ էր տպագրութե̄. արարեալ զմի ձեռք գիր. որ երեք ազգ լինի. այսինքն, միջագիր՝ գլխագիր՝ և ծաղկագիր: սկսեալ զՃն̃ որդի մի. բայց ոչ էր ժամանեալ յաւարտն. այլ մինչև 'ի խոստովանիմն հասուցեալ. նոյնում վայրում ինքեան ժամանեալ աւարտ և վճար կենաց իւրոյ յոլովից պարտուց. ք̃զի յորինչ ձեռնարկեալ էր բովանդակն պարտեօք էր եղեալ. որոյ պարտատեարքն ամքն 'ի ժամու մահուն շուրջ պատեալք զնովաւ զինչս իւրն պահանջեալք էն. իսկ նր̃ ոչ ունելով առ ի վճարել՝ զձեռն իւր ձգեալ է առ եղբայր վրդ̃պետիս. որոյ անունն Աւետիս յորջորջի. նա եւս զգոյս իւր զա̃մ տուեալ է 'ի պարտատեարսն և գործարանին տերեալ մինչև 'ի հատուցանել պարտուցն հանդերձ տոկոսեօքն. և այսմ այսպ̃ պատահեալ գրեալ էր առ եղբայրն իւր Ոսկան վարդապետն գալ յառաջեցուցանել զգործարանն. իսկ ինքն ձեռն արկեալ էր յօրինել զմիջակ գիրն. որով տպեցաւ ժամագիր՝ շարակնոց՝ Ճաշունչ՝ և այլ գրեանք: նաեւս հրամանաւ տեառն Յակոբու և գրով նորին յարուցեալ 'ի սրբոյ Էջմիածնէն բազմաւ վշտիւ եկեալ էհաս 'ի գործարանն՝ յորում տպիւր շարակնոցն հրամանաւ նորին՝ և ժամանեալ էր մինչև 'ի համբարձման ձեռամբ Կարապետի վարդապետի աշակերտի սորին. իսկ ինքն իբրև էհաս 'ի գործարանն ձեռնարկեաց զնօտրու գիր շինել 'ի պէտս խորագրի Ճաշնչոյն: իբրև աւարտեցաւ Շարակնոցն՝ ձեռնարկեաց զՃաշունչն. բայց

Ճաշոցոյն զբազումս շարադրեաց պատկառորդս և կարգաւորեաց ըստ լատինացւոցն · գլխատեաց և տնատեաց՝ որպէս տեսանելի է ներ տպեցելոց ճաշոցոյն · նաև զհամաձայնութիւն բովանդակից Ճաշոցոցն առադրեաց · արտադրեալ ՚ի լատինացւոցն առ մերս որպէս մեզ գոյ միայն աւետարանացն ։ Նաև զերստին թարգմանեաց լիակատար զբանս յեսուայ որդւոյ սիրաքայ · քանզի մեզ թէպէտ գոյր՝ այլ ոչ լիակատար՝ այլ ծայրաքաղ և համառօտ · Նաև ոչ ներ ամենից ճաշոցոց գոյր այլ ոմանց ոմանց · այլև թարգմանեաց զչորրորդ գիրս եզրասայ՝ որ և ոչ յաւէտ ընդունեալ էր ի մէջ մեր · իսկ ի մէջ ճաշոցոց ամենևին ոչ ։ Նաև զցանկս լատինացւոց ճաշոցոյն թարգմանեաց՝ որով ընթերցողն դիւրաւ գտանէ ի մէջ գրոց զխնդրելին իւր՝ որոյ և կարօտանայ · քանզի ամենքն երկեակք համարօք են շարադրեալք · այսինքն համարով գլխոյ՝ և համարով տողից ։ Որպէս զի թէ որ զխնդիր ինչ ունիցի ի մէջ գրոց ընթացեալ ՚ի ցանկն գրով այնմ բառի · քանզի ըստ այբ ու բենի է կարգեցեալ ցանկն՝ ըստ տառին գտանէ զբանն · և ընդ բառին գտանէ կարգեալ թէ ներ որոց գրոց կայ բանն կամ բառն այն անուամբ գրոյն · զկնի անուան գրոյն գտանէ զթիւ գլխոցն · թէ ներ քանորդում գլխոջ է · և ապա զթիւ տողիքացն · և նորօք գտանէ զխնդրելին իւր առաջի եդեալ թարց երկբայութեն ։ Յետ այնորիկ՝ և թէ ներ նոյնում մատենում նոյն բանն մի միայն համարն կայ՝ միանգամ է եդեալ · թէ երկու երկիցս · նոյնպէս և զայլս թիւսն իմա ։ Նաև զայլս մատեանս ճաշոյին՝ որք կան շարահաւաքեալք ներ նոյնում տփոջ ։ Նաև ձեռնարկեալ է ՚ի թարգմանութին բառգրոց՝ զոր ինքեանք կալէ

պլնում վերաձայնեն. զոր մինչև 'ի դէ տառն թարգմանեալ է: Եթէ տէր տացէ յաւարտ հասուցանել՝ է գանձարան և շտեմարան ամե իմաստութե. և ճանապարհ և վերածօղ առ ճշմարիտ հանճարն և գիտութիւ. քանզի դուռն և բանալի է ամենեցուն գրոցն. թէ նրբից՝ և թէ արտաքնոց. զի զբանս սահմանաւ բացատրէ: Նաև զտօնացոյց գրոցն ընթերցուածոց՝ զոր 'ի ժամ ճաշուն ընթեռնուն կայր կարգեալ իմէջ ումանց ճաշնոց՝ զոր սա օրինակեալ էր՝ թուով և գլխով մերոց նախնեացն կարգեցեալք՝ որ դժուարաւ լինիւր գտանել. քզի ուրուրեք զհամար գրոցն էր սխալեալ. և ուրուրեք իմէջ տօնացուցին գրչաց էր սխալեալ՝ նաև միով թուով էր կարգեալ. որով գտանելն դժուարին լինէր. կամ ամենևին ոչ լինիւր: Իսկ սորայս արարեալն երկդասումբք թուովք է շարակարգեալ՝ զոր առժամայն գտանէ խուզօղն: Եւ մանաւանդ ներ նախկնումն զանուանակոչութիս գրոցն ևս էր այլայլած. իսկ զթիւսն 'ի յոլով տեղիս. զոր յոլովիւք տաժանմամբք գտեալ 'ի տեղւոջ և թուոջ իւրում կարգեցաք. առ ի դիւրահաս լինել և դիւրագտանելի խուզողաց և հետևողաց: Նաև տպեցաք զգիրս յոլովս զայբուբենից տրակն. ընդ քրիստոնէականի վարդապետութեն. տպեցաք և զաղօթս ազնիւս. զորս ինքն էր արտադրեալ 'ի գաւիմաստացւոցն: Նաև զաղօթամատոյցս. և զպարզատօմարս հանդերձ տօմարիւ. և զաշխարհացոյցս զարարեալն 'ի մեծէն մօսխէ խորենացւոյ. ընդ որոյ և զաղուէս գիրքն շահաւէտ: Նաև զպատմագիրս նոր՝ զարարեալն յաւաքեալց վարդպէ. զորս ոչ միայն տպագրեաց. այլև սրբագրեալ ուղղեաց ըստ քերականութե արհեստի. զա

զաւա

ղաւաղեալն 'ի գրչաց անհմտաց. և անոսայից արանց և բանաստեղծից. 'ի փառս սրբոյ երրորդութեան: բայց զնեղութիս կրեաց և կրէ՝ 'ի սուտակասպասից՝ և 'ի բարձրայօնից իմաստակաց. յեկեղեցականաց և յաշխարհականաց. մերձակայից, և հեռաւորաց. իսկ նա զչարչարանս յանձին տարեալ առէր. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի: ապա Քի ծառայ ոչ էի:

---

Յաղագս միութեան և միաւորութեան. նոյնք են եթէ զանազանք Արարեալ Նոնոսի Բոկանոյ Վարդապետի:

## ԾԲ:

## ԳԻՏԵԼԻ Է ԶԻ ՄԻՈՒ

թիւն և միաւորութիւն ուր ուրեք 'ի տեղիս իրերաց դնին, սակայն կարի տարանջատք են 'ի միմեանց. զի միութիւն առ պարզ մուն վերաբերի. իսկ միաւորութիւն առ բաղադրեալն: Քանզի ուրանօր պարզ մի է. անդ ոչ է բաղադրութիւն՝ և ոչ շաղկապումն. այլ զուտ և անխառն էութիւն. որ յառաջագոյն 'ի միութեանն: իսկ միաւորեալն ոչ է պարզ մի, այլ յորոց բաղադրեալ է. առի լինելութիւն այլոյ ումեմն էութեան: Որ յապխոխս մի, ոչ ասի ամենիւք իրօք՝ և ամենևին մի: այլ իրօք ինչ մի, և իրօք ինչ բազումն: Որպէս առ մերս լինելութիւն է տեսանել. զի առ եկութիւն հոգւոյ և մարմնոյ՝ ոչ է՝ զի լիցի հոգի միայն, կամ լիցի մարմին միայն. Քանզի հոգին ոչ է միայնակ մարդ՝ և ոչ մարմինն. այլ առ եկութիւն երկոցունցն, և միաւորութիւն է մարդ. որ է 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ: Այսորոյ մարդն որ յերկուցն միաւորութենէ գոյացաւ՝ ոչ կարէ լինել սոսկ հոգի, և ոչ սոսկ մարմին. և ոչ հոգին ուրոյն է մարդ-

նոյն

նոյնպէս և ոչ մարմինն. այլ երկոցունց միաւո
րութեն լինի մարդն։ Մեք և մեծն Գաւիթ խօ
սի ներ հնդից առածոց իւրոց վն անհատից,
եթէ կարօղք գոն մի բնութիւն գոլ և ասիլ։
Նայամ վայրում սակս պարզագունից էութեց
իւացկայ 'ի խնդրոյ՝ վն ոչ գոլոյ հարկաւոր յա
ղագս նց խուզողութե. քզի ամենեքին պարզք
են, և են մի 'ի միութէն։ Իսկ սակս բաղադրե
ցելոցն անհատից ասէ. ոչ կարօղք գոն մի բնու
թի գոլ և ասիլ։ քանզի միաւորեալք են 'ի
բազմութէ 'ի մի այլեմն իր՝ որ ոչ գոյր նախքան
զմիաւորութիւն նոցա. այս ինքն։ Մէ պէտ գոյ
հոգի՝ գոյ և մարմին. որքան ոչ են միաւո
րեալք ոչ գոյ մարդ՝ որ պարտի բաղկանալ 'ի
միաւորութէ հոգւոյ և մարմնոյ՝ և ոչ 'ի միու
թէ. Ա՞ն է հոգի. մի է և մարմին. թէպէտ և սո
քա են միաւորեալք 'ի մասանց իւրեանց՝ որպ
ասի 'ի բնախօսից՝ սակայն առ ի բաղկացութի
մարդոյն մի մասն դնի հոգին. և մի մասն շնչաւ
որ մարմինն. որք ոչ են մի՝ այլ միաւորեալք 'ի մի
լինելութի. որ է մարդն։ Ի տո այսմ սարասե
և առ հմ միաւորութիւս է տեսանել. զի միաւո
րութիւն անփոփոխական, և անկորստական.
այսինքն, որք ոչ փոխարկին առ իրեարս. և
կամ մինն, 'ի միւսոյն ոչ կլանի. այլ շարակա
պին ընդ միմեանս անշփոթիւ միաւորութէ.
Ո այլեմն գոյացուցինեն մասունքն շարաեկողք՝
որ նախ ոչ գոյր։ վնորոյ առ այլեմն իր միաւորիլ
ասին մասունքն նախկինք։ որպէս վերնագոյնն
ցուցաւ 'ի միաւորութի հոգւոյ և մարմնոյ։ Ո ի
միաւորութէ հոգւոյ և մարմնոյ ոչ եղև միայն
հոգի, և ոչ միայն մարմին. այլ մարդ՝ որ ոչ է մի
այն հոգի. և ոչ միայն մարմին. այլ հոգի և մար
մին համանգայն. Ի յոմ և յամենեսեան իրա

կու

կութեանս գտցես. թէ 'ի բնականս. և թէ յա
րուեստականս. և թէ յուսումնականս: Քան
զի 'ի բնականս. մասունք ձեռացն, որք են
մատունքն և թաթն. ոչ միաւորին 'ի մի մատն
այլ 'ի մի ձեռն. որ է մի բոլոր 'ի մատանց հըն
գից՝ և 'ի թաթէ: Արդ մատն մի ունի զմիու
թիւն մատին. բայց ձեռն ոչ զմիութիւն մատին,
այլ զմիաւորութիւն մատանց յոլովից ներ ին
քեան միաւորեալ՝ բայց զմիութիւն ձեռին. որոյ
միութիւն գոյանայ 'ի միաւորութենէ մատանց:
Նոյնպէս և մարմին, որ ունի զմիութիւն մարմնոյ՝
բայց ունի ներ ինքեան զմիաւորութիւն անդա
մոց բազմաց. որպէս սուրբն Պօղոս ասէ ներ
թղթոյն կորնթացւոց առաջներորդում, 'ի
գլխոյն երկոտասաներորդում. և 'ի թղթոյն
երկոտասաներորդում՝ և 'ի քսաներորդում.
զի ոչ մարմին մի է և զանդամս բազումս ու
նի. ամենեքեան բազումք անդամքն՝ մի մարմին
են: Այլ անդամքն բազումք. որք ունին
առ ինքեանս զմիութիւն անդամոյ: և են բա
զումք՝ որք ունին զմիաւորութիւն առ մար
մինն մի. վասնորոյ մարմինն ունի զմիութիւն իւր
շարայարութեամբ անդամոցն. իսկ անդամքն թէ
պէտ ունին զմիութիւն ներ ինքեանց. սակայն
առ մարմինն ոչ ունին զմիութիւն այլ զմիաւորու
թիւն: Իսկ յարուեստականս է՝ զի ամենեքեան
մասունք առ մի բոլոր միաւորեալք զայլիմն քան
զինքեանս յառաջբերեն. որպէս ահա չորք որ
մունք. և պատուհանք՝ և դրունք՝ և առաստաղ
'ի միասին եկեալք ոչ զմի զորմ. կամ զմի զպա
տուհան կամ զայլինչ յիւրեանց մասանցն բաղ
կացուցանեն. այլ զայլիմն անդր քան զինքեանս
բացակատարեն. այսինքն զտուն. որ ոչ է իմեր
նոց ասացելոց մասանցն. այլ այլիմն միաւորութ

նոցին

նոյին կառուցեալ․ որ ոչ ասի պատ․ և ոչ պատուհան՝ այլ տուն․ որ է մի 'ի միութե․ իսկ միաւորութի մասանցն 'ի միաւորութենն ։ Նաև դուռն է մի բոլոր իր յիւրոց մասանց բաղկացեալ՝ թէպէտ է մասն տանն․ բայց է ա̄ ինքեան բոլորին․ քանզի ունի զտախտակունսն առ իրեարս կցեալս մասունս՝ զբևեռս՝ և զսեամսըն՝ և զայլս․ որք են միաւորեալք 'ի լրութի դրանն․ են միաւորեալք 'ի միաւորութե․ և մի 'ի միութե ։ իսկ միութի դրանն է 'ի միութե և ոչ 'ի միաւորութենն ։ Ապա ուրեմն ոչ են մի և նոյնք միութիւն և միաւորութիւն ․ և մինն և միաւորեալն ։ Իսկ յուսումնականն է այսպիսի ինչ․ զի ամենայն բոլոր՝ այս ինքն՝ ընդհանուր մասամբք է ընդհանուր ․ և 'ի միաւորութե մասանց լինի բոլորն ։ Որպ 'ի միաւորութե և 'ի հաւաքմանէ անհատից լինի տեսակն․ և 'ի միաւորութե տեսակացն բաղկանայ սեռն․ և 'ի սեռիցն սեռականագոյն սեռն․ և այլքն ա̄ կարգի որքանք և իցեն․ Իսկ 'ի միութենն մինն միայն է՝ որ ոչ ունի զմիաւորութիւն․ որպ ահա անհատն որ մի միայն է և ոչ ունի զբազմաց հաւաքումն 'ի մի․ թէպէտ ունի զմասանց իւրոց հաւաքումն ներ ինքեան․ բայց ոչ է ա̄ հաւաքման անհատից առ տեսակն․ և տեսակաց առ սեռն ։ Ր․ յլ այլով իմն եղանակաւ են մասնականութիւնք նոյին և հանրականութիւնք․ միութի նոյին և միաւորութի իսկ աստ այլով իմն եղանակաւ ։ Քանզի աստ մասնկունք են անդամքն, և բոլոր իմն մարմինն անդամոցն միաւորութե ։ իսկ անդ մասնկունք են անհատքն․ այսինքն մարտիրոսն, և գրիգորն․ որք են միաւորեալք յանդամոց։ Նու բոլորք 'ի միաւորութե անհատից՝ այսինքն․ մարդն․ ձին․ առիւծն․ արծուին ։ քանզի 'ի միութե մու

ան

անհատն որ է մի. իսկ 'ի միաւորութէ անհա տից է տեսակն: Թէպէտ ոմանք զարեգակն զմիու տեսակ դնեն. նաև զոմն հաւ ստեղծա նեն 'ի հնդիկս, և զնոյն այրիլ թևոյն շարժ մամբ՝ և դիւոյ նորին յորդանէ այլումն հաւ գոյանալ՝ որպէս զի հաստատեսցեն, թէ գոյ այնպի սի անհատ՝ զի համայն անհատ է՝ և համայն տե սակ. վարկպարազի է: Ո ի տեսակ է այն՝ որպէս պոր փիւր ասէ. որ 'ի բազմաց անհատից ասի. որ ոչ է մի և նոյն թուով: Իսկ արեգակն ոչ է ըստ ինքեան տեսակ՝ թէ և զնա 'ի կարգի լուսաւո րացն ոչ դիցես ըստ հասարակաց իմաստասի րաց. այլ զայլումն զնա 'ի լուսաւորացն կացուս ցես. զայլումն զորակութի տալով նմա: Այլ յաւէտ զկերպ իմն յարադրեսցես՝ և ոչ զսահ ման տեսակին կարասցես զնմանէ ստորոգել: Եթէ տեսակ է զյոլովից և զտարբերեցելոց թուով 'ի ներքոյ զինչէն ստորոգեալ: կամ տեսակ է դասեալն ընդ սեռիւ: Քանզի մի ան հատն ոչ կարէ զբազմաց անհատից ստորոգիլ: Նաև անհատն ոչ է դասեալ ընդ սեռիւ այլ յաւէտ դասեալ ընդ տեսակադունիւ տեսա կաւ: Վասն որոյ ոչ կարէ արեգակն այն անհատ՝ զսահման տեսակի առնուլ՝ այլ յաւէտ անհա տի. և նորին միաւորութեն և միութեն բա ցատրիլ՝ և ոչ ըստ տեսակի: Քանզի տեսա կի լինելութին է 'ի միաւորութէ բազմաց ան հատից. զի 'ի բազմաց անհատից ասի տեսակն, որպէս բազմիցս ցուցաւ: Նոյնպէս և բազումք տե սակք առ մի սեռ միաւորին. որպէս մարդոյ տե սակն, ձիոյ տեսակն, առիւծոյ տեսակն, աղաւ նոյ տեսակն. և այլք յոլովք մնացեալք՝ զորս միըստմիոջէ թուել է ձանձրութի. 'ի մի սեռ կենդանւոյն միաւորին. և են կենդանիք ամենե

քեան. նոյնպէս և անհատքն 'ի ձեռն տեսակաց մի
աւորին միաւորութե. և միասին ներ ինքեանց
ընթակայութեց և միութեց. որք հաղորդք են
միմեանց 'ի ձեռն միաւորութե տեսակի և սե
ռի. բայց անհաղորդք են միմեանց 'ի ձեռն ան
հատի և միութե. Ապաուրեմն ոչ են մի և նոյն
մին և միաւորեալն, միութին և միաւորութին.
այլ յաւէտ տարանջատք 'ի միմենից. որպէս պարզն և
բաղադրեալն. Քանզի պարզն և մին առ ինքեա
րըս համեմատին. իսկ բաղադրեալքն և միաւոր
եալքն են համեմատք. որպէս ահա յայտ է 'ի տեսե
ցելոցդ յորուցից. Սակայն միաւորութին է յո
լովից եղանակաց լինի. է միաւորութի փոփոխ
մամբ՝ որ և շփոթմամբ ասի. որք յորժամ միաւո
րուէն միաւորեցեալքն ամենքն զիւրեանց բնութին
թողուն. և զայլ իմն իւր զէութի ստանան. որպէս տա
րերք. որք ոչ միաւորութի ասին քան կորուստ
ինքեանց առ ի լինելութի այլոյ ումեմն էութե.
Նաև է միաւորութին, որ փոխարկամբ ասի.
յորժամ միաւորութեն մինն 'ի միւսոյն կլանի
ցի. այսինքն մի 'ի բնութի միւսոյն փոխարկի
ցի, կամ սակս նուազութե. կամ սակս նուա
տութե. որպէս կերակուրք մեր, զոր ուտեմք. 'ի
բնութի մարմնոյ մերոյ փոխարկի. Նաև է
միաւորութի. որ ոչ շփոթմամբ՝ և ոչ փոխ
արկմամբ. այլ անփոփոխ և անփոխարկ միաւո
րութէ միաւորին է միմեանս՝ որպէս հոգի և մար
մին՝ երկաթ և հուր. որք ոչ զիւրեարս ապա
կանեն առ ի լինելութի այլոյ էութե. և ոչ
փոխարկմամբ միոյն 'ի միւսն. այլ յաւէտ պա
հելով զէութի և զբնութի ինքեանց միաւո
րութէն. ըստ որում յայտ է՝ զի որքան առ
ինքեարս գոն, պահեն զիւրեարս՝ և անորիշք են
'ի միմեանց. և պատճառք են իրերաց գոլոյն.

և ենթակային լուրեանց. իսկ յորժամ բաժա
նին. այն որ նորօք գոյր ապականի. մարմինն
'ի տարերս իւր ցնդի. իսկ հոգին առ Ած եր
թայ՝ որ ետ զնա. ըստ իմաստնոյն բանի։
Դարձեալ յորժամ զմի ասեմք. զնոյն իրն
պարզ և յատակ անխառն՝ ընդ այլոյ իմանամք.
որ ոչ ունի զշարակցութի, կամ զհաղորդու
թի ընդ ումեք, այն միութին թէ անձնական
լիցի և թէ էական անխառն է՝ և զուտ ամե
նեւին։ Բայց յորժամ զմիաւորեալ ասեմք. ոչ
կարեմք իմանալ զուտ և պարզ՝ այլ բաղա
դրեալ ընդ այլոյ. և միաւորեալ յերկուց իրաց
թէ շփոթմամբ. և թէ առանց շփոթման։ Բայց
այքան զանազանութիս գոյ ի մէջ շփոթման,
և անշփոթութե. զի շփոթումն զբնութիս
իւրեանց կորուսանէ. կամ փոխարկմամբ միոյն 'ի
միւսն. կամ երկոցունցն համայն թողլով
զիւրեանցն, և այլումն իր լինելով. և զնոր իմն
բնութի յառաջածելով։ Իսկ անշփոթքն յետ
միաւորութենն ևս այնպէս մնան՝ որպէս էին նախքան
զմիաւորութին առանց այլայլութե առանց փո
փոխման՝ թարց ուրուք վնասու։ Իսկ եթէ ան
շփոթի միաւորութենն կերպիւ ինչ այլումն 'ի ներս
անկցի՝ ոչ մնայ անշփոթութին. Քանզի անշփո
թութի միաւորութե է, զի զնոյն սահման զոր
նախքան զմիաւորութին ունէին միաւորեալքն.
զնոյն ևս զկնի միաւորութեն ունիցին՝ թարց
իրիք այլայլութե։ Իսկ եթէ իր ինչ դուզնա
քեայ 'ի ներս անցցի այլայլութե՝ որով կարաս
ցէ վնասիլ սահմանն. ոչ մնասցէ անփոփոխ
միաւորութին՝ կամ անշփոթ։ Դարձեալ միու
թի հակակայի ընդդէմ բազմութե. իսկ միաւո
րութին ընդդէմ բաժանման։ զի մին ոչ կարէ
բազում լինիլ թէպէտ 'ի բազմաց լիցի. ըստ
որում

որում է մի։ Իսկ միաւորեցեալն և միաւորութիւն է 'ի բազմաց միաւորեալ. Թէպէտ առ մի իր լիցի միաւորեալ։ Պարզեալ միութիւն պարզի անկարելի է 'ի մասունս բաժանիլ՝ որպէս Աստուած։ Իսկ միաւորութիւն կարելի է յայնս բաժանիլ յորոց է բաղադրեցեալ. Թէ իրօք, և թէ մտածութեամբ. որպէս մարդն՝ և այլք բաղադրեալք։

---

Այլ հանգերձ այս ինչ կայ կարգեալ 'ի պատմութեան գիրս։

Գլուխ — Երես

Ա. Յաղագս տառապանաց՝ զորս ունէին կաթողիկոսքն 'ի հարկապահանջութենէ բռնաւորաց։ 5

Բ. Յաղագս գալստեան սրապիոնի վարդապետին 'ի սուրբ աթոռն Էջմիածին՝ և լինելոյ կաթողիկոս։ 8

Գ. Յաղագս գալստեան շահաբասայ թագաւորին Պարսից յաշխարհս Հայոց. և ունելոյ զամ, և վարդապետին սրապիոնի դառնալոյ անդրէն 'ի տեղի իւր։ 13

Դ. Յաղագս առաջնոյ գալոյն Ջալալօղլի սարդարին. յորոյ պատճառէ քշեաց շահաբասն բոլորովին զերկիրն արարատու և զնորին սահմանակից երկիրսն։ 36

Ե. Յաղագս քշելոյ զամենափարթամ գեղաքաղաքն Ջուղայ յերկիրն Պարսից. 55

Զ. Յաղագս երկրորդ անգամ գալոյն Ջալալօղլի սարդարին, և պարտեալ լինելոյն և դառնալոյն։ 69

Է. Յաղագս յայտնելոյ Ջալալոցն, և սաստիկ սովուն, և մարդակերաց գայլոցն, և այլևս աւարառութեանց և վշտացն՝ որք ժամանեցին ի մեր աշխարհի. 77

Ը. Յաղագս առման քաղաքացն Գանջայու և շամախու. 91

Թ. Թէ որպիսի պատճառանօք կոչեաց շահաւանն զԹգ̃րոն Վրաց առ ինքն՝ և հնարիւք դաւեաց զնոսա. 95

Ժ. Միւս ևս պատմութիւն նենգութեան և հնարակերտութեան շահաբասին, զոր միւսանգամ արար ընդ Թգ̃ւորս ազգին Վրաց. 99

ԺԱ. Պատմութիւն և պատճառ աւերման աշխարհին Վրաց, և մահու լուասափայ Թգ̃րին, որ եղև ձեռամբ նոյնոյ առաջնոյ շահաբասին. 103

ԺԲ. Պատմութիւն նահատակութեան մօր Թամրազի Թգ̃ւորին կախեթու 'ի նոյն շահաբասէն. 141

ԺԳ. Պատմութիւն նեղութեանց՝ զոր կրեցին ազգն Հայոց յառաջնոյ շահաբասէ Թագաւորէն. 145

ԺԴ. Միւս ևս պատմութիւն նեղութեանց՝ զոր կրեցին ազգն Հայոց 'ի նոյնոյ շահաբասէ Թագաւորէն. 161

ԺԵ. Վասն էր ոչ կայ ոչխարաց բօդաւ յաշխարհին՝ որ արաղստան կոչի. 169

ԺԶ. Պատմութիւն վս̃ նշխարաց սրբուհւոյ կուսին հռիփսիմեի թէ որպէս գտեալ և հաննեալ եղև նա 'ի ֆռանկաց, և թէ ոչ̃ տարեալ եղև յասպահան քաղաք. 176

ԺԷ. Թէ ոչ̃ կամ յինչ պատճառէ տարեալ եղև յասպահան քաղաք Աջ սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին՝ և քարինք սրբոյ աթոռոյն Էջմիածնի. 196

Յաղագս

ԺԸ. Յաղագս հարիւր թուման մուղտայլին․ զոր շահն եդ ի վերայ մելքիսեթի կաթողիկոսին, որով և եդաւ ի վերայ սրբոյ աթոռոյ Էջմիածնի։ 212

ԺԹ. Պատմութիւն կաթողիկոսութեան և փախստեան Սահակայ կաթողիկոսին։ 227

Ի. Վասն հակառակութեան Սահակայ կաթողիկոսին, զոր արար ընդ սրբոյ Էջմիածնի և ընդ Մովսէսի կաթողիկոսին։ 235

ԻԱ. Վասն շինութեան մեծի անապատին՝ և առաքինութեան սարգսի եպիսկոպոսին՝ և տեառն կիրակոսին։ 246

ԻԲ. Այլ ևս պատմութիւն վասն նոյն մեծի անապատիս։ 258

ԻԳ. Վասն վարդապետութեան վարդապետին պօղոսի։ 263

ԻԴ. Վասն վարդապետութեան և կաթողիկոսութեան տեառն Մովսէսի։ Յորում և վասն նորոգութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի։ 278

ԻԵ. Վասն վարդապետութեան և կաթողիկոսութեան տեառն փիլիպպոսի։ Յորում և վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհեաց կուսանացն գայիանեայ և հռիփսիմեայ, և յայտնելոյ նշխարացն նոցին։ Եւ վասն սրբոյ Էջմիածնի զանգակատան շինելոյն։ 308

ԻԶ. Վասն նորոգութեան անուանի վանօրէից, և շինութեան մեծածախից եկեղեցեաց։ 340

ԻԷ. Վասն նահատակութեան տեառն անդրէի քահանային։ 346

ԻԸ. Վասն նեղութեանցն՝ զոր կրեցին հայազգաւ քրիստոնեայքն՝ որք բնակեալք են ի Լվով քաղաքի։ 355

ԻԹ. Թէ որք էին վարդապետքն, որք զգիտութիւն արտաքնոց գրոց գտէին 'ի յետին ժամանակիս։ 382

Լ. Ստոյգ և Ճշմարիտ պատմութիւն վասն Աջոյն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին։ 400

ԼԱ. Կարգ կաթողիկոսաց մերոց, առեալ և սկսեալ 'ի սրբոյն Ներսիսէ Կլայեցւոյ՝ և շարակարգեալ մինչև ցմեր ժամանակս։ 417

ԼԲ. Կարգ վարդապետաց սկսեալ 'ի Գոշէ Մխիթարայ մինչև ցմեր ժամանակս։ 425

ԼԳ. Վասն հանելոյ զազգն Հայոց 'ի քաղաքամիջէն Ասպահանու։ 427

ԼԴ. Վասն նեղութեացն զոր ածին Պարսիկք ի վերայ ազգին Հրէից և դարձուցին յօրէնս Մահմետի։ 443

ԼԵ. Վասն շարժի մեծի քաղաքին Թաւրիզու։ 458

ԼԶ. Վասն ոսկերացն վարդապետրկայ, զոր Հոռոմք կամէին հանել։ 462

ԼԷ. Վասն շարժի, որ եղև 'ի Վանայ քաղաքին։ 465

ԼԸ. Վասն կողոպտելոյ զվանքն Վարագայ, և տանելոյ զսուրբ նշանն 'ի բերդն Խօշաբայ։ 471

ԼԹ. Վասն գնալոյ Հուսէյն աղային 'ի Ջուլամերկ։ 480

Խ. Վասն սատակման չար և պիղծ Չօմարին։ 482

ԽԱ. Վասն սատակման չարին Սուլէյման բէկին։ 488

ԽԲ. Վասն պարոնութեան Իբրահիմբէկին և դարձի սրբոյ նշանին Վարագայ 'ի քա

'ի քաղաքն վան ։ 495
ԽԳ. Վասն յայտնելոյ նշխարաց սրբոյն յօհաննու մկրտչին ։ 497
ԽԴ. Վասն նահատակութե անմեղ մանկանն նիկողայոսին ։ 501
ԽԵ. Վ͞ն նահատակութե խոստովանող վկային Ք͞ի սրբոյն խաչատրի ։ 507
ԽԶ. Վասն նահատակութե սիրուն անուամբ քրիստոնէին ։ 517
ԽԷ. Վասն նահատակութե մխիթար անուամբ քրիստոնէին ։ 522
ԽԸ. Վասն նահատակութե աւետիս անուամբ քրիստոնէին ։ 527
ԽԹ. Վասն սքանչելեացն Ս. Յ͞, որ եղև ի վեր այն ումեմն ուրացողի ։ 531
Ծ. Վասն հրկիզութե մեծի քաղաքին կոստանդնուպօլսի ։ 536
ԾԱ. Կարգ և ազգացեղութե Օսմանցւոց Թգ͞ւրցն ։ 540
ԾԲ. Կարգ և ազգացեղութե Պարսից Թգ͞ւրցն ։ 554
ԾԳ. Վասն անուանց և որպիսութեց պատուականաց ականց ։ 555
ԾԴ. Պատմութի վն աղուանից աշխարհին. այլև վն Օսմանցւոց և Պարսից Թգ͞ւրացն, արարեալ ծարեցի յօհաննու վարդ͞պետին ։ 574
ԾԵ. Բանք համառօտք նշանակեալք Թուականաւ 'ի սկզբնէ մինչև ցմեր ժամանակս ։ 589
ԾԶ. Պատճառ առնելոյ զպատմութեց գիրս ։ Յորում և յիշատակարան առնողին ։ 621

Պատ

ԿԷ. Պատմութիւն Վարդապետին Ոսկանայ Երևանցւոյ և Կենցաղավարութեն նորին ։ 629
ԿԸ. Վասն միութեն և միաւորութեն ։ 638

---

Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ շարատպեցեալ յաւարտ ժամանեաց մատեանս Պատմագրական ներ Թուոյ փրկչին ՌՈԿԹ. Նամսեանն Մայիսի. որոյ աւուրք է լն. ը: Իսկ ըստ Հայոց. ՌՃԺԸ. Նամսեանն Արեգի. որոյ աւուրք է լն. դ: Արդագրութեամբ և ընծիւք Ոսկանի վրդ̄պտի Երևանեցւոյ ՚ի տպարանի սրբոյ Էջմիածնի, և սրբոյ սարգսի. ՚ի հայրապետութեն տեառն Յակոբայ Հայոց կթղկսի: Ներ քաղաքում Հոլակապում Ամստերդամում: Արդ որք հանդիպիք սմին տեսանելով կամ ընթեռնլով յիշեսջիք զաշխատաւորսն. նա և զեղբայրն իմ զաւետիսն, որ պատճառ եղեւ այսորիկ գործարանի Էջմիածնի լինելոյն. մանաւանդ՝ զի զայս գիրս ինքն ընծիւք իւրովք է արարեալ՝ որոյ ներումն յանցանաց մաղթել և վարձս բարեաց ՚ի Տ.Է, ինքեան և ծնողաց իւրոց հօրն Խորոսին. և մօրն Գոհարազգին. և այլոց արեանառուաց մերձաւորաց: Այլ որք յիշէք միով ողորմիւ. յիշեալք լիջիք յողորմութե առատին ՚ի փառս ամենօրհնեալ անուանն Տր̄. այժմ և ան[...]յաւիտենիւ. Ամէն ։

ZUUՌ ... 41